Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

89171
S-80

891.71
S-80
Արշ.

Հրատարակութիւն ՄՈՒՐՃ ամսագրի 19 NOV 2019

ԿՈՄՍ Լ. Ն. ՏՕԼՍՏՕԳ

ՅԱՐՈՒԹԻՒՆ

ՎԷՊ

Թարգմանեց

Տ. ԵՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Վրաց Հրատ. Ընկերութեան || Типографія Грузинск. Изд. Т—ва.
1902

23 SEP 2013

14.140

Дозволено цензурою. Тифлисъ. 26 декабря 1902 года.

2410-55

ՅԱՐՈՒԹԻՒՆ

Կոմս Լ. Ն. Տolusoյի

Մաթ. Գլ. ԻԸ. 21. Այն ժամանակ մօտեցաւ Նրան Պետրոսը և ասաց. Տէ՛ր, եթէ եղբայրս մեղանչէ իմ դէմ, քանի՞ անգամ պէտք է ներեմ նրան, մինչև եօթն անգամ։ 22. Յիսուս ասաց նրան. չեմ ասում քեզ մինչև եօթն անգամ. այլ մինչև եօթանասուն անգամ եօթը։

Մաթ. Գլ. Է. 3. Ինչո՞ւ տեսնում ես շիւղը եղբօրդ աչքում, իսկ քո աչքում եղած գերանը չես տեսնում։

Յովհ. Գլ. Ը. 7. . . . ով որ ձեր մէջից անմեղ է, թող առաջ նա քար ձգէ դրա վրայ։

Ղուկաս. Գլ. Զ. 40. Չը կայ աշակերտ աւելի լաւ, քան իր ուսուցիչը. ամեննայն մարդ, որ կատարեալ դառնայ, կը լինի իր ուսուցչի նման։

I

Ինչքան էլ մարդիկ աշխատում էին, մի քանի հարիւր հազար հոգով մի փոքրիկ տեղ հաւաքուած, այլանդակել այն գետինը, որի վրայ կուչ էին եկել, ինչքան էլ սալում էին քարերով հողը, որպէս զի ոչինչ չը բուսնի նրա երեսին, ինչքան էլ պոկոտում էին ամէն մի նորածիլ խոտ, ինչքան էլ քարածուխ ու նաւթ էին ծխում, ինչքան էլ խեղդում էին ծառերը և դոբս քչում բոլոր անասուններին ու թռչուններին,— գարունն էլի գարուն էր, նոյն իսկ քաղաքում։ Արեը տաքացնում էր, խոտը, կեանք առնելով, աճում ու կանաչում էր ամէն տեղ, ուր չէին քերել գետինը—ոչ միայն ճեմելիքների սիզամարգերում (газонъ), այլ և սալաքարերի արանքներում,—և կեչինները, սօսիներն ու թխենին (черемуха) բանում էին իրանց մա-

ծուցիկ ու հոտաւէտ տերևները, լորինները ուռճացնում էին իրանց արաքուող բողբոջները. ճայեակները, ճնճղուկները ու աղաւնիները արդէն գարնանային կերպով ուրախ-ուրախ պատրաստում էին բները, և պատերի մօտ բզզում էին արևից տաքացած ճանճերը։ Ուրախ էին և՛ բոյսերը, և՛ թռչունները, և՛ միջատները, և՛ երևնանները։ Բայց մարդիկ—մնած, հասակաւոր մարդիկ—չէին դադարում խաբելուց ու տանջելուց իրանք իրանց և միմեանց։ Մարդիկ այնպէս էին համարում, թէ նուիրական է և կարևոր ոչ այդ գարնանային առաւօտը, ոչ Աստծու աշխարհի այդ գեղեցկութիւնը, որոնք տուած են բոլոր էակների բարօրութեան համար,—գեղեցկութիւն, որ արտայդրում է մեզ դէպի խաղաղութիւն, համերաշխութիւն և սէր,—այլ նուիրական է և կարևոր այն, ինչ որ իրանք են հնարել մէկը միւսի վրայ իշխելու համար։

Այդպէս՝ նահանգական բանտի դրասենեակում նուիրական և կարևոր էր համարւում ոչ այն բանը, որ բոլոր կենդանիները և մարդկանց տուած են գարնան գորովը և հրճուանքը, այլ նուիրական և կարևոր էր համարւում այն, որ նախընթաց օրը տապատած էր մի թուղթ որոշ համարով, կնիքով և վերնագրով այն մասին, թէ այդ օրը, ապրիլի 28-ին, առաւօտեան ժամը 9-ին պէտք է դատարան տարուեն բանտարկեալ երեք հատ քննութեան ենթակայ կալանաւորներ, երկու կին և մի աղամարդ։ Այդ կանանցից մէկը, իբրև ամենածանր յանցագործը, պէտք է ուղարկուէր առանձին։ Եւ ահա, այդ հրամանագրի հիման վրայ, ապրիլի 28-ին, առաւօտեան ժամի 8-ին, կանանց բաժնի մուտքի ու գարշահոտ արահանգքը մտաւ ուտպ վերակացուն։ Նրա յետևից արահանգքը մտաւ՝ տանջուած դէմքով և ալևոր ու խուճուճ մազերով մի կին, հագած տրիզապատ թիկերով մի բամկոն և մէջքին կապած կապոյտ երիզաւոր գօտի։ Դա վերակացուհին էր։

—Մասլօվային էք ուզում,—հարցրեց նա, օրագահ վերակացուի հետ մօտենալով սենեակների՝ արահանգքի մէջ բացուող դռներից մէկին։

Վերակացուն զրնգացրեց կողպէքը և, բանալով սենեակի դուռը, որից դուրս հոսեց արահի օդից էլ աւելի գարշահոտ օդ, աղաղակեց.

—Մասլօվա, դատարան,—ու նորից վրայ դրեց դուռը, սպասելով։

Մինչև անգամ բանտի բակում զգացւում էր դաշտերի թարմ ու կենդանարար օդը, որ քամին բերել էր քաղաք։ Բայց արահանգքում կանգնած էր կուպրի ու նեխուածքի հոտով տոգորուած օդ, որ իսկոյն վհատութիւն և տրտմութիւն էր բերում մարդու վրայ։ Այդ բանը զգաց իր վրայ բակից եկած վերակացուհին, չը նայելով, որ նա սովոր էր վատ օդի։ Մտնելով սրահանգքը, նա յանկարծ յոգնածութիւն զգաց և քուն եկաւ վրան։

Սենեակում իրարանցում կար,—լսւում էին կանացի ձայներ և բորբիկ ոտների քայլեր։

—Դէ, արագ ժամ արի, Մասլօվա, քեզ եմ ասում,—աղաղակեց ուտպ վերակացուն սենեակի դռնից։

Մէկ երկու րոպէից յետոյ առոյգ քայլերով դուրս եկաւ դռնից, արագ չուռ եկաւ և կանգնեց վերակացուի մօտ ցածրիկ հասակով և չատ լիքը կրծքով մի ջահել կին, որ մոխրագոյն խալաթ ունէր հագին, սպիտակ բամկոնի և սպիտակ ներքնազգեստի վրայից։ Կնոջ ոտներին քաթանի գուլպաներ էին, գուլպաների վրայից բանտային հողաթափներ. գլխին կապած էր սպիտակ գլխաշոր, որի տակից անչուչտ դուրս էին թողնուած սեւ ու գանգուր մազերի մի քանի խոպոպիկներ։ Կնոջ ամբողջ երեսը այն առանձնատուկ սպիտակութիւնն ունէր, որ լինում է երկար ժամանակ փակ մնացած մարդկանց երեսներին և որ յիշեցնում է գետնախնձորի՝ նկուղում արձակած ծիլերը։ Նոյն տեսակ էին և փոքրիկ, բայց ձեռները և սպիտակ ու լիքը վիզը, որ երեւում էր խալաթի մեծ օձիքի յետևից։ Այդ դէմքի մէջ, մանաւանդ նրա անփայլ գունատութեան վրայ, առանձնապէս տպաւորիչ էին չատ սեւ, փայլուն, փոքր ինչ ուռած, բայց խիստ վառվռուն աչքերը, որոնցից մէկը մի քիչ չիլ էր։ Նա իրան պահում էր չատ ուղիղ, լի կուրծքը դուրս քցած։ Դուրս գալով սրահանգքը, նա, գլուխը փոքր ինչ յետ քցած, նայեց ուղիղ վերակացուի աչքերին և կանգ առաւ, պատրաստ կատարելու ամեն բան, ինչ որ պահանջեն իրանից։ Վերակացուն արդէն ուզում էր փակել դուռը, երբ այնտեղից դուրս ցցուեց մի սպիտակահեր ու պլիսացաց պառաւ կնոջ գունատ, խստահայեաց ու կնճռոտ դէմքը։ Պառաւը սկսեց ինչ-որ ասել Մասլօվային։ Բայց վերակացուն դուռը հուպ տուեց պառաւի գլխին եւ գլուխը անյայտացաւ։ Սենեակում լսուեց մի կնոջ քրքիջ։ Մասլօվան նոյնպէս ժպտաց եւ չուռ եկաւ դէպի դռան վանդակապատ փոքրիկ պատուհանը։ Պառաւը միւս երեսից դէմքը կպցրեց պատուհանին եւ արտասանեց խռպոտ ձայնով.

—Սմենից չատ զգոյշ կաց աւելորդ խօսելուց. մի բան ասա ու խօսքիդ վրայ հաստատ մնա։

—Է՜հ մի բան կը լինի էլի, հօ սրանից էլ վատ չի լինի,—ասաց Մասլօվան։

—Ի հարկէ մի բան կլինի եւ ոչ թէ երկու,—ասաց ատաղ վերակացուն, իշխանաւորական վստահութեամբ իր սեփական սրամտութեան վերաբերմամբ։—Հայդէ իմ յետեւից։

Պատուհանից նայող պառաւի աչքը անյայտացաւ, իսկ Մասլօվան առաջ անցաւ դէպի սրահի մէջ տեղը եւ փոքրիկ ու արագ քայլերով գնաց ատաղ վերակացուի յետեւից։ Նրանք ներքեւ իջան քարէ սանդուխներով, անցան տղամարդկանց սենեակների մօտով, որոնք աւելի եւս զարշահոտ էին եւ աղմկալից, քան կանանց սենեակները եւ որոնց բոլոր դռնածակերից նրանց հետեւում էին ուշադիր աչքեր, եւ մտան գրասենեակը, ուր արդէն պատրաստ կանգնած էին երկու ուղեկցող զինուորներ հրացանը ձեռներին։ Այնտեղ նստած գրագիրը տուեց զինուորներից մէկին թութունից ծխահատած մի թուղթ եւ, մատնացոյց անելով կալանաւոր կնոջը, ասաց. «Ընդունիր»։ Զինուորը,—մի գեղջուկ Նիժնի-Նովգորոդի կողմերից, կարմիր ու չեչոտ երեսով,—թուղթը դրեց վերարկուի թեւնոցի ծալքը եւ, ժպտալով, աչքով արեց ընկերին,—մի լաւնածնօտ չուվաշի,—ակնարկելով կալանաւորուհուն։ Զինուորները կալանաւորուհու հետ ցած իջան սանդուխներից ու դիմեցին դէպի գլխաւոր մուտքը։

Գլխաւոր մուտքի դռան դռնակը բացուեց, եւ, նրա չէքից անցնելով բակը, զինուորներն ու կալանաւորուհին դուրս եկան պարսպից եւ գնացին քաղաքի քարած փողոցների մէջով։

Կառապանները, խանութպանները, խոհարարուհիները, բանուորները, աստիճանաւորները կանգ էին առնում եւ հետաքրքրութեամբ դիտում կալանաւորուհուն. ոմանք ժաժ էին տալիս գլուխները ու մտածում. «այ թէ ուր է հասցնում մարդուս՝ վատ վարքը, մեր վարքին չը նմանող վարքը»։ Երեխաները սարսափով էին նայում այդ աւազակուհու վրայ, հանգստանալով նրանով միայն, որ նրա յետեւից գնում են զինուորներ ու նա այժմ արդէն ոչինչ չէ կարող անել։ Մի գիւղացի, որ բերած ածուխը ծախելուց յետոյ պանդոկում թէյ էր խմել, մօտեցաւ նրան, խաչակնքեց երեսը ու մի կոպէկ ողորմութիւն տուեց նրան։ Կալանաւորուհին կարմրեց, իջեցրեց գլուխը ու ինչ-որ բան ասաց։

Զգալով դէպի ինքը ուղղուած հայեացքները, կալանաւորուհին աննկատելի կերպով, առանց գլուխը չուռ տալու, աչքի պոչով նայում էր իրան դիտողներին եւ այդ նրա վրայ դարձած ուշադրութիւնը ուրախացնում էր նրա սիրտը։ Ուրախացնում էր նրա սիրտը նաեւ գարնանային օդը, որ այդտեղ մաքուր էր, համեմատած բանտի օդի հետ, բայց մանր գալու սովորութիւնը կորցրած ու բանտի կոչտ-կոպիտ հողաթափները հագած ոտները ցաւում էին քարերը կոխելիս, եւ նա նայում էր ոտների տակը ու աշխատում որքան կարելի է թեթեւ քայլել։ Անցնելով ալիւրի խանութի մօտով, որի առաջին՝ շորոր գալով չրջում էին աղաւնիները, որոնց ոչ ոք ձեռք չէր տալիս, կալանաւորուհին քիչ մնաց ոտքով խփէր նրանցից մէկին. աղաւնին թռչէք առաւ ու, թափահարելով թեւերը, թռաւ ուղիղ կալանաւորուհու ականջի մօտով, հողմահարելով նրան։ Կալանաւորուհին ժպտաց ու յետոյ ծանր հոգոց քաշեց, յիշելով իր դրութիւնը։

II

Կալանաւոր Մասլօվայի պատմութիւնը չատ սովորական պատմութիւն էր։ Մասլօվայի մայրը մի չամուսնացած ճորտ կին էր, որ իր կովապահ մօր հետ ապրում էր գիւղում երկու քոյր կալուածատէր օրիորդների մօտ։ Այդ չամուսնացած կինը ամէն տարի երեխայ էր բերում, և, ինչպէս գիւղերում սովորաբար անում է, երեխային կնքում էին, ու յետոյ մայրը կաթ չէր տալիս այդ անկոչ հիւրին, այդ անպէտք ու աշխատանքին խանգարող երեխային, և նա չուտով մեռնում էր քաղցից։

Այդպէս մեռել էին հինգ երեխայ։ Նրանց բոլորին էլ կընքում էին, յետոյ կաթ չէլին տալիս, և նրանք մեռնում էին։ Վեցերորդ երեխան,—մի անցուորական բօշա հօրից,—աղջիկ էր, և նրա վիճակն էլ նոյնը կը լինէր, բայց այնպէս պատահեց, որ երկու պառաւած օրիորդներից մէկը մտաւ գոմանոցը յանդիմանելու կովապահներին սերից կովահոտ գալու համար։ Գոմանոցում պառկած էր ծննդկանը իր գեղեցիկ, առողջ երեխայի հետ։ Պառաւ օրիորդը յանդիմանութիւն արեց համ սերի համար, համ այն բանի համար, որ ծննդկան կնոջը ներս են թողել գոմանոցը, եւ ուզում էր արդէն դուրս գալ, երբ տեսնելով երեխային՝ գորովը շարժուեց եւ ցանկութիւն յայտնեց նրա կնքամայրը լինել։ Այդպիսով նա կնքեց երեխային ու յետոյ, խղճալով իր սանիկին, կաթ ու փող էր տալիս մօրը, եւ աղջիկը մնաց կենդանի։ Պառաւ օրիորդները հէնց այդ պատճառով «պատուած» էին անուանում աղջկան։

Երեխան երեք տարեկան էր, երբ մայրը հիւանդացաւ ու մեռաւ։ Կովապահ տատը դժկամակութեամբ էր պահում թոռին։ Պառաւ օրիորդները, տեսնելով այդ, վերցրին աղջկան իրանց մօտ։ Սեւաչիկ երեխան չափազանց կայտառ ու սիրելի աղջիկ դուրս եկաւ, եւ պառաւ օրիորդները մխիթարւում էին նրանով։

Պառաւ օրիորդները երկուս էին—փոքրը՝ Սօֆիա Իվանօվնան, որ աւելի բարի էր և աղջկայ կնքողն էր, եւ մեծը՝ Մարիա Իվանօվնան, որ աւելի խիստ էր։ Սօֆիա Իվանօվնան զուարճասէր-զարդարասէր էր փոքրիկին, կարդալ էր սովրեցնում եւ ուզում էր տանու աղջիկ դարձնել նրան։ Մարիա Իվանօվնան ասում էր, թէ աղջկան պէտք է այնպէս կրթել, որ լաւ բան անող, լաւ աղախին դուրս գայ, ուսոի եւ խստապահանջ էր դէպի նա, պատժում էր նրան եւ մինչեւ անգամ ծեծում, երբ տրամադրութիւնը տեղը չէր լինում։ Այդպէս երկու տարբեր ազդեցութիւնների տակ մեծանալով՝ աղջիկը դարձաւ վերջը էլ ոչ աղախին, էլ ոչ տանու աղջիկ։ Այդպէս էլ անուանում էին նրան, մինչեն անունով, ոչ կատակ եւ ոչ կատակ չէ։ Նա կար էր անում, հատաքում էր սենեակները, լուացքի մաքրում էր սրբերի պատկերները, բոլում էր, աղում ու մանրացնում սուրճը, թեթեւ լուացք էր անում և ժամանակ առ ժամանակ նստում էր օրիորդների հետ ու կարդում նրանց համար։

Նրան ուզողներ կային, բայց նա ոչ մէկի կինն էլ չէր կամենում լինել, որովհետեւ զղում էր, որ իրան ուզող այդ աշխատաւոր մարդկանց հետ ապրելը ծանր կը լինի իր նման ազատական կեանքի քաղցրութեանն ընտելացած հնոջ համար։

Այսպէս ապրեց նա մինչեւ 16 տարեկան հասակը։ Իսկ երբ 16 տարին լրացաւ, նրա աղջիկ-պարոնների մօտ հիւր եկաւ նրանց քրոջ որդին, մի հարուստ եւ իշխան ուսանող, եւ կատիւշան սիրահարուեց նրա վրայ, առանց համարձակուելու խոստովանել այդ նրան եւ նոյն իսկ ինքն իրան։ Ձեռոյ, երկու տարի անցած, այդ նոյն երիտասարդը, պատերազմ դնալիս, ճանապարհին մտաւ իր մօրաքոյրների մօտ, մնաց նրանց մօտ չորս օր եւ ճանապարհ ընկնելու նախընթաց օրը հրապուրեց Կատիւշային ու, վերջին օրը մի հատ հարիւր ռուբլիանոց ճիտելով նրա բուռը, թողեց ու գնաց։ Նրա հեռանալուց հինգ ամիս անցած՝ Կատիւշան հաստատ իմացաւ, որ յղի է։

Այդ ժամանակից՝ ամէն ինչ ընկաւ նրա աչքից, ու նա միայն այն էր մտածում, թէ ինչպէս ազատուի գալիք ամօթից, եւ սկսեց ոչ միայն անսիրտ ու վատ ծառայել օրիորդներին, այլ նոյն իսկ,—ինքն էլ չը գիտէր, թէ ինչպէս պատահեց այդ,—յանկարծ մի օր սրտի հաւաքածը դուրս տուեց։ Օրիորդներին կոշտ-կոպիտ խօսքեր ասաց, որոնց համար ինքն էլ յետոյ ղղջում էր, եւ խնդրեց, որ հաշիւը տան։

Եւ օրիորդները, որոնք սաստիկ ժպտոտ էին նրանից, արձակեցին նրան։ Նրանց մօտից նա աղախին մտաւ գաւառամայր պրիստաւի մօտ, բայց այդ տեղում երեք ամիս միայն կարողացաւ մնալ, որովհետեւ պրիստաւը, մի յիմնադիայ ծերունի, սկսեց հետամուտ լինել նրան, եւ մի անգամ, երբ ծերունին առանձին եռանդ ցոյց տուեց այդ բանում, Կատիւշան բարկացաւ, տխմար ու քաւթառ չուն անուանեց նրան եւ այնպէս հրեց կրծքին, որ նա վայր ընկաւ։ Կատիւշային դուրս արին կալատաթեան համար։ Ուրիշ տեղ ծառայութեան մտնելն աւելորդ էր, չուտով ծնելու էր եւ նա տեղաւորուեց մի գիւղական այրի տատոր մօտ, որ դինու առուտուր էր անում։ Երեխայրերը հեչա էր, բայց տատիկը, որ գիւղում մի հիւանդ կին էր ազատել, վարակեց Կատիւշային ծննդաբերական ջերմախտով, եւ երեխային, որ աղայ էր, ուղարկեցին անտէր մանուկների ապաստարանը, ուր նա, ինչպէս պատմում էր տանող պառաւը, տեղ հասնելուն պէս մեռաւ։

Տատիկ մօտ տեղափոխուելիս՝ Կատիւշայի ունեցած-չունեցածը 127 ռուբլի էր,—27-ը՝ աղախնութեամբ վաստակածը, իսկ 100-ը՝ հրապարչի տուածը։ Իսկ երբ տատիկ մօտից դուրս եկաւ նա, մօտը մնացել էր ընդամէնը 6 ռուբլի։ Նա փող պահել ամենեւին չը գիտէր,—իր վրայ էլ էր չատ ծախսում, ամէն ուզողի էլ տալիս էր։ Տատիկը նրանից երկու ամսուայ ապրուստի—ուտելու ու թէյի—համար վերցրեց 40 ռուբլի, 25 ռուբլի գնաց երեխային ուղարկելու ծախս, 40 ռուբլի տատիկը պահեց իրը պարտք կով առնելու համար, մի 20 ռուբլու չափ էլ այնպէս, ձեռի հետ ծախսուեց չորեքշնի, ընծաների վրայ, այնպէս որ երբ Կատիւշան առողջացաւ, էլ փող չունէր ձեռքին ու պէտք է տեղ փնտռէր։ Տեղ գտնուեց մի անուտաստոսի մօտ։ Անուտաստոսը պատկառած մարդ էր, բայց նա էլ, պրիստաւի պէս, հէնց առաջին օրից սկսեց հետամուտ լինել նրան։ Կինն իմացաւ ու, մի անգամ մարդուն Կատիւշայի հետ մենակ բռնելով անենակուած, վրայ պրծաւ, որ ծեծի Կատիւշային։ Կատիւշան դիմադրեց եւ կռիւ սկսուեց, որի պատճառով նրան տանից դուրս արեցին՝ առանց աշխատաւձի վարձը վճարելու։ Այն ժամանակ Կատիւշան գնաց քաղաք ու իջաւ իր մօրաքրոջ տանը։ Մօրաքրոջ մարդը կազմարար էր եւ առաջ լաւ էր ապրում, բայց այժմ բոլոր պատուէրը տուղներին կորցրել էր ու չարունակ հարբած էր, խմիչքի տալով ամէն բան, ինչ որ ընկնում էր ձեռքը։

Մօրաքոյրն էլ մի փոքրիկ լուացքանոց էր պահում եւ նրանով համ ինքն էր կերակրուում երեխաների հետ, համ էլ փուչ մարդուն էր պահպանում։ Նա Մասլօվային լուացարարի տեղ առաջարկեց իր մօտ։ Բայց տեսնելով մօրաքրոջ մօտ ապրող լուացարար կանանց վարած ծանր կեանքը, Մասլօվան

մլուլ էր տալիս եւ զանազան գրասենեակներում աղախնի տեղ էր փնտռում։ Եւ տեղ գտաւ մի տիկնոջ մօտ, որ ապրում էր իր երկու դիմացիկ որդիների հետ։ Մի չաբաթ անցած, տիկնոջ մեծ որդին, որ 6-րդ դասարանի աշակերտ էր եւ արդէն բնխերն եկած տղայ, ուսումից կտրուեց ու էլ հանդիստ չէր տալիս Մասլօվային։ Մայրը մեղքը ամբողջացրէս Մասլօվայի վրայ քցեց ու ճանապարհ դրեց նրան։ Նոր տեղ չէր ճարւում, բայց բանն այնպէս պատահեց, որ մի օր Մասլօվան, սպասաւորներ յանձնարարող գրասենեակը գնալով, հանդիպեց այնտեղ մի տիկնոջ, որի թխլիկ ու թեւաբաց ձեռնաները զարդարուած էին մատանիներով ու ապարանջաններով։ Այդ տիկինը, տեղ փնտռող Մասլօվայի դրութիւնն իմանալով, տուեց նրան իր հասցէն ու հրաւիրեց իր մօտ։ Մասլօվան գնաց։ Տիկինն ընդունեց նրան քաղցրութեամբ, հիւրասիրեց կարկանդակներով ու քաղցր գինով և իր աղախնին տոմսակ տալով մի ինչ որ տեղ ուղարկեց։ Երեկոյեան սենեակը մտաւ մի բարձրահասակ մարդ, երկայն ալեխառն մազերով և սպիտակ մօրուքով. այդ ծերունին իսկոյն նայեց Մասլօվայի կողքին և սկսեց՝ փայլատակող աչքերով ու ժպտալով գինել նրան և կատակներ անել հետը։ Տանտիրուհին կանչեց ծերունուն մի եա սենեակը և Մասլօվան լսեց, որ տանտիրուհին ասում է իր մասին, թէ թարմ է, գիւղացի է։ Յետոյ տանտիրուհին կանչեց Մասլօվային ու ասաց, թէ այդ մարդը գրող է, թէ նա մեծ փողի տէր է և թէ նա ոչինչ չի խնայի, եթէ կատիւշան դուր գայ նրան։ Կատիւշան դուր եկաւ և գրասենեակապետը 25 ռուբլի տուեց նրան, խոստանալով յաճախ տեսնուել հետը։ Փողերը չատ չուտ հատան,—Մասլօվան վճարեց մօրաքրոջը իր ապրուստի վարձը և առաւ իր համար նոր շոր, գլխարկ ու ժապաւէններ։ Մի քանի օրից յետոյ գրողը կըրկին մարդ ուղարկեց նրա յետևից։ Նա գնաց։ Այդ պարոնը նորից 25 ռուբլի տուեց նրան և առաջարկեց տեղափոխուել առանձին բնակարան։

Գրողի վարձած բնակարանում ապրելիս՝ Մասլօվան սիրեց մի ուրախ գործակատարի, որ նոյն բակումն էր կենում։ Կատիւշան ինքը յայտնեց այդ բանը գրողին և տեղափոխուեց մի ուրիշ փոքրիկ բնակարան։ Իսկ գործակատարը, որ խոստացել էր ամուսնանալ նրա հետ, առանց որ և է խօսք ասելու և, անշուշտ, ձգելով նրան, թողեց ու գնաց Նիժնի։ Մասլօվան մնաց մենակ։ Նա սկզբում միտք ունէր մենակ ապրել բնակարանում, բայց թոյլ չը տուին։ Այն ժամանակ նա կրկին գնաց մօրաքրոջ մօտ։ Մօրաքոյրը տեսնելով նրա վրայ մօդային շորեր,

թիկնոց ու գլխարկ, յարդանքով ընդունեց նրան և այլևս չը վըստահացաւ լուացարարի տեղ առաջարկել, այնպէս համարելով, թէ Կատիւշան հիմա կեանքի աւելի բարձր աստիճանի վրայ է կանգնած։ Այժմ արդէն լուացարար դառնալու կամ չը դառնալու հարց անգամ չը կար Մասլօվայի համար։ Նա կարեկցութեամբ էր նայում հիմա այն տաժանակիր կեանքի վրայ, որ վարում էին առաջին սենեակներում գունաթափ երեսով, նիհար թեւերով լուացարարուհիները, որոնցից մի քանիսն արդէն վարակուել էին թոքախտով, լուացք անելով ու արդուկելով 30 աստիճան տաքութիւն ունեցող սալնագոլորշու մէջ, ամառ-ձմեռ բաց պատուհաններով, եւ սարսափում էր այն մտքից, թէ ինքն էլ կարող էր մտնել այդ տաժանարանը։

Եւ ահա այդ միջոցին, երբ Մասլօվան սաստիկ նեղ դրութեան մէջ էր, որովհետև չէր կարողանում ճարել ոչ մի հովանաւոր, նրան գտաւ ու տեղաւորեց անառակատների գործակալուհիներից մէկը։

Մասլօվան արդէն վաղուց էր ծխում, բայց գործակատարի հետ կենակցելու վերջին ժամանակները և այն օրից յետոյ, երբ այդ գործակատարը նրան թողեց ու հեռացաւ, նա, քանի գնում, աւելի ու աւելի էր սովորում խմել։ Գինին գրաւում էր նրան ոչ միայն այն պատճառով, որ համով էր թւում, այլ ամենից չատ այն պատճառով, որ հնարաւորութիւն էր տալիս նրան մոռանալ իր քաչած ծանր օրերը և համարձակութիւն էր տալիս նրան ու վստահութիւն իր արժանաւորութեան նկատմամբ, համարձակութիւն ու վստահութիւն, որ նա չէր ունենում առանց գինու։ Առանց գինու նա միշտ վհատութիւն էր զգում ու ամօթ։

Գործակալուհին հիւրասիրեց Մասլօվայի մօրաքրոջը և, հարբեցնելով Մասլօվային, առաջարկեց նրան մտնել քաղաքի լաւ անառակատներից մէկը, ամենալաւը, բացատրելով նրան այդ դրութեան բոլոր ձեռնտու կողմերը և առաւելութիւնները։ Մասլօվային մնում էր ընտրել կամ աղախնի ստորացուցիչ դրութիւն, որի մէջ նա անչուշտ պէտք է ենթարկուէր տղամարդկանց հետամտութեան, կամ թէ այդպիսի մի ապահով, հանգիստ ու օրինական դրութիւն։ Բացի այդ, նա ուզում էր դրանով վրէժ հանել թէ իրան հրապուրողից, թէ գործակատարից, թէ այն բոլոր մարդկանցից, որոնք վատութիւն էին արել իրան։ Վերջապէս հրապուրում էր նրան և նրա վերջնական վճռի պատճառներից մէկն էր այն, որ գործակալուհին ասաց նրան, թէ նա ինչ շոր ուզենայ, կարող է կարել տալ իր համար,—թաւշեայ, մետաքսեայ հագուստներ, պարահանդէսի զգեստներ՝ բաց

ուսերով ու կոնքերով։ Եւ երբ Մասլովան երեսակից իրան վառ դեղնագոյն մետաքսէ զգեստում ան թաւիշէ կարուածքով (отдѣлка) ու գլխոլոր, էլ սիրտը չը կարողացաւ դիմանալ ու նա տուեց իր անցաթուղթը գործակալուհուն, որ հէնց նոյն երեկոյ կառք վարձեց ու տարաւ նրան կիտայեվայի յայտնի անառակատունը։

Եւ այդ ժամանակից սկսուեց Մասլովայի համար այն Աստուածային և մարդկային պատուիրանների դէմ յարատեւ զանցառու կեանքը, որ վարում են հարիւր ու հարիւր հազարաւոր կանայք և որ վերջանում է տասը այդպիսի կանանցից լինի համար ստժանելի հիւանդութիւններով և վաղահաս զառամութեամբ ու մահով։

Աստուածաշունչ և ցերեկուայ ընթացքում ծանր քուն պիշեցային քէֆերից յետոյ։ Ցեղոյ, ժամի երկուսից կամ երկուից անց, յոգնած-յոգնած վեր են կենում կեղտոտ անկողիններից, սէլտերի ջրով հովացնում գինուց այրուող կոկորդները, սուրճ խմում, ծոյլ-ծոյլ անց ու դարձ անում սենեակներում տանու հագուստով, բաճկոններով, խալաթներով, դուրս նայում լուսամուտներից, կիսաբերան հայհոյում իրար, յետոյ լուանում, օծուում, անուշահոտ հեղուկներով սրսկում մազերն ու մարմինները, չորերի չափը փորձում, չորերի պատճառով վիճում անառանոցը պահող կնոջ հետ, գնում իրանց հայելու մէջ, ներկում երեսները ու յօնքերը, ճաչն ուտում իւղալի ու քաղցր կերակուրներ, յետոյ հագնում վառոդն և մարմինը կիսաբաց թողնող մետաքսեայ չորեր, յետոյ դուրս գալիս զուգած, զարդարած դահլիճը, ուր ընդունում են ամեն տեսակ բնաւորութեան, հասակի և դասակարգի հիւրեր. այնուհետև դոգոռոց, կատակներ, կռիւներ, գինի, ծխախոտ, երաժշտութիւն, պարեր, երեկոյից սկսած մինչև լուսաբաց, և չաքրիզիններ, ու դարձեալ գինի, գինի ու ծխախոտ։ Եւ միայն առաւօտեան՝ ազատումն այդ բոլորից ու ծանր քուն։ Եւ այդպէս ամեն օր, և ամառ, և ձմեռ, և լի օր, և ոչ օր։

Այդպէս ապրեց Մասլովան եօթ տարի։ Այդ ժամանակի ընթացքում նա փոխեց երկու անառանոցուն և մի անգամ պատկեց հիւանդանոցում։ Եօթերորդ տարին՝ անառանոցուն մնալու օրից և ութերորդ տարին՝ նրա առաջին անկումից յետոյ, այն ժամանակ, երբ նա 26 տարեկան էր, պատահեց նրան այն բանը, որի համար նրան բանտ նստեցրին և որի համար այժմ, վեց ամիս բանտում մարդասպան ու գող կանանց հետ պահելուց յետոյ, տանում էին նրան դատարան։

III

Այն ժամանակ, երբ Մասլովան, երկար ճանապարհից յոգնած, իրան ուղեկցող զինուորների հետ մօտեցաւ նահանգական դատարանի չէնքին, նրան որդեգրող պառաւ օրիորդների այն քրոջդին,—իչխան Դմիտրիյ Իվանովիչ Նեխլիւդովը,—որ հրաժարուել էր նրան, դեռ պահած էր իր բարձր ու զուպանակաւոր խառնուած անկողնում, աղաւամազէ ներքնակի վրայ, և ծխում էր, հօլանդական կտաւէ մաքուր դիչերային չապկի օձիքը բաց ու կրծքի ծալքերը արդուկած։ Սառած աչքերով նայում էր նա իր առաջը և մտածում էր, թէ ինչ ունի անելու այդ օրը և ինչ է եղել երէկ։

Յիչելով երէկուայ երեկոն, որ նա անցրել էր կօրչագինների մօտ, որոնք հարուստ ու նշանաւոր մարդիկ էին և որոնց աղջկան, ինչպէս ենթադրում էին բոլորը, նա պէտք է առնէր, նա հոգոց քաչեց և, ծխած պապիրոսի քնթուկը դէն գցելով, ուզում էր մի հատ էլ հանել արծաթէ թութունամանից, բայց միտքը փոխեց և, վայր թողնելով կոկիկ ու ապխտակ ոտները մահճակալից, գտաւ նրանցով հոգաթաթները, գցեց դէր ուսերին մետաքսէ խալաթը և, արագ ու ծանր քայլերով, գնաց ննջարանի մօտ գտնուող զուգարանը, որ ամբողջապէս տոգորուած էր էլէքսիրների, օդլկոլոնի, ֆիքսատուարների և անուչարայր հեղուկների արհեստական հոտով։ Այնտեղ նա առանձին փոչիով մաքրեց ու անուչահոտ հեղուկով ողողեց չատ տեղերում լցրած առամները ու յետոյ սկսեց չորս կողմից լուացուել ու սրբուել զանազան երեսսրբիչներով։ Ձեռները լուաց հոտաւէտ սապոնով, մեծ խնամքով խոտակից խոզանակով երկար եղունգները, երեսն ու հատ վիզը լուաց մեծ մարմարէ լուացարանում և գնաց ննջարանի մօտ գտնուող երբորդ սենեակը, ուր ցնցուղ (դուչ) էր պատրաստուած։ Այնտեղ էլ առաջ ջրով լուաց մկանոտ ու ճարպոտ սպիտակ մարմինը, սրբուեց փրչոտ ցաքոցով, հագաւ մաքուր արդուկած փոխնորդն ու հայելու պէս իստակած կիսաչօչիկներն և, նստելով հայելու առաջ, սկսեց երկու խոզանակով սղալել փոքրիկ ու սև խուճուճ միրուքը և գլխի առաջակողմում նօսրացած գանգուր մազերը։

Նրա գործ ածած բոլոր իրեղէնները—փոխնորդը, հագուստը, ոտնամանները, փողպատները, քորոցները, օպասած չապկի կոճակները—ամենաառաջին, ամենաթանգ տեսակի էին, անկասելի, պարզ, դիմացկուն ու մնծագին։

Տասնեակ փողպատներից ու քորոցներից վերցնելով առա-

ջին պատահածները,—մի ժամանակ այդ նորութիւնն էր ու հաճոյք էր պատճառում, իսկ այժմ միւնոյնն էր,—Նեխլիւդովը հագաւ իտալական ու աթոռի վրայ պատրաստ դրած չորերը և, թէև ոչ բոլորովին թարմացած, բայց մաքուր ու անուշաբոյր, գնաց երկարուկ սեղանատունը, որի նրբատախտակ յատակը երէկ մոմել էին երեք գիւղացիներ և որի մէջ դրուած էին մի ահագին կաղնի սեղանասարքի պահարան ու նոյնպիսի մեծ բացուածքով սեղան։ Այդ սեղանի վրայ, որ ինչ որ հանդիսաւոր բան ունէր իր առիւծի թաթերի նման լայն չռած քանդակակերտ ոտներում և որ ծածկուած էր մեծ-մեծ փակագիր սկզբնատառեր կրող բարակ ու օսլայած սփռոցով, դրուած էին՝ արծաթէ սրճամանն հոտաւէտ սուրճով, նոյնպիսի չաքարաման, սերաման եւ տուած սերով և մի զամբիւղ խմորեղէնով ու թարմ հացով։ Այդ սարքի մօտ դրած էին նոր ստացուած նամակներ, լրագիրներ և Revue des deux Mondes-ի վերջին դրքոյկը։ Նեխլիւդովը՝ այն է ուզում էր զբաղուել նամակներով, երբ միջանցքը տանող դռնից չորթալով ներս մտաւ մի հասակաւոր սպասուհի կին ժանեակէ գլխաչորով, որ ծածկում էր նրա մազերի բախտի լայնացած ակօսը։ Դա Նեխլիւդովի հէնց այդ բնակարանում մեռած մօր աղախինն էր, Ագրաֆենա Պետրօվնան, որ այժմ մնացել էր հանգուցեալի որդու մօտ իբր անտեսուհի։

Ագրաֆենա Պետրօվնան զանազան ժամանակներ մօտ տաս տարի անց էր կացրել արտասահմանում Նեխլիւդովի մօր հետ և աղջիկ-պարոնի տեսք ու ձևեր ունէր։ Նա մանկութիւնից ի վեր ապրում էր Նեխլիւդովների տանը և Դմիտրիյ Իվանովիչին ճանաչում էր դեռ այն ժամանակ, երբ նա Միտենկա էր։

—Բարի առաւօտ, Դմիտրիյ Իվանովիչ։

—Բարև, Ագրաֆենա Պետրօվնա։ Ի՞նչ նոր բան կայ,—հարցրեց Նեխլիւդովը կատակով։

—Ահա նամակ կայ ձեզ. իշխանի կնոջից է թէ աղջկանից, չը գիտեմ։ Վաղուց է բերել աղախինը և սպասում է իմ սենեակում,—ասաց Ագրաֆենա Պետրօվնան, տալով նամակը և խնամասալից կերպով ժպտալով։

—Լաւ, այս րոպէիս,—ասաց Նեխլիւդովը, առնելով նամակը, և խոժոռուեց, նկատելով Ագրաֆենա Պետրօվնայի ժպիտը։

Ագրաֆենա Պետրօվնայի ժպիտը նշանակում էր, թէ նամակը իշխանուհի Կօրչագինայինն է, որի հետ, Ագրաֆենա Պետրօվնայի կարծիքով, Նեխլիւդովը ամուսնանալու էր։ Իսկ այդ ենթադրութիւնը, որ արտայայտուեց Ագրաֆենա Պետրօվնայի ժպիտով, անախորժ էր Նեխլիւդովի համար։

—Ուրեմն ասեմ սպասի,—և Ագրաֆենա Պետրօվնան,

վերցնելով ու ուրիշ տեղ դնելով սեղանը սրբելու խոզանակը, որ իր տեղումը չէր, չորորուն քայլերով դուրս եկաւ սեղանատնից։

Նեխլիւդովը բաց արեց ու սկսեց կարդալ Ագրաֆենա Պետրօվնայի տուած անուշաբոյր նամակը.

«Կատարելով ստանձնած պարտականութիւնս, այն է՝ լինել ձեր յիշողութիւնը,—գրուած էր անհաւասար եզրաւոր հաստ ու մոխրագոյն թղթի թերթի վրայ սուր-սուր, բայց լայն ձեռագրով,—յիշեցնում եմ ձեզ, որ դուք այսօր, ապրիլի 28-ին, պէտք է լինէք դատարանում իբր երդուեալ դատաւոր, ուստի և ոչ մի կերպ չէք կարող գնալ մեր ու Կօլօսօվների հետ տեսնելու պատկերները, ինչպէս դուք, ձեզ յատուկ թեթևամտութեամբ, խոստացաք երէկ. à moins que vous ne soyez disposé à payer à la cour d'assises les 300 roubles d'amende que vous vous refusez pour votre cheval *) ժամանակին ներկայ չը լինելու համար։ Ես այդ յիշեցի երէկ, ձեր գնալուց անմիջապէս յետոյ։ Ը մոռանաք ուրեմն։

Իչխ. Մ. Կօրչագինա»։

Միւս երեսում աւելացրած էր.

«Maman vous fait dire que votre couvert vous attendra jusqu'à la nuit. Venez absolument à quelle heure que cela soit **)»։

Մ. Կ.

Նեխլիւդովը նօթերը կիսեց։ Այդ տոմսակը չարունակութիւն էր այն ճարպիկ աշխատանքի, որ արդէն երկու ամսից ի վեր գործ էր դրուում նրա վրայ իշխանուհի Կօրչագինայի կողմից և կայանում էր նրանում, որ աննկատելի թելերով հետզհետէ աւելի ու աւելի էր կապում նրան իշխանուհու հետ։ Մինչ սակայն, բացի այն սովորական անվճռականութիւնից, որ ոչ շատ ջահել և ոչ թունդ սիրահարուած մարդիկ զգում են առհասարակ ամուսնութեան վերաբերմամբ, մի ուրիշ լուրջ պատճառ էլ կար, որի շնորհիւ Նեխլիւդովը, եթէ նոյն իսկ վճռէր էլ, չէր կարող իսկոյն առաջարկութիւն անել։ Այդ պատճառը կայանում էր ոչ այն բանում, որ նա 10 տարի առաջ խաբել էր ու յետոյ թողել Կատիւշային,—այդ նա բոլորովին մոռացել էր և խղճդատ չէր համարում իր ամուսնութեան համար,—այլ նրանում, որ նա այդ ժամանակ մի մարդասէր հնոջ հետ սի-

*) «Եթէ ի հարկէ տրամադիր չէք դատարանին վճարելու 300 ռուբլի տուգանք—մի գումար, որ դուք խնայում էք զրկ դնել ձեր ձիու վրայ»։

**) «Մայրիկը խնդրեց գրել ձեզ, որ ձեր ամանը սեղանի վրայ կը սպասի ձեզ մինչև գիշեր։ Անպատճառ եկէք, որ ժամին էլ լինի»։

բային կապ ունէր, որ, թէև այժմ խզուած էր իր կողմից, բայց դեռ խզուած չէր համաբուժ կնոջ կողմից։

Նեխլիւդովը շատ վախկոտ էր կանանց վերաբերմամբ, բայց հէնց նրա այդ վախկոտութիւնն էր, որ այդ մարդատէր կնոջ մէջ ցանկութիւն զարթեցրեց նուաճել նրան։ Այդ կինը այն գաւառի ազնուականների պարագլխի կինն էր, որի ընտրութիւններին մասնակցում էր Նեխլիւդովը։ Եւ այդ կինը, գլխահան անելով նրան, սկսեց նրա հետ սիրային կապ, որ Նեխլիւդովի համար օրէցօր աւելի ու աւելի գրաւիչ էր դառնում և մի և նոյն ժամանակ աւելի ու աւելի ղղուելի։ Սկզբում Նեխլիւդովը չը կարողացաւ դիմանալ հրապոյրին, իսկ յետոյ, մեղաւոր զգալով իրան նրա առաջ, չէր կարողանում խզել այդ կապը առանց նրա համաձայնութեան։ Այդ էր ահա պատճառը, որ Նեխլիւդովը կարծում էր, թէ ինքը իրաւունք չունի առաջարկութիւն անել կօրչագինային, եթէ նոյն իսկ ցանկանար այդ բանը։

Սեղանի վրայի նամակների մէջ կար մէկը հէնց այդ կնոջ մարդուց։ Նրա գիրն ու կնիքը տեսնելով, Նեխլիւդովը կարմրեց և խակոյն զգաց իր մէջ եռանդի այն սառակացումը, որ նա միշտ զգում էր վտանգը մօտենալիս։ Բայց նրա յուզումը իզուր էր,— այդ պարոնը, որ այն գաւառի ազնուականութեան պարագլուխն էր, որտեղ գտնւում էին Նեխլիւդովի գլխաւոր կալուածները, յայտնում էր Նեխլիւդովին, թէ մայիսի վերջերին գաւառական գեմստվոյի արտակարգ ժողով էր նշանակուած և խնդրում էր նրան անպատճառ գալ ժողովին և donner un coup d'épaule (օգնել) դպրոցներին ու հաղորդակցութեան ճանապարհներին վերաբերեալ կարևոր հարցերում, որոնց լուծման ժամանակ զօրեղ դիմադրութիւն էր սպասւում յետադիմական կուսակցութեան կողմից։

Ազնուականութեան պարագլուխը պատահմամբ մարդ էր ու մի քանի համախոհների հետ կռւում էր սկսուած յետադիմական շարժման դէմ և ամբողջովին անձնատուր էր եղել այդ կռւին ու ոչինչ չէր խնայում իր անբախտ ընտանեկան կեանքի մասին։

Նեխլիւդովը յիշեց այն բոլոր բոպէները, երբ ինքը սաստիկ տանջուել էր այդ մարդու պատճառով,—յիշեց, թէ ինչպէս մի անգամ ինքը կարծում էր, թէ նա խմացել է ամէն բան, ու պատրաստւում էր մենամարտել նրա հետ, մտադիր լինելով օդի մէջ դատարկել ռևոլվերները, յիշեց և այն սարսափելի անախորժութիւնը, երբ այդ մարդու կինը յուսահատ դուրս պրծաւ պարտէզը, լճակում խեղդուելու դիտաւորութեամբ, և երբ ինքը վազվզում էր պարտէզում, փնտռելով նրան։ «Չեմ կարող այժմ գնալ և չեմ կարող ոչինչ ձեռնարկել, մինչև որ այդ կինը

չը պատասխանի ինձ», մտածեց Նեխլիւդովը։ Մի չարաթ առաջ ինքը նրան վճռական նամակ էր գրել, որի մէջ մեղաւոր էր ճանաչում իրան, պատրաստակամութիւն էր յայտնում ամէն կերպ քաւել իր մեղքը, բայց, այնուամենայնիւ, պնդում էր, որ, հէնց նրա օգտի տեսակէտից, իրանց յարաբերութիւնները պէտք է ընդ միշտ վերջացած համարել։ Ահա այդ նամակի պատասխանն էր, որ նա սպասում էր, բայց չէր ստանում։ Այն հանգամանքը, որ պատասխան չը կար, մասամբ լաւ նշան էր։ Եթէ նա համաձայն չը լինէր յարաբերութիւնները խզելուն, վաղուց գրած կը լինէր կամ նոյն իսկ ինքը եկած, ինչպէս անում էր առաջ։ Նեխլիւդովը լսել էր, որ այնտեղ այժմ մի ինչ որ օֆիցեր կայ, որ սիրաշահում է նրան, և այդ բանը տանջում էր նրա սիրտը խանդոտութեամբ ու մի և նոյն ժամանակ ուրախացնում էր նրան, յոյս ներշնչելով, որ կարող է ազատուել իրան տղջրող կեղծութիւնից։

Միւս նամակը նրա կալուածների գլխաւոր կառավարչից էր։ Կառավարիչը գրում էր, թէ անհրաժեշտ է, որ ինքը Նեխլիւդովը գնայ այնտեղ ժառանգութեան իրաւունքների մէջ հաստատուելու համար և, բացի այդ, վճռելու համար այն հարցը, թէ ինչպէս պէտք է չարունակել անտառութիւնը, այնպէս, ինչպէս մօր ժամանակն էր, թէ՞ ինչպէս ինքը առաջարկում էր հանդուցեալ իշխանուհուն և այժմ էլ առաջարկում է իշխանին, —աւելցնել գիւղատնտեսական գործիքների թիւը և սեփական միջոցներով մշակել այն բոլոր հողը, որ վարձով է տրւում գիւղացիներին։ Կառավարիչը գրում էր, թէ այդ տեսակ չնախագործումը չատ աւելի ձեռնտու կը լինի։ Միւս ժամանակ կառավարիչը ներողութիւն էր խնդրում, որ մի քիչ ուշացնում է հաշուել առ 1-ն ամսի ստանալիք 3,000 ռուբլին, որ կ'ուղարկի հետեւեալ օրսոյն։ Ուշացնելու պատճառն էլ այն էր, որ ոչ մի կերպ չէր կարողացել հաւաքել այդ փողը գիւղացիներից, որոնք այնտեղ են հասցրել իրանց անբարեխղճութիւնը, որ նրանց վճարել տալու համար անհրաժեշտ էր դիմել իշխանութեան օգնութեան։ Այդ նամակը և ախորժելի էր Նեխլիւդովի համար, և անախորժ։ Ախորժելի էր զգալ իր իշխանութիւնը մեծ սեփականութեան վրայ, իսկ անախորժ էր այն, որ նամակը յիշեցնում էր նրան, թէ ինքը վաղուց ի վեր ապօրինի է ճանաչել այն բանը, որ ինքը հողի տէր է, և թէ ինքը ջահելութեան առաջին տարիներում Հերբերտ Սպենսերի յափշտակուած հետեւողներից էր և մանաւանդ, լինելով խոշոր հողատէր, սաստիկ ազդուել էր նրա Social statics-ի այն տեսութիւնից (թեզիս), թէ արդարութիւնը թոյլ չէ տա-

վիս մանաւոր հողային սեփականութիւն ունենալ։ Երիտասարդութեանը յատուկ չիտակութեամբ ու վճռականութեամբ նա ոչ միայն ասում էր այն ժամանակ, թէ հողը չէ կարող մանաւոր սեփականութեան առարկայ լինել, և ոչ միայն համալսարանում չարաղրութիւն էր գրում դրա մասին, այլ և իրօք տուեց այն ժամանակ մի փոքր հողաբաժին (որ մօրը չէր պատկանում, այլ անձամբ իրան, իբր ժառանգութիւն հօրից) գիւղացիներին, չը ցանկանալով, իր համոզմունքների հակառակ, հողի տէր լինել։ Այժմ, ժառանգաբար մեծ հողատէր դառնալով, նա պէտք է երկուսից մէկը անէր,—կամ հրաժարուէր իր սեփականութիւնից, ինչպէս արել էր տաս տարի առաջ հօրական մնացած 200 օրաւարի վերաբերմամբ, կամ թէ լռելեայն համաձայնութեամբ սուտ ու սխալ ճանաչէր իր առաջուան բոլոր գաղափարները։

Առաջինը նա չէր կարող անել, որովհետև բացի հողից ապրուստի ուրիշ ոչ մի միջոց չունէր։ Պետական ծառայութիւն մտնել նա չէր կամենում, մինչդեռ, միւս կողմից, նա արդէն իւրացրել էր կենցաղավարութեան չոայլ սովորոյթներ, որոնցից անհնար էր համարում ձեռք քաշել։ Աւանք՝ այդ անհրաժեշտ էլ չէր, որովհետև չը կային այլևս ոչ այն համոզմունքի ոյժը, ոչ այն վճռականութիւնը, ոչ էլ այն անսփոփութիւնն ու զարմացնելու ցանկութիւնը, որ նա ունէր երիտասարդ ժամանակ։ Գալով երկրորդին,—այն է՝ հրաժարուել հողատիրութեան ապօրինութիւնը ապացուցանող այն պարզ ու անհերքելի հիմքերից, որ նա այն ժամանակ քաղել էր Սպենսերի Social statics-ից և որոնց փայլուն հաստատութիւնը նա յետոյ, շատ անցած, գտել էր Հէնրի Ջօրջի գրուածքներում,—այդ էլ նա ոչ մի կերպ չէր կարող անել։

Եւ այդ պատճառով կառավարչի նամակը անախորժ էր նրա համար։

IV

Սուրճը խմելուց յետոյ Նեխլիւդովը գնաց առանձնասենեակը՝ նայելու ծանուցագրին, թէ ժամի քանիսին պէտք է լինէր դատարանում, և պատասխան գրելու իշխանութիւն։ Առանձնասենեակը գնալու համար պէտք էր անցնել արհեստանոցով։ Արհեստանոցում կախուած էին զանազան էսքիզներ և կար մի նկարակալ՝ սկսուած ու չուռ տուած նկարով, որի վրայ Նեխլիւդովը չարչարուել էր երկու տարի։ Այդ նկարի ու էսքիզների և առհասարակ ամբողջ արհեստանոցի տեսքը յիշեցրեց նրան

նկարչութեան մէջ այլևս առաջ գնալու անկարողութեան զգացմունքը, որ առանձնապէս սաստկացել էր վերջին ժամանակները։ Այդ զգացմունքը նա բացատրում էր գեղեցկագիտական ճաշակի նուրբ զարգացմամբ, բայց և այնպէս այդ գիտակցութիւնը շատ անախորժ էր նրա համար։

Երթը տարի առաջ նա թողել էր պետական ծառայութիւնը, վճռելով, որ ինքը կոչումն ունի նկարիչ լինելու և գեղարուեստական գործունէութեան բարձրութիւնից փոքր ինչ արհամարհաբար էր նայում միւս բոլոր գործունէութիւնների վրա։ Այժմ դուրս էր գալիս, որ նա իրաւունք չունէր այդպես վերաբերուելու, ուստի և ամէն մի յիշողութիւն այդ բանի համար ծանր ազատխորժ էր դրա համար։ Ծանր զգացմունքով նայեց նա արհեստանոցի բոլոր այդ ճոխ պարագաներին և տխուր տրամադրութեամբ մտաւ առանձնասենեակ, որ մի բարձր եւ շատ մեծ սենեակ էր ամէն տեսակ զարդերով, պարագաներով ու յարմարութիւններով։

Սեղանի աջքում, պայմանաժամաւոր թղթերի բաժանմունքում, Նեխլիւդովը իսկոյն գտաւ Ջանուցագիրը, որի մէջ գրուած էր, թէ դատարանում պէտք է լինել ժամի տասնուվեցին։ Եւ նատեց մի տոմսակ գրելու իշխանութիւնն, թէ շնորհակալ է հրաւէրի համար և թէ կաշխատի ազատել ծաշին։ Բայց առաջին գրած կոմսիակը ձղեց,—զարմանք էր, ~~գրելիս~~ ~~վիրաւորական~~ մտերմական, երկրորդը գրեց,—սառն էր գրերէ վիրաւորական։ Այդ էլ ձղեց և հուսկ ապեց էլեքտրական զանգի կոճակը։ Դռնով ներս մտաւ մի տարիքաւոր մոայլ տեսքով, երեսը աժիլած ու ծնօտամորուքը թողած և մխրճոյն բամբակագործ գոգնոցը կապած լաքեյ։

— Խնդրեմ ուղարկէք կառքի։

— Լսում եմ։

— Եւ ասացէք,— այնտեղ սպասում է կորչագիների աղախինը,— որ շնորհակալ եմ, կաշխատեմ գալ։

— Լսում եմ։

«Այդ անքաղաքավարութիւն է, բայց չեմ կարող գրել։ Միևնոյնն է, այսօր կը տեսնվեմ Հետը»,— մտածեց Նեխլիւդովը և գնաց հագնվելու։

Երբ հագնուած դուրս եկաւ պատշգամբը, ժամօթ կառապանի ուղեկից դօղաւոր կառքը արդէն սպասում էր նրան։

— Երէկ դուք նոր էիք դուրս եկել կորչագիների մօտից,— ասաց կառապանը, շապկի սպիտակ օձիքի մէջ կիսով չափ ղուռ տալով Հուժկու, արեւառ վիզը,— որ ես եկայ այնտեղ։ Դռնապանն ասաց՝ նոր դուրս եկան»։

2410-54

«Կառապաններին էլ են յայտնի իմ յարաբերութիւնները կորչագինների հետ», մտածեց Նեխլիւդովը և այն չվճռած հարցը, որ վերջերը շարունակ զբաղեցնում էր նրան,— պէտք է ամուսնանալ կօրչագինայի հետ թէ ոչ,— նորից կանգնեց նրա առաջ, և նա, ինչպէս այդ ժամանակ իր վճռին ենթակայ հարցերի մեծ մասի վերաբերմամբ, վոչ մի կերպ չէր կարողանում վճռել ոչ դէպ, ոչ դէպ: Ի նպատակ ամուսնանալուն ընդհանրապէս՝ այն կար նախ և առաջ, որ ամուսնութիւնը, վերացնելով սեռական կեանքի անկանոնութիւնը, բացի ընտանեկան օջախի հաճոյքներից՝ տալիս էր նաև հնարաւորութիւն բարոյական կեանք վարելու, ինչպէս նա անում էր այդպիսի ընտանեկան կեանքը. երկրորդը և գլխաւորապէս, այն վոր Նեխլիւդովը յոյս ուներ, թէ ընտանիքը, երեխաները իմաստ կը տան նրա այժմեան անբովանդակ կեանքին: Այդ ի նպատակ ամուսնութեան էր ընդհանուր առմամբ: Իսկ ամուսնութեան դէմ էր, առաջինը, բոլոր ոչ ջահել ամուրիներին յատուկ ահը իրանց ազատութիւնը կորցնելու և երկրորդը, մի անգիտակցական երկիւղ կնոջ գաղտնախորհուրդ էութիւնից: Իսկ մասնաւորապէս ինպատակ ամուսնութեան Միսիի հետ (կօրչագինայի անունը Մարիա էր, բայց յայտնի շրջանի բոլոր ընտանիքներում ընդունված սովորութեան համեմատ նրան մանկանուն էին տվել) կար առաջինը այն, որ նա տոհմիկ էր և ամէն բանում, հագուստից սկսած մինչև խօսելու, մտածելու, ժպտալու ձևը, ջոկում էր ոչ թէ մի բացառիկ բանով, այլ «օրինաւորութեամբ»,— Նեխլիւդովը ոչ մի ուրիշ բառով չէր կարողանում արտայայտել այդ յատկութիւնը, որ շատ բարձր էր գնահատում. երկրորդը կար և այն, որ Միսին իրան, Նեխլիւդովին, բոլոր մեւս մարդկանցից բարձր էր գնահատում և ուրեմն, նրա կարծիքով, հասկանում էր իրան: Եւ այն հանգամանքը, որ Միսին հասկանում էր նրան, այսինքն ընդունում էր նրա բարձր արժանաւորութիւնները, ապացոյց էր Նեխլիւդովի աչքում Միսիի խելօքութեան և հիշատ դատելու ընդունակութեան: Իսկ մասնաւորապէս Միսիի հետ ամուսնանալու դէմ կար, առաջին այն, որ շատ հաւանականօրէն կարելի կը լինէր գտնել Միսիից էլ շատ աւելի արժանաւորութիւններ ունեցող և ուրեմն Նեխլիւդովին աւելի ևս արժանի հարսնացու օրիորդ, և երկրորդը, այն, որ Միսին 27 տարեկան էր եւ ուրեմն Նեխլիւդովից առաջ անշուշտ գրաւուած կը լինէր ուրիշներով,— և այդ միտքը տանջում էր Նեխլիւդովին: Նրա հպարտութիւնը չէր հաշտվում այն բանի հետ, որ Միսին նոյն իսկ ամուսնանալուց՝ կարող էր միրել ոչ նրան, այլ մի

ուրիշին: Ի հարկէ, Միսին չէր կարող իմանալ, թէ կարող է պատահել Նեխլիւդովին, բայց հէնց այն միտքը միայն, թէ Միսին կարող էր առաջ սիրած լինել ուրիշին, վիրաւորում էր նրան:

Այնպէս որ նոյնքան հիմք կար ի նպաստ ամուսնութեան, որքան և ամուսնութեան դէմ: Գոնէ իրանց այժով այդ հիմքերը հաւասար էին միմեանց, և Նեխլիւդովը, լինքն իր վրայ ծիծաղելով, անուանում էր իրան Բուրիդանի էշ*): Եւ այնուամենայնիւ մնում էր այդ էշի դրութեան մէջ, չիմանալով որն ընտրել երկու խուրձերից:

«Սանկը, աղնուականների պարագլխի կնոջից, Մարիա Վասիլիևնայից, նամակ չը ստացած ու այդ հարցը բոլորովին չը վերջացրած, միևնոյնն է, ես չեմ էլ կարող ոչինչ անել», ասաց նա լինքն իրան:

Եւ այդ դիտակցութիւնը, թէ նա կարող է և պարտական է յետաձգել վճիռը, ախորժելի էր նրա համար:

«Սակայն, այդ բոլորը յետոյ կը մտածեմ կը տեսնեմ», ասաց նա լինքն իրան, երբ նրա կառքը արդէն բոլորովին անձայն մօտեցաւ դատարանի մուտքին, կանգ առնելով նրա առաջի ասֆալտի վրայ:

«Այժմ պէտք է բարեխղճօրէն կատարել իմ հասարակական պարտականութիւնը, ինչպէս միշտ անում եմ և պարտաւոր եմ համարում անել: Բացի դրանից, յաճախ հետաքրքիր էլ է լինում այդ», ասաց նա լինքն իրան և դռնապանի մօտով մտաւ դատարանի սրահը:

V

Դատարանի միջանցքներում սաստիկ չարժում էր տիրում արդէն, երբ Նեխլիւդովը մտաւ այնտեղ:

Սպասաւորները զանազան թղթերով ու յանձնարարութիւններով արագ-արագ գնում գալիս էին, կամ սրընթաց յետ ու առաջ վազվզում, հնալով ու ոռնները քստմնելով, առանց գեռնիցը կտրելու: Պրիստաւները, փաստաբանները ու դատա-

*) XIV դարի սխոլաստիկ փիլիսոփայ Բուրիդանին են վերագրում հետևեալ օրինակը, որ մի ժամանակ յաճախ բերում էր կամքի ազատութեան գաղափարը պաշտպանողների դէմ. ենթադրելով, թէ մի սոված կամ ծարաւ էշ գտնում է երկու համանման խուրձերի կամ ջրով լի ամանների արանքում, հաւասար հեռաւորութեամբ երկուսից էլ, պնդում էին, թէ այդ էշը կը սահկէր քաղցից կամ ծարաւից, եթէ նրա կամքը անպայման ազատ լիներ ընտրութեան մէջ, որովհետև ոչ մի հիմքով չունէր նա ընտրելու այդ երկու համանման բաներից մէկը կամ միւսը: Ե. Թ.

ւորները դէս ու դէն էին գնում, իսկ ինդրաւորները և ձերբակալութեան չենթարկուած մեղադրեալները ոխոտ-ոխոտ մեզ էին գալիս պատերի մօտ կամ նստած սպասում էին։

—Ո՞րտեղ է նահանգական դատարանը,—հարցրեց Նեխլիւդովը սպասաւորներից մէկից։

—Ո՞ր մէկը։ Քաղաքացիական բաժանմունք կայ, դատաստանական պալատ կայ։

—Երդուեալ դատաւոր եմ ես։

—Ուրեմն քրէական բաժանմունքն է ձեզ պէտք։ Այդպէս էլ կ'ասէիք։ Այսպէս կը գնաք դէպի աջ, յետոյ դէպի ձախ, և երկրորդ դուռը կը լինի։

Նեխլիւդովը գնաց նրա ցոյց տուած կողմը։

Սպասաւորի ասած դռան մօտ երկու հոգի կանգնած սպասում էին. մէկը մի բարձրահասակ, հաստ վաճառական էր,—մի բարեհոգի մարդ, որ անչուշտ լաւ նախաճաշել ու խմել էր և ամենատարբեր տրամադրութեան մէջ էր,—միւսը մի գործակատար էր՝ հրէայ ծագումով։ Նրանք բոլոր գնի մասին էին խօսում, երբ Նեխլիւդովը մօտեցաւ նրանց ու հարցրեց, թէ այնտեղ է արդեօք երդուեալների սենեակը։

—Այստեղ է, պարոն, այստեղ։ Դուք էլ մեզնից էք, երդուեալ էք,—հարցրեց բարեհոգի վաճառականը, ուրախ-ուրախ նշան անելով աչքով։

—Ուրեմն միասին կ'աշխատենք,—չարունակեց նա Նեխլիւդովի դրական պատասխանից յետոյ.—2-րդ գիլդիայի վաճառական Բակլաշով,—ասաց նա, մեկնելով փափուկ, լայն ու չը ծալուող ձեռքը.—այո, պէտք է աշխատել։ Ո՞ւմ հետ պատիւ ունիմ։

Նեխլիւդովն ասաց իր ազգանունը և մտաւ երդուեալ դատաւորների սենեակը։

Երդուեալների փոքրիկ սենեակում մօտ տասը հոգի տեսակ-տեսակ մարդիկ կային։ Բոլորն էլ նոր էին եկել և ոմանք նստած էին, ոմանք էլ մեն էին գալիս, զննելով միմեանց ու ծանօթանալով իրար հետ։ Մի պաշտօնաթող ծառայող կար նըշանադգեստով, միւսները սիւրտուկով էին կամ պիջակով, բացի մէկից, որ գիւղացու հագուստով էր։

Զը նայելով, որ դրանցից չատերը բանից գետ էին ընկել և ատում էին, թէ իրանց համար ծանրութիւն է այդ, այնուամենայնիւ բոլորի երեսների վրայ էլ արտայայտւում էր մի թեթև հաճոյք, առաջ եկած կարևոր հասարակական գործ կատարելու պիտակցութիւնից։

Երդուեալները, որը ծանօթացած իրար հետ, որն էլ հէնց այնպէս, միայն զուշակելով, թէ ով՝ ով պէտք է լինի, խօսում էին

իրար մէջ եղանակի մասին, վաղահաս գարնան մասին, առաջիկայ գործերի մասին։ Նեխլիւդովի հետ ծանօթ չեղողները չատ պակսին ծանօթանալ, ամենից առաջ՝ առանձին պատիւ համարելով այդ իրանց համար։ Եւ Նեխլիւդովը, ինչպէս առհասարակ անծանօթ մարդկանց մէջ եղած ժամանակ, ընդունում էր այդ իրը մի բան, որ այդպէս էլ պէտք է լինի։ Եթէ մէկը նրան հարցնէր, թէ ինչու է նա իրան մարդկանց մեծ մասից բարձր համարում, նա չէր կարող պատասխան տալ, որովհետև նրա ամբողջ կեանքը ոչ մի առանձին արժանաւորութիւն չէր ներկայացնում։ Իսկ այն բանը, որ նա լաւ անգլիերէն, ֆրանսերէն ու գերմաներէն արտասանութիւն ունէր, կամ որ նրա սպիտակեղէնը, հագուստը, փողպատն ու չապկակոճակները այդ ապրանքների ամենաառաջին հայթայթողներից էին առնուած, ոչ մի կերպ չէր կարող,—ինքն էլ այդ հասկանում էր,—հիմք ծառայել նրան գերազանց մարդ համարելու։ Եւ սակայն նա անկասկած իրան գերազանց մարդ էր համարում ու իր վերաբերմամբ ցոյց տրուող յարգանքի նշանները ընդունում էր իրը պարտաւորաչափ մի բան, և վիրաւորւում էր, երբ այդ չէր լինում։ Երդուեալների սենեակում հէնց այդ անախորժ զգացմունքը ունեցաւ նա չնորհիւ մէկի անյարդանք վերաբերմունքին դէպի ինքը։ Երդուեալների թուում մէկը ծանօթ դուրս եկաւ Նեխլիւդովին։ Պետր Գերասիմովիչն էր այդ (Նեխլիւդովը ոչ մի ժամանակ չէր իմացել նրա ազգանունը և նոյն իսկ մի քիչ պարծենում էր՝ այդ բանով, որ չը գիտէ նրա ազգանունը), նրա քրոջ երեխաների նախկին ուսուցիչը։ Այդ Պետր Գերասիմովիչը այժմ դիմնազիայի ուսուցիչ էր։ Նա միշտ անտանելի էր թուում Նեխլիւդովին իր անհիմն մտերմական վերաբերմունքով, իր ինքնագոհ քրքիջով և առհասարակ, ինչպէս ասում էր Նեխլիւդովի քոյրը, իր «հօմմունա-կանութեամբ»։

—Չը՛ը, դուք էլ թոռն ընկաք,—բարձր քրքիջով հանդիպեց Նեխլիւդովին Պետր Գերասիմովիչը։—Զը կարողացաք դուրս պրծնել, օձիքներդ ազատել։

—Ես ամենևին միտք էլ չեմ ունեցել օձիքս ազատելու,—խիստ ու ոխոտ ձայնով ասաց Նեխլիւդովը։

—Օ՜, մեծ քաղաքացիական առաքինութիւն է այդ։ Բայց կացէք, երբ որ կը քաղցէք ու քնից կը ղրկուէք, կը տեսնէք, թէ ինչ կ'ասէք այն ժամանակ,—աւելի ևս բարձրաձայն քրքջալով ասաց Պետր Գերասիմովիչը։

«Այս տէրտէրի տղան իսկոյն կը սկսի «դու»-ով խօսել ինձ հետ», մտածեց Նեխլիւդովը և, այնպիսի տրամութիւն արտայայտելով երեսին, որ բնական կը լինէր միայն այն դէպքում,

եթէ նրան այդ րոպէին հաղորդած լինէին իր բոլոր հարազատների մահը, հեռացաւ նրանից ու մօտեցաւ մի խմբի, որ կազմուել էր ինչ որ մի բան տաք-տաք պատմող մի ածիլուած, բարձրահասակ ու տեսքով պարոնի չուրջը։ Այդ պարոնը խօսում էր քաղաքացիական բաժնում այդ ժամանակ քննուող մի դատի մասին, իբրև իրան շատ լաւ ծանօթ գործի մասին, տալով դատաւորների ու հռչակաւոր փաստաբանների անուններն ու հայրանունները։ Նա պատմում էր, թէ ինչ զարմանալի դարձուածք էր կարողացել տալ գործին հռչակաւոր փաստաբաններից մէկը, այնպէս որ միւս կողմի գործատէրը, մի պառաւ կին, չը նայելով իր կատարեալ արդարութեանը, ստիպուած էր լինելու ղուր տեղը ահագին փող հատուցանել իր հակառակորդին։

—Հանճարեղ փաստաբան է,—ասում էր նա։

Շրջապատողները ակնածութեամբ էին լսում նրան և ոմանք աչխատում էին իրանց նկատողութիւնները կցել նրա խօսքերին, բայց նա բոլորի խօսքն էլ կտրում էր, կարծէք թէ միայն ինքը կարող էր ինչպէս հարկն է իմանալ ամեն բան։

Ջը նայելով, որ Նեխլիւդովը ուշ էր եկել, էլի պէտք եղաւ երկար սպասել. պատճառը դատարանի անդամներից մէկն էր, որ դեռ չէր եկել տնից։

VI

Նախագահողը չուտ էր եկել դատարան։ Նախագահողը գէր ու բարձրահասակ մի մարդ էր, մեծ-մեծ ու սպիտակող ծնօտամիրուքներով։ Նա ամուսնացած էր, բայց չատ անառակ կեանք էր վարում, ինչպէս եւ իր կինը։ Նրանք չէին խանդարում միմեանց։ Այդ առաւօտ նա տոմսակ էր առացել ամառը իրանց տանը ապրած և այժմ հարաւից Պետերբուրգ գնացող չվէյցարուհի դաստիարակչուհուց, որ դրում էր, թէ ինքը ժամի երեքից մինչև վեցը քաղաքում կը լինի ու կը սպասի նրան «Իտալիա» հիւրանոցում։ Ուստի և նա ուզում էր այսօրուայ նիստը աւելի վաղ սկսել ու աւելի վաղ վերջացնել, որպէսզի կարողանար մինչև ժամի վեցը այցելել այդ կարմրաչէկ կլարա Վասիլիևնային, որի հետ անցկալ ամառ սիրային յարաբերութիւններ էր սկսել ամառանոցում։

Առանձնասենեակը մտնելով, նա կողպեց դուռը, թղթերի պահարանի ներքևի դարակից հանեց երկու հատ մարմնամարզական ծանրոցներ և 20 չարժուամ արեց դէպի վեր, դէպի առաջ, դէպի աջ ու ձախ և դէպի ներքև, և յետոյ երեք անգամ թեթև պզտիկ ծանրոցները գլխավերևին բռնած։

«Ոչ մի բան այնպէս չէ կազդուրում, ինչպէս առաջ ջրով ցրցկուելը և մարմնամարզութիւնը», մտածեց նա, մատնանմանելով ոսկէ օղ անց կացրած ձախ ձեռքով չօշափելով աջ կռան դուրս պրծած մկանը։ Նրան դեռ մնում էր անել moulinet *) (նա միչտ անում էր այդ երկու չարժուամը՝ առհասարակ երկար նստելուց առաջ), երբ դուռը ցնցուեց։ Ով որ ուզում էր բանալ դուռը։ Նախագահը չտապով տեղը դրեց ծանրոցները և բաց արեց դուռը։

—Ներողութիւն,—ասաց նա։

Ներս մտաւ դատարանի անդամներից մէկը ոսկէօղ ակնոցով, ցածրահասակ, ուսերը վեր քաշած և դէմքը խոժոռուած։

—Է՛լի չը կայ Մատվէյ Նիկիտիչը,—ասաց անդամը ժպտալով։

—Դեռ ոչ, պատասխանեց նախագահը, հագնելով համազգեստը։—Միչտ ուշանում է։

—Զարմանալի է, ինչպէս չէ ամաչում,—ասաց անդամը և բարկացած նստեց, հանելով պապիրօսները։

Դատարանի այդ անդամը, որ չատ ճչտապահ մարդ էր, այդ առաւօտ անախորժ ընդհարումն էր ունեցել իր կնոջ հետ այն պատճառով, որ կինը որոշած ժամանակից առաջ էր ծախսել ամբողջ ամսի համար իրան տուած փողը։ Կինը խընդրում էր, որ նա միւս ամսուայ փողից կանխիկ տայ իրան, բայց նա պատասխանեց, թէ չի չեզուել իր սկզբունքից։ Կռուելիս կինն ասաց, որ, եթէ այդպէս է, ճաշ չի լինիլ այդ օրը, թող տուն չը գայ ճաշելու։ Այդ խօսքի վրայ, նա թողեց հեռացաւ, վախենալով, որ կինը կը կատարի սպառնալիքը, որովհետև նրանից ամեն բան սպասելի էր։—«Դէ արի ու կարգին, բարոյական կեանք վարիր,—մտածում էր նա, նայելով պայծառացած, առողջ, զուարթ ու բարեհոգի նախագահի վրայ, որ արմունկները լայն չտած, սիրուն սպիտակ ձեռքերով սղալում էր ոսկեկար օձիքի երկու կողմը ձգուող երկար ու խիտ սպիտակող ծնօտամիրուքները,—դա միչտ գոհ է և ուրախ, իսկ ես տանջւում եմ ու տանջւում»։

Ներս մտաւ քարտուղարը և ինչ որ գործ բերեց։

—Շատ չնորհակալ եմ,—ասաց նախագահը ու կպցրեց պապիրօսը։—Ո՞ր գործն ենք առաջինը քննելու։

—Իմ կարծիքով, թունաւորման գործը,—իբր թէ անտարբերութեամբ ասաց քարտուղարը։

---

*) Պտտվելով անել, faire le moulinet, կը նշանակի արագութեամբ պտտցնել իր շուրջը մի փայտ, մի սուր, մի ծանրոց։ Ե. Թ.

—Շատ լաւ, թող լինի թունաւորման գործը,—ասաց նախագահը, ի նկատի ունենալով, որ այդ այնպիսի գործ է, որ կարելի է մինչև ժամի 4-ը վերջացնել ու յետոյ գնալ:—Իսկ Մատֆէյ Նիկիտիչը չը՞ եկել:

—Դեռ չէ:

—Իսկ Բրէվէն այստե՞ղ է:

—Այստեղ է,—պատասխանեց քարտուղարը:

—Ուրեմն, եթէ տեսնէք, ասէք իրան, որ թունաւորումից կը սկսենք:

Բրէվէն դատախազի այն օգնականն էր, որ մեղադրելու էր այդ նիստում,

Միջանցքը դուրս գալով, քարտուղարը պատահեց Բրէվէնին: Ուսերը բարձր վեր քաշած, համազգեստի կոճակները բաց և թղթակալը կռնատակին, նա արագ քայլերով, գրեթէ վազելազ, անցնում էր միջանցքով, թխթխկացնելով կրունկներով և աջաց ձեռքը այնպէս տարուբերելով, որ ձեռքի մակարդակը ուղղահայեաց էր կազմում նրա քայլերի ուղղութեանը:

—Միխայիլ Պետրովիչը խնդրեց իմանաս, պատրաստ էք արդեօք,—հարցրեց նրանից քարտուղարը:

—Ի հարկէ. ես միշտ պատրաստ եմ,—ասաց դատախազի օգնականը:—Ո՞ր գործն է առաջինը:

—Թունաւորումը:

—Շատ լաւ,—ասաց դատախազի օգնականը. բայց նա ամենևին չատ լաւ չէր զգում այդ,—ամբողջ գիշերը անքուն էր անցրել նա: Նրանք ճանապարհ էին քցել իրանց ընկերոջը, շատ խմել էին ու թուղթ էին խաղացել մինչև ժամի 2-ը, իսկ յետոյ գնացել էին այն անատակատունը, ուր դեռ վեց ամիս առաջ գտնւում էր Մալօվան, այնպէս որ նա հէնց թունաւորման գործը ժամանակ չէր ունեցել կարգալու եւ այժմ էր ուզում աչքի անցնել: Իսկ քարտուղարը, իմանալով, որ նա չէ կարդացել թունաւորման գործը, դիմամբ խորհուրդ տուեց նախագահին առաջինը քցել այդ գործը: Քարտուղարը ազատասիրտ, մինչև անգամ արմատական հայեացքների տէր մարդ էր, իսկ Բրէվէն պահպանողական էր և նոյն իսկ, ինչպէս Ռուսաստանում ծառայող գրեթէ բոլոր գերմանացիները, նուիրուած էր ռուսաստանութեան. քարտուղարը չէր սիրում նրան և նախանձում էր նրա պաշտօնին:

—Իսկ ներքինիացողների գործը ինչպէս է լինելու,—հարցրեց քարտուղարը:

—Ասացի, որ վիճաների բացակայութեան պատճառով չեմ

կարող,—ասաց դատախազի օգնականը.—այդպէս էլ կը յայտնեմ դատի ժամանակ:

—Բայց չէ՞ որ միևնոյնն է...

—Չեմ կարող,—ասաց դատախազի օգնականը և, առաջուան պէս ճօճելով ձեռքը, վազեց իր առանձնասենեակը:

Ներքինիացողների աղանդին պատկանողների գործը նա յետաձգում էր գործի տեսակէտից մի բոլորովին անկարեւոր ու անպէտք վկայի բացակայութեան պատճառով և միայն նրա համար, որ այդ գործը, ինտէլիգէնտ երդուեալ դատաւորներից կազմուած առանձնում քննուելիս, կարող էր արդարացմամբ վերջանալ: Իսկ ինչպէս առաջուց պայմանաւորուել էին նախագահի հետ, այդ գործը պէտք է քցէին գաւառական քաղաքի նստաշրջանին, ուր մեծ մասամբ գիւղացիներից էին լինելու երդուեալները և ուր այդ պատճառով աւելի յոյս կարելի էր ունենալ, որ մեղադրական կը լինի դատավճիռը:

Շարժումը միջանցքում հետզհետէ սաստկանում էր: Ամենից աւելի մարդ կար քաղաքացիական բաժանմունքի դահլիճի մօտ, ուր քննւում էր այն գործը, որի մասին պատմում էր երդուեալ դատաւորների սենեակում դատական գործերի սիրահար սիրունատես պարոնը: Ընդհատման միջոցին այդ դահլիճից դուրս եկաւ այն պատաւ կինը, որի կայքը հանճարեղ փաստաբանը յաջողեցրել էր խլել յօգուտ նրա ճարպիկ հակառակորդի, որ ոչ մի իրաւունք չունէր այդ կայքի վրայ,—այդ պիտէին և դատաւորները ու ես աւելի ինքը գանգատաւորն ու իր փաստաբանը, բայց այնպիսի հնարք էին բանեցրել նրանք, որ չէր կարելի չառնել պատաւից նրա կայքը և չը տալ ճարպիկ դատաւորին: Պատաւը մի հաստլիկ կին էր զարդարուն հագուստով և ահագին ծաղիկներով գլխարկի վրայ: Դուրս գալով դահլիճի դռնից, նա կանգ առաւ միջանցքում և, չտելով հաստլիկ ու կարճլիկ ձեռքերը, չարունակ կրկնում էր, դիմելով իր փաստաբանին. «Այսպէս էլ բան կը լինի: Ասացէք, խնդրեմ: Այսպէս էլ բան կը լինի»: Փաստաբանը նայում էր նրա գլխարկի ծաղիկներին ու չէր լսում նրան, ինչ որ մտածմունքով զբաղուած:

Պատաւի յետևից քաղաքացիական բաժնի դահլիճի դռնից արագ դուրս եկաւ մի պարոն, լայնաթաց ժիլետի փայլուն լանջապանով և նոյնքան փայլուն ինքնագոհ դէմքով: Հէնց այն հռչակաւոր փաստաբանն էր այդ, որ այնպէս արհեց, որ ծաղկատոր պատաւը դատարկաձեռն մնաց, իսկ իրան 10 հազար վարձատրութիւն տուող ճարպիկ գանգատաւորը 100 հազարից աւելի ստացաւ: Բոլորի աչքերը ուղղուեցին փաստաբանի կողմը,

որ զգում էր այդ ու իր ամբողջ արտաքինով կարծէք պատմ էր՝ «Պէտք չեն անձնուիրութեան ոչինչ արտայայտութիւններ», և որ արագ անցաւ նրանց կողքով։

VII

Վերջապէս Մատթէյ Նիկիտիչն էլ եկաւ, և դատաստանական պրիստաւը,—մի նիհար ու երկարավիզ մարդ կողքահան քայլուածքով ու կողքահան դուրս ցցուած ներքևի շրթունքով,—մտաւ երդուեալ դատաւորների սենեակը։

Այդ դատաստանական պրիստաւը ազնիւ մարդ էր ու համակրանաւարա, բայց չէր կարողանում ոչ մի տեղում երկար մնալ, որովհետև ժամանակ առ ժամանակ սկսում էր խմել ու այնպէս էր խմում, որ հարբելուց աչք չէր բաց անում։ Երեք ամիս առաջ նրա կնոջը հովանաւորող մի կոմսուհի սարքել էր նրա համար այդ տեղը, և նա մինչև այժմ մնում էր այդ տեղում և ուրախանում դրանով։

—Հը՞, պարոններ, հաւաքուել էք բոլորդ,—ասաց նա քթին դնելով պէնսնէյն ու նայելով նրա վրայից։

—Կարծեմ, բոլորս,—ասաց ուրախ վաճառականը։

—Այ կը սուզենք այժմ,—ասաց պրիստաւը և, գրպանից մի թերթ հանելով, սկսեց կարդալ երդուեալների անունները, նայելով նրանց վրայ, ում անունը կարդում էր, երբեմն պէնսնէյի վրայից, երբեմն նրա մէջով։

—Պետական խորհրդական Ի. Մ. Նիկիֆորով։

—Ես եմ,—ասաց սիրունատես պարոնը, որ գիտէր բոլոր դատաստանական գործերը։

—Պաշտօնաթող գնդապետ Իվան Սեմիօնովիչ Իվանով։

—Այստեղ եմ,—ձայն տուեց պաշտօնաթողի հանդգնատես նիհար մարդը։

—2-րդ գիլդիայի վաճառական Պետր Բակլաչով։

—Կայ,—ասաց բարևհոգի վաճառականը, ամբողջ բերնով ժպտալով։—Գտարատ ենք։

—Թիկնապահ գնդի պօրուչիկ Իչխան Դմիտրիյ Նեխլիւդով։

—Ես եմ,—պատասխանեց Նեխլիւդովը։

Դատաստանական պրիստաւը պէնսնէյի վրայից նայելով, առանձնապէս քաղաքավարի ու համեղի ձևով գլուխ տուեց, կարծէք ջոկելով այդպիսով նրան ուրիշներից։

—Կապիտան Իւրիյ Դմիտրիևիչ Գանչենկո, վաճառական Գրիգորիյ Եֆիմովիչ Կուլիչով, և այլն, և այլն։

Ամենքը, բացի երկուսից, ներկայ էին։

—Այժմ համեցէք դահլիճը, պարոններ,—ասաց պրիստաւը, հաճելի չարժումով ցոյց տալով դուռը։

Բոլորը չարժուեցին տեղից և, մէկ-մէկի ճանապարհ տալով դռան մէջ, դուրս եկան միջանցքը և միջանցքից մտան ատեանի դահլիճը։

Մի մեծ ու երկար սենեակ էր դատարանի դահլիճը։ Նրա մի ծայրում բարձրութիւն էր շինուած, ուր տանում էին երեք աստիճաններ։ Բարձրութեան մէջտեղում դրուած էր մի սեղան, որի վրայ կանաչ մահուդ էր քցած՝ աւելի մուգ կանաչ ծոպերով։ Սեղանի յետևում դրուած էին երեք բազկաթոռներ չատ բարձր կաղնի ու քանդակակերտ թիկունքներով, իսկ բազկաթոռների յետևում ոսկեզօծ չրջանակում կախուած էր թագաւորի պայծառ պատկերը։ Այ անկիւնում կախուած էր Քրիստոսի փշէպսակ պատկերը ու դրուած էր դրքակալը. նոյն այ կողմումն էր գտնւում և դատախազի բարձր ու թեք գրասեղանը։ Ձախ կողմում, խորքում, դատախազի գրասեղանի դէմ ու դէմը, գտնւում էր քարտուղարի սեղանը, իսկ հասարակութեան տեղից աւելի մօտ մի ճախարակաչաչ կաղնի վանդակ ու նրա յետևում մեղադրեալների դեռ պարապ նստարանը։ Այ կողմում, բարձրութեան վրայ չարուած էին երկու կարգ աթոռներ, նոյնպէս բարձր թիկունքներով, իսկ ներքևում՝ սեղաններ վաստաբանների համար։ Դահլիճը վանդակով բաժանուում էր երկու մասի։ Այդ բոլորը առաջի մասումն էր։ Իսկ յետևի մասը ամբողջապէս բռնուած էր նստարաններով, որոնք մէկ-մէկից բարձրանալով հասնում էին մինչև յետին պատը։ Դահլիճի յետին մասում, առջևի նստարանների վրայ նստած էին չորս կին, բանուորուհիների կամ աղախինների տեսքով, և երկու աղամարդ,—նոյնպէս բանուորներից,—որոնք ամենաբարձրացած էին դահլիճի սարք ու կարգի վեհութիւնից, ուստի և վախվխելով էին փափսում իրար մէջ։

Երդուեալ դատաւորներից յետոյ քիչ անցած՝ իր կողքահան քայլուածքով դուրս եկաւ մէջտեղ դատաստանական պրիստաւը և բարձր ձայնով, որով կարծես ուզում էր վախեցնել ներկայ եղողներին, աղաղակեց.

—Ատեանը գալիս է։

Բոլորը վեր կացան, և կողքի սենեակից դուրս եկան դահլիճի բարձրութեան վրայ դատաւորները,—առաջ նախագահողը իր մկանները ու գեղեցիկ ծնօտամիրուքներով. յետոյ ոսկեզօղ ակնոցաւոր մոայլ անդամը, որ այժմ աւելի ևս մոայլ էր, որովհետև նիհարից անմիջապէս առաջ պատահել էր իր աներօրդուն, որ դատաստանական պաշտօնների թեկնածու էր. աներօրդին

հաղորդել էր նրան, թէ ինքը քրոջ մօտից է գալիս ու քոյրն յայտնել է, որ ճաշ չէ պատրաստելու։

—Այնպէս որ, եղբայր, պանդոկ կը գնանք,—ասաց աներ-որդին ծիծաղելով։

—Ծիծաղելու ոչինչ չը կայ,—ասաց դատարանի մեայլ անդամն ու աւելի ևս մռայլուեց։

Վերջապէս դուրս եկաւ դատարանի երրորդ անդամը, միշտ ուշացող Մատիէյ Նիկիտիչը, որ երկար միրուքով և մեծ ու վայր քաշուած բարի աչքերով մի մարդ էր։ Այդ անդամը առաւօտ դռան (կառարը) ունէր և հէնց այդ առաւօտ, բժշկի խորհրդով, նոր ձևի բժշկութիւն էր սկսել, որ այդ օրը նրան սովորականից էլ աւելի յետ էր քցել նիստից։ Այժմ, երբ նա եկնում էր բարձրունեան վրայ, նրա դէմքը կենտրոնացած արտայայտութիւն ունէր, որովհետև նա սովորութիւն ունէր ամեն տեսակ մտքոց-ներով նախապատրաստել այն հարցերի լուծումը, որ ինքն իրան տալիս էր։ Այժմ էլ նա նախապատրաստում էր, հաշուելով իր քայ-լերը,—եթէ առանձնատեղեակ դռնից մինչև իր բազկաթոռը արած քայլերի թիւը առանց մնացորդի բաժանուելու լինի երեքով, կը նշանակի բժշկութեան նոր եղանակը կը լաւացնի նրա առաջքան հիւանդութիւնը, իսկ եթէ չը բաժանուի առանց մնացորդի—չի լաւացնի։ Ընդամենը 26 քայլ էր, բայց նա մի փոքրիկ քայլ էլ արեց և ուղիղ 27-րդ քայլին մօտեցաւ բազկա-թոռին։

Ոտներով օձիքներով հաւաքուածները հագած նախագահի ու անդամների կերպարանքները շատ ազդու էին։ Նրանք իրանք էլ զբաղած էին այդ և երեքն էլ, կարծէք քաշուելով իրանց վե-հութիւնից, շտապով և աչքները հաւասարութեամբ քաշ քցելով, նստեցին իրանց քանդակակերտ բազկաթոռների վրայ կանաչ մահուդով ծածկուած սեղանի յետևում, որի վրայ դրուած էին մի թանաքաման, մի քանի թերթ մաքուր թուղթ և զանազան մեծութեան ու նոր ծայր հանած մատիտներ։ Դատաւորների հետ միասին դուրս եկաւ և դատախազի օգ-նականը։ Նա նոյնպէս շտապ-շտապ, թղթակալը կռնատա-կին ու ձեռքը ճօճելով, անցաւ դէպի իր տեղը, պատու-հանի կողքին, և իսկոյն սկսեց խորասուզուած կարդալ ու աչքի անցնել զանազան թղթեր, օգտուելով իւրաքանչիւր րո-պէից, որպէսզի պատրաստուէր գործի համար։ Այդ չորրորդ անդամն էր միայն, որ մնդազրում էր այդ դատախազը։ Նա շատ փոքրասէր էր և հաստատ վճռել էր առաջ գնալ պաշտօ-նում, ուստի և անհրաժեշտ էր համարում դատապարտիչ վճիռ կայացնել տալ ամեն անգամ, երբ ինքը մեղադրելիս կը լինի։

Թունաւորման գործի էութիւնը նա գիտէր ընդհանուր գծերով և արդէն կազմել էր մեղադրական ճառի ծրագիրը, բայց նրան պէտք էին էլի մի քանի փաստեր,—այդ փաստերն էին, որ նա այժմ շտապ-շտապ դուրս էր գրում գործից։

Քարտուղարը նստած էր բարձրութեան հակապիր ծայրում և, պատրաստած լինելով այն բոլոր թղթերը, որոնք կարող էին պէտք գալ գործի ժամանակ, աչքի էր անցնում արտասահմա-նում ապրած մի յօդուածի, որ նա երէկ ձեռք էր բերել կար-դալու համար։ Նա ուզում էր խօսել այդ յօդուածի մասին մեծ միրուքաւոր դատաւորի հետ, որ նոյն հայեացքների տէր էր, ինչ որ ինքը, և խօսելուց առաջ ուզում էր ծանօթանալ այդ յօդուածի հետ։

VIII

Նախագահը, աչքի անցնելով թղթերը, մի քանի հարցեր տուեց դատաստանական պրիստաւին ու քարտուղարին, և դրա-կան պատասխաններ ստանալով, կարգադրեց, որ ներս բերեն մեղադրեալներին։ Վանդակի յետևին դռնեցող դուռը իսկոյն բա-ցուեց, և ներս մտան երկու ժանդարմ՝ զլխարկներով և սրա-մերկ, իսկ նրանց յետևից՝ մեղադրեալները, առաջ մի կարմրա-չէկ ու պէպէնոտ աղամարդ, յետոյ՝ երկու կին։ Տղամարդը հա-գին ունէր կալանաւորի խալաթ, որ չատ լայն էր ու երկար նրա համար։ Դատարանը մտնելիս՝ նա ձեռները ձիգ կախ էր քցել անդրավարտիքի երկու կողքով և մեծ-մեծ մատները լայն չտել, պահելով այդպիսով չափազանց երկար թևքերը ընկնելուց։ Առանց աչքերը բարձրացնելու դատաւորների ու հանդիսական-ների վրայ, նա ուշադրութեամբ նայում էր այն նստարանին, որի կողքով անց էր կենում։ Անցնելով նստարանի միւս կողմը, նա զգուշութեամբ ու տեղ տալով ուրիշներին նստեց նրա ծայ-րին և սկսեց, աչքերը նախագահի վրայ յառած, չարժել ծնօտ-ների մկանները, ասես մի բան չընկալով ինքն իրան։ Նրա յետե-ւից ներս մտաւ մի հասակաւոր կին՝ կալանաւորուհու խալաթով ու գլխաչորով, սպիտակամորթագոյն երեսով և անյօգնք ու ան-թերթևնիք կարմիր աչքերով։ Այդ կինը բոլորովին հանդիսա-էր թուում։ Երբ նա անցնում էր իր տեղը նստելու, խալաթը մի քանի դէմ առաւ և նա խնամքով, առանց չտապելու, ազատեց խալաթը և նստեց։

Երրորդ մեղադրեալը Մասլօվան էր։

Հէնց որ նա մտաւ, դահլիճում եղող բոլոր աղամարդկանց աչքերը դարձան նրա վրայ և երկար ժամանակ չէին կտրում

նրա սև ու պապղոն աչքերով սպիտակ դէմքից և խալաթի տակից դուրս ընկած բարձր կրծքից։ Մինչև անգամ ժանդարմը, որի կողքով Մասլօվան անցաւ, առանց աչքը հեռացնելու նայում էր նրան անցնելու ու նստելու ժամանակ և յետոյ, երբ Մասլօվան նստեց, ժանդարմը, կարծես զգալով, թէ մեղք է գործել այդպէս նայելով, արագ չուռ եկաւ ու, իրան թափ տալով, աչքերը մեխեց ուղիղ իր առաջը գտնուող պատուհանին։

Նախագահը սպասեց, մինչև որ մեղադրեալները բռնեցին իրանց տեղերը, և հէնց որ Մասլօվան նստեց, նա դիմեց քարտուղարին։

Սկսուեց սովորական գործավարութիւնը,—թուեցին երդուեալ դատաւորներին, քննեցին չեկածների հարցը, տուգանք դրեցին նրանց վրայ, որոշեցին հեռանալու թոյլտուութիւն ուզողների խնդիրքը և լրացրեցին չեկածների պակասը պահեստի դատաւորներով։ Յետոյ նախագահը ծալատեց տոմսակները, լցրեց ապակէ սափորի մէջ ու, մի քիչ քաշելով հասպզեստի ոսկեկար թևքերը, սկսեց մէկ-մէկ հանել, բանալ ու կարդալ տոմսակները։ Յետոյ նախագահը վայր թողեց թևքերը և քահանային առաջարկեց երդուեցնել առնականներին։

Դեղնած ու ուռած երեսով, դարչնագոյն վերարկուով, ոսկէ լանջախաչով ու վերարկուի կողքիցը կպցրած մի ուրիշ փոքրիկ չքանչանով ծերունի քահանան, ուռած ոտները դանդաղ փոխելով վերարկուի տակին, մօտեցաւ սուրբ պատկերի տակ դրուած դրքակալին։

Առնականները վեր կացան ու, խռնուելով, դիմեցին դէպի դրքակալը։

—Համեցէք,—ասաց քահանան, թխլիկ ձեռքովը չօչափելով լանջախաչը ու սպասելով, որ բոլորը մօտենան։

Երբ առնականները բոլորը վեր եկան աստիճաններովը բարձրութեան վրայ, քահանան՝ ճաղատ ու սպիտակած գլուխը մի կողմի վրայ ծռելով՝ անց կացրեց ուրարի մէջ և ցանցառ մազերը դրսեվով դիմից առնականներին...

Այդ քահանան՝ 46 տարի էր, որ ծառայում էր, և պատրաստում էր 4 տարուց յետոյ ոճնել իր յոբելեանը, ինչպէս նորերս ոճնեց մայր տաճարի աւագ քահանան։ Նահանգական դատարանում նա ծառայում էր դատարանների բացուելու օրից և չատ հպարտանում էր նրանով, որ երդուեցրել էր մի քանի տասնեակ հազար մարդ և որ իր զառամեալ հասակում էլ չարունակում է աշխատել յօգուտ եկեղեցու, հայրենիքի և ընտանեաց, որին, բացի անից, Թողնելու էր ոչ պակաս քան 30 հազար ռուբլի արժող տոհմատիրք Թղթեր։

—Այ ձեռներդ բարձրացրէք, իսկ մատներդ բռնեցէք այ այսպէս,—կամաց-կամաց ասաց նա ծերունական ձայնով, բարձրացնելով՝ բոլոր մատների վրայ փոսիկներ ունեցող Թխլիկ ձեռքը և պապղոն կաղմելով այդ մատներից երեքը։—Այժմ կրկնեցէք իմ յետևից,—ասաց նա ու սկսեց.—Խոստանում եմ և երդւում ամենակարող Աստուծով, Նրա Սուրբ Աւետարանի և Տէրունական կենսատար Խաչի առաջ, որ այն գործի վերաբերմամբ, որի համար...—ասում էր նա, ընդհատում անելով ամեն մի նախադասութիւնից յետոյ։—Մի իջեցրէք ձեռներդ, այսպէս բռնէք,—դիմեց նա մի երիտասարդի, որ իջեցրել էր ձեռքը...—որ այն գործի վերաբերմամբ, որի համար...

Ծնօտաճիրուքաւոր սիրունատես պարոնը, գնդապետը, վաճառականը և ուրիշները մատները քահանայի պահանջածի նման բռնել և ձեռները, կարծես մի առանձին հաճոյքով, չատ ուղիղ և չատ բարձր էին պահում, միւսները կարծես այդ անում էին ակամայ և անորոշ կերպով։ Ոմանք չատ բարձր ձայնով էին կրկնում խօսքերը, կարծես կռուի պատրաստուելով և այնպիսի հրապարակութեամբ, որ ասում էր՝ իսկ ես այնուամենայնիւ վ'ասեմ ու կ'ասեմ, իսկ միւսները միայն չնչում էին, յետ էին ընկնում քահանայից ու յետոյ, կարծես վախենալով, անժամանակ հասնում էին քահանայի յետևից. ոմանք պինդ-պինդ ու յոխորտալից ձեով էին պահում իրանց իրար հուպ տուած երեք մատները, կարծես վախենալով լինչ որ բաց թողնել ձեռքից, իսկ միւսները Թոյլ էին Թողնում մատները ու յետոյ նորից կուչ բերում։ Երդումից յետոյ նախագահը առաջարկեց երդուեալներին մի աւագ ընտրել իրանց մէջից։ Երդուեալները վեր կացան ու, խռնուելով, անցան խորհրդակցական սենեակը, ուր գրեթէ բոլորը իսկոյն հանեցին պապիրոսները ու սկսեցին ծխել։ Մէջներից մէկը առաջարկեց աւագ ընտրել սիրունատես պարոնին և բոլորը իսկոյն համաձայնեցին ու, վայր գցելով ու հանգցնելով ծխախոտները, վերադարձան դահլիճը։ Ընտրուած աւագը յայտնեց նախագահին, Թէ ով է ընտրուել, և բոլորը, միմեանց ոտների վրայով քայլելով, նորից երկու կարգ նստուեցին բարձրաթիկունք աթոռների վրայ։

Սմին ինչ ընթանում էր անարգել, արագ և ոչ առանց հանդիսաւորութեան, և այդ կանոնաւորութիւնը, յաջորդականութիւնը ու հանդիսաւորութիւնը, ամենևին, հաճոյք էին պատճառում մատնակցողներին, հաստատելով նրանց մէջ այն համոզմունքը, Թէ լուրջ ու կարևոր հասարակական գործ են կատարում իրանք։ Նեխլիւդովին էլ էր զգում այդ նոյն բանը։

Հէնց որ երդուեալները նստեցին տեղները, նախագահը

ճառ ասաց նրանց՝ իրանց իրաւունքների, պարտականութիւնների ու պատասխանատուութեան մասին։ Ճառն ասելիս, նախադահը անդադար փոխում էր իր դիրքը,—մէկ կոթնում էր ձախ կան վրայ, մէկ՝ աջ կան վրայ, մէկ բազկաթոռի մէջքին, մէկ, նրա բազուկներին, երբեմն հաւասարեցնում էր թղթի եզրները, երբեմն չիուտ էր թղթահատը, երբեմն էլ չօշափում մատիտը։

Նրանց երեսունքները, նրա ասելով, կայանում էին նրանում, որ նրանք կարող էին նախագահի միջոցով հարցեր տալ մեղադրեալներին, կարող էին մատիտ ու թուղթ ունենալ և կարող էին գնել երեկին ապացոյցները։ Նրանց պարտականութիւնը կայանում էր նրանում, որ պէտք է կեղծութեամբ չը դատէին, այլ արդարութեամբ. պատասխանատուութիւնն էլ կայանում էր նրանում, որ նրանք չը պահէին իրանց խորհրդակցութիւնների գաղտնիքը կամ յարաբերութիւններ սկսէին կողմնակի մարդկանց հետ, պատժի կ'ենթարկուէին։

Բոլորը լսում էին պատկառոտ ուշադրութեամբ։ Վաճառականը, գլուխ տատանելով չուրջը ու զսպելով աղմկալից բլկոցը, գլխով հաւանութեան նշաններ էր անում ամեն մի նախադասութեան վերջում։

IX

Վեր ջացնելով ճառը, նախագահը դիմեց մեղադրեալներին։

—Ս իմոն կարմինկին, վեր կացէք,—ասաց նա։

Ս իմոնը ջղաձգաբար վեր թռաւ։ Ծնօտների մկաններըը ըսկսեցին ուզի նման արագ շարժուել։

—Ձեր անունը։

—Սիմոն Պետրով Կարմինկին,—արագ-արագ ասաց նա ջախջախ ձայնով, ակնհայտօրէն առաջուց պատրաստուած լինելով պատասխանելու։

—Ձեր կոչումը։

—Գիւղացի եմ։

—Ո՞ր նահանգից ու գաւառից։

—Տուլայի նահանգի, Կրապիվնայի գաւառի, Կուպեանսկի վոլոստի Բօրկի գիւղից։

—Քանի տարեկան էք։

—Երեսուն երեք. ծնուել եմ հաղար ութ հարիւր...

—Ի՞նչ հաւատի էք։

—Ուղղափառ հաւատի։

—Պսակուած էք։

—Ոչ։

—Ինչով էք պարապում։

—Ծառայ էինք «Մավրիտանիա» հիւրանոցում։

—Դատուած կա՞ք առաջ։

—Ոչ մի ժամանակ դատուած չը կամ, որովհետև որ մենք առաջ ապրում էինք...

—Ձեզ դատուել առաջ։

—Տէրը վրդէ ազատէ, ոչ մի ժամանակ։

—Մեղադրական թղթի պատճէնը ստացել էք։

—Ստացել ենք։

—Նատէք։ Եվֆիմիա Իվանօվնա Բօչկօվա,—դիմեց նախագահը հետևեալ մեղադրեալին։

Բայց Սիմոնը մնացել էր կանգնած, այնպէս որ նախագահի աչքից ծածկում էր Բօչկօվային։

—Կարմինկին, նատէք։

Բայց Կարմինկինը էլի մնաց կանգնած և նատեց միայն այն ժամանակ, երբ պրիստաւը վազելով մօտեցաւ նրան և, գլուխը մի կողմ թեքած, աչքերը անբնական կերպով չռելով ու տրագիկական չչունչով ասաց՝ նատէք, նատէք։

Կարմինկինը նստեց նոյնպէս արագ, ինչպէս որ վեր էր կենում, և, խալաթի մէջ կոլոլուելով, նորից սկսեց անձայն շարժել թշերը։

—Ձեր անունը,—յոգնած-յոգնած հոգոց քաշելով դիմեց նախագահը երկրորդ մեղադրեալին, Բօչկօվային, առանց նայելու նրա վրայ և ինչ որ տեղեկութիւն փնտռելով առաջը դրուած թղթի մէջ։ Այդ այնքան սովորական գործ էր նախագահի համար, որ գործի ընթացքը արագացնելու համար՝ նա կարող էր երկու բան միանգամից անել։

Բօչկօվան 43 տարեկան էր, կոչումը—Կօլօմնա քաղաքի մեչչաններից, զբաղմունքը—ազախին նոյն «Մավրիտանիա» հիւրանոցում։ Դատի ու քննութեան տակ չէր եղել, մեղադրական թղթի պատճէնը ստացել էր։ Իր պատասխանները Բօչկօվան արտասանում էր չափազանց հանարձակ կերպով և ձայնի այնպիսի եղևէջներով, կարծէք ամեն մի պատասխանից յետոյ նա աւելացնում էր՝ «այո, Եվֆիմիա, և Բօչկօվա, պատճէնը ստացել եմ, և հպարտանում եմ դրանով, և ոչ ոքի չեմ տալ ծիծաղել»։ Բօչկօվան առանց սպասելու, որ ասեն՝ նստի, իսկոյն նստեց տեղը, հէնց որ վերջացան հարցերը։

—Ձեր անունը,—դիմեց նախագահը երրորդ մեղադրեալին, Մաթօվային։—Պէտք է վեր կենալ,—աւելացրեց նա մեղմու-

թեամբ ու քաղցրութեամբ, նկատելով, որ Մասլօվան նստած էր։

Մասլօվան արագ շարժումով վեր կացաւ և պատրաստակամութեան արտայայտութեամբ, բարձր կուրծքը դուրս քցած, առանց պատասխանելու, ուղիղ նայում էր նախագահի երեսին իր ժպտուն ու մի քիչ չիլ սև աչքերով։

—Ի՞նչպէս է ձեր անունը։

—Անունս Լիւբօվ էր,—արտասանեց նա արագ արագ։

Այդ միջոցին Նեխլիւդօվը, պէնսնէն դրած, հերթով նայում էր մեղադրեալներին այն ժամանակ, երբ նրանց հարցեր էր տալիս նախագահը։—«Չէ, անկարելի բան է», մտածում էր նա, առանց աչքերը հեռացնելու Մասլօվայից։—«Վա՛, ինչպէս թէ Լիւբօվ», մտածում էր նա՝ լսելով նրա պատասխանը։

Նախագահը ուզում էր անցնել հետևեալ հարցմունքներին, բայց ակնոցաւոր անդամը կանգնեցրեց նրան, ինչ որ մի բան չընկալով բարկացած։ Նախագահը գլխով համաձայնութեան նշան արեց ու դիմեց մեղադրեալին.

—Ի՞նչպէս թէ Լիւբօվ,—ասաց նա։—Այստեղ ուրիշ կերպ է գրուած։

Մեղադրեալը լուռ էր։

—Ես ձեզ հարցնում եմ, ինչպէս է ձեր իսկական անունը։

—Մկրտութեան անունդ,—հարցրեց բարկացկոտ անդամը։

—Առաջ կատերինա էին ասում։

«Չէ, անկարելի է», չարունակում էր ինքն իրան ասել Նեխլիւդօվը, և սակայն նա արդէն բոլորովին անկասկած գիտէր, որ այդ նա էր, հէնց այն տանու աղջիկ աղախինը, որի վրայ ինքը սիրահարուած էր մի ժամանակ, այո, սիրահարուած, որին յետոյ մի տեսակ խելացնորութեան րոպէում հրապուրեց ու թողեց և որին այնուհետև երբէք միտքը չէր բերում, որովհետև այդ յիշողութիւնը շատ կսկծալի էր, շատ ամչեցնող էր դատապարտում նրան և ցոյց տալիս, որ նա,—մի մարդ, որ այնքան հպարտ էր իր օրինաւորութեամբ,—ոչ միայն ոչ օրինաւոր մարդու նման, այլ ուղղակի ստոր կերպով էր վարուել այդ կնոջ հետ։

Այո, կատարուած էր այդ։ Նեխլիւդօվը պարզ տեսնում էր այժմ այն բացառիկ ու խորհրդաւոր առանձնայատկութիւնը, որ որոշում է իւրաքանչիւր մարդուս մի ուրիշից, որ դարձնում է իւրաքանչիւր մարդուս առանձին, միակ, անկրկնելի մի բան։ Ջր նայելով Մասլօվայի դէմքի անբնական սպիտակութեանը և գէրութեանը, այդ առանձնայատկութիւնը, այդ քաղցր, բացառիկ առանձնայատկութիւնը երևում էր այդ դէմքում, շրթունքներում, փոքր ինչ չիլ աչքերում և, գլխաւորապէս, այդ միա-

միտ, ժպտուն հայեացքում և ոչ միայն դէմքի, այլ և ամբողջ կերպարանքի վրայ դրոշմուած պատրաստակամութեան արտայայտութեան մէջ։

—Այդպէս էլ պէտք է ասէիք,—դարձեալ մի առանձին մեղմութեամբ ասաց նախագահը։—Իսկ ձեր հայրանունը։

—Ես ասլօրինի զաւակ եմ,—ասաց Մասլօվան։

—Բայց էլի ինչպէս էին ձեզ անուանում ձեր կնքահօր անունով։

—Միխայլօվա։

«Բայց ինչ կարող է արած լինել դա», չարունակում էր մտածել, մինչ այդ, Նեխլիւդօվը, դժուարութեամբ չունչ քաշելով։

—Ի՞նչպէս է ձեր ազգանունը,—չարունակում էր նախագահը։

—Մօրս ազգանունով Մասլօվա էի գրուած։

—Ձեր կոչումը։

—Մեչչաններից եմ։

—Ինքս հաւատի էր։

—Ոչուս հաւատի։

—Ձեր զբաղմունքը։ Ինչով էիք պարապում։

Մասլօվան լուռ էր։

—Ինչով էիք պարապում,—կրկնեց նախագահը։

—Այն տանն էի,—ասաց նա։

—Ի՞նչ տան,—խստութեամբ հարցրեց ակնոցաւոր անդամը։

—Ինքներդ գիտէք,—ասաց Մասլօվան, ժպտաց և իսկոյն, արագ յետ նայելով, նորից աչքը յառեց ուղիղ նախագահի վրայ։

Ինչ որ մի այնպիսի անբնական բան կար նրա դէմքի արտայայտութեան մէջ և սարսափելի ու մի և նոյն ժամանակ խղճալի բան նրա ասած խօսքերի իմաստի, այդ ժպտի ու այն արագ հայեացքի մէջ, որ նա այդ միջոցին քցեց դահլիճի վրայ, որ նախագահը աչքերը քաչ քցեց և դահլիճի մէջ մի րոպէ կատարեալ լռութիւն տիրեց։ Հասարակութեան մէջից մէկը ընդհատեց լռութիւնը ծիծաղով։ Մի ուրիշը սրսռացրեց։ Նախագահը բարձրացրեց գլուխը և չարունակեց հարցերը։

—Դատի ու քննութեան տակ չէք եղել։

—Չեմ եղել,—կամաց ասաց Մասլօվան, հոգոց քաշելով։

—Մեղադրական թղթի պատճէնը ստացել էք։

—Ստացել եմ։

—Նստէք,—ասաց նախագահը։

Մեղադրեալը չրջազգեստը յետևից բարձրացրեց այն չար-

ժամով, որով զուգուած կանայք դրսում են իրանց զգեստների տուրը (չէյֆ) ու նստեց, ծալելով փոքրիկ սպիտակ ձեռնոցը խալաթի թևքերի մէջ, առանց աչքերը նախագահից հեռացնելու։

Սկսեցին թուել կանչուած վկաներին, հեռացրին ներկայ եղող վկաներին, վճռեցին էքսպերտ բժշկի հարցը և հրաւիրեցին նրան նիստին։ Յետոյ քարտուղարը վեր կացաւ ու սկսեց կարդալ մեղադրական թուղթը։ Որոշ ու բարձր էր կարդում նա, բայց այնպէս արագ, որ նրա՝ f ու r հնչիւնները անկանոն արտասանող ձայնը մի անընդհատ, քնաբեր բոբռոց էր դառնում։ Դատաւորները կռթնում էին մէկ բազկաթոռի այս բազուկի վրայ, մէկ այն բազուկի վրայ, մէկ թիկունքի վրայ, մէկ սեղանի վրայ, մէկ փակում էին աչքերը, մէկ էլ բաց անում ու փսփսում իրար մէջ։ Ժանդարմներից մէկը մի քանի անգամ զսպեց յօրանջողի սկսուող ջղաձգութիւնը։

Մեղադրեալներից՝ կարտինկինը անդադար չարժում էր թևերը. Բօչկօվան նստած էր բոլորովին հանգիստ և ուղիղ, երբեմն երբեմն մատով քորելով գլուխը չորի տակից. Մասլօվան երբեմն մնում էր անշարժ նստած, լսելով քարտուղարին ու նայելով նրա վրայ, երբեմն էլ ցնցւում էր ու կարծես ուզում էր առարկել, կարմրում էր ու յետոյ ծանր հառաչում, փոխում էր ձեռների դիրքը, յետ էր նայում ու դարձեալ աչքը յառում քարտուղարի վրայ։

Նեխլիւդօվը նստած էր առաջին կարգում իր բարձր աթոռի վրայ, որ երկրորդն էր ծայրից, ու պէնանէն միշտ աչքին՝ նայում էր Մասլօվայի վրայ, և նրա հոգու մէջ կատարւում էր մի բարդ ու ցաւագին աշխատանք։

X

Մեղադրական թուղթը այսպէս էր կազմուած,—18... թուի յունուարի տասնեօթին «Մաւրիտանիա» հիւրանոցում յանկարծամահ էր եղել մի եկուոր մարդ—Կուրգան քաղաքի 2-րդ գիլդիայի վաճառական Ֆեոդոսեյ Եմելեանովիչ Սմելկօվ։

Տեղական 4-րդ բաժնի ոստիկանական բժիշկը վկայել էր, թէ մահը տեղի էր ունեցել ոգելից ըմպելիքների չափազանց գործածութիւնից յառաջացած սրտի պայթիւնից։

Սմելկօվի մարմինը յանձնել էին հողին։

Մի քանի օր անցած, Սմելկօվի հայրենակից ու ընկեր մի վաճառական, Տիմօխին աղդանունով, Պետերբուրգից վերադառնալով և իմանալով նրա մահուան համընթաց հանգամանքները,

կասկած յայտնեց, թէ նրան թունաւորել են՝ մօտը գտնուող փողերը յափշտակելու նպատակով։

Այդ կասկածը հաստատուեց նախնական քննութեամբ, որ հաւաստեց,—1) Սմելկօվը մահից քիչ առաջ բանկից ստացել էր 3,800 ռուբլի արծաթ։ Մինչդեռ, հանդուցեալի գոյքը պահպանողական կարգով գրի անցնելիս՝ առձեռն գտել էին միմիայն 312 ռուբլի 16 կօպէկ։ 2) Ամբողջ նախընթաց օրը և մահից առաջ ամբողջ գիշերը Սմելկօվը անց էր կացրել Լիւբկա անուշով մի աղջկայ հետ (Եկատերինա Մասլօվայի հետ) Կիտաեվայի անառականատանը և «Մաւրիտանիա» հիւրանոցում, ուր, Սմելկօվի յանձնարարութեամբ ու նրա բացակայութեամբ, Եկատերինա Մասլօվան գնացել էր անառականատնից՝ փող բերելու, որ հանել էր Սմելկօվի պայուսակից, բանալով այդ պայուսակը Սմելկօվի տուած բանալիով, «Մաւրիտանիա» հիւրանոցի սպասաւորների՝ Եվֆիմիա Բօչկօվայի և Սիմոն Կարտինկինի ներկայութեամբ։ Այն ժամանակ, երբ Մասլօվան բացել էր Սմելկօվի պայուսակը, ներկայ գտնուող Բօչկօվան ու Կարտինկինը պայուսակի մէջ տեսել էին 100 ռուբլիանոց թղթադրամների կապոցներ։ 3) Երբ Սմելկօվը Լիւբկայի հետ նրանց անառականատնից վերադարձել էր «Մաւրիտանիա» հիւրանոցը, Լիւբկան, սպասաւոր Կարտինկինի խորհրդով, տուել էր խմելու Սմելկօվին մի գաւաթիկ կօնեակ, առաջուց մէջը ածելով Կարտինկինից ստացած ինչ որ սպիտակ փոշի։ 4) Հետևեալ առաւօտեան Լիւբկան (Եկատերինա Մասլօվան) ծախել էր անառականատան տիրուհուն, վկայ Կիտաեվային, Սմելկօվի ադամանդէ մատանին, որ իբր թէ ընծայ էր ստացել Սմելկօվից։ 5) «Մաւրիտանիա» հիւրանոցի աղախին Եվֆիմիա Բօչկօվան դրել էր տեղական առևտրական բանկը իր ընթացիկ հաշուին 1,800 ռուբլի արծաթ։

Սմելկօվի դիակի դատա-բժշկական քննութիւնն ու անդամահատութիւնը և փորոտիների քիմիական հետազօտութիւնը անկասկած կերպով ապացուցել էին, թէ թոյն կայ հանգուցեալի մարմնի մէջ, որ և հիմք էր տուել եզրակացնելու, թէ մահը յառաջացել էր թունաւորութիւնից։

Իբր մեղադրեալ դատի ենթարկուածները—Մասլօվան (Լիւբօվ մականունով), Բօչկօվան և Կարտինկինը—իրանց մեղաւոր չէին ճանաչել։ Բայց այդ, 1) Մասլօվան ասել էր, թէ այն ժամանակ, երբ Սմելկօվը գնում էր Կիտաեվայի անառականատանը, որտեղ ինքը, իր ասելով, «աշխատում էր», նա իրան յիրաւի ուղարկեց «Մաւրիտանիա» հիւրանոցը փող բերելու, և ինքը, այնտեղ նրա տուած բանալիով բանալով նրա պայուսակը, վերցրեց մէջիցը 40 ռուբլի արծաթ, ինչպէս որ պատուիրուած

էր իրան, բայց դրանից դատ փող չէր վերցրել, ինչպէս կարող են հաստատել Բօշկօվան և Կարտինկինը, որոնց ներկայութեամբ էր ինքը բացել ու կողպել պայուսակը և հանել փողը։ Այնուհետև Մասլօվան ասել էր, որ ինքը, երկրորդ անգամ Սմելկօվ վաճառականի համարը գնալով, յիրաւի, Կարտինկինի խրատով, Սմելկօվին կօնեակ էր տուել խմելու մէջը՝ իր կարծելով քնաբեր փոշի ածած, որպէս զի վաճառականը քնէր ու չուտով բաց թողնէր իրան։ Մատանին ընծայել էր իրան Սմելկօվը այն ժամանակ, երբ նա ծեծել էր իրան և ինքը սկսել էր լալ ու կամեցել էր գնալ տուն։ 2) Եվֆիմիա Բօշկօվան ասել էր, թէ ինքը ոչինչ չը գիտէ կորած փողերի մասին, թէ ինքը վաճառականի համարը չէր մտել և թէ միայն Լիւբկան է իր ուզեցածովը ամէն բան արել այնտեղ և եթէ ճիշտ որ բան են գողացել վաճառականից, Լիւբկան կը լինի այդ արած այն ժամանակ, երբ վաճառականի բանալին հետը եկել էր փող տանելու։

Երբ քարտուղարը այդ տեղը կարդաց, Մասլօվան ցնցուեց ու, բերանը բանալով, յետ նայեց Բօշկօվայի վրայ։

Իսկ երբ Եվֆիմիա Բօշկօվային քննիչը ցոյց տուեց նրա՝ բանկը դրած 1,800 արծաթ ռուբլիի հաշիւը,—չարունակում էր կարդալ քարտուղարը,— ու հարցրեց՝ որտեղից է նրան այդքան փող, նա ասաց, թէ այդ փողը 12 տարուայ ընթացքում դատել են ինքը ու Սիմօն Կարտինկինը, որի հետ ինքը ամուսնանալու էր չուտով։ Սիմօն Կարտինկինն էլ իր առաջին ցուցմունքի ժամանակ խոստովանել էր, որ ինքն ու Բօշկօվան, բանալին հետը հիւրանոց եկած Մասլօվայի խրատով, գողացել էին փողը ու բաժանել իրանց ու Մասլօվայի մէջ։ Կարտինկինը այն էլ էր խոստովանել, որ ինքն փոշի էր տուել Մասլօվային վաճառականին քնացնելու համար։ Սակայն երկրորդ ցուցմունքի ժամանակ նա բացատրել էր իր մանակցութիւնը փողերի յափշտակութեան գործում, ինչպէս և Մասլօվային փոշի տալը, միմիայն Մասլօվային մեղադրելով ամէն բանում։ Իսկ Բօշկօվայի բանկը դրած փողերի վերաբերմամբ, նա Բօշկօվայի ասածին համաձայն ասել էր, թէ իրանք երկուսով են վաստակել այդ գումարը 12 տարի ծառայելով հիւրանոցում ու պարոններից պարգևներ ստանալով իրանց ծառայութիւնների համար։

Այնուհետև գալիս էին նրանց երեսէրես խօսեցնելու նկարագրութիւնը և վկաների ցուցմունքները։

Մեղադրական թուղթը այսպէս էր վերջանում.

«Երկրորդ գիլդիայի վաճառական Սմելկօվը, անձնատուր եղած հարբեցութեան ու անառակութեան, յարաբերութեան մէջ է մտնում կիտաեվայի անառակատունը Մասլօվայի հետ

(Լիւբկա մականունով) և, առանձնապէս տաքանալով նրա վրայ, 188* թուի յունուարի 17-ին պայուսակի բանալին տալիս է վերոյիշեալ Լիւբկային և ուղարկում է իր բանած համարը, որպէս զի նա այնտեղ գտնուած պայուսակի մէջից բերի 40 ռուբլի փող, որ իրան հարկաւոր էր նրան հիւրասիրելու համար։ Համարը գնալով, Լիւբկան, նոյն և Մասլօվան, փողերը պայուսակից հանելիս, համաձայնութիւն է կայացնում Բօշկօվայի և Կարտինկինի հետ, որպէս զի միասին յափշտակեն Սմելկօվի բոլոր փողերն ու թանկագին իրեղէնները և բաժանեն իրար մէջ, որ և կատարում են»։—Այդ մէջտեղ Մասլօվան նորից ցնցուեց, նոյն իսկ վեր թռաւ, չառագունեց ու սկսեց ինչ որ ասել, բայց դատաստանական պրիստաւը կանգնեցրեց նրան։—«Այդ բաներից,—չարունակում էր կարդալ քարտուղարը,—Լիւբկային տալիս են ադամանդէ մատանին և հաւանօրէն մի փոքր գումար փող, որ նա թագցրել է կամ կորցրել, որովհետև Մասլօվան (Լիւբկան) այդ գիշեր հարբած դրութեան մէջ էր։ Իսկ որպէս զի ծածկեն յանցանքի հետքերը, մեղսակիցները վճռում են Սմելկօվին նորից բերել համարները ու այնտեղ թունաւորել նրան կարտինկի մօտ գտնուող մինդեղով։ Այդ նպատակով Մասլօվան վերադառնում է Կիտաեկայի անառակատունը և այնտեղ համոզում է Սմելկօվին յետ դառնալ իր հետ Մաւրիտանիա համարները։ Երբ որ Սմելկօվը վերադառնում է համարները, Մասլօվան առնում է կարտինկինի բերած փոշին, ածում է գինու մէջ ու տալիս է այդ գինին խմելու Սմելկօվին, որ և մեռնում է դրանից։

Բոլոր վերևը յիշուածների հիման վրայ, Բօրկի գիւղի չինական Սիմօն Կարտինկին, 33 տարեկան, մեչչանների դասից Եվֆիմիա Իվանօվա Բօշկօվա, 43 տարեկան, և մեչչանների դասից Եկատերինա Միխայլօվա Մասլօվա, 27 տարեկան, մեղադրւում են նրանում, որ 188* թուի յունուարի 17-ին, նախապէս համաձայնութիւն կայացնելով իրանց մէջ, յափշտակել են Սմելկօվ վաճառականի փողերն ու մատանին, ընդամենը 2,500 ռուբլի արժողութեամբ, և նրան սպանելու դիտաւորութեամբ թոյն են խմացրել նրան, Սմելկօվին, որից և առաջացել է նրա, Սմելկօվի, մահը։

Այդ յանցանքը նախատեսուած է պատժական օրէնսգրքի 1453 յօդուածի 4 և 5 կէտերով։ Ուստի և քրէական դատավարութեան 201 յօդուածի հիման վրայ, գիւղացի Սիմօն Կարտինկինը և մեչչանների դասին պատկանող Եվֆիմիա Բօշկօվան ու Եկատերինա Մասլօվան ենթակայ են նահանգական դատարանի դատին երդուեալատենակալների մասնակցութեամբ»։

Այդպէս վերջացրեց երկար մեղադրական թղթի ընթերցումը քարտուղարը և ծալելով թերթերը՝ նստեց տեղը, սղալելով երկու ձեռքով երկար մազերը: Բոլորը թեթևացած չունչ քաշեցին՝ հաճելի գիտակցութեամբ, որ այժմ հետախուզութիւնը սկսուել է և իսկոյն ամեն բան կը պարզուի ու արդարութիւնը բաւարարուիւն կը ստանայ: Միայն Նեխլիւդովը չէր զդում այդ բանը,—նա ամբողջապէս պաշարուած էր սարսափով, մտածելով, թէ ինչ կարող էր արած լինել այն Մասլովան, որին նա անմիտ ու հիանալի աղջիկ գիտէր 10 տարի առաջ:

XI

Երբ մեղադրական թղթի ընթերցումը վերջացաւ, նախագահը, խորհրդակցելով միւս անդամների հետ, դիմեց կարտինկինին այնպիսի արտայայտութեամբ, որ պարզ ասում էր, թէ հիմի մենք արդէն ամեն բան կ'իմանանք ամենամանրամասն և ամենահաստատ կերպով:

—Գիւղացի Սիմոն Կարտինկին,—սկսեց նա, թեքուելով դէպի ձախ:

Սիմոն Կարտինկինը վեր կացաւ, ձեռները ձիգ կախ արած ու ամբողջ մարմինը առաջ քցած, առանց ընդհատելու թչերի անձայն չարժումը:

—Ձեզ մեղադրում են, թէ 188 * թ. յունուարի 17-ին դուք, Եվֆիմիա Բօչկովայի և Եկատերինա Մասլովայի հետ ընկերացած, Սմելկով վաճառականի պայուսակից գողացել էք նրբան պատկանող փողերը և յետոյ մինդեղ էք բերել ու համոզել Եկատերինա Մասլովային գինու հետ թոյն տալ խմելու Սմելկով վաճառականին, որ և մեռել է այդ բանից: Ընդունո՞ւմ էք, որ մեղաւոր էք,—ասաց նախագահը ու թեքուեց դէպի աջ:

—Ի՞նչպէս կարելի է այդպիսի բան, քանի որ մեր գործը հիւրերին ծառայելն է...

—Այդ յետոյ կ'ասէք: Ընդունո՞ւմ էք արդեօք ձեր մեղաւորութիւնը:

—Ամենևին: Ես միայն...

—Այդ յետոյ կասէք: Ընդունո՞ւմ էք արդեօք ձեր մեղաւորութիւնը,—հանգիստ, բայց անյողդողդ կերպով կրկնեց նախագահը:

—Չեմ կարող ընդունել, որովհետև...

Դատաստանական պրիստաւը կրկին վազեց դէպի Սիմոն Կարտինկինը և տրագիկական չչունչով լռեցրեց նրան:

Նախագահը՝ այնպիսի արտայայտութեամբ, թէ այդ գործը

այժմ արդէն վերջացրել է, բարձրացրեց այն ձեռքի արմունկը, որով բռնած էր թուղթը, ու դրեց մի ուրիշ տեղ և դիմեց Եվֆիմիա Բօչկովային:

—Եվֆիմիա Բօչկովա, ձեզ մեղադրում են, թէ 188* թ. յունուարի 17-ին, «Մաւրիտանիա» հիւրանոցում, Սիմոն Կարտինկինի և Եկատերինա Մասլովայի հետ, Սմելկով վաճառականի պայուսակից գողացել էք նրա փողերն ու մատանին և գողացածը բաժանել մէջներդ, իսկ յետոյ, յանցանքներդ ծածկելու համար, Սմելկով վաճառականին թոյն էք տուել խմելու, որից և տեղի է ունեցել նրա մահը: Ընդունո՞ւմ էք, որ մեղաւոր էք:

—Ես ոչ մի բանում մեղաւոր չեմ,—ժիր ու հաստատ արտասանեց մեղադրեալը:—Ես իսկի նրա համարն էլ չեմ մոել... Այ, այս անզգամն է մոել այնտեղ ու հէնց սա էլ պէտք է արած լինի այդ բանը...

—Այդ յետոյ կասէք,—ասաց դարձեալ նոյնպէս մեղմ ու անյողդողդ կերպով նախագահը:—Ուրեմն չէք ընդունում, որ մեղաւոր էք:

—Ես ոչ փողից եմ տեղեակ, ոչ թոյն տալուց, ես իսկի համարն էլ չեմ մոել: Եթէ ես այնտեղ լինէի, սրան դուրս կը չպրտէի:

—Չէք ընդունում, որ մեղաւոր էք:

—Երբէք:

—Շատ լաւ:

—Եկատերինա Մասլովա,—սկսեց նախագահը, դիմելով երրորդ մեղադրեալին,—ձեզ մեղադրում են, թէ, Սմելկով վաճառականի պայուսակի բանալին հետներդ «Մաւրիտանիա» հիւրանոցը գնալով, գողացել էք այդ պայուսակից նրա փողերն ու մատանին,—ասում էր նա՝ լաւ սերտած դասի պէս, միաժամանակ ականջը թեքելով դէպի ձախակողմեան անդամը, որ ասում էր, թէ իրեղէն ապացոյցների ցանկին նայած պակասում է մի սրուակ... Գողացել էք պայուսակից փողերն ու մատանին,—կրկնեց նախագահը,—և գողացածը բաժանել մէջներդ, իսկ յետոյ, մէկ էլ Սմելկով վաճառականի հետ գնալով «Մաւրիտանիա» հիւրանոցը, տուել էք Սմելկովին խմելու մէջը թոյն խառնած գինի, որից և տեղի է ունեցել նրա մահը: Ընդունո՞ւմ էք, որ մեղաւոր էք:

—Ոչ մի բանում մեղաւոր չեմ,—արագ արագ արտասանեց Մասլովան,—ինչպէս սկզբում ասում էի, այժմ էլ ասում եմ,—չեմ վերցրել, չեմ վերցրել ու չեմ վերցրել, ոչինչ չեմ վերցրել, իսկ մատանին նա ինքն է տուել ինձ:

—Ջե՛ք ընդունում, որ մեղաւոր էք 2,500 ռուբլի փող գողանալում,—ասաց Նախագահը։

—Ասում եմ, որ ոչինչ չեմ վերցրել բացի 40 ռուբլուց։

—Լաւ, իսկ այն բանում, որ Սմելկով վաճառականին գինու մէջ փոչի էք տուել խմելու, մեղաւոր ընդունո՞ւմ էք ձեզ։

—Այդ բանում մեղաւոր եմ։ Բայց ինձ ասել էին, թէ այդ փոչին քուն բերող է, ես էլ կարծում էի, թէ նրանից ոչինչ չի լինի։ Իսկ այդպիսի բան չէի կարծում և չէի ուզում։ Աստուծու անունը վկայ, չէի ուզում,—ասաց նա։

—Ուրեմն, դուք չէք ընդունում, թէ մեղաւոր էք Սմելկով վաճառականի փողերն ու մատանին գողանալում,—ասաց Նախագահը։—Բայց ընդունում էք, որ փոչի էք տուել նրան խմելու։

—Ընդունելով ընդունում եմ, բայց կարծում էի, թէ քուն բերող փոչի է։ Ես տուեցի խմի միայն նրա համար, որ քնի,—մահը չէի ուզում ու չէի կարծում։

—Շատ լաւ,—ասաց Նախագահը, ակնաբաւար գոհ հարց ու փորձի արդիւնքից։—Ուրեմն պատմեցէք, թէ ինչպէս եղաւ այդ դէպքը,—ասաց նա, թիկն տալով բազկաթոռի մէջքին և ձեռները դնելով սեղանի վրայ։—Մէկ մէկ պատմեցէք բոլորը, ինչ որ եղել է։ Դուք կարող էք թեթևացնել ձեր վիճակը անկեղծ խոստովանելով ամեն բան։

Մասլովան լուռ էր, աչքը դարձեալ յառած ուղիղ Նախագահի երեսին։

—Պատմեցէք, թէ ինչպէս եղաւ։

—Ի՞նչպէս եղաւ,—յանկարծ արագ-արագ սկսեց Մասլովան։—Եկայ հիւրանոցը, ինձ տարան համարը, նա այնտեղ էր և արդէն թունդ հարբած։ (Մասլովան սարսափի մի առանձին արտայայտութեամբ, չռելով աչքերը, արտասանեց այդ ևս խօսքը)։ Ես ուզում էի գնալ, նա չը թողեց։

Նա լռեց, կարծես յանկարծ խօսքի թելը կորցնելով կամ մի ուրիշ բան յիշելով։

—Էհ, յետոյ։

—Ինչ յետոյ։ Յետոյ մի քիչ մնացի ու տուն գնացի։

Այդ ժամանակ դատախազի օգնականը կիսով չափ բարձրացաւ տեղիցը, անբնական կերպով կռթնելով մի արմունկի վրայ։

—Չարց էք ուզում առաջարկել,—ասաց Նախագահը և, դրական պատասխան ստանալով դատախազի օգնականից, ձեռքով նշան արեց, թէ կարող է հարցնել։

—Ես կ՚ուզէի այս հարցը տալ. արդեօք մեղադրեալը առաջ

ծանօթ էր Սիմոն Կարտինկինի հետ,—հարցրեց դատախազի օգնականը, առանց Մասլովային նայելու։

Եւ, հարցը տալով, սղմեց չրթունքները ու խոժոռուեց։

Նախագահը կրկնեց հարցը։ Մասլովան վախուռած հայեացքով յառեց աչքերը դատախազի օգնականի վրայ։

—Սիմոնի՞ հետ։ Չա, ծանօթ էի,—ասաց նա։

—Ես կ՚ուզէի իմանալ այժմ, թէ ինչումն էր կայանում մեղադրեալի ծանօթութիւնը Կարտինկինի հետ։ Շուտ-չուտ էին արդեօք տեսնւում իրար հետ։

—Ինչումն էր մեր ծանօթութիւնը։ Ծանօթութիւն չէր, այլ կանչում էր ինձ հիւրերի մօտ,—պատասխանեց Մասլովան, անհանգիստ կերպով մատ ածելով աչքերը դատախազի օգնականից Նախագահի վրայ և Նախագահից դատախազի օգնականի վրայ։

—Ես կ՚ուզէի իմանալ, թէ ինչու Կարտինկինը բացառապէս Մասլովային էր տանում հիւրերի մօտ և ոչ միւս աղջիկներին,—հարցրեց դատախազի օգնականը աչքերը կուշ ածելով և թեթև, մէֆիստոֆէլեան խորամանկ ժպիտով։

—Ձը գիտեմ։ Ես ինչ իմանամ,—պատասխանեց Մասլովան, վախուռած նայելով չորս կողմը և մի ակնթարթ պահելով հայեացքը Նեխլիւդովի վրայ,—ում ուզում էր՝ կանչում էր։

«Մի՞թէ ճանաչեց»—սարսափելով մտածեց Նեխլիւդովը, զգալով թէ ինչպէս արիւնը տալիս է երեսը. բայց Մասլովան, առանց նրան ուրիշներից չոկելու, իսկոյն չուռ եկաւ և նորից վախուռած հայեացքով յառեց աչքերը դատախազի օգնականի վրայ։

—Ուրեմն մեղադրեալը բացասում է այն բանը, թէ ինքը որ և է մօտիկ յարաբերութիւն է ունեցել Կարտինկինի հետ։ Շատ լաւ։ Ես այլ ևս ոչինչ չունեմ հարցնելու։

Եւ դատախազի օգնականը իսկոյն և նէթ վերցրեց արմունկը սեղանի վրայից ու սկսեց ինչ որ մի բան գրել։ Իրօք նա ոչինչ չէր գրում, այլ միայն գրիչը տանում բերում էր իր թերթիկի տառերի վրայով, բայց նա տեսել էր, որ դատախազներն ու փաստաբանները այդպէս են անում,—ճարպիկ հարց տալուց յետոյ իրանց ճառի մէջ այնպիսի նկատողութիւն են գրում, որով պէտք է ջախջախեն հակառակորդին։

Նախագահը իսկոյն և նէթ չը դիմեց մեղադրեալին, որովհետև նա այդ ժամանակ հարցնում էր ակնյայտուր անդամից, թէ արդեօք նա համաձայն է մեղադրեալների մեղաւորութեանը վերաբերեալ հարցմունքներին, որոնք արդէն նախապէս պատրաստուած էին ու արձանագրուած։

—Իսկ յետո՞յ ինչ եղաւ,—չարունակեց հարցնել Նախագահը։

—Տուն եկայ,—չարունակեց Մասլովան, արդէն աւելի համարձակ նայելով միմիայն Նախագահի վրայ,—փողերը տուեցի մեր տիրուհուն ու պահակեցի քնելու։ Նոր էի աչքերս խփել, —մէկ էլ տեսնեմ մեր աղջիկներից մէկը, Բէրտան, զարթեցնում է ինձ։ «Գնա, քո վաճառականն էլի եկել է»։ Ես չէի ուզում դուրս գալ, բայց տիկինը հրամայեց։ Այդ միջոցին ևս,— Մասլովան նորից աննկատելի սարսափով արտասանեց այդ ևս խօսքը,—ևս խանգնում էր մեր աղջիկներին, յետոյ ուղեց ուզարկել գինի բերելու, բայց փողերը բոլորը պրծել էին։ Այն ժամանակ նա ինձ ուղարկեց իր համարը։ Ես ասաց, որտեղ են փողերը ու որքան պէտք է վերցնել։ Ես էլ գնացի։

Նախագահը այդ ժամանակ քչփչում էր ձախակողմեան անդամի հետ և չէր լսում Մասլովայի ասածը, բայց ցոյց տալու համար, թէ սկզբից մինչև վերջը լսել է, կրկնեց նրա վերջին խօսքերը։

—Գնացիք։ Իսկ յետո՞յ,—ասաց նա։

—Գնացի ու ինչ որ պատուիրել էր արեցի, մնայ համարը։ Մենակ չը մնայ, այլ Սիմոն Միխայլովիչին ու սրան էլ կանչեցի,—ասաց նա ցոյց տալով Բօչկովայի վրայ։

—Սուտ է ասում, մանչին էլ չեմ մոել ու...—սկսեց Բօչկովան, բայց նրան լռեցրեցին։

—Սրանց մօտ հանեցի չորս հատ տասնանոց,—չարունակեց Մասլովան խոժոռուելով և առանց Բօչկովային նայելու։

—Իսկ այդ 40 ռուբլին հանելիս, մեղադրեալը չը նկատեց, թէ որքան փող կար այնտեղ,—դարձեալ հարց տուեց դատախազը։

Մասլովան ցնցուեց, հէնց որ դատախազը դարձաւ դէպի նա։ Նա չը գիտէր, թէ ինչումն է բանը, բայց զգում էր, որ այդ մարդը իր վատն է ուզում։

—Ես չը հաշուեցի, տեսայ որ միայն հարիւրանոցներ էին։

—Մեղադրեալը տեսել է հարիւրանոցներ,—ևս այլ ևս ոչինչ չունեմ հարցնելու։

—Լաւ, փողերն ինչ արեցիք, տարաք,—չարունակեց Նախագահը, ժամացոյցին նայելով։

—Տարայ։

—Իսկ յետո՞յ,—հարցրեց Նախագահը։

—Իսկ յետոյ ևս նորից տարաւ ինձ իր հետ,—ասաց Մասլովան։

—Լաւ, բայց ինչպէս տուեցիք նրան խմելու մէջը փոչի խառնած գինին,—հարցրեց Նախագահը։

—Ի՞նչպէս տուեցի։ Ածեցի գինու մէջ ու տուեցի։

—Ինչո՞ւ տուեցիք։

Մասլովան, առանց պատասխանելու, խոր ու ծանր հոգոց քաշեց։

—Ինչ անում էի, չէր թողնում, որ գնամ,—ասաց Մասլովան փոքր ինչ լռելուց յետոյ։—Տանջուեցի նրա ձեռքին։ Դուրս եկայ միջանցքը ու ասացի Սիմոն Միխայլովիչին՝ «երանի թողնի գնամ։ Յոգնել եմ»։ Իսկ Սիմոն Միխայլովիչը ասաց թէ՝ «մեզ էլ է ձանձրացրել։ Ուզում ենք քուն բերող փոչի տալ խմի. կը քնի, այն ժամանակ կ'երթաս»։ Ես ասացի թէ՝ «լաւ»։ Ես կարծում էի, թէ վնասակար փոչի չէ։ Սիմոն Միխայլովիչը տուեց ինձ թղթի մէջ փաթաթած։ Ես ներս մտայ. ևս պառկած էր միջնորմի յետևին և ներս մտնելուս պէս ինձ պատուիրեց կոնեակ տալ իրան խմելու։ Ես վերցրի սեղանի վրայից ֆին-շամպայնի չիչը, երկու բաժակ լցրեցի, մէկն ինձ, մէկը նրան, փոչին էլ ածեցի նրա բաժակի մէջ ու տուեցի իրան։ Մ'թէ ես կը տայի, եթէ իմանայի։

—Լաւ, բայց ինչպէս ընկաւ ձեր ձեռքը նրա մատանին,—հարցրեց Նախագահը։

—Մատանին նա ինքն ընծայեց ինձ։

—Ե՞րբ ընծայեց ձեզ։

—Հետը միասին որ համարն եկանք, ես ուզում էի գնալ, իսկ նա խփեց գլխիս ու սանրս կոտրեց։ Ես բարկացայ և ուզում էի գնալ։ Նա մատիցը մատանին հանեց ու ընծայեց ինձ, որպէս զի չը գնամ,—ասաց նա։

Այդ ժամանակ դատախազի օգնականը նորից տեղիցը բարձրացաւ և դարձեալ նոյն կեղծ միամիտ կերպարանքով թոյլտուութիւն խնդրեց էլի մի քանի հարցեր տալու և, իրաւունք ստանալով, հարցրեց, գլուխը ծռելով ոսկեկար օձիքի վրայով.

—Ես կ'ուզէի իմանալ, որքան ժամանակ է մնացել մեղադրեալը Սմելկով վաճառականի համարում։

Նորից սարսափ եկաւ Մասլովայի վրայ, և նա, անհանդիստ հայեացքը արագ արագ տարուբերելով դատախազի օգնականից նախագահի վրայ, չուտ-չուտ ասաց.

—Չեմ յիշում, որքան ժամանակ։

—Լաւ, իսկ չէ՞ յիշում մեղադրեալը, հիւրանոցում որ և է տեղ մնել է ինքը Սմելկով վաճառականի մօտից դուրս գալուց յետոյ։

Մասլովան մտածեց։

—Կողքի դատարկ համարը մտել եմ,—ասաց նա։

—Ի՞նչու մտաք,—ասաց դատախազի օգնականը, ոգևորուելով և ուշդրակի նրան դիմելով *)։

—Պէտք է չորերս կարգի բերէի ու կառապանին սպասէի։

—Իսկ կարտինկինը այդ համարձակի հետ թէ՞ ոչ։

—Նա էլ մտաւ այնտեղ։

—Ի՞նչու մտաւ։

—Վաճառականից ֆին-շամպայն էր մնացել, միասին խըմելիք։

—Ախ, միասին խմելին։ Շատ լաւ։

—Իսկ խօսակցութիւն եղաւ մեղադրեալի ու Սիմոնի մէջ և ինչի՞ մասին։

Մասլօվան յանկարծ խոժոռուեց, թունդ կարմրատակեց և արագ-արագ արտասանեց.

—Ինչ որ ասացի, այն էր, էլ ոչինչ չը դիտեմ։ Ինչ ուզում էք՝ արէք ինձ։ Ես մեղաւոր չեմ, ասացի պրծայ։ Նրա հետ ոչինչ չեմ խօսել։ Ինչ որ կար, բոլորը պատմեցի,—ասաց նա։

—Ես այլ ևս ոչինչ չունեմ հարցնելու,—ասաց դատախազը նախագահին և, անբնական կերպով վեր քաշելով ուսերը, սկսեց արագ-արագ գրել իր ճառի կօնսպէկտի մէջ մեղադրեալի խոստովանութիւնը, թէ ինքն ու Սիմոնը մտել էին դատարկ հասմարը։

Լռութիւն տիրեց։

—Էլ ոչինչ չունէք ասելու։

—Ինչ որ կար ասացի,—պատասխանեց Մասլօվան, հոգոց քաշելով, ու նստեց։

Դրանից յետոյ նախագահը ինչ որ գրեց թղթի մէջ և իր ականջին չհնչող ձախակողմեան անդամի ասածը լսելուց յետոյ յայտարարեց, որ 10 րոպէով ընդմիջում է նիստը, և չապով վեր կացաւ ու դուրս եկաւ դահլիճից։

Դատաւորներից յետոյ վերկացան և երդուեալ ատենակալները, փաստաբաններն ու վկաները և կարևոր գործի մի մասն արդէն արած լինելու գիտակցութեան հաճելի զգացմունքով սկսեցին դէս-դէն գնալ։

Նեխլիւդովը գնաց երդուեալ դատաւորների սենեակը և նստեց այնտեղ պատուհանի մօտ։

---

*) Դատարանում թէ՛ դատախազը, թէ՛ փաստաբանը մեղադրեալին հարցեր տալիս պէտք է դիմեն նախագահին։

XII

Այո, կատիւշան էր այդ։

Ահա թէ ինչ յարաբերութիւններ էր ունեցել Նեխլիւդովը կատիւշայի հետ.

Առաջին անգամ Նեխլիւդովը կատիւշային տեսաւ այն ժամանակ, երբ համալսարանի երրորդ կուրսում հոգային սեփականութեան մասին չարագրութիւն պատրաստելիս՝ ամառը ապրեց իր մօրաքոյրների մօտ։ Առհասարակ նա իր մօր ու քրոջ հետ ամառն ապրում էր մայրական մեծ կալուածում, որ գտնւում էր Մօսկուայի մօտ։ Բայց այդ տարին քոյրը մարդու գնաց, մայրն էլ գնաց արտասահման՝ ամառնային ջրերում բժշկուելու։ Իսկ Նեխլիւդովը պէտք է չարագրութիւն գրէր, ուստի և վճռեց ամառը անցկացնել մօրաքոյրների մօտ։ Նրանց մօտ, նրանց խուլ անկիւնում, հանգիստ էր, զուարճութիւններ չը կային, և մօրաքոյրները սիրում էին իրանց քրոջորդուն ու ժառանգին, նա էլ սիրում էր նրանց հնաձևութիւնը և նրանց կեանքի պարզութիւնը։

Նեխլիւդովը այդ ամառ, մօրաքոյրների մօտ ապրելիս, գըտնւում էր այն յափշտակուած վիճակում, երբ պատանին առաջին անգամ՝ ոչ ուրիշների ցուցմունքներով, այլ ինքնաբերաբար գիտակցում է կեանքի ամբողջ գեղեցկութիւնն ու լրջութիւնը և նրա մէջ մարդուն յատկացուած գործի ամբողջ կարևորութիւնը, տեսնում է թէ իր և թէ ամբողջ աշխարհի անվերջ կատարելագործման հնարաւորութիւնը ու անձնատուր է լինում այդ կատարելագործման ոչ միայն յուսալով, այլ կատարելապէս հաւատալով, որ ինքը կը հասնի իր երևակայած ամբողջ կատարելութեան։ Այդ տարին դեռ համալսարանում նա կարդացել էր Սպենսերի «Social Statics»-ը, և Սպենսերի դատողութիւնները հոգային սեփականութեան մասին սաստիկ տպաւորութիւն էին գործել նրա վրայ, մանաւանդ այն պատճառով, որ նա ինքը խոշոր հողատիրուհու որդի էր։ Նրա հայրը հարուստ չէր, բայց մօրը բաժինը էին տուել մօտ 10 հազար օրաւար հող։ Նա այն ժամանակ առաջին անգամը հասկացաւ մանաւանդ հողատիրութեան ամբողջ անարդարութիւնը և, այն մարդկանցից լինելով, որոնց համար ամենաբարձր հոգեկան զուարճութիւնն է կազմում յանուն բարոյական պահանջների զոհաբերութիւնը, վճռեց չօգտուել հոգային սեփականութեան իրաւունքից և այն ժամանակն և եթ գիւղացիներին տուեց հո-

րից իրան ժառանգութիւն մնացած հողը։ Հէնց այդ նիւթի մասին էր գրում նա իր չարագրութիւնը։

Նրա կեանքը այդ տարի մօրաքոյրների գիւղում այսպէս էր անց կենում,—նա չատ չուտ էր վեր կենում, երբեմն ժամի երեքին, և արեը դեռ չը ծագած գնում էր լողանալու սարի տակին հոսող գետում, երբեմն դեռ առաւօտեան մշուշը չանցած, և վերադառնում էր, երբ դեռ ցօղը պատած էր լինում խոտն ու ծաղիկները։ Երբեմն, առաւօտները, սուրճը խմելուց յետոյ, նա նստում էր չարագրութիւնը դրելու կամ չարագրութեան աղբիւրները կարդալու, բայց չատ յաճախ, փոխանակ կարդալու և դրելու, դարձեալ դուրս էր գալիս և թափառում դաշտերում ու անտառներում։ Ճաշից առաջ նա քնում էր մի տեղ պարտէզում, յետոյ ճաշի ժամանակ ուրախացնում և ծիծաղեցնում էր մօրաքոյրներին իր զուարթ տրամադրութեամբ, այնուհետև զբօսնում էր ձիով կամ նաւակով և երեկոյեան դարձեալ կարդում էր կամ ժամանակ անցկացնում մօրաքոյրների հետ՝ խաղաթղթերով վիճակ բաց անելով։ Գիշերները, մանաւանդ լուսնկայ եղած ժամանակ, նա յաճախ չէր կարողանում քնել միմիայն այն պատճառով, որ չատ մեծ, չատ յուզիչ բերկրութիւն էր զգում կեանքից և, փոխանակ քնելու, երբեմն մինչև լոյս մեն էր գալիս պարտէզում իր երազանքների և մտածմունքների հետ ընկած։

Այդպէս հանգիստ ու երջանիկ ապրեց նա առաջին ամիսը մօրաքոյրների մօտ, առանց աննկատ ուշադրութիւն դարձնելու կէս-աղախին, կէս-տանուտողիկ սևաչեայ և արագաքայլ Կատիշայի վրայ։

Մօր թևի տակ մեծացած, Նեխլիւդօվը 19 տարեկան հասակում մի բոլորովին անմեղ պատանի էր։ Նրա երազանքներում կինը ներկայանում էր նրան միմիայն իբր ամուսին։ Իսկ այն բոլոր կանայք, որոնք, նրա հասկացողութեամբ, չէին կարող նրա ամուսինը լինել, կին չէին նրա համար, այլ մարդիկ։ Բայց դէպքը այնպէս բերեց, որ այդ ամառ, Համբարձման, նրա մօրաքոյրների մօտ եկաւ դրացուհիներից մէկը իր երկու հասած աղջիկների ու դիմնազիստ տղայի և իրանց մօտ հիւր եկած մի ջահել նկարչի հետ, որ գիւղացի ծնողների որդի էր։

Թէյից յետոյ սկսեցին գօրելկի *) խաղալ տան առջևի

*) Այդ խաղը, горѣлки, կայանում է սրանում. զույգ-զույգ, տղայ ու աղջիկ, շարւում են իրար յետևից. ամենից առաջ կանգնում է մէկը, որ ասում է՝ «այրւում եմ, այրւում եմ». այնուհետև տեղի է ունենում հետևեալ հարց ու պատասխանը — «ինչո՞ւ ես այրւում».—«աղջիկ եմ

մարգագետնում, որ արդէն հնձուած էր։ Կատիշային էլ կանչեցին խաղալու։ Մի քանի փոփոխութիւններից յետոյ Նեխլիւդօվն ու Կատիշան իրար հետ ընկան։ Նեխլիւդօվի համար միշտ հաճելի էր տեսնել Կատիշային, բայց նրա մտքովն անգամ չէր կարող անցնել, թէ իր և նրա մէջ կարող են լինել որ և է առանձին յարաբերութիւններ։

—Օ՛, սրանց բռնել անկարելի է,—ասաց «այրուող» ուրախ նկարիչը, որ չատ արագ վազում էր իր կարճլիկ ու ծուռ, բայց ուժեղ գեղջկային ոտներով։

—Թէ սայթաքեն, չը գիտեմ։

—Դուք ու չը բռնէք։

—Մէկ, երկու, երեք։

Երեք անգամ ծափ տուեցին։ Ծիծաղը հազիւ հազ պահելով, Կատիշան ձեռաց փոխեց տեղը Նեխլիւդօվի հետ և, իր կոշտ ու կոպիտ փոքրիկ ձեռքով սղմելով նրա մեծ ձեռքը, վազ տուեց դէպի ձախ, խլխլացնելով իր օսլայած նեղքնազգեստը։

Նեխլիւդօվը լաւ վազող էր և, չուզենալով յաղթուել նրկարչից, սկսեց վազել որքան ուժումը կար։ Երբ նա յետ նայեց, տեսաւ, որ նկարիչը ընկել է Կատիշայի յետևից, բայց Կատիշան, արագ-արագ փոխելով ջահել առաձգական ոտները, տեղի չի տալիս նրան և հեռանում է դէպի ձախ։ Առջևում եղրևանիի թփերի թումբ կար, որի այն կողմը ոչ ոք չէր վազում. բայց Կատիշան, յետ նայելով Նեխլիւդօվի կողմը, գլխով արեց նրան, որ գնայ հետը միանալու թումբի յետևից։ Նա հասկացաւ և վազեց թփերի յետևը։ Բայց այդտեղ նրան անծանօթ մի խանդակ կար եղինջով ծածկուած. նա սայթաքեց և ընկաւ. նրա ձեռքը դադրեց եղինջից ու թրջուեց կանաչը ծածկող ցօղից,—որովհետև արդէն իրիկնադէմ էր,—բայց նա իսկոյն վեր թռաւ, ծիծաղելով ինքն իր վրայ, դրստուեց ու վազեց դէպի արձակ ու իտակ տեղը։

Կատիշան թռչում էր դէպի նա ժպիտից պայծառացած դէմքով և թաց հաղարջի նման սև ու փայլուն աչքերով։ Նրանք հասան իրար ու բռնեցին միմեանց ձեռքից։

ուղում».—«ինչպիսի աղջիկ».—«ջահել».—«իսկ սիրո՞ւմ ես».—«սիրում եմ».—«փոփուչներ կ՛առնե՞ս».—«կ՛առնեմ».—«մնա՛ս բարև, բարեկամ, աշխատիր չը բռնուես»,—և վերջին զույգը կազմողները սկսում են վազել զանազան կողմեր, աշխատելով բռնել իրար ձեռք առաջի կանգնողի տեղից այն կողմը, մինչդեռ այդ առաջի կանգնողը աշխատում է նրանցից մէկին ու մէկին բռնել նախ քան նրանց կը յաջողի ժողովել իրար։ Եթէ բռնում է, բռնածի հետ կանգնում է առաջին շարքում, իսկ մենակ մնացածը «այրւում է»։ Եթէ չէ բռնում, ինքը նորից այրւում է։ Ե. Բ.

—Ով գիտի, ձեռքներդ դաղուեց,—ասաց նա, աղատ ձեռքով չիակելով մազերի խառնչտուած հիւսը, ծանր չունչ քաշելով և ժպտալէն ներքեւից վերև նայելով ուղիղ նրա երեսին։

—Ես իսկի չը գիտէի, թէ այստեղ խանդակ կայ,—ասաց նա, նոյնպէս ժպտալով և բաց չը թողնելով նրա ձեռքը։

Կատիշան մօտեցաւ նրան և նա, ինքն էլ չը գիտէր, թէ ինչպէս պատահեց այդ, երեսը մօտեցրեց նրա երեսին. Կատիշան չան յետ չը քաշուեց, Նեխլիւդովը աւելի ամուր սղմեց նրա ձեռքը և համբուրեց չրթունքները։

—Վա՛, այդ ինչ էր,—ասաց Կատիշան և արագ շարժումով դուրս կորզելով ձեռքը նրա ձեռքից՝ փախաւ նրա մօտից։

Հառնելով թփերից, նա պոկեց սպիտակ ու արդէն ծաղկաթափ եղրևանիի երկու ճիւղ, սկսեց նրանցով խփել իր բորբոքուած երեսին և, յետ-յետ նայելով Նեխլիւդովին ու արագ-արագ ճօճելով ձեռքերը իր առաջին, վերադարձաւ խաղալու տեղը։

Այդ ժամանակից սկսած Նեխլիւդովի ու Կատիշայի յարաբերութիւնները փոխուեցին և նրանց մէջ հաստատուեց այն առանձնատեսակ յարաբերութիւնը, որ առհասարակ լինում է երբով զբաւուող անմեղ երիտասարդի և նոյնպիսի անմեղ աղջկայ մէջ...

Հէնց որ Կատիշան մտնում էր սենեակը կամ թէ նոյն իսկ հեռուից երևում էր նրա սպիտակ զոգնոցը, իսկոյն Նեխլիւդովի աչքում ամեն ինչ փոխուում էր,—կարծես արև էր ծագում ու լուսաւորում նրա շուրջը,—իսկոյն ամեն ինչ դառնում էր աւելի հետաքրքրական, աւելի ուրախ, աւելի կարևոր և կեանքը թւում էր աւելի բերկրալի։ Նոյնն էր զգում և Կատիշան։ Բայց Նեխլիւդովի վրայ այդ ազդեցութիւնն էր գործում ոչ միայն նրա ներկայութիւնն ու մօտիկութիւնը, այլ հէնց միայն այն գիտակցութիւնը, թէ աշխարհիս երեսին կայ մի Կատիշա, Կատիշայի վրայ էլ այն, թէ կայ մի Նեխլիւդով։ Դիցուք մի անախորժ նամակ էր ստանում Նեխլիւդովը մօրից, կամ թէ չարաղրութիւնը լաւ չէր դուրս գալիս, կամ թէ պատահական անպատճառ տխրութիւն էր զգում, բաւական էր միայն յիշէր, որ Կատիշան կայ և ինքը կարող է տեսնել նրան, և արդէն ամեն վիշտ փարատւում էր։

Կատիշան չատ գործ ունէր անելու տանը, բայց նա կարողանում էր ամեն բան ժամանակին հասցնել և դեռ աղատ րոպէներ էր գտնում կարդալու համար։ Նեխլիւդովը տալիս էր նրան կարդալու Դոստոևսկու և Տուրգենևի գրուածքները, որ

ինքն էլ հէնց նոր էր կարդացել։ Կատիշային ամենից աւելի դուր էր գալիս Տուրգենևի «Затишье»-ն։ Նրանց մէջ խօսակցութիւն էր տեղի ունենում Թռուցիկ կերպով, երբ պատահում էին իրար միջանցքում, պատշգամբում, բակում, երբեմն էլ մօրաքոյրների պատուաւ աղախին Մատրեոնա Պաւլօվնայի սենեակում, ուր ապրում էր նաև Կատիշան և ուր Նեխլիւդովը մի մի անգամ գնում էր կծուվի թէյ խմելու։ Եւ նրանց ամենից շատ դուր էին գալիս իրանց այն խօսակցութիւնները, որոնք տեղի էին ունենում Մատրեոնա Պաւլօվնայի ներկայութեամբ։ Աւելի վատ էր լինում խօսակցութիւնը, երբ նրանք մենակ էին լինում։ Այդ դէպքերում նրանց աչքերը խոյն և եթ սկսում էին արտայայտել ինչ որ բոլորովին ուրիշ, շատ աւելի կարևոր բան, քան այն, ինչ որ նրանք բերնով էին ասում, չրթունքները սկսում էին կծկուել, զարգանդ էր գալիս վրանները և նրանք չտապով բաժանուում էին իրարից։

Այդ յարաբերութիւնները չարունակուեցին Նեխլիւդովի և Կատիշայի մէջ ամբողջ այդ ամառուայ ընթացքում։ Մօրաքոյրները նկատեցին այդ յարաբերութիւնները, վախեցան և նոյն իսկ այդ բանի մասին գրեցին արտասահման Նեխլիւդովի մօրը, իշխանուհի Ելենա Իվանօվնային։ Մարիա Իվանօվնա մօրաքոյրը վախենում էր, որ Նեխլիւդովը կը կապուի Կատիշայի հետ։ Բայց նրա վախը զուր էր.—Նեխլիւդովը, առանց իր իմանալու, սիրում էր Կատիշային այնպէս, ինչպէս առհասարակ սիրում են անմեղ մարդիկ, և հէնց այդ անմեղ սէրն էր, որ գլխաւորապէս պահպանում էր անկումից թէ նրան, թէ Կատիշային։ Նա ոչ միայն ցանկութիւն չէր զգում մարմնապէս ունենալ Կատիշային, այլ ընդհակառակը նրան սարսափ էր պատճառում այն միտքը, թէ ինքը կարող է այդպէս վերաբերուել նրան։ Շատ աւելի հիմնաւոր էր բանաստեղծական Սօֆիա Իվանօվնայի երկիւղը, թէ Դմիտրին, իր անկեղծիմ և վճռական բնաւորութեամբ, սիրահարուելով այդ աղջկայ վրայ, մի գուցէ ուզի ամուսնանալ հետը, ուշք չը դարձնելով նրա ծագումին ու դիրքին։

Եթէ Նեխլիւդովը այն ժամանակ պարզ գիտակցէր, որ ինքը սիրում է Կատիշային, և մանաւանդ եթէ սկսէին նրան համոզել, թէ նա ամենևին չի կարող կապել և չը պէտք է կապի իր բախտը այդ աղջկայ հետ, շատ հեշտութեամբ կարող էր պատահել, որ նա, իր չիտակ բնաւորութեամբ, կը վճռէր, որ ոչ մի պատճառ չը կայ չամուսնանալու մի աղջկայ հետ, ով որ էլ լինի այդ աղջիկը, եթէ միայն ինքը սիրում է նրան։ Բայց մօրաքոյրները բան չասացին նրան իրանց զգացած

երկիւղի մասին, և նա գնաց նրանց մօտից, առանց գիտակցելու իր սէրը դէպի Կատիւշան։

Նա հաւատացած էր, թէ իր համակրութիւնը դէպի Կատիւշան մի առանձին արտայայտութիւն էր կանոնի ազդած բերկրութեան, որով այդ ժամանակ լի էր նրա ամբողջ էութիւնը և որ զգում էր նաև այդ քաղցր ու զուարթ աղջիկը։ Սակայն գնալու օրը, երբ Կատիւշան, մօրաքոյրների հետ պատշգամբումը կանգնած, ճանապարհ էր դնում նրան իր սուրբակ, արտասուալից և փոքր ինչ չիլ աչքերով, նա զգաց, որ ինքը այդտեղ թողնում է մի ինչ որ գեղեցիկ, թանկագին բան, որ այլ ևս չի կրկնուիլ երբէք։ Եւ նրա սիրտը սաստիկ ախրեց։

—Մնաս բարև, Կատիւշա, չնորհակալութիւն ամեն բանի համար,—ասաց նա Սօֆիա Իվանովնայի դէմի վրայով, կառքը նստելիս։

—Մնաք բարև, Դմիտրիյ Իվանովիչ,—ասաց Կատիւշան իր դուրեկան, փաղաքշիչ ձայնով և, պահելով աչքերը լցրած արտասուքը, փախաւ սրահը, ուր կարող էր աղաս լաց լինել։

XIII

Դրանից յետոյ Նեխլիւդովը երկար տարի չէր տեսել Կատիւշային, և տեսնուեց նրա հետ միայն այն ժամանակ, երբ հէնց նոր օֆիցերութիւն ստացած գնում էր զօրքի հետ միանալու և ճանապարհին մտաւ մօրաքոյրների մօտ, արդէն բոլորովին փոխուած և այնպիսի մարդ դարձած, որ ամենևին նման չէր երկար տարի առաջ նրանց մօտ ամառը հիւր եկած ուսանող Նեխլիւդովին։

Այն ժամանակ նա աղնիւ և անձնուրաց պատանի էր, պատրաստ նուիրել անձը ամեն մի բարի գործի համար. այժմ նա փչացած, նրբացած եսամոլ էր, ընդունակ սիրելու միայն իր զուարճութիւնը։ Այն ժամանակ Աստուծու աշխարհը թուում էր նրան մի գաղտնիք, որ նա բերկրանքով և յափշտակութեամբ աշխատում էր լուծել. այժմ ամեն ինչ այս կեանքում պարզ էր ու որոշ նրա համար և սահմանուում էր այն կենսական պայմաններով, որոնց մէջ գտնուում էր նա։ Այն ժամանակ հարկաւոր և կարևոր էր թուում նրան հաչտուել բնութեան և այն մարդկանց հետ, որոնք ապրել, մտածել ու զգացել էին մինչև նրա ժամանակը (փիլիսոփաների, բանաստեղծների հետ), այժմ հարկաւոր և կարևոր էին թուում մարդկային հաստատութիւնները և յարաբերութիւնները ընկերների հետ։ Այն ժամանակ կինը

նրա համար մի խորհրդաւոր և աբանչելի—հէնց այն խորհրդաւորութեամբը աբանչելի—էակ էր. այժմ կանանց դերը,—բոլոր կանանց, բացի իր ընտանիքը կազմող կանանցից և իր մտերիմների ամուսիններից, չատ որոշ էր,—կինը արդէն զգացած զուարճութիւնը ստանալու միջոցների մէջ ամենալաւերից մէկն էր։ Այն ժամանակ փող պէտք չէր և կարելի էր մօր տուածի մի երրորդ մասն անգամ չը վերցնել, կարելի էր հրաժարուել հօրից մնացած կալուածքից և ժառանգած հողաբաժինը տալ գիւղացիներին. իսկ այժմ նրան չէր բաւականանում այն 1500 ռուբլին, որ մայրը տալիս էր նրան ամեն ամիս, և արդէն մօր ու որդու մէջ անախորժ խօսակցութիւններ էին լինում փողի պատճառով։ Այն ժամանակ նա իր հոգեկան էութիւնն էր համարում իր իսկական եսը, իսկ այժմ նա իր ինքնութիւնը տեսնում էր իր առողջ ու աչխոյժ անասնական եսի մէջ։

Եւ այդ ամբողջ սարսափելի փոփոխութիւնը կատարուեց նրա մէջ միմիայն այն պատճառով, որ նա դադարեց ինքն իրան հաւատալուց և ընդհակառակը՝ սկսեց հաւատալ ուրիշներին։ Իսկ դադարեց նա ինքն իրան հաւատալուց և սկսեց հաւատալ ուրիշներին այն պատճառով, որ ինքն իրան հաւատալով ապրելը չատ դժուար էր. ինքն իրան հաւատալիս, ամեն մի հարց պէտք էր վճռել միչտ ոչ ի նպաստ իր անասնական եսի, որ հեչտ զուարճութիւններ է փնտռում, այլ գրեթէ միչտ նրա դէմ. իսկ ուրիշներին հաւատալով ապրելիս՝ ոչինչ չէր մնում վճռելու, որովհետև ամեն ինչ արդէն վճռուած էր և վճռուած՝ միչտ ընդդէմ հոգեկան եսի և ի նպաստ անասնական եսի։ Բացի այդ, ինքն իրան հաւատալիս, նա միչտ ենթարկուում էր մարդկանց դատապարտութեան, իսկ ուրիշներին հաւատալիս, նա հաւանութիւն էր ստանում իրան շրջապատողներից։

Այդպէս օրինակ, երբ Նեխլիւդովը մտածում, կարդում ու խօսում էր Աստուծու, արդարութեան, հարստութեան ու աղքատութեան մասին,—բոլոր շրջապատողները անտեղի և մաստիկ ծիծաղելի էին համարում այդ, և մայրն ու մօրաքոյրը բարեսիրտ հեգնութեամբ notre cher philosophe *) էին անուանում նրան. իսկ երբ նա վէպեր էր կարդում, անվայել անեկդոտներ էր պատմում, կամ գնում էր ֆրանսիական թատրոնը ծիծաղաչարժ վոդեվիլներ տեսնելու և ուրախ-ուրախ պատմում էր նրանց բովանդակութիւնը,—ամենքը գոհում ու քաջալերում էին նրան։ Երբ նա հարկաւոր էր համարում չափաւորել իր պահանջները, հնացած վերարկու էր հագնում ու գինի չէր խմում,—ամենքը

*) Մեր սիրելի փիլիսոփան։

օտարոտիությունն էին համարում այդ և մի տեսակ պարծենկոտությունն բնաւորությամբ։ իսկ երբ նա ահագին փողեր էր ծախսում որևորդության համար կամ արտասովոր ճոխությամբ առանձնասենեակը կահաւորելու վրայ,—ամենքը գովում էին նրա ճաշակը և թանկագին բաներ էին ընծայում նրան։ Երբ նա ողջախոհ էր և ուզում էր այդպես մնալ մինչև ամուսնանալը, ազգականները երկիւղ էին կրում նրա առողջութիւնից, և նոյն իսկ մայրը չը վշտացաւ, այլ աւելի չուտ՝ ուրախացաւ, երբ իմացաւ, որ նա կատարեալ տղամարդ է դարձել և ինչ-որ մի ֆրանսուհու խլել է իր ընկերից։ Իսկ Կատիւշայի հետ եղած դէպքի մասին,—այն բանի մասին, որ Նեխլիւդովի մոքովը կարող էր անցնել ամուսնանալ այդ աղջկայ հետ, իշխանուհի մայրը չէր կարող մտածել առանց սարսափի։

Նոյնպէս և այն ժամանակ, երբ Նեխլիւդովը, չափահաս դառնալով, հօրից ժառանգութիւն ստացած փոքրիկ կալուածքը տուեց գիւղացիներին, որովհետև անարդար բան էր համարում հողատիրութիւնը,—նրա այդ վարմունքը սարսափեցրեց նրա մօրն ու հարազատներին, և մշտական առիթ դարձաւ նրա բոլոր ազգականների համար նրան յանդիմանելու և ծաղրելու։ Անդադար պնդում էին նրան, թէ այդ հողը ստացող գիւղացիները ոչ միայն չեն հարստացել, այլ և աղքատացել են, որովհետև երեք գինետուն են բացել իրանց գիւղում և այլ ևս չեն ուզում ամենքին աշխատել։ Իսկ երբ Նեխլիւդովը, գինարբիան մանելով, իր ընկերների հետ այնքան ծախսեց ու թղթում տարուեց, որ Ելենա Իվանօվնան ստիպուած եղաւ փող վերցնել մայր գումարից, նա (Ելենա Իվանօվնան) գրեթէ ամենևին չը վշտացաւ, այն կարծիքին լինելով, որ այդ բնական բան է, և նոյն իսկ լաւ է, որ այդ ծաղիկը երիտասարդ հասակում ու լաւ հասարակութեան մէջ է պատուաստուում իր որդուն։

Սկզբում Նեխլիւդովը մաքառում էր, բայց մաքառումը չափազանց դժուար էր, որովհետև այն ամենը, ինչ որ նա, ինքն իրան հաւատալով լաւ էր համարում, ուրիշները վատ էին համարում, և, ընդհակառակը՝ այն ամենը, ինչ որ, ինքն իրան հաւատալով, նա վատ էր համարում, լաւ էին համարում բոլոր չրջապատողները։ Եւ բանը վերջացաւ նրանով, որ Նեխլիւդովը անձնատուր եղաւ, դադարեց ինքն իրան հաւատալուց ու սկսեց հաւատալ ուրիշներին։ Եւ սկզբի ժամանակներում այդ սեփական հաւատի ուրացումը անախորժ էր, բայց այդ անախորժ զգացմունքը չատ կարճ տեւեց, և Նեխլիւդովը չատ չուտով դադարեց այդ անախորժութիւնը զգալուց և նոյն իսկ մեծ սիրով զգաց, միաժամանակ սկսելով նաև ծիծել ու գինի խմել։

Եւ Նեխլիւդովը, իր կրքոտ բնաւորութեամբ, ամբողջովին անձնատուր եղաւ այդ նոր, իրան չրջապատող բոլոր մարդկանց կողմից հաւանութիւն գտնող, կենցաղավարութեան, ու բոլորովին խեղդեց իր մէջ այն ձայնը, որ ինչ-որ ուրիշ բան էր պահանջում։ Այդ սկսուեց Պետերբուրգ տեղափոխուելուց յետոյ և աւարտման հասաւ զինուորական ծառայութիւն մտնելով։

Իր կեանքի այդ չրջանում Նեխլիւդովը զգում էր այն բոլոր բարոյական արգելքներից ազատուելու հրճուանքը, որ ինքը առաջ գնում էր իր վերաբերմամբ, և չարունակ գտնուում էր խելագարութեան հասած եսամոլութեան քրօնիկական վիճակի մէջ։

Հէնց այդպիսի վիճակի մէջ էր նա, երբ երեք տարի անցած այցելեց իր մօրաքոյրներին։

XIV

Նեխլիւդովը այցելեց մօրաքոյրներին այն պատճառով, որ նրանց կալուածքը այն ճանապարհի վրայ էր, որով նա պէտք է գնար՝ որպէս զի հասնէր իրանից առաջ գնացած զօրագնդին, և այն պատճառով, որ նրանք չատ էին խնդրել նրան, որ այցելի իրանց, բայց գլխաւորապէս նրա համար, որ տեսնէր Կատիւշային։ Թերևս հոգու խորքումը նա արդէն վատ գիտակցութիւն ունէր Կատիւշայի վերաբերմամբ, բայց նա չէր գիտակցում այդ գիտակցութիւնը, որ թելադրում էր նրան նրա մէջ ապրող և այժմ սանձից արձակուած անասնական մարդը, այլ ուղղակի նրա սիրտն ուզում էր նորից ապրել այն վայրերում, ուր այնքան լաւ էր զգում նա իրան մի ժամանակ, և տեսնուել փոքր ինչ ծիծաղելի, բայց քաղցր ու բարեհոգի մօրաքոյրների հետ, որոնք միշտ, նրա համար անհնարաւոր կերպով, չրջապատում էին նրան սիրոյ և յարգանքի մթնոլորտով, և տեսնել սիրունիկ Կատիւշային, որի մասին այնքան քաղցր յիշողութիւն էր պահել նա։

Մօրաքոյրների կալուածքը հասաւ նա մարտի վերջին, Աւագ Հինգշաբթի, սաստիկ փչացած ճանապարհներով, տարափի տակ ընկած, մինչև չափիկը թրջուած և սաստիկ մրսած, բայց առոյգ ու աչխոյժ, ինչպէս նա միշտ զգում էր իրան այդ ժամանակ։ «Տեսնես մօտներն է Կատիւշան», մտածում էր նա, մրսելով մօրաքոյրների հինաւուրց կալուածատիրական ծանօթ բակը, որ չրջապատուած էր աղիւսէ պատով և լի էր կուտներից ներքև թափուած ձիւնով։ Նա սպասում էր, թէ Կատիւշան դուրս կը վազի նրա կառքի զանգակի ձայնին, բայց աղախինների պատչգամբը դուրս եկան, ջրի դոյլերը ձեռներին, եր-

կու ոտաթոռիկ և փէչերը քչտած գիւղացի կանայք, որոնք, ակնհայտաբար, լուանում էին տան տախտակամածը: Գլխաւոր պատշգամբումն էլ նա չը կար. այնտեղ դուրս եկաւ միայն լաքէյը, Տիխոնը, գոգնոցը հագին և երևի նոյնպէս զբաղուած տունը մաքրելով: Հաշտը դուրս եկաւ Սօֆիա Իվանօվնան, մեռաքսէ հագուստով և չեպչիկը գլխին:

—Ի՞նչ լաւ արեցիր, որ եկար,—ասում էր Սօֆիա Իվանօվնան, համբուրելով նրան:—Մաչինկան մի քիչ ակար է. և կեղեցում յոգնել է: Այսօր հաղորդ առանք:

—Շնորհաւորում եմ հաղորդներդ, մօրաքոյր,—ասաց Նեխլիւդովը, համբուրելով Սօֆիա Իվանօվնայի ձեռները,—ներեցէք, թրջեցի ձեզ:

—Գնա քո սենեակը: Ամբողջ ջուր ես դարձել: Տես է, բեխեր ունես արդէն... Կատիւշա, Կատիւշա: Շուտ, սուրճ տուր խմի:

—Այս րոպէիս,—լսուեց միջանցքից ծանօթ քաղցր ձայնը: Եւ Նեխլիւդովի սիրտը ցնծութեամբ թռունդ եկաւ: «Այստեղ է»: Նրա հաժար կարծես արևը դուրս նայեց թուխպերի տակից, և նա ուրախ-ուրախ Տիխոնի հետ գնաց իր նախկին սենեակը՝ շորերը փոխելու:

Սիրտն ուզում էր հարցնել Տիխոնից Կատիւշայի մասին—ինչպէս է, ինչպէս է ապրում, մարդու չէ գնում: Բայց Տիխոնը այն աստիճան պատկառոտ էր և մի և նոյն ժամանակ խիստ, այնքան հաստատ կերպով էր պնդում, որ ինքը ջուր ածի նրա ձեռներին, որ Նեխլիւդովը սիրտ չարեց հարց ու փորձ անել նրան Կատիւշայի վերաբերմամբ և հարցրեց միայն նրա թոռների մասին, եղբօր պառաւ նժոյգի մասին, Պօլկան չան մասին: Դրանք ամենքն էլ ողջ էին ու առողջ, բացի Պօլկանից, որ կատաղել էր անցեալ տարի:

Թաց շորերը հանելուց յետոյ Նեխլիւդովը հէնց նոր էր ըսկսել հագնուել, երբ արագ քայլերի ձայն լսուեց և մի րոպէ անցած մէկը թխթխկացրեց դուռը: Նեխլիւդովը ճանաչեց թէ ոտնաձայնը, թէ դռան թխթխկոցը: Միայն Կատիւշան էր այդպէս մանր զարկս ու թխթխկացնում:

Նեխլիւդովը քցեց ուսերին թաց վերարկուն ու մօտեցաւ դռանը:

—Մտէք:

Նա էր, Կատիւշան: Էլի նոյնը,—դեռ աւելի քաղցրիկ, քան առաջ: Էլի նոյնպէս ներքևից վերև էին նայում ժպտուն, միամիտ, փոքր ինչ չիլ սև աչքերը: Էլի առաջուան պէս՝ մազուր սպիտակ գոգնոց ունէր հագին: Նա բերել էր մօրաքոյրներից մի կտոր անուշաբոյր սապոն, որ նոր էին հանել թղթի փաթեթից,

և երկու երեսսրբիչ, մէկը մեծ, ռուսական երեսսրբիչ, միւսը՝ փոչոտ: Եւ չը բանեցրած սապոնը դրուած տառերով, և այդ երեսսրբիչները, և ինքը Կատիւշան—բոլորն էլ միատեսակ մաքուր էին, թարմ, անձեռնամուխ և դուրեկան: Կատիւշայի սիրտնիկ և պինդ ու կարմիր շրթունքները, Նեխլիւդովին տեսնելիս, էլի առաջուան պէս կուչ եկան անզուսպ ուրախութիւնից:

—Գալուստներդ բարի, Դմիտրիյ Իվանովիչ,—ժպտալով պատասխանեց նա, և դէմքը ամբողջ կարմրատակեց:

—Բարև, ինչպէս ես, լաւ ես, ինչպէս էք, լաւ էք,—չէր իմանում Նեխլիւդովը թէ ինչպէս խօսէր հետը, «դու»-ով թէ «դուք»-ով, և ինքն էլ կարմրեց նրա պէս:

—Փառք Աստուծու... Ահա մօրաքոյրը ուղարկեց ձեզ համար ձեր սիրած վարդագոյն սապոնը,—ասաց նա, սապոնը դնելով սեղանի վրայ, երեսսրբիչներն էլ բազկաթոռի բազուկների վրայ:

—Սրանք իրանց սապոնն ունեն,—հիւրի ինքնուրոյնութեանը պաշտպան հանդիսացաւ Տիխոնը, հպարտութեամբ ցոյց տալով Նեխլիւդովի արծաթէ կափարիչներով մեծ նեսեսերը, որ բաց էր արուած և որի մէջ լիքն էին բազմաթիւ սրուակներ, խողանակներ, ֆիքսատուարներ, անուշահոտութիւններ և արդեղէնի ամէն տեսակ պարագաներ:

—Շնորհակալութիւն արէք մօրաքրոջը: Ուրեմն ուրախ եմ, որ եկայ,—ասաց Նեխլիւդովը, զգալով, որ հոգին նորից սկսում է պայծառանալ և գորովով լցուել այնպէս, ինչպէս այդ լինում էր մի ժամանակ:

Կատիւշան ժպտաց միայն ի պատասխան այդ խօսքերին և դուրս գնաց:

Մօրաքոյրները, որոնք առանց այն էլ միշտ սիրում էին Նեխլիւդովին, այս անգամ սովորականից աւելի ուրախութեամբ հանդիպեցին նրան: Դմիտրին գնում էր պատերազմի, ուր կարող էին վիրաւորել, սպանել նրան:

Այդ չարժում էր մօրաքոյրների գորովը:

Նեխլիւդովը իր ճանապարհորդութիւնը այնպէս էր կարգադրել, որ մօրաքոյրների մօտ պէտք է մի օր միայն մնար, բայց Կատիւշային տեսնելով, նա համաձայնեց նրանց մօտ հանդիպել Զատիկը, որ երկու օրից յետոյ էր լինելու, և հեռագրեց իր մտերիմ ընկեր Շէնբօկին, որի հետ առաջուց պայմանաւորուել էին իրար պատահել Օդեսայում, որ նա էլ գայ մօրաքոյրների մօտ:

Կատիւշային տեսնելու առաջին օրից Նեխլիւդովը զգաց

դէպի նա նոյնը, ինչ որ զգում էր առաջ։ Նոյնպէս, ինչպէս և այն ժամանակ, նա չէր կարողանում առանց յուզմունքի տեսնել Կատիւշայի սպիտակ դոգնոցը, չէր կարողանում առանց հրճուանքի լսել նրա քայլերը, ձայնը, ծիծաղը, չէր կարողանում առանց խանդաղատանքի նայել նրա՝ թաց հաղարճի նման սև աչքերի մէջ, մանաւանդ երբ նա ժպտում էր, և, որ գլխաւորն է, չէր կարողանում առանց չիմթութեան տեսնել, թէ ինչպէս նա կարմրում է իրան հանդիպելիս։ Նա զգում էր, որ ինքը սիրահարուած է, բայց ոչ այնպէս, ինչպէս առաջ, երբ այդ սէրը գաղտնիք էր նրա համար ու նա ինքն իրան անգամ չէր համարձակւում խոստովանել, որ ինքը սիրում է, և երբ նա համոզուած էր, թէ սիրել կարելի է կեանքում միայն մի անգամ. այժմ նա սիրահարուած էր, գիտակցելով իր սիրահարուածութիւնը և ուրախ լինելով այդ բանին և անորոշ կերպով իմանալով, թէև թագցնելով ինքն իրանից, թէ ինչումն է կայանում այդ սէրը և ինչ կարող է դուրս գալ նրանից։

Նեխլիւդովին, ինչպէս առհասարակ ամենքի մէջ, երկու մարդ կար։ Մէկը հոգեկան էակ, որ միմիայն այնպիսի բարիք է փնտռում իր համար, որ բարիք լինէր նաև ուրիշ մարդկանց համար, և միւսը՝ անասնական էակ, որ բարիք է փնտռում միմիայն իր համար և այդ բարիքի սիրուն պատրաստ է զոհել ամբողջ աշխարհի բարիքները։ Իր կեանքի այդ շրջանում, երբ նա խելագարութիւն դարձած եսամոլութեան էր հասել Պետերբուրգի բարոյական մթնոլորտի և գիւղական կենցաղավարութեան չնորհիւ, Նեխլիւդովի մէջ անասնական էակը իշխում էր միահեծան, կատարելապէս ճնշելով հոգեկան էակին։ Բայց երբ նա տեսաւ Կատիւշային և նորից զգաց այն, ինչ որ նա մի ժամանակ զգում էր դէպի Կատիւշան, հոգեկան էակը բարձրացրեց գլուխը և սկսեց յայտարարել իր իրաւունքները։ Եւ Նեխլիւդովի մէջ, մինչև Զատիկը մնացած այդ երկու օրուայ ընթացքում, անընդհատ կատարւում էր մի ներքին կռիւ, որ սակայն նա ինքը չէր գիտակցում։

Իր հոգու խորքում նա գիտէր, որ ինքը պէտք է գնայ և որ հարկ չը կայ այժմ մնալ մօրաքոյրների մօտ, գիտէր, որ մնալուցը ոչ մի լաւ բան չէ կարող դուրս գալ, բայց այնքան քաղցր ու դուրեկան էր մնալը, որ նա այդ բանը չէր ասում ինքն իրան ու մնում էր։

Շաբաթ երեկոյեան, Քրիստոսի Յարութեան ծրագրոյցին, քահանան ու սարկաւագը եկան գիշերուան ժամն ասելու, ինչպէս իրանք պատմում էին, հաղիւ հաղ կարողանալով լճացած ջրերի միջով սահնակով անցնել այն երեք վերստ տա-

բածութիւնը, որ բաժանում էր եկեղեցին մօրաքոյրների տնից։

Նեխլիւդովը մօրաքոյրների ու ծառաների հետ լսեց ժամերգութիւնը, անդադար նայելով Կատիւշային, որ կանգնած էր դռանը և խունկ էր բերում, համբուրուելով *) չնորհաւորեց քահանայի ու մօրաքոյրների Զատիկը և արդէն ուզում էր գնալ քնելու, երբ լսեց, թէ ինչպէս միջանցքում Մարիա Իվանովնայի պառաւ աղախին Մատրեոնա Պաւլովնան ու Կատիւշան պատրաստւում են եկեղեցի գնալ կուլիչներ ու պասկաներ օրհնել տալու համար։ «Ես էլ կ'երթամ», մտածեց նա։

Մինչև եկեղեցի այդ ժամանակ ոչ անուաւոր կառքի համար կարգին ճանապարհ կար, ոչ սահնակի համար, ուստի Նեխլիւդովը, որ մօրաքոյրների մօտ այնպէս էր կարգադրութիւններ անում, ինչպէս իր տանը, հրամայեց թաքել իր համար «եղբօր» կոչուած նժոյգը, և փոխանակ պառկելու քնելու, հագաւ փայլուն համազգեստն ու քիփ բէյտուզները, վրան քցեց զինուորական վերարկուն և հեծնելով՝ մտաւ կորած, ծանրացած և անվերջ խրխնջացող պառաւ նժոյգը, ճանապարհ ընկաւ մթութեան, լճացած ջրերի և ձիւների միջով դէպի եկեղեցին։

XV

Այդ ժամերգութիւնը այնուհետև Նեխլիւդովի ամբողջ կեանքի ընթացքում մնաց նրա ամենալուսաւոր և ամենաջօրեղ յիշողութիւնների թւում։

Ժամը արդէն սկսուել էր երբ նա սև խաւարի մէջ, որ տեղ-տեղ միայն փարատւում էր սպիտակին տուող ձիւնից, ջուրը չիչվացնելով՝ մտաւ եկեղեցու բակը իր ձիով, որ ականջները խլչտացնում էր, տեսնելով եկեղեցու չուրջը վառուած ճրագները։

Գիւղացիները ճանաչեցին Մարիա Իվանովնայի քրոջ որդուն, առաջնորդեցին նրան չոր տեղ, ուր կարելի իր իջնել, ձին քաշեցին կապելու և իրան տարան եկեղեցի։ Եկեղեցին լի էր տօնօրեայ բաղմութեամբ։

Ամբակոմում կանգնած էին տղամարդիկ, ծերերը՝ տնագործ կաֆտաններով ու արեխներով և մաքուր սպիտակ ոտի փաթաթաններով, իսկ երիտասարդները՝ նոր մահուդէ կաֆտաններով, վառոյն գօտիներով և կօշիկներով։ Ձախակողմում՝ կնանիք կարմիր մետաքսէ գլխաչորերով, վառկարմիր թևքաւոր պլիսէ բաճկոններով, կապոյտ, կանաչ, կարմիր ու գոյնզգոյն չրջա-

*) Ուսաների մէջ ընդունուած սովորութիւն է համբուրուել Զատիկը շնորհաւորելիս։ Ե. Թ.

զգեստներով և պայտաւոր կիսակօշիկներով։ Համնստ պառաւները, սալիտակ գլխաշորերով, մոխրագոյն կաֆտաններով, հնաձև պահեստներով և բաշմակներով կամ նոր տրեխներով, կանդնած էին նրանց յետևին. ջահէլների ու պառաւների արանքում կանգնած էին զուգած երեխաները իւղոտ գլուխներով։ Տղամարդիկ իսչ էին հանում ու ծունկ չոքում, թափահարելով մազերը. կնանիք, մանաւանդ պառաւները, որոնք խուճացած աչքերը յառել էին մի մոմակալատ պատկերի, իրար կպցրած մատները պինդ աղմում էին իրանց գլխաշորով ծածկուած ճակատին, ուսերին ու փորին և, ինչ-որ չընկալով, կանգնած կռանում էին կամ ծունկ էին չոքում։ Երեխաները, մնծերին նմանուելով, եռանդով աղօթում էին, երբ նայող էր լինում նրանց վրայ։ Ոսկէ խաչկալը չողչողում էր մոմերից, որոնցով ամէն կողմից չրջապատուած էին ոսկեզօծ մեծ մոմերը։ Ջահի վրայ չարուած էին մոմեր, դպիրների դասերից լսում էին ուրախ եղանակներ, որ երգում էին կամաւոր երգիչներ, զոռացող բասերով և բարակ դիսկանտներով։

Նեխլիւդօվը առաջ անցաւ։ Մէջտեղում կանգնած էր աղնուական դասը—մի կլուտածատէր իր կնոջ ու նաւաստի չոր հագած տղայի հետ, ստանօվոյը, հեռագրապետը, մի վաճառական երկարաճիտք կօշիկներով, սատրչինան չքաղրամով և բեմի աջակողմը, կալուածատիրուհու յետևին, Մատրեօնա Պաւլօվնան գոյնզգոյնի տուող կարմրակապոյտ զգեստով ու երիզաւոր սալիտակ չալով և Կատիւշան իրանքը փոթէփոթ սալիտակ զգեստով, կապոյտ գօտիով և սև մազերին կապած կարմիր ժապաւէնով։

Ամէն ինչ տօնօրեայ էր, հանդիսաւոր, ուրախ և գեղեցիկ,—և՛ քահանան ոսկէկար խաչերով զարդարած բացդոյն արծաթակար չուրջառով, և՛ սարկաւագը, և՛ դպիրները տօնօրեայ արծաթակար ու ոսկէկար ժամաչափիկներով, և՛ զուգուած կամաւոր երգիչները իւղոտ մազերով, և՛ տօնային երգերի ուրախ եղանակները, և՛ այն, որ քահանաները անդադար օրհնում էին ժողովրդին երբեակ ծաղկազարդ մոմերով չարունակ կրկնելով՝ Քրիստոս յարեաւ ի մեռելոց։ Ամէն ինչ գեղեցիկ էր, բայց ամէնից լաւը Կատիւշան էր սալիտակ զգեստով և կապտագոյն գօտիով, սև մազերի կարմիր հանգոյցով և ցնծութիւնից փայլող աչքերով։

Նեխլիւդօվը զգում էր, որ Կատիւշան տեսնում է իրան, առանց յետ նայելու։ Նա տեսաւ այդ, երբ Կատիւշայի կողքով անցնում էր դէպի սեղանը։ Նա իսկապէս բան չունէր ասելու Կատիւշային, բայց հնարեց ու ասաց, անցնելով նրա մօտով.

—Մօրաքոյրն ասաց, որ թաթախուելու է չետուան պատարագից վերջը։

Կատիւշայի երիտասարդ արիւնը տուեց երեսը և կարմրացրեց նրա ամբողջ սիրունիկ դէմքը, ինչպէս լինում էր միշտ, երբ նա նայում էր Նեխլիւդօվին, և նրա սև աչքերը, ծիծաղելով և ուրախանալով ու միաժամաբար ներքևից վերև նայելով, կանգ առան Նեխլիւդօվի վրայ։

—Գիտեմ,—ասաց նա ժպտալով։

Այդ ժամանակ տիրացուն պղնձէ սրճամանի նման գանձանակը ձեռքին, բազմութեան մէջով ճանապարհ բանալով իր համար, անցաւ Կատիւշայի կողքով, և առանց նայելու նրա վրայ, դիպաւ նրան ժամաչափի փէշով։ Տիրացուն, աչքերևաբար, յարգանք ցոյց տալով Նեխլիւդօվին, պտոյտ տուեց նրա մօտով և այդ պատճառով փէշովը կպաւ Կատիւշային։ Իսկ Նեխլիւդօվը զարմանում էր, թէ ինչպէս այդ տիրացուն չէ հասկանում, թէ ամէն ինչ, որ գոյութիւն ունի այդտեղ և առհասարակ արար աշխարհում, գոյութիւն ունի միմիայն Կատիւշայի համար, և որ կարելի է անուշագիր լինել դէպի ամէն բան աշխարհում, բայց ոչ դէպի Կատիւշան, որովհետև նա է ամէն բանի կենտրոնը։ Նրա համար էր փայլում խաչկալի ոսկին, նրա համար էին վառւում այդ մոմերը ջահում ու աշտանակներում, նրա համար էին այդպէս բերկրանքով երգում՝ «Ջաւիկ Տեառն է, ցնծացէք, ժողովուրդք»։ Եւ ինչ որ լաւ բան կար աշխարհում, բոլորը նրա համար էր։ Եւ թուում էր Նեխլիւդօվին, թէ Կատիւշան էլ հասկանում է, որ այդ ամէնը իր համար է։ Այդպէս էր թուում Նեխլիւդօվին, երբ նա նայում էր նրա փոթփոթ սալիտակ զգեստում երևող գեղակազմ հասակին և նրա ինքնամփոփ ուրախ դէմքին, որի արտայայտութիւնից նա տեսնում էր, որ իսկ և իսկ նոյն բանը, որ երգում է իր հոգու մէջ, երգում է նաև նրա հոգու մէջ։

Վաղորդեան և չետուան պատարագների ժամանակամիջոցում Նեխլիւդօվը դուրս եկաւ եկեղեցուց։ Ժամաւոր ժողովուրդը ճանապարհ էր բանում նրա առաջ և գլուխ էր տալիս։ Ո՛րը ճանաչում էր նրան, սրն էլ հարցնում՝ «ումիցն է»։ Գաւթում նա կանգ առաւ։ Աղքատները չրջապատեցին նրան. նա բաժանեց նրանց՝ քսակումը ունեցած մանրադրամը և աստիճաններովը իջաւ ներքև։

Այնքան լուսացել էր արդէն, որ կարելի էր ամէն բան տեսնել, բայց արևը դեռ չէր դուրս եկել։ Ժողովուրդը նստատել էր եկեղեցու չուրջը գտնուող գերեզմանների վրայ։ Կատիւշան մնացել էր եկեղեցում, և Նեխլիւդօվը կանգ առաւ նրան սպասելու համար։

Ժամաւորները իրար յետևից դուրս էին գալիս եկեղեցուց և,

կօշիկների մեխերով զրնգացնելով սալաքարերը, իջնում էին ասֆալտաճանապարհով և ցրւում բակում ու զերեզմանատանը։

Մարիա Իվանօվնայի կօնդիտէրը,—մի զառամեալ ծերունի երերուն դլխով,—կանդնեցրեց Նեխլիւդօվին ու համբուրուեց հետը, և ծերունու կինը,—մի պառաւ, մետաքսէ դլխաչորի տակից երեսդ կծկուած կլաիկով,—թաչկինակից հանեց մի դեղին, զաթրանագոյն ձու ու տուեց նրան։ Միաժամանակ մօտեցաւ նրան մի մկանոտ դեղջուկ, նոր բահկոնով ու կանաչ գօտիկով։

—Ջրիստոս յարեաւ ի մեռելոց, ասաց նա, ծիծաղուն աչքերով, և, ձգուելով դէպի Նեխլիւդօվը ու խուտուտ ածելով նրա երեսը իր գանգուր միրուքով, երեք անդամ համբուրեց նրա չրթունքների ուղիղ մէջտեղը իր պինդ ու թարմ չրթունքներով։

Այն ժամանակ, երբ Նեխլիւդօվը համբուրւում էր այդ դիւղացու հետ, ներս ծծկլով դեղջկային առանձնայատուկ ահաբեկելի հոտը, և վերջնում էր նրա տուած թունդ դարչնագոյն ձուն, եկեղեցու դռան մէջ երևացին Մատրեօնա Պաւլօվնայի գոյնդգոյնի տուող զդեստը և Կատիւշայի սիրունիկ անահեր գլուխը կարմիր ժապաւէնով։

Կատիւշան խկոյն տեսաւ Նեխլիւդօվին իր առջևից գնացողների գլուխների վրայից, և Նեխլիւդօվը տեսաւ, թէ ինչպէս պայծառացաւ նրա դէմքը։

Նա ու Մատրեօնա Պաւլօվնան դուրս եկան դաւիթը ու, կանդ առնելով, սկսեցին ողորմութիւն տալ աղքատներին։ Կատիւշային մօտեցաւ մի աղքատ, որի քթի տեղում լաւացած խոցի կարմիր հետք էր երևում միայն։ Կատիւշան ինչ-որ բան հանեց թաչկինակի մէջից, տուեց նրան ու յետոյ մօտեցաւ և առանց ամենաչնչին զզուանքի, այլ, ընդհակառակը, նոյնպէս ուրախ ու փայլուն աչքերով, երեք անդամ համբուրուեց նրա հետ։ Եւ այն ժամանակ, երբ նա համբուրւում էր աղքատի հետ, նրա աչքերը հանդիպեցին Նեխլիւդօվի հայեացքին։ Կարծէք նա հարցնում էր Նեխլիւդօվից—լաւ է անում ինքը, ամենպէս է անում, ինչպէս պէտք է։

«Այդպէս է, այդպէս, սիրելիս, ամեն բան լաւ է, ամեն բան հիանալի է, սիրում եմ քեզ»։

Նրանք իջան դաւթից և Նեխլիւդօվը մօտեցաւ նրանց։ Նա չէր ուզում համբուրուել Կատիւշայի հետ, այլ միայն ուզում էր մօտ լինել նրան։

—Ջրիստոս յարեաւ ի մեռելոց,—կռացնելով գլուխը ու ժպտալով ասաց Մատրեօնա Պաւլօվնան ձայնի այնպիսի եղանակով, որ ասում էր, թէ այժմ ամենքը հաւասար են, և ձգուեց

դէպի նա ու չրթունքները մօտեցրեց նրան, նախապէս սրբելով բերանը մկնաձև կոլոլած թաչկինակով։

—Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի,—պատասխանեց Նեխլիւդօվը, համբուրուելով։

Նա յետ նայեց Կատիւշային։ Կատիւշան կարմրեց ու իսկոյն մօտեցաւ նրան։

—Ջրիստոս յարեաւ ի մեռելոց, Դմիտրիյ Իվանօվիչ։

—Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի,—ասաց Նեխլիւդօվը։ Նրանք համբուրուեցին երկու անդամ և կարծէք մտածեցին, թէ պէտք է արդեօք էլի համբուրուել, և կարծէք վճռելով, որ պէտք է, երրորդ անդամ համբուրուեցին ու երկուսն էլ ժպտացին։

—Ջէք գնալ քահանայի մօտ,—հարցրեց Նեխլիւդօվը։

—Ո՛չ, Դմիտրիյ Իվանօվիչ, մենք կը նստենք այստեղ,—ասաց Կատիւշան, ամբողջ կրծքով, կարծէք զուարթ աշխատանքից յետոյ, ծանր չունչ քաշելով և նայելով ուղիղ նրա աչքերին իր հլու, կուսական, սիրող ու փոքր ինչ շիլ աչքերով։

Տղամարդու և կնոջ մէջ եղած սէրը միշտ ունենում է մի բոպէ, երբ նա, հասնում է իր գագաթնակէտին, երբ նրա մէջ չը կայ ոչինչ գիտակցական ու դատողական և չը կայ նաև ոչինչ զգայական։ Այդպիսի բոպէ էր Նեխլիւդօվի համար Յարութեան այդ գիշերը։ Երբ նա այժմ միայն էր բերում Կատիւշային, այն բոլոր դրութիւններից, որոնց մէջ նա տեսել էր Կատիւշային, այդ բոպէն աւելում էր բոլոր միւս բոպէները։ Սև, կոկ ու փայլուն փոքրիկ գլուխ, փոթփոթաւոր սպիտակ զդեստ, որ քիչ պատում է նրա գեղակազմ կուսական իրանը ու ոչ բարձր կուրծքը, և՛ այդ կարմրութիւնը, և՛ այդ մեղմ, պայդան ան աչքերը, և՛ այդ ամբողջ էութեան մէջ երկու գլխաւոր գծեր՝ սիրոյ կուսութեան մաքրութիւնը, սիրոյ՝ ոչ միայն դէպի ինքը, Նեխլիւդօվը,—նա լաւ գիտէր այդ,—այլ դէպի ամեն մարդ և ամեն բան աչխարհում. ոչ միայն դէպի այն ամենը, ինչ որ լաւ է, այլ և դէպի այն աղքատը, որի հետ նա համբուրուեց։

Նեխլիւդօվը գիտէր, որ Կատիւշայի մէջ կար այդ սէրը, որովհետև ինքն էլ այդ գիշեր և այդ առաւօտ գիտակցում էր իր մէջ նոյն սէրը, և գիտակցում էր, որ այդ սիրոյ մէջ ինքը ի մի է ձուլուում Կատիւշայի հետ։

Ա՛խ, երանի այդ բոլորը դադար առնէր այդ գիշերուայ ըզգայմունքի վրայ։ «Այո՛, այդ զարհուրելի բանը կատարուեց ամբողջապէս այդ Յարութեան գիշերից յետոյ», մտածում էր նա այժմ, նստած պատուհանի մօտ երդուեալ դատաւորների ներկայութեան։

XVI

Եկեղեցուց վերադառնալով, Նեխլիւդօվը թաթախուեց մօրաքոյրների հետ ու կազդուրուելու համար, զօրագնդում ձեռք բերած սովորութեան համեմատ, օղի ու գինի խմեց և գնաց իր սենեակն ու իսկոյն առանց հանուելու քնեց: Նրան զարթեցրեց դռան թխթխկոցը: Թխթխկոցից իմանալով, որ Կատիւշան է այդ, նա տեղից բարձրացաւ, աչքերը տրորելով ու ձմկոռալով:

—Դու՞ ես, Կատիւշա: Մտիր,—ասաց նա վեր կենալով:

Կատիւշան բացեց դուռը ու նրա արտաքով ասաց.

—Կանչում են ճաշի:

Նա նոյն սպիտակ զգեստովն էր, բայց մազերը կապած չէին ժապաւէնով: Նայելով Նեխլիւդօվի աչքերի մէջ, նա պայծառացաւ, կարծես թէ մի ինչ-որ արտասովոր ուրախ բան էր իր հաղորդածը:

—Այս րոպէիս գալիս եմ,—պատասխանեց Նեխլիւդօվը, վերցնելով սանրը մազերը սանրելու համար:

Կատիւշան մի րոպէ աւելորդ կանգնած մնաց: Նեխլիւդօվը նկատեց այդ և, դէն չպրտելով սանրը, գնաց նրա կողմը: Բայց նա իսկոյն և եթ չուռ եկաւ ու իր սովորական արագ և թեթև քայլերով հեռացաւ միջանցքի փոցքի վրայով:

«Ինձ պէս էլ յիմար մարդ կը լինի»,—ասաց Նեխլիւդօվը ինքն իրան.—«ինչու՞ չը պահեցի նրան»:

Եւ վազելվազ հասաւ նրա յետևից միջանցքում:

Ի՞նչ էր ուզում նա նրանից, այդ ինքն էլ չը գիտէր: Բայց նրան թուում էր, որ երբ նա մտաւ իր սենեակը, ինքը պէտք է անէր մի բան, որ այդպիսի դէպքերում ամենքն անում են, իսկ ինքը չարեց:

—Կաց, Կատիւշա,—ասաց նա:

Կատիւշան յետ նայեց:

—Ի՞նչ էք ուզում,—ասաց նա, ոտը կախ քցելով:

—Ոչինչ, միայն...

Եւ ճիգ գործ դնելով իր վրայ ու մտաբերելով, թէ ինչպէս են մարդիկ առհասարակ վարուում այդպիսի դրութեան մէջ, նա ձեռքը քցեց Կատիւշայի մէջքովը:

Աղջիկը կանգ առաւ ու նայեց նրա աչքերի մէջ:

—Չէ, Դմիտրիյ Իվանովիչ, չէ,—ասաց նա, կարմրելով ու լացակրկնելով, և իր բերտ ու ուժեղ ձեռքով հեռացրեց մէջքովը փափաթուած ձեռքը:

Նեխլիւդօվը բաց թողեց նրան և մի րոպէ ոչ միայն վատ

զգաց իրան ու ամաչեց, այլ և ուղղակի զզուելի թուաց ինքն իրան: Նա իսկապէս պէտք է այդ ժամանակ հաւատար ինքն իրան, իր այդ ներքին ձայնին. բայց նա չը հասկացաւ, որ իրան վատ զգալն ու ամաչելը իր հոգու ամենալաւ զգացմունքներն էին, որոնք պահանջ էին զգում արտայայտուել, այլ, ընդհակառակը, նրան թուաց, թէ իր այդ զգացմունքների պատճառը յիմարութիւնն է և թէ պէտք է վարուել այնպէս, ինչպէս վարուում են բոլորը:

Նա նորից հասաւ Կատիւշայի յետևից, նորից գրկեց նրան ու այս անգամ համբուրեց նրա վիզը: Այդ համբոյրը արդէն ամենևին նման չէր առաջուան այն երկու համբոյրներին,—առաջին անգիտակցական համբոյրին՝ եղրևանիի թփի յետևում, և երկրորդ համբոյրին՝ այդ նոյն օրը առաւօտեան եկեղեցում: Այս համբոյրը սարսափելի էր, և Կատիւշան զգաց այդ բանը:

—Այս ինչ արեցիք,—բացականչեց նա այնպիսի ձայնով, կարծէք թէ Նեխլիւդօվը փչրեց ինչ-որ անհուն թանկագին բան,—և արագ-արագ վազելով փախաւ:

Նեխլիւդօվը գնաց սեղանատուն: Ջուգուած մօրաքոյրները և բժիշկն ու հարևանուհին կանգնած էին նախաճաշի սեղանի մօտ: Ամեն ինչ վերին աստիճանի սովորական էր, բայց Նեխլիւդօվի հոգու մէջ փոթորիկ էր տիրում: Նա ոչինչ չէր հասկանում. երբ հետը խօսում էին, անտեղի պատասխաններ էր տալիս և մտածում էր միմիայն Կատիւշայի մասին, մտաբերելով այն զգացողութիւնը, որ ինքը ունեցաւ վերջին անգամ միջանցքում նրան համբուրելիս: Նա չէր կարողանում մտածել ոչ մի ուրիշ բանի մասին: Երբ Կատիւշան մանում էր սեղանատուն, նա, առանց նայելու նրան, իր ամբողջ էութեամբ զգում էր նրա ներկայութիւնը և ստիպուած էր ճիգ գործ դնել իր վրայ, որպէս զի չը նայէր նրան:

Ճաշից յետոյ Նեխլիւդօվը իսկոյն գնաց իր սենեակը և առաջիկ յուզուած դրութեան մէջ երկար գնում գալիս էր սենեակում, ականջ դնելով տան մէջ լսուող ձայներին և սպասելով Կատիւշայի քայլերին: Այն անսահման էակը, որ ապրում էր նրա մէջ, ոչ միայն բարձրացրել էր այժմ գլուխը, այլ և ամենակոփ էր արել այն հոգեկան «ես»-ը, որ նրա էութիւնն էր կազմում ոչ միայն այն ժամանակ, երբ նա առաջին անգամն էր եկել այդտեղ, այլ և նոյն իսկ հէնց այս առաւօտ եկեղեցում: Այդ անսահման էակը այժմ միահեծան իշխում էր նրա ներքին աշխարհում: Չը նայելով, որ Նեխլիւդօվը չարաչար աչքը Կատիւշայի յետևիցն էր պահում, սակայն այդ օրը

չը կարողացաւ ոչ մի անգամ յաջողեցնել պատահել նրան մէնմենակ։ Երեխ, աղջիկը խուսափում էր նրանից։ Բայց իրիկնադէմին այնպէս պատահեց, որ Կատիւշան պէտք է գնար նրա սենեակի կողքի սենեակը։ Բժիշկը մնացել էր ճաշելու, և նա պէտք է տեղը քցէր այդ հիւրի համար։ Լսելով նրա ոտնաձայնը, Նեխլիւդօվը, յուշիկ քայլերով և չունչը բռնած, կարծես յանցանք գործելու պատրաստուելով, մտաւ նրա յետևից սենեակը։

Մաքուր բարձի երեսի մէջ խրած երկու ձեռքովը բարձի անկիւնները բռնած, Կատիւշան յետ նայեց նրան ու ժպտաց, բայց ոչ առաջուան պէս ուրախ ու զուարթ, այլ վախուորած, ազիզորիմ ժպիտով։ Այդ ժպիտը կարծես ասաց նրան, թէ նրա արածը վատ բան է։ Մի րոպէ նա կանգ առաւ։ Այդտեղ դեռ հնարաւորութիւն կար մաքառելու։ Թէև թոյլ, բայց դեռ լսւում էր դէպի այդ աղջիկը զգացած իսկական սիրոյ ձայնը, որ չէնջում էր Նեխլիւդօվին այդ աղջկայ մասին, նրա զգայմունքների մասին, նրա կեանքի մասին։ Մի ուրիշ ձայն էլ ասում էր Նեխլիւդօվին.—տես, ձեռքիդ բաց կը թողնես fո զուարճութիւնը, fո բախտաւորութիւնը։ Եւ այդ երկրորդ ձայնը խեղդեց առաջինը։ Նեխլիւդօվը վճռական կերպով մօտեցաւ Կատիւշային։ Եւ նրան սիրեց սարսափելի, անզուսպ անասնական զգացմունքը։

Առանց աղջկան գրկիցը բաց թողնելու, Նեխլիւդօվը նըստացրեց նրան անկողնի վրայ և, զգալով, որ դեռ մի բան էլ պէտք է անել, ինքն էլ նստեց նրա կողքին։

—Դմիտրիյ Իվանովիչ, հոգիս, բայց թողէք, խնդրեմ,—ասում էր նա աղիողորմ ձայնով։—Մատրեօնա Պաւլօվնան գալիս է,—բացականչեց նա, դուրս պրծնելով նրա ձեռքից։

Ցիրաւի մէկը մօտենում էր դռանը։

—Որ այդպէս է, գիշերը կը գամ մօտդ,—ասաց Նեխլիւդօվը։—Դու մենակ ես, չէ՞։

—Ի՞նչ էք ասում։ Չէ, չէ, չը գաք. չի ուզի,—ասում էր Կատիւշան, բայց միայն բերանով, իսկ նրա յուզուած, այլայլուած ամբողջ էութիւնը ուրիշ բան էր ասում։

Դռանը մօտեցողը, ճիշտ որ, Մատրեօնա Պաւլօվնան էր։ Նա մտաւ ներս, մի վերմակ քցած կռնակը, և, յանդիմանօրէն նայելով Նեխլիւդօվի վրայ, բարկացած նկատողութիւն արեց Կատիւշային, որ ուրիշ վերմակ էր վերցրել։

Նեխլիւդօվը անխօս դուրս եկաւ։ Նա նոյն իսկ ամօթ չէր զգում։ Նա տեսաւ Մատրեօնա Պաւլօվնայի դէմքի արտայայտութիւնից, որ նա դատապարտում է իրան, և գիտէր, որ նա իրաւունք ունի դատապարտել իրան, գիտէր, որ իր արածը վատ բան է, բայց դէպի Կատիւշան տածած առաջուան լաւ սիրոյ զգայմունքից ազատուած անասնական կիրքը տիրել էր նրան և իշխում էր միանակ ու չէր ուզում ճանաչել ոչ մի բան, բացի իրանից։ Նա գիտէր այժմ, թէ ինչ պէտք է անել կիրքը յագեցնելու համար, և հնարք էր փնտռում այդ անելու համար։

Ամբողջ երեկոն նա քչուածի նման էր. մէկ մտնում էր մօրաքոյրների սենեակը, մէկ էլ դուրս էր գալիս գնում իր սենեակն ու պատչգամբը, և միայն այն էր մտածում, թէ ինչպէս անէ, որ Կատիւշային մէնմենակ տեսնի. բայց համ Կատիւշան էր խուսափում նրանից, համ էլ Մատրեօնա Պաւլօվնան աչքը միշտ Կատիւշայի վրայ էր պահում։

XVII

Այդպէս անցաւ ամբողջ երեկոն և վրայ հասաւ գիշերը։ Բժիշկը գնաց քնելու։ Մօրաքոյրները պատրաստւում էին պառկելու։ Նեխլիւդօվը գիտէր, որ Մատրեօնա Պաւլօվնան այժմ մօրաքոյրների ննջարանումն է, և Կատիւշան մենակ է աղախինների սենեակում։ Նա նորից դուրս եկաւ պատչգամբը։ Դրսից մութն էր, խոնաւ ու տաք, և օդի մէջ կանգնած էր այն սպիտակ մշուշը, որ գարնանը հալցնում է վերջին ձիւնը կամ տարածւում է վերջին ձիւնի հալքից։ Գետի կողմից, որ հոսում էր հարիւր քայլաչափ հեռու տան առջևի զառիվայրի տակով, լսւում էին տարօրինակ ձայներ,—սառուցը ճաքում էր։

Նեխլիւդօվը իջաւ պատչգամբից և, անցնելով սառուց կտրած ձեան վրայ լճացած ջրերի միջով, մօտեցաւ աղախինների սենեակի պատուհանին։ Սիրտը այնպէս էր տիտիւում կրծքումը, որ նա լսում էր ձայնը. չունչը մէկ բռնւում էր, մէկ էլ դուրս պրծնում ծանր հոգոցով։ Սենեակում փոքրիկ լամպ էր վառուում։ Կատիւշան, մտածմունքի մէջ ընկած, մենակ նստած էր սեղանի մօտ ու նայում էր իր առջևը։ Նեխլիւդօվը երկար, առանց իրար գալու, նայում էր նրան՝ կամենալով իմանալ, թէ ինչ է անելու նա, ենթադրելով, թէ ոչ ոք չի տեսնում իրան։ Մէկ երկու րոպէ նա մնաց անշարժ նստած, յետոյ բարձրացրեց աչքերը, ժպտաց, գլուխը, կարծես ինքն իր վրայ, յանդիմանօրէն թափ տուեց և, փոխելով դիրքը, թափով ձեռքերը դրեց սեղանի վրայ ու աչքերը սևեռեց դէպի առաջ։

Նեխլիւդօվը կանգնած նայում էր նրան և ակամայ լսում

միասին և՛ իր սրտի տրփտրփոցը, և՛ գետից եկող տարօրինակ ձայները։ Այնտեղ գետի երեսին, մշուշի մէջ ինչ-որ անընդհատ ու դանդաղ աշխատանք էր կատարւում և ինչ-որ մերթ խըշխշում էր, մերթ ճռնչում, մերթ փչրւում, կամ թէ ապակու նման զրնգում էին բարակ սառցակտորները։

Նա կանգնած նայում էր Կատիշայի մտահոգ, ներքին մաքառումից տանջուող դէմքին, և նրա խեղճը գալիս էր Կատիշայի վրայ. բայց, զարմանալի բան, այդ խղճահարութիւնը միևնոյն ատակայնում էր նրա վերաբերմամբ զգացած տենչը։

Նա թխթխկացրեց պատուհանը։ Կատիշան, կարծես էլեկտրական հարուածից, ցնցուեց ամբողջ մարմնով և սարսափ ներեց նրա երեսին։ Յետոյ նա վեր թռաւ տեղից, մօտեցաւ պատուհանին և երեսը մօտեցրեց ապակուն։ Սարսափի արտայայտութիւնը չանցաւ նրա դէմքից և այն ժամանակ, երբ նա, երկու ձեռքը ձիու աչքակալների նման աչքերին դնելով, ճանաչեց Նեխլիւդովին։ Նրա դէմքը չափից վեր լուրջ էր,—Նեխլիւդովը երբէք չէր տեսել նրան այդպէս։ Կատիշան ժպտաց միայն այն ժամանակ, երբ Նեխլիւդովը ժպտաց,—ժպտալ միմիայն կարծես հպատակուելով նրան, բայց իր հոգու մէջ ժպիտ չը կար, այլ կար միայն սարսափ։ Նեխլիւդովը ձեռքով նշան արեց նրան, որ դուրս գայ իր մօտ։ Բայց նա գլուխը թափ տուեց՝ թէ չէ, դուրս չի գալ, և մնաց կանգնած պատուհանի մօտ։ Նեխլիւդովը մէկ էլ երեսը մօտեցրեց ապակուն, ուզելով գոռալ, որ նա դուրս գայ, բայց այդ ժամանակ նա չուռ եկաւ դէպի դուռը,—անչուչա կանչող եղաւ նրան։ Նեխլիւդովը հեռացաւ պատուհանից։ Մշուշը այնքան թանձր էր, որ, տանից հինգ քայլ հեռացած, Նեխլիւդովը այլ ևս չէր տեսնում պատուհանը, այլ նշմարում էր միայն սևին տուող մի զանգուած, որի միջից լոյս էր արձակում լամպի կարմրագոյն ցոլքը, որ ահագին էր թուում։ Գետի երեսին չարունակւում էր սառուցի նոյն տարօրինակ խըշխշոցը, խչխչոցը, ճռնչիւնը և զրնգոցը։ Մի մօտակայ բակից մշուշի մէջ կանչեց մի աքաղաղ, մօտերքում ձայն տուեցին ուրիշները և հեռուից, գիւղի միջից, լսուեցին միմեանց ընդհատող և ի մի ձուլուող աքլորականչեր։ Շուրջը ամէն ինչ, բացի գետից, բոլորովին խաղաղ էր։ Աքաղաղների երկրորդ կանչն էր այդ։

Տան միւս կողմում մէկ-երկու անգամ յետ ու առաջ գնալ գալուց և մի քանի անգամ ոտը չուրն ընկնելուց յետոյ, Նեխլիւդովը նորից մօտեցաւ աղախինների սենեակի պատուհանին։ Լամպը դեռ վառւում էր, և Կատիշան, էլի մենակ նստած սե-

ղանի մօտ, կարծես վարանման մէջ էր։ Հէնց որ Նեխլիւդովը մօտեցաւ պատուհանին, Կատիշան աչքը քցեց այն կողմը։ Նեխլիւդովը թխթխկացրեց։ Կատիշան, առանց նայելու, թէ ով է թխթխկացնողը, իսկոյն դուրս վազեց սենեակից, և Նեխլիւդովը լսեց, թէ ինչպէս պոկ գալով բացուեց ու յետոյ ճռռաց ելքի դուռը։ Նա արդէն սպասում էր Կատիշային սրահի մօտ և իսկոյն առանց խօսելու գրկեց նրան։ Կատիշան սղմուեց նրան, բարձրացրեց գլուխը և շրթունքներով հանդիպեց նրա հառբոյրը։ Նրանք կանգնած էին սրահի անկիւնի յետևում հալուած ու չորացած տեղում, և Նեխլիւդովը ամբողջապէս տոգորուած էր տանջող, յագուրդ չը ստացած ցանկութեամբ։ Ցանկարծ նորից նոյն կերպով ճիփաց ու նոյն ձայնով ճռռաց ելքի դուռը, և լսուեց Մատրեօնա Պաւլօվնայի բարկացած ձայնը.

—Կատիւշա։

Աղջիկը դուրս պրծաւ Նեխլիւդովի գրկից ու վերադարձաւ իրանց սենեակը։ Նեխլիւդովը լսեց, թէ ինչպէս չկաց դռան փականքը։ Յետոյ ամէն ինչ խաղաղուեց, պատուհանի մէջից երևացող աչքանման կարմիր լոյսը չքացաւ և մնաց միայն մշուշն ու գետի խըշտուքը։

Նեխլիւդովը մօտեցաւ պատուհանին,—ոչ ոք չէր երևում։ Նա թխթխկացրեց,—ոչ մի պատասխան չեղաւ։ Նեխլիւդովը վերադարձաւ տուն արտաքին պատշգամբով, բայց չը պառկեց քնելու։ Նա կօշիկները հանեց ու ոտաբոբիկ գնաց մինչանգրամ դէպի Կատիշայի դուռը, որ Մատրեօնա Պաւլօվնայի սենեակի կողքին էր։ Սկզբում, լսելով, որ Մատրեօնա Պաւլօվնան հանգիստ խոռոչնում է, նա ուզում էր ներս մտնել, բայց յանկարծ պառաւը սկսեց հազալ և չուռ եկաւ ճռռան անկողնակալի վրայ։ Նեխլիւդովը սպասեց և այդպէս մի հինգ րոպէ մնաց կանգնած։ Երբ նորից ամէն ինչ հանդարտուեց և դարձեալ լսուեց Մատրեօնա Պաւլօվնայի հանգիստ խոխոջը, նա, աչխատելով քայլել այն տախտակների վրայով, որոնք չէին ճռճռում, առաջ գնաց և մօտեցաւ Կատիշայի դռանը։ Ամէն ինչ խաղաղ էր։ Կատիշան, անշուշտ, քնած չէր, որովհետև չէր լսում նրա շնչառութեան ձայնը։ Հէնց որ Նեխլիւդովը չչնջաց՝ «Կատիւշա», նա վեր թռաւ, մօտեցաւ դռանը և, ինչպէս Նեխլիւդովին թուաց, բարկացած ձայնով սկսեց համոզել նրան, որ թողնի գնայ։

—Այդ ինչ բան է։ Այդպէս բան կարելի է։ Մօրաքոյրները կը լսեն,—ասում էին նրա չրթունքները, բայց նրա ամբողջ էութիւնը ասում էր,—«ես քոնն եմ ամբողջովին»։

Եւ Նեխլիւդովը միայն այդ էր հասկանում։

—Դէ, մի բոպէով բաց արա դուռը։ Խնդրում եմ, աղաչում եմ,—ասում էր նա անխնամ խօսքեր։

Կատիւշան լռեց, յետոյ լսուեց փականքը վնասող ձեռքի քաքստոց։ Փականքը չրխկաց, և Նեխլիւդովը ներս սպրդեց բացուած դռան մէջով։

Նա գրկեց Կատիւշային և այնպէս, ինչպէս որ կար,—անթաթի գեղնագոյն չալակով ու բաց կոներով,—բարձրացրեց ու տարաւ։

—Ա՛խ։ Ի՞նչ էք անում,—չընկում էր Կատիւշան։

Բայց Նեխլիւդովը, առանց ուշք դարձնելու նրա խօսքերին, տանում էր նրան իր սենեակը։

—Ա՛խ, չի ուզի, չի ուզի, թողէք,—ասում էր աղջիկը, բայց ինքը սղմում էր նրան։

Երբ Կատիւշան, դողդողուն ու լուռ, առանց ոչինչ պատասխանելու նրա խօսքերին, հեռացաւ նրա սենեակից, նա դուրս եկաւ պատշգամբը և կանգ առաւ, աշխատելով պարզել իր համար՝ կատարուածի նշանակութիւնը։

Դրսում մի քիչ լուսացել էր։ Ներքևում, գետի կողմը, սառցակտորների ճռնչոցը, զրնգոցը ու խլխզոցը աւելի ևս ատամնացել էին, և առաջուան ձայներին աւելացել էր ջրի խոխոջիւնը։ Մշուշը սկսել էր նօսրել և մառախուղի պարսպի յետևից դուրս էր սահում նուազած լուսինը, մռայլ կերպով լուսաւորելով ինչ-որ մի սև ու ահռելի բան։

«Ի՞նչ էր այդ. մնծ բախտաւորութիւն պատահեց ինձ, թէ մնծ անբախտութիւն», հարցնում էր Նեխլիւդովը ինքն իրան։—«Միշտ այդպէս է լինում, ամենքն այդպէս են անում», ասաց նա ինքն իրան և գնաց քնելու։

XVIII

Միւս օրը փայլուն և զուարթ Շէնբօկը եկաւ Նեխլիւդովի մօրաքոյրների մօտ նրան տանելու և բոլորովին յափշտակեց նրանց իր ընորհալիութեամբ, սիրալիրութեամբ, ուրախութեամբ, առատաձեռնութեամբ և դէպի Դմիտրին տածած սիրով։ Նրա առատաձեռնութիւնը թէև չատ դուր եկաւ մօրաքոյրներին, բայց փոքր ինչ ապշեցրեց նրանց իր չափազանցութեամբ։ Եկած կոյր աղքատներին նա մի-մի ռուբլի տուեց, ծառաներին 15 ռուբլի «թէյադրամ» բաշխեց և երբ Սօֆիա Իվանօվնայի չնիկին, Սիւզէտկայի ոտը նրա մօտ քերծուեց ու արիւնլուայ եղաւ, նա առաջ ընկաւ վէրքը կապելու և, առանց մի րոպէ վարանելու, պատռեց իր երիզաւոր բատիստէ թաշկինակը (Սօֆիա Իվանօվնան գիտէր, որ այդպիսի թաշկինակների տասներկուսը ամենաքիչը 15 ռուբլի արժի) ու վիրակապեր չինեց նրանից Սիւզէտկայի համար։ Մօրաքոյրները դեռ այդպիսի մարդիկ չէին տեսել և չը գիտէին, թէ այդ Շէնբօկը 200 հազարից աւելի պարտք ունի, որ նա—այդ ինքը լաւ գիտէր—երբէք չէր վճարելու, և թէ այդ պատճառով 25 ռուբլի աւել կամ պակաս նրա համար ոչինչ նշանակութիւն չունէր։

Շէնբօկը միայն մի օր մնաց և հետևեալ գիշերը գնաց Նեխլիւդովի հետ միասին։ Նրանք չէին կարող աւելի երկար մնալ, որովհետև իրանց զօրագունդը գնալու վերջին պայմանաժամը արդէն լրանում էր։

Նեխլիւդովի հոգու մէջ մօրաքոյրների մօտ անցրած այդ վերջին օրը, երբ դեռ թարմ էր գիշերուան յիշատակը, զարթնում էին և կռւում իրար հետ երկու զգացմունք,—մի կողմից՝ այրող, զգայական յիշողութիւններ՝ անասնական սիրոյ, որ սակայն չէր տուել նրան այն բոլորը, ինչ որ խոստանում էր, և մի որոշ չափով ինքնաբաւականութեան, որ կարողացել էր հասնել իր նպատակին. միւս կողմից՝ գիտակցութիւն, որ ինքը ինչ-որ չատ վատ բան է արել, և որ այդ վատ բանը պէտք է ուղղել, և ուզել ոչ թէ այն աղջկայ, այլ իր օգտի համար։

Նեխլիւդովի հոգու մէջ մօրաքոյրների մօտ անցրած այդ վերջին օրը, երբ դեռ թարմ էր գիշերուան յիշատակը, զարթնում էին և կռւում իրար հետ երկու զգացմունք,—մի կողմից՝ այրող, զգայական յիշողութիւններ՝ անասնական սիրոյ, որ սակայն չէր տուել նրան այն բոլորը, ինչ որ խոստանում էր, և մի որոշ չափով ինքնաբաւականութեան, որ կարողացել էր հասնել իր նպատակին. միւս կողմից՝ գիտակցութիւն, որ ինքը ինչ-որ չատ վատ բան է արել, և որ այդ վատ բանը պէտք է ուղղել, և ուզել ոչ թէ այն աղջկայ, այլ իր օգտի համար։

Նեխլիւդովի հոգու մէջ մօրաքոյրների մօտ անցրած այդ վերջին օրը, երբ դեռ թարմ էր գիշերուան յիշատակը, զարթնում էին և կռւում իրար հետ երկու զգացմունք,—մի կողմից՝ այրող, զգայական յիշողութիւններ՝ անասնական սիրոյ, որ սակայն չէր տուել նրան այն բոլորը, ինչ որ խոստանում էր, և մի որոշ չափով ինքնաբաւականութեան, որ կարողացել էր հասնել իր նպատակին. միւս կողմից՝ գիտակցութիւն, որ ինքը ինչ-որ չատ վատ բան է արել, և որ այդ վատ բանը պէտք է ուղղել, և ուզել ոչ թէ այն աղջկայ, այլ իր օգտի համար։

Նեխլիւդովի հոգու մէջ մօրաքոյրների մօտ անցրած այդ վերջին օրը, երբ դեռ թարմ էր գիշերուան յիշատակը, զարթնում էին և կռւում իրար հետ երկու զգացմունք,—մի կողմից՝ այրող, զգայական յիշողութիւններ՝ անասնական սիրոյ, որ սակայն չէր տուել նրան այն բոլորը, ինչ որ խոստանում էր, և մի որոշ չափով ինքնաբաւականութեան, որ կարողացել էր հասնել իր նպատակին. միւս կողմից՝ գիտակցութիւն, որ ինքը ինչ-որ չատ վատ բան է արել, և որ այդ վատ բանը պէտք է ուղղել, և ուզել ոչ թէ այն աղջկայ, այլ իր օգտի համար։

Նեխլիւդովի հոգու մէջ մօրաքոյրների մօտ անցրած այդ վերջին օրը, երբ դեռ թարմ էր գիշերուան յիշատակը, զարթնում էին և կռւում իրար հետ երկու զգացմունք,—մի կողմից՝ այրող, զգայական յիշողութիւններ՝ անասնական սիրոյ, որ սակայն չէր տուել նրան այն բոլորը, ինչ որ խոստանում էր, և մի որոշ չափով ինքնաբաւականութեան, որ կարողացել էր հասնել իր նպատակին. միւս կողմից՝ գիտակցութիւն, որ ինքը ինչ-որ չատ վատ բան է արել, և որ այդ վատ բանը պէտք է ուղղել, և ուզել ոչ թէ այն աղջկայ, այլ իր օգտի համար։

Նեխլիւդովի հոգու մէջ մօրաքոյրների մօտ անցրած այդ վերջին օրը, երբ դեռ թարմ էր գիշերուան յիշատակը, զարթնում էին և կռւում իրար հետ երկու զգացմունք,—մի կողմից՝ այրող, զգայական յիշողութիւններ՝ անասնական սիրոյ, որ սակայն չէր տուել նրան այն բոլորը, ինչ որ խոստանում էր, և մի որոշ չափով ինքնաբաւականութեան, որ կարողացել էր հասնել իր նպատակին. միւս կողմից՝ գիտակցութիւն, որ ինքը ինչ-որ չատ վատ բան է արել, և որ այդ վատ բանը պէտք է ուղղել, և ուզել ոչ թէ այն աղջկայ, այլ իր օգտի համար։

Նեխլիւդովի հոգու մէջ մօրաքոյրների մօտ անցրած այդ վերջին օրը, երբ դեռ թարմ էր գիշերուան յիշատակը, զարթնում էին և կռւում իրար հետ երկու զգացմունք,—մի կողմից՝ այրող, զգայական յիշողութիւններ՝ անասնական սիրոյ, որ սակայն չէր տուել նրան այն բոլորը, ինչ որ խոստանում էր, և մի որոշ չափով ինքնաբաւականութեան, որ կարողացել էր հասնել իր նպատակին. միւս կողմից՝ գիտակցութիւն, որ ինքը ինչ-որ չատ վատ բան է արել, և որ այդ վատ բանը պէտք է ուղղել, և ուզել ոչ թէ այն աղջկայ, այլ իր օգտի համար։

Նեխլիւդովի հոգու մէջ մօրաքոյրների մօտ անցրած այդ վերջին օրը, երբ դեռ թարմ էր գիշերուան յիշատակը, զարթնում էին և կռւում իրար հետ երկու զգացմունք,—մի կողմից՝ այրող, զգայական յիշողութիւններ՝ անասնական սիրոյ, որ սակայն չէր տուել նրան այն բոլորը, ինչ որ խոստանում էր, և մի որոշ չափով ինքնաբաւականութեան, որ կարողացել էր հասնել իր նպատակին. միւս կողմից՝ գիտակցութիւն, որ ինքը ինչ-որ չատ վատ բան է արել, և որ այդ վատ բանը պէտք է ուղղել, և ուզել ոչ թէ այն աղջկայ, այլ իր օգտի համար։

նա տուեց նրան այնքան փող, որքան վայելուչ էր համարում նայելով իր և նրա դիրքին։

Ուղեւորման օրը, ճաշից յետոյ, նա Կատիւշայի ճանապարհը պահեց սրահում։ Կատիւշան կարմրատակեց՝ նրան տեսնելով և աչքով աղախինների սենեակի դուռը ցոյց տալով՝ ուզեց կողքովը անցնել, բայց Նեխլիւդովը կանգնեցրեց նրան։

—Ուզում էի մնաս բարև անել,—ասաց նա, ճմլելով ձեռքում՝ մէջը հարիւր ռուբլիանոց դրած մի ծրար։—Ահա ես...

Կատիւշան գլխի ընկաւ, խոժոռուեց, գլուխը թափ տուեց և յետ հրեց նրա ձեռքը։

—Ջէ, վե՛ր առ,—մրթմրթաց Նեխլիւդովը ու ծրարը խրեց նրա կռնատակը և, այնպէս խոժոռուելով ու հառաչելով, կարծես թէ ձեռքը դաղուեց, վազեց իր սենեակը։

Եւ այնուհետև երկար ժամանակ նա անդադար գնում զալիս էր իր սենեակում, և կծկւում էր, և նոյն իսկ ցաւագում ու բարձրաձայն հառաչում,—ասես ֆիզիկական ցաւից,—հէնց որ յիշում էր այդ տեսարանը։

Բայց ինչ արած։ Միշտ այդպէս է լինում։ Այդպէս է վարուել Շէնբօկը այն դաստիարակչուհու հետ, որի մասին պատմում էր ինքը, այդպէս է վարուել Գրիչա հօրեղբայրը, այդպէս է վարուել իր հայրը, երբ նա ապրելիս է եղել գիւղում և նրանից ծնուել է այն ապօրինի զաւակը, Միտենկան, որ այժմ էլ գեռ կենդանի է։ Իսկ եթէ բոլորն էլ այդպէս են անում, կը նշանակի այդպէս էլ պէտք է լինի։ Այդպէս էր աչխատում նա մխիթարել ինքն իրան, բայց ոչ մի կերպ չէր կարողանում մխիթարուել։ Այդ յիշողութիւնը դաղում էր նրա խիղճը։

Հոգու խորքում, ամենահեռաւոր խորքում, նա գիտէր, որ ինքը վատ, ւիրե ու անսիրտ բան է արել, որ ինքը այդ տեսակ վարուած լինելու գիտակցութեամբ ոչ միայն չի կարող այլ ևս դատապարտել ումի և իցէ, այլ և չի կարող ուղիղ նայել ուրիշների երեսին, էլ մի կողմ թողած այն, որ նա չի կարող այլ ևս հիանալի, ազնիւ ու մեծահոգի երիտասարդ համարել ինքն իրան, ինչպէս համարում էր առաջ։ Իսկ նա կարիք ունէր այդ համարումն ունենալու իր մասին, որպէս զի կարողանար չարունակել ապրել առյդ և ուրախ։ Դրա համար էլ մի հնարք կար միայն,—չը մտածել այդ բանի մասին։ Այդպէս էլ արեց նա։

Այն կեանքը, որ նա այժմ վարելու էր,—նոր տեղեր, ընկերներ, պատերազմ,—նպաստաւոր էր այդ բանին։ Եւ որքան նա աւելի էր ապրում, այնքան աւելի էր մոռանում իր արածը և, ի վերջոյ, իրօք, բոլորովին մոռացաւ։

Միայն մի անգամ, երբ, պատերազմը վերջանալուց յետոյ, Կատիւշային տեսնելու յոյսով նա գնաց մօրաքոյրների մօտ և իմացաւ, որ այդ աղջիկը այլ ևս նրանց մօտ չէ, որ նա, իր գնալուց յետոյ չատ չանցած, հեռացել էր նրանց մօտից երեխայ բերելու համար, և յիրաւի աղատուել էր մի տեղ և, ինչպէս լսել էին մօրաքոյրները, բոլորովին փչացել էր,—նրա սիրտը ճմլուեց։ Ազատուելու ժամանակին նայելով, նրա բերած երեխան կարող էր իրանից լինել, բայց կարող էր և իրանից չը լինել։ Մօրաքոյրներն ասում էին, թէ նա փչացել է և անտանակ բնաւորութեան տէր է, ինչպէս էր և նրա մայրը։ Եւ մօրաքոյրների այդ դատապարտութիւնը ախորժելի էր Նեխլիւդովին, որովհետև կարծես թէ արդարացնում էր նրան։ Սկզբում այնուամենայնիւ նա ուզում էր գտնել Կատիւշային ու երեխային, բայց յետոյ, հէնց այն պատճառով, որ հոգու խորքում նա սաստիկ ամօթ ու ցաւ էր զգում այդ բանի մասին մտածելիս, նա, ինչպէս հարկն է, ջանք չարեց նրանց գտնել, և աւելի ևս մոռացաւ իր գործած մեղքը ու դադարեց նոյն իսկ մտածելուց նրա մասին։

Բայց ահա այժմ այս զարմանալի զուգադիպութիւնը յիշեցրեց նրան ամեն ինչ և հարկադրում էր նրան խոստովանել իր անսրտութիւնը, անգթութիւնը և լրբութիւնը, որոնք հնարաւորութիւն էին տուել նրան հանգիստ ապրել այդ տաս տարուայ ընթացքում այդպիսի մեղք ունենալով իր խղճմտանքի վրայ։ Բայց նա գեռ հեռու էր այդ խոստովանութիւնն անելուց և այժմ մտածում էր միայն այն մասին, թէ մի գուցէ իսկոյն ամեն բան իմացուի, և Կատիւշան կամ նրա փաստաբանը պատմեն ամեն ամեն ինչ ու խայտառակեն նրան ամենքի առաջ։

XIX

Այդպիսի հոգեկան վիճակի մէջ էր Նեխլիւդովը դատարանի դահլիճից երդուեալատենակալների սենեակը գնացած ժամանակը։ Նա նստած պատուհանի մօտ, լսում էր իր չուրջը տեղի ունեցող խօսակցութիւնները և ծխում անընդհատ։

Ուրախ վաճառականը, ակներևաբար, ամբողջ հոգով համակրում էր Սմկովի վաճառականի ժամանցի եղանակին։

—Ի՞նչ եմ ասել, եղբայր. թունդ քէֆ է արել, իսկ սիրիբեցու նման։ Բերնումն էլ համ է ունեցել. տես, ինչ սիրուն աղջկայ վրայ է տաքացել։

Սւտգը ինչ-որ նկատումներ էր առաջ բերում, ապացուցանելով, թէ ամեն բան կախուած է էքսպերտիզայից։ Պեստր

Գերասիմովիչը ինչ-որ կատակ էր անում հրէայ գործակատարի հետ, և նրանք ինչ-որ բանի վրայ սկսեցին հռհռալ։ Նեխլիւդովը միամանակ խօսքերով էր պատասխանում իրան ուղղուած հարցերին և մի բան էր միայն ցանկանում, որ հանգիստ թողնեն իրան։

Երբ դատական պրիստաւը իր կողքահան քայլուածքով եկաւ ու նորից նիստի դահլիճը հրաւիրեց երդուեալատենակալներին, Նեխլիւդովը այնպիսի երկիւղ զգաց, կարծես թէ ինքը չէր գնում դատելու, այլ իրան էին տանում դատելու։ Հոգու խորքում նա զգում էր արդէն, թէ ինքը մի լիրբ մարդ է, որ պէտք է ամաչի մարդկանց երեսին նայելուց, և սակայն, ըստ սովորութեան, նա իր մշտական ինքնավստահ չարժումներով վեր եկաւ բարձրութեան վրայ և նստեց իր տեղը,—որ երկրորդն էր աւագից յետոյ,—ոտը ոտի վրայ քցելով ու պէնսնէն ձեռքին խաղացնելով։

Մեղադրեալներին էլ ուր որ տարել էին և էլնց նոր յետ բերեցին։

Դահլիճում նոր մարդիկ կային—վկաները, և Նեխլիւդովը նկատեց, որ Մասլովան մի քանի անգամ նայեց,—կարծես թէ չը կարողանալով աչքը հեռացնել,—մի չատ պճնուած, մետաքսի ու թաւիշի մէջ կորած, հաստ կնոջ վրայ, որ, մեծ հանդոյցաւոր բարձր գլխարկը գլխին և գողարիկ ոտիկիւլը արմնկահան բաց կոանը, նստած էր վանդակի այս կողմը առաջին կարգում։ Դա, ինչպէս Նեխլիւդովը յետոյ իմացաւ, վկայ էր և այն անառակատան տիրուհին, ուր ապրում էր Մասլովան։

Սկսուեց վկաների հարց ու փորձը,—անունները, դաւանութիւնները և այլն։ Յետոյ, կողմերին հարցնելուց յետոյ, թէ ինչպէս են նրանք կամենում հարցաւորձ անել՝ երդուեցնելով, թէ առանց երդուեցնելու, նորից եկաւ, դժուարութեամբ փոխելով ոտները, միևնոյն ծեր քահանան, և նորից միևնոյն կերպով չիակելով ոսկէ խաչը մետաքսապատ լանջի վրայ, նոյնպիսի հանգստութեամբ ու վստահութեամբ երդուեցրեց վկաներին և էքսպէրտին։ Երբ որ երդումը պրծաւ, բոլոր վկաներին տարան, թողնելով միայն մէկին, այն է կիտաեվային, այն անառականոցի տիրուհուն, ուր ապրում էր Կատիւշան։ Նրան հարցրին, թէ ինչ գիտէ նա այդ գործի մասին։ Կիտաեվան, չինծու ժպիտով և ամէն նախագահութեանը գլուխը տուղելով գլխարկի մէջ, մանրամասնօրէն ու անդունդին պատմեց իր իմացածը գերմանական արտաբերութեամբ։

Նախ և առաջ նրա մօտ եկել էր հիւրանոցի ծանօթ ծառայ Սիմոնը աղջիկներից մէկին տանելու մի հարուստ սիբիրեցի

վաճառականի համար։ Ինքը ուղարկել էր կանչելու Լիւբաչային։ Մի ժամանակից յետոյ Լիւբաչան վերադարձել էր վաճառականի հետ միասին։ Վաճառականի կատարը արդէն տաքացած էր,—թեթև ժպտալով, ասում էր Կիտաեվան,—մեր մօտ էլ չարունակեց խմել ու հիւրասիրել աղջիկներին, բայց որովհետև փողը պակասեց, նա ուղարկեց իր համարը այդ նոյն Լիւբաչային, դէպի որը նախանձաբուխն էր զգում,—ասաց նա, նայելով մեղադրեալ Մասլովայի վրայ։

Նեխլիւդովին թուաց, թէ Մասլովան այդ ժամանակ ժպտաց, և այդ ժպիտը զզուելի թուաց նրան։ Նրա սրտում զարթնեց զզուանքի տարօրինակ, անորոշ զգացմունք, խառն կարեկցութեան հետ։

—Իսկ ինչ կարծիք ունէիք դուք Մասլովայի մասին,—կարմրելով ու վախվխելով հարցրեց Մասլովայի պաշտպանը, որ դատական պաշտօնների թեկնածուներից էր և դատարանի կողմից էր նշանակուած։

—Անհնարաւ կարծիք,—պատասխանեց Կիտաեվան,—ուսում առած աղջիկ էր և չիկով։ Նա կրթուել է լաւ ընտանիքում և գիտէ ֆրանսերէն կարդալ։ Մի-մի անգամ չափից աւել էր խմում, բայց ոչ մի ժամանակ իրան չէր կորցնում։ Շատ լաւ աղջիկ էր։

Կատիւշան նայում էր Կիտաեվայի վրայ, բայց յետոյ յանկարծ աչքերը դարձրեց երդուեալ դատաւորների կողմը ու յառեց Նեխլիւդովի վրայ, և նրա դէմքը լուրջ և նոյն իսկ խիստ արտայայտութիւն ստացաւ։ Նրա խստահայեաց աչքերից մէկը չլում էր։ Բաւական երկար ժամանակ յառած մնացին Նեխլիւդովի վրայ այդ տարօրինակ կերպով նայող զոյգ աչքերը և, չը նայելով իրան տիրած սարսափին, Նեխլիւդովը չէր կարողանում հեռացնել իր հայեացքը այդ վառ—ճերմակ սպիտակուցներով չիլ աչքերից։ Նա յիշեց այն սարսափելի գիշերը և այդ գիշերուան կոտրտուող սառուցը, մչուշը և, մանաւանդ, այն նուազած ու հակադարձ լուսինը, որ առաւօտեան դէմ դուրս եկաւ և սկսեց լուսաւորել ինչ-որ մի սև ու ահռելի բան։ Այդ զոյգ աչքերը, որոնք նայում էին և նրա վրայ և նրա կողքով, յիշեցնում էին նրան այդ ինչ-որ սև ու ահռելի բանը։

«Ճանաչել է», մտածեց նա և կարծես կուչ եկաւ, հարուածի սպասելով։ Բայց Մասլովան, որ չէր ճանաչել նրան, հանգիստ չունէր քաշեց ու սկսեց նորից նայել նախագահին։ Նեխլիւդովը նոյնպէս չունէր քաշեց։ «Օհ, գոնէ չուտով պրծնէր», մտածում էր նա։ Նա զգում էր այժմ նոյն բանը, ինչ որ զգում էր որսի ժամանակ, երբ պէտք է մահացնէր վիրաւորուած թըռ-

չունին,—և՛ մարգուս վատն է թուում, և՛ խեղճն է գալիս, և՛ բարկութիւնը։ Կիսամահ թռչունը թռպռտում է որսապարկի մէջ,—և՛ զզուելի է, և՛ խղճալի, և՛ մարդ ուզում է չուտով մոռացնել ու մոռանալ։

Այդպիսի խառն զգացմունք էր զգում այժմ Նեխլիւդովը, վկաների հարց ու փորձը լսելիս։

XX

Բայց, կարծես նրա ջիգրու, գործը չատ երկարանում էր, —բոլոր վկաներին մէկիկ-մէկիկ ու յետոյ էլ էքսպերտին հարց ու փորձ անելուց յետոյ, երբ դատախազի օգնականն ու պաշտպաններն էլ, ըստ սովորականին, խորհրդաւոր ձևով տուեցին բազմաթիւ անպէտք հարցեր, նախագահը երդուեալատենակալներին առաջարկեց նայել իրական ապացոյցները, որոնք բաղկացած էին մի ոսկեայ մեդալից և վարդագոյն չարուած ադամանդներով մատանիից, որ անկասկած չինուած էր եղել աստիճակ հաստ ցուցամատի համար, և մի զոյգից (ֆիլտր), որի մէջ հետազօտել էին թոյնը։ Այդ իրերը կնքուած էին և նրանց վրայ կպցրած էին ցուցադիրներ։

Երդուեալ դատաւորները արդէն պատրաստւում էին գնահատել այդ իրերը, երբ դատախազի օգնականը նորից բարձրացաւ տեղիցը և պահանջեց, որ իրական ապացոյցները գնահատից առաջ կարդան դիակի բժշկական հետազօտութիւնը։

Նախագահը, որ «ջուր տու, քչի» էր անում, որպէս զի ժամանակին հասնէր իր չվեչցարուհու մօտ, չը կարողացաւ մերժել և համաձայնութիւն տուեց, թէև չատ լաւ գիտէր, որ այդ թղթի ընթերցումը ոչ մի ուրիշ հետևանք չի կարող ունենալ, բացի ձանձրոյթից և ճաշի ժամանակը յետաձգելուց, և որ դատախազի օգնականը պահանջում է այդ միմիայն այն պատճառով, որ գիտէ, թէ ինքը իրաւունք ունի այդ բանը պահանջելու։

Արտաքին գնահատութիւնը ցոյց էր տուել, որ.

1) Ֆերապօնտ Սմիկիովի հասակը 2 արշ. 12 վերշոկ է։

—Ա՛յ թէ ժոդահայ տղամարդ է եղել,—ժամհոգ կերպով չընջաց վաճառականը Նեխլիւդովի ականջին։

2) Տարիքը, արտաքին տեսքից դատելով, կարելի էր որոշել մօտաւորապէս քառասուն։

3) Դիակի տեսքը վքռւած է։

4) Թաղանթների գոյնը ամեն տեղ կանաչաւուն է, տեղ-տեղ ծածկուած մութ բծերով։

5) Վերնամաշկը մարմնի մակերևոյթի վրայ բարձրացել է զանազան մեծութեան բշտիկների ձևով, իսկ տեղ-տեղ պոկ է եկել ու կախուել մեծ-մեծ կտորներով։

6) Մազերը մուգ չէկ են ու խիտ, և ձեռք տալիս պոկ են գալիս կաշուց։

7) Աչքերը դուրս են եկել փոսերից և եղջիւրային թաղանթը նսեմացել է։

8) Քթի, ականջների խոռոչներից և բերնի մէջից դուրս է թորում թարախային հեղուկ, բերանը կիսաբաց է։

9) Վիզ համարեա չէ մնացել դէմքի և կրծքի ուռելուց։

10) Եւ այլն, և այլն։

Ջորս երեսի վրայ, 27 կէտերով, այդպէս չարունակւում էր քաղաքումը քէֆ արած վաճառականի սարսափելի, անագին, հաստ, դեռ ուռած և արդէն քայքայուող դիակի արտաքին զննութեան նկարագրութիւնը։ Այն անորոշ զզուանքը, որ զգում էր Նեխլիւդովը, աւելի ևս սաստկացաւ այդ դիակի նկարագրութեան ընթերցման ժամանակ։ Կատիւշայի կեանքը և դիակի քթածակերից թորող թարախը, կոպիճներից դուրս եկած աչքերը, և իր վարմունքը Կատիւշայի հետ,—այդ բոլորը, թւում էր նրան, միևնոյն տեսակի բաներ էին և ինքը ամեն կողմից չրջապատուած էր ու կլանուած այդ բաներով։ Երբ արտաքին զննութեան ընթերցումը պրծաւ, նախագահը ծանր չունչ քաշեց ու բարձրացրեց գլուխը, այն յոյսով, թէ վերջացել է, բայց քարտուղարը խկոյն և նոր սկսեց կարդալ ներքին զննութեան նկարագրութիւնը։

Նախագահը նորից քաշ քցեց գլուխը և, կոթնելով ձեռքի վրայ, փակեց աչքերը։ Նեխլիւդովի կողքին նստած վաճառականը հաղիւ հազ էր զսպում քունը և մի-մի անգամ օրօրւում էր տեղումը. մեղադրեալները, ինչպէս և նրանց յետևին կանգնած ժանդարմները, անչարժ նստած էին։

Ներքին զննութիւնը ցոյց էր տուել, որ.

1) Գանգի մաշկերը հեչտութեամբ էին բաժանւում գանգի ոսկորներից, և լրջացումներ ոչ մի տեղ չէին նկատւում։ 2) Գանգի ոսկորները միջին հաստութեան էին և անվնաս։ 3) Ուղեղի պինդ թաղանթի վրայ կային երկու պիղմենտացած բծեր, մօտ 4 մատնաչափ մեծութեամբ, իսկ ինքը թաղանթը ժժգոյն էր ու փայլատ և այլն և այլն, էլի 13 կէտ։

Յետոյ գալիս էին ընթերականների անունները, սատրագրութիւններ և բժշկի եզրակացութիւնը, որից երևում էր, որ սատմոքսում և մասամբ աղիքներում ու երիկամունքներում դիակը ճղած ժամանակ գտած ու արձանագրած փոփոխութիւն-

ները իրաւունք են տալիս եզրակացնել մեծ ասիճանի հաւանականութեամբ, թէ Սմբկիօվի մահը առաջացել է դինու հետ առամոքսը ներծծուած թոյնից։ Առամոքսում ու աղիքներում նկատուած փոփոխութիւնների հիման վրայ դժուար է ասել, թէ ինչ թոյն է ներծծուել առամոքսը. իսկ այն բանը, որ թոյնը թափանցել է առամոքսը դինու հետ, երևում է նրանից, որ Սմբկիօվի առամոքսում գտնուել է մեծ քանակութեամբ դինի։

—Երևում է՝ թունդ կոնծող է եղել,—նորից չընջաց սթափուած վաճառականը։

Այդ արձանագրութեան ընթերցումը, որ տևեց մօտ մի ժամ, չը բաւականացրեց սակայն դատախազի օգնականին։ Երբ արձանագրութիւնը կարդացուեց պրծաւ, նախագահը դիմեց նրան.

—Կարծում եմ, աւելորդ կը լինի կարդալ փորոտիքների հետազօտութեան արձանագրութիւնները։

—Ես կը խնդրէի կարդալ այդ հետազօտութիւնները,—խիստ կերպով, առանց նախագահին նայելու, ասաց դատախազի օգնականը, կիսով չափ ու կողքահան տեղիցը բարձրանալով և ձայնի եղանակով զգացնել տալով, որ ինքը իրաւունք ունի պահանջելու այդ բանը կարդալ, որ ինքը չի հրաժարուիլ այդ իրաւունքից և որ մերժումը առիթ կը լինի դատավճռի չնչումը խնդրելու։

Դատարանի այն անդամը, որ երկար միրուք ունէր ու բարի, ներքև քաշուած աչքեր, և որ դէմքով հիւանդ էր, թուլացած ղգալով իրան, դիմեց նախագահին.

—Ինչի՞ համար պէտք է կարդալ այդ բանը։ Քաչքչում են միայն։ Այդ նոր աւելները աւելի մաքուր չեն աւլում, հէնց այն է, որ աւելի երկար են աւլում։

Ոակեզատ ակնոցաւոր անդամը ոչինչ չասաց և մռայլ ու վճռաբար նայում էր իր առաջը, ոչ մի լաւ բան չը սպասելով ոչ իր կնոջից, ոչ էլ կեանքից։

Արձանագրութիւնների ընթերցումը սկսուեց.

—188... թուի, փետրուար ամսի 15-ին, ես ի ներքոյ ստորագրեալս, բժշկական բաժանմունքի յանձնարարութեամբ, № 638-ով,—սկսեց քարտուղարը վճռական կերպով և բարձրացնելով ձայնի աստիճանը, կարծես թէ ուզելով փախցնել բոլոր ներկայ եղողներին ճնշող քունը,—բժշկական տեսչի օգնականի ներկայութեամբ կատարեցի հետևեալ փորոտիքների հետազօտութիւնը.

1) Այ թոքի և սրտի (վեց ֆունտանոց ապակէ ամանում)։

2) Առամոքսի պարունակութեան (վեց ֆունտանոց ապակէ ամանում)։

3) Առամոքսի (վեց ֆունտանոց ապակէ ամանում)։

4) Լեարդի, փայծաղի և երիկամունքների (երեք ֆունտանոց ապակէ ամանում)։

5) Աղիքների (վեց ֆունտանոց կաւէ ամանում)։

Նախագահը, այդ ընթերցումի սկզբում, թեքուեց դէպի անդամներից մէկը ու ինչ որ չընջաց, յետոյ թեքուեց դէպի միւսը և, դրական պատասխան առնելով, ընդհատեց ընթերցումը այդ տեղում։

—Դատարանը աւելորդ է համարում այդ արձանագրութեան ընթերցումը,—ասաց նա։

Քարտուղարը լռեց ու սկսեց հաւաքել թղթերը. դատախազի օգնականը սկսեց բարկացած ինչ-որ դրի անցնել։

—Պարոն երդուեալ առևնականները կարող են գնալ իրանց սպասողները,—ասաց նախագահողը։

Աւագը և երդուեալներից մի քանիսը բարձրացան տեղներից, և դժուարութիւն զգալով այն չարժումից կամ դիրքից, որ պէտք է հաղորդէին իրանց ձեռքերին, մօտեցան սեղանին և ներքով նայեցին մատանուն, սրուակին և զոյգին։ Վաճառականը նոյն իսկ մատանու չափը փորձեց իր մատի վրայ։

—Այ թէ մատ է,—ասաց նա, վերադառնալով իր տեղը։—Մատ չէ եղել, թամադին վարունդ է եղել,—աւելացրեց նա, ակներևաբար դժուարութիւն զգալով այն հակասութիւ մտապատկերից, որ ինքը կազմել էր թունաւորուած վաճառականի մասին։

XXI

Երբ իրական սպասողների գնումը պրծաւ, նախագահը դատական քննութիւնը վերջացած յայտարարեց, և առանց ընդմիջումն անելու, ուղելով օրքան կարելի է շուտ աղատել գլուխը, խօսքը տուեց մեղադրողին, այն յոյսով, թէ նա էլ մարդ է ու նոյնպէս ուզում է և՛ ծխել, և՛ ճաշել, և թէ նա կը խղճայ իրանց։ Բայց դատախազի օգնականը չը խղճայ ոչ իրան, ոչ նրանց։ Դատախազի օգնականը ի քնէ շատ յիմար էր. բայց բացի դրանից անբախտութիւն էր ունեցել գիմնազիայի դասընթացքը աւարտելու. ոսկէ մեդալով և համալսարանում պարգև ստանալու իր մի չարագրութեան համար, որ վերաբերում էր սէրվիտուտներին ըստ հռոմէական իրաւունքի, և այդ պատճառով նա վերին աստիճանի ինքնավստահ էր ու ինքնագոհ (որին շատ նպաստում էին նրա յաջողութիւնները կանանց չրջանում), ուսած և չափազանց յիմար։ Երբ խօսքը տրուեց նրան, նա կա-

մաց վեր կացաւ, ցոյց տալով իր չնորհալի հասակն ու կազմը, և, երկու ձեռքը դնելով բարձր սեղանի վրայ ու փոքր ինչ կռացնելով գլուխը, աչք ածեց դահլիճին, հայեացքով խուսափելով մեղադրեալներից, ու սկսեց.

—Ձեր դատին ենթակայ գործը, պարոն երդուեալատեանակալներ,—սկսեց նա իր ճառը, որ պատրաստել էր արձանագրութիւնների ընթերցման ժամանակ,—մի, եթէ կարելի է այսպէս ասել, բնորոշ եղեռնագործութիւն է:

Դատախազի օգնականի կարծիքով, իր ճառը հասարակական նշանակութիւն էր ունենալու այն հռչակաւոր ճառերի նըման, որ արտասանել են հռչակ ձեռք բերած փաստաբանները: Ճիշտ է, հանդիսատեսների տեղում միայն երեք կին կային, —մի կար անող, մի խոհարարուհի ու Սիմոնի քոյրը,—և մի հատ կառապան, բայց այդ նշանակութիւն չունէր: Այն հռչակաւոր փաստաբաններն էլ այդպէս էին սկսել: Իսկ դատախազի օգնականը իր համար կանոն էր չինել միշտ լինել իր կոչման բարձրութեան վրայ, այսինքն թափանցել յանցանքի հոգեբանական իմաստի խորքը և բանալ հասարակական խոցերը:

—Դուք տեսնում էք ձեր առաջ, պարոն երդուեալ ատեանակալներ, մի գարեւորջան, եթէ կարելի է այսպէս ասել, բնորոշ եղեռնագործութիւն, որ կլը մ' է իր վրայ, այսպէս ասած, առանձնայատուկ գծերը քայլ առնել այն սկզբնական երեոյթի, որին ենթարկուում են մեր ժամանակ մեր հասարակութեան այն տարրերը, որոնք գտնուում են այդ պրօցէսի, այսպէս ասած, առանձնապէս կիզիչ ճառագայթների տակ...

Դատախազի օգնականը չատ երկար խօսեց, մի կողմից աշխատելով յիշել այն բոլոր խելացի բաները, որ նա պատրաստել էր մտքում, իսկ միւս կողմից, և այդ գլխաւորն է, աշխատելով ոչ մի րոպէ կանգ չառնել, այլ այնպէս անել, որ նրա ճառը, առանց դադարելու, ջրի պէս հոսէր մի ժամ ու քառորդի ընթացքում: Միայն մի անգամ նա կանգ առաւ և բաւական երկար ժամանակ կուլ էր տալիս թուքը, բայց յետոյ ուշքի եկաւ և այդ յապաղումի տեղը հանեց աւելի թունդ պերճախօսութեամբ: Նա խօսում էր մերթ քնքոյշ, չողոքոր ձայնով, ոտները չուտչուտ փոխելով ու երդուեալ ատենակալների վրայ նայելով, մերթ հանդարտ, գործադրող ձայնով, նայելով իր տետրակի մէջ, և մերթ բարձր, դատափետող ձայնով, դիմելով երբեմն հանդիսականներին, երբեմն երդուեալ ատենակալներին: Նա ոչ մի անգամ չը նայեց միմիայն մեղադրեալներին, որոնք երեքն էլ աչքերը սեւեռել էին նրա վրայ: Նրա ճառում կար այն ամէնը, ինչ որ ամենավերջին ժամանակները գործածական էր նրա

չրջանում, և որ ընդունուում էր ու դեռ այժմ էլ ընդունուում է իբրև գիտնական իմաստութեան վերջին խօսքը: Այդտեղ կար և' ժառանգականութիւն, և' բնածին յանցաւորութիւն, և' Լօմբրոզօ, և' Տարդ, և' էվօլիւցիա, և' գոյութեան կռիւ, և' հիպնօտիզմ, և' մտազդութիւն, և' Շարկօ, և' դէկադէնտութիւն:

Սմելկով վաճառականը, դատախազի օգնականի սահմանելով, բուն ռուսական հզօր, դարդիմանդ ու կուսական բնաւորութիւն ունեցող մի մարդ էր, որ, իր դիւրահաւատութեան և մնծահոգութեան չնորհիւ, զոհ էր գնացել, ընկնելով մինչև ուղուծուծը փչացած մարդկանց ձեռքը:

Սիմոն Կարաինկինը ճորտատիրական կարգերի ատավիստական արդիւնքն էր,—մի ճնշուած, ջրատար, անկիրթ, անսկզբունք և նոյն իսկ անկրօն մարդ: Եվֆիմիան նրա սիրուհին էր և ժառանգականութեան զոհ: Նրա մէջ նկատուում էին այլասերուած անձնաւորութեան բոլոր նշանները: Իսկ յանցանքի գլխաւոր չարժառիթ զսպանակը Մասլօվան էր, որ ամենաստոր տեսակի դէկադէնտական երևոյթ էր ներկայացնում: Այդ կինը,—ասում էր դատախազի օգնականը առանց նրան նայելու,—կրթութիւն է ստացել, ինչպէս այստեղ ասաց նրա սիրուհին: Նա ոչ միայն գրագէտ է, այլ և ֆրանսերէն գիտէ. նա, լինելով որբ երեխայ, որ հաւանօրէն կրում էր իր մէջ յանցաւորութեան սաղմեր, կրթուել է ինտելիգենտ աղնուական ընտանիքում և կարող էր ապրել աղնիւ աշխատանքով. բայց նա թողնում է իր բարեբարիներին, անձնատուր է լինում իր կրքերին և, նրանց յագուրդ տալու համար, մտնում է այնպիսի մի միջավայր, ուր աչքի է ընկնում իր միւս ընկերուհիներից իր կրթութեամբ և, որ գլխաւորն է,—ինչպէս դուք լսեցիք այստեղ, պարոն երդուեալ դատաւորներ, նրա սիրուհուց,—իր առանձին ընդունակութեամբ՝ ազդելու մարդկանց վրայ չնորհիւ այն խորհրդաւոր յատկութեան, որ գիտութիւնը, մանաւանդ Շարկօյի դպրոցը, ուսումնասիրել է վերջերս և որ յայտնի է ներազդումն անունով: Այդ իսկ յատկութեամբ նա բոլորովին իր ձեռքն է քցում ռուս հակային, բարեհոգի, դիւրահաւատ Սաշկօ հարուստ վաճառականին և, նրա վստահութիւնից օգուտ քաղելով, առաջ գողանում է նրա ունեցածը, յետոյ էլ անողորմ կերպով զրկում նրան կեանքից:

—Պարոնս, կարծեմ, սկսում է փչել,—ժպտալով ասաց նախագահը, թեքուելով խիստ անդամի կողմը:

—Շատ դուման է,—ասաց խիստ անդամը:

—Պարոն երդուեալ դատաւորներ,—չարունակում էր մինչ այդ դատախազի օգնականը, գողտրիկ կերպով ոլորելով բարակ

իրանը։—Ձեր ձեռքին է այդ մարդկանց բախտը, բայց ձեր ձեռքին է մասամբ և հասարակութեան բախտը, որովհետև ձեր վճիռը ազդեցութիւն է ունենալու հասարակութեան վրայ։ Լաւ նկատի առէք այդ յանցանքի նշանակութիւնը ու այն վտանգը, որ ներկայացնում են հասարակութեան համար Մասլօվայի նման, այսպէս ասած, ախտաբանական անհատները, և պաշտպանեցէք հասարակութիւնը վարակումից, պաշտպանեցէք այդ հասարակութեան անմեղ, ամուր տարրերը վարակումից և յաճախ կորուստից։

Եւ կարծես ինքն էլ ճնշուած առաջիկայ դատավճռի կարևորութիւնից, դատախազի օգնականը, որ անկներևաբար անչափ յափշտակուած էր իր ճառից, նստեց տեղը։

Նրա ճառի միտքը, եթէ պերճախօսութեան ծաղիկները մէջից դէն քցենք, այն էր, թէ Մասլօվան, վաճառականի աչքը մոնելով, հիպնօսացրել էր նրան և, երբ բանալին վերցրած դնացել էր նրա համարը փող բերելու, ուզեցել էր ամբողջը իրան վերցնել, բայց որովհետև Սիմոնն ու Եվֆիմիան բռնել էին նրան, նա ստիպուած էր եղել գողացածը բաժանել նրանց հետ։ Իսկ դրանից յետոյ, իր գործած յանցանքի հետքերը ծածկելու համար, նա վերադարձել էր հիւրանոցը վաճառականի հետ և այնտեղ թունաւորել նրան։

Դատախազի օգնականի ճառից յետոյ, փաստաբանական աթոռից վեր կացաւ միջին տարիքի մի մարդ ֆրակով, որի վերին բացուածքից լայն կիսաշրջանի ձևով երևում էր օսլայած շապկի կուրծքը, և ճարտար կերպով ասաց Կարտինկինի և Բօչկովայի պաշտպանութեան ճառը։ Այդ մի երդուեալ հաւատարմատար էր, որին նրանք վարձել էին 300 ռուբլով։ Նա արդարացնում էր այդ երկուսին և ամբողջ մեղքը քցում Մասլօվայի վրայ։

Մասլօվայի այն ցուցմունքը, թէ փող վերցնելիս Բօչկովան ու Կարտինկինը իր հետ էին, նա հերքում էր, պնդելով, թէ այդ ցուցմունքը ոչ մի կշիռ չի կարող ունենալ, իբրև հաստատապէս յայտնի թունաւորողի վկայութիւն։ Այն 2,500 ռուբլին, ասում էր փաստաբանը, շատ հեշտ կարող էին վաստակած լինել Բօչկովայի և Կարտինկինի նման աշխատասէր ու ազնիւ մարդիկ, որոնք երբեմն օրեկան երեք-երեք ու հինգ-հինգ ռուբլի էին ստանում այցելուներից։ Իսկ Սմելկով վաճառականի փողերը գողացել էր Մասլօվան և ուրիշի յանձնել կամ նոյն իսկ կորցրել, որովհետև նա անընդմեջ գրութեան մէջ էր այն ժամանակ։ Թունաւորողը միայն Մասլօվան էր եղել։

Ուստի նա խնդրում էր երդուեալ դատաւորներից, որ կարտինկինին և Բօչկովային անմեղ ճանաչէին փողերի յափշտակման մէջ, իսկ այն դէպքում, եթէ մեղաւոր ճանաչէին այդ բանում, ընդունէին, որ նրանք չեն մասնակցել թունաւորման մէջ և գործել են առանց նախապէս որոշուած դիտաւորութեան։

Վերջում փաստաբանը, դատախազի օգնականին խայթելու համար, նկատեց, թէ պարոն դատախազի օգնականի փայլուն դատողութիւնները ժառանգականութեան մասին, թէև լուսաբանում են ժառանգականութեան գիտական հարցերը, սակայն անտեղի են այս դէպքում, որովհետև Բօչկովան անյայտ ծնողների զաւակ է։

Դատախազի օգնականը բարկացած, կարծես ժանիքները բանալով, ինչ-որ գրեց իր թղթի վրայ և արհամարհոտ զարմանքով չարժեց ուսերը։

Ցետոյ վեր կացաւ Մասլօվայի պաշտպանը և վախվխելով, կմկմալով, արտասանեց իր պաշտպանողական ճառը։ Ջը հերքելով, որ Մասլօվան մասնակցել է փողերի գողութեանը, նա պընդում էր միայն, թէ նա դիտաւորութիւն չի ունեցել թունաւորել Սմելկովին, այլ փոչին տուել է միայն նրան քնացնելու նպատակով։ Ճառախօսը ուշում էր մի քիչ զօո տալ պերճախօսութեանը, մի ընդհանուր հայեացք քցելով այն բանի վրայ, թէ ինչպէս Մասլօվային անառակութեան վիճն էր քցել մի տղամարդ, որ անպատիժ էր մնացել, մինչդեռ խեղճ աղջիկը ստիպուած էր կրել իր անկման ամբողջ ծանրութիւնը. բայց նրա այդ չեղումը դէպի հոգեբանական բացատրութիւնները շատ անպտղ դուրս եկաւ, այնպէս որ ամենքն էլ ամաչեցին նրա տեղ։ Երբ նա կմկմացնում էր տղամարդկանց անպիտանութեան և կանանց անօգնականութեան մասին, նախագահը, ուզելով թեթևացնել նրա գործը, խնդրեց որ նա չը չեղուի հարցի էութիւնից։

Այդ պաշտպանից յետոյ նորից վեր կացաւ դատախազի օգնականը և պաշտպանեց իր ասածները ժառանգականութեան մասին առաջին փաստաբանի դէմ, պնդելով, որ, եթէ Բօչկովան նոյն իսկ անյայտ ծնողների զաւակ է, դրանով չի հերքւում ժառանգականութեան տեսութեան ճշտութիւնը, որովհետև դիտութիւնը այնքան հաստատ կերպով ապացուցել է ժառանգականութեան օրէնքը, որ կարելի է ոչ միայն յանցանքը եզրակացնել ժառանգականութիւնից, այլ և ժառանգականութիւնը՝ յանցանքից։ Ինչ վերաբերում է երկրորդ փաստաբանի ենթադրութեանը, թէ Մասլօվային անբարոյականացրել է ինչ-որ երևակայեալ (նա առանձնապէս թունաւոր կերպով ասաց՝ երևակայեալ) տղամարդ, ընդհակառակը բոլոր յայտնի փաստերը աւելի

չուտ հաստատում են, որ Մասլովան ինքն է գայթակղեցրել իր ձեռքն ընկած բազմաթիւ զոհերին։

Այդ ասելով, դատախազի օգնականը յաղթական կերպով նստեց։

Ցետոյ առաջարկուեց մեղադրեալներին արդարացնել իրանց։

Եվֆիմիա Բօչկովան կրկնում էր, որ ինքը ոչինչ չի իմանում և ոչ մի բանում չի մասնակցել, և յամառ կերպով պնդում էր, թէ ամեն բանում միակ մեղաւորը Մասլովան է։ Սիմոնը միայն կրկնեց մի քանի անգամ.

—Կամքը ձերն է, բայց անմեղ եմ, զուր մեղադրանք է։

Իսկ Մասլովան ոչինչ չասաց։ Երբ նախագահը առաջարկեց, որ ինչ որ ունի իր պաշտպանութեան համար ասի, նա միայն աչքերը բարձրացրեց դէպի նա, հայեացքը մեն ածեց ամենքի վրայ, ինչպէս հալածուած գազան, և իսկոյն աչքերը քաշ քցեց ու սկսեց լալ, բարձրաձայն հեկեկալով։

—Վա՛, ինչ է պատահել ձեզ,—հարցրեց Նեխլիւդովի կողքին նստած վաճառականը, լսելով մի տարօրինակ ձայն, որ յանկարծ հանեց Նեխլիւդովը։ Այդ ձայնը խզած հառաչանք էր։

Նեխլիւդովը դեռ չէր հասկանում իր այժմեան դրութեան ամբողջ նշանակութիւնը և իր նետարդերի թուլութեանը վերադրեց հազիւ զսպուած հառաչանքը և աչքերը լցնող արտասուքը։ Նա պէնսնէյն դրեց աչքերին, արտասուքը ծածկելու համար, յետոյ հանեց թաշկինակը ու սկսեց սրբել քիթը։

Երկիւղը այն խայտառակութիւնից, որ կը գար նրա գլխին, եթէ այստեղ դատարանի դահլիճում ամենքին յայտնի դառնար նրա արածը, չէր թողնում, որ ազատ կատարվէր այն ներքին աշխատանքը, որ սկսուել էր նրա մէջ։ Այդ երկիւղը այդ սկզբի ժամանակում ամեն բանից ուժեղ էր նրա մէջ։

XXII

Մեղադրեալների վերջին խօսքից յետոյ կողմերը դեռ բաւական ժամանակ կարծիքներ փոխանակեցին հարցերը դնելու ձևի մասին, և, երբ հարցերը վերջապէս դրուեցին, նախագահը սկսեց իր ամփոփման ճառը։

Նախ քան գործի էութիւնը պատմելը, նա տանստանու ախորժելի ղրոյցի ձայնով, երկար ու բարակ բացատրեց երդուեալ դատաւորներին, թէ կողոպուտը կողոպուտ է, իսկ գողութիւնը՝ գողութիւն, և թէ կողպած տեղից գողանալը կողպած տեղից գողանալ է, իսկ չը կողպած տեղից գողանալը՝ չը կողպած տեղից գողանալ է։ Եւ այդ բացատրելիս նա առանձնապէս յանձնարարեց հասկացնել նրան այդ կարևոր հանգամանքը, այն յոյսով, որ նա, հասկանալուց յետոյ, կը բացատրի նորից իր ընկերներին։ Ցետոյ, երբ նա այն կարծիքին եկաւ, թէ երդուեալները արդէն բաւականաչափ ըմբռնել են իր ասած ճշմարտութիւնները, սկսեց մեկնել մի ուրիշ ճշմարտութիւն էլ այն բանի մասին, թէ սպանութիւն կոչուում է այնպիսի գործողութիւն, որից յառաջանում է որ և է մարդու մահ,—և թէ այդ պատճառով թունաւորումն էլ սպանութիւն է։ Երբ այդ ճշմարտութիւնն էլ, նրա կարծիքով, ըմբռնեցին երդուեալները, նա բացատրեց նրանց, թէ, երբ գողութիւնն ու սպանութիւնը միասին են կատարուած, յանցանքը բաղկանում է գողութիւնից և սպանութիւնից։

Ը նայելով, որ նա ինքն էլ ուզում էր գլուխը չուտով ազատել և չվէյցարուհին արդէն սպասում էր նրան, բայց նա այնքան սովորել էր իր զբաղմունքին, որ, խօսքի տուրը բանալուց յետոյ, էլ ոչ մի կերպ չէր կարողանում կանգ առնել, ուստի և մանրամասն բացատրում էր երդուեալներին, թէ այն դէպքում, եթէ մեղաւոր գտնեն մեղադրեալներին, իրաւունք ունեն մեղաւոր ճանաչել նրանց և եթէ, ընդհակառակը, անմեղ գտնեն նրանց, իրաւունք ունեն անմեղ ճանաչել նրանց. իսկ եթէ մի բանում մեղաւոր գտնեն նրանց, բայց միւս բանում անմեղ, կարող են նրանց մեղաւոր ճանաչել մի բանում, բայց անմեղ՝ միւսում։ Ցետոյ նա բացատրեց նրանց, որ, թէև այդ իրաւունքը տրուած է նրանց, սակայն նրանք պէտք է նրանից խելացի կերպով օգտուեն։ Նա ուզում էր այն էլ յայտնել նրանց, որ եթէ նրանք դրուած հարցին դրական պատասխան տան, դրանով ընդունած կը լինեն այն բոլորը, ինչ որ պարունակուում է հարցի մէջ, իսկ եթէ նրանք չեն ընդունում այն բոլորը, ինչ որ պարունակուում է հարցի մէջ, պէտք է որոշակի ասեն, թէ ինչը չեն ընդունում։ Բայց նայելով ժամացոյցին և տեսնելով, որ երեքին հինգ րոպէ էր մնում, վճռեց իսկոյն անցնել գործի էութեան պատմութեանը։

—Այս գործի հանգամանքները հետևեալներն են,—սկսեց նա և կրկնեց այն բոլորը, ինչ որ արդէն մի քանի անգամ ասել էին թէ պաշտպանները, թէ դատախազի օգնականը և թէ վկաները։

Նախագահը խօսում էր, իսկ նրա երկու կողքին տանենակից անդամները լսում էին խորհրդաւոր կերպարանքով և երբեմն նայում ժամացոյցներին, գտնելով, որ թէև նրա ճառը չատ

լաւ է, այսինքն այնպէս է, ինչպէս պէտք է լինի, բայց մի քիչ երկար է։ Նոյն կարծիքին էր և դատախազի օգնականը, ինչպէս նաև առհասարակ բոլոր դատաստանական ծառայողները և ընդհանրապէս բոլոր ներկայ եղողները։ Նախագահը վերջացրեց ամփոփումը։

Էլ իսկապէս ոչինչ չէր մնացել ասելու։ Բայց նախագահը ոչ մի կերպ չէր կարողանում ձեռք քաշել իր խօսելու իրաւունքից, —այնքան ախորժելի էր նրան լսել իր սեփական ձայնի ազդու ելևէջները,—և հարկաւոր համարեց դեռ ևս մի քանի խօսք էլ ասել երդուեալներին տրուած իրաւունքի կարևորութեան մասին և այն բանի մասին, թէ ինչպէս ուշադիր և զգոյշ կերպով պէտք է նրանք օգտուեն այդ իրաւունքից, առանց ի չարը գործ դնելու, թէ նրանք երդում են կերել, թէ նրանք հասարակութեան խիղճն են և թէ խորհրդակցական սենեակի գաղտնիքը սրբութեամբ պէտք է պահեն և այլն և այլն։

Այն րոպէից, որ նախագահը սկսել էր խօսել, Մասլովան, առանց աչքերը հեռացնելու, նայում էր նրա վրայ, կարծես վախենալով, թէ մի գուցէ մի խօսք բաց թողնի նրա ասածից, ուստի և Նեխլիւդովը չէր վախենում, թէ իր հայեացքը կարող է պատահել նրա հայեացքին և անընդհատ նայում էր նրա վրայ։ Եւ նրա մտքում կատարւում էր այն սովորական երևոյթը, որ սիրելի անձի վաղուց ի վեր չը տեսնուած դէմքը, սկզբում զարմանք ազդելով այն արտաքին փոփոխութիւններով, որոնք առաջացել են նրա մէջ բացակայութեան ժամանակ, այնուհետև հետզհետէ դառնում է բոլորովին նոյնը, ինչ որ էր չատ տարիներ առաջ, տեղի ունեցած բոլոր փոփոխութիւնները անհետանում են և հոգեկան տեսողութեան առաջ երևան է գալիս միմիայն բացառիկ, նմանը չունեցող հոգեկան անձնաւորութեան գլխաւոր արտայայտութիւնը։ Այդ բանն էր կատարւում Նեխլիւդովի մէջ։

Այո, չը նայելով կալանաւորական խալաթին, ճարպոտած մարմնին և մեծացած կրծքին, չը նայելով դէմքի ներքևի մասի լայնացած լինելուն, ճակատի ու քունքերի խորչոմներին և աչքերի ուռածութեանը, այդ անկասկած այն միևնոյն Կատիւշան էր, որ Քրիստոսի Սուրբ Յարութեան օրը այնպէս անմեղ հայեացքով ներքևից վերև նայում էր նրան,—իր սիրած երիտասարդին,—իր սիրահարուած և հրճուանքից ու կենսատատութիւնից ժպտացող աչքերով։

«Ի՞նչ զարմանալի պատահմունք է։ Կարծես անպատճառ պէտք է այնպէս լինէր, որ այդ գործը իմ հերթին ընկնէր, ու 10 տարուայ ընթացքում ոչ մի տեղ նրան չը հանդիպելուց յետոյ այստեղ տեսնէի նրան մեղադրեալների նստարանի վրայ։ Եւ ինչ է լինելու այս բոլորի վերջը։ Ա՛խ, դոնէ չուտով վերջանար»։

Նա դեռ չէր հպատակւում այն զղջման զգացմունքին, որ սկսում էր ձայն բարձրացնել նրա մէջ։ Նրան այդ բանը պատահմունք էր թւում, որ անցնելու էր, առանց խանգարելու նրա կեանքի ընթացքը։ Նա այնպէս էր զգում իրան, ինչպէս զգում է սենեակներում ապաստանած մի չար լակոտ, որի տէրը վզիցը բռնել է ու մռութը կոխում է իր արած ապականութեան մէջ։ Լակոտը վնգստում է, յետ-յետ է քաշւում, որպէս զի որքան կարելի է հեռանայ իր արածի հետևանքներից ու մոռանայ արածը, բայց անողոք տէրը բաց չէ թողնում նրան։ Այդպէս էլ Նեխլիւդովը արդէն զգում էր իր արածի ամբողջ կեղտոտութիւնը, զգում էր և սիրոյ հզօր ձեռքը, բայց դեռ չէր հասկանում իր արածի նշանակութիւնը և չէր ընդունում սիրոյ գոյութիւնը։ Նա դեռ չէր ուզում հաւատալ, որ իր առջևը եղածը՝ իր արածն է։ Բայց անողոք, անտեսանելի ձեռքը բռնել էր նրան և նա նախազգում էր արդէն, որ չի կարողանալու դուրս պրծնել։ Նա դեռ իրան չը վախենալուն էր տալիս և, ըստ սովորութեան, ոտը ոտի վրայ քցած ու անհոգաբար խաղացնելով պէնճնէն, ինքնավստահ դիրքով նստած էր իր տեղում, առաջին կարգի երկրորդ աթոռի վրայ։ Եւ սակայն հոգու խորքում նա արդէն զգում էր ամբողջ անգթութիւնը, կեղտոտութիւնը, ստորութիւնը ոչ միայն իր այդ վարմունքի, այլ և իր ամբողջ անգործ, անառակ, անգութ և կամայական կենցաղավարութեան,—և այն սարսափելի վարագոյրը, որ մի տեսակ հրաչքով այդ բոլոր ժամանակը, այդ ամբողջ 12 տարիների ընթացքում, աբօդում էր նրա աչքից թէ իր այդ յանցանքը և թէ իր ամբողջ հետագայ կեանքը, արդէն սկսել էր տատանուել, և նա երբեմն-երբեմն աչք էր քցում այդ վարագոյրի յետևը։

XXIII

Վերջապէս նախագահը վերջացրեց ճառը և չնորհալի չարժումով բարձրացնելով հարցերի թերթը՝ տուեց երդուեալ ատենակալների աւագին, որ մօտեցել էր սեղանին։ Երդուեալները վեր կացան, ուրախացած, որ պէտք է դուրս գան դահլիճից, և, չիմանալով, թէ ինչ անէին իրանց ձեռքերը, ու կարծես ամաչելով մի բանից, միմեանց յետևից գնացին խորհրդակցական սենեակը։ Հէնց որ դուռը փակուեց նրանց յետևից, ժանդարմը մօտեցաւ այդ դռանը և, թուրը հանելով պատեհանից ու դնելով

ուսին, կանգնեց դռան մօտ։ Դատաւորները վեր կացան ու դուրս գնացին։ Մեղադրեալներին էլ դուրս տարան։

Խորհրդակցական սենեակը մտնելով, երդուեալատենակալները, ինչպէս և առաջին անգամ, նախ և առաջ հանեցին պապիրոսները ու սկսեցին ծխել։ Նրանց դրութեան անբնականութիւնն ու կեղծութիւնը, որ նրանք մեծ կամ փոքր չափով ղգում էին դահլիճում իրանց տեղերում նստած ժամանակ, անցան՝ հէնց որ նրանք մտան խորհրդակցական սենեակը ու սկսեցին ծխել պապիրոսները, և նրանք թեթեւացման ղգացմունքով տեղաւորուեցին այդ սենեակում ու իսկոյն սկսուեց նրանց մէջ տաք խօսակցութիւն։

—Աղջիկը մեղաւոր չէ, չկլացրել են,—ասաց բարեսիրտ վաճառականը,—պէտք է ներողամտութեամբ վերաբերուել։

—Հէնց այդ հարցը պէտք է քննենք,—առարկեց աւագը։—Մենք չը պէտք է ենթարկուենք մեր անձնական տպաւորութիւններին։

—Լաւ ամիոխման ճառ ասաց նախագահը,—նկատեց դպնդապետը։

—Ինչպէս չէ. քիչ էր մնում քունս տանէր։

—Գլխաւորն այն է, որ ծառան ու աղախինը չէին կարող իմանալ, թէ վաճառականի համարում փող կայ, եթէ Մալօվան համաձայնած չը լինէր նրանց հետ,—ասաց հրէական տիպ ունեցող գործակատարը։

—Ուրեմն ձեր կարծիքով նա է գողացել,—հարցրեց երդուեալներից մէկը։

—Որ սպանէք էլ, չեմ հաւատայ,—գոռաց բարեսիրտ վաճառականը,—այդ բոլորը այն կարմրած աչքերով անղգամ Բօչկօվայի բաներն է։

—Բոլորն էլ լաւ պատուհներ են,—ասաց դնդապետը։

—Բայց չէ որ նա ասում է, թէ ինքը համարը չէ մոռել։

—Դուք էլ հաւատում էք հա։ Ես որ մեռնեմ, այդ անզգամին չեմ հաւատայ։

—Ի՞նչ անենք, որ դուք չէք հաւատայ, դրանով հօ բանը չի վճռուի,—ասաց գործակատարը։

—Բանալին Մալօվայի մօտն էր։

—Ի՞նչ անենք, որ մօտն էր,—առարկեց վաճառականը։

—Իսկ մատանին։

—Չէ որ պատմեց,—դարձեալ գոռաց վաճառականը։—Թունդ մարդ է եղել հանգուցեալ վաճառականը, խմած էլ է եղել ու քօթակել է աղջկան։ Իսկ յետոյ, ի հարկէ, խղճացել է։ Տուել է թէ՝ լաւ, առ, լացդ կտրի։ Տղամարդ եմ ասում է,—չը լսեցիք,

2 արշին 12 վերշօկ հասակ է ունեցել, 8 պուդ էլ քաշն է եղել։

—Բանը դրանումը չէ,—ընդհատեց Պետր Գերասիմովիչը,—հարցն այն է, թէ ո՞վ է այդ բանը մտածել ու միւսներին յորդորել, այդ աղջիկը թէ ծառան ու աղախինը։

—Ծառան ու աղախինը մենակ չէին կարող անել։ Բանալին նրա մօտ էր։

Այդ կէտում խօսակցութիւնը տեւեց բաւական երկար։

—Այդպէս չի լինի, պարոններ,—ասաց աւագը։—Կարգին նստենք սեղանի չուրջը ու քննենք։ Համեցէք,—ասաց նա, նստելով նախագահական տեղը։

—Շատ փչացածն են այդ աղջկերքը,—ասաց գործակատարը և, ի հաստատութիւն իր կարծիքին, թէ գլխաւոր յանցաւորը Մալօվան է, պատմեց, թէ ինչպէս այդ տեսակ աղջիկներից մէկը բուլվարում դողացել էր նրա ընկերներից մէկի ժամացոյցը։

Գնդապետը այդ առթիւ սկսեց պատմել մի աւելի նս զարմանալի դէպք, երբ դողացուածը արծաթէ սամօվար էր եղել։

—Պարոններ, խնդրեմ, հարցերովը զբաղուենք,—ասաց աւագը, մատիտը թխթխկացնելով սեղանին։

Բոլորը լռեցին։ Հարցերը այսպէս էին գրուած.

1) Մեղաւո՞ր է արդեօք Կրապիվնոկի գաւառի, Բարկօվ գիւղի գիւղացի Սիմօն Պետրով Կարտինկինը, 33 տարեկան, այն բանում, որ 188...թուի յունուարի 17-ին N քաղաքում, վճռելով, կողոպտելու նպատակով, սպանել Սմելկօվ վաճառականին, ուրիշների հետ համաձայնութիւն կայացնելով, կօնեակի մէջ լցրած թոյն է տուել նրան խմելու, որից և յառաջացել է նրա մահը, և գողացել է մօտ 2,500 ռուբլի փող ու մի ադամանդէ մատանի։

2) Մեղաւո՞ր է արդեօք առաջին հարցում նշանակուած յանցանքի մէջ մեղսակիցների դասին պատկանող Եվֆիմիա Իվանօվա Բօչկօվան, 43 տարեկան։

3) Մեղաւո՞ր է արդեօք առաջին հարցում նշանակուած յանցանքի մէջ մեղսակիցների դասին պատկանող Եկատերինա Միխայլօվա Մալօվան, 27 տարեկան։

4) Եթէ մեղադրեալ Եվֆիմիա Բօչկօվան մեղաւոր չէ առաջին հարցում նշանակուած յանցանքի մէջ, մեղաւո՞ր չէ արդեօք նա այն բանում, որ 188...թուի յունուարի 17-ին N քաղաքում, աղախին լինելով «Մաւրիտանիա» հիւրանոցում, գաղտնի յափշտակել է նոյն հիւրանոցում իջեւանած Սմելկօվ վաճառականի վարձած համարում գտնուող և նրան պատկանող կողպած պայուսակից 2,500 ռուբլի փող, որի համար յարմարովի բանալիով բացել է պայուսակը առանց համարից դուրս տանելու։

Աւագը կարդաց առաջին հարցը։

—Ի՞նչ կ՚ասէք, պարոններ։

Այդ հարցին չէր ուզած պատասխանեցին։ Բոլորն էլ համաձայնեցին պատասխանել «այո, մեղաւոր է», թէ թունաւորման և թէ գողութեան մասնակից համարելով կարտինկինին։ Չէր համաձայնում կարտինկինին մեղաւոր ճանաչել միայն մի ծեր արհեստաւոր, որ բոլոր հարցերին այնպէս էր պատասխանում, որ մեղադրեալները արդարանային։

Աւագը կարծում էր, թէ նա չէ հասկանում, և բացատրեց նրան, թէ ամեն բանից անկասկած երևում է, որ կարտինկինը և Բօչկօվան մեղաւոր են, սակայն արհեստաւորը պատասխանեց, թէ ինքը հասկանում է, բայց էլի լաւն այն է, որ խղճալով վճիռ կարեն։ «Մենք ինքներս էլ սուրբ մարդիկ չենք», ասաց նա ու մինչև վերջը հաստատ մնաց իր կարծիքին։

Երկրորդ հարցին, որ վերաբերում էր Բօչկօվային, երկար խօսակցութիւններից ու բացատրութիւններից յետոյ, պատասխանեցին, թէ «մեղաւոր չէ», որովհետև ինչպէս առանձնապէս պնդում էր և վաստաբանը, ակնյայտնի ապացոյցներ չը կային, թէ նա էլ մասնակցել է թունաւորմանն։

Վաճառականը, ուզելով արդարացնել Մասլօվային, պնդում էր, թէ Բօչկօվան է եղել ամեն բանի գլխաւոր պատճառը։ Երդուեալներից չատերը համաձայնեցին նրա հետ, բայց աւագը, ուզելով խիստ օրինապահ լինել, ասում էր, թէ հիմք չը կայ նրան թունաւորման մասնակից ճանաչելու։ Երկար վիճաբանութիւններից յետոյ յաղթող հանդիսացաւ աւագի կարծիքը։

Էլի Բօչկօվային վերաբերող 4-րդ հարցին պատասխանեցին՝ «այո, մեղաւոր է» և, արհեստաւորի յամառ պահանջին ղիջելով, աւելցրին՝ «բայց արժանի է ներողամտութեան»։

Իսկ երրորդ հարցը, որ վերաբերում էր Մասլօվային, սաստիկ տաք վիճաբանութիւն յառաջացրեց։ Աւագը պնդում էր, թէ նա թունաւորութեան մէջ էլ է մեղաւոր, գողութեան մէջ էլ, վաճառականը և նրա հետ գնդապետը, գործակատարն ու արհեստաւորը չէին համաձայնում այդ կարծիքին, իսկ մնացեալները կարծես տատանւում էին, բայց աւագի կարծիքը սկսում էր գերակշռել, մանաւանդ այն պատճառով, որ բոլոր երդուեալներն էլ յոգնել էին և աւելի հեշտութեամբ էին յարում այն կարծիքին, որ յոյս էր տալիս աւելի շուտ համախմբել, ուրեմն և ազատել բոլորին։

Նայելով դատական քննութիւնից ստացած բոլոր տպաւորութիւններին և ճանաչելով Մասլօվայի բնաւորութիւնը, Նեխլիւդովը համոզուած էր, որ նա ոչ թունաւորութեան մէջ է մեղաւոր, ոչ գողութեան։ Սկզբում Նեխլիւդովը հաւատացած էր,

թէ ամենքն էլ կը համոզուեն այդպէս, բայց յետոյ տեսաւ, որ վճիռը սկսում է թեքուել դէպի մեղադրանքը, չնորհիւ վաճառականի անչնորհք պաշտպանութեան,—որ անչուշտ հիմնուած էր այն բանի վրայ, որ Մասլօվան դուր էր գալիս նրան, որ նա չէր էլ ծածկում,—և չնորհիւ այն հանգամանքի, որ, հէնց այդ հիման վրայ, աւագը հակառակն էր պնդում, և գլխաւորապէս այն պատճառով, որ բոլորը յոգնել էին։ Այդ տեսնելով, Նեխլիւդովը ուզեց վիճել, բայց նա վախենում էր խօսել ի պաշտպանութիւն Մասլօվայի—նրան թւում էր, թէ ամենքը իսկոյն կը հասկանան, թէ ինչ յարաբերութիւն է եղել իր և Մասլօվայի մէջ։ Եւ սակայն նա ղգում էր, որ ինքը չի կարող գործը այդպէս թողնել, այլ պէտք է վիճի։ Նա մէկ կարմրում էր, մէկ գոյնը քրտնում, և այն է ուզում էր սկսել խօսել, երբ Պետր Գերասիմովիչը, որ մինչ այն լուռ էր, յանկարծ, անչուշտ գրգռուած աւագի խօսելու հեղինակաւոր եղանակից, սկսեց վիճել նրա դէմ և ասել նոյն բանը, ինչ որ Նեխլիւդովն էր ուզում ասել։

—Ներողութիւն,—առարկեց նա,—դուք ասում էք, թէ նա է գողացել, որովհետև բանալին նրա մօտ էր, բայց մի՞թէ ծառաները չէին կարող նրանից յետոյ բանալ պայուսակը յարմարուի բանալիով։

—Ճիշտ է, ճիշտ է,—ձայն էր պահում վաճառականը։

—Իսկ նա չէր կարող փող վերցնել, որովհետև նա այնպիսի դրութեան մէջ էր, որ այդ փողից օգտուելու հնարաւորութիւն չունէր։

—Իմ ասածն էլ հէնց այդ է,—հաստատեց վաճառականը։

—Աւելի ճիշտ կը լինի ենթադրել, որ նրա գալը յղացրել է ծառաների մէջ այդ միտքը և նրանք օգտուել են դէպքից ու յետոյ ամեն ինչ քցել նրա վրայ։

Պետր Գերասիմովիչը գրգռուած էր խօսում։ Եւ նրա գըրգռուածութիւնը գրգռեց նաև աւագին, որ այդ պատճառով սկսեց առանձնապէս յամառ կերպով պաշտպանել իր ներհակ կարծիքը. բայց Պետր Գերասիմովիչը այնքան համոզեցուցիչ էր խօսում, որ մեծամասնութիւնը համաձայնեց նրա հետ, ընդունելով, որ Մասլօվան մասնակից չէր եղել փողերի ու մատանու գողութեան մէջ և որ մատանին Սմելկօվը ինքն էր ընծայել նրան։ Իսկ երբ սկսեցին խօսել այն հարցի մասին, թէ արդեօք նա մասնակից է եղել թունաւորութեանը, նրա ջերմ պաշտպան վաճառականը դարձեալ ասաց, թէ նրան պէտք է անմեղ ճանաչել, որովհետև նա պատճառ չունէր թունաւորելու Սմելկօվին։ Իսկ աւագն ասաց, թէ չի կարելի նրան անմեղ ճանաչել, որովհետև նա ինքը խոստովանուեց, թէ փոչի է տուել խմելու Սմելկօվին։

—Տուել է, բայց կարծել է, թէ ափիոն է,—ասաց վաճառականը։

—Ափիոնով էլ կարող էր թունաւորել,—առարկեց գնդապետը, որ սիրում էր չեղուել հարցից, և այդ առթիւ սկսեց պատմել, թէ ինչպէս իր աներորդու կինը թունաւորուել էր ափիոնով և կը մեռնէր անպատճառ, եթէ բժիշկը չուտ չը հասնէր և ժամանակին միջոցներ ձեռք չառնէին։ Գնդապետը այնքան հեղինակաւոր և ինքնավստահ կերպով էր պատմում և այն ատենաձան արժանապատուութեամբ, որ ոչ ոք սիրտ չէր անում ընդհատել նրա խօսքը։ Միայն գործակատարը, վարակուելով նրա օրինակից, վճռեց կարել նրա խօսքը, որպէս զի այդ առթիւ մի բան էլ ինքը պատմէր։

—Ոմանք այնպէս սովորում են ափիոնին,—սկսեց նա,—որ կարող են քառասուն կաթիլ ընդունել. իմ ազգականներից մէկը...

Բայց գնդապետը չը թողեց, որ նա խօսքը իր բերնից խլի, և չարունակեց պատմել, թէ ինչ հետևանքներ էր ունեցել ափիոնի ազդեցութիւնը նրա աներորդու կնոջ վրայ։

—Մի մոռացէք, պարոններ, որ ժամի չորսից անց է արդէն,—ասաց երդուեալներից մէկը։

—Ուրեմն ինչպէս, պարոններ,—դիմեց աւագը բոլորին.—մեղաւոր ենք ճանաչում, բայց կողոպտելու դիտաւորութիւն չի ունեցել և գոյքից ոչինչ չի գողացել. համաձայն էք։

Պետեր Գերասիմովիչը, գոհ իր յաղթութիւնից, համաձայնեց։

—Բայց արժանի է ներողամտութեան,—աւելացրեց վաճառականը։

Ամենքը համաձայնեցին։ Միայն արհեստաւորն էր, որ պընդում էր, թէ պէտք է հարցին պատասխանել՝ «ոչ, մեղաւոր չէ»։

—Բայց հէնց այդպէս էլ դուրս է գալիս,—բացատրեց աւագը,—կողոպտելու դիտաւորութիւն չի ունեցել, գոյքից էլ ոչինչ չի գողացել, կը նշանակի մեղաւոր չէ։

—Այդպէս չատ լաւ է, բայց աւելցրէք, որ արժանի է ներողամտութեան, եթէ մի բան էլ մնալու լինի, այդպիսով կը ջնջուի,—ուրախ-ուրախ ասաց վաճառականը։

Այնքան յոգնած էին ամենքը, այնքան մոլորուել էին վէճերի մէջ, որ ոչ ոք խելք չարաց առաջարկելու, որ պատասխանին աւելցնեն՝ «այո՛, բայց առանց մահ պատճառելու դիտաւորութեան»։

Նեխլիւդովը այնքան յուզուած էր, որ նոյնպէս չը նկատեց այդ։ Հէնց այդ ձևով էլ հարցերի պատասխանները տարան դահլիճը։

Ռաբլէն գրում է, թէ մի իրաւագէտ, որի մօտ մարդիկ եկել էին դատուելու, հաղար ու մի օրէնքներ մէջ բերելուց և քսան երես լատիներէն անխմաստ իրաւաբանական դրոյթիւններ կարդալուց յետոյ, առաջարկեց դատուողներին ոսկոր քցել—զոյգ թէ կենտ։ Եթէ զոյգ լինի, գանգատաւորն է արդար, եթէ կենտ՝ հակառակորդը։

Այդպէս էր և այստեղ։ Այդ վճիռն ընդունուեց և ոչ թէ մի ուրիշը՝ ոչ այն պատճառով, որ ամենքը համոզուելով համաձայնութեան եկան, այլ, առաջինը, որովհետև նախագահը, որ այնքան երկարացրեց ափիոնման ճառը, այս անգամ մոռացաւ ու չասաց այն, ինչ որ միշտ ասում էր, այն է, թէ, հարցին պատասխանելիս, երդուեալները կարող են ասել՝ «այո, մեղաւոր է, բայց առանց մահ պատճառելու դիտաւորութեան». երկրորդը, որովհետև գնդապետը չատ երկար ու բարակ և ձանձրալի կերպով պատմեց իր աներորդու կնոջ պատմութիւնը. երրորդ, որովհետև Նեխլիւդովը այնքան յուզուած էր, որ չը նկատեց, որ չէ ասուած, թէ մահ պատճառելու դիտաւորութիւն չէ ունեցել, և կարծում էր, թէ «առանց կողոպտելու դիտաւորութեան» խօսքերը բաւական են մեղադրանքը ոչնչացնելու համար. չորրորդ, որովհետև Պետր Գերասիմովիչը սենեակում չէր, դուրս էր գնացել այն ժամանակ, երբ աւագը մի առ մի կարդաց հարցերն ու պատասխանները և ամենից աւելի այն պատճառով, որ բոլորն էլ յոգնել էին և ուզում էին որքան կարելի է չուտ ազատուել, ուստի և պատրաստ էին համաձայնել այն տեսակ վճռի, որով ամեն ինչ չուտ կը վերջանար։

Երդուեալները զանգահարեցին։ Դռան մօտ սուսերամերկ կանգնած ժանդարմը թուրը դրեց պատեանը և մի կողմ քաշուեց։ Դատաւորները նստեցին տեղները և երդուեալ ատենակալները մէկ-մէկ դուրս եկան դահլիճը։

Աւագը հանդիսաւոր կերպով բերում էր հարց ու պատասխանների թերթը։ Նա մօտեցաւ նախագահին և թերթը տուեց նրան։ Նախագահը կարդաց և, ըստ երևոյթին զարմացած, ձեռները չուեց ու սկսեց ընկերների հետ խորհրդակցել։ Նախագահը զարմանում էր այն բանից, որ երդուեալները առաջին կէտի վերաբերմամբ աւելցրել էին «առանց կողոպտելու դիտաւորութեան», իսկ երկրորդ կէտի վերաբերմամբ չէին աւելցրել «առանց մահ պատճառելու դիտաւորութեան»։ Երդուեալների վճռից այնպէս էր դուրս գալիս, թէ Մասլօվան գողութիւն չէր արել, չէր կողոպտել, բայց և այնպէս թունաւորել էր Սմելկովին առանց որ և է հասկանալի նպատակի։

—Տեսէք, ինչ անհեթեթ պատասխան են դրել,—ասաց նա

ձախակողմեան անդամին։—Տաժանակիր աշխատանքներ պէտք է որոչենք *), մինչդեռ նա մեղաւոր չէ։

—Ի՞նչպէս թէ մեղաւոր չէ,—ասաց խիստ անդամը։

—Շատ պարզ։ Իմ կարծիքով, այսուհետ հէնց 818-րդ յօդուածը գործ դնելու տեղն է **)։

—Դո՛ւք ինչպէս էք կարծում,—դիմեց նախագահը բարի անդամին։

Բարի անդամը միանգամից չը պատասխանեց. նա նայեց առաջը դրուած թղթի համարին և գումարեց թուանշանները,—չէր յաջողում բաժանել երկքի։ Նա միտքը դրել էր համաձայնել, եթէ երկքի վրայ բաժանուի, բայց չը նայելով, որ չէր բաժանուում, նա այնուամենայնիւ, սրտի բարութիւնից, համաձայնեց։

—Ես էլ կարծում եմ, որ պէտք է գործադրել այդ յօդուածը,—ասաց նա։

—Իսկ դո՛ւք,—դիմեց նախագահը բարկացկոտ անդամին։

—Երբէք,—պատասխանեց նա վճռական կերպով։—Առանց այն էլ բոլոր լրագիրները գրում են, թէ երդուեալատենակալները արդարացնում են չարագործներին. ինչ կը սկսեն գրել, եթէ դատարանը ինքը արդարացնի։ Ես ոչ մի դէպքում համաձայն չեմ։

Նախագահը նայեց ժամացոյցին։

—Այսօր, բայց ինչ արած,—և հարցերի թերթը տուեց աւագին կարդալու։

Բոլորը վեր կացան և աւագը, փոխէփոխ յենուելով աջ ու ձախ ոտքի վրայ, հազաց ու կարդաց հարց ու պատասխանները։ Բոլոր դատախանները,—քարտուղարը, վաստաբանները, նոյն իսկ դատախազը,—զարմանք արտայայտեցին։

Մեղադրեալները նստած էին անվրդով, ակներևաբար՝ չը հասկանալով պատասխանների նշանակութիւնը։ Նորից բոլորը նստեցին և նախագահը հարցրեց դատախազից, թէ ինչ պատիժների պէտք է ենթարկել, նրա կարծիքով, մեղադրեալներին։

Դատախազը, ուրախացած Մասլօվայի նկատմամբ ունե-

*) Երդուեալ դատաւորները վճռում են այն հարցը, թէ յանցաւո՞ր է արդեօք մեղադրեալը թէ ոչ և այնուհետև նրանց վճռի համաձայն, եթէ նրանք յանցաւոր են ճանաչում, պաշտօնական դատաւորները որոշում են համապատասխան պատիժը։ Ե. Թ.

**) 818-րդ յօդուածում ասուած է, որ, եթէ պաշտօնական դատաւորները միաձայն ընդունեն, թէ երդուեալ ատենակալների վճռով անմեղը մեղաւոր է ճանաչուած, կարող են որոշում կայացնել, որ գործը յանձնուի դատելու երդուեալ ատենակալների նոր կազմի։

ցած անակնկալ յաջողութիւնից, որովհետև իր պերճախօսութեանն էր վերագրում այդ յաջողութիւնը, թերթեց ինչ որ մի բան, կիսով չափ վեր կացաւ տեղից ու ասաց.

—Իմ կարծիքով, Սիմոն Կարտինկինին պէտք է պատժի ենթարկել 1452 յօդուածի և 1453 յօդուածի 4-րդ կէտի համաձայն, Եվֆիմիա Բօչկովային՝ 1659 յօդուածի համաձայն և Եկատերինա Մասլօվային 1454 յօդուածի համաձայն։

Այդ բոլոր պատիժները ամենախիստն էին այն պատիժներից, որ կարելի էր նշանակել այդ դէպքում։

—Դատարանը հեռանում է վճիռ կայացնելու համար,—ասաց նախագահը, վեր կենալով։

Բոլորը վեր կացան նրա յետևից և լաւ բան արած լինելու ախորժ ու սփոփիչ զգացմունքով սկսեցին դուրս գալ դահլիճից կամ մանգալ դահլիճի մէջ։

—Գիտէք, մեր բարեկամ, որ չատ յիմար պատասխան ենք դրել,—ասաց Պետր Գերասիմովիչը, մօտենալով Նեխլիւդովին, որին աւագը ինչ-որ մի բան էր պատմում։—Մեր պատասխանով մենք Մասլօվային տաժանակիր աշխատանքների ենք ենթարկել։

—Ի՞նչ էք ասում,—բացականչեց Նեխլիւդովը, այս անգամ ամենևին չը նկատելով ուսուցչի խօսակցութեան անախորժ մտերմականութիւնը։

—Ի հարկէ,—ասաց ուսուցիչը։—Պատասխանում չենք գրել, թէ «մեղաւոր է, բայց առանց մահ պատճառելու դիտաւորութեան»։ Քարտուղարը այս րոպէին ինձ ասաց, որ դատախազը պահանջում էր դատապարտել նրան 15 տարի տաժանակիր աշխատանքների։

—Բայց չէ՞ որ հէնց այդպէս էլ վճռել էինք,—ասաց աւագը։

Պետր Գերասիմովիչը սկսեց վիճել, ասելով, որ ինքն ըստ ինքեան հասկանալի էր, որ, քանի որ նա փող չէր վերցրել, ուրեմն և չէր կարող դիտաւորութիւն ունենալ մահ պատճառելու։

—Բայց չէ՞ որ պատասխանները կարդացի դուրս գալուց առաջ,—արդարանում էր աւագը։—Ոչ ոք ոչ մի առարկութիւն չարեց։

—Ես այդ ժամանակ դուրս էի եկել սենեակից,—ասաց Պետր Գերասիմովիչը։—Բայց դո՛ւք ինչպէս ուշադրութիւն չէք դարձրել։

—Ես չէի կարծում, թէ այդպէս դուրս կը գայ,—ասաց Նեխլիւդովը։

—Դէ հիմա կարծեցէք։

—Ոչինչ, կարելի է ուղղել,—ասաց Նեխլիւդովը։

—Չէ, էլ արդէն ներողութիւն կ'անէք,—այժմ բանը բանից անցել է։

Նեխլիւդովը նայեց մեղադրեալներին։ Նրանք, այն մարդիկ, որոնց բախտը վճռուել էր, առաջուան պէս անշարժ նստած էին իրանց վանդակապատի յետևում պինուորների առջև։ Մասլօվան ինչ-որ ժպտում էր։ Եւ Նեխլիւդովի սրտում մի վատ զգացմունք զարթնեց։ Մի քիչ առաջ, կարծելով թէ Մասլօվան կ'արդարանայ և կը մնայ քաղաքում, նա տատանւում էր, թէ ինքը ինչ յարաբերութիւն պէտք է ունենայ նրա հետ։ Եւ այդ հարցը դժուար վճռելու հարց էր, մինչդեռ Սիբիրն ու տաժանակիր աշխատանքները միանգամից վճռում էին հարցը, անհնար դարձնելով որ և է յարաբերութիւն նրանց մէջ,—կիսամահ թռչունը չէր չարուշնակել թրպրտալ որսապարկում և յիշեցնել իր գոյութիւնը։

XXIV

Պեստր Գերասիմովիչի ենթադրութիւնները իրաւացի էին։

Սորհրդակցական սենեակից վարադառնալուց յետոյ նախագահը վերցրեց թերթը և կարդաց.

«188... թուի ապրիլի 28-ին, Նորին կայսերական Մեծութեան հրամանով, N... նահանգական դատարանի քրէական բաժանմունքը, պարոն երդուեալատենակալների վճռի հիման վրայ, Քրէական Դատավարութեան կանոնագրքի 771 յօդուածի 3 կէտի, 776 յօդուածի 3 կէտի և 777 յօդուածի համաձայն, որոշեց,—33 տարեկան գիւղացի Սիմոն Կարտինկինին և մեչէանների դասին պատկանող 27 տարեկան եկատերինա Մասլօվային, զրկելով բոլոր իրաւունքներից, աքսորել տաժանակիր աշխատանքների՝ Կարտինկինին 8 տարով, իսկ Մասլօվային 4 տարով, ենթարկելով նրանց Քրէական Օրէնսգրքի 25 յօդուածի մէջ նշանակուած հետևանքներին։

«Իսկ մեչէանների դասին պատկանող 43 տարեկան Եվֆիմիա Բօչկովային, զրկելով բոլոր առանձին, անձնական և ըստ վիճակի յատուկ իրաւունքներից ու արտօնութիւններից, բանտարկել 3 տարի ժամանակով, երթարկելով Քրէական Օրէնսգրքի 49 յօդուածի մէջ նշանակուած հետևանքներին։ Դատական ծախսերը հաւասարապէս բաժանել դատապարտուածների վրայ, իսկ նրանց չքաւորութեան դէպքում՝ ընդունել ի հաշիւ պետական գանձարանի։

«Այս գործին վերաբերեալ իրական ապացոյցները ծախել, մատանին վերադարձնել, սրուակները ոչնչացնել»։

Կարտինկինը կանգնած էր, առաջուան պէս ձգուած, ձեռները, չուած մատներով, ուղղահայեաց կախ քցած և այտերը չարժելով։ Բօչկովան բոլորովին հանգիստ էր թուում։ Մասլօվան, վճիռը լսելով, կաս-կարմիր կտրեց։

—Ես մեղաւոր չեմ, մեղաւոր չեմ,—յանկարծ աղաղակեց նա այնպէս բարձր, որ լսուեց ամբողջ դահլիճում։—Մեղք էք անում հոգիներիդ։ Ես մեղաւոր չեմ։ Չէի ուզում սպանել, չէի կարծում։ Ճիշտ եմ ասում։ Ճիշտ։

Եւ, ընկնելով նստարանի վրայ, նա սկսեց բարձրաձայն հեկեկալ։

Երբ կարտինկինն ու Բօչկովան դուրս գնացին, նա դեռ տեղումը նստած լալիս էր, այնպէս որ ժանդարմը ստիպուած եղաւ թափ տալ նրա խալաթի թևքից։

—Ոչ, չի կարելի այս գործը այսպէս թողնել,—ասաց ինքն իրան Նեխլիւդովը, բոլորովին մոռանալով իր վատ զգացմունքը և, առանց լսմանալու թէ ինչու, շտապեց միջանցքը մի անգամ էլ նայելու Մասլօվայի վրայ։ Երդուեալ ատենակալները և փաստաբանները, որոնք գոհ էին գործի վերջանալուց, աչխոյժ խումբ կազմած, խոնուում էին դռան մէջ, այնպէս որ նա մի քանի րոպէ ստիպուած էր սպասել դռան մօտ։ Իսկ երբ դուրս եկաւ միջանցքը, Մասլօվան արդէն չատ հեռու էր։ Սրագ քայլերով, առանց նայելու, որ ուշադրութիւն է գրաւում իր վրայ, նա հասաւ նրա յետևից, անցաւ առաջ և կանգ առաւ։ Նա արդէն դադարել էր լալուց ու միայն մէկ մէկ հեկեկում էր, գլխաչորի ծայրով սրբելով պոյտ-պոյտ կարմրած դէմքը, և անցաւ Նեխլիւդովի մօտից առանց յետ նայելու նրա կողմը։ Հէնց որ նա անցաւ, Նեխլիւդովը չտապով յետ դարձաւ նախագահին տեսնելու համար, բայց նախագահն արդէն դուրս էր եկել և Նեխլիւդովը հասաւ նրա յետևից միայն ներքևի սրահում։

—Պարոն նախագահ,—ասաց Նեխլիւդովը, մօտենալով նրան այն րոպէին, երբ նա արդէն իր բացգոյն վերարկուն հագած վերցնում էր դռնապանի ձեռքից արծաթագլուխ ձեռնափայտը.—կարող եմ ձեզ հետ խօսել մի քիչ առաջ վճռուած գործի մասին։ Ես երդուեալ ատենակալ եմ։

—Այո, ինչու չէ, իչխան Նեխլիւդով։ Շատ ուրախ եմ. մենք արդէն պատահել ենք միմեանց,—ասաց նախագահը, աղմելով նրա ձեռքը և հաճոյքի զգացմունքով յիշելով թէ ինչքան ուրախ ուրախ էր պարում ինքը և լաւ—բոլոր երիտասարդներից լաւ—իր և Նեխլիւդովի պատահած երեկոյեան։—Ի՞նչ ծառայութիւն կարող եմ մատուցանել ձեզ։

—Թիւրիմացութիւն է տեղի ունեցել Մասլօվային վերաբերեալ պատասխանի մէջ։ Նա մեղաւոր չէ թունաւորութեան մէջ,

և սակայն դատապարտուեց տաժանակիր աշխատանքների,— կենտրոնացած ու մռայլ կերպարանքով ասաց Նեխլիւդովը։

—Դատարանը վճիռ կայացրեց ձեր իսկ տուած պատասխանների հիման վրայ,—առարկեց նախագահը, գնալով դէպի էլքի դուռը,—թէպէտև, մեր կարծիքով, այդ պատասխանները ամենևին չէին համապատասխանում գործին։

Նա յիշեց, որ ինքը ուզում էր բացատրել երդուեալ ատենակալներին, թէ նրանք պատասխանելով «այո, մեղաւոր է», առանց աւելացնելու, որ սպանութեան միտք չէ ունեցել, կը հաստատեն, որ սպանութիւնը դիտաւորեալ է եղել, բայց, չտալով գործը վերջացնել, չէր բացատրել։

—Այո, բայց մի՞թէ չէ կարելի ուղղել սխալը,—հարցրեց Նեխլիւդովը։

—Վճռաբեկ ատեանին դանգատուելու առիթ միշտ կը գտնուի։ Պէտք է դիմել փաստաբաններին,—ասաց նախագահը, մի քիչ կողքահան գնելով գլխարկը և չարունակելով գնալ դէպի դուռը։

—Սոսկալի բան եղաւ։

—Պէտք է ասած, որ Մասլովայի վերաբերմամբ երկու վճիռ միայն կարող էր լինել,—ակներևաբար ցանկանալով որքան կարելի է հաճելի և քաղաքավարի վարուել Նեխլիւդովի հետ, ասաց նախագահը, չիմկելով ծնօտամիրուքները վերադրելու օձիքի վրայից, ու յետոյ թեթև կերպով բռնելով նրա արմունկից և ուղղելով նրան դէպի դուռը, չարունակեց,—դուք էլ էք դուրս գալիս, այնպէս չէ՞։

—Այո,—ասաց Նեխլիւդովը, չտապով հագնուելով, և գնաց նրա հետ։

Դուրսը պայծառ, զուարթացնող արև էր, և նրանք սոխ-պուած եղան իսկոյն բարձրացնել ձայնները, որպէս դի իրար ասած լսէին կառքերի գրդռոցի մէջ։

—Տարօրինակ դրութիւն էր,—չարունակեց նախագահը, բարձրացնելով ձայնը,—այդ Մասլովայի վերաբերմամբ միայն երկու վճիռ կարող էր լինել,—կամ դրեթէ արդարացումն, բանտարկութիւն, որի մէջ կարելի էր հաշուել և այն ամիսները, որոնց ընթացքում նա կալանաւորուած էր, նոյն իսկ լոկ ձերբակալութիւն, և կամ թէ տաժանակիր աշխատանքներ,—միջին պատիժ չէր կարող լինել։ Եթէ աւելցնէիք՝ «բայց առանց մահ պատճառելու դիտաւորութեան» խօսքերը, նա կ'արդարանար։

—Չեմ կարող ներել ինձ, որ այդ բանը աչքաթող արի,—ասաց Նեխլիւդովը։

—Ամբողջ բանը դրանից էր կախուած,—ժպիտն երեսին ասաց նախագահը, նայելով ժամացոյցին։

Միայն երեք քառորդ ժամ էր մնում մինչև կլարայի նշանակած պայմանաժամի վերջը։

—Այժմ, եթէ ուզում էք, դիմեցէք փաստաբանին։ Պէտք է վճիռը բեկանել տալու առիթ գտնել։ Այդ միշտ կարելի է գըտնել։ Դվօրեանսկայա փողոցը,—ասաց նա կառապանին,—30 կոպէկ *),—երբէք աւելի չեմ վճարում։

—Համեցէք, ձերդ գերազանցութիւն։

—Ծառայութիւն, իշխան։ Եթէ կարող եմ որ և է կերպով ծառայութիւն մատուցանել, պատրաստ եմ. ապրում եմ Դվօրեանսկայա փողոցում, Դվօրնիկովի տանը, հասցէս հեշտ կարելի է միշտ պահել։

Եւ, քաղցր կերպով ողջոյն տալով, գնաց։

XXV

Նախագահի հետ ունեցած խօսակցութիւնը և թարմ օդը մի քիչ հանգստացրին Նեխլիւդովին։ Նա սկսեց մտածել այժմ, թէ իրան տանջող զգացմունքը ինքը չափազանցութեան է հասցրել չնորհիւ այն անսովոր պայմանների, որոնց մէջ անց էր կացրել ամբողջ առաւօտը։

«Ի հարկէ, զարմանալի, տարօրինակ զուգադիպութիւն է։ Անհրաժեշտ է ամեն հնարաւոր միջոց գործ դնել նրա վիճակը թեթևացնելու համար և անհրաժեշտ է այդ անել որքան կարելի է չուտ։ Հէնց անմիջապէս։ Այո, պէտք է հէնց դատարանում հարցնել, թէ որտեղ են ապրում Ֆանարինը և Միկհիչինը»։ Նա յիշեց երկու յայտնի փաստաբանների։

Նեխլիւդովը վերադարձաւ դատարան, հանեց վերարկուն և գնաց վերև։ Հէնց առաջին միջանցքում նա հանդիպեց Ֆանարինին։ Նա կանդնեցրեց նրան և ասաց, որ գործ ունի հետը։ Ֆանարինը, որին ծանօթ էր նրա թէ դէմքը և թէ անունը, ասաց, որ ինքը շատ ուրախ կը լինի, եթէ կարողանայ օգտակար լինել։

—Թէև յոգնած եմ... բայց եթէ երկար չի տևի, ասացէք՝ ինչ մ է ձեր գործը. գնանք այստեղ։

Եւ Ֆանարինը տարաւ Նեխլիւդովին մի սենեակ, երևի

*) Մոսկուայում որոշ կառավարձ չը կայ, սակարկութիւն են անում։ Ե. Թ.

դատաւորներից մէկի առանձնասենեակը։ Նրանք նստեցին սեղանի մօտ։

—Դէ այժմ ասացէք՝ ինչ գործ է։

—Ամենից առաջ ես պէտք է ձեզ խնդրեմ,—ասաց Նեխլիւդովը,—որ ոչ ոք չիմանայ, թէ ես հետաքրքրւում եմ այս գործով։

—Օ՛, այդ ինքն ըստ ինքեան հասկանալի է։ Ցետոյ...

—Ես այսօր երդուեալ առենակալ էի, և մենք անմոռ տեղը մի կնոջ դատապարտեցինք տաժանակիր աշխատանքների։ Այդ ինձ տանջում է։

Նեխլիւդովը, իր համար անսպասելի կերպով, կարմրեց ու կմկմաց։

Ֆանարինը աչքերը փայլատակեցնելով նայեց նրան և նորից քաշ քցեց հայեացքը ու չարունակեց ականջ դնել, արտասանելով միայն.

—Ցետոյ...

—Դատապարտեցինք անմոռ տեղը, և ես կ՛ուզէի վճռաբեկ դանգատ տալ և գործը անց կացնել բարձրագոյն ատեանը։

—Սենատ,—ուղղեց Ֆանարինը։

—Եւ ահա խնդրում եմ ձեզ յանձն առնել այս գործը։

Նեխլիւդովը ուզում էր, որքան կարելի է չուտ վերջացնել ամենադժուար բանը, ուստի և անմիջապէս աւելացրեց.

—Ձեր վարձատրութիւնը և առհասարակ այս գործի բոլոր ծախսերը, ինչքան էլ լինեն, վերցնում եմ իմ վրայ,—ասաց նա կարմրելով։

—Դրա մասին կը պայմանաւորուենք,—ներողամտաբար ժպտալով նրա անփորձութեան վրայ, ասաց փաստաբանը։—Ինչ-չնչին է բանը։

Նեխլիւդովը պատմեց։

—Լաւ, վաղը ես գործը կը վերցնեմ ու աչքի կ՛անցնեմ։ Իսկ վաղը չէ միւս օր, չէ, հինգշաբթի, երեկոյեան ժամի վեցին։ Եկէք ինձ մօտ և իմացէք պատասխանս։ Յարմար է այսպէս, հա։ Ուրեմն գնանք, ինձ դեռ մի քանի տեղեկութիւններ են հարկաւոր այստեղ։

Նեխլիւդովը մնաս բարև արեց ու դուրս եկաւ։

Փաստաբանի հետ ունեցած խօսակցութիւնը և այն, որ նա արդէն միջոցներ էր ձեռք առել Մասլովայի պաշտպանութեան համար, աւելի ևս հանգստացրին նրան։ Նա դուրս եկաւ փողոցը. եղանակը հիանալի էր. նա ուրախ-ուրախ ներշնչեց գարնանային օդը։ Կառապանները առաջարկում էին իրանց ծառայութիւնը, բայց նա ոտով գնաց և իսկոյն և նրա գլխում

սկսեցին չարժուել հազար ու մի մտքեր ու յիշողութիւններ կատիւշայի մասին և այն յարաբերութեան մասին, որ ինքը ունեցել էր նրա հետ, և նրա սիրտը սխրեց ու ամէն ինչ սկսեց մոռալ թուալ նրան։ «Չէ, այդ բանի մասին ես յետոյ կը մտածեմ, կը վճռեմ,—ասաց նա ինքն իրան,—իսկ այժմ, ընդհակառակը, պէտք է մի քիչ հանգստանալ ծանր տպաւորութիւններից»։

Նա յիշեց, որ ճաշի է հրաւիրուած կօրչագինների մօտ, և նայեց ժամացոյցին։ Դեռ ուշ չէր և նա կարող էր հասնել ճաշին։ Մօտով անցնում էր ձիաքարշը։ Նա վազելազ հասաւ ու ցատքեց վագոնը։ Հրապարակին հասնելով՝ նա իջաւ, մի լաւ կառք վարձեց և տաս րոպէից յետոյ արդէն կօրչագինների մեծ տան դռան մօտ էր։

—Համեցէք, ձերդ վեհափայլութիւն, ձեզ սպասում են,—ասաց կօրչագինների մեծ տան քաղցրալեզու, զէր դռնապանը, բանալով սրահի անգլիական ծխնիների վրայ պտտուող կաղնի դուռը։—Արդէն նստել են ճաշի. պատուիրել են միայն ձեզ խնդրել վերև։

Դռնապանը մօտեցաւ սանդուխներին և վերևի զանգը խփեց։

—Ո՞վ կայ մօտները,—հարցրեց Նեխլիւդովը, հանուելով։

—Պ. Կօլօսօվն ու Միխայիլ Սերգեեվիչն են, մնացածը տանեցիք են,—պատասխանեց դռնապանը։

Սանդուխների վրայից ներքև նայեց գեղեցկադէմ մի լաքէյ փրակով ու սպիտակ ձեռնոցներով։

—Համեցէք, ձերդ վեհափայլութիւն,—ասաց նա.—պատուիրել են ձեզ խնդրել վերև։

Նեխլիւդովը բարձրացաւ սանդուխներով և ընդարձակ դահլիճի միջով գնաց սեղանատունը։ Սեղանատունը սեղանի չուրջը նստած էր ամբողջ ընտանիքը, բացի մօրից, իշխանուհի Սօֆիա Վասիլիեվնայից, որ երբէք դուրս չէր գալիս իր առանձնասենեակից։ Սեղանի գլխին նստած էր ծերունի կօրչագինը, նրա կողքին, ձախակողմից, բժիշկը, միւս կողմից միակ օտար հիւրը, կօրչագինի ազատամիտ ընկեր Իվան Իվանովիչ Կօլօսօվը, որ առաջ ազնուականութեան նահանգական պարապուրդ էր, իսկ այժմ բանկի վարչութեան անդամ. յետոյ, ձախ կողմից, Միսաիլի փոքրիկ քրոջ դաստիարակչուհին, miss Րէդէրը և ինքը 4 տարեկան երեխան. աջ կողմից, նրանց դիմացը, Միսաիլի եղբայրը, կօրչագինների միակ տղան, գիմնազիայի VI դասարանի աշակերտ Պետեան,—որի պատճառով ամբողջ ընտանիքը դեռ մնում էր քաղաքում, սպասելով քննութիւնների վերջին,—և նրան դասեր սերտացնող ուսանողը. յետոյ, ձախ կողմից, մի 40 տարեկան

ալաւօնաֆիլ օրիորդ, Կաւերինա Ալեքսեեվնա անունով. նրա գիմացը՝ Միասիի մօրեղբօր որդին, Միխայիլ Սերգեեվիչ կամ Միշա Տելեգինը, իսկ սեղանի ներքևի ծայրում ինքը Միասին, որի կողքին դրուած էր մի ամանասարք, որին ոչ ոք ձեռ չէր տուել։

—Հիանալի բան արեցիք, որ եկաք։ Նստեցէք, մենք դեռ ձուկն ենք ուտում,—գնովի առամներով դժուարութեամբ ուզուչութեամբ ծամծմելով, ասաց ծերունի Կօրչագինը, բարձրացնելով Նեխլիւդօվի վրայ արիւնալից աչքերը, որոնք կարծես կոպեր չունէին։

—Սաեպան,—բերանը ձկով լիքը դիմեց նա հաստլիկ ու պատկառելի սեղանապետին, աչքերով ցոյց տալով դատարկ ամանասարքը։

Թէև Նեխլիւդօվը լաւ էր ճանաչում ծերունի Կօրչագինին և յաճախ տեսել էր նրան ճաշի ժամանակ, բայց այս անգամ նրա վրայ առանձնապէս անախորժ տպաւորութիւն գործեցին՝ այդ զգայական ու ծծող շրթունքներով կարմիր դէմքը, որ ներում էր ժիլէտի օձիքի տակը խրած անձեռոցիկի վերևում, և դէր վիզը ու գլխաւորապէս նրա ամբողջ մտում կորած գեներալական կերպարանքը։

—Այս րոպէին կը բերեն, ձերդ վսեմափայլութիւն,—ասաց Սաեպանը, արծաթէ անօթեղէններով լի պահարանից հանելով մեծ չերեփը և գլխով նշան անելով ծնօտամիրուքաւոր գեղեցկադէմ լաքէյին, որ իսկոյն և եթ սկսեց ուղղել Միասիի կողքին դրուած անձեռնամուխ ամանասարքը, որ ծածկուած էր դուրս ցցուած տոհմանիշ կրող օսլայած ու վարպետօրէն ծալուած անձեռոցիկով։

Նեխլիւդօվը պատեց սեղանի չուրջը և ձեռք տուեց բոլորին։ Ամենքը, բացի ծերունի Կօրչագինից և տիկիններից, վեր էին կենում, երբ նա մօտենում էր նրանց։ Եւ այն բանը, որ նա պատշգամբեց սեղանի չուրջը ու սղմեց ներկայ եղողների ձեռքը, թէև նրանց մեծամասնութեան հետ երբեք չէր խօսել,—այժմ առանձնապէս անախորժ ու ծիծաղելի թուաց նրան։ Նա ներողութիւն խնդրեց, որ ուշացել է, և ուղում էր նստել սեղանի ծայրում Միասիի և Կաւերինա Ալեքսեեվնայի արանքին ճնշուած դատարկ տեղում, բայց ծերունի Կօրչագինը պահանջեց, որ, եթէ չի էլ ուզում օղի խմել, այնուամենայնիւ պատառաքաղ անի փոքրիկ սեղանի վրայ դրուած խեցգետնից, ձկնկիթից, պանրից ու ձկից։ Նեխլիւդօվը չէր կարծում, թէ ինքը այդքան սոված է, բայց երբ սկսեց հաց ու պանիր ուտել, էլ չը կարողացաւ կանգ առնել և ուտում էր ագահաբար։

—Չ՞ը, հիմքերը խախտում էիք,—ասաց Կօլօսօվը, հեգնաբար գործ դնելով երդուեալ դատարանի դէմ արշաւանք կատարող յեղափոխական լրագրի դարձուածքը։—Արդարացրիք մեղաւորներին և դատապարտեցիք անմեղներին, հա։

—Նախատում էին հիմքերը... Նախատում էին...—ծիծաղելով կրկնեց իշխանը, որ անսահման հաւատով էր վերաբերում իր ազատամիտ ընկերը և բարեկամ Կօլօսօվի խելքին ու գիտնականութեանը։

Նեխլիւդօվը, ուշք չը դարձնելով, որ իր կողմից այդ անքաղաքավարի կարող է լինել, ոչինչ չը պատասխանեց Կօլօսօվին և, նստելով իր տեղը, նոր մատուցուած գոլորշիակալած ապուրի առջև, շարունակում էր ծամել։

—Վա, թողէք մի բան ուտի սա,—ժպտալով ասաց Միխային, այդ «սա» դերանունով յիշեցնելով, որ ինքն ու նա մօտիկ մարդիկ են։

Կօլօսօվը մինչ այդ աչխոյժ ու բարձրաձայն պատմում էր երդուեալ դատարանի դէմ գրուած այն յօդուածի բովանդակութիւնը, որ զայրոյթ էր պատճառել իրան։ Նրան ձայն էր պահում իշխանուհու եղբօր որդին, Միխայիլ Սերգեեվիչը, որ պատմից նոյն լրագրի մի ուրիշ յօդուածի բովանդակութիւնը։

Միասին, ինչպէս և միշտ, չատ distinguée էր և լաւ, անկատելի լաւ էր հագնուած։

—Դուք երևի սարսափելի յոգնել էք ու սովածացել,—ասաց նա Նեխլիւդօվին, սպասելով, մինչև որ նա ծամից պրծաւ բերնի կտորը։

—Ոչ, այնքան էլ չէ։ Իսկ դուք։ Գնացիք պատկերահանդէսը տեսնելու,—հարցրեց նա։

—Ոչ, յետաձգեցինք։ Մենք գնացինք lawn tennis *) խաղալու Սալամատովների մօտ։ Ճիշտ որ միասը կրուկսը զարմանալի լաւ է խաղում։

Նեխլիւդօվը եկել էր սրանց մօտ սիրտը մի քիչ ուրախացնելու, որովհետև նա միշտ իրան լաւ էր զգում այդ տանը ոչ միայն փարթամութեան այն լաւ տոնի համար, որ ախորժելի կերպով էր ազդում նրա զգայութիւնների վրայ, այլ և չողոքորթ գգուանքի այն մթնոլորտի չնորհիւ, որ աննկատելի կերպով այդտեղ շրջապատում էր նրան։ Իսկ այսօր, զարմանալի բան էր, ամեն ինչ այդ տանը անտանելի էր թուում նրան,—ամեն ինչ, սկսած դռնապանից, լայն սանդուխներից, ծաղիկներից, լաքէյներից։

*) Լաուն տէնիս գնտակախաղ է։ Խաղացողները նետում են մի-մեանց գնտակը փայտե կոթ ունեցող ցանցաձև գործիքներով։

ներից, սեղանի սարքից և վերջացրած Միսսիով, որ այսօր անդուր ու անբնական էր թուում նրան։ Նրան անախորժ էին և Կօլօսօվի խօսելու այդ ինքնավստահ, տափակ, ազատամիտ եղանակը, և ծերունի Կօրչագինի եղանման, զգայական կերպարանքը և սլաւօնաֆիլ Կատերինա Ալեքսեեվնայի ֆրանսերէն նախադասութիւնները, և դաստիարակչուհու ու սերտարար ուսանողի ամաչկոտ դէմքերը, և մանաւանդ իր մասին ասուած «սա» դերանունը... Նեխլիւդօվը միշտ վարանման մէջ էր Միսսիի վերաբերմամբ և երկու կերպ էր նայում նրա վրայ։ Երբեմն՝ կարծես աչքերը պչելով կամ լուսնի լոյսով էր դիտում նրան ու տեսնում նրա մէջ ամէն գեղեցիկ բան, ու Միսսին թուում էր նրան և՛ թարմ, և՛ սիրուն, և՛ խելօք, և՛ բնական... Մէկ էլ յանկարծ կարծես արևի պայծառ լոյսով դիտելով նրան, նա տեսնում էր, չէր կարող չը տեսնել այն բոլորը, ինչ որ պակասում էր Միսսիին։ Այսօր այդպիսի օր էր նրա համար։ Նա տեսնում էր նրա երեսի վրայ գտնուող բոլոր խորչոմները, դիտէր, տեսնում էր, թէ ինչպէս փուխուչ են ածուած նրա մազերը, տեսնում էր նրա արմունկների սրածայրութիւնը և, որ գլխաւորն է, տեսնում էր բութ մատի լայն եղունգը, որ յիշեցնում էր հօր նոյն տեսակ եղունգը։

—Սարսափելի ձանձրալի խաղ է,—ասաց Կօլօսօվը տէնիսի մասին,—հազար անգամ աւելի ուրախ է սեթեակախաղը *), որ մենք խաղում էին երեխայ ժամանակ։

—Ոչ, դուք չէք փորձել։ Սարսափելի գրաւիչ է,—առարկեց Միսսին, ինչպէս թուաց Նեխլիւդօվին, առանձնապէս անբնական կերպով արտասանելով «սարսափելի» բառը։

Ու վէճ սկսուեց, որին մասնակցեցին նաև Միխայիլ Սերգեեվիչն ու Կատերինա Ալեքսեեվնան։ Միայն դաստիարակչուհին, սերտարարը և երեխաները չէին խօսում, անկներևաբար ձանձրոյթ զգալով։

—Շարունակ վիճում են,—բարձրաձայն քրքրջալով ասաց ծերունի Կօրչագինը, հանելով անձեռոցիկը ժիլէտի տակից, ու վեր կացաւ սեղանից, զղրդացնելով աթոռը, որ իսկոյն յետ քաշեց լաքէյը։ Նրա յետևից վեր կացան բոլորը, մօտեցան մի կողմում դրած փոքրիկ սեղանին, որի վրայ ողողիչներ էին դրուած ու տաք անուշահոտ ջուր, և ողողելով բերանները, չարունակում էին խօսակցութիւնը, որ չէր հետաքրքրում ոչ ոքի։

**) Սեթակ՝ Նոր-Բայազէտում և զաղախ-Թօխի ուրիշ տեղերում ասում են այն խաղին, որ ռուսերէն կոչւում է лапта։

Ծ. Թ.

—Ճիշտ չէ,—դիմեց Միսսին Նեխլիւդօվին, ուզելով, որ նա հաստատի իր յայտնած կարծիքը, թէ ոչ մի բանում այնքան չէ երևում մարդկանց իսկական բնաւորութիւնը, որքան խաղի մէջ։ Նա նկատել էր Նեխլիւդօվի դէմքի վրայ այն կենտրոնացած և, ինչպէս թուում էր նրան, դատապարտելի արտայայտութիւնը, որից ինքը վախենում էր, և այժմ ուզում էր իմանալ, թէ ինչից է յառաջացել այդ։

—Ինչը, չը գիտեմ, ես երբէք չեմ մտածել այդ հարցի մասին,—պատասխանեց Նեխլիւդօվը։

—Կ'երթաք մայրիկի մօտ,—հարցրեց Միսսին։

—Այո, այո,—պապիրոսը հանելով ասաց Նեխլիւդօվը այնպիսի եղանակով, որից պարզ երևում էր, որ չէ ուզում գնալ։

Միսսին լուռ նայեց նրան հարցական հայեացքով, և նա ամաչեց։ «Ձիշտ որ, ինչ մարդութիւն է դալ մի տուն ամենքի վրայ ձանձրոյթ բերելու համար»,—մտածեց նա իր մասին և, աշխատելով սիրալիր լինել, ասաց, որ ուրախութեամբ կ'երթայ, եթէ իշխանուհին կ'ընդունի նրան։

—Այո, այո, մայրիկը ուրախ կը լինի։ Այնտեղ էլ կարող էք ծխել։ Իվան Իվանովիչն էլ այնտեղ է։

Տանտիկինը, իշխանուհի Սօֆիա Վասիլիեվնան պառկած տիկին էր։ Ութ տարի էր արդէն, որ նա հիւրերի մօտ պառկած էր լինում ժանեակների և ժապաւէնների մէջ, շրջապատուած թաւիշով, ոսկեզօծանքով, փղոսկրով, անագապղնձեղէնով ու ծաղիկներով, և ոչ մի տեղ չէր գնում ու ընդունում էր միայն, ինչպէս ինքն ասում էր, «իր բարեկամներին», այսինքն այն ամենքին, որոնք, նրա կարծիքով, որ և է բանով տարբերւում էին ամբոխից։ Նեխլիւդօվը այդ բարեկամների թուումն էր, և՛ այն պատճառով, որ նա խելօք երիտասարդ էր համարւում, և՛ այն, որ նրա մայրը այդ ընտանիքի մտերիմ բարեկամն էր, և՛ այն, որ չատ լաւ կը լինէր, եթէ նա առնէր Միսսիին։

Իշխանուհի Սօֆիա Վասիլիեվնայի սենեակը մեծ և փոքրիկ հիւրասենեակներից դէնն էր։ Մեծ հիւրասենեակում Միսսին, որ Նեխլիւդօվի առաջին էր գնում, վճռաբար կանգ առաւ և, բռնելով ոսկեզօծած աթոռի թիկունքից, նայեց նրա վրայ։

Միսսին չատ էր ուզում մարդու գնալ, իսկ Նեխլիւդօվը լաւ փեսայու էր։ Բացի այդ, նա դուր էր գալիս օրիորդին և օրիորդը ինքն իրան վարժեցրել էր այն մտքին, որ Նեխլիւդօվը իրանը կը լինի,—ոչ թէ ինքը կը պատկանի Նեխլիւդօվին, այլ Նեխլիւդօվը՝ իրան,—և անգիտակցական, բայց չատ խորամանկութեամբ, այնպիսի խորամանկութեամբ, որ ունենում են հոգեկան հիւանդները, նա աշխատում էր հաճոյել իր նպատակին։

Նա այժմ սկսեց խօսել Նեխլիւդովի հետ, որպէս մի նրան առիթ տայ սիրոյ բացատրութեան համար։

—Ես լաւ տեսնում եմ, որ ձեզ մի բան է պատահել,—ասաց Միսսին։—Ինչո՞ւ էք այդպէս։

Նեխլիւդովը յիշեց դատարանի դէպքը և խոժոռուեց ու կարմրեց։

—Այո,—ասաց նա, աշխատելով ճշմարտախօս լինել,—մի բան է պատահել, որ և՛ տարօրինակ ու արտասովոր է, և՛ նշանաւոր։

—Ի՞նչ բան։ Չէք կարող ասել։

—Այժմ չեմ կարող։ Թոյլ տուէք չասել։ Այնպիսի բան է պատահել, որ ես դեռ ժամանակ չեմ ունեցել լիովին կշռադատելու,—ասաց նա ու աւելի ևս կարմրեց։

—Ուրեմն չէք ասիլ ինձ,—նրա դէմքի մկանը դողաց և նա չարժեց բռնած աթոռը։

—Ոչ, չեմ կարող,—պատասխանեց Նեխլիւդովը, զգալով, որ այդպէս պատասխանելով նրան, նա պատասխանում է ինքն իրան, և խոստովանում է, որ յիրաւի ինչ որ չատ նշանաւոր բան է պատահել իրան։

—Դէ, ուրեմն գնանք։

Օրիորդը թափահարեց գլուխը, կարծես քշելով անպէտք մտածմունքները, և առաջ գնաց սովորականից աւելի արագ քայլերով։

Նեխլիւդովին թուաց, թէ օրիորդը անբնական կերպով սղմեց բերանը՝ արտասուքը զսպելու համար։ Նա ամօթ զգաց և ցաւ, որ ինքը վշտացրել օրիորդին, բայց նա գիտէր, որ ամենաչնչին թուլութիւնը կը կորչնի իրան, այնինքն կը կապի ձեռք ու ոտք։ Իսկ նա այսօր աւելին դրանից էր վախենում և նա լուռ հասաւ նրա հետ մինչև իշխանուհու առանձնասենեակը։

XXVII

Իշխանուհի Սօֆիա Վասիլիեվնան վերջացրել էր իր չատ նուրբ և չատ անդադար ճաշը, որ ուտում էր միչտ մենակ, որպէս զի ոչ ոք չը տեսնէր նրան այդ անբանասանդգական գործողութեան միջոցին։ Նրա բազմոցի մօտին փոքրիկ սեղանի վրայ դրուած էր սուրճը, և նա պախպաօ *) էր ծխում։ Իշխանուհի

*) Եգիպտացորենի տերեւի մէջ փաթաթուած կտրատած ծխախոտ՝ բարակ պապիրոսի ձեւով։ Ս. Թ.

Սօֆիա Վասիլիեվնան մի երկար ու նիհար և դեռևս ջահէլ թուալ աշխատող թխադէմ կին էր, երկար ատամներով և մեծ ու սևեռ աչքերով։

Վատ էին խօսում նրա ու բժշկի յարաբերութեան մասին։ Նեխլիւդովը առաջ մտերմութեան էր տալիս այդ։ Իսկ այսօր նա ոչ միայն յիշեց այդ բանը, այլ և երբ տեսաւ նրա բազմոցի մօտ բժշկին, իր օձած, պսպղան ու երկճիւղ միրուքով, զզուանքը սաստիկ եկաւ։

Սօֆիա Վասիլիեվնայի կողքին մի ցած ու փափուկ բազկաթոռի վրայ նստած էր Կօլօսովը, որ գգալով խառնում էր սեղանի վրայ դրած սուրճը։ Սուրճի կողքին դրուած էր մի փոքրիկ դաւաթ լիքեօր։

Միսսին Նեխլիւդովի հետ մտաւ մօր սենեակը, բայց չը մնաց այնտեղ։

—Երբ որ մայրիկը յոգնի ու դուրս անի ձեզ, եկէք ինձ մօտ,—ասաց նա, դիմելով Նեխլիւդովին այնպիսի եղանակով, կարծես թէ ոչինչ չէր պատահել նրանց մէջ, և, ուրախ ժպտալով ու անձայն քայլերով անցնելով հատակ գորգի վրայով, դուրս եկաւ սենեակից։

—Բարև, բարև, բարեկամս, նստէք ու պատմեցէք, թէ ինչ կայ ինչ չը կայ,—ասաց իշխանուհի Սօֆիա Վասիլիեվնան իր ճարտար, չինծու, բայց բնականին բոլորովին նման ժպիտով, որ ի ցոյց էր հանում նրա գնովի երկար ատամները, որոնք այնքան վարպետօրէն էին չինուած, որ կարծես իսկական լինէին։

—Ինձ ասացին, որ դուք դատարանից սաստիկ մռայլ տրամադրութեան մէջ էք վերադարձել։ Ինձ թուում է, թէ դատելը չատ ծանր բան է սիրտ ունեցող մարդկանց համար,—ասաց նա ֆրանսերէն։

—Այո, ճիշտ է,—ասաց Նեխլիւդովը,—յաճախ մարդ զգում է, իր ան... զգում է, որ ինքը իրաւունք չունի դատելու...

—Comme c'est vrai *),—իբր թէ ապշած նրա նկատողութեան ճշտութիւնից, բացականչեց իշխանուհին, ըստ սովորութեան ճարտար կերպով չողոքորթելով իր խօսակցին։

—Իսկ ինչպէս է ձեր նկարը, նա ինձ չատ է հետաքրքրում,—աւելացրեց նա,—եթէ տկարութիւնս չը լիներ, վաղուց արդէն ձեզ մօտ եկած կը լինէի։

—Բոլորովին թողել եմ,—չոր-չոր պատասխանեց Նեխլիւդովը, որի համար այսօր այդ կնոջ հաճոյախօսութեան կեղծու-

*) Ո՛րքան ճշմարիտ է ձեր ասածը։

թիւնը նոյնքան ակներև էր, որքան և պառաւութիւնը, որ նա ամէն կերպ աշխատում էր ծածկել։

Նեխլիւդովը ոչ մի կերպ չէր կարողանում այսօր այնպէս տրամադրել իրան, որ սիրալիր լինէր դէպի նա։

—Ի զուր։ Գիտէք, ինքը Րեպինը ինձ ասաց, որ սա անպայման տաղանդ ունի,—ասաց իշխանուհին, դիմելով Կօլոսովին։

«Ինչպէս չի ամաչում ու այդպէս սուտ է ասում», մտածեց Նեխլիւդովը, խոժոռուելով։

Համոզուելով, որ Նեխլիւդովը վատ տրամադրութեան մէջ է և անկարելի է նրան մասնակցել տալ հաճելի և խելօք խօսակցութեան, Սօֆիա Վասիլիեվնան դիմեց Կօլոսովին, հարցնելով նրա կարծիքը մի նոր դրամայի մասին այնպիսի եղանակով, որ կարծես թէ այդ կարծիքը պէտք է վարատէր բոլոր կասկածները և նրա ամէն մի խօսքը պէտք է յաւէրժանար։ Կօլոսովը չարձակւում էր դրամայի վրայ և այդ առիթով դատողութիւններ էր անում գեղարուեստի մասին։ Իշխանուհի Սօֆիա Վասիլիեվնան ապշում էր նրա դատողութիւնների հիմնաւորութիւնից, փորձում էր պաշտպանել դրամայի հեղինակին, բայց իսկոյն և նէթ կամ անձնատուր էր լինում, կամ թէ զանում էր որ և է միջին կարծիք։ Նեխլիւդովը նայում էր ու ականջ էր դնում, բայց տեսնում ու լսում էր բոլորովին ուրիշ բան և ոչ այն, ինչ որ կատարւում էր նրա առջև։

Սկսած դնելով երբեմն Սօֆիա Վասիլիեվնային, երբեմն Կօլոսովին, Նեխլիւդովը տեսնում էր, նախ, որ ոչ Սօֆիա Վասիլիեվնան, ոչ Կօլոսովը ամենևին չեն հետաքրքրւում ոչ դրամայով, ոչ միմեանցով, իսկ եթէ այնուամենայնիւ խօսում են, այդ նրանից է, որ ուտելուց յետոյ ֆիզիօլոգիական պահանջ են զգում շարժել լեզուն և կոկորդի մկանները։ Երկրորդ, նա տեսնում էր, որ Կօլոսովը, օղի, գինի ու լիքեօր խմելուց յետոյ, մի քիչ հարբած էր, ոչ այնպէս հարբած, ինչպէս լինում են հազուադէպ խմող դիւղացիները, այլ այնպէս, ինչպէս հարբած են լինում գինի խմելը սովորութիւն դարձրած մարդիկ։ Նա չէր օրօրւում, յիմարութիւններ չէր ասում, բայց անսօրմալ, զրգռուած կերպով ինքնագոհ դրութեան մէջ էր։ Երրորդ, Նեխլիւդովը տեսնում էր, որ իշխանուհի Սօֆիա Վասիլիեվնան խօսելու ժամանակ անհանգիստ սրտով աչքը դցում էր դէպի լուսամուտը, որտեղից ներս էր թափանցում և սկսել էր հասնել իրան արևի մի թեք շողը, որ կարող էր չատ պայծառ կերպով լուսաւորել իր պառաւութիւնը։

—Ո՛րքան ճիշտ է ձեր ասածը,—ասաց նա Կօլոսովի արած

մի նկատողութեան վերաբերմամբ, և սրմնց զանգի կոճակը, որ գտնւում էր բազմոցի կողքի պատի վրայ։

Այդ միջոցին՝ բժիշկը վեր կացաւ ու, իբրև տանու մարդ, առանց բան ասելու դուրս եկաւ սենեակից։ Սօֆիա Վասիլիեվնան ուղեկցեց նրան հայեացքով, չարունակելով խօսակցութիւնը։

—Խնդրեմ, Ֆիլիպպ, իջեցրէք այդ վարագոյրը,—ասաց նա ու աչքով ցոյց տուեց լուսամուտի վարագոյրը, երբ ներս մտաւ գեղեցկադէմ լաքէյը։

—Չէ, ինչ ուզում էք ասէք, բայց մէջը ինչ որ միստիկական բան կայ, իսկ առանց միստիկականի չը կայ բանաստեղծութիւն,—ասում էր նա, սև աչքերից մէկովը բարկացած արտայայտութեամբ հետևելով վարագոյրը իջեցնող լաքէյի չարժումներին։

—Միստիկականութիւնը առանց բանաստեղծութեան՝ անհասատութիւն է, իսկ բանաստեղծութիւնը առանց միստիկականութեան՝ պրօզա է,—ասաց նա տխուր ժպիտով, առանց հայեացքը հեռացնելու լաքէյից, որ չիտկում էր վարագոյրը։

—Ֆիլիպպ, այդ վարագոյրը չէ, այն միւսը, մնծ պատուհանինը,—տառապալից ձայնով արտասանեց Սօֆիա Վասիլիեվնան, ակներևաբար կարեկցելով ինքն իրան՝ այդ խօսքերը արտասանելու համար անհրաժեշտ ճիգերի համար, և իսկոյն և նէթ մատանիներով պատած ձեռքով մօտեցրեց բերնին անուշաբոյր, ծխացող պախիտոսը, որպէս դի մի քիչ հանգստանար։

Լայնալանջ, մկանոտ ու դեղեցկադէմ Ֆիլիպպը, կարծես ներողութիւն խնդրելով, թեթև գլուխ տուեց և, իր հուժկու, հաստաբուռն ոտներով, մեղմօրէն քայլելով գորգի վրայով, լուռ ու խոնարհ անցաւ դէպի միւս պատուհանը ու ուշի ուշով նայելով իշխանուհուն, սկսեց այնպէս չիտկել վարագոյրը, որ ոչ մի չողչը համարձակուէր ընկնել նրա վրայ։ Բայց էլի նա այն չարեց, ինչ որ պէտք էր, և նորից տառապալ Սօֆիա Վասիլիեվնան ստիպուած եղաւ ընդհատել իր խօսքը միստիկականութեան մասին և դլխի քցել իրան անգթաբար անհանգիստ անող ու անհասկացող Ֆիլիպպին։ Մի րոպէ Ֆիլիպպի աչքերը կայծին տուեցին։

«Սատանան գիտի, թէ ինչ է ուզածդ,—երևի արտասանեց նա մտքումը»,—մտածեց Նեխլիւդովը դիտելով այդ բոլորը։ Բայց հուժկու և գեղեցկադէմ Ֆիլիպպը իսկոյն և նէթ զսպեց իր անհամբերութեան արտայայտութիւնը և սկսեց հանդիստ կերպով անել այն բոլորը, ինչ որ հրամայում էր նրան հալ ու

մաշ եղած, ուժասպառ և ոտից մինչև գլուխ կեղծ Սօֆիա Վասիլիեվնան։

—Ի հարկէ, մեծ չափով ճշմարտութիւն կայ Դարվինի վարդապետութեան մէջ,—ասաց Կօլօսօվը, թեք ընկնելով ցածիկ բազկաթոռի մէջ և քնէած աչքերով նայելով իշխանուհի Սօֆիա Վասիլիեվնայի վրայ,—բայց նա սահմանն անցնում է, այո, անցնում է։

—Իսկ դուք հաւատում էք ժառանգականութեան,—հարցրեց իշխանուհին Նեխլիւդօվից, որի լռութիւնը ճնշում էր նրան։

—Ժառանգականութեան, հարցրեց Նեխլիւդօվը։—Ոչ, չեմ հաւատում,—ասաց նա, ամբողջապէս անձնատուր եղած այն տաքրօրինակ մտապատկերներին, որոնք, ով գիտի ինչու, այդ րոպէին ծագեցին նրա երևակայութեան մէջ։ Հուժկու ու գեղեցկագէմ Ֆիլիպովն նա երևակայեց իբր մերկ պատկերացու նկարչի համար և նրա կողքին՝ երևակայեց մերկ դրութեամբ Կօլօսօվին իր ձմերուկանման փորով, ճաղատ գլխով և անմիտ, ճիպոտանման կռներով։ Անորոշ կերպով ներկայանում էին նրա երևակայութեանը իրանց բնական տեսքով նաև Սօֆիա Վասիլիեվնայի ուսերը, որոնք ծածկուած էին այժմ մետաքսեղէնով ու թաւիշով, բայց այդ մտապատկերը շատ անհարմար էր, ուստի նա աշխատեց դուրս քշել գլխից։

Սօֆիա Վասիլիեվնան չափեց նրան աչքերով։

—Սակայն Միսսին ձեզ սպասում է,—ասաց նա։—Գնացէք նրա մօտ, նա ուզում էր ձեզ համար նուագել մի նոր բան Շումանից... Շատ հետաքրքրական բան է։

«Նա ոչինչ չի ուզեցել նուագել։ Այդ բոլորը սա, ինչ որ նպատակով, միտում է», մտածեց Նեխլիւդօվը, վեր կենալով և աղմկելով Սօֆիա Վասիլիեվնայի թափանցիկ, օդակոտ և մետաքսներով պատած ձեռքը։

Հիւրասենեակում նրան հանդիպեց Եկատերինա Ալեքսեեվնան, որ իսկոյն սկսեց խօսել։

—Սակայն, ինչպէս տեսնում եմ, երդուեալ ատենակալի պարտաւորութիւնները ճնշող կերպով են ազդում ձեր վրայ,—ասաց նա, ըստ սովորականին, ֆրանսերէն։

—Այո, ներեցէք, այսօր տրամադրութիւնս վատ է և ես զգում եմ, որ իրաւունք չունեմ ուրիշներին էլ ձանձրոյթ պատճառելու,—պատասխանեց Նեխլիւդօվը։

—Ինչու է վատ ձեր տրամադրութիւնը։

—Թոյլ տուէք չասել պատճառը,—ասաց նա, վնասելով գլխարկը։

—Իսկ յիշո՞ւմ էք, որ պնդում էիք, թէ միշտ պէտք է ճշմարիտն ասել և թէ ինչպէս այն ժամանակ դուք մեզ բոլորիս սաստիկ անհնայ ճշմարտութիւններ էիք ասում։ Հապա ինչու այժմ չէք ուզում ասել։ Յիշո՞ւմ ես, Միսսի,—դիմեց Եկատերինա Ալեքսեեվնան Միսսիին, որ այդ րոպէին դուրս եկաւ իր սենեակից։

—Որովհետև այն ժամանակ այդ՝ խաղի նման էր,—լուրջ կերպով պատասխանեց Նեխլիւդօվը։—Խաղի ժամանակ կարելի է, իսկ իրօք մենք այնքան վատ ենք, այսինքն ես այնքան վատ եմ, որ գոնէ ինձ համար անհնար է ամեն բան ճշմարտասիրութեամբ ասել։

—Մի կոծկէք ձեր ասածը, այլ աւելի լաւ է ասէք տեսնենք՝ ինչով ենք մենք այդքան վատ,—հարցրեց Եկատերինա Ալեքսեեվնան, բառախաղ անելով և կարծես թէ չը նկատելով Նեխլիւդօվի լրջութիւնը։

—Սաստիկ վատ բան է, երբ մարդ խոստովանում է, որ տրամադրութիւնը տեղը չէ,—ասաց Միսսին։—Ես երբէք չեմ խոստովանում այդ բանը ինքս իմ առաջ և այդ պատճառով միշտ տրամադրութիւնս տեղն է լինում։ Որ այդպէս է, գնանք ինձ մօտ։ Մենք կ'աշխատենք փարատել ձեր mauvaise humeur-ը *)։

Նեխլիւդօվը այնպէս զգաց իրան, ինչպէս անչուշտ զգում է ձին, երբ չիխում են գլուխը, որպէս զի սանձ դնեն բերանը ու տանեն լծելու։ Իսկ այսօր նրան աւելի, քան երբ և իցէ, անախորժ էր լծուել։ Նա ներողութիւն խնդրեց, յայտնելով, որ բան ունի տանը, և սկսեց հրաժեշտ տալ։ Միսսին սովորականից երկար բռնած պահեց նրա ձեռքը։

—Յիշեցէք, որ այն, ինչ որ կարևոր բան է ձեզ համար, կարևոր բան է նաև ձեր բարեկամների համար—ասաց նա։—Վաղը կը գա՞ք։

—Դժուար թէ գամ,—ասաց Նեխլիւդօվը և ամօթ զգալով, ինքն էլ չը գիտէր՝ իր թէ Միսսիի տեղ, կարմրեց ու չտապով դուրս եկաւ։

—Տեսնես ինչ բան է։ Comme cela m'intrigue **),—ասաց Եկատերինա Ալեքսեեվնան Նեխլիւդօվի դուրս գնալուց յետոյ։

—Ես անպատճառ պէտք է իմանամ։ Անչուշտ մի որ և է affaire d'amour propre ***) է. il est très susceptible notre cher Митя. ****)։

---

*) Վատ տրամադրութիւնը։

**) Ո՜րքան ինձ հետաքրքրում է այդ։

***) Ինքնասիրութեան, պատուասիրութեան հարց։

****) Շատ կասկածելի մարդ է մեր սիրելի Միտեան։

—Plutôt une affaire d'amour sale ***),—ուզում էր ասել Միսսին, որ նայում էր դէպի առաջ հանգած, բոլորովին ուրիշ հայեացքով, քան այն, որով նայում էր Նեխլիւդովին, բայց նոյն իսկ Կատերինա Ալեքսեեվնային չասաց այդ վատ ճաշակի բառախաղը *) և արտասանեց միայն,—մենք ամենքս էլ ունենում ենք մեր վատ և լաւ օրեր։

«Մեթէ սա էլ է խաբելու,—մտածեց Միսսին։—Այն բոլորից յետոյ, ինչ որ տեղի է ունեցել, այդ չատ վատ կը լինէր նրա կողմից»։

Եթէ Միսսիից մէկը հարցնէր, թէ ինչ է ուզում ասել՝ «այն բոլորից յետոյ, ինչ որ տեղի է ունեցել» խօսքերով, նա չէր կարող ոչ մի որոշ պատասխան տալ, և սակայն նա անկասկած գիտէր, որ Նեխլիւդովը ոչ միայն յոյս էր յղացրել նրա մէջ, այլ և գրեթէ խոստում էր տուել։ Այդ բոլորը որոշ խօսքեր չէին, այլ հայեացքներ, ժպիտներ, ակնարկներ, լռութիւններ։ Բայց նա այնուամենայնիւ իրանն էր համարում նրան և չատ ծանր կը լինէր նրա համար զրկուել նրանից։

XXVIII

«Ամօթ ու խայտառակութիւն է, խայտառակութիւն ու ամօթ է», մտածում էր, մինչ այդ, Նեխլիւդովը, ոտով տուն դառնալով ծանօթ փողոցներով, Միսսիի հետ ունեցած խօսակցութեան ազդած ծանր զգացմունքը դեռ չարունակւում էր մէջը։ Նա զգում էր, որ, եթէ կարելի է այսպէս ասել, ձևականօրէն ինքը արդար էր Միսսիի առաջ, որովհետև ոչ մի այնպիսի բան չէր ասել նրան, որով իրան կապուած համարէր, առաջարկութիւն չէր արել, բայց ըստ էութեան նա զգում էր, որ ինքը կապել էր իրան նրա հետ, խոստացել էր ամուսնանալ հետը, մինչդեռ այսօր նա իր ամբողջ էութեամբ զգաց, որ չէ կարող ամուսնանալ նրա հետ։ «Ամօթ ու խայտառակութիւն է, խայտառակութիւն ու ամօթ է», կրկնում էր նա մտքումը ոչ միայն դէպի Միսսին ունեցած յարաբերութեան վերաբերմամբ, այլ և առհասարակ ամեն բանի վերաբերմամբ։ «Ամեն ինչ ամօթ ու խայտառակութիւն է», կրկնում էր նա մտքումը, իր տան սանդուխներով բարձրանալիս։

*) Աւելի շուտ, այդ մի կեղտոտ սիրոյ հարց է։

**) Բառախաղը կայանում է նրանում, որ ինքնասիրութեանը ֆրանսերէն ասում են amour propre, որ բառացի կարելի է թարգմանել մաքուր սէր.—Միսսին ուզում էր ասել՝ ինքնասիրութեան (մաքուր սիրոյ) հարց չէ, այլ կեղտոտ սիրոյ։ Ե. Թ.

—Ընթրիք չեմ անելու,—ասաց նա կօրնէյին, որ նրա յետևից մտաւ սեղանատունն, ուր սեղան էր գցուած ու թէյ էր պատրաստուած։—Դուք գնացէք։

—Լսում եմ,—ասաց կօրնէյը, բայց չը գնաց, այլ սկսեց սեղանը հաւաքել։ Նեխլիւդովը նայում էր կօրնէյի վրայ և չար զգացմունք էր զգում դէպի նա։ Նա ուզում էր, որ բոլորը հանգիստ թողնեն իրան, բայց, ինչպէս թուում էր նրան, բոլորը կարծես խօսք էինք կապել, նրան չարացնելու համար, ձեռք չը քաշել նրանից։ Երբ կօրնէյը ամանները տարաւ, Նեխլիւդովը ուզեց մօտենալ սամօվարին ու թէյ դնել, բայց, լսելով Ագրաֆենա Պետրօվնայի քայլերը, չտապով գնաց հիւրասենեակը ու դուռը փակեց յետևից, որպէս զի չը տեսնէր նրան։ Այդ հիւրասենեակը այն սենեակն էր, ուր երեք ամիս առաջ մնում էր նրա մայրը։ Այժմ մտնելով այդ սենեակը, որ լուսաւորուած էր երկու ցոլացիկաւոր լամպերով,—մէկը՝ հօր, միւսը՝ մօր պատկերների մօտ,—նա յիշեց այն յարաբերութիւնը, որ ինքը վերջին ժամանակները ունէր դէպի մայրը, և այդ յարաբերութիւնը անբնական թուաց նրան և զզուելի։ Այդ էլ ամօթ և խայտառակութիւն էր։ Նա յիշեց, թէ ինչպէս մօր հիւանդութեան վերջին միջոցները ինքը ուզղակի ցանկանում էր, որ նա մեռնի։ Նա ասում էր ինքն իրան, թէ ուզում է նրա մեռնելը, որպէս զի նա ազատուի տանջանքներից, բայց իսկապէս ուզում էր այդ բանը, որպէս զի ինքը ազատուէր նրա տանջանքները տեսնելուց։

Ցանկանալով լաւ յիշողութիւն զարթեցնել իր մէջ մօր մասին, նա նայեց նրա կենդանագրին, որ 5000 ռուբլով քաշել էր մի հռչակաւոր նկարիչ։ Նա նկարուած էր թաւիշէ սև հագուստով և բաց կրծքով։ Նկարիչը, ամենևին առանձին ջանք էր դործ դրել կուրծքը, ծծերի արանքը և չլացուցիչ գեղեցկութիւն ունեցող ուսերն ու վիզը քաշելիս։ Այդ արդէն բոլորովին ամօթալի ու խայտառակ բան էր։ Ինչ-որ զզուելի և սրբապիղծ բան կար նրանում, որ նկարում մայրը դուրս էր բերուած իբրև կիսամերկ գեղեցկուհի, զզուելի ժանաւանդ այն պատճառով, որ երեք ամիս առաջ նոյն սենեակում պառկած էր նոյն կինը, որ չորացել էր, եգիպտական մումիայի նման, և չը նայելով դրան, ոչ միայն այդ սենեակը, այլ և ամբողջ տունը լցրել էր այնպիսի տանջող ծանր հոտով, որ ոչ մի միջոցով չէր կարելի լինում վերացնել։ Նեխլիւդովին թուում էր, թէ ինքը այժմ էլ զգում է այդ հոտը։ Եւ նրա միտքն եկաւ, թէ ինչպէս մայրը, մահիցը մի օր առաջ, բռնելով նրա ուժեղ, սպիտակ ձեռքը իր ոս-

կրոտ ու սևացող ձեռքով, նայեց աչքերին ու ասաց՝ «Մի դա-
տապարտիր ինձ, Միտեա, եթե պետք եղածի պես չեմ վարուել»
և տանջանքներից դունաթափ աչքերը արտասուակալեցին։ «Ինչ
զզուելի բան է», կրկին ասաց Նեխլիւդովը ինքն իրան, նայե-
լով այդ հոյակապ մարմարակերպ ուսերով ու կռնակով և յաղ-
թական ժպիտով կիսամերկ կնոջը։ Պատկերի մերկ կուրծքը յի-
շեց նրան մի ուրիշ չահել կինը, որին այդ օրերը նա տեսել
էր նոյնպէս կրծքաբաց։ Միտեան էր այդ, որ մի պատրուակ հնա-
րելով կանչել էր նրան մի երեկոյ իրանց մօտ, որպէս զի նա
տեսնէր իրան կրծքաբաց զգեստով, որով ինքը դնալու էր պա-
րահանդէս։ Նեխլիւդովը զզուանքով մտաբերեց նրա գեղեցիկ ու-
սերն ու կռնակը։ Եւ նրա կողմից, անատնաբարոյ հայրը իր ան-
կեալով, իր անպիտանութեամբ, և այդ կասկածելի հռչակ վայելող
bel esprit մայրը։ Այդ բոլորը զզուելի էր և միևնոյն ժամանակ
ամօթալի։ Ամօթալի և խայտառակ, խայտառակ և ամօթալի։

«Չէ, չէ,—մտածում էր նա,—պէտք է ազատուել. ազատուել
այս բոլոր կեղծ ու պատիր յարաբերութիւններից թէ դէպի
կօրչագինները, թէ դէպի Մարիա Վասիլիեվնան, թէ դէպի Մես-
չեռսկիները... Այո, ազատ չունէ քաշել։ Գնալ արտասահման,
Հռոմ, զբաղուել նկարով։—Նա յիշեց իր կասկածները իր տա-
ղանդի վերաբերմամբ։—Թող այդպէս լինի, միևնոյն է, թէկուզ
հէնց միմիայն ազատ չունէ քաշել։ Նախ մտնել Պօլիս, յետոյ
Հռոմ, միայն թէ այս երգուեալ դատաւորութեան ժամանակը
չուտով անց կենար։ Եւ այդ գործը մի կերպ կարգի դնուէր
փաստաբանի օգնութեամբ»։

Եւ յանկարծ նրա երեւակայութեան մէջ չափազանց կեն-
դանի կերպով պատկերացաւ կալանաւոր Մասլովան իր սև ու
չիլ աչքերով։ Ինչպէս լայ եղաւ խեղճը մեղադրեալների վեր-
ջին խօսքի ժամանակ։ Նեխլիւդովը չտապ-չտապ ճմռեց ծխած
պապիրօսը, հանգցնելով մոխրամանի մէջ, յետոյ կպցրեց մի
ուրիշը ու սկսեց յետ ու առաջ մտն գալ սենեակի մէջ։ Եւ մէկ
մէկի յետևից սկսեցին պատկերանալ նրա երեւակայութեան մէջ
Մասլովայի հետ անց կացրած րոպէները։ Յիշեց վերջին տեսակ-
ցութիւնը նրա հետ, այն անասնական կիրքը, որ այն ժամա-
նակ տիրապետեց իրան, և այն հիասթափութիւնը, որ ինքը
զգաց կրքին յագուրդ տալուց յետոյ։ Յիշեց սպիտակ զգեստը ու
կապոյտ ժապաւէնը, յիշեց Զատկի ճրագալոյցը։

«Այո, այդ դիշեր ևս սիրում էի նրան,—իսկապէս սիրում,
լաւ, մաքուր սիրով,—սիրում էի ոչ միայն այդ դիշեր, այլ և ա-
ռաջ,—և ինչպէս էի սիրում,—այն ժամանակ, երբ առաջին ան-
գամ ապրում էի մօրաքոյրներիս մօտ և չարագրութիւն էի գը-

րում»։ Եւ նա յիշեց իրան այնպէս, ինչպէս այն ժամանակն էր։
Նա կարծես մի րոպէ զգաց այն ժամանակուան թարմութիւնը,
կենսալից ջահելութիւնը, և սիրտը լցուեց կսկծալից ափսո-
սանքով։

Կարծես ինքը՝ էլ առաջուան մարդը չէր. տարբերութիւնը
եղածի և այժմեանի մէջ՝ ահագին էր և նոյնչափ մեծ, եթէ ոչ
աւելի, որքան այն տարբերութիւնը, որ կար այն Զատիկ գիշերը
ակնեղցում աղօթող կատիւշայի և այդ վաճառականի հետ քէֆ
արած պոռնիկ կնոջ մէջ, որին իրանք դատում էին այս առա-
ւօտ։ Այն ժամանակ ինքը ժիր, աչխոյժ, ազատ մի մարդ էր, ո-
րի առաջ բացուած էին անհուն հնարաւորութիւններ, իսկ այժմ
նա զգում էր իրան բռնուած յիմար, դատարկ, աննպատակ ու
գծուծ կեանքի ցանցի մէջ, որից նա ոչ մի ելք չէր տեսնում
և նոյն իսկ, մեծ մասամբ, դուրս գալ չէր ցանկանում։ Նա յի-
շեց, թէ ինչպէս ինքը մի ժամանակ հպարտանում էր իր չի-
տակութեամբ, ինչպէս մի ժամանակ կանոն էր դրել իր համար
միշտ ճշմարիտն ասել և յիրաւի ճշմարտախօս էր, և թէ ինչպէս
այժմ ինքը ամբողջապէս խրուած էր սուտերեան մէջ,—ամենա-
սարսափելի սուտերեան մէջ, այն սուտերեան մէջ, որ իրան
շրջապատող բոլոր մարդիկ ճշմարտութիւն էին համարում։ Եւ
ոչ մի ելք չը կար,—գոնէ նա չէր տեսնում,—այդ սուտիւնից։
Եւ ինքը թաղուել էր նրա մէջ, սովորել էր նրան, վայելք էր
զգում նրանից։

Ի՞նչպէս վարուէր Մարիա Վասիլիեվնայի և նրա ամուսնու
հետ, որպէս զի կարողանար այնուհետև առանց ամաչելու նայել
այդ ամուսնու և նրա երեխաների երեսին։ Ի՞նչպէս առանց
սուտերեան կանոնաւորէր իր յարաբերութիւնները Միտեայի հետ։
Ի՞նչպէս դուրս գար այն հակասութիւնից, որ առաջանում էր
նրանից, որ ինքը հոգատարութիւնը ապօրինութիւն էր հա-
մարում և միևնոյն ժամանակ տիրում էր մօրից ժառանգած հողե-
րին։ Ի՞նչպէս քաւէր իր մեղքը կատիւշայի առաջ։ Հօ չէր կա-
րելի այդ բանը այդպէս թողնել։ «Չէ կարելի թողնել այն կնո-
ջը, որին ես սիրում էի, և բաւականանալ նրանով, որ փաստա-
բանի վարձը կը վճարեմ ու կ'ազատեմ նրան տաժանակիր աշ-
խատանքների պատժից, որին նա անհիմն կերպով է դատապար-
տուած։ Չէ կարելի մեղքը քաւել փողով, չէ կարելի այնպէս
վարուել, ինչպէս ես այն ժամանակ վարուեցի, համոզուած լի-
նելով, թէ ինչ որ պէտքն էր արեցի, փող տալով նրանց»։

Եւ նա վառ կերպով յիշեց այն րոպէն, երբ, միջանգուած
համնելով կատիւշայի յետևից, փողը ճմռեց նրա ձեռքը ու փա-

խաւ։ «Ա՜խ, այդ փողը», ծարաւախով և զզուանքով, ինչպէս զգացել էր և այն ժամանակ, յիշեց նա այդ բոլէն։—Ա՜խ, ախ, ինչ զզուելի բան էր,—նոյնպէս, ինչպէս և առաջ, բարձրաձայն արտասանեց նա։—Միմիայն լիրբ մարդը, սրիկայ մարդը կարող է այդպէս վարուել։ Եւ ես եմ, ես, այդ լիրբը, այդ սրիկան,—բարձրաձայն արտասանեց նա։—Բայց մի՛թէ յիրաւի,—նա կանգ առաւ մի րոպէ,—մի՛թէ յիրաւի, լիրբ մարդ եմ ես։ Հապա ինչ եմ,—պատասխանեց նա ինքն իրան։—Եւ միայն այդ է մի՛թէ,—չարունակեց նա դատապարտել ինքն իրան։—Լրբութիւն չէ, սատրութիւն չէ քո վերաբերմունքը դէպի Մարիա Վասիլիեվնան և նրա ամուսինը։ Իսկ քո վերաբերմունքը դէպի սեփականութիւնը։ Պատրուակ բռնելով, թէ փողերը մօրիցդ են, օգուտամ ես այն հարստութիւնից, որ ապօրինի ես համարում։ Եւ քո ամբողջ անգործ ու անառակ կեանքը։ Եւ այդ բոլորի պակը՝ քո վարմունքը Կատիւշայի հետ։ Լիրբ մարդ, սուր մարդ։ Նրանք (մարդիկ), ինչպէս ուզում են, թող դատեն իմ մասին, նրանց ես կարող եմ խաբել, բայց ինձ հո չեմ կարող խաբել»։

Եւ յանկարծ նա հասկացաւ, որ այն զզուանքը, որ ինքը զգում էր վերջին ժամանակ դէպի մարդիկ, մանաւանդ այսօր դէպի Սօֆիա Վասիլիեվնան, Միսսին ու Կօրնէյը, իսկապէս զզուանք էր դէպի ինքն իրան։ Եւ զարմանալի բան է, սեփական սատրութեան այդ գիտակցութեան մէջ բացի ցաւից կար և սփոփիչ ու հանգստացնող զգացմունք։

Այդ առաջին անգամը չէր, որ Նեխլիւդովը զբաղւում էր, ինչպէս ինքն ասում էր, «խիղճը իտակելով»։ Այդպէս անուանում էր նա հոգեկան այնպիսի դրութիւն, երբ,—չատ անգամ երկար ժամանակ անցնելուց յետոյ,—յանկարծ զգալով, որ ներքին կեանքը դանդաղ է ընթանում, կամ նոյն իսկ կանգ է առնում, սկսում էր իտակել այն բոլոր փորը, որ, կիսուելով նրա հոգու մէջ, պատճառ էր դառնում այդ դադարման։

Այդպիսի սթափումներից յետոյ Նեխլիւդովը ամեն անգամ կանոններ էր կազմում իր համար, որոնց մտադրւում էր հետեւել ընդ միշտ,—օրագիր էր գրում և նոր կեանք էր սկսում, որ յուսով էր լինում այլևս չը փոխել երբեք,—turning a new leaf *),—ինչպէս ասում էր նա ինքն իրան։ Բայց ամեն անգամ աչխարհի հրապոյրները գրաւում էին նրան, և նա, անկասելի կերպով, նորից ընկնում էր և յաճախ աւելի ցած, քան առաջ։

Այդպէս նա մի քանի անգամ մաքրուել էր և բարձրացել. առաջին անգամ այդ պատահել էր նրա հետ այն ժամանակ,

*) Նոր էջ բանալով։

երբ նա ամառը եկաւ մօրաքոյրների մօտ։ Ամենազուարթուն, ամենաոգևորուած սթափումն էր այդ։ Եւ նրա հետևանքները տևեցին բաւական երկար ժամանակ։ Ցետոյ նոյնպիսի սթափումն էր այն ժամանակ, երբ նա դուրս եկաւ քաղաքացիական ծառայութիւնից և, անձնազոհութեան տենչով, պատերազմի ժամանակ զինուորական ծառայութեան մտաւ։ Բայց այդտեղ հոգին չատ չուտով փսորակուեց։ Ցետոյ սթափումն էր այն ժամանակ, երբ նա դուրս եկաւ ծառայութիւնից և գնաց արտասահման ու սկսեց պարապել նկարչութեամբ։

Այն ժամանակից մինչև այդ օրը երկար միջոց էր անցել առանց խտակման, ուստի և երբէք նրա հոգին այդքան փսրակած չէր եղել, երբէք այնպիսի հակասութիւն չէր եղել այն բանի մէջ, ինչ որ պահանջում էր նրա խիղճը, և այն կեանքի մէջ, որ նա վարում էր։ Այժմ նա տեսաւ այդ անդունդը տարբերութիւնը և սարսափեց։

Այդ տարբերութիւնը այնքան մեծ էր, նրա հոգին այնքան էր աղտոտուել, որ առաջին րոպէին նա յոյս չունէր, թէ կարող է այլ ևս մաքրել այդքան աղտը։ «Ջէ որ արդէն փորձ արեցիր կատարելագործուել, աւելի լաւ մարդ դառնալ, ու ոչինչ դուրս չեկաւ,—ասում էր նրա հոգու մէջ հրապուրչի ձայնը,—էլ ինչ միտք ունի նորից փորձել։ Հօ մենակ դու չես. ամենքն են այդպէս, կեանքն է այդպէս», ասում էր այդ ձայնը։ Բայց այն ազատ, հոգևկան էակը, որ է միակ ճշմարիտը, միակ հզօրը, միակ յաւիտենականը, արդէն զարթել էր Նեխլիւդովի մէջ։ Եւ նա չէր կարող չը հաւատալ այդ էակին։ Որքան էլ անդունդը տարածութիւնը այն բանի մէջ, որ նա էր, և այն բանի մէջ, որ նա ուզում էր լինել,—զարթած հոգևկան էակի համար ամեն ինչ հնարաւոր էր թուում։

«Կը պատռեմ այդ ստութեան ցանցը, որ կաշկանդում է ինձ, կը պատռեմ, ինչքան էլ ծանր լինի այդ ինձ համար, ամեն բանում և ամենքին կ'ասեմ միայն ճշմարիտը և կ'անեմ միայն այն, ինչ որ արդար է,—վճռաղաբար ու բարձրաձայն ասաց նա ինքն իրան։—Շիտակ կ'ասեմ Միսսիին, որ ես անառակ մարդ եմ և չեմ կարող պսակուել նրա հետ ու մինչև այժմ զուր էի տանջում նրան. կ'ասեմ Մարիա Վասիլիեվնային (ազնուականութեան պարագլխի կնոջը),—չէ, նրան աւելորդ է ասելը,—կ'ասեմ նրա մարդուն, որ լիրբ արարած եմ և խարում էի նրան. ժառանգութեանս վերաբերմամբ այնպէս կը կարգադրեմ, որ արդար լինի։ Կատիւշային կ'ասեմ, որ ես լիրբ մարդ եմ ու մեղաւոր եմ նրա առաջ, և ձեռքիցս եկած ամեն բան կ'անեմ

նրա վիճակը թեթևացնելու համար։ Այո, կ'երթամ, կը տեսնեմ հեռը ու ներողութիւն կը խնդրեմ։ Այո, ներողութիւն կը խնդրեմ, ինչպէս խնդրում են երեխաները»։

Նա կանգ առաւ։

—Կը պահպանեմ հեռը, եթէ որ պէտք լինի։

Նա կանգ առաւ, ձեռները կցեց, ինչպէս անում էր փոքրիկ ժամանակը, բարձրացրեց աչքերը դէպի վերև և ասաց.

—Տէր, օգնիր ինձ, խնայմուտ արա ինձ, եկ և բնակիր իմ մէջ, և մաքրիր ինձ ամեն պղծութիւնից։

Նա աղօթում էր, աղաչում էր Աստուծուց օգնել իրան, մաքրել իրան, և սակայն արդէն կատարուել էր նրա խնդրածը։ Նա զգաց ոչ միայն ազատութիւն, զուարթութիւն և կեանքի բերկրութիւն, այլ և բարիի ամբողջ զօրութիւնը։ Նա այժմ ընդունակ էր զգում իրան անել մարդու ձեռքից եկած բոլոր ամենալաւ բանները։

Նրա աչքերում արտասուք կար, երբ նա ասում էր ինքն իրան այդ բանը,—և՛ լաւ, և՛ վատ արտասուք. լաւ, որովհետև նրա աղբիւրը հրճուանքն էր, այն գիտակցութիւնը, որ նրա մէջ զարթնել էր այն հոգեկան էակը, որ այնքան տարիներ քնած էր նրա մէջ, և վատ, որովհետև նրա աղբիւրը խանդաղատանքն էր իր անձի վրայ, իր առաքինութեան վրայ։

Նա չոր զգաց։ Մօտեցաւ պատուհանին ու լաց արեց։ Պատուհանը նայում էր պարտէզին։ Հանդարտ ու զով լուսնկայ գիշեր էր։ Փողոցում ինչ-որ կառքի դոռոց լսուեց ու յետոյ ամեն ինչ խաղաղուեց։ Ուղիղ պատուհանի տակին երևում էր բարձր սօսիի տերևաթափ ճիւղերի ստուերը, որ իր բոլոր ծուռ ու մուռ խազերով որոշ նկատւում էր մաքրած հրապարակի աւազի վրայ։ Ձախակողմում երևում էր կառքատան կտուրը, որ սպիտակ էր թուում լուսնի պայծառ լոյսով. դէպի առաջակողմը երևում էին ծառերի իրար խճճուած ճիւղերը, որոնց յետևից տեսնւում էր ցանկապատի սև սիւները։ Նեխլիւդով նայում էր լուսնի չողքերով լուսաւորուած պարտէզին ու կտուրին, նայում էր սօսիի սիւներին, ականջ էր դնում լսուող ձայներին և ծըծում դրսևի թարմ ու կենդանարար օդը։

«Ի՞նչ լաւ է, ինչ լաւ է, Տէր Աստուած, ինչ լաւ է», ասում էր նա ինքն իրան այն բանի մասին, որ զգում էր իր հոգու մէջ։

—

XXIX

Անսպասելի տեղից տատնհինգ վերստ քարած փողոցներով անցնելուց յետոյ Մասլօվան, հասաւ քանտը միայն երեկոյեան ժամի 6-ին, յոգնած ու ցաւատանջ ոտներով, քաղցած փորով և սպանուած՝ անսպասելի խիստ դատավճռից։

Երբ, դեռ նիստի ընդմիջումներից մէկի ժամանակ, սպասաւորները նրա մօտ նախաճաշում էին, ցամաք հաց ու պնդախաշ ձու ուտելով, նրա բերնի ջուրը սկսեց գնալ և նա զգաց, որ ինքը քաղցած է, բայց իր համար ստորացուցիչ էր համարում նրանցից ուտելու բան խնդրել։ Իսկ երբ մի երեք ժամ էլ անցաւ դրա վրայ, էլ քաղցը անց կացաւ և նա թուլութիւն էր միայն զգում։ Այդ դրութեան մէջ էր նա, երբ լսեց անակնկալ դատավճիռը։ Առաջին րոպէին նա կարծեց, թէ սխալ է լսել, չէր կարողանում միանգամից հաւատալ լսածին, չէր կարողանում կապել իր մտապատկերը տաժանապարտի մտապատկերի հետ։ Բայց տեսնելով դատաւորների հանգիստ ու գործադրաղ դէմքերը, տեսնելով, որ երդուեալ տեսնականերն էլ այդ վճիռը ընդունեցին իբրև ամենաբնական մի բան, նա վրդովուեց ու աղաղակեց բարձրաձայն, որ ինքը մեղաւոր չէ։ Տեսնելով և այն, որ իր աղաղակն էլ ընդունուեց իբրև բոլորովին բնական ու սպասելի բան, որ ոչինչ փոփոխութիւն չէր կարող առաջ բերել, նա լաց եղաւ, զգալով, որ պէտք է հպատակուել իր վրայ կատարուած անարդարութեանը, որ այնքան անգութ բան էր և այնքան զարմանք պատճառ էր իրան։ Զարմացնում էր նրան մանաւանդ այն, որ իրան այդպէս անվրէպաբար դատապարտեցին տղամարդիկ,—չասել, ոչ ծեր տղամարդիկ, այն տղամարդիկ, որոնք միշտ այնքան փաղաքշաբար էին նայում նրա վրայ։ Դրանցից մէկին,—դատախազի օգնականին,—նա մի ժամանակ բոլորովին ուրիշ տրամադրութեան մէջ էր տեսել։ Հէնց այսօր էլ, այն միջոցին, երբ նա կալանաւորների սենեակում նստած սպասում էր դատի սկսուելուն, ինչպէս նաև նիստի ընդմիջումների ժամանակ, նա տեսնում էր, թէ ինչպէս այդ տղամարդիկ, ձեացնելով, թէ ուրիշ գործով են գնում, անց էին կենում դռան մօտով կամ մտնում էին սենեակը միմիայն այն նպատակով, որ նայէին նրա վրայ։ Եւ յանկարծ այդ նոյն տղամարդիկ ինչ-որ պատճառով դատապարտեցին նրան տաժանակիր աշխատանքների, չը նայելով, որ նա անմեղ էր այն բանում, ինչում նրան մեղադրում էին։ Նա սկզբում լալիս էր, բայց յետոյ հանդարտուեց և կատարեալ բթացման դրութեան մէջ նստած կալանա-

տրների սենեակում՝ սպասում էր, որ բանտ ուղարկեն իրանց։ Մի բան էր միայն այժմ ուզում նրա սիրտը,—ծխել։ Նրան այդ դրության մեջ գտան Բօչկօվան ու Կարտինկինը, որոնց, դատավճիռը կարդալուց յետոյ, բերեցին նոյն սենեակը։ Բօչկօվան իսկոյն և եթ սկսեց հայհոյել Մասլօվային ու տաժանապարտ անուանել նրան։

—Հը, չատ բան ընկաւ ձեռքդ։ Արդարացար։ Հօ չը կաթողացար դուրս պրծնել, անզգամ։ Հօ կերար, արժան պատիժդ ստացար։ Սիբիրում հօ չես կարող չարունակել ֆրանտութիւնդ։

Մասլօվան նստած էր, ձեռքերը խալաթի թևքերի մէջ խրած ու գլուխը ցած քաշ արած և անշարժ նայում էր, երկու քայլաչափ դէպի առաջ, կոխառուած տախտակամածին։ Լսելով Բօչկօվայի հայհոյանքը, նա ասաց միայն.

—Ես հօ ձեռք չեմ տալիս ձեզ, դուք էլ հանգիստ թողէք ինձ։ Ես հօ ձեռք չեմ տալիս ձեզ,—կրկնեց նա մի քանի անգամ ու յետոյ բոլորովին լռեց։ Կենդանացաւ նա միայն այն ժամանակ, երբ Բօչկօվային ու Կարտինկինին տարան ու ներս մտաւ սպասաւորը, որ երեք ռուբլի փող բերեց նրան։

—Դո՛ւ ես Մասլօվան,—հարցրեց նա։

—Աւ, աղջիկպարոնը ուղարկեց քեզ,—ասաց նա, տալով փողը։

—Ի՞նչ աղջիկպարոն։

—Դէ վեր կալ, գլուխ չունեմ քո հետ երկար ու բարակ խօսելու։

Այդ փողը Կիտաևան էր ուղարկել։ Դատարանից դուրս գալիս նա դիմեց դատական պրիստաւին, հարցնելով, թէ կարող էր արդեօք մի քիչ փող ուղարկել Մասլօվային։ Դատական պրիստաւը ասաց, որ կարող է։ Թոյլտուութիւնը ստանալով, Կիտաևան թխլիկ ու սպիտակ ձեռքից հանեց քարայծենիի (замшевый) երկար կոճակաւոր ձեռնոցը, մետաքսէ չրջազգեստի յետևի գրպանից հանեց մօդայական քսակը և իր վաստակած արժէքղթերից նոր կտրած կտրօնների բաւական մեծ քանակութիւնից ընտրելով մէկը,—2 ր. 50 կ. արժողութեամբ,—ու աւելցնելով վրան երկու քսան կոպէկանոց ու մի հատ տաս կոպէկանոց, տուեց պրիստաւին։ Պրիստաւը կանչեց սպասաւորին ու նուիրատուի ներկայութեամբ յանձնեց այդ փողը նրան։

—Ինդրեմ, ճշտութեամբ յանձնէք,—ասաց Կարօլինա Ալբերտօվնան սպասաւորին։

Սպասաւորը նեղացաւ այդ անվստահութիւնից, և այդ էր պատճառը, որ նա այնպէս զայրացած խօսեց Մասլօվայի հետ։

Մասլօվան ուրախացաւ փող ստանալով, որովհետև այդ

փողով նա կարող էր ձեռք բերել այն, որ նրա միակ ցանկութեան առարկան էր այժմ։

«Ա՜խ, մի կերպ պապիրօս ընկնէր ձեռքս ու ծուխը ծծէի», մտածում էր նա և նրա բոլոր մտածմունքները կենտրոնացան ծխելու ցանկութեան վրայ։ Այնքան սաստիկ էր նրա մէջ այդ ցանկութիւնը, որ նա ագահաբար ներս էր ծծում օդը, երբ նրա մէջ զգացուում էր թուխունի ծխի հոտ, որ լցուում էր միջանցքը առանձնասենեակի դռնից։ Բայց պէտք եղաւ դեռ երկար սպասել, որովհետև քարտուղարը պէտք է նրան բաց թողնէր գնալու, իսկ նա մոռացել էր մեղադրեալների մասին և սկսել էր փաստաբաններից մէկի հետ խօսել ու վիճել ինչ-որ յօդուածի մասին։

Վերջապէս, ժամի 4-ից անց նրան բաց թողեցին և նրան ուղեկցող երկու պահապան զինուորները դուրս տարան նրան դատարանի յետին դռնից։ Դեռ դատարանի սրահից դուրս չեկած, Մասլօվան 20 կոպէկ տուեց զինուորներից մէկին ու խընդրեց հաց ու պապիրօս առնել։ Զինուորը ծիծաղեց, վերցրեց փողը ու ասաց՝ «Շատ լաւ, կ'առնեմ», և յիրաւի աղնուաբար առաւ հացն էլ, պապիրօսն էլ ու յետ տուեց փողի մնացորդը։ Ճանապարհին չէր կարելի ծխել, այնպէս որ բանտին մօտենալիս էլ Մասլօվան զղում էր ծխելու՝ յագուրդ չը ստացած սաստիկ ցանկութիւն։ Այն միջոցին, երբ նա հասաւ բանտի դռանը, երկաթուղու գնացքից բերեցին հարիւրի չափ կալանաւորներ։ Միջանցքում նա հանդիպեց նրանց։

Կալանաւորները—միրուքաւոր ու ածիլուած, ծեր ու երիտասարդ, ռուս ու այլազգի, ոմանք՝ գլուխների կէսը ածիլած—մատն նկքան զրնգզրնգացնելով ոտների չղթաները և լցրեցին սրահը փոշիով, ոտնաձայնով, խօսակցութեան աղմուկով և քրտինքի կծու հոտով։ Մասլօվայի կողքով անցնելիս նրանք՝ բոլորն էլ չուռ էին գալիս, նայում նրան, իսկ ոմանք մօտենում էին նրան ու սկսում հետն ընկնել։

—Ա՜յ աղջիկ, լաւն է, ես իմ Աստուածը,—ասաց մէկը։

—Բարև, քեռակին,—ասաց մի ուրիշը, աչքով անելով։ Մէկն էլ,—սև բեխերով, ածիլած երեսով ու կապոյտին տուող ածիլած ծործորակով մի թուխ-թուխ կալանաւոր,—վազ տուեց նրա մօտ, զրնգզրնդան չղթաների մէջ կապ ընկնող ոտներով, ու դրկեց նրան։

—Հը՛, չը ճանաչեցիր սիրեկանիդ։ Բաւական է քրքրուես, բացականչեց նա, ժանիքները բաց անելով ու աչքերը պսպղացնելով, երբ Մասլօվան յետ դրեց նրան։

—Այդ ինչ ես անում, որիկայ,—գոռաց, ձեռնից օտնալով, բանտապետի օգնականը։

Կալանաւորը կուչ եկաւ ու ձեռաց յետ քաշուեց։ Իսկ օգնականը վրայ պրծաւ դէպի Մասլօվան։

—Դու ինչ ես անում այտեղ։

Մասլօվան ուզում էր ասել, որ իրան նոր բերեցին դատարանից, բայց այնպէս յոգնել էր, որ ալարում էր խօսել։

—Դատարանից է, ձերդ բարձննդութիւն,—ասաց ուղեկցող զինուորներից աւագը, դուրս գալով անցնողների առջեւ և ձեռքը տանելով գլխարկին։

—Դէ ուրեմն յանձնիր գլխաւոր բանտապահին։ Թէ չէ ինչ անկարգութիւն է այդ։

—Լաւում եմ, ձերդ բարձննդութիւն։

—Սօկօլօվ։ Ընդունիր,—գոռաց բանտապետի օգնականը։

Գլխաւոր բանտապահը մօտեցաւ, բարկացած հրեց Մասլօվայի ուսին ու, գլխով նշան անելով, տարաւ նրան կանանց միջանցքը։ Կանանց միջանցքում նրան ոսից մինչեւ գլուխ արնաղեցին, խուզարկեցին և վրան ոչինչ չը գտնելով (պապիրօսի արկղիկը խրել էր հացի մէջ), նոյն տարան նոյն սենեակը, որտեղից նա դուրս էր եկել առաւօտեան։

XXX

Մասլօվայի կալանաւորութեան սենեակը 9 արշին երկայնութեամբ ու 7 արշին լայնութեամբ մի երկարուկ սենեակ էր՝ երկու պատուհանով, դուրս ընկած ու գալը վրայից թափած վառարանով և չորացած տախտակներից բաղկացած տախտերով, որոնք բռնում էին ամբողջ տարածութեան երկու երրորդական մասը։ Մէջանդում, դռան դիմացը, կար մի հատ մշնագոյն սուրբ պատկեր, որին մի մեղրամոմ էր կպցրած, իսկ մոմի տակը կախուած էր անթառամ ծաղիկների մի փոշոտած փունջ։ Դռան յետեւում ձախակողմը տախտակամածի վրայ երեում էր մի սևացած տեղ, ուր դրուած էր մի գարչահոտ աման։ Հէնց նոր տեղի էր ունեցել վերաատուգումը և կանանց արդէն կողպել էին իրանց սենեակներում գիշերուան համար։

Այդ սենեակում տասնհինգ հոգի էին կենում,—տաններկու կին և երեք երեխայ։

Դեռ բոլորովին լոյս էր և կանանցից միայն երկուսն էին պառկած տախտերի վրայ, մէկը,—խալաթը գլխին քաշած,—մի խենթ կին էր, որին կալանաւորել էին անցագիր չունենալու

համար,—դա միշտ քնած էր լինում,—միւսը՝ մի թոզախառաւուր, որ բանտարգելութեան էր դատապարտուած գողութեան համար։ Այդ մէկը քնած չէր, այլ միայն պառկել էր, խալաթը գլխատակը դրած ու աչքերը լայն բացած, և չը հաղալու համար մեծ դժուարութեամբ զսպում էր խոսքը, որ լցրել էր կոկորդը ու խուտուտ էր ածում։ Մնացած կանայք,—բոլորն էլ գլխաբաց ու միայն անթաւի քաթանէ չալմիկներ հագած,—ոմանք տախտերի վրայ նստած կար էին անում, ոմանք էլ պատուհանի մօտ կանգնած նայում էին բակովը անցնող կալանաւորների վրայ։ Կար անող երեք կանանցից մէկը, Կօրաբլեւօվան, Մասլօվային ճանապարհ գնող պառաւն էր, մեայլ տեսքով, խոժոռուած ու խորշոմած դէմքով, կզակի տակին տոպրակի նման կախուած կաշիով, բարձր հասակով, քունքերի կողմը սպիտակ ընկած չէկ մազերի կարճ ծամով ու թէի վրայ մազոտ խալով մի կին։ Այդ պառաւը տաժանակիր աշխատանքների էր դատապարտուած մարդուն կացինով սպանելու համար։ Իսկ մարդուն սպանել էր այն պատճառով, որ նա ծուռ մտքով էր սկսել վարուել նրա աղջկայ հետ։ Կօրաբլեւօվան այդ սենեակի ընտրուած վերակացուն էր և խմիչքեղէն էր ծախում իր ընկերուհիներին։ Նա կարում էր ակնոցը աչքերին և ասեղը գիւղացավարի բռնած իր մեծ աշխատասէր ձեռքերում—երեք մատով հուպ տուած ու ծայրը դէպի ինքը։ Նրա կողքին նստած նոյնպէս քաթանէ տոպրակներ էր կարում կարճ հասակով, պաճոյ քթով և մանր ու սև աչքերով մի սևաւուն բարեհոգի ու չատախօս կին։ Դա առաջ ծառայում էր երկաթուղու դծի վրայ և դատապարտուած էր երեք ամիս բանտարկութեան, որովհետև գնացքը անցնելիս չէր դուրս եկել ու դրօշակը ցոյց տուել և գնացքին դժբախտութիւն էր պատահել։ Կար անող կանանցից երրորդը Ֆեդօսեան էր,—Ֆենիչկան, ինչպէս նրան անուանում էին ընկերուհիները,—սպիտակ ու կարմիր երեսով, մանկական պայծառ ու կապտագոյն աչքերով և փոքրիկ գլխի չուրջը փաթաթած երկու երկար ու չէկ հիւսերով մի բոլորովին ջահել ու չատ սիրուն աղջիկ էր, որ բանտ էր ընկել, որովհետև փորձ էր արել մարդուն թունաւորել։ Նրան մարդու էին տուել 16 տարեկան մատաղ հասակում և նա այդ փորձն արել էր պակուելուց անմիջապէս յետոյ։ Այն 8 ամսուայ ընթացքում, երբ նա երաշխաւորութեամբ բաց թողնուած սպասում էր դատին, նա ոչ միայն հաշտուել էր իր մարդու հետ, այլ և սկսել էր այնպէս սիրել նրան, որ երբ դատի ժամանակը հասաւ, նա ու մարդը ապրում էին իրար հետ ամենայն քաղցրութեամբ ու սիրով։ Զը նայելով, որ թէ մարդը, թէ սկեսրայրը և թէ մանաւանդ սկեսուրը, որ սկսել

էր սաստիկ սիրել նրան, ամեն կերպ աչխատում էին գտած ժամանակ արդարացնել նրան, գատաւորները գատապարտեցին նրան տաժարակիր աչխատանքների։ Այդ բարի, ուրախ և յամառ խաժպիտ Ֆեդոսեան, որի տախտը Մասլօվայի տախտի կողքին էր, ոչ միայն սիրեց Մասլօվային, այլ և պարտք էր համարում հոգ տանել նրա վրայ ու ծառայել նրան։ Ուրիշ երկու հոգի էլ անգործ նստած էին տախտերի վրայ, մեկը,—մօտ քառասուն տարեկան, գունատ ու նիհար դէմքով մի կին, որ մի ժամանակ, երևի, չատ սիրուն էր եղել, իսկ այժմ այդպէս նիհար էր ու գունատ,—երեխային գրկած՝ կաթ էր տալիս երկար ու սպիտակ ծծից։ Նրա յանցանքը նրանումն էր եղել, որ երբ նրանց դիւղից տանում էին մի նորակոչ զինուորի, որին, դիւղացիների կարծիքով, ապօրինի կերպով էին զինուոր տանում, ժողովուրդը պրիստաւի ճանապարհը կտրել էր ու այդ նորակոչին խլել ձեռքիցը, իսկ այդ կինը, որ ապօրինի կերպով զինուոր տարուողի մօրաքոյրն էր, առաջինն էր եղել այն ձիու սանձը բռնողը, որով տանում էին նորակոչին։ Անգործ նստած կանանցից միւսը մի ամբողջապէս խորշոմակալած բարեհոգի պառաւ էր՝ կարճ հասակով, սպիտակ մազերով ու կուզիկ մէջքով։ Այդ պառաւը նստած էր վառարանի կողքի տախտի վրայ և այնպէս էր ձևացնում, իբր թէ ուզում էր բռնել մազերը կարճ խուզած հասուակիր չորս տարեկան մի տղայի, որ քրքջալով վազվզում էր նրա մօտով։ Շապկահանց երեխան վազվզում էր նրա մօտով ու չարունակ կրկնում միևնոյն խօսքերը —հը՞, հօ չը բռնեցիր։ Այդ պառաւը, որ իր որդու հետ միասին մեզադրւում էր հրդեհաձգութեան մէջ, տանում էր իր բանտարկութիւնը ամենայն բարեսրտութեամբ, դարդ անելով միայն իր որդու մասին, որ նրա հետ միաժամանակ նստած էր բանտում, բայց աւելի ևս իր ծերուկի մասին, որ, պառաւի կարծիքով, բոլորովին կ'ոչնչակուէր, որովհետև հարսը տանից հեռացել էր ու նրան լողացնող չը կար։

Բացի այդ եօթ կանանցից, չորսն էլ կանգնած էին բաց պատուհաններից մէկի մօտ և, երկաթէ վանդակներից բռնած, նշաններով ու աղաղակներով բանակցում էին բակով անցնող նոյն կալանաւորների հետ, որոնց Մասլօվան հանդիպեց բանտը մտնելիս։ Այդ կանանցից մէկը, որ բանտարկութեան էր դատապարտուած գողութեան համար, մի խոշոր, ծանրալուծ ու կարմրաչէկ կին էր, կախ ընկած կաշով, սպիտակագեղնագոյն ու պեպէնոտ երեսով, կոներով ու հաստ վզով, որ դուրս էր ցցուած բաց օձիքի մէջից։ Նա պատուհանի միջով խռպոտ ձայնով գոռգոռում էր, արտասանելով անվայել խօսքեր։ Նրա կող-

քին կանգնած էր մի՝ տաս տարեկան աղջկայ հասակ ունեցող անչէնք անշնորհք ու սևուկ կալանաւորուհի, երկար մէջքով ու բոլորովին կարճ ոտներով։ Նրա դէմքը կարմիր էր ու բծոտ, աչքերը սև ու իրարից հեռու-հեռու և շրթունքները կարճ ու հաստ, այնպէս որ չէին ծածկում սպիտակ ու դուրս ցցուած առամները։ Նա ծղրտաձայն ու ընդհատ-ընդհատ ծիծաղում էր, նայելով այն բանին, ինչ որ կատարւում էր բակում։ Այդ կալանաւորուհին, որ պճնամոլութեան պատճառով Խօրօշավկա էր կոչւում, դատի էր ենթարկուած գողութեան և հրկիզութեան համար։ Նրանց յետևին կանգնած էր մի ողորմելի տեսքով, սաստիկ կեղտոտ մոխրագոյն չապկով ու ահագին փորով նիհար ու ջլուտ յղի կին, որ դատի էր ենթարկուած ուրիշի արած գողութիւնը ծածկելու համար։ Այդ կինը չէր խօսում, բայց ամբողջ ժամանակը խրախուսաբար ու խանդաղատօրէն ժպտում էր, նայելով այն բանին, ինչ որ տեղի էր ունենում բակում։ Պատուհանի մօտ կանգնած չորրորդ կալանաւորուհին, որ պատժի էր ենթարկուած դաղտնի գինեվաճառութեան համար, մի թիկնաւէտ ու կարճահասակ գեղջկուհի էր սաստիկ դուրս պրծած աչքերով և բարեհոգի դէմքով։ Այդ կինը,—որ այն պառաւի հետ խաղացող տղայի մայրն էր և բայի այդ տղայից մի եօթ տարեկան աղջիկ էլ ունէր ու երկուսին էլ հետը բերել էր բանտը, որովհետև տանը ոչ ոք չը կար, որ մօտը թողնէր,—միևնոյնի նման նոյնպէս նայում էր պատուհանից, բայց չէր դադարեցնում գովպայ գործելը և հակակրութեամբ խոժոռւում էր ու փակում աչքերը, լսելով բակումը անցնող կալանաւորների ատածները։ Իսկ նրա եօթ տարեկան հերարձակ չէկ աղջիկը, որ չապկահանց կանգնած էր կարմրաչէկ կնոջ կողքին և փոքրիկ ու վարտ ձեռքովը բռնած նրա ներքնազգեստից, յառած աչքերով ուշադրութեամբ ականջ էր դնում այն հայհոյական խօսքերին, որ կալանաւոր կանայք ու տղամարդիկ ատում էին իրար, և չչունչով, կարծես անդիր անելու համար, կրկնում էր մաքսումը։ Տանները կուսերորդ կալանաւորուհին, որ սիրացու աղջիկ էր, խեղդել էր իր զաւակին ջրհորում։ Դա մի բարձրահասակ ու գեղակազմ աղջիկ էր դուրս պրծած աչքերով և խճճուած մազերով, որոնք դուրս էին պրծած կարճ ու հաստ չիկագոյն հիւսի մէջից։ Նա, առանց ամենևին ուշադրութիւն դարձնելու իր չուրջը կատարուածի վրայ, բոլորից ու միայն մի կեղտոտ մոխրագոյն չապիկ հագին, յետ ու առաջ էր գնում սենեակի ազատ մնացած տեղում, յանկարծ արագ չուռ տալով, պատին հասնելիս։

—

XXXI

Երբ կողպեքը զրնգաց և Մասլօվային ներս քցեցին սենեակը, ամենքը չուռ եկան նրա կողմը։ Նոյն իսկ տիրացուի աղջիկը մի րոպէ կանգ առաւ, յօնքերը վեր բարձրացնելով նայեց Մասլօվային, բայց ոչինչ չասաց ու իսկոյն սկսեց յետ ու առաջ գնալ իր լայն-լայն ու վճռական քայլերով։ Կօրաբլեօվան ասեղը խրեց անթափ քաթանի մէջ ու հարցական հայեացքը ակնոցի միջով յառեց Մասլօվայի վրայ։

—Է՜հ, վերադարձար։ Իսկ ես կարծում էի, թէ կ'արդարացնեն,—ասաց նա իր խոպոտ ու հաստ, գրեթէ առնական ձայնով։—Ինչպէս երեւում է, Սիբիր են վճռել։

—Ես ու մօրաքոյրն էլ, հոգիս, խօսում էինք, թէ կարելի է յանկարծ ազատ թողնեն։ Աչխարհք է, ինչ ասես որ չի լինի։ Մարդ որ բարի ժամին է պատահում, դեռ փող էլ են տալիս,—իսկոյն սկսեց խօսել իր երգեցիկ ձայնով բանտապահուհին։—Բայց մեր կարծածի հակառակը դուրս եկաւ։ Աստուծու բաներն է, հոգիս, ով կարող է իմանալ,—միալար խօսում էր նա իր փաղաքշիչ ու քաղցր ձայնով։

—Մի՞թէ դատապարտեցին,—կարեկից քնքշութեամբ հարցրեց Ֆեդօսեան, իր բաց-կապտագոյն մանկական աչքերով նայելով Մասլօվային, և նրա ամբողջ զուարթ ու մատչէ դէմքը այնպէս այլայլուեց, կարծես թէ նա պատրաստւում էր լալ։

Մասլօվան ոչ մի պատասխան չը տուեց և լուռ անցաւ գնաց իր տեղը, որ ծայրից երկրորդն էր, Կօրաբլեօվայի կողքին, ու նստեց իր տախտի վրայ։

—Ով գիտի իսկի բան չես կերել,—ասաց Ֆեդօսեան, տեղից վեր կենալով ու մօտենալով Մասլօվային։

Մասլօվան, առանց պատասխան տալու, ձեռքի հացը դրեց գլխավերեւը ու սկսեց հանուել,—հանեց փոչոտած խալաթը և սև ու զանգուր մազերի վրայից կապած գլխաչորը ու նըստեց։

Տախտի միւս ծայրում երեխայի հետ խաղացող կուզիկ պառաւը նոյնպէս մօտեցաւ Մասլօվային ու կանգնեց նրա դիմացը։

—Ծ՜ը, ց՜ը, ց՜ը,—բացականչեց նա, կարեկցաբար թափ տալով գլուխը։

Տղան նոյնպէս մօտեցաւ պառաւի յետեւից և լայն չռելով աչքերը ու անկիւնաձև դուրս ցցելով վերին շրթունքը, աչքը յառեց Մասլօվայի բերած հացերի վրայ։ Այն բոլորից յետոյ,

ինչ որ պատահել էր այդ օրը իրան, տեսնելով այդ բոլոր հաճելի դէմքերը, Մասլօվան քիչ մնաց որ լար և նրա չրթունքները դողդողացին։ Բայց նա աչխատում էր զսպել լացը և կարողանում էր զսպել, մինչև այն ժամանակ, երբ մօտեցան նրան պառաւն ու փոքրիկ տղան։ Բայց երբ լսեց պառաւի բարի ու կարեկցական բացականչութիւնը և տեսաւ երբ աչքերը հանդիպեցին երեխայի աչքերին, որ իր լուրջը հայեացքը հացերից դարձրել էր նրա վրայ, նա այլ ևս չը կարողացաւ լացը պահել։ Ամբողջ դէմքը դողդողաց և նա սկսեց հեկեկալ։

—Ես քեզ ասում էի, որ կարդին փաստաբան գտնես,—ասաց Կօրաբլեօվան։—Հը, Սիբիր վճռեցին,—հարցրեց նա։

Մասլօվան ուզում էր պատասխանել, բայց չը կարողացաւ և առանց խօսելու, հեկեկալով, հանեց հացի մէջից պապիրօսների արկղիկը, որի վրայ նկարուած էր մի չատ բարձր սանրուած մազերով ու եռանկիւնաձև բաց կրծքով կարմրերես կին, ու տուեց Կօրաբլեօվային։ Կօրաբլեօվան նայեց պատկերին, յանդիմանօրէն չարժեց գլուխը, դէսուդէն սրտի համար, որ Մասլօվան այդպէս անպէտք կերպով էր ծախսում փողերը, և մի պապիրօս հանելով, կպցրեց՝ լամպի վրայ բռնելով ներս ծծեց ծուխը ու յետոյ տուեց Մասլօվային։ Մասլօվան, առանց լացը դադարեցնելու, սկսեց ագահաբար կում-կում ծծել ու յետոյ բաց թողնել թուխթունի ծուխը։

—Տաժանակիր աչխատանքներ,—ասաց նա հեծկլտալով։

—Աստուած չունեն այդ անիծած արիւնախում գաղանները,—ասաց Կօրաբլեօվան։—Անմեղ տեղը Սիբիր են քչում խեղճ աղջկան։

Այդ ժամանակ մի բարձրաձայն քրքիջ լսուեց պատուհանի մօտ մնացած կանանց կողմից։ Փոքրիկ աղջիկն էլ էր ծիծաղում և նրա մանկական բարակ ծիծաղը խառնւում էր մեծերի խըռպոտ ու ծղրտաձայն ծիծաղին։ Բակում եղող կալանաւորը այնպիսի մի բան էր արել, որ պատճառ էր դարձել այդ քրքիջին։

—Այ դու էշի ձագ։ Տես թէ ինչ է անում,—ասաց կարմրաչեկ կինը ու օրօրուելով իր ամբողջ դէմ մարմնով և երեսը վանդակին կպցրած, սկսեց աղաղակելով արտասանել անմիտ ու անվայել խօսքեր։

—Ինչ ես ձայդ գլուխդ քցել, թմբուկի կաշի,—ասաց Կօրաբլեօվան, գլուխը թափ տալով կարմրաչեկ կնոջ վրայ, ու յետոյ—նորից դարձաւ դէպի Մասլօվան։—Բանի տարով։

—Չորս,—ասաց Մասլօվան, ու արտասուքները սկսեցին այնքան առատ հոսել, որ մի կաթիլ ընկաւ պապիրօսի վրայ։

Մասլօվան բարկացած ճմռեց ու դէն քցեց այդ պապիրօսը և վերցրեց ուրիշը։

Բանտապահուհին, չը նայելով, որ ինքը չէր ծխում, իսկոյն վերցրեց գետնից թերծուխ պապիրօսը ու սկսեց չիռկել ու հետն էլ խօսել։

—Ինչպէս երևում է, հոգիս,—ասում էր նա,—ճիշտ որ արդարութիւնը խոզերը կերել են։ Ինչ ուզում են՝ անում են։ Իսկ մենք գուշակում էինք, թէ քաց կը թողնեն։ Մատֆեևիչնան ասում էր քաց կը թողնեն, իսկ ես ասում էի, չէ, հոգիս, սիրտը վկայում է, որ կը կորցնեն. իմ ասածը դուրս եկաւ,—ասում էր նա, ակներևաբար առանձին հաճոյքով լսելով իր ձայնի ելևէջները։

Այդ ժամանակ արդէն բոլոր կալանաւորները անցել էին բակովը և նրանց հետ խօսող կանայք հեռացել էին պատուհանից ու մօտեցել Մասլօվային։ Առաջինը մօտեցաւ դուրս պրծած աչքերով գաղտնի պինեվաճառ կինը իր փոքրիկ աղջկայ հետ։

—Հը՛, չատ թոնդ վճռեցին,—հարցրեց նա, նստելով Մասլօվայի կողքին ու չարունակելով արագ-արագ գործել գուլպան։

—Փող որ չը լինի, ի հարկէ թոնդ կը վճռեն։ Փող որ ունենար ու մի ճարպիկ փաստաբան վարձէր, անպատճառ կարդարացնէին,—ասաց Կօրաբլեօվան։—Այն,—ինց է անունը,—վրչտա ու մեծաքիթ փաստաբանը ում ասես որ չրիսը չոր-չոր չը հանի։ Այ եթէ նրան վարձած լինէր։

—Ինց չէ, կը վարձէր,—ժանիքները բանալով՝ ասաց Խօրօչավկան, որ նոյնպէս եկել նստել էր նրանց կողքին,—նրան՝ որ հազարից պակաս տաս, թքել էլ չի ուզի։

—Էհ, ինչպէս երևում է ճակատիդ գիրն է այդպէս,—մէջ մտաւ հրկիզութեան համար բանտարկուած պառաւը։—Տղիս ձեռքից այն անիծածը կնկանը խլեց ու դեռ իրան էլ բանտը դրեց, որ այտեղ ոջիլներ չատացնի, ինձ էլ, օր ծերութեան նրա հետ,—հարբւբերորդ անգամ սկսեց նա պատմել իր գլխին եկածը։—Ասած է, որ մուրացկանութիւնից ու բանտից փախչել չի լինի։ Կամ դռնէ դուռ պէտք է մանգաս, կամ բանտը նստես։

—Երևում է, դրանք միշտ այդպէս են,—ասաց գաղտնի պինեվաճառը և նայելով աղջկայ գլխին, գուլպան մի կողմ դրեց, աղջկան քաշեց ոտների արանքը ու սկսեց արագ-արագ քութեթել նրա գլուխը։—Ասում են, «ինչո՞ւ ես գինի ծախում»։ Հապա ինչո՞վ պէտք է երեխաներիս պահէի,—ասում էր նա, չարունակելով իր սովորական գործը։

Նրա այդ խօսքերը Մասլօվայի միտքը քցեցին գինին։

—Մի քիչ օղի տաս,—ասաց նա Կօրաբլեօվային, ջապկի թևքով սրբելով արտասուքը և երբեմն-երբեմն հեծկլտալով։

—Առիւծի կաթ։ Ինչու՞ չէ, տուր տեսնենք, ինչ ես տալիս, ասաց Կօրաբլեօվան։

XXXII

Մասլօվան հացի մէջից հանեց փողերը ու մի կարօն տուեց Կօրաբլեօվային։ Կօրաբլեօվան առաւ կտրօնը, նայեց և, թէև գրագէտ չէր, բայց հաւատաց ամենագէտ Խօրօչավկային, որ այդ թուղթը արժէ 2 ր. 50 կ., ու ձեռը տարաւ վառարանի օդանցքը օղիի չիչը հանելու։ Այդ տեսնելով, այն կանայք, որոնք նրա տախտապրայինները չէին, ցրուեցին իրանց տեղերը։ Իսկ Մասլօվան մինչ այդ թափ տուեց փոչին գլխաչորի ու խալաթի վրայից, բարձրացաւ նստեց տախտի վրայ ու սկսեց ուտել հետը բերած հացը։

—Ես քեզ համար թէյ եմ պահել, բայց, կարծեմ, սառել է,—ասաց նրան Ֆեդօսեան, դարակի վրայից վերցնելով ոտի փաթաթանի մէջ փաթաթած թիթեղէ թէյամանը և գաւաթը։

Խմիչքը բոլորովին սառն էր և աւելի թիթեղի համ էր տալիս, քան թէյի, բայց Մասլօվան լցրեց գաւաթը ու սկսեց խմել։

—Ֆինաչկա, առ,—ձայն տուեց նա և հացի մի կտոր կըտրելով՝ տուեց փոքրիկ տղային, որ աչքը նրա բերնից չէր հեռացնում։

Մինչ այդ՝ Կօրաբլեօվան բերեց օղիի չիչն ու գաւաթը։ Մասլօվան հիւրասիրեց Կօրաբլեօվային ու Խօրօչավկային։ Այդ երեք կալանաւորուհիները կազմում էին այդ սենեակի արիստոկրատիան, որովհետև փող ունէին և իրար մէջ բաժանում էին ունեցածները։

Մի քանի րոպէ անցած Մասլօվան կենդանացաւ ու սկսեց վրայ տալով պատմել դատի մասին, դատախազի ձևն անելով և առհասարակ ներկայացնելով այն բոլորը, ինչ որ առանձին տպաւորութիւն էր գործել նրա վրայ։ Նրա վրայ առանձին տպաւորութիւն էր գործել այն բանը, որ, ինչպէս ինքը դիտել էր, տղամարդիկ, ուր էլ լինէր ինքը, ընկնում էին իր ցանցից։ Դատարանում ամենքը նայում էին իր վրայ,—պատմում էր նա,—և անդադար դիտմամբ այդ բանի համար մանում էին կալանաւորների սենեակը։

—Պահապան գինուորն էլ էր ասում,—տես, քեզ մարիկ տալու համար են չարունակ գալիս։ Գալիս է, օրինակ, մէկը ու հարցնում, թէ ուր է այս ինչ թուղթը կամ մի ուրիշ այդպիսի բան, բայց լաւ տեսնում եմ, որ ինչ թուղթ, ինչ բան, քիչ է մնում աչքերով ինձ ուտի,—ասում էր Մասլօվան, ժպտալով և կարծես տարակուսանքով ինքի տալով գլուխը։—Ի՞նչ պտուղներ են։

—Հա, այդպէս են դրանք,—վրայ բերից պահապանի կինը ու սկսեց պատմացնել իր երգեցիկ ձայնով։—Ինչ որ ձանձը հաւաքուեն մեղրի վրայ։ Գործ որ լինի, հազար վերստ հեռու կը փախչեն, բայց այդ բանի համար մեռած են։ Հայ մի տաք ուտեն, ջուր մի տուր խմեն...

—Հապա այստեղ,—ընդհատեց նրան Մասլօվան։—Այստեղ էլ այդպիսի ցաւի մէջ ընկայ։ Երբ որ ինձ դատարանից բերեցին, կայարանից էլ մի խումբ կալանաւորներ բերեցին։ Ջիւթի նման կպան ինձնից. չէի իմանում ինչպէս պրծնեմ ձեռքներիցս։ Աստուած բարի տայ նրան, բանտապետի օգնականը բերից։ Աստուած բարի տայ նրան, բանտապետի օգնականը բարկացաւ վրանները, քշեց մօտից։ Մէկը այնպէս էր կպել, որ հազիւ հաղ հոգիս ազատեցի։

—Ի՞նչ կերպարանքի մարդ էր,—հարցրեց Խօրօշավկան։

—Թուխ էր. բեխեր ունէր։

—Հէնց նա է որ կայ։

—Ո՞վ։

—Շչեգլօվը։ Այն, որ նոր անց կացաւ։

—Ի՞նչ Շչեգլօվ է այդ։

—Վա՛, չես իմանում՝ ով է։ Երկու անգամ փախել է Սիբիրից։ Այժմ նորից բռնել են, բայց էլի կը փախչի։ Վերակացուներն էլ վախենում են նրանից,—ասաց Խօրօշավկան, որ կալանաւորների տոմսակ տանող-բերողն էր և գիտէր ամէն բան, ինչ որ կատարւում էր բանտում։—Անպատճառ կը փախչի։

—Ի՞նչ անենք որ կը փախչի, մեզ հո հետը չի տանելու,—ասաց Կօրաբլեօվան։—Դու այն ասա մեզ,—դիմեց նա Մասլօվային,—արդեօք ինչ ասաց քեզ խնդիրքի մասին, չէ որ հէնց հիմա պէտք է տալ։

Մասլօվան պատասխանեց, որ ինքը ոչինչ չը գիտի։

Այդ միջոցին կարմրաչէկ կինը, ոչխէնոտ ձեռքերը խիտ ու խճճուած կարմրաչէկ մազերի մէջ խրած ու եղունգներով քոթելով գլուխը, մօտեցաւ օդի խմող արիստոկրատուհիներին։

—Ես քեզ, կատերինա, կ'ասեմ բոլորը, ինչ որ պէտք է անել,—սկսեց նա։—Առաջ ու առաջ, պէտք է թուղթ տաս, թէ

անբաւական ես մնացել վճռից, իսկ յետոյ պէտք է պրօկուրօրին յայտնես։

—Քեզ ինչ,—զայրացկոտ թաւ ձայնով դիմեց նրան Կօրաբլեօվան։—Օղու հոտ ես առել, հա, նաղլներ մի պատմի։ Առանց քեզ էլ լաւ գիտենք, թէ ինչ պէտք է անել. քո օգնութեան պէտք չունենք։

—Դու ինչ ես մէջ ընկնում. քեզ հետ ոմ է խօսում։

—Օղի է ուզում սիրտդ, դրա համար էլ մօտ-մօտ ես անում։

—Լաւ, լաւ, տուր իրան խմի,—ասաց Մասլօվան, որ միշտ ամենքին բաժանում էր իր ունեցած-չունեցածը։

—Ես նրան այնպէս կը տամ, որ...

—Դէ տուր տեսնենք,—վրայ գալով դէպի Կօրաբլեօվան, ասաց կարմրաչէկ կինը։—Երեխայ ես գտել վախացնես։

—Դէ կորի, անզգամ։

—Անզգամի ձայն եմ լսում։

—Շան թափան։

—Ե՛ս եմ թափանը։ Սիբիրական, ժարգասական,—գոռաց կարմրաչէկ կինը։

—Հեռացիր, ասում եմ,—մռայլ կերպով ասաց Կօրաբլեօվան։

Բայց կարմրաչէկ կինը աւելի ու աւելի էր մօտենում, և Կօրաբլեօվան հրեց նրա բաց ու դէր կուրծքը։ Կարմրաչէկ կալանաւորուհին կարծես հէնց դրան էր սպասում և անակնկալ արագ շարժումով մի ձեռքով պինդ բռնեց Կօրաբլեօվայի մազերից, իսկ միւսով ուզում էր խփել նրա երեսին, բայց Կօրաբլեօվան բռնեց այդ ձեռքը։ Մասլօվան ու Խօրօշավկան բռնեցին կարմրաչէկ կալանաւորուհու ձեռքերից ու աշխատում էին ազատել Կօրաբլեօվային, բայց չէին կարողանում բռնել մազերի հիւսը պինդ հուպ տուած ձեռքը։ Կարմրաչէկ կալանաւորուհին մի բուռ բաց թողեց մազերը, բայց նրա համար, որ իսկոյն և եթ փաթաթի բռունցքի չուրջը։ Իսկ Կօրաբլեօվան, գլուխը ծռած, մի ձեռքով թակում էր կարմրաչէկ կնոջ մարմինը ու աշխատում ատամներով բռնել նրա ձեռքը։ Բոլոր կանայք խռնուեցին կռուողների չուրջը և գոռգոռում էին ու աշխատում բաժանել նրանց իրարից։ Նոյն իսկ Թռքախտաւորը մօտեցաւ ու անզգամ հազալով՝ նայում էր կռուողներին։ Երեխաները, իրար կուշ եկած, լալիս էին։ Աղմուկը լսելով՝ ներս եկան վերակացուհին ու վերակացուն։ Կռուողներին բաժանեցին, և Կօրաբլեօվան, արձակելով սպիտակած հիւսը ու դուրս տալով մազերի պոճոկած կտորները, իսկ կարմրաչէկ կալանաւորուհին, ձեռքով պահելով ամբողջապէս գզգզուած չապիկը

դեղնագոյն կրծքի վրայ,—երկուսն էլ գոռգոռում էին և բացատրում ու գանգատուում։

—Ես գիտեմ, անիծած օղին է բոլորի պատճառը. այ, վաղը կ'առնեմ բանտապետին, մի լաւ կը չըշպռի ձեզ։ Հոտը առնում եմ,—ասում էր վերակացուհին։—Տեսէք, ձեռաց ամեն բան պառակեցէք, թէ չէ վատ կը լինի,—գլուխ չունենք արդարն ու մեղաւորը ջոկելու։ Կորէք տեղներդ ու առաւ կացէք։

Բայց դեռ երկար ժամանակ լռութիւն չէր հաստատուում։ Դեռ երկար ժամանակ կանայք հայհոյում էին միմեանց ու պատմում իրար, թէ ինչպէս սկսուեց կռիւը և ով է մեղաւոր։ Վերջապէս, վերակացուն ու վերակացուհին գնացին և կանայք սկսեցին հանդարտուել ու պառկուել։ Պառաւը կանգնեց սրբի պատկերի առաջ ու սկսեց աղօթել։

—Իրաւ գտել են երկու սիբիրականները,—յանկարծ խըռպոտ ձայնով սկսեց կարմրաչէկ կալանաւորուհին տախտերի միւս ծայրից, ամեն մի խօսք համեմելով ամենատարօրինակ ու թունդ հայհոյանքներով։

—Հ՞ը, սիրտդ էլի գոռոզ է ուզում,—իսկոյն պատասխանեց Կօրաբլեօվան և աւելացրեց Նոյնպիսի հայհոյանքներ։ Ու երկուսն էլ լռեցին։

—Ափսոս չը թողեցին, թէ չէ աչքերիդ պլպլիկները կը հանէի... Նորից սկսեց կարմրաչէկ կալանաւորուհին ու իսկոյն և եթ ստացաւ Նոյնպիսի մի պատասխան Կօրաբլեօվայից։

Նորից տիրեց լռութիւն, որ այս անգամ մի քիչ աւելի տևեց, ու յետոյ նորից սկսուեցին հայհոյանքները։ Այնուհետև ընդմիջումները աւելի ու աւելի երկար էին լինում, մինչև որ, վերջապէս, ամեն ինչ բոլորովին հանդարտուեց։

Ամենքը պառկած էին։ Ոմանք սկսեցին խռռացնել։ Ջէին պառկած միայն պառաւը, որ միշտ երկար աղօթում էր և այժմ դեռ ծունր էր դնում սրբի պատկերի առաջ, և մէկ էլ տիրացուի աղջիկը, որ, վերակացուհու դուրս գալուն պէս, վեր կացաւ տեղիցը ու նորից սկսեց գնալ-գնալ սենեակում։

Մասլօվայի քունը չէր տանում. նրա մտքիցը չէր դուրս գալիս այն, որ ինքը այժմ սիբիրական է. արդէն երկու անգամ նրան հայհոյեցին այդ անունով առաջ Բօչկօվան, յետոյ կարմրաչէկ կալանաւորուհին։ Սեղմը չէր կարողանում ընտելանալ այն մտքին, որ ինքը սիբիրական է։

Կօրաբլեօվան, որ պառկած էր մէջքը դէպի նա, չուռ եկաւ տեղումը։

—Ում մտքովը կ'անցնէր այդպիսի բան,—ցած ձայնով ասաց Մասլօվան։—Ուրիշները ինչ ասես անում են ու ոչինչ, իսկ ես անմեղ տեղովս պէտք է տանջուեմ։

—Դարդ մի անիլ, աղջիկ։ Սիբիրում էլ մարդիկ են ապրում։ Դու այնտեղ էլ չես կորչի,—մխիթարում էր նրան Կօրաբլեօվան։

—Գիտեմ, որ չեմ կորչի, բայց էլի մարդուս վատն է թըւում։ Ես լաւ կեանքի եմ սովոր և ուրիշ բանի էի արժանի։

—Աստուծու կամքի հակառակ ով կարող է գնալ,—յոգոց քաշելով ասաց Կօրաբլեօվան։—Նրա կամքի հակառակ չես կարող գնալ։

—Գիտեմ, մօրքոյր, բայց էլի սիրտս այրւում է։

Երկուսն էլ լռեցին։

—Լսում ես։ Ականջ դիր այն տուտուզին,—ասաց Կօրաբլեօվան, Մասլօվայի ուշադրութիւնը գարձնելով տախտերի միւս կողմից լսուող տարօրինակ ձայնի վրայ։

Կարմրաչէկ կնոջ զսպած հեկեկանքների ձայնն էր այդ։ Նա լալիս էր այն պատճառով, որ մի րոպէ առաջ իրան հայհոյեցին, ծեծեցին ու օղի չը տուեցին խմելու, մինչդեռ սիրտը սաստիկ ուզում էր խմել։ Նա լալիս էր և այն պատճառով, որ իր ամբողջ կեանքի ընթացքում ոչինչ չէր տեսել բայի հայհոյանքից, ծաղրից, վիրաւորանքից ու ծեծից։ Նա ուզում էր ինքն իրան մխիթարել, ժաւրերելով իր առաջին սէրը դէպի գործարանական բանուոր Ֆեդկա Մօլօդենկօվը, բայց, յիշելով այդ սէրը, նա յիշեց և այն, թէ ինչպէս էր վերջացել այդ սէրը։ Իսկ այդ սէրը վերջացել էր նրանով, որ Մօլօդենկօվը, հարբած ժամանակ, կատակի համար արշաւած էր քաել նրա երեսին ու յետոյ, ընկերների հետ, հռհռում էր, նայելով, թէ ինչպէս է նա գալարւում ցաւից։ Նա յիշեց այդ բանը և խեղճն ակաւ իր վրայ ու կարծելով, թէ ոչ ոք չի լսում իր ձայնը, սկսեց լալ և լալիս էր երեխաների նման—մանրաքալով, քիթը ֆնչացնելով ու աղի արտասուքները կուլ տալով։

—Մեղքս գալիս է,—ասաց Մասլօվան։

—Մեղք է, ի հարկէ, բայց ինչո՞ւ հանգիստ չի կենում։

XXXIII

Երբ միւս առաւօտ Նեխլիւդօվը զարթնեց, նրա առաջին զգայմունքն այն եղաւ, որ իրան ինչ-որ մի բան է պատահել, և մինչև անգամ դեռ չը յիշած, թէ ինչ էր այդ պատահածը, նա արդէն գիտէր, որ ինչ որ լուրջ ու լաւ բան է պատահել։ «Կատիւշան, գատարանը»։ Այո՛, և պէտք է դադարել ատելուց ու ասել

ամբողջ ճշմարտութիւնը։ Եւ ինչ զարմանալի զուգադիպութիւն, —այդ նոյն առաւօտը, վերջապէս, սառցուեց աղնուականուհի Թեան պարագլխի կնոջից, Մարիա Վասիլիեվնայից, այնքան վաղուց ապատուած նամակը, որ առանձնապէս հարկաւոր էր նրան այժմ։ Մարիա Վասիլիեվնան կատարեալ ազատութիւն էր տալիս նրան, բախտաւորութիւն էր բարեմաղթում նրան ամուսնական մէջ։

—Ամուսնութիւն,—ասաց նա հեգնօրէն։—Որքան հեռու եմ ես այժմ այդ բանից։

Եւ նա յիշեց իր երէկուան մտադրութիւնը ամէն ինչ ասել այդ կնոջ ամուսնուն, խոստովանել իր մեղքերը նրա առաջ և պատրաստականութիւն յայտնել ամէն կերպ բաւարարութիւն տալու նրան։ Բայց այս առաւօտ այդ այնքան հեշտ չէր թւում նրան, որքան երէկ։ «Բայի այդ, ինչու զուր տեղը անբախտացնեմ այդ մարդուն, որ դեռ ոչինչ չը գիտէ։ Եթէ ինքը հարցնի, ուրիշ բան է, այն ժամանակ կ'ասեմ։ Բայց դիտմամբ գնալ այդ բանն ասելու համար։ Չէ, պէտք չէ»։

Միտքին ամէն ինչ ճշմարտութեամբ ասելն էլ դժուար էր թւում այդ առաւօտ։ Այդ դէպքումն էլ չէր կարելի սկսել այդպիսի խօսակցութիւն, որովհետև այդ վիրաւորական կը լինէր։ Ինչպէս կենսական չատ ուրիշ յարաբերութիւնների մէջ, այդ դէպքումն էլ անհրաժեշտ էր, որ մնար մի բան, որ պէտք է զուշակելով հասկանային։ Մի բան միայն վճռեց նա այդ առաւօտ,—այլ ևս չի գնայ նրանց մօտ և, եթէ հարցնեն, ճիշտը կ'ասի։

Բայց Կատիւշայի հետ ունեցած յարաբերութիւնների մէջ ոչինչ չը պիտի մնայ անորոշ, կիսատ։

«Կը գնամ բանտը, կ'ասեմ նրան, կը խնդրեմ, որ ների ինձ։ Եւ եթէ պէտք լինի, այո, եթէ պէտք լինի, կը պսակուեմ հետը», մտածում էր նա։

Այդ միտքը, թէ բարոյական բաւարարութեան համար ինքը պէտք է զոհի ամէն ինչ ու պսակուի Կատիւշայի հետ, առանձնապէս խանդաղատանքով էր նրան այդ առաւօտ։

Վաղուց ի վեր նա այդքան եռանդով չէր վեր կացել անկողնից։ Երբ որ Ագրաֆենա Պետրովնան մտաւ սենեակը, նա իսկոյն նկատեց, այնպիսի վճռողականութեամբ, որ ինքն էլ չէր սպասում իրանից, յայտնեց նրան, թէ ինքը այլ ևս կարիք չունի այդ բնակարանին ու նրա ծառայութեանը։

Լևինեան համաձայնութեամբ վճռուած էր, որ նա չարունակում է ապրել այդ տեղն ու թանգ բնակարանում, որպէս զի պսակուի։ Բնակարանը վարձով տալը ուրեմն առանձին նշանակութիւն ունէր։ Ագրաֆենա Պետրովնան զարմացած նայեց նրան։

—Շատ չնորհակալ եմ ձեղնից, Ագրաֆենա Պետրովնա, իմ մասին ունեցած հոգսերիդ համար, բայց այժմ ինձ հարկաւոր չէ ոչ այսպիսի մեծ բնակարան, ոչ էլ որ և է ծառայ։ Իսկ եթէ դուք ուզում էք օգնել ինձ, բարի եղէք կարգադրելու, որ բոլոր բանները հաւաքեն, կապեն, ինչպէս անում էիք մայրիկի օրով։ Յետոյ Նաստչան կը գայ, կը կարգադրի։ (Նաստչան Նեխլիւդովի քոյրն էր)։

Ագրաֆենա Պետրովնան թաւի տուեց գլուխը։

—Ի՞նչպէս հաւաքել։ Ախր պէտք կը գան,—ասաց նա։

—Չէ, պէտք չեն գալ, Ագրաֆենա Պետրովնա, հաստատ, պէտք չեն գալ,—ասաց Նեխլիւդովը, պատասխանելով այն բանին, ինչ որ արտայայտում էր Ագրաֆենան գլուխը թաւի տալով։—Ինդրեմ, օրօնէյին էլ ասէք, որ ոռճիկը այս գլխից տուել եմ երկու ամսուայ համար, բայց նա էլ ինձ հարկաւոր չէ։

—Զուր էք այդպէս անում, Դմիտրիյ Իվանովիչ,—ասաց Ագրաֆենան։—Լաւ, ասենք արտասահման էք գնալու, բայց չէ՞ որ էլի բանների համար տեղ է հարկաւոր։

—Սխալւում էք, Ագրաֆենա Պետրովնա։ Արտասահման չեմ գնալու. եթէ գնամ, բոլորովին ուրիշ տեղ կ'երթամ։

Ասաց ու յանկարծ սաստիկ կարմրեց։

«Այո, պէտք է ասել սրան,—մտածեց նա.—ինչ միտք ունի լռութեան տալը։ Պէտք է՝ ինչ կայ չը կայ՝ ասել բոլորին»։

—Երէկ ինձ մի չատ տարօրինակ ու լուրջ բան պատահեց։ Ծիշտ էք Կատիւշային, որ Մարիա Իվանովնա մօրքոյրի մօտ էր։

—Ի՞նչպէս չեմ յիշում. ես եմ նրան կար սովորեցրել։

—Երէկ ես երդուեալ դատաւոր էի և մենք դատում էինք այդ Կատիւշային։

—Ինձ ազիկ,- ասաց Ագրաֆենա Պետրովնան։—Ինչի՞ համար էիք դատում։

—Սպանութեան համար,—և ժեղաւորը ես եմ։

—Դուք ինչպէս կարող էիք մեղաւոր լինել։ Շատ տարօրինակ բան էք ասում,—ասաց Ագրաֆենա Պետրովնան, և նրա պատաւ աչքերի մէջ կայծեր երևացին։

Նա գիտէր Նեխլիւդովի ու Կատիւշայի մէջ պատահածը։

—Այո, ես եմ պատճառ եղել։ Եւ ահա այդ բանը փոխեց իմ բոլոր ծրագիրները։

—Ի՞նչ փոփոխութիւն կարող էր լինել այդ բանից ձեր վերաբերմամբ,—ասաց Ագրաֆենա Պետրովնան, զսպելով ժպիտը։

—Այն փոփոխութիւնը, որ, եթէ ես եմ եղել պատճառը,

որ Նա այդ ճանապարհն է բռնել, կը նշանակի ես պէտք է ձեռքիս եկածը անեմ Նրան օգնելու համար։

—Ձեր կամքն է, բայց ինչ մի առանձին մեղք կայ այդտեղ ձեր կողմից։ Ամենքի հետ պատահում է այդ, և եթէ խելօք են լինում, ամեն ինչ չիտկւում է ու մոռացւում ու կարգին ապրում են իրանց համար,—ասաց Ագրաֆենա Պետրօվնան խիստ ու լուրջ եղանակով,—և դուք զուր էք ձեզ մեղադրում։ Ես առաջ էլ լսել էի, որ Նա ուղիղ ճանապարհից մոլորուել է. ինչ անենք, ով է մեղաւոր։

—Ես եմ մեղաւորը։ Ուստի և ուզում եմ ուղղել արածս։

—Էլ ուղղել չատ դժուար է։

—Այդ իմ գործն է։ Իսկ եթէ դուք ձեր մասին էք մտածում, իմացէք, որ այն, ինչ որ մայրիկը ուզում էր...

—Ես իմ մասին չեմ մտածում։ Հանգուցեալից այնքան բարիք եմ տեսել, որ էլ ոչինչ չեմ ցանկանում։ Լիզանկաս ինձ կանչում է իր մօտ (այդ Նրա քրոջ ամուսնացած աղջիկն էր). երբ որ ձեզ հարկաւոր չը լինեմ, կ'երթամ Նրա մօտ։ Բայց դուք զուր էք սրտներդ անհանգիստ անում այդ բանի համար,—ոևմ հետ չի պատահում։

—Ես բոլորովին ուրիշ կարծիքի եմ։ Եւ դարձեալ խնդրում եմ ձեզ օգնել ինձ բնակարանը վարձով տալու և բանը-մանը հաւաքելու։ Համ էլ մի նեղացէք ինձանից։ Ես չատ ու չատ չնորհակալ եմ ձեզնից։

Զարմանալի բան,—այն րոպէից, որ Նեխլիւդովը հասկացաւ, որ ինքը վատ է ու գարչելի ինքն իր աչքում, նոյն րոպէից սկսած ուրիշները այլ ևս գարչելի չէին թւում Նրան. ընդհակառակը, թէ դէպի Ագրաֆենա Պետրօվնան, թէ դէպի կօրնէյը Նա զգում էր գորով ու յարգանք։ Նա ուզում էր կօրնէյի առաջ էլ խոստովանել իր մեղքը, բայց այնքան պատկառալից ու ազդու էր կօրնէյի տեսքը, որ նա սիրտ չարեց Նրա հետ այդ բանի մասին խօսել։

Դատարան գնալիս, միևնոյն կառքով անցնելով միևնոյն փողոցներով, Նեխլիւդովը ինքն իր վրայ զարմանում էր՝ բոլորովին ուրիշ մարդ զգալով իրան այսօր։

Միասի հետ պահուելը, որ դեռ երէկ այնքան մօտալուտ բան էր թւում Նրան, այժմ բոլորովին անհնար էր թւում։ Երէկ Նա իր դրութեան մասին այնպիսի գաղափար ունէր, որ անկասկած հաւատացած էր, թէ Միասին երջանիկ կը զգայ իրան Նրա հետ ամուսնանալով։ Այսօր Նա ինքն իրան անարժան էր համարում ոչ միայն Նրա ամուսինը, այլ և մտերիմը լինել։ «Եթէ Նա իմանար, թէ ինչ տեսակ մարդ եմ ես, անշուշտ կը կարծէր, որ ինձ չընդունեն։ Իսկ ես դեռ մտքումս մեղադրում էի Նրան այն պարոնի հետ կոքէտութիւն անելու համար։ Սակայն ենթադրենք նոյն իսկ, թէ Նա այժմ կը համաձայնէր իմ կինը լինել, բայց միթէ ես կարող էի, չեմ ասում՝ բախտաւոր, այլ թէկուզ հանգիստ լինել, լաւ իմանալով, որ այն մէկը այստեղ է, բանտումն է և վաղը կամ միւս օրը էտապով կը գնայ Սիբիր տաժանակիր աշխատանքներում տանջուելու։ Իմ ձեռքով կորուստի մատնուած խեղճ կինը կ'երթայ Սիբիր, իսկ ես այստեղ այդ ժամանակ կը զբաղուեմ չնորհաւորութիւններ ընդունելով ու այցելութիւններ անելով նորահարս կնոջս հետ։ Կամ թէ աղնուականութեան պարագլխի հետ, որին ես խայտառակ կերպով խաբում էի, թեր և դէմ ձայներ կը հաչուեմ ժողովում՝ դպրոցական և ուրիշ հարցերի մասին եղող որոշումների վերաբերմամբ ու յետոյ ժամադրութիւն կը նշանակեմ նրա կնոջը (թո՛ւ, ինչ զզուելի բան), կամ կը չարունակեմ նկարս, որ անկասկած երբէք չեմ վերջացնելու, որովհետև իսկապէս պէտք էլ չի, որ ես պարապեմ այդպիսի դատարկ բաներով։ Էլ այժմ չեմ կարող անել այդպիսի բաներ»,—ասում էր Նա ինքն իրան, չարունակ հրճուելով այն նոր զգացմունքի վրայ, որ Նա զգում էր իր մէջ։

«Ամենից առաջ,—մտածում էր Նա,—այժմ պէտք է տեսնել փաստաբանին ու իմանալ, թէ ինչ է վճռել Նա, իսկ յետոյ... յետոյ գնալ բանտը, տեսնել երէկուայ կալանաւորուհուն ու ասել Նրան ամեն ինչ»։

Եւ երբ Նա երևակայում էր, թէ ինչպէս կը տեսնի Նրան, ինչպէս կ'ասի Նրան ամեն բան, ինչպէս կը խոստովանի իր մեղքը Նրա առաջ, ինչպէս կը յայտնի Նրան, թէ ինքը կ'անի ձեռքից բոլոր եկածը ու կը պահպանի Նրա հետ իր մեղքը քաւելու համար,—այն ժամանակ Նա համակւում էր մի տեսակ յափշտակութեամբ և աչքերը լցւում էին արտասուքով։

XXXIV

Դատարանը հասնելով, Նեխլիւդովը հէնց միջանցքում պատահեց երէկուայ պատական պրիստաւին ու հարցրեց Նրանից, թէ որտեղ են պահւում արդէն դատապարտուած կալանաւորները և ումից պէտք է խնդրել Նրանց հետ տեսնուելու թոյլտւութիւն։ Դատական պրիստաւը բացատրեց, որ կալանաւորները զանազան տեղերում են պահւում և մինչև վճիռը վերջնական ձևով յայտնելը՝ տեսակցութեան թոյլատրութիւնը կախուած է դատախազից։—«Ես ձեզ կը յայտնեմ ու կը տանեմ նիստից յետոյ։

Դատախազը դեռ չի եկել։ Նիսաից յետոյ պէտք է սեանել նըրան։ Իսկ այժմ համեցէք նիստի։ Իսկոյն կը սկսուի»։

Նեխլիւդովը այդ սիրալիրութեան համար չնորհակալութիւն յայտնեց պրիստաւին, որ այսօր իրան առանձնապէս ուղղուելի էր թուում, ու գնաց երդուեալատենակալների սենեակը։

Այն ժամանակ, երբ նա մօտենում էր այդ սենեակին, միւս երդուեալ դատաւորները արդէն դուրս էին գալիս այնտեղից՝ նիստի դահլիճը գնալու համար։ Վաճառականը, ինչպէս և երէկ, ուրախ էր ու արդէն նախաճաշել ու կոնծել էր և Նեխլիւդովին հանդիպեց, ինչպէս մի հին բարեկամի։ Պետր Գերասիմովիչն էլ այսօր Նեխլիւդովի մէջ ոչ մի անախորժ զգայմունք չէր զարթեցնում իր մտերմականութեամբ ու քըրքիջով։

Նեխլիւդովի սիրտն ուզում էր բոլոր երդուեալ դատաւորներին յայտնել, թէ ինչ յարաբերութիւն ունի ինքը երէկուայ մեղապարտ կնոջ հետ։ «Իսկապէս ասած,—մտածում էր նա,—հէնց երէկ, դատի ժամանակ պէտք է վեր կենայի ու հրապարակով յայտնէի մեղքս»։ Բայց երբ նա միւս երդուեալների հետ մտաւ նիստի դահլիճը ու սկսուեց երէկուայ պատմութիւնը,—դարձեալ «ամենը գալիս է», դարձեալ երեք չքաղցկատ պաշտօնեայ բազմած վերևում, դարձեալ լուսթիւն, երդուեալ ատենակալների տեղաւորումը բարձրամէջք աթոռների վրայ, ժանդարմները, քահանան,—նա զգայ, որ թէն պէտք էր այդ անել, բայց նա երէկ էլ չէր կարող խանգարել այդ հանդիսաւորութիւնը։

Նոյն նախապատրաստութիւնները տեղի ունեցան մինչև դատի սկսուելը, ինչ որ երէկ, այն բացառութեամբ, որ ատենակալներին նորից չերդուեցրեցին ու նախագահը ճառ չասաց նրանց։

Այս օրուայ գործը խորտակմամբ գողութիւն էր։ Մեղադրեալը, որի մօտ իբր պահպան կանգնած էին երկու սրամերկ ժանդարմներ, մի նիհար, նեղթիկունք 20 տարեկան պատանի էր՝ մոխրագոյն խալաթով և անարիւն մոխրագոյն դէմքով։ Նա մինակ նստած էր մեղադրեալների նստարանի վրայ ու յօնքերի տակից դիտում էր ներս մտնողներին։ Այդ պատանին մեղադրում էր նրանում, որ իր ընկերոջ հետ ջարդել էր յախտատան դռան կողպէքը ու այնտեղից գողացել հին փալաններ 3 ռուբլի 67 կոպէկ արժողութեամբ։ Մեղադրական թղթից երևում էր, որ փողոցային ոստիկանը այդ պատանուն կանգնեցրել էր այն ժամանակ, երբ նա գնում է եղել փողոցով իր ընկերոջ

հետ, որ ուսին գցած տանելիս է եղել փալանները։ Պատանին ու ընկերը իսկոյն և եթ խոստովանուել էին իրանց մեղքը և նրանց երկուսին էլ դրել էին բանտը։ Պատանու ընկերը, որ մի փականագործ էր, մեռել էր բանտում, և ահա այսօր պատանին դատում էր միայնակ։ Հին փալանները դրուած էին իրական ապացոյցների սեղանի վրայ։

Գործը վարուում էր ճիշտ այնպէս, ինչպէս և երէկ,—էլի ապացոյցներ, մեղադրական փաստեր, վկաներ, երդումն, հարց ու փորձ, էքսպէրտներ եւ այլն։ Նախագահի, մեղադրողի և պաշտպանի հարցերին՝ վկայ փողոցային ոստիկանը մեքենայաբար պատասխանում էր՝ «հրաման ձեզ», «չեմ կարող իմանալ» և նորից «հրաման ձեզ»... բայց, չը նայելով նրա զինուորական չմածուքեանը և մեքենայակերպութեանը, պարզ երևում էր, որ նա խղճում է պատանուն ու դժկամութեամբ է պատմում նրա ձերբակալութեան մասին։

Միւս վկան, գողացուած փալանների տէր ծերուկը, որ անկերևոյթ մազոտ մարդ էր, երբ հարցրին՝ ճանաչո՞ւմ է արդեօք այդ փալանները, մեծ դժկամութեամբ ասաց, որ իրանն են. իսկ երբ դատախազի օգնականը սկսեց հարց ու փորձ անել, թէ ինչի համար էր գործ դնելու այդ փալանները, արդեօք չատ էին հարկաւոր նրան, նա բարկացաւ ու պատասխանեց.—«Թէկուզ ամենևին չը լինէին էլ այդ փալանները. խելի պէտք չեն ինձ։ Եթէ իմանայի, որ այդքան գլխացաւանք եմ ունենալու նրանց պատճառով, ոչ միայն զանգատ չէի տայ նրանց մասին, այլ և տասը, մինչև անգամ քսան ռուբլի էլ վրան կը դնէի, միայն թէ ինձ քաշ չը տային հարց ու փորձի համար։ Հէնց միայն կառապաններին 5 ռուբլի տուած կը լինեմ։ Դեռ տակառ էլ եմ։ Պարապմունք ունեմ, ոսկրոցաուն էլ եմ։ Պարապմունք ունեմ, ոսկրոցաուն էլ եմ»։

Այդպէս էին խօսում վկաները, իսկ ինքը մեղադրեալը ամեն բանում մեղքը չլինքն էր առնում և, բռնուած գաղանիկի նման անմտաբար այս ու այն կողմը նայելով, ընդհատուող ձայնով պատմում էր ամեն ինչ, ինչպէս որ եղել էր։

Գործը պարզ էր, բայց դատախազի օգնականը, էլի երէկուայ պէս, ուսերը վեր քաշելով խորագէտ հարցեր էր տալիս, աշխատելով բռնել խորամանկ յանցաւորին։

Իր ճառում նա ապացուցանում էր, թէ գողութիւնը կատարած է մարդաբնակ չէնքի մէջ և կողպէքը ջարդելով, ուստի մեղադրեալին պէտք է ենթարկել ամենածանր պատժի։

Իսկ դատարանի կողմից նշանակուած պաշտպանը ապացուցանում էր, թէ գողութիւնը կատարուած է անմարդաբնակ չէնքում, այնպէս որ, թէպէտ չի կարելի հերքել մեղադրեալի

յանցաւորութիւնը, բայց պէտք է ընդունել, որ նա այնքան էլ վտանգաւոր չէ հասարակութեան համար, որքան պնդում է դատախազի օգնականը։

Նախագահը, ինչպէս և երէկ, անաչառութեան և արդարադատութեան կերպարանք էր ընդունել և մանրամասնօրէն բացատրում ու թելադրում էր երդուեալատենակալներին այն պիտի բաներ, որ նրանք գիտէին և չէին կարող չիմանալ։ Երէկուայ նման, էլի ընդհատումներ եղան, էլի գնացին ծխելու, էլի դատական պրիստաւը գոռաց՝ «ատեանը գալիս է» և էլի երկու սրամերկ ժանդարմներ նստած էին ու աչխատում էին չը քնել։

Գործից երևում էր, որ այդ պատանու հայրը՝ երեխայ ժամանակը նրան տուել էր թուքթունի գործարան, ուր նա մնացել էր 5 տարի։ Այս տարի գործարանատէրը անախորժութիւն էր ունեցել բանուորների հետ և նրան էլ ուրիշ բանուորների հետ արձակել էր։ Անգործ մնալով, նա պարապ-սարապ քաշ էր գալիս փողոցներում, ունեցած չունեցածը գինու տալով։ Տրակտիրում նա ընկերացել էր իր նման տեղից զրկուած ու հարբեցողութեամբ պարապող մի փականագործի հետ, ու նրանք երկուսով, հարբած ժամանակ, դիշերը, կոտրել էին մի ցախատան կողպէքը ու վերցրել ինչ որ ձեռներն էր ընկել։ Նրանց բռնել էին։ Նրանք ամեն բան ուղիղ խոստովանուել էին։ Նրանց գցել էին բանտը, ուր փականագործը, մինչև դատի օրը, մեռել էր։ Իսկ պատանուն այժմ դատում էին, իբրև մի վտանգաւոր արարածի, որից պէտք է պատսպարել հասարակութիւնը։

«Նոյնպիսի վտանգաւոր արարած, ինչպէս և երէկուայ կալանաւորուհին,—մտածում էր Նեխլիւդովը, լսելով այն բոլորը, ինչ որ տեղի էր ունենում նրա առջև։—Նրանք վտանգաւոր են։ Իսկ մենք, վտանգաւոր չենք... Ես՝ անառակս, խարեբան, և մենք ամենքս, այն ամենքը, որոնք ինչ եղածս գիտէին, բայց ոչ միայն չէին արհամարհում, այլ և յարգում էին ինձ»։

Չէ որ ակներև է, որ այս պատանին մի օտարոտի եղեռնագործ չէ, այլ,—ամենքն էլ լաւ տեսնում են այդ,—ամենասովորական մի մարդ, և որ նա այնպիսի մարդ է դարձել, ինչպէս որ կայ, միմիայն այն պատճառով, որ ապրել է այնպիսի պայմաններում, որոնք առաջացնում են այդպիսի մարդիկ։ Ուստի և, կարծեմ, պարզ է, որ այդպիսի պատանիներ չը լինելու համար, պէտք է աչխատել ոչնչացնել այն պայմանները, որոնց հնորհիւ առաջ են գալիս այդպիսի թշուառ արարածներ։ «Բուսական էր գտնուէր մի մարդ,—մտածում էր Նեխլիւդովը, նայելով պատանու հիւանդոտ, վախուտած դէմքին,—որ այն ժամանակ, երբ կարիքից ստիպուած այդ տղային գիւղից բերել էին ու տալիս

էին քաղաքի գործարանը, խղճար նրան ու օգնութիւն հասցնէր այդ կարիքին, կամ նոյն իսկ այն ժամանակ, երբ նա քաղաքումն էր և, գործարանում 12 ժամ բանելուց յետոյ, իրան գայթակղեցնող ընկերների հետ գնում էր տրակտիր, բաւական էր մէկը, որ ասէր,—«Մի գնայ, Վանեա, լաւ չէ»,—ու խեղճ տղան չէր գնայ, չէր մոլորուի ու ոչ ի վատ բան չէր անի։

«Բայց այնպիսի մարդ, որ խղճար նրան, չը գտնուեց ոչ մէկը այն բոլոր ժամանակի ընթացքում, երբ նա, իբրև մի գազանիկ, ապրում էր քաղաքում իր աչկերտութեան տարինները և, գլուխը, ոչխարներ չը չատացնելու համար, տակնուռան խուզած, վազում էր, իբր արհեստաւոր, բաներ առնելու. ընդհակառակը, քաղաքում ապրած ամբողջ ժամանակը արհեստաւորներից և ընկերներից լսածը միայն այն է եղել, թէ տղամարդը նա է, ով կարողանայ խաբել, կոնծել, հայհոյել, ծեծել ու անառակութիւն անել։

«Իսկ երբ նա, անառողջ աչխատանքից, հարբեցողութիւնից ու անառակ կեանքից փչացած ու հիւանդացած, թմրածի պէս, չչմածի պէս, աննպատակ մոլի էր գալիս քաղաքում և չիմարացած մտաւ մի ցախատուն ու վերցրեց այնտեղից մի քանի բոլորովին անպէտք փալատներ, մինչ ոչ թէ հոգս տարանք ոչնչացնելու այն պատճառները, որոնք այդ պատանուն հասցրել են այժմեան վիճակին, այլ ուզում ենք բանը ուղղել այդ պատանուն պատժելով»։

Սոսկալի է։

Նեխլիւդովը այդ բոլորը մտածում էր, առանց այլ ևս ականջ դնելու իր առջևը կատարուող բաներին։ Եւ ինքն էլ սարսափում էր այն բանից, որ պարզուում էր իր առաջ։ Նա զարմանում էր, թէ ինչպէս էր, որ ինքը առաջ չէր տեսնում այդ, ինչպէս էր, որ ուրիշները չէին տեսնում այդ։

XXXV

Հէնց որ առաջին ընդմիջումը եղաւ, Նեխլիւդովը վեր կացաւ ու դուրս եկաւ միջանցքը՝ այլ ևս ատեանը չը վերադառնալու դիտաւորութեամբ։ Թող ինչ ուզում են՝ անեն նրան, բայց նա այլ ևս չի կարող մասնակցել այդ կատակերգութեանը։

Նա հարցրեց, թէ որտեղ է դատախազի առանձնասենեակը ու գնաց այնտեղ։ Սպասաւորը չէր ուզում թողնել, որ նա ներս մտնի, ասելով, թէ դատախազը զբաղուած է այժմ, բայց Նեխլիւդովը ականջ չը դրեց նրան ու, ներս մտնելով, դիմեց ատեանականներից մէկին, խնդրելով զեկուցանել դատախազին,

որ ինքը երդուեալ ատենակալ է և ուզում է տեսնել նրան մի չատ կարևոր գործի համար։ Իշխանական տիտղոսը և վայելուչ հագուստը օգնեցին Նեխլիւդովին։ Սատիճանաւորը զեկուցեց դատախազին, և Նեխլիւդովին ներս թողեցին։ Դատախազը կանգնած ընդունեց նրան, ակնհայտօրէն գժգոհ լինելով, որ Նեխլիւդովը այդպէս յամառ կերպով անսակարկութիւն էր պահանջել նրա հետ։

—Ի՞նչ էք կամենում,—խիստ կերպով հարցրեց դատախազը։

—Ես երդուեալ ատենակալ եմ, ազգանունս Նեխլիւդով է, ինձ անհրաժեշտ է տեսնուել մեղադրեալ Մասլովայի հետ,—արագ ու վճռաբար արտասանեց Նեխլիւդովը, կարմրելով և զգալով, որ նա այնպիսի մի բան է անում, որ վճռական ազդեցութիւն է ունենալու նրա ամբողջ կեանքի վրայ։

Դատախազը մի ցածրահասակ ու թուխ-թուխս մարդ էր, կարճ ու սպիտակող մազերով, փայլուն ու արագաշարժ աչքերով և դուրս պրծած նեղքին ծնօտով, որի վրայ երևում էր խուզուած խիտ միրուք։

—Մասլովայի հետ։ Հա, գիտեմ։ Մեղադրւում էր թունաւորման մէջ,—հանգիստ կերպով ասաց դատախազը։—Ինչու՞ էք ուզում տեսնել նրան։—Ու յետոյ, կարծէք ուզելով մեղմացնել ասածը, աւելացրեց.—Ես չեմ կարող թոյլ տալ տեսնուել նրա հետ, առանց իմանալու, թէ ինչու՞ է պէտք այդ ձեզ։

—Այդ ինձ պէտք է ինձ համար մի չատ կարևոր պատճառով,—կարմրատակելով, ասաց Նեխլիւդովը։

—Այդպէս,—ասաց դատախազը ու, աչքերը վեր բարձրացնելով, ուշադրութեամբ զննեց Նեխլիւդովին։—Նրա գործը քննուել է արդէն թէ ոչ։

—Երէկ էր գալը։ Չորս տարի ժամանակով տաժանակիր աշխատանքների դատապարտուեց բոլորովին անհիմն կերպով։ Նա անմեղ է։

—Այդպէս։ Եթէ միայն երէկ է նա դատապարտուած,—ասաց դատախազը, բոլորովին ուշադրութիւն չը դարձնելով Նեխլիւդովի ասածին, թէ Մասլովան անմեղ է,—կը նշանակի մինչև վճռի վերջնական ձևով յայտարարուելը նա այնուամենայնիւ պէտք է պահուի նախնական կալանաւորութեան քանտում։ Այնտեղ միմիայն որոշ օրեր կարելի է տեսակցութիւն ունենալ։ Խորհուրդ եմ տալիս ձեզ դիմել այնտեղ։

—Բայց ինձ պէտք է նրան տեսնել որքան կարելի է չուտ,—ասաց Նեխլիւդովը, զգալով, որ նեղքին ծնօտը դողում է և որ մօտենում է վճռական վայրկեանը։

—Ինչու՞ է պէտք ձեզ այդ բանը,—մի քիչ անհանգստութեամբ բարձրացնելով յօնքերը, հարցրեց դատախազը։

—Նրա համար, որ նա անմեղ է և դատապարտուել է տաժանակիր աշխատանքների։ Իսկ ամեն բանում մեղաւորը ես եմ,—դողդողուն ձայնով ասաց Նեխլիւդովը, զգալով միևնոյն ժամանակ, որ այնպիսի բան է ասում, որ չը պէտք էր ասել։

—Ի՞նչպէս,—հարցրեց դատախազը։

—Ես հրապարակի նրան և հասցրի այն դրութեան, որի մէջ նա այժմ գտնւում է։ Եթէ ես նրան այդ դրութեան հասցրած չը լինէի, նա այդպիսի մեղադրանքի չէր ենթարկուի։

—Այնուամենայնիւ ես չեմ տեսնում, թէ ինչ կապ կայ այդ բանի և ձեր ցանկացած տեսակցութեան մէջ։

—Այն կապը, որ ես ուզում եմ նրա հետ գնալ Սիբիր և... պահանջել հետը,—ասաց Նեխլիւդովը։ Եւ, ինչպէս միշտ այդ բանի մասին խօսելիս, աչքերը իսկոյն լցուեցին արտասուքով։

—Հա։ Այդպէս ուրեմն,—ասաց դատախազը։—Այդ ճիշտ որ չատ բացառիկ դէպք է։ Դուք, կարծեմ, Կրառնօպեօրսկի զեմստվոյի ձայնատուր էք, չէ՞,—հարցրեց դատախազը, կարծես յուշերելով, որ ինքը առաջ էլ լսել է այդ Նեխլիւդովի մասին, որ այժմ այդպիսի տարօրինակ բան է վճռել։

—Ներեցէք, կարծեմ, այդ կապ չունի իմ խնդիրքի հետ,—կարմրատակելով ու զայրացած նկատեց Նեխլիւդովը։

—Ի հարկէ, չունի,—հազիւ հազ նչմարելի կերպով ժպտալով ու առանց ամենևին չփոթուելու, ասաց դատախազը,—բայց ձեր ցանկութիւնը այնքան արտասովոր բան է, այնքան նման չէ սովորական ձևերի...

—Ասացէք, խնդրեմ, թոյլատութիւն կարող եմ ստանալ թէ ոչ։

—Թոյլատութիւն։ Այս րոպէիս։ Նեղութիւն կրէք նստել։

Դատախազը մօտեցաւ սեղանին, նստեց ու սկսեց գրել։

—Նստեցէք, խնդրում եմ։

Նեխլիւդովը մնաց կանգնած։

Դատախազը գրից պրծաւ թոյլատութեան տոմսը ու տուեց Նեխլիւդովին, հետաքրքրութեամբ նայելով նրա վրայ։

—Բացի այդ, պէտք է յայտնեմ,—ասաց Նեխլիւդովը,—որ ես չեմ կարող այսուհետև մասնակցել նիստերին։

—Դրա համար, ինչպէս գիտէք, պէտք է ներկայացնել յարգելի պատճառներ։

—Իմ յարգելի պատճառներն այն են, որ ես դատաստանը առհասարակ համարում եմ ոչ միայն անօգուտ, այլ և անբարոյական բան։

—Այդպէս,—ասաց դատախազը, դարձեալ նոյն, հազիւ նշմարելի, ժպիտով, կարծես ցոյց տալով այդ ժպիտով, թէ այդպիսի կարծիքներ յայտնի են իրան և պատկանում են ծիծաղելի հայեացքների որոշ դասին։—Այդպէս, բայց դուք ի հարկէ հասկանում էք, որ ես, իբր դատախազ, չեմ կարող համաձայնել ձեզ հետ։ Ուստի խորհուրդ եմ տալիս ձեզ յայտնել այդ բանը դատի ժամանակ, և դատարանը, քննելով հարցը, կամ յարգելի կը գտնի ձեր ասածը կամ ոչ յարգելի ու վերջին դէպքում տուգանք կը դնի ձեր վրայ։ Դիմեցէք դատարանին։

—Ես արդէն յայտնեցի և էլ ոչ մի տեղ չեմ գնայ դրա համար,—բարկացած ասաց Նեխլիւդովը։

—Ցտեսութիւն,—գլուխ տալով ասաց դատախազը, ակնհայտօրէն ցանկանալով արդէն կարելի է չուտ ազատուել այդ տաղտկալի այցելուից։

—Այդ ո՞վ էր ձեզ մօտ,—հարցրեց դատարանի մի անդամ, մտնելով դատախազի առանձնասենեակը Նեխլիւդովի դուրս գալուց անմիջապէս յետոյ։

—Նեխլիւդովը. գիտէք, այն, որ Կրասնօպևօրսկի գաւառի զեմստվոյում զանազան տաղտկալի առաջարկութիւններ էր անում։ Երևակայեցէք, երդուեալ ատենակալ է, իսկ մեղադրեալների թւում եղել է մի կին կամ աղջիկ, որին տաժանակիր աշխատանքների են դատապարտել. իր ասելով, ինքն է եղել այդ աղջկան հրապուրողը և այժմ ուզում է պատկուել հետը։

—Ի՞նչ էք ասում, անկարելի բան է։

—Ինքն իր բերնով ասաց ինձ... Պէտք է տեսնէիք, թէ ինչպէս գրգռուած դուրս եկաւ սենեակից։

—Շատ էլ նօրմալ մարդիկ չեն այժմեան ջահէլները։

—Ասենք, նա շատ էլ ջահէլներից չէ։

—Օ՛, մեր բարեկամ, պէտք է ասեմ, որ գլուխներս տարաձեր հռչակաւոր Իվաչչենկովը։ Մարդու հոգի է հանում, խօսում է ու խօսում անվերջ։

—Պէտք է դրանց ուղղակի ընդհատել, թէ չէ իսկական օբստրուկցիոնիստներ են։

XXXVI

Դատախազի մօտից Նեխլիւդովը գնաց ուղղակի նախնական կալանաւորութեան բանտը։ Բայց Մասլովան այնտեղ չէր և բանտապետը բացատրեց Նեխլիւդովին, թէ նա պէտք է լինի հին փոխադրական բանտում։ Նեխլիւդովը գնաց այնտեղ։

Արդարև, եկատերինա Մասլովան այնտեղ էր։

Նախնական կալանաւորութեան բանտից մինչև փոխադրական բանտը ահագին տարածութիւն էր և Նեխլիւդովը միայն երեկոյեան հասաւ այնտեղ։ Նա ուզեց մօտենալ այդ բանտի ահագին ու մռայլ չէնքի դարպասին, բայց պահապան զինուորը թոյլ չը տուեց և զանգը քաշեց։ Ջանգի ձայնին դուրս եկաւ վերակացուն։ Նեխլիւդովը ցոյց տուեց թոյլատրութեան թուղթը, բայց վերակացուն ասաց, որ առանց բանտապետի հրամանին ինքը չէ կարող ներս թողնել նրան։ Նեխլիւդովը գնաց բանտապետի մօտ։ Դուռ առնդրնդանքով բարձրանալիս, Նեխլիւդովը լսում էր, որ դռան յետևին ինչ-որ բարդ ու աղմկալից բան են նուագում դաշնամուրի վրայ։ Իսկ երբ մի աչքը կապած ու բարկացած աղախինը բաց արեց նրա առաջ դուռը, այդ հնչիւնները ծակեցին նրա ականջները, կարծես դուրս խուժելով սենեակից։ Լիսաի բապօդինն էր այդ, որ արդէն ձանձրացրել է ամենքին և որ դաշնակահարը լաւ էր նուագում, բայց միայն մինչև մի որոշ տեղ։ Երբ նա հասնում էր այդ տեղին, սկսում էր նորից կրկնել նոյն բանը։

Նեխլիւդովը հարցրեց, տանն է արդեօք բանտապետը։

Աղախինն ասաց, որ տանը չէ։

—Շուտ կը գայ։

Բապօդինն նորից կանգ առաւ և նորից աղմկալից ու փայլուն կերպով կրկնուեց մինչև կախարդուած տեղը։

—Գնամ, հարցնեմ։

Ու աղախինը գնաց։

Բապօդինն նոր էր սկսել զլել, երբ յանկարծ, առանց հասնելու կախարդուած տեղին, ընդհատուեց և լսուեց մի կնոջի ձայն.

—Աստ իրան, որ տանը չէ և այսօր չի լինի տանը։ Հիւր է գնացել, ինչ են մարդու գլուխ տանում,—ասաց դռան յետևին կանացի ձայնը և նորից թնդաց բապօդինն, բայց չուտով ընդհատուեց և լսուեց յետ հրուող աթոռի ձայն։ Ակնհայտաբար, բարկացած դաշնակահարը ուզում էր անձամբ նկատողութիւն անել այդպէս անժամանակ եկած աներևոյթ այցելուին։

—Հայրիկը տանը չէ,—դուրս գալով սենեակից, բարկացած ասաց մի գունատ օրիորդ, խճճուած մազերով, ոլորմելի տեսքով և տակերը կապտած վհատ աչքերով։ Տեսնելով, որ հարցնողը երիտասարդ մարդ է ու լաւ վերաբերուով, նա մեղմացաւ ու չարունակեց.—«Ներս մտէք, խնդրեմ... Ի՞նչ էք կամենում»։

—Բանտում մի կալանաւորուհի կայ, ուզում եմ տեսնել Թոյլտուութեան թուղթ ունեմ դատախազից։

—Ձը գիտեմ՝ ինչպէս պէտք է լինի, հայրիկը տանը չի։ Ներս մտէք, խնդրեմ,—նորից ներս կանչեց նա Նեխլիւդովին փոքրիկ նախասենեակից։—Կամ, կուզէք, դիմէք բանտապետի օդնականին, նա գրասենեակումն է այժմ։ Ի՞նչպէս է ձեր ազգանունը։

—Շնորհակալութիւն,—ասաց Նեխլիւդովը, առանց պատասխանելու հարցին, ու դուրս եկաւ։

Դեռ դուռը նրա յետևից չը փակուած, դարձեալ սկսուեցին առաջուան ուրախ ու աղմկալից նօտաները, որոնք չէին սազում ոչ այն տեղին, ուր նրանք հնչում էին, ոչ էլ այն ողբալի աղջկայ դէմքին, որ այդպէս յանկարծ կերպով սերտում էր նրանց։ Բակում Նեխլիւդովը հանդիպեց մի ցից-ցից ու ներկած բեղերով ջահէլ օֆիցէրի ու հարցրեց նրանից, թէ որտեղ կարող է տեսնել բանտապետի օդնականին։ Դուրս եկաւ, որ հէնց ինքը օդնականն էր այդ։ Նա վերցրեց թոյլատրութեան թուղթը, նայեց ու ասաց, որ ինքը դժուարանում է ներս թողնել նրան իրանց բանտը նախնական կալանաւորութեան բանտի համար տուած թղթով։

—Վերջապէս ուշ էլ է։ Վաղը հասեցէք։ Վաղը ժամի 10-ին ամենքին թոյլ է արւում տեսակցութիւն. եկէք, բանտապետն էլ այստեղ կը լինի. այդ ժամանակ կարելի է տեսակցել միայն ընդհանուր սենեակում, բայց եթէ բանտապետը թոյլ տայ, կարելի է և գրասենեակում տեսնուել։

Այդպէս, չը կարողանալով այդ օրը տեսնել Մասլօվային, Նեխլիւդովը յետ դարձաւ տուն։ Ցաւուած այն մտքից, որ վաղը տեսնելու է նրան, Նեխլիւդովը տուն դառնալիս յիշում էր ոչ թէ դատարանը, այլ իր խօսակցութիւնները դատախազի և բանտի վերակացուի հետ։ Այն հանգամանքը, որ ինքը աչխատում էր տեսնուել Մասլօվայի հետ ու այդ դիտաւորութիւնը յայտնեց դատախազին և նրան տեսնելու համար գնաց երկու բանտ, այն ասպիճան յուզել էր նրան, որ երկար ժամանակ նա չէր կարողանում հանգստանալ։ Տուն հասնելով, նա իսկոյն հանեց իր յիշատակարանը, որին վաղուց ձեռք չէր տուել, կարդաց մի քանի տեղ նրանից ու գրեց հետեւեալը. «Երկու տարի օրագիր չէի գրում և կարծում էի, թէ երբէք այլ ևս այդպիսի ուրախութիւն չեմ անի։ Սակայն այդ ոչ թէ երեխայութիւն էր, այլ գրոյց իմ սեփական անձի հետ, այն ճչմարիտ, աստուածային «ես»-ի հետ, որ ապրում է ամեն մարդու մէջ։ Ամբողջ ժամանակը այդ «ես»-ս քնած էր, և ոչ ոք չը կար, որ հետը գրոյց անէի։ Նրան զարթեցրեց քնից մի արտասովոր դէպք, որ տեղի ունեցաւ դատարանում ապրիլի 28-ին, երբ ես երդուեալ տես-

նակալ էի։ Այդ օրը մեղադրեալների նստարանի վրայ տեսայ իմ հրապուրած կատիւշային՝ կալանաւորի խալաթով։ Տարօրինակ թիւրիմացութեամբ և իմ սխալմունքի չնորհիւ նա դատապարտուեց տաժանակիր աչխատանքների։ Այսօր դիմեցի դատախազին ու գնայի բանտը։ Ինձ ներս չը թողին բանտը, բայց վճռել եմ ամեն միջոց ձեռք առնել և անպատճառ տեսնուել նրա հետ, խոստովանել մեղքս նրա առաջ և քաւել մեղքս գոնէ ամուսնանալով հետը։ Տէր, օգնիր ինձ։ Հոգիս ուրախ է և փառաւորւում է»։

XXXVII

Մասլօվան այդ գիշեր երկար ժամանակ չէր կարողանում քնել, այլ բաց աչքերով պառկած նայում էր դռանը, որ նրա աչքից յանախ ծածկում էր անդադար քայլող սիրացուի աղջիկը, և մտածում էր։

Մտածում էր նա, թէ ինչ էլ լինի, չի պակուի այնտեղ, Սախալինում մի որևէ սիբիրականի հետ, այլ մի կերպ կը սարքուի իշխանաւորներից մէկի հետ, գրագրի, կամ վերակացուի կամ թէ նրա օգնականի հետ։ Նրանք բոլորն էլ այդ բանի համար մեռած են։ «Միայն թէ չը լղարեմ։ Թէ չէ կորած եմ»։ Եւ նա յիշեց, թէ ինչպէս էր նայում իր վրայ պաշտպանը, ինչպէս էր նայում նախագահը, ինչպէս էին նայում դատարանում իրան պատահող և դիտմամբ մօտովը անցնող տղամարդիկ։ Նա յիշեց, թէ ինչպէս Բերտան, որ այցելեց նրան բանտում, պատմում էր, թէ այն ուսանողը, որին նա սիրում էր Կիտայեվայի մօտ ապրելիս, եկել էր նրանց մօտ, հարցրել նրա մասին ու չատ խղճացել նրան։ Ցիշեց նա Կօրաբլեօվայի կռիւը կարաշէկ կնոջ հետ ու խղճաց այդ կնոջը, յիշեց հացավաճառի մասին, որ մի հատ աւելորդ հաց էր ուղարկել իրան։

Ցիշեց չատ չատերին, բայց Նեխլիւդովը ամենևին միտքը չընկաւ։ Նա երբէք չէր մտաբերում իր մանկութիւնը, իր ջահէլութիւնը և մանաւանդ իր սէրը դէպի Նեխլիւդովը։ Շատ կսկծալի էին այդ յիշողութիւնները։ Նրանք անձեռնմխելի պահւում էին նրա հոգու ամենահետաւոր խորքերում։ Նոյն իսկ երազում նա երբէք չէր տեսնում Նեխլիւդովին։ Դատարանում նա չը ճանաչեց Նեխլիւդովին ոչ այնքան այն պատճառով, որ վերջին անգամ նրան տեսած ժամանակը՝ նա զինուորական էր, միրուք չունէր, բեխերը փոքր էին և մազերը թէև կարճ էին, բայց խիտ ու գանգուր, իսկ այժմ միրուքով էր և տեսքն էլ ջահել չէր,— որքան այն պատճառով, որ ինքը երբէք չէր մտածում նրա մա-

սին։ Իր բոլոր յիշողութիւնները իր և նրա ընդհանուր անցեալի մասին նա թաղեց այն սարսափելի, խաւար գիշերը, երբ Նեխլուդովը բանակից վերադառնալիս չայտնվեց մօրաքոյրներին։

Մինչև այդ գիշեր, նա յոյս ունէր, որ Նեխլուդովը կայցելի մօրաքոյրներին, և ոչ միայն չէր ճնշւում, արգանդումը զաւակ զգալով, այլ, ընդհակառակը, յաճախ զարմացած խանդաղատւում էր, զգալով նրա մեղմ, երբեմն և ուժգին շարժուածները իր մէջ։ Բայց այդ գիշերից յետոյ ամեն ինչ փոխուեց։ Եւ ծնուելիք երեխան լոկ խոչընդոտ դարձաւ նրա համար։

Մօրաքոյրները սպասում էին Նեխլուդովին, գրել էին, որ անցնելիս գայ իրանց մօտ, բայց նա հեռագրեց, թէ չէ կարող, որովհետև որոշեալ ժամանակին պէտք է լինի Պետերբուրգում։ Այդ իմանալով, Կատիւշան վճռեց գնալ երկաթուղու կայարանը նրան տեսնելու համար։ Գնացքը անցնում էր գիշերուայ ժամի 2-ին։ Կատիւշան սպասեց, մինչև որ օրիորդները քնեցին, և համոզելով խոհարարուհու փոքրիկ աղջկան, Մաշկային, որ իր հետ գնայ, հագաւ հին հողաթափները, գլխաշորը գցեց գլխին, փէչերը հաւաքեց և վազեց կայարան։

Աչնանային մութ, քամոտ ու անձրևային գիշեր էր։ Սնձրևը երբեմն սկսում էր գցել խաշոր ու տաք կաթիլներով, երբեմն էլ բոլորովին դադարում էր։ Դաշտում մարդու աչք չէր ջոկում ճանապարհը, իսկ անտառում այնպէս մութն էր, ինչպէս գնդանում, և Կատիւշան, թէև լաւ գիտէր ճանապարհը, մոլորուեց անտառում և հասաւ փոքրիկ կայարանը, ուր գնացքը կանգնում էր միայն 3 րոպէ, ոչ թէ աւելի վաղ, ինչպէս յոյս ունէր, այլ երկրորդ զանգից յետոյ։ Վազ տալով պլատֆորմը, Կատիւշան իսկոյն նկատ տեսաւ նրան առաջին կարգի վագոնի պատուհանի առաջ։ Այդ վագոնը առանձնապէս վառ էր լուսաւորուած։ Թաւշապատ բազմոցների վրայ երկու օֆիցէրներ դէմ ու դէմ նստած թուղթ էին խաղում։ Պատուհանի կողքի սեղանի վրայ վառում էին հալուածքով պատած հաստ մոմեր։ Նա, քիփ բէյուզներով ու սպիտակ չապկով, նստած բազմոցի կռան վրայ՝ թիկն էր տուել մէջքին և ծիծաղում էր։ Ներան ճանաչելուն պէս՝ Կատիւշան սաստած ձեռքով թխթխկացրեց պատուհանը։ Բայց այդ ժամանակ երրորդ զանգը խփեցին և գնացքը դանդաղ կերպով չարժուեց տեղիցը մի փոքր յետ ու յետոյ վագոնները մէկ-մէկ թափահարուելով սկսեցին գնալ դէպի առաջ։ Թուղթ խաղացողներից մէկը վեր կացաւ տեղիցը, թղթերը ձեռքին, ու սկսեց դուրս նայել պատուհանովը։ Կատիւշան մէկ էլ թխթխկացրեց ու երեսը կպցրեց ապակուն։ Այդ ժամանակ այդ վագոնն էլ թափահարուեց ու առաջ գնաց։

Կատիւշան դնաց վագոնի կողքովը, նայելով պատուհանի մէջ։ Օֆիցէրը ուզում էր իջեցնել ապակին, բայց ինչ անում էր՝ չէր կարողանում։ Նեխլուդովը վեր կացաւ ու, մի կողմ հրելով օֆիցէրին, սկսեց իջեցնել ապակին։ Գնացքը արագացրեց ընթացքը, այնպէս որ Կատիւշան արագ քայլերով էր գնում։ Գնացքը սկսեց աւելի ևս արագ գնալ և պատուհանը բացուեց։ Բայց այդ միջոցին կօնդուկտորը յետ հրեց Կատիւշային ու ինքը ցատկեց վագոնը։ Կատիւշան յետ ընկաւ, բայց չարունակում էր վազել պլատֆորմի թաց տախտակների վրայով. յետոյ պլատֆորմը վերջացաւ և քիչ մնաց նա վայր ընկնէր՝ աստիճաններովը վազելով իջնելով գետին։ Նա վազում էր, բայց առաջին կարգի վագոնը արդէն չատ էր առաջ ընկել։ Նրա կողքով սլանում էին երկրորդ կարգի վագոնները, յետոյ աւելի ևս արագ սկսեցին սլանալ երրորդ կարգի վագոնները, բայց նա էլի վազում էր ու վազում։ Երբ սլացաւ անցաւ վերջին լապտերաւոր վագոնը, նա արդէն անցել էր բոլոր չէնքերից այն կողմը և քամին, որի առաջ չը կար այլ ևս ոչ մի պատուար, յարձակուեց նրա վրայ, ուզելով թռցնել գլխի չորը և մի կողմից կոլոլելով նրա ոտները հագուստի մէջ։ Գլխի չորը տարաւ քամին, բայց նա էլի չարունակում էր վազել։

—Մօրքոյր,—գոռում էր փոքրիկ աղջիկը, հազիւ հազ հասնելով նրա յետևից։—Գլխի չորը կորցրեցիք։

Կատիւշան կանգ առաւ և, գլուխը յետ գցելով ու ձեռներով բռնելով, սկսեց հեկեկալ։

—Գնանք,—աղաղակեց նա։

«Նա այն փառաւոր վագոնում իր համար թաւշապատ բազմոցի վրայ նստած կատարներ է անում ու խմում,—իսկ ես այստեղ, այս ցեխով ու մթնով, այս անձրևով ու քամով, կանգնած լալիս եմ»,—մտածեց նա ինքն իրան ու նստեց գետնին և սկսեց այնպէս բարձրաձայն հեկեկալ, որ փոքրիկ աղջիկը վախեցաւ ու փաթաթուեց նրա թաց հագուստին։

—Տուն գնանք, մօրքոյր։

«Կը սպասեմ, երբ որ գնացքը անցնի, տակը կ'ընկնեմ ու ամեն ինչ կը վերջանայ»,—մտածում էր այդ միջոցին Կատիւշան, պատասխան չը տալով աղջկան։

Նա վճռեց այդպէս անել։ Բայց հէնց այդ ժամանակ, ինչպէս սովորաբար լինում է յուզմունքից յետոյ հանգստութեան առաջին րոպէին, երեխան, որ նա կրում էր իր մէջ, յանկարծ խաղաց, դիպաւ նրա արգանդին, խլլլտաց ու նորից դիպաւ, իբրև մի բարակ, սուր ու քնքոյշ բան։ Եւ յանկարծ անհետացաւ այն բոլորը, ինչ-որ մի րոպէ առաջ այն աստիճան տան-

ջում էր նրան, որ թուում էր, թէ այլ ևս չէ կարող ապրել, անհետացաւ Նեխլիւդովի դէմ զգացած ամբողջ զայրոյթը և գոնէ իր մահովը նրանից վրէժ հանելու ցանկութիւնը։ Նա հանգստացաւ, վեր կացաւ, դրստուհից, գլխաշորը կապից ու յետ գնաց։

Նա վերադարձաւ տուն ջարդուած, թրջուած ու ցեխոտած, և այդ օրից նրա մէջ սկսուեց այն հոգեկան յեղաշրջումը, որի շնորհիւ նա դարձաւ այն, ինչ որ էր այժմ։ Այդ սարսափելի գիշերից սկսած նա այլ ևս չէր հաւատում Աստուծուն ու բարիին։ Առաջ նա հաւատում էր Աստուծուն և կարծում էր, թէ մարդիկ առհասարակ հաւատում են Աստուծուն, բայց այդ գիշերից ի վեր համոզուեց, որ ոչ ոք չի հաւատում Նրան և այն բոլորը, ինչ որ ասում են Աստուծու մասին և Նրա օրէնքի մասին, խաբէութիւն է և անարդարութիւն։ Այն մարդը, որին ինքը սիրում էր և որ իրան սիրում էր,—նա այդ գիտէր,—թողեց Նրան ու հեռացաւ, պղծելով ու ծաղրելով նրա զգացմունքները։ Իսկ այդ մարդը ամենալաւն էր իր ճանաչած մարդկանց մէջ։ Միւսները բոլորը աւելի ևս վատ էին։ Եւ այն ամենը, ինչ որ պատահեց Կատիւշային դրանից յետոյ, ամեն քայլափոխում հաստատում էր այդ բանը։ Նեխլիւդովի մօրաքոյրները, այդ բարեպաշտ պառաւները, դուրս արեցին նրան, երբ նա այլևս չէր կարող ծառայել նրանց, ինչպէս առաջ։ Ուստի որ պատահում էր, կանայք՝ աշխատում էին նրա միջոցով փող ձեռք գցել, իսկ տղամարդիկ, ծերունի սառնօվոյից սկսած մինչև բանտային վերակացուները, նայում էին նրա վրայ միմիայն իբրև զուարճութեան առարկայի վրայ։ Եւ ոչ ոքի համար ոչ մի ուրիշ բան չը կար աշխարհումս։ Դրանում նրան աւելի ևս համոզեց այն ծերունի գրողը, որի հետ նա կապուեց իր ազատ կեանքի երկրորդ տարին։ Այդ գրողը ուղղակի ապում էր, թէ դրանումն է մարդուս երջանկութիւնը, անուանելով, սակայն, այդ բանը՝ բանասիրութիւն և գեղեցկագիտութիւն։

Ամենքը ապրում էին լոկ իրանց անձի, իրանց զուարճութեան համար, և այն բոլորը, ինչ որ ասում էին Աստուծու և բարիի մասին, խաբէութիւն էր միայն։ Իսկ եթէ երբեմն-երբեմն հարցեր էին ծագում, թէ ինչու ամեն ինչ այնպէս վատ է կարգաւորուած աշխարհումս, որ ամենքը չարիք են պատճառում միմեանց և ամենքն էլ տանջւում,—պէտք էր աշխատել չը մտածել այդ բանի մասին։ Երբ որ սիրտը նեղանում էր, պէտք է ծխէր, խմէր կամ, աւելի ևս լաւ, սիրուէր մի որևէ տղամարդու հետ և սրանեղութիւնը իսկոյն կ'անցէր։

XXXVIII

Հետևեալ օրը, կիրակի, առաւօտեան ժամի 5-ին, երբ բանտի կանանց մասի միջանցքում լուեց սովորական սուլոցը, կօրաբլեօվան, որ արդէն զարթնուն էր, զարթեցրեց Մասլօվային։

«Սիրիր եմ քչուած», սարսափով մտածեց Մասլօվան, տրորելով աչքերը ու ականջ ներս չնչելով սենեակի օդը, որ առաւօտուայ դէմ սարսափելի գարշահոտ էր դարձել, և ուզեց նորից քնել, խորասուզուել անգիտակցական աշխարհը, բայց վախի սովորութիւնը յաղթեց քնին և նա վեր կացաւ ու ծալապատիկ նստած սկսեց նայել չորս կողմը։ Կանայք արդէն վեր էին կացել, միայն երեխաներն էին մնացել քնած։ Գործի աչքերով կալանաւորուհին, որ բռնուել էր գաղտնի օղի վաճառելու համար, զգուշութեամբ, աշխատելով չը զարթեցնել երեխաներին, տակներիցը դուրս էր քաշում խալաթը։ Ապստամբութեան համար մեղադրուած կալանաւորուհին վառարանի մօտ փռուած էր պարապի տեղ ծառայող փալասները, իսկ երեխան, ձայնը գլուխը գցած, լալիս էր կապտաչեայ ծեգօսեայի գրկում, որ օրօրում էր նրա հետ ու քնքոյշ ձայնով նանիկ ասում նրան։ Թղթախաղասէր կալանաւորուհին, կուրծքը բռնած ու արիւնը երևը տուած, աշխատում էր խուխը դուրս բերել հաղալով և երբեմն-երբեմն բարձրաձայն հառաչում էր, գրեթէ ճչալով։ Կարմրաչեկ կալանաւորուհին զարթուն պառկած էր տեղերում, փորը դէպի վեր ու հաստ ոտները ծալած, ու բարձրաձայն և ուրախ-ուրախ պատմում էր գիշերը տեսած երազը։ Հրկիզութեան համար մեղադրուած պառաւը զարձնել կանգնած էր սրբի պատկերի առաջ և, չընջալով մինոյն խօսքերը, խաչ էր անում երեսին ու ծունր գնում։ Տիրացուի աղջիկը անչարժ նստած էր տախտի վրայ ու քնկոտ, բութ հայեացքով նայում էր դէպի առաջ։ Ժօրօշավկան ոլոր էր գցում մտի չուրջը իւղոտ և կոչտ ու սև մազերը։

Միջանցքում լուեց ոտնաձայների քաքաոց, կողպէքը ղրնգաց և ներս մտան երկու աղբաթափ կալանաւորներ, բաճկոններով և պճեղներից չատ բարձր վերջացող կարճ ու մոխրագոյն վարտիքներով, և լուրջ ու բարկացած դէմքով ձողը անց կացրին գարշահոտ կոնքի ունկերի մէջ ու, բարձրացնելով, դուրս տարան սենեակից։ Կանայք դուրս եկան միջանցքը ու սկսեցին լուացուել ջրի փղորակների մօտ։ Լուացուելիս կռիւ ծագեց կարմրաչեկ կալանաւորուհու և մի ուրիշի մէջ, որ դուրս էր եկել կողքի սենեակից։ Դարձեալ հայհոյանք, ազմուկ ու դանդաղ...

—Ի՞նչ է, կարցէրին կարօտե՞լ էք,—գոռաց վերակացուն և այնպէս խիստ կարմրաչէկ կալանաւորուհու մերկ ու գէր մէջքին, որ չրըպզոցը լուռ ժամերջ միջանցքում—էլ ձայնդ չը լսեմ։

—Տես, ինչպէս է ղըզղնել պառաւ չունը,—ասաց կարմրաչէկ կալանաւորուհին, իբր գգուանք ընդունելով այդ վարմունքը։

—Դէ, չուտ։ կորէք, գնացէք պատարագի։

Մասլովան մազերը սանրից պրծաւ թէ չէ, ևկաւ բանտապետը իր հետևորդներով։

—Կանգնեցէք տեղներդ,—գոռաց վերակացուն։

Միւս սենեակից ուրիշ կալանաւորուհիներն էլ դուրս եկան և բոլորը երկ-երկու կարգ շարուեցին միջանցքի երկարութեամբ և յետևի կարգի կանգնողները ձեռները դրեցին առաջին կարգում կանգնողների ուսին։ Բոլորին հաշուեցին։

Հաշուելուց յետոյ ևկաւ վերակացուհին ու կալանաւորուհիներին տարաւ եկեղեցի։ Մասլովան ու Ֆեդոսեան գնում էին ամբողջ շարքի մէջ տեղում, որ բաղկացած էր բոլոր սենեակներից դուրս եկած հարիւրի չափ կանանցից։ Բոլորն էլ սպիտակ գլխաշորով էին, սպիտակ բաճկոնով ու շրջազգեստով և միայն երբեմն-երբեմն նրանց մէջ պատահում էին իրանց սեփական գուներ զգեստները հագած կանայք։ Այդ այն կանայք էին, որոնք կալանաւորուհի չէին, այլ իրանց կամքով Սիբիր էին գնում իրանց դատապարտուած ամուսինների հետ։ Ամբողջ սանդուխը բռնուած էր այդ շարժուն շարանով։ Լսւում էր բանտային ոտնաձայներ հագած ոտների փափուկ թփթփոց, խօսակցութեան ձայն, երբեմն և ծիծաղ։ Երբ պատրաստ էին տալու, Մասլովան տեսաւ իր թշնամուն, Բօչկովային, որ առջևում գնում էր իր չար դէմքով, ու յոյժ տուժեց Ֆեդոսեային։ Իջնելով ներքև, կանայք լռեցին ու սկսեցին, երեսներին խաչ անելով ու ծունր դնելով, ներս մտնել ոսկեչող և գեղ դատարկ եկեղեցին, որի դուռը բաց էր։ Նրանց տեղը աջ կողմումն էր և նրանք սկսեցին տեղաւորուել, հրհրելով իրար ու սղոսկելով միմեանց։ Կանանցից յետոյ ներս մտան տարագրուող, բանտարկեալ և դիւղական համայնքների վճռով աքսորի ենթարկուած կալանաւորները, մոխրագոյն խալաթներով, և բարձրաձայն հազալով՝ խիտ առ խիտ շարուեցին եկեղեցու ձախ կողմում ու մէջ տեղում։ Իսկ վերևում, վերնատանը, արդէն կանգնած էին ուրիշ կալանաւորներ, որոնց առաջուց էին բերել,—մի կողմում կիսով չափ ածիլուած գլուխներով տաժանապարտները, որոնք իրանց ներկայութիւնը զգալ էին տալիս

չղթաների ղրնգոցով, և միւս կողմում՝ դատի տակ գտնուող կալանաւորները, որոնք ոչ ածիլուած էին, ոչ չղթայուած։

Բանտի եկեղեցին, որ, մի քանի տասնեակ հազարներ ծախսելով, նոր չինել ու զարդարել էր մի հարուստ վաճառական, փողփողում էր ներկերի վառ գոյնից ու ոսկուց։

Մի փոքր ժամանակ լռութիւն էր տիրում եկեղեցում և լսւում էր միայն խնջելու և հազալու ձայն, մանր երեխաների ճչոց և երբեմն չղթաների չառաչիւն։ Բայց ահա մէջ տեղի կալանաւորները իրար սղմռկելով ճանապարհ բաց արին արանքում և, այդ ճանապարհով անցնելով, եկեղեցու մէջ տեղում, ամենքի առաջին, կանգնեց բանտապետը։

Ժամասացութիւնը սկսուեց։

XXXIX

Նեխլիւդովը առաւօտեան վաղ դուրս եկաւ տանից։ Փողոցով դեռ նոր էր անցնում գիւղացի կաթնավաճառը, որ տարօրինակ ձայնով գոռում էր.

—Կաթ առնող, կաթ առնող, կաթ առնող։

Նախընթաց օրը առաջին տաք գարնանային անձրևն էր եկել։ Ամեն տեղ, ուր սալայատակ չը կար, յանկարծ կանաչել էր խոտը. պարտէզներում կէչիները ծածկուել էին կանաչ տղուտամազով, և թխենիներն ու կաղամախիները պարզել էին իրանց երկար ու անուշաբոյր տերևները, իսկ տներում ու խանութներում մաքրում էին պատուհանները և հանում կրկնակի շրջանակները։ Շուկայում, որի մօտով անց կացրեց կառապանը Նեխլիւդովին, չարչարա վրանների չուրջը վխտում էր խուռն ամբոխ և անց ու դարձ էին անում գզգզուած չորերով շրջիկ մանրավաճառներ, ծախու կօշիկները կոնատակերին և արդուկած անդրավարտիքներն ու ժիլէտները ուսներին։

Տրակտիրների մօտ արդէն խռնուում էին գործարանական բանուորներ, տղամարդիկ՝ մաքուր բաճկոններով ու փայլուն կօշիկներով, իսկ կանայք՝ մետաքսէ վառոդն գլխաչորերով և սև յուլունքներով զարդարուած վերարկուներով։ Փողոցային ոստիկանները, տարբանակների դեղնագոյն դերձանները վզներով գցած, կանգնած էին իրանց տեղերում, դարանելով անկարգութիւններ, որոնք կարող էին ցրուել նրանց տանջող տաղտկութիւնը։ Բուլվարների ճամբլիքներում և նոր կանաչած սիզամարգերում վազվզում էին ու խաղում երեխաներ ու չներ, իսկ նստարանների վրայ նստած զբոյց էին անում ուրախ ու զուարթ յղաճակները։

Փողոցներում, որոնց ձախ կողմը, որ դեռ սուսերի մեջ էր, թաց էր ու ցոլ, իսկ մեջ տեղը՝ արդէն չոբացած, անընդհատ լսւում էր ձիաքարշի զնգզնգոցը, ապրանքատար ծանր սայլերի դղրդոցը և միաձի թեթև կառքերի գոգոցը։ Ամեն կողմից օդը դողդողում էր զանազանակերպ զանգահարութիւնից և զօրանջիւնից, որով եկեղեցիների զանգերը հրաւիրում էին ժողովրդին ներկայ լինել Նոյնպիսի ժամասացութեան, որպիսին այժմ կատարւում էր բանտում։ Եւ զուգուած-զարդարուած ժամաւորները գնում էին ամենքը իրանց ծխական եկեղեցին։

Կառապանը վայր բերեց Նեխլիւդովին, դեռ բանտը չը հասած, փողոցի այն պատանքում, որ տանում էր դէպի բանտը։

Մի քանի հոգի, տղամարդ ու կին, մեծ մասամբ կապոցներով, կանգնած էին այդ նոյն տեղում, բանտից հարիւր քայլաչափ հեռու։ Այդ կողմում փայտէ ցածր չինութիւններ էին, ձախ կողմում՝ մի երկյարկանի տուն՝ ինչ որ յուշանակով։ Բանտի բուն քարէ շէնքը առջևումն էր և այցելուներին չէին թողնում այն կողմը գնալ։ Պահապան զինուորը, հրացանը ձեռքին, յետ ու առաջ էր գնում, խիստ ձայնով գոռալով այն մարդկանց վրայ, որոնք ուզում էին կողքովը անց կենալ։

Փայտէ չինութիւնների դռնակի մօտ, այ կողմից, պահապան զինուորի դէմ ու դէմդէմ, նստարանի վրայ նստած էր վերակացուն երիզազարդ չքազգեստը հագին և մի տետրակ ձեռքին։ Այցելուները մօտենում էին նրան, ասում էին, թէ ում են ուզում տեսնել, և նա գրի էր անցնում։ Նեխլիւդովին էլ մօտեցաւ նրան ու տուեց Եկատերինա Մասլովայի անունը։ Երիզազարդ վերակացուն գրեց տետրակում։

—Ինչո՞ւ դեռ ներս չեն թողնում,—հարցրեց Նեխլիւդովը։

—Պատարագ կայ եկեղեցում։ Պատարագը որ դուրս գայ, ներս կը թողնեն։

Նեխլիւդովը յետ քաշուեց դէպի սպասողների խումբը։ Բազմութիւնից առաջ եկաւ և ուղղուեց դէպի բանտը ամբողջ երեսը կարմիր չերտերով ծածկուած մի մարդ, գզգզուած չորեքով, ճմռուած գլխարկով և բոբիկ ոտներին քրքրած կօշիկներ հագած։

—Ո՞ւր ես խցկւում,—գոռաց նրա վրայ հրացանակիր զինուորը։

—Դու՛ ինչո՞ւ ես բղաւում,—առանց աւելորդին չափաւելու զինուորի գոռոցից, պատասխանեց գզգզուած մարդը ու յետ դարձաւ,—չես թողնում, չեմ գնալ։ Թէ չէ այնպէս է գոռում, կարծես երանալ լինի։

Բազմութեան մէջ լսուեց հաւանութեան ծիծաղ։ Այցելուները մեծ մասամբ վատ հագնուած և նոյն իսկ զզուելի էին, բայց մէջները կային և վայելուչ հագուստով կանայք ու տղամարդիկ։ Նեխլիւդովի կողքին կանգնած էր լաւ հագնուած, ամբողջ դէմքը ածիլած, լեզը-լեզը ու կարմրերես մի մարդ, որ ձեռքին բռնած ունէր մի կապոց, երևի սպիտակեղէնով։ Նեխլիւդովը հարցրեց նրանից, արդեօք առաջին անգամն է այդտեղ լինում։ Կապոցաւոր մարդը պատասխանեց, որ ինքը ամեն կիրակի գալիս է բանտը, և նրանք սկսեցին խօսել։ Դա մի բանկի դրնապան էր և եկել էր այցելելու իր եղբօրը, որ դատւում էր կեղծարարութեան համար։ Այդ բարեհոգի մարդը պատմեց Նեխլիւդովին իր ամբողջ պատմութիւնը և ուզում էր նրանից էլ հարց ու փորձ անել, բայց այդ ժամանակ նրանց ուշադրութիւնը գրաւեցին մի ուսանող ու քողքաւոր մի կին, որոնք մօտեցան նրանց ոչ զինուաւոր միաձի կառքով, որին լծուած էր մի տոհմիկ սև նժոյգ։ Ուսանողի ձեռքին մի մեծ կապոց կար։ Նա մօտեցաւ Նեխլիւդովին և հարցրեց—կարելի է արդեօք և ինչպէս պէտք է տալ կալանաւորներին իրանց բերած ողորմութիւնը, հացերը։ «Նշանածիս յանկութեամբն եմ անում։ Այս իմ նշանածն է։ Ծնողները խորհուրդ տուեցին հաց բերել կալանաւորներին»։

—Ես ինքս էլ առաջին անգամն եմ այստեղ ու չը գիտեմ ինչպէս պէտք է անել, բայց կարծում եմ, որ պէտք է այս մարդուց հարցնել,—ասաց Նեխլիւդովը ցոյց տալով աջակողմում տետրակը ձեռքին նստած երիզազարդ վերակացուի վրայ։

Այն միջոցին, երբ Նեխլիւդովը խօսում էր ուսանողի հետ, բանտի երկաթէ մեծ դուռը, որի մէջտեղում փոքրիկ պատուհան էր չինուած, բացուեց և բանտից դուրս եկաւ մի չքազգեստաւոր օֆիցեր մի ուրիշ վերակացուի հետ, և տետրակաւոր վերակացուն յայտնեց ամենքին, որ ներս են թողնում այցելուներին։ Պահապան զինուորը մի կողմ քաշուեց, և բոլոր այցելուները, կարծես վախենալով ուշանալ, արագ քայլերով, ոմանք նոյն իսկ վազելով, դիմեցին դէպի բանտի դուռը։ Դրանն մօտ կանգնած էր վերակացուներից մէկը, որ՝ այցելուները անցնելիս՝ համարում էր նրանց, բարձրաձայն արտասանելով 16, 17 և այլն։ Միւս վերակացուն, չինութեան ներսում, ձեռքով չօչափելով ամեն մի անցնողի, կրկին համարում էր նրանց հետևեալ դռնով ներս մտնելիս, որպէս զի դուրս թողնելիս, հաշիւը ստուգելով, ոչ մի այցելուի չը թողնի բանտում և ոչ մի կալանաւորի բաց չը թողնի բանտից։ Այդ համարողը, չը նայելով անցնողների երեսին, Նեխլիւդովի մէջքին էլ խփեց ձեռքով, և վերակացուի ձեռքի այդ հպումը առաջին րոպէին վի-

բաւորական թուաց Նեխլիւդովին, բայց նա իսկոյն մտաբերեց, թէ ինչու է եկել այդտեղ, և ամաչեց այդպիսի անախորժութիւն ու վիրաւորանք զգալուն համար։

Դռնից անմիջապէս յետոյ գտնւում էր մի մեծ կամարաւոր սենեակ, փոքրիկ վանդակապատ պատուհաններով։ Այդ սենեակում, որ հաւաքարան էր կոչւում, Նեխլիւդովը տեսաւ Մաչելութեան պատկերը մի դարակում։

Նեխլիւդովը գնում էր դանդաղ քայլերով, ճանապարհ տալով չտապող այցելուներին և միաժամանակ զգալով՝ սարսափ այն չարագործներից, որոնք կալանաւորուած են այդտեղ, կարեկցութիւն՝ դէպի այն անմեղ անձինք, որոնք, ինչպէս երէկուան պատանին ու Կատիւշան, ստիպուած են մնալ այդտեղ, և ամօթ ու խանդաղատանք առաջիկայ տեսակցութիւնից։ Առաջին սենեակից դուրս գալու ժամանակ, սենեակի միւս ծայրում, վերակացուն մի բան ասաց։ Բայց Նեխլիւդովը, խորասուզուած իր մտածմունքների մէջ, ուշ չը դարձրեց այդ բանին եւ շարունակեց գնալ այն կողմը, ուր գնում էր այցելուների մեծ մասը, այսինքն աղաժարգկանց բաժանմունքը, մինչդեռ նրան պէտք էր գնալ կանանց բաժանմունքը։

Շտապողներին ճանապարհ տալով, նա վերջինը մտաւ տեսակցութեան համար նշանակուած սենեակը։ Երբ, դուռը բանալով, ներս մտաւ այնտեղ, նա մնաց ապշած, լսելով մի խլացուցիչ ժխոր, որ առաջանում էր հարիւրաւոր ձայների միախառնութիւնից։ Բանի էութիւնը նա հասկացաւ միայն այն ժամանակ, երբ աւելի ևս մօտեցաւ այցելուներին, որոնք, չաքարի վրայ կիտուած ճանճերի նման, կպել էին սենեակը երկու մասի բաժանուող ցանցապատիցը։ Այդ սենեակը, որ լուսամուտներ ունէր յետևի պատում, երկու մասի էր բաժանուած երկու հատ երկաթաթել ցանցերով, որոնք առաստաղից ձգւում էին մինչև յատակը։ Ցանցապատների արանքում գնում գալիս էին վերակացուները։ Ցանցապատների միւս կողմում կանգնած էին կալանաւորները, այս կողմում՝ այցելուները։ Սրանց ու նրանց անջատում էին իրարից երկաք արշին արանք ունեցող ցանցապատները, այնպէս որ անկարելի էր ոչ միայն որ և է բան տալ իրար, այլ և լաւ տեսնել դէմքերը, մանաւանդ կարճատես մարդու համար։ Դրժուար էր նաև խօսել. ասածը լսուելու համար պէտք էր գոռալ ամբողջ ոյժով։ Երկու կողմից էլ կանայք, այրեր, հայրեր, մայրեր ու երեխաներ երեսները հուպ էին տուել ցանցերին, աշխատելով տեսնել իրար և ասել ինչ որ ասելիք ունէին։ Բայց որովհետև ամէն մարդ աշխատում էր այնպէս խօսել, որ խօսակիցը լսէր, իսկ կողքի հարևանները, նոյնը ուզելով, խանգարում էին

նրան, ուստի իւրաքանչիւրը աշխատում էր իր ձայնով խեղդել ուրիշի ձայնը։ Դրանից էր առաջանում աղաղակներով ընդհատուող այն ժխորը, որ զարմացրեց Նեխլիւդովին, սենեակը մտնելիս։ Բոլորովին անկարելի էր հասկանալ, թէ ինչ են ասում։ Միմիայն դէմքերիցը կարելի էր գտնել, թէ ինչ են ասում և ինչ յարաբերութիւններ կան խօսակիցների մէջ։ Նեխլիւդովի կողքին կանգնած էր գլխին չոր կապած մի պառաւ, որ, ցանցին սղմուած, դողդոջուն կզակով ինչ որ գոռում էր մի ածիլուած կիսազլխով դունատ երիտասարդի։ Կալանաւորը ուշադրութեամբ լսում էր նրա ասածը, յօնքերը բարձրացրած ու ճակատը կնճռած։ Պառաւի կողքին կանգնած էր հասարակ հագնուած մի երիտասարդ, որ, գլուխը թափ տալով, լսում էր այն խօսքերը, որ ասում էր նրան նմանող մի կալանաւոր, ցասաստանջ դէմքով ու սպիտակող մրուքով։ Աւելի հեռու կանգնած էր մի զզզուած մարդ, որ ինչ որ գոռգոռում էր ու ծիծաղում, թափ տալով ձեռքը։ Իսկ նրա կողքին, յատակի վրայ, երեխան գրկին, նստած էր լաւ բրդէ գլխաշորով մի կին, որ հեկեկում էր, անչուչա առաջին անգամ կալանաւորի հագուստով, ածիլուած գլխով ու չղթայակապ տեսնելով այն ահեղ մարդուն, որ կանգնած էր ցանցապատի միւս կողմում։ Այդ հինջ գլխավերևում այն գոռնապանը, որի հետ մի փոքր առաջ խօսում էր Նեխլիւդովը, որքան ուժգումը կար՝ գոռում էր իր դէմ ու դէմը կանգնած ճաղատ գլխով ու փայլուն աչքերով կալանաւորին։

Նեխլիւդովը մի հինգ րոպէ մնաց այդ սենեակում, զգալով ինչ որ տարօրինակ թափթփ, գիտակցելով իր անզօրութիւնը և իր կարուածութիւնը ամբողջ աշխարհից. նրան տիրել էր այնպիսի հոգեկան տրամադրութիւն, ինչպէս մարդ զգում է նաւակոծութեան ժամանակ։

«Սակայն պէտք է անել այն բանը, ինչի համար որ եկել եմ այստեղ,—ասաց նա մտքումը, քաջալերելով ինքն իրան։—Ի՞նչպէս պէտք է անել»։

Նա սկսեց աչքերով փնտռել որ և է իշխանաւորի և տեսնելով մի կարճահասակ, նիհար ու բեխաւոր պարոնի, որ՝ օֆիցերական ուսադիրները ուսին՝ պատում էր այցելուների յետևում, դիմեց նրան.

—Ձեր կարող արդեօք, պարոն, ասել ինձ,—հարցրեց նա սաստիկ նուրբ քաղաքավարութեամբ,—որտեղ են պահում կանայք և որտեղ կարելի է տեսնուել նրանց հետ։

—Մի՞թէ ձեզ կանանց բաժանմունքն է պէտք։

—Այո, ես ի՛ուզէի տեսնել կալանաւոր կանանցից մէկին,—

Նոյնպիսի ծայրայեղ քաղաքավարութեամբ պատասխանեց Նեխլիւդովը։

—Այդպէս էլ կ'ասէիք հաւաքարանում եղած ժամանակ։—Ո՞ւմ էք ուզում տեսնել։

—Եկատերինա Մասլովային։

—Նա դատապարտուած է արդէն։

—Այո, երէկ չէ անցեալ օրը դատապարտուեց,—հլու կերպով պատասխանեց Նեխլիւդովը, վախենալով յանկարծ փչացնել բանտապետի տրամադրութիւնը, որ կարծես համակրութեամբ էր վերաբերուում նրան։

—Եթէ կանանց բաժանմունքն էք ուզում, եկէք այս կողմը,—ասաց բանտապետը, անչուչա վճռելով, Նեխլիւդովի արտաքինով, թէ նա արժանի է ուշադրութեան։—Սիդօրով,—դիմեց նա մեդալակիր ու բեխաւոր ունտէր-օֆիցէրին,—այս պարոնին տար կանանց բաժանմունքը։

—Լսում եմ։

Այդ ժամանակ ցանցապատի մօտ լսուեց այցելուներից մէկի աղէկտուր հեկեկանքը։

Այդ բոլորը տարօրինակ էր թուում Նեխլիւդովին և ամենից տարօրինակ էր թուում նրան այն բանը, որ ինքը չնորհակալութիւն էր յայտնում և իրան պարտաւորուած զգում բանտապետին և գլխաւոր վերակացուին։

Վերակացուն Նեխլիւդովին տղամարդկանց այցելարանից դուրս բերեց միջանցքը և իսկոյն, դէմուդէմի գտնուել, տարաւ կանանց այցելարանը։

XL

Այդ սենեակը, տղամարդկանց այցելարանի պէս, երկու ցանցապատով բաժանուած էր երեք մասի, բայց նրանից շատ փոքր էր և այցելուներ ու կալանաւորներ էլ այդտեղ աւելի քիչ կային։ Սակայն զոռոզանքն ու աղմուկը նոյնքան աստիճ էր, որքան և տղամարդկանց սենեակում։ Այդտեղ էլ ցանցապատների արանքին մանը էր գալիս իշխանաւորը։ Այդտեղի իշխանաւորը վերակացուհին էր, երիզազարդ թևքերով ու կապոյտ ժապաւէններով հասմազգեստը հագին և վերակացուների գօտի նման գօտի մէջքին։ Եւ բոլորովին այնպէս, ինչպէս տղամարդկանց այցելարանում, երկու կողմից մարդիկ կպցրել էին երեսները ցանցապատին,—այս կողմից քաղաքացի բնակիչներ զանազան տեսակ հագուստներով, այն կողմից՝ կալանաւորուհիներ, ոմանք սպիտակ, ոմանք էլ իրանց սովորական հագուստներով։ Սէրողջ երկարութեամբ,

ցանցը ծածկուած էր մարդկանցով։ Մի քանիսը բարձրացել էին ոտների ծայրի վրայ, որպէս զի ձայները լսելի լինէին ուրիշների գլխաւերևից, մի քանիսն էլ յատակի վրայ նստած էին խօսակցում։

Բոլոր կալանաւորուհիների մէջ, թէ իր ծղրտան ձայնով և թէ իր տեսքով, ամենից շատ աչքի էր ընկնում զանգուր մազերի վրայից գլխաչորը վայր իջած, մի փրչոտ ու նիհար գնչուհի, որ, ցանցապատի միւս կողմում, սենեակի գրեթէ մէջտեղում, սիւնի մօտ կանգնած, ձեռները արագ-արագ չարժելով ու գոռգոռալով ինչ որ մի բան էր ասում կապոյտ սիւրտուկ հագած և ցածրահասակ ու պինդ գօտեւորուած մի ցիգանի։ Ցիգանի կողքին մի զինուոր, գեռնին պպզած, խօսում էր կալանաւորուհիներից մէկի հետ։ Նրանից դէնը, ցանցապատին կպած, կանգնած էր մի չէկ միրուքով ու կարմրատակած երեսով տարեխաւոր երիտասարդ գեղջուկ, որ, ինչպէս պարզ երևում էր, հազիւ հազ էր պահում արտասուքները։ Նրա հետ խօսում էր, իր բաց-կապտագոյն աչքերով նայելով նրան, մի սիրունատես չիկահեր կալանաւորուհի։ Ֆեդօսեան ու իր մարդն էին այդ։ Նրանցից այն կողմը կանգնած խօսակցում էին մի գզգզուած չորեքով այցելու և մի չիերէք հագնուած ու լայներես կալանաւորուհի։ Այնուհետև երկու կին, մի տղամարդ, մի կին և ամենքի դիմացը միմի կալանաւորուհի։ Մասլովան չը կար կալանաւորուհիների մէջ։ Բայց նրանց յետևում, այն կողմում, մի կին էլ կար կանգնած, և Նեխլիւդովը իսկոյն և եթ հասկացաւ, որ այդ նա է, և իսկոյն և եթ զգաց, թէ ինչպէս իր սիրտը սկսեց աստիճ խփել և չունչը բռնուեց։ Վճռական րոպէն մօտենում էր։ Նա մօտեցաւ ցանցին և ճանաչեց, որ Կատիւշան էր։ Կապտաչեայ Ֆեդօսեայի յետևում կանգնած, Կատիւշան ժպտում էր, լսելով նրա խօսածը։ Նա խալաթով չէր, ինչպէս նախանցեալ օրը, այլ սպիտակ բամբակոնով, որ քիւի հուպ էր տուած գօտիով և բարձր ցցուել էր կրծքի վրայ։ Գլխաչորի տակից, ինչպէս և դատարանում, երեւում էին սև ու գանգուր մազերը։

«Այս րոպէիս կը վճռուի ամեն ինչ,—մտածում էր Նեխլիւդովը։—Ի՞նչպէս կանչեմ։ Թէ գուցէ ինքը կը մօտենայ»։

Բայց Կատիւշան չէր մօտենում։ Նա սպասում էր կլարային և ամենևին չէր մտածում, թէ այդ մարդը իրան տեսնելու համար է եկել։

—Ո՞ւմ էք ուզում,—մօտենալով Նեխլիւդովին հարցրեց ցանցապատների արանքում մանը եկող վերակացուհին։

—Կատերինա Մասլովային,—հազիւ հազ կարողացաւ արտասանել Նեխլիւդովը։

—Մասլովա, քեզ են ուզում,—գոռաց վերակացուհին։

Մասլովան յետ նայեց ու բարձրացնելով գլուխը ու դուրս ցցելով կուրծքը, Նեխլիւդովին վազուց ծանօթ պատրաստակամութեան արտայայտութեամբ մօտեցաւ ցանցապատին, ճանապարհ բանալով երկու կալանաւորուհիների մէջ, և զարմացական ու հարցական հայեացքը յառեց Նեխլիւդովի վրայ, չը ճանաչելով նրան։

Բայց հագուստիցը դատելով, որ հարուստ մարդ պէտք լինի, ժպտաց։

—Ի՞նչ էք ուզում,—ասաց նա, մօտենալով ցանցապատին իր չիլ աչքերն ու ժպտուն երեսը։

—Ես ուզում էի տեսնել...—Նեխլիւդովը չը գիտէր՝ «դուս»-ով խօսէր թէ «դուք»-ով, բայց վճռեց «դուք»-ասել։ Նա խօսում էր սովորականից ոչ բարձր ձայնով.—Ես ուզում էի տեսնել ձեզ... ես...

—«Նաշլներ մի պատմի»,—գոռում էր կողքին դղրդուած աչկելուն։—«Վերցրել ես թէ չէ»։

—«Ձեռքից բոլորովին գնացել է, չատ թոյլ է...»—գոռում էր մի ուրիչը միւս կողմից։

Մասլովան չէր կարողանում լսել Նեխլիւդովի ասածը, բայց այն արտայայտութիւնը, որ խօսելու ժամանակ երեսում էր նրա դէմքի վրայ, յանկարծ յիշեցրեց Կատիւշային այն բանը, որ նա չէր ուզում մտաբերել, և ժպիտը յանկարծ չքացաւ երեսից ու ճակատի վրայ երևաց մի ցաւատանջ կնճիռ։

—Ձեմ լսում ինչ էք ասում,—գոչեց նա, աչքերը պլչելով և աւելի ու աւելի կնճռելով ճակատը։

—Ես եկել եմ...

«Այո, այսպէս եմ վարուում, ինչպէս պէտք է, խոստովանում եմ մեղքս»,—մտածեց Նեխլիւդովը։

Եւ այդ մտածելուն պէս, արտասուքը լցրեց աչքերը, սրդմեց կոկորդը, և նա, մատներով բռնելով ցանցից, լռեց, ճիգ թափելով հեկեկանքը զսպել։

—«Եթէ առողջ լինէր, ես չէի գնայ»,—գոռում էին մի կողմից։

—«Աստուած վկայ, անգէտ եմ այդ բանից»,—գոռում էր միւս կողմի կալանաւորուհին։

Մասլովան նկատեց Նեխլիւդովի յուզմունքը և այդ յուզմունքը հաղորդուեց և նրան,—աչքերը փայլատակեցին, սպիտակ ու թխլիկ թշերը պուտ-պուտ կարմրեցին, բայց դէմքը էլի խիստ արտայայտութիւն ունէր և չիլ աչքերը էլի յառած նայում էին Նեխլիւդովի կողքովը։

—Նմանութիւն կայ, բայց լաւ չեմ ճանաչում,—գոռաց նա։

—Ես եկել եմ քեզնից ներողութիւն խնդրելու,—ձայն տուեց Նեխլիւդովը բարձր ձայնով, առանց ելևէջների, ինչպէս մի սերտած դաս։

Երբ նա գոռաց այդ խօսքերը, ամօթ զգաց ու յետ նայեց։ Բայց իսկոյն և նէ մտածեց, որ աւելի լաւ է, որ ամաչում է, որովհետև պարտական է ամօթահար լինել։ Ու բարձր ձայնով չարունակեց.

—Ես վատ կերպով, զզուելի կերպով վարուեցի քեզ հետ, ներիր ինձ։

Մասլովան, անշարժ կանգնած, չէր հեռացնում նրանից իր չիլ հայեացքը։

Նեխլիւդովը չը կարողացաւ այլ ևս խօսել ու հեռացաւ ցանցապատից, աչխատելով զսպել կուրծքը ցնցող հեկեկանքը։

Բանտապետը, այն նոյն մարդը, որ Նեխլիւդովին ուղարկել էր կանանց բաժանմունքը, ակներևաբար հետաքրքրուած նրանով, եկաւ այդ բաժանմունքը և, տեսնելով, որ նա ցանցապատի մօտ չէ, հարցրեց, թէ ինչու նա չի խօսում իր ուզած կալանաւորուհու հետ։ Նեխլիւդովը սրբեց քիթը և, թափահարուելով ու աչխատելով հանգիստ տեսք ունենալ, պատասխանեց.

—Ձեմ կարողանում ցանցապատի միջով խօսել, ոչինչ չի լսուում։

Բանտապետը մտածեց։

—Որ այդպէս է, կարելի է մի փոքր ժամանակով նրան դուրս բերել այս կողմը։

—Մարեա Կարլօվնա,—դիմեց նա վերակացուհուն։—Դուրս բերէք Մասլովային։

XLI

Մի րոպէ անցած կողքի դռնից դուրս եկաւ Մասլովան։ Կակուղ քայլերով նա քիփ մօտեցաւ Նեխլիւդովին, կանգ առաւ ու յօնքերի տակից նայեց նրան։ Սև խոպոպները, ինչպէս և նախանցեալ օրը, դուրս էին ցցուած գլխաշորի տակից և անառողջ, թխլիկ ու սպիտակ երեսը սիրուն էր ու բոլորովին հանգիստ. միայն պապանձ ու սև աչքերն էին առանձին կերպով փայլում ուռած կոպերի տակից։

—Կարող էք այստեղ խօսել,—ասաց բանտապետը ու հեռացաւ։

Նեխլիւդովը մօտեցաւ պատի մօտ նստարանին։

Մասլովան հարցական հայեացքով նայեց բանտապետի օգնականին ու յետոյ, զարմացածի պէս վեր քաշելով ուսերը, գնաց Նեխլիւդովի յետևից դէպի նատարանը և նստեց նրա կողքին, չհետևելով ներքնազգեստը։

—Գիտեմ, որ ձեզ համար դժուար է ինձ ներել,—սկսեց Նեխլիւդովը, սակայն նորից կանգ առաւ, զգալով, որ արտասուքը խանգարում է,—բայց եթէ այլ ևս անկարելի է ուղղել անցածը, գոնէ այժմ ևս պատրաստ եմ անել այն բոլորը, ինչ որ կարող եմ։ Ասացէք...

—Ի՞նչպէս գաք ինձ,—չը պատասխանելով նրա հարցին, հարցրեց Մասլովան և՝ նայելով և՝ չը նայելով նրա վրայ իր չիլ աչքերով։

«Տէր Աստուած։ Օգնիր ինձ։ Խելամուտ արա, թէ ինչ պէտք է անեմ», ասում էր ինքն իրան Նեխլիւդովը, նայելով նրա դէմքին, որ այնքան վոխոխուած էր այժմ։

—Երէկ չէ միւս օրը ևս երդուեցայ աւետարանի, որ ամենակալ էի,—ասաց նա,—երբ ձեզ գտայ էին։ Չը ճանաչեցիք ինձ։

—Չէ, չը ճանաչեցի։ Ժամանակ չը կար ճանաչելու։ Աւելի՛ք, չէի էլ նայում,—պատասխանեց նա։

—Երեխայ է եղել, ասում են,—հարցրեց Նեխլիւդովը ու զգաց, որ երեսը կարմրատակեց։

—Փառք Աստուծու, ծնուելուն պէս մեռաւ,—կարճ կերպով ու չարագին պատասխանեց Մասլովան, չուռ տալով նրանից հայեացքը։

—Ի՞նչպէս եղաւ այդ, ինչից մեռաւ։

—Ինչպէս էլ հիւանդ էի, քիչ մնաց մեռնէի,—ասաց նա, առանց աչքերը բարձրացնելու։

—Մօրաքոյրներս ինչպէս թողեցին, որ դուք հեռանաք։

—Ո՛վ կը պահի երեխաներ աղախին։ Հէնց որ նկատեցին, իսկոյն դուրս արեցին։ Է՛հ, ինչեր եմ ասում,—ոչինչ չեմ յիշում, ամէն բան մոռացել եմ։ Եղածը եղաւ վերջացաւ։

—Չէ, դեռ չի վերջացել։ Ես չեմ կարող այդ բանը այդպէս թողնել։ Ուզում եմ գոնէ այժմ քաւել մեղքս։

—Քաւելու բան չը կայ. ինչ որ եղաւ՝ անց կացաւ, պըրծաւ,—ասաց նա և, Նեխլիւդովի համար բոլորովին անսպասելի կերպով, յանկարծ նայեց նրան ու անախորժ կերպով ժպտաց հրապուրիչ ու խղճուկ ժպիտով։

Մասլովան ամէնևին չէր սպասում, թէ կարող է տեսնել Նեխլիւդովին, մանաւանդ այժմ և այստեղ, ուստի և նրա գալը առաջին րոպէին զարմացրեց նրան ու յիշեցրեց այն բանը, ինչ որ երբեք չէր յիշում։ Առաջին րոպէին նա անորոշ կերպով յիշեց զգացմունքների և մտքերի այն նոր ու հրաշալի աշխարհը, որ նրա աչքի առաջ բաց արեց իրան սիրող ու իրանից սիրուած չքնաղ պատանին, և յետոյ այդ պատանու անհասկանալի անգըթութիւնը և այն ամբողջ շարք ստորութիւնները և տանջանքները, որոնք հետևեցին այդ կախարդական երջանկութեանը և առաջ եկան այդ երջանկութիւնից։ Ծիչեց ու սիրտը կսկծաց։ Բայց անկարող լինելով գլուխ հանել այդ յիշողութիւններից, նա այժմ էլ այնպէս վարուեց, ինչպէս վարուում էր միշտ, հեռու քշեց այդ յիշողութիւնները և աշխատեց զբօսել նրանց անառակ կեանքի առանձին մշուշով։ Առաջին րոպէին նա իր երեւակայութեան մէջ ի մի ձուլեց առջևումը նստած մարդուն այն պատանու հետ, որին սիրում էր մի ժամանակ, բայց տեսնելով, որ սաստիկ կսկծալի է այդ, նա այլ ևս դադարեց այդ պատկերները ի մի ձուլելուց։ Այժմ այդ մաքուր հաղուստով ու անուշաջրած մօրուքով քնքշամարմին պարոնը նրա համար այն Նեխլիւդովը չէր, որին նա սիրում էր, այլ միայն մէկը այն մարդկանցից, որոնք, պէտք ունեցած ժամանակները, օգտուում են իր նման արարածներից և որոնցից որքան կարելի է չահաւէտ կերպով պէտք է օգտուել իր նման արարածները։ Ուստի և նա հրապուրիչ կերպով ժպտաց Նեխլիւդովին։

Մի փոքր ժամանակ նա լուռ մնաց, մտմտալով, թէ ինչպէս օգուտ քաղի Նեխլիւդովից։

—Առաջուանը անցել պրծել է,—ասաց նա։—Դժուարը հիմի է, որ Սիբիր են քշում ինձ։

Եւ չրթունքները դողացին այդ սարսափելի խօսքը արտասանելիս։

—Ես գիտէի, ես հաւատացած էի, որ դուք անմեղ էք,—ասաց Նեխլիւդովը։

—Ի հարկէ, մեղաւոր չեմ։ Մի՛թէ ես գող եմ, աւազակ եմ։ Այստեղ ասում են, թէ ամէն բան փաստաբանից է կախուած,—չարունակեց նա։—Ասում են, պէտք է խնդիրք տալ։ Բայց, ասում են, շատ են ուզում փաստաբանները...

—Այո, անպատճառ պէտք է,—ասաց Նեխլիւդովը։—Ես արդէն դիմել եմ փաստաբանի։

—Պէտք է փորձին չը խնայել ու լաւ փաստաբան բռնել,—ասաց Մասլովան։

—Ինչ որ կարելի լինի կ'անեմ։

Լռութիւն տիրեց։

Մասլովան էլի այնպէս ժպտաց։

—Ես ուզում էի ձեզնից, եթէ կարելի է... փող խնդրել։ Շատ չէ... մի տասը ռուբլի,—յանկարծ ասաց Մասլովան։

—Լաւ, լաւ,—ամաչելով ասաց Նեխլիւդովը ու ձեռքը տարաւ դէպի քսակը։

Մասլովան չսպասով նայեց բանտապետին, որ դնում-գալիս էր սենեակում։

—Սրա մօտ չը տաք. երբ որ հեռանայ, այն ժամանակ տուէք. թէ չէ կ'առնի ձեռքիցս։

Հէնց որ բանտապետը չուռ եկաւ, Նեխլիւդովը հանեց զրպանից քսակը, բայց մինչև տասը ռուբլիանոցը Մասլովային տալը՝ բանտապետը նորից դարձաւ նրանց կողմը։ Նեխլիւդովը փողը հուպ տուեց ձեռքի մէջ։

«Ի՞նչ բան է սա այժմ, մի մեռած կէն միայն», մտածեց Նեխլիւդովը, նայելով այդ՝ մի ժամանակ համակրելի, իսկ այժմ պղծուած թխլիկ դէմքին, որ վատ ցոլքով փայլող սև ու չիլ աչքերով հետևում էր մի կողմից բանտապետին, միւս կողմից նրա ձեռքի մէջ սղոցուած փողին։ Եւ, այդ մտածելով, մի րոպէ տատանման մէջ ընկաւ նա։

Այն դայթակղիչը, որ երէկ գիշեր խօսում էր նրա հոգու մէջ, նորից սկսեց խօսել, աչխատելով, ինչպէս միշտ, դարձնել նրա ուշադրութիւնը այն հարցից, թէ ինչ պէտք է անել, այն հարցի վրայ, թէ ինչ գուրս կը գայ նրա արածից և ինչն է օգտակար։

«Արածդ զուր կ'անցնի այդ կնոջ համար,—ասում էր այդ ձայնը,—միայն մի քար կը կապես վզիցդ, որ ջրի տակը կը քաշի քեզ ու թոյլ չի տալ, որ օգտակար լինես ուրիշներին»։

—Հը՞, մտածեց նա, ինչ որ կայ տամ իրան, ձնաս բարև ասեմ ու ընդ միշտ վերջ տամ այս բանին։

Բայց խոհրն և ևթ զգաց, որ այժմ, այդ րոպէին, ինչ որ ամենակարևոր բան է կատարւում իր հոգու մէջ, որ այդ րոպէին իր ներքին կեանքը կարծես մի տատանուող կշեռքի վրայ է գտնւում, որ կարող է այս կամ այն կողմը թեքուել ամենաչնչին ճիգի շնորհիւ։ Եւ նա գործ դրեց այդ ճիգը, օգնութիւն հայցելով Այն Աստուծուց, Որին նա երէկ զգաց իր հոգու մէջ, և Աստուած խոհրն և ևթ ներշնչեց նրան։ Նա վճռեց անմիջապէս տալ Մասլովային ամեն ինչ։

—Կատիւշա, ես եկել եմ քեզնից ներողութիւն խնդրելու, իսկ դու չը պատասխանեցիր, ներեցիր արդեօք ինձ, ներելու եա արդեօք երբևիցէ,—ասաց նա, յանկարծ «դու»-ի անցնելով։

Մասլովան ականջ չէր դնում նրա ասածին, այլ նայում էր մէկ նրա ձեռքին, մէկ՝ բանտապետին։ Հէնց որ բանտապետը չուռ եկաւ, նա իսկոյն ձեռքերը մեկնեց դէպի Նեխլիւդովը, վերցրեց փողը ու կոխեց գօտիի մէջ։

—Ջարմանալի բաներ էք ասում,—ասաց նա, ինչպէս թուաց Նեխլիւդովին, արհամարհական ժպիտով։

Նեխլիւդովը զգում էր, որ Մասլովայի մէջ մի ինչ որ մի բան կայ, ուղղակի թշնամական դէպի ինքը, որ պաշտպանում է նրան այնպէս, ինչպէս որ նա կայ, և թոյլ չէ տալիս իրան թափանցել նրա սիրտը։

Բայց, զարմանալի բան,—այդ ոչ միայն հակակրանք չէր ազդում նրան դէպի Մասլովան, այլ աւելի ևս քան առաջ՝ գրաւում էր դէպի նա մի նոր ու առանձին այժմ։ Նա զգում էր, որ ինքը պէտք է սթափեցնի Մասլովայի հոգին, զգում էր և այն որ սարսափելի դժուար է այդ,—բայց հէնց այդ դժուարութիւնը գրաւիչ էր նրա համար։ Նա այնպիսի բան էր զգում այժմ դէպի Մասլովան, ինչպիսի բան երբէք չէր զգացել առաջ ոչ դէպի նա, ոչ դէպի մի ուրիշը,— այնպիսի զգայմունք, որի մէջ չը կար ոչինչ անձնական բան. նա ոչինչ չէր ցանկանում Մասլովայից իր համար, այլ ցանկանում էր միայն, որ նա դադարի այնպիսի կին լինելուց, ինչպէս էր այժմ, ցանկանում էր, որ նա սթափուի և դառնայ այնպիսի էակ, ինչպէս առաջ էր։

—Ինչո՞ւ ես այդպէս խօսում, Կատիւշա։ Ջէ որ ես քեզ ճանաչում եմ, յիշում եմ, թէ ինչպէս էիր այն ժամանակ Պանովոյում...

Բայց Մասլովան տեղի չէր տալիս, չէր ուզում տեղի տալ։

—Ջարժի հին զարմանը քաշու տալ,—աւելի ևս կնճռուելով, ասաց նա չոր-չոր,

—Ես հինը յիշում եմ, որ քաւեմ մեղքս Կատիւշա,— սկսեց նա և ուզում էր ասել, որ ինքը կը պսակուի նրա հետ, բայց այդ րոպէին հանդիպեց նրա հայեացքին ու այնպիսի մի սարսափելի ու կոպիտ, այնպիսի հակակրական բան կարդաց այդ հայեացքի մէջ, որ չը կարողացաւ խօսքը լրացնել։

Այդ միջոցին այցելուները սկսեցին դուրս գալ։ Բանտապետը մօտեցաւ Նեխլիւդովին և ասաց, որ տեսակցութեան ժամանակը վերջացել է։ Մասլովան վեր կացաւ ու հլու կերպով սպասում էր, թէ երբ բաց կը թողնեն իրան։

—Մնաք բարև, դեռ չատ բան ունեմ ձեզ ասելու, բայց, ինչպէս տեսնում էք, այժմ անկարելի է,— ասաց Նեխլիւդովը ու մեկնեց ձեռքը դէպի նա։—Ես էլի կը գամ...

—կարծեմ, ինչ որ կար ասացիք...

Ասաց Մասլովան ու ձեռք տուեց նրան, բայց առանց նրան նայելու։

—Ջէ, ես կ'աչխատեմ էլի տեսնուել ձեզ հետ այնպիսի տե-

զուա՛մ, ուր կարելի լինի կարգին խօսել, և այն ժամանակ կ՚ասեմ ձեզ մի չատ կարևոր բան, որ պէտք է յայտնել ձեզ,—ասաց Նեխլիւդովը։

—Որ ուզում էք, եկէք,—ասաց Մասլովան, այնպէս ժըպտալով, ինչպէս ժպտում էր այն տղամարդկանց, որոնց ուզում էր դուր գալ։

—Դուք քրոջիցս էլ ուելի էք ինձ համար,—ասաց Նեխլիւդովը։

—Զարմանք բան է,—կրկնեց Մասլովան և, գլուխը թափ տալով, գնաց ցանցապատի այն կողմը։

XLII

Նեխլիւդովը սպասում էր, որ, հէնց առաջին տեսակցութեան ժամանակ, կատիւշան, տեսնելով նրան և իմանալով, որ զղջացել է ու ուզում է օգնել իրան, իսկոյն կ՚ուրախանայ, կը խանդաղատուի և նորից առաջուան կատիւշան կը դառնայ, բայց սարսափով տեսաւ, որ իր առջևը Կատիւշան չէ, այլ միայն Մասլովան։ Այդ զարմացրեց և սարսափեցրեց նրան։

Ամենից ուելի զարմացնում էր նրան այն, որ Մասլովան ոչ միայն չէր ամաչում իր վիճակից,—ոչ թէ կալանատուրուհի լինելուց (այդ բանից նա ամաչում էր), այլ նրանից, որ հասարակաց կին էր,—բայց նոյն իսկ կարծես գոհ էր այդ վիճակից ու գրեթէ պարծենում էր նրանով։ Եւ սակայն ուրիշ կերպ չէր էլ կարող լինել։ Ամեն մարդ, որպէս զի մի բան անի, պէտք է իր արածը կարևոր ու կարգին բան համարի։ Ուստի, ինչպիսի վիճակ էլ ունենայ մարդ, նա անպատճառ այնպիսի հայեացք կը կազմի մարդկային կեանքի մասին ընդհանրապէս, որով նրա գործունէութիւնը կարևոր ու կարգին կը թուի իրան։

Առհասարակ մարդիկ կարծում են, թէ գողը, մարդասպանը, հասարակաց կինը, վատ համարելով իրանց արածը, պէտք է ամօթ զգան նրանից։ Իսկ իրօք բոլորովին հակառակն է տեղի ունենում։ Ճակատագրով և իրանց մեղք ու սխալանքներով որոշ դրութեան մէջ ընկած մարդիկ, որքան էլ անկանոն լինի նա, այնպիսի հայեացք են կազմում կեանքի վրայ առհասարակ, որով իրանց դրութիւնը կարգին ու յարդելի է թուում իրանց։ Իսկ որպէս զի այդ կարծիքին հաստատ մնան, մարդիկ ընտազօրէն յարաբերութիւն են պահպանում միայն այնպիսի չրջանի հետ, որ նոյնպիսի հայեացք ունի կեանքի մասին և այն տեղի մասին, որ նրանք գրաւում են կեանքի մէջ։ Մեզ զարմացնում է այդ բանը, երբ հարցը վերաբերում է իրանց ճարպիկութեամբ պար-

ծեցող գողերին, իրանց անառակութեամբ պարծեցող հասարակաց կանանց, կամ իրանց անգթութեամբ պարծեցող մարդասպաններին։ Բայց այդ մեզ զարմացնում է միայն այն պատճառով, որ այդ մարդկանց չրջանը չատ սահմանափակ է և, որ գլխաւորն է, այն պատճառով, որ մենք այդ չրջանից դուրս ենք գտնւում, սակայն մենք նոյն երևոյթը չէ, որ տեղի է ունենում, երբ հարուստները պարծենում են իրանց հարստութեամբ և զօրաւորները իրանց յաղթանակներով։ Մենք չենք նկատում, որ այդ մարդիկ խեղաթիւր հայեացքներ ունեն կեանքի և չար ու բարիի մասին, միայն այն պատճառով, որ այդպիսի հայեացքներ ունեցող մարդկանց չրջանը ուելի մեծ է և մենք ինքներս էլ պատկանում ենք նոյն չրջանին։

Այդպիսի հայեացք էր կազմել իր կեանքի և աչխարհիս երեսին իր գրաւած տեղի մասին նաև Մասլովան։ Նա տաժանակիր աչխատանքների դատապարտուած հասարակաց կին էր, բայց, չը նայելով դրան, այնպիսի աչխարհայեացք էր կազմել իր համար, որ թոյլ էր տալիս նրան հաւանել ինքն իրան և նոյն իսկ պարծենալ ուրիշների առաջ իր դրութեամբ։

Այդ աչխարհայեացքը կայանում էր նրանում, որ առանց բացառութեան բոլոր տղամարդկանց համար,—թէ ծեր ու երիտասարդ, թէ գիմնազիստ ու գեներալ, թէ կրթուած ու անկրթի,—ամենաղխաւոր բարիքը գրաւիչ կանանց հետ յարաբերութիւն ունենալն է, ուստի և բոլոր տղամարդիկ, թէև ցոյց են տալիս, թէ ուրիշ գործերով են զբաղուած, բայց իսկապէս միմիայն այդ բանին են ձգտում։ Իսկ ինքը մի գրաւիչ կին է, որ կարող է բաւարարութիւն տալ կամ չը տալ տղամարդկանց այդ ցանկութեան, ուստի և անկասկած կարևոր ու հարկաւոր մարդ է։ Նրա ամբողջ թէ անցեալ և թէ ներկայ կեանքը հաստատում էր այդ հայեացքը։

Տաս տարուայ ընթացքում և աւելն տեղ, ուր որ եղել էր, նա տեսել էր, որ բոլոր տղամարդիկ, սկսած Նեխլիւդովից ու ծերունի ստանօվոյից և վերջացրած բանտային վերակացուներով, կարիք ունէին իրանից, և չէր տեսել, չէր նկատել այնպիսի տղամարդիկ, որոնք կարիք չունենային իրանից։ Ուստի և ամբողջ աչխարհը նա հրեակայում էր իբրև մի համախմբուած կրքով բորբոքուած մարդկանց, որոնք ամեն կողմից աչք են սրել իր վրայ և ամեն տեսակ միջոցներով—խաբէութեամբ, բռնութեամբ, փողով կամ խորամանկութեամբ—աչխատում են տիրանալ իրան։

Այդպէս էր հասկանում կեանքը Մասլովան և այդ հայեացքով դուրս էր գալիս, որ ինքը ոչ թէ ամենայատկին մարդն է,

այլ ընդհակառակը մի չատ կարևոր անձնաւորութիւն։ Եւ Մասլօվայի աչքում չը կար ուրիշ բան, որ այնքան գնահատելի լինէր, որքան այդ հայեացքը, և այլապէս չէր էլ կարող լինել, որովհետև եթէ նա փոխէր իր այդ հայեացքը, կը կորցնէր այն նշանակութիւնը, որ այդ հայեացքի համաձայն նա ունէր մարդկանց մէջ։ Եւ որպէս զի չը կորցնէր իր այդ նշանակութիւնը, նա բնազդաբար փարուում էր այն մարդկանց չքջանին, որոնք նոյնպիսի հայեացք ունէին կեանքի վրայ։ Ուստի և զգալով, որ Նեխլիւդովը ուզում է հանել նրան այդ չքջանից ու տանել ուրիշ աշխարհ, նա դիմադրում էր նրան, նախատեսելով, որ այն աշխարհում, ուր ուզում էր նա տանել իրան, ինքը կորցնելու է կեանքի մէջ իր գրաւած տեղը, որ վստահութիւն և ինքնայարգումն էր ներշնչում իրան։ Նոյն պատճառով էր, որ նա հեռու էր քչում իրանից այն յիշողութիւնները, որոնք վերաբերում էին իր պատանեկական տարիներին և Նեխլիւդովի հետ ունեցած յարաբերութիւնների սկզբի չքջանին։ Այդ յիշատակները չէին համապատասխանում նրա այժմեան աշխարհայեացքին, ուստի և նա բոլորովին ջնջել էր նրանց իր յիշողութիւնից կամ, աւելի ճիշտ ասած, պահում էր նրանց անձնամոռացման կերպով յիշողութեան խորքերում, բայց այնպէս փակել, ծեփել էր նրանց, որ ոչ մի անցք չէր մնացել, ինչպէս մեղուները ծեփում են մեղրացուցների բները, որոնք (մեղրացուցները) կարող են փչացնել մեղուների ամբողջ աշխատանքը։ Այդ պատճառով էլ այժմեան Նեխլիւդովը նրա աչքում այն մարդը չէր, որին նա երբեմն սիրում էր անսահման սիրով, այլ լոկ մի հարուստ պարոն, որից կարելի է և պէտք է օգուտ քաղել և որի հետ կարելի էր ունենալ միայն այնպիսի յարաբերութիւններ, ինչպէս և միւս բոլոր տղամարդկանց հետ։

«Չէ, չը կարողացայ ասել նրան այն, ինչ որ ամենագլխաւորն էր,—մտածում էր Նեխլիւդովը, այցելուների բազմութեան հետ դիմելով դէպի բանտի դուռը։—Ես չասացի նրան, որ պակուելու եմ հետը։ Չասացի, բայց ի՛նչպէս», մտածեց նա։

Վերակացուները, դռների մօտ կանգնած, բաց էին թողնում այցելուներին, երկու հոգով հաշուելով նրանց, որպէս զի ոչ մի աւելորդ մարդ դուրս չը գար բանտից կամ ներս բանտում։ Այժմ էլ հաշուելիս խափեցին Նեխլիւդովի մէջքին, բայց այժմ այդ ոչ միայն չը վիրաւորեց նրան, այլ և նոյն իսկ նա չը նկատեց այդ բանը։

XLIII

Նեխլիւդովը ուզում էր փոխել իր կենցաղավարութեան

ձևը,—վարձով տալ ընդարձակ բնակարանը, արձակել ծառաներին ու տեղափոխուել հիւրանոց։ Բայց Ագրաֆենա Պետրօվնան ապացուցեց նրան, որ ոչ մի հիմք չը կար, որպէս զի նա փոխէր կենցաղավարութիւնը մինչև ձմեռ. ամառը ոչ ոք չէր վարձի բնակարանը, իսկ ապրելու և կահկարասիքն ու իրեղէնները պահելու համար միևնոյնն է մի որ և է տեղ պէտք էր նրան։ Այնպէս որ իզուր անցան Նեխլիւդովի բոլոր ջանքերը փոխելու իր կենցաղավարութեան ձևը (նա ուզում էր ապրել պարզ երկպով, ուսանողի պէս)։ Ոչ միայն ամեն ինչ անփոփոխ մնաց, այլ և ահագին իրարանցում սկսուեց տան մէջ,—բակապանը, նրա օգնականը, խոհարարուհին ու կօրնէյը սկսեցին հովին տալ, փոռոտել ու թափ տալ հազար ու մի տեսակ բրդէ ու մորթէ իրեղէններ։ Սկզբում դուրս էին բերում ու չուանների վրայ փռում ինչ որ չքազգեստներ ու տարօրինակ մորթեղէններ, որ երբէք ոչ ոք չէր գործածում. յետոյ սկսեցին գուրս կրել գորգերն ու կահկարասիները, և բակապանն ու իր օգնականը, մեռնում կըռնները քչտած, ուժգին ու կանոնաւոր բաղխումով թափ էին տալիս այդ իրեղէնները, ու բոլոր սենեակներում նաֆթալինի հոտ կանգնեց։ Բակովը անցնելիս և պատուհաններից նայելիս, Նեխլիւդովը զարմանք էր զգում, թէ ինչ սարսափելի չատ են այդ բանները և որքան անկասկած կերպով անօգուտ են նրանք։ «Այդ իրերի միակ գործադրութիւնը և նշանակութիւնը,—մտածում էր Նեխլիւդովը,—կայանում է նրանում, որ մարմնամարզական չարժուձևներ անելու առիթ տան Ագրաֆենա Պետրօվնային, Կօրնէյին, բակապանին, նրա օգնականին ու խոհարարուհուն»։

«Չարժէ այժմ փոխել կենցաղավարութեանս ձևը, քանի որ Մասլօվայի գործը դեռ չէ վճռուած,—մտածում էր Նեխլիւդովը։—Վերջապէս, չատ դժուար բան է այդ։ Միևնոյնն է, ինչքան ամեն ինչ կը փոխուի, երբ նրան ազատեն կամ թէ քշեն Սիբիր ու ես էլ հետը գնամ»։

Յունուարին փաստաբանի նշանակած օրը Նեխլիւդովը գնաց նրա մօտ։ Մտնելով նրա սենեկան տան հոյակապ բնակարանը, որ զարդարուած էր ահագին աուն կերով ու պատուհանների զարմանալի վարագոյրներով և առհասարակ այն թանկագին հաւորութեամբ, որ ապացոյց է չմարանալ ձեռք ընկած, այսինքն առանց աշխատանքի ստացած փողերի և պատահում է միայն առանց աշխատանքի ստացած փողերի և պատահում է միայն անակնկալ կերպով հարստացած մարդկանց տներում, Նեխլիւդովը ընդունարանում հանդիպեց հերթ սպասող խնդրաւորների, որոնք, ինչպէս բժիշկների ընդունարանում, վհատ-վհատ չարուել էին՝ նրանց զբաղեցնելու համար նշանակուած պատկերազարդ հանդէսներով ծանրաբեռնուած սեղանների չուրջը։

Փաստաբանի օգնականը, որ նստած էր նոյն սենեակում մի բարձր ու թեք գրասեղանի առաջ, Նեխլիւդովին ճանաչելով, մօտեցաւ նրան, բարևեց ու ասաց, որ ինքը իսկոյն կը յայտնի փաստաբանին։ Բայց մինչև դռան մօտենալը, դուռը բացուեց և երևացին ինքը փաստաբինը ու մի բոլորովին նոր հագուստով, կարմրած երեսով և խիտ բեխերով կարճահասակ, թիկնաւէտ ու բաւական տարիքոտ պարոն։ Նրանք բարձրաձայն ու տաք-տաք խօսում էին և երկուսն էլ այնպիսի դէմքի արտայայտութիւն ունէին, ինչպէս ունենում են այն մարդիկ, որոնք մի բոպէ առաջ մի ձեռնտու, բայց ոչ բոլորովին կարգին գործ են արել։

—Ինքներդ էք մեղաւոր, եղբայր,—ժպտալով ասում էր Ֆանարինը։

—Մեղաւորին ով ա տուե արքայութիւն։

—Լաւ, լաւ, պիտենք։

Եւ երկուսն էլ անբնական կերպով ծիծաղեցին։

—Ախ, դուք էք, իշխան, համեցէք,—ասաց Ֆանարինը, տեսնելով Նեխլիւդովին, ու մի անգամ էլ գլուխ տալով հետացող վաճառականին, ներս տարաւ Նեխլիւդովին իր առանձնասենեակը, որ կահաւորուած էր խիստ ոճով։—Խնդրեմ, ծխեցէք,—ասաց փաստաբանը, նստելով Նեխլիւդովի դիմացը և զսպելով նախընթաց գործի ազդուելիքիցից առաջացող ժպիտը։

—Շնորհակալ եմ։ Ես եկել եմ Մասլովայի գործի համար։

—Այո, այո, այս բոպէիս։ Ախ, ինչ անպիտաններն են այդ հաստաքսակները,—ասաց նա։—Տեսնում հոգևորին. մօտ 12 միլիոն կարողութիւն ունի, բայց էլի «ով ա տուե» է ասում։ Որ իմանայ, թէ կարող է մի 25—մանէթանոց պոկել ձեղնից, աստուածներով դուրս կը քաշի։

—Նա ասում է «ով ա տուե», իսկ դու ասում ես «25-մանէթանոց»,—մտածում էր մինչ այդ Նեխլիւդովը, անդուսդզուանք զգալով դէպի այդ պատկերաս մարդը, որ իր խօսելու եղանակով ուզում էր ցոյց տալ, թէ ինքն ու Նեխլիւդովը մի բանակի մարդիկ են, իսկ եկած գործատէրերն ու միւսները՝ ուրիշ բանակի։

—Հոգիս բերանս բերեց, սարսափելի լիրը արարած է։ Մի քիչ հանգստացայ ձեզ հետ խօսելով,—ասաց փաստաբանը, կարծես արդարացներով իրան, որ գործի մասին չէ խօսում։—Դէ այժմ անցնենք ձեր գործին... Ուշադրութեամբ կարդացի և «բռնադատութեանը հաւան չը կացայ», ինչպէս ասուած է Տուրգենևի գրուածքներից մէկում, այսինքն՝ անպէտք փաստաբան է եղել և վճռաբինջ գանգատ տալու բոլոր առիթները ձեռքից բաց է թողել։

—Ուրեմն ինչ էք վճռել։

—Այս րոպէիս։ Ասացէք նրան,—դիմեց նա ներս եկած օգնականին,—որ ինչպէս ասացի, այնպէս էլ կը լինի. կարող է՝ լաւ, չի կարող՝ պէտք չի։

—Ասում է, որ համաձայն չի։

—Ուրեմն պէտք չի,—ասաց փաստաբանը և նրա ուրախ ու հեչտահոգի դէմքը յանկարծ մռայլ ու չար արտայայտութիւն ստացաւ։

—Այ, ասում են, թէ փաստաբանները առանց մատ մատի խփելու ահագին փողեր են ստանում,—ասաց նա նորից ախորժելի կերպարանք տալով դէմքին։—Մի մանուկ պարտապանի ազատելի բոլորովին անհիմն մեղադրանքից, հիմի բոլոր մանկները վազում են ինձ մօտ։ Իսկ ամեն մի այդպիսի գործ ահագին աշխատանք է պահանջում։ Մենք էլ, գրողներից մէկի ասածի պէս, ամեն անգամ մի կտոր միս ենք թողնում թանաքամանի մէջ։ Հա, ինչպէս ասացի, ձեր գործը կամ այն գործը, որ ձեզ հետաքրքրում է,—չարունակեց նա,—չատ վատ է տարուած, վճռաբեկ գանգատի համար կարգին առիթներ չը կան, բայց այնուամենայնիւ կարելի է փորձել բեկանել տալ վճիռը, և ահա ես գրեցի գանգատը հետևեալ ձևով։

Նա վերցրեց մի գրատած թերթ և, արագ-արագ կուլ տալով մի քանի անհետաքրքիր ձևական խօսքեր և առանձնապէս ազդու կերպով արտասանելով մնացած խօսքերը, նա սկսեց կարդալ.

«Կառավարիչ Սենատի քրէական վճռաբեկ բաժանմունքին և այլն գանգատ։ Այս ինչ ժամանակ կայացրած վճռով և այլն այս ինչ Մասլովան մեղաւոր է ճանաչուել Սմելկով վաճառականին թունաւորմամբ մահ պատճառելու մէջ և Քրէական Օրէնսգրքի 1454 յօդուածի հիման վրայ դատապարտուել է և այլն տաժանակիր աշխատանքների և այլն»։

Նա կանգ առաւ, ակնհայտաբար,—չը նայելով այդ բանի չատ սովորական լինելուն,—զուարճութեամբ լսելով իր գրածը։

«Այդ վճիռը այն աստիճան կարևոր դատավարական սխալների և օրինազանցութիւնների հետևանք է,—չարունակեց նա ազդու կերպով,—որ պէտք է բեկանուի։ Նախ, դատական քննութեան միջոցին Սմելկովի փորոտիների հետազօտութեան արձանագրութիւնը կարդալիս նախագահը ընդհատեց ընթերցումը հէնց սկզբում»—այս մէկ։

—Բայց չէ՞ որ մեղադրողն էր պահանջել այդ արձանագրութեան ընթերցումը,—զարմանալով ասաց Նեխլիւդովը։

—Այդ միևնոյնն է, պաշտպանն էլ կարող էր հիմք ունենալ պահանջել նորը։

—Բայց այդ ոչ մի բանի պետք չէր։

—Այնուամենայնիվ, այդ՝ առիթ է։ Այնուհետև. «Երկրորդ, —չարունակեց Նա կարդալ,—այն ժամանակ, երբ Մասլովայի պաշտպանը իր ճառի մեջ, ցանկանալով բնորոշել Մասլովայի անձնաւորութիւնը, չօչափեց նրա անկման ներքին պատճառները, նախագահը կանգնեցրեց նրան այն հիման վրայ, իբր թէ պաշտպանի խօսքերը ուղղակի չեն վերաբերում գործին, մինչդեռ քրէական գործերում, ինչպէս այդ քանիցս մատնանշել է արել Սենատը, մեղադրեալի բնաւորութեան և առհասարակ բարոյական էութեան լուսաբանութիւնը առաջնակարգ նշանակութիւն ունի, թէկուզ հէնց մեղադրեալի պատասխանատուութեան ընդունակ թէ անընդունակ վիճակի մէջ գտնուած լինելու հարցը կանոնաւոր կերպով վճռելու համար»,—այս էլ երկու, ասաց նա, նայելով Նեխլիւդովին։

—Բայց պաշտպանը ամբողջ վատ էր խօսում, որ ոչինչ չէր հասկացուում,—ասելի ևս զարմանալով, ասաց Նեխլիւդովը։

—Տուտուց վիատաբան է և, ի հարկէ, ոչ մի խելքը գլխին բան չէր կարողանալու ասել,—ծիծաղելով ասաց Ֆանարինը,—բայց այնուամենայնիվ առիթ է։ Հա, յիշոյ։ «Երրորդ. իր վերջնական ճառում նախագահը, Ք. Դատավար. կանոնագրքի 801 յօդուածի 1 կէտի դրական պահանջի հակառակ, չը բացատրեց երդուեալատենակալներին, թէ ինչ իրաւաբանական տարրերից է բաղկանում մեղաւորութեան հասկացողութիւնը, և չասաց նրանց, որ նրանք իրաւունք ունեն, ապացուցուած համարելով հանդերձ այն փաստը, որ Մասլովան թոյն է տուել Սմելկովին, այնուամենայնիվ չը մեղադրել նրան այդ բանի համար, որովհետև նա մտադրութիւն չի ունեցել սպանութիւն գործելու, և այդպիսով մեղաւոր ճանաչել նրան ոչ թէ քրէական եղեռնագործութեան մէջ, այլ հասարակ անզգուշութեան մէջ, որ, Մասլովայի համար անապահով կերպով, առաջ է բերել վճռաւճռականի մահը»։ Այս մէկը ամենից գլխաւորն է։

—Այդ մենք առանց նրա ասելուն էլ կարող էինք հասկանալ. այդ մեր սխալն է։

«Ե՛ վերջապէս, չորրորդը,—չարունակեց փիատաբանը,—երդուեալ ատենակալները Մասլովայի մեղաւորութեան հարցին այնպիսի ձևով են պատասխանել, որ իր մէջ ակնյայտնի հակասութիւն է պարունակում։ Մասլովան մեղադրում էր այն բանի մէջ, որ նա դիտմամբ թունաւորել էր Սմելկովին բացատրելով կողոպտելու նպատակով, որ և սպանութեան միակ չարժառիթն էր համարում, իսկ երդուեալ ատենակալները իրանց պատասխանի մէջ բացատրում են կողոպտելու նպատակը և Մասլովայի մասնակցութիւնը դաղութեան մէջ, որից ակնյայտնի երևում է, որ նրանք ուզում են բացատրել նաև սպանութեան դիտաւորեալ լինելը և միմիայն նախադատի եզրափակիչ ճառի թերատութիւնից առաջ եկած թիւրիմացութեան չնորհիւ՝ ինչպէս հարկն է չեն արտայայտել այդ բանը իրանց պատասխանի մէջ, ուստի և երդուեալների այդ պատասխանը անպայման կերպով անհրաժեշտ էր դարձնում Ք. Դատավար. կանոնագրքի 816 և 808 յօդուածների գործադրութիւնը, այսինքն նախագահը պէտք է երդուեալ ատենակալներին բացատրէր իրանց սրած սխալը և առաջարկէր նրանց նորից խորհրդակցել ու նոր պատասխան տալ ամբաստանեալի մեղաւորութեան հարցին»,—կարդաց Ֆանարինը։

—Հապա ինչու՞ նախագահը այդ բանը չարեց։

—Ես էլ չատ կ'ուզէի իմանալ, թէ ինչո՞ւ չի արել,—ասաց Ֆանարինը ծիծաղելով։

—Ուրեմն Սենատը կ'ուզղի սխալը։

—Այդ կախուած է նրանից, թէ ով կը լինի այնտեղ ատենակալ։ Ուրեմն այդպէս։ Այնուհետև գրում ենք հետևեալը. «Այդպիսի մի պատասխան երդուեալների կողմից իրաւունք չէր տալիս դատարանին,—չարունակեց Նա արագ-արագ,—ենթարկել Մասլովային քրէական պատժի, և Ք. Դատավ. կան. 771 յօդ. 3 կէտը նրա վերաբերմամբ գործ դնելը խիստ և խոշոր խախտումն է մեր քրէական դատավարութեան հիմնական սկզբունքների։ Վերոյիշեալ հիմքերով պատիւ ունեմ խնդրելու և այլն և այլն, Ք. Դատավ. կան. 909, 910, 912 կ. 2. և 928 յօդ. հաճաձայն, բեկանել և այլն և այլն և յանձնել այս գործը նորից քննելու նոյն դատարանի մի ուրիշ բաժանմունքի»։ Այսպէս ուրեմն, այն ամենը, ինչ որ կարելի էր անել, արուած է։ Բայց պէտք է անկեղծօրէն ասեմ ձեզ, որ յաջողութեան քիչ յոյս կայ։ Սակայն, ամեն ինչ կախուած է Սենատի բաժանմունքի կազմից։ Եթէ մարդ ունէք այնտեղ, աշխատեցէք։

—Մէկ-երկու ծանօթ ունեմ։

—Եւ որքան կարելի է չատպնդեցէք, թէ չէ բոլորն էլ կը սրուեն զանազան տեղեր իրանց հէմօրոյը բժշկելու և պէտք կը լինի երկար ամիս սպասել... Իսկ եթէ այդտեղ անյաջող անցնի, մնում է մի միջոց, այն է՝ խնդիրք ասլ Հարձրագոյն անունով։ Այդ դէպքում էլ պատրաստ եմ առաջարկել ձեզ իմ ծառայութիւնը խնդիրքը գրելու համար։

—Շնորհակալ եմ, իսկ վարձատրութիւնը։

—Օգնականս կը յանձնի ձեզ դանգատի պարզագրութիւնը ու կ'ասի ինչ որ պէտք է։

—Մի բան էլ էի ուզում հարցնել ձեզնից. դատախազը թոյլտուութեան թուղթ տուեց ինձ այն կնոջը տեսնելու, բայց բանտում ինձ ասացին, որ բացի այդ պէտք է թոյլտուութիւն ստանալ նահանգապետից, որպէս զի իրաւունք ունենամ տեսնել հետը որոշեալ օրերից ու սենեակից դուրս։ Հարկաւոր է արդեօք այդ։

—Կարծում եմ, որ հարկաւոր է։ Բայց այժմ նահանգապետը այստեղ չի, և նրա պաշտօնը փոխն է կատարում։ Բայց այդ այնպիսի չնչին մարդ է, որ դժուար թէ մի բան կարողանաք անել հետը։

—Մալենիկովը չի՞ փոխ-նահանգապետը...

—Այո։

—Ես ճանաչում եմ նրան,—ասաց Նեխլիւդովը ու վեր կացաւ, որ գնայ։

Այդ ժամանակ վազելվազ ներս պրծաւ սենեակը մի փոքրիկ, սարսափելի անճոռնի, տափակաքիթ և ոսկրոտ ու դեղնաւուն կին, փաստաբանի կինը, որ, ակներևաբար, ամենևին չէր վհատւում իր անճոռնութեան պատճառով, այլ ընդհակառակը չափից դուրս տարօրինակ զուգուած էր,—ինչ որ թաւիշէ ու մետաքսէ վառ դեղնագոյն ու կանաչ բան ունէր հագին,—ու ցանցառ մազերը խուճուճ դրած։ Նա յաղթական կերպարանք ունէր, երբ ներս պրծաւ ամուսնու առանձնասենեակը մի հողի գոյն դէմքով, մետաքսապատ օձիքաւոր սլիւրտուկով ու սպիտակ փոշպատով երկարահասակ ու ժպտուն պարոնի հետ։ Մի գրող էր այդ պարոնը, որին դէմքով ճանաչում էր Նեխլիւդովը։

—Անատօլ,—ասաց տիկինը, բանալով դուռը,—գնանք ինձ մօտ։ Ահա Սեմեօն Իվանովիչը խոստանում է կարդալ իր ոտանաւորը, իսկ դու պէտք է անպատճառ կարդաս Գարշինի մասին։

Նեխլիւդովը ուզում էր դուրս գնալ, բայց փաստաբանի կինը փափաց մարդու հետ ու անմիջապէս դիմեց նրան.

—Խնդրեմ, իշխան, ես ձեզ ճանաչում եմ և աւելորդ եմ համարում, որ ձեզ ներկայացնեն ինձ,—համեցէք մեր գրական ցերեկոյթին։ Շատ հետաքրքիր է լինելու։ Անատօլը հիանալի է կարդում։

—Տեսնում էք, որքան բազմատեսակ զբաղմունքներ ունեմ,—ասաց Անատօլը, ձեռքերը չռելով, ժպտալով և ցոյց տալով կնոջ վրայ, արտայայտելով այդ չարժումով, թէ անկարելի է հակառակել այդպիսի համայիչ անձնաւորութեան։

Տխուր ու խիստ դէմքով և ամենամեծ քաղաքավարութեամբ չնորհակալութիւն յայտնելով փաստաբանի կնոջը այդ պատուի համար, Նեխլիւդովը հրաժարուեց հրաւէրից, ասելով, որ չէ կարող մնալ, և դուրս եկաւ ընդունարանը։

—Ի՞նչ քրքրաւան է,—ասաց նրա մասին փաստաբանի կինը, երբ նա դուրս գնաց։

Ընդունարանում օգնականը յանձնեց Նեխլիւդովին պատրաստ խնդիրքը և վարձատրութեան վերաբերեալ հարցմունքին պատասխանեց, որ Անատօլիյ Սեմեօնովիչը 1,000 ռուբլի է նշանակել, ու աւելցրեց, թէ Անատօլիյ Սեմեօնովիչը առհասարակ այդպիսի գործեր չի վերցնում և միայն նրա համար է համաձայնել գրել։

—Ի՞նչպէս պէտք է ստորագրել խնդիրքին, ով է ստորագրելու,—հարցրեց Նեխլիւդովը։

—Ինքը մեղադրեալը կարող է, իսկ եթէ նրա համար դժուար է, կարող է հաւատարմաթուղթ տալ և Անատօլիյ Սեմեօնովիչը կը ստորագրի։

—Չէ, կ'երթամ բանտը և իրան ստորագրել կը տամ,—ասաց Նեխլիւդովը, ուրախանալով, որ առիթ ունի որոշած օրից չուտ տեսնել Կատիւշային։

XLIV

Սովորական ժամին բանտի միջանցքներում հնչեցին վերակացուների սուլոցները, ճռնչալէն բացուեցին միջանցքների ու սենեակների դռները, թփթփայեն բոլոր ոտներ ու բանտային հողաթափների կրունկները, միջանցքներով անցան աղբաթափները, լցնելով օդը գարշելի հոտով. կալանաւորներն ու կալանաւորուհիները լուացուեցին, հագնուեցին ու դուրս եկան միջանցքները ստուգման համար, իսկ ստուգումից յետոյ գնացին նոյնան ջուր վերցնելու թէյի համար։

Թէյի ժամանակ բանտի բոլոր սենեակներում տաք-տաք խօսում էին այն բանի մասին, որ այդ օրը երկու կալանաւորի պէտք է պատժէին ճիպոտներով ծեծելով։ Այդ կալանաւորներից մէկը մի կարգին գրագէտ երիտասարդ էր, Վասիլիեվ անունով մի գործակատար, որ սաստիկ խանդոտութեան բռնկին սպանել էր իր սիրուհուն։ Նրա սենեակակիցները սիրում էին նրան, որովհետև ուրախ տղայ էր, բայց ձեռք ունէր և զլուխ չէր ծռում իշխանաւորների առաջ։ Նա տեղեակ էր օրէնքներից և պահանջում էր, որ նրանք պահպանեն օրէնքը։ Այդ պատճառով բանտային իշխանութիւնը չէր սիրում նրան։ Երեք չաբաթ ա-

ռաջ վերակացուն ապտակ էր տուել աղբաթափներից մէկին այն բանի համար, որ նա կեղտաջուր էր թափել նրա նոր հագուստի վրայ։ Վասիլիևը պաշտպան էր հանդիսացել աղբաթափին, ասելով, որ օրկնքում չը կայ, թէ կարելի է ծեծել կալանաւորներին։ «Ես քեզ օրինք դեռ կը տամ»,—ասել էր վերակացուն ու հայհոյել Վասիլևիևին։ Վասիլիևը խօսքի տակը չէր մնացել։ Վերակացուն ուզել էր խփել նրան, բայց Վասիլիևը բռնել էր նրա ձեռքերից, պահել էր այդպէս մի երկար րոպէ, յետոյ չուռ տուել ու դուրս գցել դռնովը։ Վերակացուն գանգատուել էր, և բանտապետը հրամայել էր կարգէր գցել Վասիլիևիևին։

Կարգէրները մի չարք մութ նկուղներ էին, որոնք դրսից կողպւում էին նիգերով։ Խաւար ու ցուրտ կարգէրում չը կար ոչ մահճակալ, ոչ սեղան, ոչ էլ աթոռ, այնպէս որ պատժուածը նստում կամ պառկում էր կեղտոտ յատակի վրայ, ուր նրա վրայովը ցատկոտում ու վազվզում էին առնէտներ, որոնք չափազանց շատ էին կարգէրներում և այնքան համարձակ, որ մթութեան մէջ անկարելի էր լինում պահել նրանցից հայը։ Նրանք ուտում էին հայը կարգէրապահների ձեռքի տակից և նոյն իսկ յարձակւում էին նրանց վրայ, եթէ նրանք դադարում էին իրար գալուց։ Վասիլիևը ասել էր, որ կարգէր չի գնալ, որովհետև մեղաւոր չէ։ Այն ժամանակ բռնի էին տարել նրան։ Նա սկսել էր պաշտպանուել և երկու կալանաւորներ օգնել էին նրան դուրս պրծնելու վերակացուների ձեռքից։ Բոլոր վերակացուները հաւաքուել էին և, ի միջի այլոց, նաև իր այժմ հռչակաւոր Պետրովը։ Կալանաւորներին հոտ էին տուել ու խցկել կարգէրները։ Իսկոյն և եթ իմաց էին տուել նահանգապետին, թէ բանտում խռովութեան նման մի բան էր պատահել։ Թուղթ էր ստացուել, որով հրամայւում էր ճիպոտով 30 հարուած տալ երկու գլխաւոր յանցաւորներին—Վասիլիևիևին և Նեպօմնեաչչիյ Թափառաչրջիկին։

Պատիժը պէտք է արուէր կանանց այցելարանում։

Երեկոյից այդ յայտնի էր բանտի բոլոր բնակիչներին, և սենեակներում տաք-տաք խօսում էին առաջիկայ պատժի մասին։

Կօրաբլեօվան, Խօրօշավկան, Ֆեդօսեան ու Մասլօվան նստած էին իրանց անկիւնում և օդին խմելուց յետոյ, որ այժմ այլ ևս չէր պրծնում Մասլօվայի մօտ և որով նա առատ-առատ հիւրասիրում էր իր ընկերուհիներին, կարմրած ու տաքացած՝ թէյ էին խմում ու խօսում նոյն բանի մասին։

—Նա հօ աղմուկ չի արել կամ թէ մի ուրիշ վատ բան,—

ասում էր Կօրաբլեօվան Վասիլիևի մասին, չաքարից մանր կտորներ կրծոտելով իր պինդ առաջներով։—Նա միայն ընկերոջն էր պաշտպանում։ Որովհետև այժմ իրաւունք չը կայ ծեծելու։

—Ասում են լաւ տղայ է,—վրայ բերեց երկարահիւս Ֆեդօսեան, որ գլխաբաց նստած էր մի ցախի կտորի վրայ, այն տախտի դիմացը, որի վրայ դրուած էր թէյամանը։

—Լաւ կը լինէր նրան ասէիր, Միխայլօվնա,—դիմեց պահապանուհին Մասլօվային, ակնարկելով Նեխլիւդօվին։

—Կ'ասեմ։ Նա ամեն բան կ'անի ինձ համար,—ասաց Մասլօվան, ժպտալով ու գլուխը թափահարելով։

—Բայց ով գիտի նա երբ կը գայ, իսկ, ասում են, արդէն պնացել են նրանց դուրս բերելու, ասաց Ֆեդօսեան։—Սոսկալի բան է,—աւելցրեց նա, հոգոց հանելով։

—Ես մի օր տեսայ, թէ ինչպէս էին մի գիւղացու ծեծում չինական դիւանատանը։ Սկեսրայրս գործով ուղարկեց ինձ տանուտէրի մօտ. գամ ինչ տեսնեմ,—մի երկար պատմութիւն սկսեց պահապանուհին։

Նրա պատմութիւնը ընդհատուեց վերին միջանցքում լսուող խօսակցութեան ձայներով ու ոտնաձայնով։

Կանայք սուս կացան ու սկսեցին ականջ դնել։

—Ջաչ են տալիս չները,—ասաց Խօրօշավկան։—Հոգին կը հանեն հիմա։ Շատ յիդր ունեն վրան վերակացուները, որովհետև հախներիցը գալիս է։

Վերևում ամեն ինչ խաղաղուեց, և պահապանուհին շարունակեց իր պատմութիւը, թէ ինչպէս ինքը վախեցել էր չինական դիւանատանը, երբ այնտեղի ցախատանը ծեծում էին գիւղացուն, և ինչպէս լեղին փորն էր ընկել։ Իսկ Խօրօշավկան պատմեց, թէ ինչպէս էին մի անգամ մտրակներով ծեծում Շչեգլօվին ու նա ոչ մի ձայն-ծպտուն չէր հանում։ Յետոյ Ֆեդօսեան հաւաքեց թէյը, և Կօրաբլեօվան ու պահապանուհին սկսեցին կրկ անել, իսկ Մասլօվան, ծնկները գրկած, նստեց տախտի վրայ, տանջուելով սրտի տխրութիւնից։ Նա ուզում էր արդէն պառկել ու աչքերը խփել, երբ յանկարծ վերակացուհին կանչեց նրան, ասելով, որ այցելու է եկել նրա մօտ։

—Անպատճառ ասա մեր մասին,—ասում էր Մասլօվային Մենչօվա պառաւը, մինչ նա ուղղում էր գլխաշորը կիսով չափ պոկ եկած անդիկով հայելու առաջ,—մենք չենք այրել, այլ ինքը՝ անատուածն է կրակ տուել. մշակն էլ տեսել է. թող հարցնեն, նա հոգին չի սևացնի։ Ասա Թող Միտրիչին դուրս

կանչել տայ։ Միտրին ամեն բան կարգին ու տեղին կը պատմի Նրան. թէ չէ այս ինչ արդարութիւն է. մեզ անմեղ տեղը վտակել են այստեղ, իսկ նա՝ անաստուածը ուրիչի հետ սէր է անում ու դիմահաներում քէֆ քաշում։

—Անօրէնութիւն է այդ,—հառաչեց Կօրաբլեօվան։

—Կ'ասեմ, անպատճառ կ'ասեմ,—պատասխանեց Մալօվանն։—Ի՞նչ էք կարծում, լաւ չի լինի, որ մի քիչ էլ դցեմ համարձակ խօսելու համար,—աւելացրեց նա, աչքով անելով։

Կօրաբլեօվան կէս գաւաթ օղի ածեց նրա համար։ Նա քաշեց գլուխը և ամենալաւ տրամադրութեան մէջ, կրկնելով իր ասած «համարձակ խօսելու համար» բառերը և գլուխը տմտմբացնելով ու ժպտալով, գնաց վերակացուհու յետևից։

XLV

Նեխլիւդօվը վաղուց ի վեր սպասում էր նրան նախագաւթում։

Բանտը հասնելով, նա խփեց մուտքի դռան զանգը և տուեց օրապահ վերակացուին դատախազից ստացած թոյլտուութեան թուղթը։

—Ո՞ւմ էք ուզում։

—Ուզում եմ տեսնել Մասլօվա կալանաւորուհուն։

—Այժմ չի կարելի. բանտապետը զբաղուած է։

—Գրասենեակո՞ւմ,—հարցրեց Նեխլիւդօվը։

—Ոչ, այստեղ, այցելարանում, պատասխանեց վերակացուն, ինչպէս թուաց Նեխլիւդօվին, չփոթուելով։

—Այսօր մ'իթէ ընդունում են։

—Չէ, առանձին գործ կայ,—ասաց նա։

—Հապա ինչպէս տեսնեմ նրան։

—Այ, կը գան այստեղ, այն ժամանակ կ'ասէք։ Սպասեցէք։

Այդ ժամանակ կողքի դռնից դուրս եկաւ չորշորուն երիզներով, փայլուն, պսպղան դէմքով և թուխունի ծնօտով համակուած բեխերով մի ֆելդֆեբել, որ խիստ կերպով դիմեց վերակացուին։

—Ինչո՞ւ էք ներս թողել այստեղ... Պէտք է դրասենեակը տանել...

—Ինձ ասացին, որ բանտապետը այստեղ է, ասաց Նեխլիւդօվը, զարմանալով այն անհանդստութեան վրայ, որ նկատւում էր նաև ֆելդֆեբելի մէջ։

Այդ ժամանակ նեքսելի դուռը բացուեց և ներս եկաւ Պետրօվը՝ քաշի ու քրտինք կարած։

—Էլ սկի չի մոռանայ,—ասաց նա, դիմելով ֆելդֆեբելին։

Ֆելդֆեբելը աչքերով ցոյց տուեց Նեխլիւդօվի վրայ և Պետրօվը լռեց, յօնքերը կիտեց ու դուրս գնաց յետևի դռնով։

«Ո՛վ չի մոռանալու։ Ինչո՞ւ բոլորն էլ այսպէս չփոթուած են։ Ինչո՞ւ ֆելդֆեբելը աչքով նշան արեց նրան», մտածում էր Նեխլիւդօվը։

—Չի կարելի այստեղ սպասել, համեցէք դրասենեակը,—նորից դիմեց ֆելդֆեբելը Նեխլիւդօվին, և Նեխլիւդօվը արդէն ուզում էր գնալ, երբ յետևի դռնովը ներս մտաւ բանտապետը, աւելի ևս չփոթուած, քան իր ստորադրեալները։ Նա անընդհատ հոգոց էր քաշում։ Նեխլիւդօվին տեսնելով, նա դիմեց վերակացուին։

—Ֆեդօտօվ, կանանց հիւանդերորդ սենեակից Մասլօվային դուրս բերէք դրասենեակը,—ասաց նա։

—Համեցէք,—դիմեց նա Նեխլիւդօվին։

Նրանք բարձրացան մի դիք սանդուխով և մտան մի հատ պատուհան ունեցող մի փոքրիկ սենեակ, ուր դրուած էին մի դրասեղան և մի քանի աթոռներ։ Բանտապետը նստեց։

—Շատ ծանր պարտականութիւն է մեր պարտականութիւնը,—ասաց նա դիմելով Նեխլիւդօվին և մի հատ պապիրոս հանելով ծխախոտի ամանից։

—Ինչպէս երեւում է, յոգնել էք,—ասաց Նեխլիւդօվը։

—Առհասարակ յոգնել եմ ծառայութիւնից,—չատ դժուար պարտականութիւններ են։ Ուզում ես մարդու վիճակը թեթևացնել, բայց աւելի վատ է դուրս գալիս. գիշեր ցերեկ մտածում եմ, թէ ինչպէս դուրս պրծնեմ այստեղից. ծանր, չատ ծանր պարտականութիւններ են...

Նեխլիւդօվը չը գիտէր, թէ ինչո՞ւմն էր գլխաւորապէս այդ պաշտօնի դժուարութիւնը իր խօսակցի համար, բայց նկատում էր, որ այսօր նա գտնւում է մի առանձին տեսակ, խղճահարութիւն զարթեցնող, վհատ ու յուսահատ տրամադրութեան մէջ։

—Այո, ես էլ կարծում եմ, որ չատ ծանր են ձեր պարտականութիւնները, ասաց նա։—Բայց որ այդպէս է, ինչո՞ւ էք կատարում այդ պարտականութիւնները։

—Ապրուստի ուրիշ միջոց չունեմ, ընտանիքի տէր եմ։

—Բայց եթէ ծանր է ձեզ համար...

—Ի՞նչ արած. այն էլ պէտք է ասեմ ձեզ, որ էլի ուժիս ներածի չափ օգուտ եմ բերում, թեթևացնում եմ ինչ որ կարող եմ։ Մի ուրիշը իմ տեղ բոլորովին ուրիշ կերպ կը վարուէր։ Հեչտ է ասել, 2,000 հոգուց աւելի են և ինչ պատուհներ։

Պէտք է իմանալ վարուելու ձևը։ Ինչ էլ լինի՝ Աստուծու ստեղծած են, մարդու խեղճը գալիս է։ Բայց ամենևին բայ թողնել էլ չի կարելի։

Բանտապետը սկսեց պատմել կալանաւորների մէջ վերջերը տեղի ունեցած մի կռուի մասին, որ վերջացել էր սպանութեամբ։

Պատմութիւնը ընդհատուեց Մասլօվայի գալովը, որ ներս մտաւ վերակացուի յետևից։

Նեխլիւդօվը տեսաւ նրան դռնում, երբ նա դեռ չէր տեսել բանտապետին։ Դէմքը կարմրած էր։ Նա ժիր-ժիր հետևում էր վերակացուին և անդադար ժպտում էր, ամոթխածնելով գլուխը։ Բանտապետին տեսնելով, նա վախեցրած հայեացքը սևեռեց նրա վրայ, բայց իսկոյն և նէթ սթափուեց և աչխոյժ ու ուրախ կերպով դիմեց Նեխլիւդօվին։

—Բարև ձեզ,—ասաց նա ծոր տալով, ժպտալով ու ոչ այնպէս, ինչպէս առաջին անգամ, այլ ուժով թափ տալով նրա ձեռքը։

—Ահա բերեցի խնդիրքը, որ ստորագրէք,—ասաց Նեխլիւդօվը, մի քիչ զարմացած այն աչխոյժ կերպարանքից, որով Մասլօվան այսօր հանդիպեց նրան։—Փաստաբանը ահա գրել է խնդիրքը, դուք պէտք է ստորագրէք ու յետոյ կ'ուղարկենք Պետերբուրգ։

—Ինչու չէ, կը ստորագրեմ։ Ինչ ուզէք կ'անեմ,—ասաց նա, պչելով մի աչքը ու ժպտալով։

Նեխլիւդօվը հանեց գրպանից մի ծալած թերթ ու մօտեցաւ սեղանին։

—Կարելի է այստեղ ստորագրել,—հարցրեց Նեխլիւդօվը բանտապետից։

—Սրի այստեղ նստիր,—ասաց բանտապետը Մասլօվային,—ահա քեզ գրիչ։ Գրել գիտես։

—Մի ժամանակ գիտէի,—ասաց նա և, ժպտալով ու նեղքնաղդեսան ու բաճկոնի թևքը ուղղելով, նստեց սեղանի մօտ, անշնորհք կերպով բռնեց գրիչը իր փոքրիկ ու նուռնդուն ձեռքով և ծիծաղելով՝ յետ նայեց Նեխլիւդօվի վրայ։

Նեխլիւդօվը ցոյց տուեց, թէ ինչ պէտք է գրել և որտեղ։

Ուշի ուշով թաթախելով ու թափ տալով գրիչը, նա ստորագրեց իր անունը։

—Էլ ոչինչ պէտք չէ,—հարցրեց նա յետ Նեխլիւդօվին նայելով, յետ բանտապետին և վայր դնելով գրիչը յետ թանաքամանի յետ թղթի վրայ։

—Ես մի քիչ բան ունեմ ձեզ հետ խօսելու,—ասաց Նեխլիւդօվը, գրիչը ձեռքիցը առնելով։

—Լաւ, ասացէք,—ասաց Մասլօվան և յանկարծ լրջացաւ, կարծես թէ մտածմունքների մէջ ընկաւ։ Կամ քունը սկսեց տանել։

Բանտապետը վեր կացաւ ու դուրս գնաց, և Նեխլիւդօվը մնաց նրա հետ մենակ։

XLVI

Մասլօվային բերող վերակացուն, որ հրէական տիպի մարդ էր՝ սպիտակող ծնօտամիրուքով, նստեց պատուհանի վրայ, սեղանից հեռու։ Նեխլիւդօվի համար հասաւ վճռական րոպէն։ Նա չարունակ կշտամբում էր ինքն իրան, որ առաջին տեսակցութեան ժամանակ չասաց Մասլօվային այն, ինչ որ գլխաւորն էր, այսինքն, որ ինքն ուզում է պսակուել նրա հետ, և այժմ հաստատ վճռել էլ էր ասել նրան այդ։ Մասլօվան նստած էր սեղանի մի կողմում. Նեխլիւդօվը նստեց նրա դէմուդէմը միւս կողմում։ Սենեակում լոյս էր, և Նեխլիւդօվը առաջին անգամ պարզ տեսաւ նրա դէմքը մօտիկ տարածութիւնից ու նկատեց աչքերի և շրթունքների շուրջը եղող խորշումները և աչքերի ուռածութիւնը։ Եւ սկսեց ատելի ևս խղճահարութիւն զգալ դէպի նա, քան առաջ։

Կոթնելով սեղանի վրայ այնպէս, որ իր ասածները չը կարողանայ լսել պատուհանում նստած վերակացուն, նա ասաց միմիայն Մասլօվայի համար լսելի ձայնով.

—Եթէ այդ խնդիրքից բան դուրս չը գայ, թագաւորի անունով խնդիրք կը տանք։ Ինչ որ հնարաւոր բան կայ, կ'անենք։

—Այ եթէ առաջ մի լաւ փաստաբան լինէր... ընդհատեց նրա խօսքը Մասլօվան։—Թէ չէ իմ պաշտպանը տուժուցների մէկն էր։ Մի գլուխ կօմպլիմենտներ էր ասում ինձ,—ասաց նա ու ծիծաղեց։—Եթէ այն ժամանակ իմանայինք, որ ես ծանօթ եմ ձեզ հետ, ուրիշ բան կը լինէր։ Թէ չէ կարծում են, թէ մենք բոլորս էլ գող ենք։

«Ի՞նչ տարօրինակ է սա այսօր», մտածեց Նեխլիւդօվը և այն է ուզում էր չարունակել իր ասելիքը, որ նա նորից սկսեց խօսել։

—Ինչ էի ուզում ձեզ ասել։ Մեղնում մի պառաւ կայ, ամինքի բերանը բաց է մնացել վրան։ Հրաշալի պառաւ է, բայց աբի տես որ զուր տեղը բանտ են գցել իրան էլ, տղին էլ.

ամենքն էլ գիտեն, որ նրանք անմեղ են, բայց նրանց մեղաւոր են դուրս բերել, թէ կրակ են դրել, և նահապետել են։ Նա լսել էր, որ ես ձեզ հետ ծանօթ եմ,—ասաց Մասլօվան, պատասխանելով գլուխը ու նայելով նրա վրայ,—մէկ էլ տեսնեմ դալիս է մօտս ու ասում. ասա իրան, թող ազիս դուրս կանչի, նա ամեն բան կը պատմի։ Մենչօվներ են ասում նրանց։ Չ'ը, կ'ասէք։ Այնպէս հրաշալի պառաւ է, գիտէք, իսկոյն երևում է, որ մեղք չունի։ Աչխատեցէք նրանց համար, հոգիս,—ասաց Նա, նայելով նրան և յետոյ աչքերը ցածացնելով ու ժպտալով։

—Շատ լաւ, կ'իմանամ ու ինչ որ պէտք է կ'անեմ,—ասաց Նեխլիւդօվը, աւելի ու աւելի զարմանալով նրա համարձակութեան վրայ։—Բայց ես ուզում էի խօսել ձեզ հետ իմ գործի մասին։ Ծիշտ էք, ինչ ասացի ձեզ այն ժամանակ,—հարցրեց նա։

—Շատ բան խօսեցիք։ Ի՞նչ ասացիք այն ժամանակ,—ասաց Մասլօվան, չարունակ ժպտալով և գլուխը չուռ տալով մէկ այս կողմը, մէկ այն կողմը։

—Ես ասացի, թէ եկել եմ ձեզ խնդրելու, որ ներէք ինձ։

—Էհ ներելն ինչ է. ինչ պէտք է դուրս գայ ներելուց... աւելի լաւ է դուք...

—Թէ ուզում եմ քաւել մեղքս,—չարունակեց Նեխլիւդօվը,—և քաւել ոչ թէ խօսքով, այլ գործով։ Ես վճռել եմ պսակուել ձեզ հետ։

Մասլօվայի դէմքի վրայ սարսափ երևաց յանկարծ։ Նրա չիլ աչքերը սեեռուեցին Նեխլիւդօվի վրայ և նայում էին ու չէին նայում նրան։

—Ա՞յդ ինչացու է,—ասաց նա, զայրագին կնճռուելով։

—Ես զգում եմ, որ Աստուծու առաջ պարտական եմ այդ անել։

—Ի՞նչ Աստուծու անուն էք տալիս։ Բան էք ասում էլի. Աստուած։ Ի՞նչ Աստուած։ Թող այն ժամանակը յիշէիք Աստուծուն,—ասաց Մասլօվան ու, բերանը բաց արած, մնաց։

Նեխլիւդօվը միայն այժմ զգաց, որ նրա բերնից օղիի սաստիկ հոտ է փչում, ու հասկացաւ նրա գրգռութեան պատճառը։

—Հանգստացէք,—ասաց նա։

—Հանգստանալու ոչինչ չունեմ։ Կարծում ես, հարբած եմ, հա՞։ Շատ էլ հարբած եմ, բայց գիտեմ, թէ ինչ եմ ասում,—յանկարծվրայ տուեց նա արագ-արագ ու ամբողջ դէմքը կասկարմիր կարեց,—ես սիբիրական եմ, իսկ դու աղա ես, իշխան ես, ինչ

բան ունես ինձ հետ։ Դու գնա քո իշխանուհի օրիորդների մօտ, իսկ իմ գինը մի կարմիր տասնանոց է։

—Ինչքան էլ խիստ լեզու բանացնես, էլի չես կարող այն ասել, ինչ որ ես ինքս եմ զգում,—կամաց ձայնով ասաց Նեխլիւդօվը, ամբողջ մարմնով դողալով,—չես կարող երևակայել, թէ որ աստիճան ինձ մեղաւոր եմ զգում քո առաջ...

—Մեղաւոր եմ զգում... զայրոյթով նրա ձևն արեց Մասլօվան։—Այն ժամանակ չէիր զգում, երբ հարիւր մանէթանոցը ձեռքիդ էին դնում, թէ առ, գնա, այս է գինդ...

—Գիտեմ, գիտեմ, բայց ինչ անեմ հիմա,—ասաց Նեխլիւդօվը։—Այժմ ես վճռել եմ մենակ չը թողնեմ քեզ,—կրկնեց Նեխլիւդօվը,—և ինչ որ ասացի կ'անեմ։

—Իսկ ես ասում եմ, որ չես անի,—ասաց Մասլօվան ու բարձր ձայնով ծիծաղեց։

—Կատիւշա,—սկսեց Նեխլիւդօվը։

—Հեռացիր ինձանից։ Ես սիբիրական եմ, իսկ դու՝ իշխան և քո տեղը չի այստեղ,—գոռաց Մասլօվան, դուրս քաշելով ձեռքը նրա ձեռքից ու բոլորովին կերպարանափոխուելով զայրոյթից։—Դու ուզում ես հոգիդ փրկել իմ միջոցով,—չարունակեց նա, չտալով ասել այն բոլորը, ինչ որ բարձրացել էր նրա հոգու մէջ։—Այս կեանքում դու զուարճանում էիր ինձնով, այն կեանքումն էլ ուզում ես փրկուել ինձնով։ Աւելի ես դու ինձ ոտից մինչև գլուխ, այդ ամենաներսից և ամբողջ այդ չար ու գարշելի դէմքովդ։ Գնա, գնա, հեռացիր,—գոռաց նա, եռանդուն չարժումով ոտքի ցատկելով։

Վերակացուն մօտեցաւ նրանց։

—Ինչ ես խայտառակութիւն անում։ Միթէ կարելի է այդպէս...

—Թողէք, խնդրեմ,—ասաց Նեխլիւդօվը։

—Ուզում եմ, որ չափը ճանաչի,—ասաց վերակացուն։

—Ձէ, սպասեցէք, խնդրեմ,—ասաց Նեխլիւդօվը։

Վերակացուն հեռացաւ պատուհանի մօտ։

Մասլօվան նորից նստեց, աչքերը կախ գցելով և պինդ սեղմելով փոքրիկ ձեռքերի խաչ գցած մատները։

Նեխլիւդօվը կանգնած էր նրա գլխին ու չէր իմանում ինչ անի։

—Ձես հաւատում ինձ,—ասաց նա։

—Այն որ ուզում էք պսակուել ինձ հետ,—ոչ մի ժամանակ չի լինի այդ։ Կը կախուեմ ու չեմ պսակուի։ Հասկացաք։

—Ես այնուամենայնիւ կը ծառայեմ քեզ։

—Այդ ձեր գործն է։ Միայն թէ ինձ ոչինչ պէտք չի ձեզնից։ Հաստատ բան եմ ասում ձեզ,—ասաց Մասլօվան։—Ախ,

ինչու ա՞լ ժամանակ չը մնաց,—աւելացրեց Նա, ու սկսեց լալ աղեկտուր կերպով։

Նեխլիւդովը չէր կարողանում խօսել. Մասլօվայի լացը նրա արտասուքն էլ բերեց։

Մասլօվան բարձրացրեց աչքերը, նայեց Նրան, կարծես զարմացաւ ու սկսեց գլխաշորի ծայրով սրբել իր կրեսի վրայով հոսող արտասուքները։

Վերակացուն Նորից մօտեցաւ ու յիշեցրեց, որ բաժանուելու ժամանակն է։ Մասլօվան վեր կացաւ։

—Դուք այժմ զրգռուած էք։ Եթէ կարելի եղաւ, վաղը կը գամ։ Իսկ դուք մտածեցէք,—ասաց Նեխլիւդովը։

Մասլօվան ոչինչ չը պատասխանեց ու, առանց Նրա վրայ նայելու, դուրս գնաց վերակացուի յետևից։

———

—Դէ հիմա քէֆ արա, աղջի,—ասաց Կօրաբլեօվան Մասլօվային, երբ նա վերադարձաւ իրանց սենեակը։—Երևում է, Թունդ է գրաւուել քեզնով. տես, քանի որ դեռ գալիս է, լաւ օգուտ քաղիր։ Նա կ'աղաւաի քեզ։ Հարուստ մարդիկ ամեն բան կարող են անել։

—Իսկ որ այդպէս է,—երգաձայն ասաց պահապանուհին։—Աղքատ մարդը որ ծովի մօտ գնայ, ծովը կը չորանայ, իսկ հարուստի սէրտը որ Թուչունի կաթ էլ ուզի, չանկութիւնը կը կատարուի։ Մեղնում, հոգիս, մի յարգևոր մարդ կար, ինչ ես կարծում՝ ինչ արեց...

—Է, իմ գործի համար խօսեցէր,—հարցրեց պատաւը։

Բայց Մասլօվան ոչ մի պատասխան չը տուեց իր ընկերուհիներին, այլ պառկեց տախտի վրայ և չիլ աչքերը սենեակի անկիւնին յառած, մնաց այդպէս պառկած մինչև երեկոյ։ Տանջալից աշխատանք էր կատարւում Նրա հոգու մէջ։ Այն, ինչ որ ասաց Նեխլիւդովը, կանչում էր Նրան այն աշխարհը, ուր Նա տանջուել էր այնքան և որտեղից հեռացել էր, առանց հասկանալու Նրան և առելութիւն զգալով դէպի Նա։ Նա այժմ զրկուել էր այն ինքնամոռացութիւնից, որի մէջ ապրում էր վերջին տարիներս, իսկ ապրել պարզ յիշելով անցեալը՝ չափազանց ծանր էր։ Երեկոյեան Նա Նորից օդի գնաց ու հարբեց իր ընկերուհիների հետ։

XLVII

«Այդպէս ուրեմն։ Այդպէս»,—մտածում էր Նեխլիւդովը, դուրս գալով բանտից և միայն այժմ լիովին հասկանալով իր

ամբողջ մեղքը։ Եթէ Նա չը փորձէր քաւել իր արածը, երբէք չէր էլ զգալ այդ արածի ամբողջ չանգստութիւնը, և բացի այդ՝ Մասլօվան էլ չէր զգալ Նրա պատճառած չարիքի ամբողջ նշանակութիւնը։ Միմիայն այժմ այդ բոլորը բացայայտուեց իր ամբողջ ահաւորութեամբ։ Միայն այժմ Նա տեսաւ, թէ ինչ էր արել ինքը այդ կնոջ հոգու հետ և այդ կինը տեսաւ, թէ ինչ էր բերել Նա իր գլխին։ Առաջ Նեխլիւդովը խաղում էր իր զգացմունքի հետ, հիանում էր ինքն իր վրայ և զմայլում իր ղղջումով, իսկ այժմ ուղղակի սարսափ պատեց Նրան։ Թողնէր այդ կնոջը ու հեռանար,—Նա լաւ զգում էր, որ չէր կարող այդ անել,—և սակայն չէր կարողանում նոյնպէս երևակայել, թէ ինչ կարող է դուրս գալ իր և նրա այժմեան յարաբերութիւններից։

Բանտի դռան մէջ մէկը մի տոմսակ տուեց Նեխլիւդովին։ Դուրս գալուց յետոյ Նա կարդաց այդ տոմսակը։ Ահա թէ ինչ էր գրուած Նրա մէջ մատիտով ու արագ գրով։

«Իմանալով, որ դուք, հետաքրքրուելով մի քրէական չանգստութով, այցելում էք բանտը, ցանկացայ տեսնուել ձեզ հետ։ Թոյլտուութիւն խնդրէք ինձ հետ տեսնուելու։ Ձեզ Թոյլ կը տան և ես չատ կարևոր բաներ կը հաղորդեմ ձեզ ձեր հովանաւորեալի և քաղաքական չանգստարների համար։ Ձեզ երախտապարտ Վերա Բօգօդուխօվսկայա»։

«Բօգօդուխօվսկայա։ Ինչ Բօգօդուխօվսկայա,—մտածեց Նեխլիւդովը, որ ամբողջապէս պաշարուած էր Մասլօվայի հետ ունեցած տհաճակութեան տպաւորութիւններով և առաջին րոպէին չէր կարողանում ոչ մի յիշողութիւն կապել այդ անուան ու ձեռքի հետ։—Էհ,—չանկարծ մտաբերեց Նա։—Այն սարկաւագի աղջիկն է, որ արջի որսի ժամանակ ծանօթացաւ հետս»։

Վերա Բօգօդուխօվսկայան վարժուհի էր Նիժնիյ—Նօվգօրօդի խուլ նահանգում, ուր Նեխլիւդովը իր ընկերների հետ գնացել էր արջ որսալու։ Այդ վարժուհին Նեխլիւդովից փող էր խնդրել բարձրագոյն կուրսերը գնալու։ Նեխլիւդովը ուղած փողը տուել էր ու մոռացել նրա մասին։ Այժմ դուրս էր գալիս, որ այդ նախկին վարժուհին բանտ էր ընկել իբրև քաղաքական չանգստար, և, երևի, խնդրում նրա պատմութիւնը, առաջարկում էր նրան իր ծառայութիւնները։ Ինչպէս թեթև ու պարզ էր ամեն ինչ այն ժամանակ, և ինչպէս ծանր ու բարդ էր ամեն ինչ այժմ։ Նեխլիւդովը կենդանի կերպով և սրտի բերկրութեամբ յիշեց այն ժամանակը և իր ծանօթանալը Բօգօդուխօվսկայայի հետ։ Բարեկենդաններից առաջ էր այդ, մի խուլ անկիւնում, երկաթուղու կայարանից 60 վերստ հեռու։ Որսը չատ աջող էր անցել,

երկու արջ էին սպանել և ճանապարհ ընկնելուց առաջ ճաշում էին, երբ այն խրճիթի տերը, ուր նրանք իջել էին, ևկաւ ասաց, թէ սարկաւագի աղջիկը եկել է, ուզում է տեսնել իշխան Նեխլիւդովին։

—Սիրուն է,—հարցրեց որսորդներից մէկը։

—Է՜հ, ինչեր էք ասում,—ասաց Նեխլիւդովը, վերկացաւ սեղանից և, զարմանալով, թէ ինչ գործ կարող է ունենալ իր հետ սարկաւագի աղջիկը, երեսին լուրջ արտայայտութիւն տուեց ու գնաց տանտիրոջ սենեակը։

Սենեակում նրան սպասում էր թաղիքէ գլխարկ դրած ու փոքրիկ մուշտակ հագած մի չլուա օրիորդ, նիհար ու տգեղ դէմքով, որի մէջ լաւ էին միայն աչքերն ու կամարաձև յօնքերը։

—Ահա սա է իշխանը, վերա եֆրեմօվնա,—ասաց պառաւ տանտիրուհին,—ասա ինչ որ ուզում էիր։ Ես կը գնամ։

—Ինչո՞վ կարող եմ ձեզ օգտակար լինել,—հարցրեց Նեխլիւդովը։

—Ես... ես... Դուք հարուստ էք ու չաղ էք տալիս փողերը դատարկ բաների համար, որսորդութեան համար։ Ես գիտեմ,—սկսեց օրիորդը՝ սաստիկ չփոթուելով,—իսկ ես միայն մի բան եմ ուզում, ես ուզում եմ օգտակար լինել ուրիշներին, և սակայն ոչինչ չեմ կարող անել, որովհետև ոչինչ չը գիտեմ։

—Ես ինչ կարող եմ անել այդ բանում։

—Ես վարժուհի եմ, բայց ուզում եմ գնալ Կուբսերը, սակայն ինձ չեն թողնում։ Այսինքն թողնում են, բայց միջոց չունենք։ Տուէք ինձ միջոցներ, ես կ'աւարտեմ ուսումս ու յետոյ յետ կը տամ ձեզ ձեր փողը։

Նրա աչքերը չհասակ մարդու աչքեր էին ու բարի, և նրա դէմքի ամբողջ արտայայտութիւնը, և՛ վճռական, և՛ երկչոտ, այնքան արտաշարժ էր, որ Նեխլիւդովը, ինչպէս չատ անգամ պատահում էր նրան, յանկարծ մտաւ օրիորդի դրութեան մէջ, հասկացաւ նրան ու խղճաց։

—Ես կարծում եմ, վատ բան է, որ հարուստ մարդիկ արջեր են սպանում ու գիւղացիներին հարբացնում։ Մի՞թէ չեն կարող բարի գործ կատարել։ Ինձ միմիայն 80 ռուբլի է հարկաւոր։ Բայց եթէ չէք ուզում, ինձ համար միևնոյնն է,—ասաց նա բարկութեամբ, իր համար աննպատակ կերպով բացատրելով այն յամառ ու լուրջ հայեացքը, որ Նեխլիւդովը յառել էր նրա վրայ։

—Ընդհակառակը, ես չատ չնորհակալ եմ, որ դուք ինձ առիթ էք տալիս...

Երբ օրիորդը հասկացաւ, որ նա համաձայնում է, կարմրեց ու լռեց։

—Այս րոպէիս կը բերեմ,—ասաց Նեխլիւդովը։

Նա դուրս եկաւ սրահը և այնտեղ պատահեց իր ընկերներից մէկին, որ ականջ էր դնում նրանց խօսակցութեանը։ Առանց պատասխանելու ընկերների կատակներին, նա պայուսակից հանեց փողը ու տարաւ տուեց օրիորդին։

—Խնդրեմ, խնդրեմ, չնորհակալութիւն մի արէք։ Ե՛ս պէտք է ձեզնից չնորհակալ լինեմ։

Նեխլիւդովը հաճոյք էր զգում այժմ այդ բոլորը յիշելիս. հաճոյք էր զգում, յիշելով, ինչպէս քիչ մնաց կռուէր իր ընկեր սփիցերի հետ, որ ուզում էր վատ կատակի նիւթ դարձնել այդ, ինչպէս միւս ընկերը իր կողմն անցաւ և այդ պատճառով ինքն ու նա աւելի մօտ ընկերացան, ինչպէս ամբողջ որսորդութիւնը յաջող էր և ուրախ, և ինչպէս լաւ էր զգում նա ինքն իրան, երբ գիշերը վերադառնում էին դէպի երկաթուղու կայարանը։ Սրկէի սահնակների չարանը նեղ շաւիղով անաղմուկ սլանում էր մերթ բարձր, մերթ ցած անտառների մէջով, որոնց ձիւնաճալած եղևիններն ձկռում էին ձիւնի ծանրութեան տակ։ Խաւարի մէջ երբեմն-երբեմն որսորդներից մէկը կպցնում էր իր անուշաբոյր պապիրոսը և փայլեցնում կրակի կարմիր բոցը։ Որսի տեղը գտնող Օսիպը, ծնկնահան խրուելով ձիւնի մէջ, վազում էր սահնակից սահնակ, նստում կառապանի մօտ ու պատմում եղջերուների մասին, որոնք այժմ թափառում են խորունկ ձիւների միջով ու կրծում ծառերի կեղևները, և արջերի մասին, որոնք իրանց խոր որջերում ֆնչացնում են այժմ իրանց ջերմ չունչը օդանցքի միջով։

Նեխլիւդովը յիշեց այդ բոլորը և ամենից աւելի այն երջանիկ զգացմունքը, որ առաջանում էր նրա մէջ իր առողջութեան, ոյժի և անհոգութեան գիտակցութիւնից։ Թռքերը ուռչում, պրկում էին կիսամուշտակը ու ներս չնչում սառնամանի օդը, սահնակի ձիավարմարները դիպչում էին ծառերի ճիւղերին ու թափ տալիս ձիւնը դէմքերի վրայ, ժարմինը տաք էր, երեսը՝ զով, և հոգին ազատ հոգսերից, խղճի խայթոցներից, ահից ու չանկութիւններից։ Ի՜նչ լաւ էր այն ժամանակ։ Իսկ այժմ Տէր Աստուած, որքան կսկծալից ու ծանր էր այդ բոլորը։

—

XLVIII

Միւս առաւօտ զարթնելով, Նեխլիւդօվը յիշեց այն բոլորը, ինչ որ եղել էր նախընթաց օրը, և սարսափեց։

Բայց, չը նայելով այդ սարսափին, նա աւելի ևս հաստատ, քան առաջ երբևիցէ, վճռեց չարունակել սկսածը։

Այդ՝ պարտականութեան գիտակցութեան զգացմունքով նա դուրս եկաւ տանից ու գնաց Մասլեննիկովի մօտ, որպէս զի թոյլտուութիւն խնդրէր այցելելու բանտում, բացի Մասլովայից, նաև այն Մենշովա պառաւին ու նրա աղային, որոնց համար խնդրել էր նրան Մասլովան. բայի դրանից, նա ուզում էր թոյլտուութիւն խնդրել տեսնուելու նաև Բոգոդուխովա-կայայի հետ, որը կարող էր օգտակար լինել Մասլովային։

Նեխլիւդօվը վաղուց էր ճանաչում Մասլեննիկովին, զօրացդում եղած ժամանակից։ Մասլեննիկովը այն ժամանակ նրանց գնդի գանձապահն էր։ Այդ մի վերին աստիճանի բարեհոգի ու ճշտակատար օֆիցէր էր, որ աշխարհումս ոչինչ չը գիտէր և չէր էլ ուզում իմանալ իր գնդից զատ։ Այժմ նա կառավարիչ էր դարձել և զօրագունդը փոխարինել էր նահանգալ ու նահանգական վարչութեամբ։ Նա պահում էր մի հարուստ ու ժիր կնոջ հետ, որ և սոխակել էր նրան զինուորական ծառայութիւնից անցնել քաղաքացիականի։

Կինը ծիծաղում էր մարդու վրայ և գլուխ էր տալիս նրան, ինչպէս իր ձեռնասուն անասունին։ Նեխլիւդօվը անցեալ ձմեռ մի անգամ եղել էր նրանց տանը, բայց այնքան անհետաքրքիր էր թուացել նրան այդ ամուսնական զոյգը, որ այնուհետև այլ ևս ոչ մի անգամ չէր գնացել մօտները։

Մասլեննիկովը ամբողջապէս փայլեց ուրախութիւնից, տեսնելով Նեխլիւդօվին։ Նրա դէմքը էլի այնպէս դէր էր ու կարմիր, կազմուածքը՝ յաղթանդամ և հագուստը՝ հիանալի, ինչպէս և զինուորական ծառայութեան ժամանակ։ Այնտեղ այդ հագուստը մի՝ միշտ մաքուր, վերջին մօդայի համեմատ ուսերն ու կուրծքը քիփ հուպ տուած համազգեստ էր կամ զինուորական ամենօրեայ զգեստ, իսկ այժմ այդ՝ վերջին մօդայով կարուած քաղաքացիական զգեստ էր, որ նոյնպէս քիփ հուպ էր տալիս նրա կուչտ մարմինը և դուրս գցում լայն կուրծքը։ Նա վիցմունդիրով էր։ Չը նայելով տարիքների տարբերութեանը (Մասլեննիկովը քառասունի մօտ էր), նրանք «դուս»-ով էին խօսում իրար հետ։

—Այ այդպէս. չնորհակալ եմ, որ եկար։ Գնանք կնոջս մօտ։

Լաւ է, ես էլ նիստից առաջ մի տաս րոպէ ունեմ ազատ։ Գիտեմ, որ նահանգապետը այստեղ չէ, գնացել է։ Ես եմ կառավարում նահանգը,—ասաց նա հաճոյքով, որը չէր կարողանում ծածկել։

—Ես գործով եմ եկել քո մօտ։

—Ի՞նչ գործ,—յանկարծ, կարծես իրան հաւաքելով, հարցրեց Մասլեննիկովը վախեցած ու մի քիչ խիստ ձայնով։

—Բանտում մի կալանաւոր կայ, որի վիճակը ինձ շատ հետաքրքրում է (լանտ խօսքից Մասլեննիկովի դէմքը աւելի ևս խիստ արտայայտութիւն ստացաւ), և ես կ'ուզէի տեսակցել նրա հետ ոչ ընդհանուր այցելարանում, այլ գրասենեակում և ոչ միայն որոշ օրերին, այլ աւելի յաճախ։ Ինձ ասացին, որ այդ քեզնից է կախուած։

—Ի հարկէ, mon cher (սիրելիս), ես ամեն ինչ պատրաստ եմ անել քեզ համար,—ասաց Մասլեննիկովը, երկու ձեռքով չօշափելով նրա ծնկները, կարծես ուզելով դրանով մեղմացնել իր վհուկթիւնը,—այդ կարելի է, բայց, պէտք է քեզ ասեմ, որ ես խալիֆ եմ միայն մի ժամով։

—Ուրեմն կարող ես թոյլտուութեան թուղթ տալ ինձ այդ կալանաւորուհու հետ տեսակցելու համար։

—Կինն է քեզ հետաքրքրող կալանաւորը։

—Այո։

—Ինչո՞ւ համար են նրան նստացրել։

—Թունաւորման համար։ Բայց անկանոն կերպով է դատապարտուած։

—Այ քեզ մեր գովական արդար դատարանը, ils n'en font point d'autres *),—չեմ իմանում ինչու, ասաց նա ֆրանսերէն։—Ես գիտեմ, որ դու համաձայն չես ինձ հետ, բայց ինչ արած, c'est mon opinion bien arrêtée **),—աւելացրեց նա, յայտնելով մի կարծիք, որ այդ տարուայ ընթացքում մի քանի անգամ տարբեր-տարբեր ձևերով կարդացել էր մի խաւարամիտ, պահպանողական լրագրում։—Ես գիտեմ, դու ազատամիտներից ես։

—Չը գիտեմ, ազատամիտ եմ թէ չէ,—ժպտալով ասաց Նեխլիւդօվը, որ միշտ զարմանում էր այն բանից, որ ամենքը իրան որոշ կուսակցութեան անդամ էին համարում և ազատամիտ անուանում՝ միմիայն այն պատճառով, որ նա, որ և է մարդու դատելիս, ասում էր, թէ պէտք է նախ և առաջ այդ մարդուն խօսեցնել, թէ բոլոր մարդիկ հաւասար են դատարանի

*) Դրանց (երդուեալ դատաւորների) վճիռները միշտ այդպէս են լինում։

**) Այդ իմ հաստատ կարծիքն է։

առաջ և թէ չը պէտք է ծեծել ու տանջել առհասարակ մարդկանց և մանաւանդ նրանց, որոնք դեռ չեն դատապարտուած։— Ը՛ը գիտեմ, ազատամիտ եմ ես թէ ոչ, բայց գիտեմ, որ այժմեան դատարանները, որքան էլ վատ լինեն նրանք, այնուամենայնիւ. աւելի լաւ են, քան առաջուան դատարանները։

—Իսկ ո՞ւմ ես փոստաբան վարձել։

—Դիմեցի Ֆանարինին։

—Ախ, Ֆանարինին,—կնճռուելով ասաց Մասլեննիկովը, յիշելով, թէ ինչպէս անցեալ տարի այդ Ֆանարինը իրան, դատարանում հարց ու փորձի ենթարկելով իրրև վկայի, ամենամեծ քաղաքավարութեամբ ծաղրի առարկայ էր դարձրել կէս ժամ չարունակ։

—Ես քեզ խորհուրդ չէի տալ գործ ունենալ նրա հետ։ Ֆանարինը—c'est un homme taré *)։

—Մի ուրիշ խնդիրք էլ ունեմ քեզնից,—ասաց Նեխլիւդովը, ուշք չը դարձնելով նրա ասածին։—Շատ վաղուցուանից ես ծանօթ եմ մի վարժուհի օրիորդի հետ. սաստիկ ողորմելի արարած է և այժմ նոյնպէս բանտումն է։ Ուզում է տեսնուել հետս։ Կարող ես նաև նրան տեսնելու թոյլտուութիւն տալ, չէ՞։

Մասլեննիկովը փոքր ինչ թեքեց գլուխը ու սկսեց մտածել։

—Քաղաքական յանցաւոր է։

—Այո, այդպէս ասացին ինձ։

—Պէտք է իմանաս, որ քաղաքականների հետ տեսնուելու իրաւունք տրուում է միայն ազգականներին, բայց ես քեզ կը տամ ընդհանուր թոյլտուութիւն։ Je sais que vous n'abuserez pas **)... Ինչպէս է քո այդ protégée—ի (հովանաւորեալի) անունը... Բօգօդուխօվսկայա... Elle est jolie ***)?

—Hideuse ****)։

Մասլեննիկովը չմհաւանութեամբ թափ տուեց գլուխը և մօտենալով սեղանին, արագ-արագ դրեց տպած վերնագիր ունեցող թղթի վրայ. «Այս տոմսը ցոյց տուող իշխան Դմիտրիյ Իվանովիչ Նեխլիւդովին թոյլ եմ տալիս բանտի դրասենեակում տեսակցութիւն ունենալ կալանաւորուհի Մասլովայի, ինչպէս նաև Ֆելդշէրուհի Բօգօդուխօվսկայայի հետ,—վերջացրեց նա տորագրութեան տուտը երկարացնելով։

—Այ կը տեսնես, թէ ինչ կարգ ու կանոն է սիրում այն-

*) Փչացած մարդ է։
**) Գիտեմ, որ ի չարը չէք գործ դնի։
***) Սիրո՞ւն է։
****) Սկլանդակ։

տեղ։ Իսկ կարգ պահել այնտեղ շատ դժուար է, որովհետև բոլորովին լիքն է, բայց ես այնուամենայնիւ խիստ հսկում եմ և սիրում եմ այդ գործը։ Կը տեսնես, շատ լաւ է այնտեղ նրանց դրութիւնը և իրանք էլ գոհ են։ Միայն թէ պէտք է մարդ իմանայ նրանց հետ վարուելու ձևը։ Այ, օրինակ, նորերս մի անախորժ դէպք եղաւ, անհնազանդութիւն։ Մի ուրիշը իմ տեղ իրր խռովութիւն կ'ընդունէր այդ և չատերին կ'անբախտացնէր։ Բայց այժմ չատ լաւ անցաւ գործը։ Մի կողմից հոգատարութիւն է պէտք, միւս կողմից՝ անյողդողդ իշխանութիւն,—ասաց նա, սղմելով չապկի ոսկեկոճակ և պլինդ թևքի մէջից երևացող սպիտակ ու թխլիկ բազուկը, որի մատին փայլում էր փիրուզագարդ մատանին,—հոգատարութիւն և անյողդողդ իշխանութիւն։

—Այդ ես չը գիտեմ,—ասաց Նեխլիւդովը,—երկու անգամ գնացել եմ այնտեղ, երկու անգամն էլ սարսափելի ծանր տպաւորութիւն եմ ստացել։

—Գիտեմ ինչ։ Շատ լաւ կ'անես, եթէ մօտիկ ծանօթանաս կոմսուհի Պասէկի հետ,—չարունակեց խօսքով ընկած Մասլեննիկովը,—նա բոլորովին նուիրուել է այդ գործին։ Elle fait beaucoup de bien *). Նրա չնորհիւ է գուցէ, որ ինձ,—առանց կնճռ համեստութեան պիտի ասեմ,—յաջողեց փոփոխել այնտեղ ամեն ինչ, և այնպէս փոփոխել, որ ոչ միայն չը կան այն սարսափելի բանները, որ կային առաջ, այլ և ուղղակի չատ լաւ են զգում իրանց՝ կալանաւորները։ Այ ինքդ կը տեսնես։ Ինչ վերաբերում է Ֆանարինին, ես անձամբ չեմ ճանաչում նրան, ասինք, իմ հասարակական դիրքի չնորհիւ, մինք ընդհանուր բաներ չենք էլ կարող ունենալ, բայց, պէտք է ասեմ, որ նա միանգամայն վատ մարդ է, և բացի այդ այնպիսի բաներ է թոյլ տալիս իրան ասել դատարանում, այնպիսի բաներ...

—Ուրեմն չատ չնորհակալ եմ,—ասաց Նեխլիւդովը, վերցնելով թոյլտուութեան թուղթը, և մնաս բարև արեց իր նախկին ընկերոջ հետ, առանց լսելու նրա խօսքի չարունակութիւնը։

—Հապա կնոջս մօտ չե՞ս գնայ։

—Չէ, ներիր, այժմ ժամանակ չունեմ։

—Ի՞նչպէս կարելի է. նա ինձ չի ների այդ բանը,—ասում էր Մասլեննիկովը, ճանապարհ գնելով իր նախկին ընկերոջը մինչև սանդուխների առաջին գաւիթը, ինչպէս նա ճանապարհ էր գնում ոչ առաջնակարգ, այլ երկրորդական կարևորութիւն ունեցող մարդկանց, որոնց թուին էր դասում և Նեխլիւդովին։

—Չէ, խնդրում եմ, մտիր գոնէ մի րոպէով։

*) Շատ բարիքներ է անում նա։

Բայց Նեխլիւդովը անդրդուելի մնաց և այն ժամանակ, երբ լաքէյն ու դռնապանը վազելով մօտեցան իրան՝ վերարկուն ու գլխարկը տալու և բանալու դուռը, որի մօտ դրսից կանգնած էր մի փողոցապահ ոստիկան, նա ասաց Մասլեննիկովին, որ այժմ ոչ մի կերպ չի կարող։

—Որ այդպէս է, խնդրեմ, հինգշաբթի եկ մեզ մօտ։ Կնոջս ընդունելութեան օրն է այդ։ Ես կ'ասեմ իրան,—գոռաց նրան սանդուխների վերից Մասլեննիկովը։

XLIX

Նոյն օրն և եթ Մասլեննիկովի մօտից ուղղակի բանտը գնալով, Նեխլիւդովը քայլերն ուղղեց դէպի բանտապետի ծանօթ բնակարանը։ Լսւում էին նոյն վատ դաշնամուրի հնչիւնները, բայց այս անգամ դաշնակահարը նուագում էր ոչ թէ Լիստի բապսօդիան, այլ կլէմէնտիի էտիւդները, թէև էլի առաջուան պէս արտասովոր կերպով ուժգին, որոշակի ու արագ։ Ադախինը, որի աչքը էլի կապած էր, բանալով դուռը, ասաց, որ կապիտանը տանն է, առաջնորդեց Նեխլիւդովին իրանց փոքրիկ հիւրասենեակը, ուր կային մի բազմոց, մի սեղան և բրդէ գործուած անձեռոցիկի վրայ դրուած մի մեծ լամպ, որի վարդագոյն թղթէ լուսամփոփը խանձուել էր մի կողմից։ Շուտով դուրս եկաւ գլխաւոր բանտապետը տանջուած ու տխուր դէմքով։

—Խնդրեմ, նստէք, ինչ կը կամենայիք,—ասաց նա, մայր գցելով իր համազգեստի միջին կոճակը։

—Նոր՝ փոխ նահանագպետի մօտ էի և ստացայ այս թոյլատուութեան թուղթը,—ասաց Նեխլիւդովը տալով նրան թերթը։

—Ես կ'ուզէի տեսնել Մասլովային։

—Մարիօվային,—հարցրեց բանտապետը, լաւ չը լսելով դաշնամուրի աղմուկի չնորհիւ։

—Մասլովային։

—Այո, այո։

Բանտապետը վեր կացաւ ու մօտեցաւ այն դռանը, որի յետևից լսւում էին կլէմէնտիի գեղգեղանքները։

—Մարուսեա, չես կարող դոնէ մի րոպէ սպասել,—ասաց նա այնպիսի ձայնով, որից երևում էր, որ աղջկայ երաժշտութիւնը նրա կեանքի խաչն էր կազմում,—մարդ չի կարողանում ոչինչ լսել։

Դաշնամուրը լռեց, լսուեց զժգոհ ոտնաձայն, և մէկը ներս նայեց դռան արանքով։

Բանտապետը, կարծես թեթևացումն զգալով երաժշտութեան այդ ընդհատումից, կպցրեց թոյլ թուքունից չինած միհատ պապիրոս, մի հատ էլ առաջարկեց Նեխլիւդովին։ Նեխլիւդովը հրաժարուեց։

—Մասլովային...

—Մասլովային այսօր անյարմար է տեսնել,—ասաց բանտապետը։

—Ինչո՞ւ։

—Այնպէս. դուք ինքներդ էք մեղաւոր,—ասաց բանտապետը, փոքր ինչ ժպտալով։—Իշխան, ինչո՞ւ էք նրա ձեռքը փող տալիս։ Եթէ ուզում էք, տուէք ինձ։ Ամբողջապէս իրանը կը լինի։ Թէ չէ երէկ դուք երևի փող էք տուել նրան, նա էլ այդ փողով օղի է ձեռք գցել,—չենք կարողանում այդ անիծած բանը արմատախիլ անել այստեղից,—ու այսօր հարբել է, և սաստիկ թունդ է հարբել, մինչև անգամ գժութիւններ է անում։

—Մի՞թէ։

—Հաստատ բան եմ ասում, նոյն իսկ ստիպուած եղայ խիստ միջոցներ ձեռք առնել. տեղափոխեցի մի ուրիշ սենեակ։ Հանդիսատեսութեան տէր կին է, բայց դուք իրան փող մի տուէք։ Ուրիշ տեսակ մարդիկ են այստեղ։

Նեխլիւդովը վատ կերպով յիշեց երէկուանը և նորից սարսափ զգաց։

—Իսկ քաղաքական յանցաւոր Բօգոդուխովսկայային կարելի է տեսնել,—հարցրեց Նեխլիւդովը մի փոքր լռելուց յետոյ։

—Ինչո՞ւ չէ, այդ կարելի է,—ասաց բանտապետը։—Դո՛ւ ինչ ես անում այստեղ,—դիմեց նա իր հինգ, վեց տարեկան աղջկան, որ մտել էր սենեակը և գալիս էր նրա կողմը, գլուխը այնպէս ծռած, որ աչքը չը հեռացնի Նեխլիւդովից։—Տես, վայր կ'ընկնես,—ասաց նա, ժպտալով այն բանի վրայ, որ երեխան իր առջևը չը նայելով, սայթաքեց, ոտը դէմ առաւ գորգին ու ինքը վազելով մօտեցաւ հօրը։

—Ուրեմն, եթէ կարելի է, ես կ'խրթամ նրան տեսնելու։

—Կարելի լինելը կարելի է,—ասաց բանտապետը, դրկելով երեխային, որ չարունակում էր նայել Նեխլիւդովին։—Գուցէ...

Բանտապետը վեր կացաւ և քնքշաբար հեռացնելով իրանից երեխային, դուրս եկաւ նախասենեակը։

Հէնց որ նա հագաւ կապած աչքով աղախնի տուած վերարկուն ու ոտը դռնիցը դուրս դրեց, ձեռաց էլի սկսուեցին կլէմէնտիի գեղգեղանքները։

—Կօնսէրվատօրիայումն էր սովորում, բայց այնտեղ կարգ կանոն չը կայ։ Մեծ ձիրք ունի սակայն,—ասում էր բանտապետը սանդուխներով իջնելիս։—Ուզում է կօնցէրտներ տալ։

Բանտապետն ու Նեխլիւդովը մօտեցան բանտին։ Դռնակը, բանտապետի մօտենալուն պէս, ձեռաց բացուեց։ Վերակացուները, ձեռները քունքերին դրած, ուղեկցում էին նրան աչքերով։ Նախագաւթում նրանց հանդիպեցին ածիլուած կիսագլուխներով չորս կալանաւորներ, որոնք ինչ-որ հեղուկով լի մի աման էին տանում։ Բանտապետին տեսնելուն պէս՝ նրանք բոլոր էլ կուչ եկան, իսկ մէջներից մէկը առանձնապէս կծկուեց ու մոայլ կերպով կիտեց յօնքերը, որոնց տակից պսպղացին սև աչքերը։

—Ձիրքը, ի հարկէ, պէտք է կատարելագործել. տաղանդը չը պէտք է թաղել. բայց, միւս կողմից, փոքրիկ բնակարանում չատ ծանր է տանել այդ բանը,—չարունակեց բանտապետը իր խօսակցութիւնը, առանց ամենևին ուշք դարձնելու այդ կալանաւորների վրայ, ու Նեխլիւդովի հետ գնաց հաւաքարանը, յոգնած-յոգնած քայլ տալով ոտները։

—Ուր էիք ուզում տեսնել,—հարցրեց բանտապետը։

—Բօգօդուխօվսկայային։

—Այն որ աշտարակումն է։ Պէտք է ուրեմն սպասէք,—ասաց բանտապետը։

—Իսկ չի կարելի մինչ այդ տեսնուել Մենշօվների հետ. մայր ու աղջայ են և կալանաւորուած են հրկիզութեան համար։

—Այն որ 21-րդ սենեակումն է։ Ինչու չէ, կարելի է դուրս կանչել։

—Իսկ չի կարելի Մենշօվին իր սենեակումը տեսնել։

—Ձեզ համար աւելի հանդիստ կը լինի հաւաքարանումը։

—Ձէ, ինձ համար հետաքրքրական կը լինէր սենեակումը տեսնել։

—Այ թէ հետաքրքրական բան էք գտել։

Այդ միջոցին կողքի դռնից դուրս եկաւ մի փրանտ օֆիցէր, որ բանտապետի օդնականն էր։

—Իշխանին տարէք Մենշօվի սենեակը, 21-րդ համարը,—ասաց բանտապետը իր օդնականին,—իսկ յետոյ՝ գրասենեակը։ Իսկ ես այն միւսին դուրս կը կանչեմ։ Ի՞նչպէս է անունը։

—Վերա Բօգօդուխօվսկայա,—ասաց Նեխլիւդովը։

Բանտապետի օդնականը մի չպարած բևեռով չիկահեր ու ջահէլ օֆիցէր էր, որ ծաղկեայ օդըկօլոնի հոտ էր տարածում իր չուրջը։

—Համեցէք,—դիմեց նա Նեխլիւդովին՝ ախորժելի ժպիտով։—Ինչպէս երեում է, հետաքրքրուում էք մեր բանտով։

—Այո, և բացի այդ, հետաքրքրուում եմ նաև այդ կալանաւորով, որ, ինչպէս ինձ ասել են, բոլորովին անմեղ տեղն է ընկել բանտը։

Օդնականը թօթուեց ուսերը։

—Այդ պատահում է երբեմն,—հանդիստ կերպով ասաց նա, քաղաքավարութեամբ թողնելով, որ հիւրը առաջ ընկնի լայն ու գարշահոտ միջանցքը մտնելիս։—Բայց չատ անգամ էլ սուտ են ասում։ Համոզէք։

Սենեակների դռները բաց էին և մի քանի կալանաւորներ միջանցքումն էին։ Հաղիւ նկատելի կերպով ղլուխ տալով վերակացուներին և խեթ-խեթ նայելով կալանաւորներին, որոնք կամ պատերի տակ կուչ գալով անցնում էին դէպի իրանց սենեակները կամ թէ, ձեռները ձիգ կախ գցած ու ղինուորապարի աչքերով ուղեկցելով իշխանաւորին, կանգնում էին դռների մօտ,—օդնականը առաջնորդեց Նեխլիւդովին այդ միջանցքով մինչև մի ուրիշ միջանցք, որ առաջինի ձախ կողմումն էր գըտնուում և կողպուած էր երկաթէ դռնով։

Այդ միջանցքը աւելի նեղ ու մութ էր և աւելի ևս գարշահոտ, քան առաջինը։ Նրա երկու կողմից երևում էին կողպէքով կողպած դռների չարքեր։ Դռները կէս վերչօկանոց տրամագծով ծակեր ունէին, որոնք բանտում աչք են կոչւում։ Միջանցքում ոչ ոք չը կար, բացի տխուր ու խորչոմած դէմքով ծերունի վերակացուից։

—Ո՞ր սենեակումն է Մենշօվը,—հարցրեց օդնականը վերակացուից։

—Ութերորդում ձախ կողմից։

—Իսկ սրանց մէջ բանուածներ կան,—հարցրեց Նեխլիւդովը։

—Բոլորի մէջն էլ կան, բացի մէկից։

L

—Կարելի է ներս նայել,—հարցրեց Նեխլիւդովը։

—Ինչու չէ,—ախորժելի ժպիտով ասաց օդնականը ու ըսկըսեց ինչ որ հարցնել վերակացուից։ Նեխլիւդովը նայեց ծակերից մէկի մէջ. ներսը մի բարձրահասակ ու փոքրիկ սև մի բուքաւոր ջահել մարդ, միմիայն փոխնորդ հագած, յետ ու առաջ էր քայլում. խշխշոց լսելով դռան մօտ, նա յետ նայեց, խոժոռուեց ու չարունակեց քայլել։

Նեխլիւդովը նայեց մի ուրիշ դռան ծակով. նրա աչքը հանդիպեց մի ուրիշ, վախուտրած խոշոր աչքի, որ միւս կողմից նայում էր ծակի միջով. Նեխլիւդովը չտապով հետացաւ։ Նայե-

լով մի երրորդ դռան ծակով, նա տեսաւ մի չատ փոքրահասակ մարդու, որ քնած էր մահճակալի վրայ, ամբողջապէս կուշ եւ կած ու գլուխը խալաթովը ծածկած։ Չորրորդ սենեակում նըստած էր մի լայներես ու գունատ մարդ, գլուխը ցած կախ դցած ու արմունկները ծնկներին յենած։ Ոտնաձայն լսելով, այդ մարդը գլուխը վեր բարձրացրեց ու նայեց։ Ամբողջ դէմքի վրայ, մանաւանդ մեծ-մեծ աչքերում, երեում էր յուսահատ թախիծի արտայայտութիւն։ Նա, անկներևաբար, չէր հետաքրքրւում իմանալ, թէ ով է նայում իր սենեակը։ Ով որ ուզում է նայէր, միևնոյնն է, երեում էր, որ նա ոչ աքից ոչ մի լաւ բան չէր սպասում։ Նեխլիւդովը սարսափ զգաց. նա դադարեց սենեակների մէջ նայելուց ու մօտեցաւ Մենշովի 21-րդ սենեակին։ Վերակացուն բաց արեց կողպած դուռը։ Մի ջահել, երկարավիզ ու մկանոտ մարդ, բարի ու կլոր աչքերով ու փոքրիկ միրուքով, կանգնած էր մահճակալի մօտ ու վախուորած դէմքով նայում էր ներս մտնողներին, չտապ-չտապ հագնելով խալաթը։ Նեխլիւդովի վրայ առանձնապէս սաստիկ տպաւորութիւն գործեցին այդ բարի ու կլոր աչքերը, որոնք հարցական ու ահաբեկուած հայեացքով մէկ նրան էին նայում, մէկ վերակացուին, մէկ էլ օգնականին։

—Այ այս պարոնը ուզում է քեզնից հարցնել քո գործի մասին։

—Շատ չնորհակալ ենք։

—Հա, ինձ պատմել են ձեր գործի մասին,—ասաց Նեխլիւդովը, անցնելով սենեակի խորքը և կանգնելով վանդակապատ ու կեղտոտ պատուհանի մօտ,—այժմ ես կ'ուզէի ձեր բերանից լսել, թէ ինչպէս է եղել այդ։

Մենշովը նոյնպէս մօտեցաւ պատուհանին ու խոկոյն և եթ սկսեց պատմել, սկզբում՝ վախվխելով, չուտ-չուտ նայելով օգնականին, յետոյ՝ հետզհետէ աւելի ու աւելի համարձակ կերպով։ Իսկ երբ օգնականը դուրս եկաւ սենեակից միջանցքը ու սկսեց այնտեղ ինչ որ հրամաններ տալ, նա բոլորովին սիրտ առաւ։ Այդ պատմութիւնը իր ոճով և եղանակով ամենասովրական ու կարգին գիւղացի պատանու պատմութիւն էր, և Նեխլիւդովին սաստիկ տարօրինակ էր թւում, որ ինքը այդ պատմութիւնը լսում էր բանտում և անարգութեան հագուստ հագած կալանաւորի բերանից։ Նեխլիւդովը ականջ էր դնում ու միևնոյն ժամանակ դիտում էր և՛ ցածիկ մահճակալը՝ յարդէ ներքնակով, և՛ պատուհանը՝ երկաթէ հաստ վանդակով, և՛ կեղտոտ, նամակալած ու քամուած պատերը, և՛ բանտային ոտնամանները ու խալաթ հագած այդ խեղճ ու այլակերպուած դիւ-

ղայու ողորմելի դէմքն ու կերպարանքը, ու նրա սիրտը լցւում էր հետզհետէ աւելի ու աւելի տխրութեամբ և նա չէր ուզում հաւատալ, թէ ճիշտ է այդ բարեհոգի մարդու պատմածը,—չէր ուզում հաւատալ, որովհետև սարսափելի էր կարծել, որ մարդիկ կարող են ձերբակալել և, կալանաւորի խալաթ հագցնելով, բանտը նստացնել մի մարդու, որ ոչնչից ոչինչ չի արել և որին դեռ իրանք, այդ մարդիկ ամբիրատութիւն են արել։ Եւ սակայն, աւելի ևս սարսափելի էր կարծել, թէ այդ բարեհոգի դէմքով մարդու պատմութիւնը, որ այնքան անկեղծ էր թւում, սուտ ու հնարած բան էր։ Պատմութիւնը կայանում էր նրանում, որ նրա պատկառելուց չատ չանցած՝ օղեվաճառը գլխահան էր արել կնոջը ու ձեռքիցը խլել։ Խեղճ մարդը արդարութիւն էր փնտռել ամեն տեղ։ Ամեն տեղ էլ օղեվաճառին արդարացրել էին։ Մի անգամ նա բանի կերպով տուն էր վերադարձրել կնոջը, բայց կինը փախել էր միւս օրը։ Այն ժամանակ նա գնացել ու պահանջել էր իր կնոջը։ Օղեվաճառը ասել էր, թէ կինը այնտեղ չի (թէև ինքը տեսել էր նրան ներս մտնելիս), ու հրամայել էր հեռանալ։ Նա չէր հեռացել։ Օղեվաճառն ու իր ծառան նրան այնքան ծեծել էին, որ արիւնլուայ էին արել, իսկ միւս օրը կրակ էր ընկել օղեվաճառի տունը։ Խեղճին ու իր մօրը մեղադրել էին, թէ նրանք են եղել կրակ գցողը, թէև նա ոչնչից տեղեակ չէր և այդ ժամանակ քաւորի մօտ էր եղել։

—Ձիշտ ես ասում, որ դու չես եղել կրակ գցողը։

—Մարդուս անգամ չի անցել, աղա։ Այդ անասունածը ամբողջ տունը կրակ տուած վառել։ Ասում են, ապահովագրած է եղել տունը։ Իսկ յետոյ ինձ ու մօրս վրայ են գցել, ասում են, թէ մենք սպառնացել ենք նրան։ Մեղքս ինչ ծածկեմ, այն անգամ սիրտս չը համբերեց, ուշունչ տուեցի, բայց կրակ գցելուց տեղեկութիւն չունեմ։ Կրակը սկսուած ժամանակը խակի այնտեղ էլ չէի։ Ցետոյ դիատմամբ այնպէս են սարքել, թէ այդ այն օրն է եղել, երբ ես ու մայրս այնտեղ էինք։ Ինքն է այրել, որ ապահովագրութեան փողը ստանայ, ու յետոյ մեր վրայ է գցել։

—Մ՛իթէ։

—Աստուած է վկայ, աղա։ Ոտներդ եմ ընկել,—նա ուզում էր չոքել, բայց Նեխլիւդովը բռնեց ու չը թողեց։—Պրծայրէք այս բանից, անմեղ տեղը կորչում եմ,—չարունակեց նա։—Ու յանկարծ նրա այտերը ջղաձգուեցին, լայն հեռու ու քչտելով խալաթի թեը՝ սկսեց աչքերը սրբել կեղտոտ չապկի թեքով։

—Վերջացրէք,—հարցրեց օգնականը։

—Այո՛, Ուրեմն մի վհատուէք, ինչ որ կարելի է՝ կ՛անեմ,— ասաց Նեխլիւդովը ու դուրս եկաւ։ Մինչդեռ մնացել էր դռան մէջ կանգնած, այնպէս որ, երբ վերակացուն փակեց աւենակը, դուռը կպաւ նրան։ Մինչ վերակացուն դուռը կողպում էր, Մինչդեռ նայում էր դռան ծակովը։

LI

Ցետ դառնալով լայն միջանցքով (ճաշի ժամանակն էր և աւենակները բաց էին), բաց դեղնագոյն խալաթներ, կարճ ու լայն վարտիքներ և բանտային առնամանիներ հագած կալանաւորների միջով, որոնք ագահաբար նայում էին նրան, Նեխլիւդովը զգում էր տարօրինակ զգացմունքներ, և՛ կարեկցութիւն դէպի բանտում նստածները, և՛ չը գիտեմ ինչու, ամօթ, ամօթ, որ ինքը այդպէս հանգիստ կերպով դիտում է նրանց։

Միջանցքներից մէկում մէկը, առնամանները թիթիփայնելով, վազ տուեց, մտաւ մի աւենակ և այնտեղից դուրս եկան մի խումբ մարդիկ ու, գլուխ տալով Նեխլիւդովին, կանգնեցին նրա ճանապարհի վրայ։

—Ձերդ բարեձննդութիւն, չը գիտեմ, ինչպէս ասեմ, հրամայեցէք, որ մեր բանը վճռեն։

—Ես իշխանաւոր չեմ, ես ոչինչ չը գիտեմ։

—Միևնոյնն է, ասացէք իշխանաւորներին կամ ում կ՛ուզէք,—ասաց վրդովուած ձայնը։—Ոչինչ մեղք չունենք ու երկրորդ ամիան է, ինչ դուրս տեղը ասնջւում ենք։

—Ի՞նչպէս։ Ինչո՞ւ,—հարցրեց Նեխլիւդովը։

—Այնպէս, բռնել են ու դցել բանտը։ Երկրորդ ամիան է ինչ նստած ենք, բայց չենք իմանում, թէ մեր մեղքն ինչ է։

—Ճիշտ է, պատահմունք է,—ասաց բանտապետի օգնականը,—անցաթուղթ չունէին, բռնել էինք, որ իրանց նահանգը ուղարկէինք, բայց այնտեղի բանտը այրուել էր և նահանգական վարչութիւնը գրել էր մեզ, որ չուղարկենք։ Մենք էլ այդ պատճառով՝ ուրիշ նահանգներից ով որ կար իրանց տեղերն ուղարկեցինք, իսկ սրանց պահում ենք։

—Ի՞նչպէս, հէնց միայն այդ պատճառով,—հարցրեց Նեխլիւդովը, կանգ առնելով դռան մէջ։

Կալանաւորական խալաթ հագած 40 հոգուց բաղկացած բազմութիւնը չրջապատեց Նեխլիւդովին ու բանտապետի օգնականին։ Միանգամից սկսեցին խօսել մի քանի հոգի։—Օգնականը կանգնեցրեց նրանց։

—Թող մէկը միայն խօսի մէջներիցդ։

Մէջներիցը առաջ եկաւ մի բարձրահասակ ու վայելչատես գիւղացի, որ կը լինէր մօտ յիսուն տարեկան։ Նա բացատրեց Նեխլիւդովին, որ իրանց բոլորին էլ աքսորել են ու բանտը դրել անցաթուղթ չունենալու պատճառով։ Բայց իսկապէս իրանք բոլորն էլ անցաթուղթ ունէին, միայն թէ մօտ երկու չաբաթ ժամանակները անցել էր։ Սմեն տարի այդպէս պատահում էր ու ոչինչ չէին ասում, բայց այս անգամ բռնել են ու երկու ամիս է, ինչ եղեռնագործների պէս պահում են բանտում։

—Մենք բոլորս քարտաչ ենք, արհեստաւորների մի ընկերութիւնից։ Ասում են, մեր նահանգական քաղաքում բանտը այրուել է։ Մենք ինչ մեղաւոր ենք այդ բանում։ Աստուծու անունով աղաչում ենք, խեղճ եկէք մեր վրայ, մի ճար արէք։

Նեխլիւդովը լսում էր և զրեթէ չէր հասկանում այդ վայելչատես ծերունու ասածները, որովհետև նրա ուշադրութիւնը ամբողջապէս գրաւել էր մի մեծ, մուգ-մոխրագոյն ու բազմոտանի ոջիլ, որ սողում էր վայելչատես քարտաչի երեսի մազերի արանքին։

—Ի՞նչպէս։ Մի՞թէ հէնց դրա համար,—ասաց Նեխլիւդովը, դիմելով բանտապետի օգնականին։

—Այո՛, իսկապէս պէտք էր դրանց ուղարկել ու հաստատել իրանց բնակութեան տեղում,—ասաց օգնականը։

Հէնց որ օգնականը վերջացրեց խօսքը, բազմութեան մէջից առաջ եկաւ մի փոքրիկ մարդուկ, նոյնպէս կալանաւորի խալաթ հագած, ու սկսեց, տարօրինակ կերպով ծռմռելով բերանը, խօսել այն բանի մասին, որ իրանց այդտեղ անմեղ տեղը տանջում են։

—Շներից վատթար... սկսեց նա։

—Դէ, դէ, բերանդ չատ մի չաղ տուր, լեզուդ մի քիչ կարճ պահի, թէ չէ գիտես...

—Ի՞նչ պէտք է գիտենամ,—յուսահատ կերպով ասաց փոքրիկ մարդուկը։—Որ և է մեղք կայ մեր վրայ։

—Սուս,—գոռաց իշխանաւորը, և փոքրիկ մարդուկը լռեց։

«Ա՞յս ինչ բաներ են», ասում էր ինքն իրան Նեխլիւդովը, որին ուշադրութեամբ էին դիտում դուրս նայող ու միջանցքում հանդիպող կալանաւորների հարիւրաւոր աչքեր և որ այնպէս էր զգում իրան, կարծես թէ իրը պատժուած՝ անցնում է գինուորների երկու չարքի արանքով և երկու կողմից հարուածներ են իջեցնում գլխին։

—Մի՞թէ, յիրաւի, բանտում պահում են բոլորովին անմեղ մարդկանց,—ասաց Նեխլիւդովը, երբ նա ու բանտապետի օգնականը դուրս եկան միջանցքից։

—Ուրիշ ճար չը կայ։ Աւանը, չատ բան էլ սուտ են ասում։ Իրանց որ լսէք, բոլորն էլ անմեղ են,—ասաց բանտապետի օգնականը։

—Բայց սրանք հօ ոչ մի բանում մեղաւոր չեն։

—Դրանց համար խօսք չունեմ։ Բայց առհասարակ շատ վիշացած մարդիկ են։ Առանց խստութեան անկարելի է։ Այնպիսիները կան մէջները, որ Աստուած վրկի, աղատի։ Այ հէնց երէկ սոխպուած էինք երկուսին պատժել։

—Ի՞նչպէս պատժել,—հարցրեց Նեխլիւդովը։

—Հրամայել էին ճիպոտներով ծեծել...

—Բայց չէ՞ որ մարմնական պատիժները օրէնքով վերացուած են։

—Իրաւունքներից զրկուածների համար վերացուած չեն։ Դրանց կարելի է։

Նեխլիւդովը յիշեց այն բոլորը, ինչ որ տեսել էր երէկ, սրահում ապասելիս, և հասկացաւ, որ պատիժը սեղի էր ունենում հէնց այն ժամանակը, երբ ինքը սպասում էր, ու նրան առանձին սաստկութեամբ պաշարեց այն հետաքրքրութեան, թախիծի, տարակուսանքի և բարոյական, գրեթէ ֆիզիկականի փոխարկուող, զզուանքի խառն զգայմունքը, որ առաջ էլ երբեմն տիրում էր նրան, բայց երբէք այդպէս սաստիկ չէր լինում։

Ականջ չը դնելով բանտապետի օգնականի խօսածին ու չը նայելով իր չուրջը, նա չտապ-չտապ դուրս եկաւ միջանցքից ու դիմաց դէպի գրասենեակը։ Բանտապետը միջանցքումն էր։ Նա, ուրիշ գործով զբաղուելով, մոռացել էր դուրս կանչել Բոգոդուխովսկայային և յիշեց իր խոսքը միայն այն ժամանակ, երբ Նեխլիւդովը մտաւ գրասենեակը։

—Այս րոպէիս կ'ուղարկեմ նրա յետևից։ Մի քիչ նստեցէք այստեղ,—ասաց նա։

LII

Գրասենեակը երկու սենեակից էր բաղկացած։ Առաջին սենեակում, ուր երկու կեղտոտ պատուհաններ կային ու մի մեծ ու դուրս պրծած վառարան, որի ծուխը շատ տեղ պակուել էր, մի անկիւնում դրուած էր մի մեծ չափիչ՝ կալանաւորների հասակը չափելու համար, մի անկիւնում էլ կախուած էր Քրիստոսի մեծ պատկերը։ Այդ առաջին սենեակում կանգնած էին մի քանի վերակացուներ, իսկ միւս սենեակում մօտ քսան հոգի տղամարդիկ ու կանայք, պատերի երկարութեամբ և առանձին

խմբերով կամ զոյգերով նստած, խօսում էին ցած ձայնով։ Պատուհանի մօտ դրուած էր մի գրասեղան։

Բանտապետը նստեց գրասեղանի մօտ և առաջարկեց Նեխլիւդովին՝ կողքին դրուած աթոռը։ Նեխլիւդովը նստեց ու սկսեց դիտել անսեսում գտնուող մարդկանց։

Սմենից առաջ նրա ուշադրութիւնը գրաւեց մի կարճ ժակէտով ու դուրեկան դէմքով երիտասարդ, որ, կանգնած մի անայոն ու արդէն տարիքով կնոջ առաջ, տաք-տաք խօսում էր նրա հետ, ձեռները չարժելով։ Նրանց կողքին նստած էր մի կապոյտ ակնոցաւոր ծերունի, որ բռնած մի կալանաւորական խալաթի հագած չահել կնոջ ձեռքից, անչարժ լսում էր նրա պատմածը։ Մի բեալիստ փոքրիկ աղայ դէմքի սառած ու վախուռած արտայայտութեամբ նայում էր ծերունուն, առանց աչքը նրանից հեռացնելու։ Նրանից ոչ հեռու, անկիւնում, նստած էր սիրահարուածների մի զոյգ,—մի կարճ մազերով ու եռանդոտ դէմքով չիկահեր, սիրուհատես ու բոլորովին չահել աղջիկ, մօտային հագուստով, և մի նուրբ դիմագծերով ու գանգուր մազերով վեղեցիկ պատանի, զուտասազերչէ բաճկոնով։ Նրանք, անկիւնում նստած, քչփչում էին իրար հետ, անշուշտ, հալուելով սէրից։ Իսկ սեղանին ամենից մօտիկ նստած էր մի ալեզարդ ու անազդեցիկ կին, անշուշտ մի մայր։ Նա աչքերը սրած նայում էր մի նոմպլիսի բաճկոն հագած թոքախտաւոր երիտասարդի վրայ և ուզում էր ինչ-որ մի բան ասել, բայց արտասուքը չէր թողնում, որ խօսի,—սկսում էր ասել ու խզոյն կանգ էր առնում։ Երիտասարդի ձեռքին մի թուղթ կար, որ նա ծալծլում ու ճմրաւում էր բարկացած դէմքով, անշուշտ այն պատճառով, որ չը գիտէր ինչ անել։ Նրանց կողքին նստած էր մի լիքը-լիքը ու կարմրերես սիրուն աղջիկ, չատ դուրս ընկած կոկոն աչքերով և մախրագոյն հագուստով և ուռնոցով։ Նա նստած էր արտասուող մօր կողքին և քնքշաբար չոյում էր նրա ուսը։ Ամեն ինչ գեղեցիկ էր այդ աղջկայ մէջ, և՛ մեծ ու ապիտակ ձեռները, և՛ խուզած գանգուր մազերը, և պինդ քիմն ու չբթունքները. բայց նրա դէմքի գլխաւոր հրապոյրը կազմում էին չագանակագոյն, գառնային, բարի ու չիտակ աչքերը։ Նրա սիրուն աչքերը կարուեցին մօր դէմքից այն րոպէին, երբ ներս մտաւ Նեխլիւդովը, և նրանց հայեացքները հանդիպեցին իրար։ Բայց իսկոյն և եթ նա երեսը չուռ տուեց ու սկսեց ինչ-որ ասել իր մօրը։ Սիրահարուած զոյգից ոչ հեռու նստած էր մի մռայլադէմ սև ու փրչոտ մարդ, որ բարկացած խօսում էր մի նևրքինհիմանան անմիրուք այցելուի հետ։ Նեխլիւդովը, բանտապետի կողքին նստած, սաստիկ հետաքրքրութեամբ նայում էր իր չուրջը։ Այդ լարուած դրու-

թիւնից նրան հանից մի կարճ խուզուած փոքրիկ տղայ, որ մօտեցաւ նրան ու բարակ ձայնով հարցրեց.

—Դուք ում էք սպասում։

Նեխլիւդովին զարմացրեց այդ հարցը, բայց նայելով երեխային ու տեսնելով նրա ուշադիր ու կայտառ աչքերով լուրջ ու խելացի դէմքը, նա լուրջ կերպով պատասխանեց նրան, որ սպասում է մի ծանօթ կնոջ։

—Ձեր քոյրն է նա,—հարցրեց տղան։

—Չէ, քոյրս չի,—զարմանալով պատասխանեց Նեխլիւդովը։—Իսկ դուռ ո՞ւմ հետ ես այստեղ,—հարցրեց նա տղային։

—Ես մայրիկի հետ եմ։ Նա քաղաքական է,—ասաց տղան։

—Մարիա Պաւլօվնա, վերցրէք կօլեային,—ասաց բանտապետը, որ երևի ապօրինի բան էր համարում Նեխլիւդովի խօսակցութիւնը այդ երեխայի հետ։

Մարիա Պավլօվնան, այն գառնաչքանի սիրուն աղջիկը, որ գրաւել էր Նեխլիւդովի ուշադրութիւնը, վեր կացաւ իր ամբողջ բարձր հասակով և ուժեղ ու լայն-լայն, գրեթէ առնական քայլերով մօտեցաւ Նեխլիւդովին ու երեխային։

—Ի՞նչ է, հարցնում է, թէ ով էք,—հարցրեց օրիորդը Նեխլիւդովից, կիսաժպտալով և դիւրահաւատութեամբ ու այնպէս պարզ կերպով նայելով նրա աչքերի մէջ, կարծես թէ կասկած անգամ չէր կարող լինել, որ ինքը ամենքի հետ ունեցել է, ունի և պէտք է ունենայ միմիայն պարզ, փաղաքշական ու եղբայրական յարաբերութիւններ։

—Շատ հետաքրքիրն է, ուզում է ամեն բան իմանալ,—ասաց նա և բոլորովին ժպտաց երեխայի երեսին այնպիսի բարի ու քաղցր ժպիտով, որ Նեխլիւդովն ու երեխան՝ երկուսով էլ նոյնպէս ժպտացին ակամայ։

—Այո, հարցնում էր, թէ ում եմ եկել տեսնելու։

—Մարիա Պաւլօվնա, հո գիտէք, որ չի կարելի խօսել կողմնակի մարդկանց հետ,—ասաց բանտապետը։

—Լաւ, լաւ,—ասաց աղջիկը և, իր մեծ ու սպիտակ ձեռքով բռնելով կօլեայի ձեռքից, որ աչքը չէր հեռացնում նրանից, վերադարձաւ թաքախտաւորի մօր մօտ։

—Ո՞ւմ երեխան է,—հարցրեց Նեխլիւդովը բանտապետից։

—Մի քաղաքական յանցաւոր կնոջ։ Դա հէնց բանտում է ծնուել։

—Մի՞թէ։

—Այո, իսկ այժմ մօր հետ գնալու է Սիբիր։

—Իսկ այն աղջիկը։

—Չեմ կարող պատասխանել ձեր հարցին,—ասաց բանտապետը, ուսերը թօթուելով։—Ահա և Բօգոդուխօվսկայան։

LIII

Ցեսաի դռնից թռչկոտան քայլուածքով դուրս եկաւ փոքրիկ, նիհար ու դեղին վերա Եֆրեմօվնան ոտաքին ու բարի աչքերով և խուզած մազերով։

—Շատ չնորհակալ եմ, որ եկաք,—ասաց նա, սրմռելով Նեխլիւդովի ձեռքը։—Ցիշեցէք ինձ։ Նատեկաք։

—Երբէք չէի մտածում, թէ ձեզ այսպէս կը տեսնեմ։

—Օ՜, ոչինչ, ես շատ լաւ եմ զգում ինձ. այնքան լաւ, այնքան լաւ, որ սրանից լաւ չեմ էլ ուզում,—ասում էր Վերա Եֆրեմօվնան, ինչպէս միշտ՝ իր ոտաքին, բարի ու կլոր աչքերով երկիւղով նայելով Նեխլիւդովի վրայ և պատյա-պատյա տալով իր չլուտ, դեղին ու սարսափելի բարակ վիզը, որ ելևէջում էր սպիտակ բաճկոնի գծուծ, ճմռուտած ու կեղտոտ օձիքի մէջից։

Նեխլիւդովը սկսեց հարց ու փորձ անել, թէ ինչպէ՞ս էր նա բանտ ընկել։ Պատասխանելով նրան, Վերա Եֆրեմօվնան սկսեց մեծ ոգևորութեամբ պատմել իր գործը։ Նրա խօսքերի մէջ ամեն բոպէ պատահում էին օտարազգի դիտնական բառեր պրօպագանդայի, դեզօրգանիզացիայի, դրուպպաների, սէկցիաների և ենթասէկցիաների մասին, որոնց ինչ լինելը, ինչպէս նա ակնհայտօրէն լիովին հաւատացած էր, յայտնի էր ամենքին, բայց որոնց մասին Նեխլիւդովը ոչինչ չէր լսել երբէք։

Նա պատմում էր Նեխլիւդովին, ակնհայտօրէն լիովին հաւատացած լինելով, որ նրա համար չատ հետաքրքրական և յանկալի է իմանալ այդ բոլորը։ Իսկ Նեխլիւդովը նայում էր նրա ոզորմելի վզին և ցանցառ ու խճճուած մազերին ու զարմանում, թէ ինչու էր նա այդ բոլորը անում և այժմ պատմում իրան։ Նա խղճալի էր թուում Նեխլիւդովին, բայց ոչ ամենևին այնպէս, ինչպէս խղճալի էր գեռնահինձորի ծիլերի նման սպիտակած ձեռներով ու դէմքով Մենշով գիւղապին, որ առանց որևէ մեղքի նստած էր գարշահոտ բանտում։ Վերա Եֆրեմօվնան ամենից աւելի խղճալի էր այն ակնյայտնի խաւնաչիտութեամբ, որ տիրում էր նրա գլխում։ Նա, ակնհայտօրէն, հերոսուհի էր համարում ինքն իրան ու պարծենում էր Նեխլիւդովի առաջ, և հէնց այդ ցուցամոլութեան պատճառով էլ առանձնապէս խղճալի էր թուում նրան։ Այդ ցուցամոլական յատկութիւնը Նեխլիւդովը նկատում էր ոչ միայն նրա մէջ, այլ և այդ սեռակում

գանուող մի քանի ուրիշ անձանց մէջ։ Իր գալը դրաւեց այդ անձանց ուշադրութիւնը և նա զգում էր, որ նրանք այն, ինչ որ անում էին, մի քիչ ուրիշ կերպ էին անում, որովհետև ինքը այնտեղ էր։ Այդ յատկութիւնը երևում էր և դուստապէրչէ բաճկոնաւոր երիտասարդի մէջ, և կալանաւորական խալաթ հագած կինոջ մէջ, և նոյն իսկ սիրահարների զոյգի մէջ։ Այդ յատկութիւնը չը կար միայն թոքախտաւոր երիտասարդի, գառնաչքանի զեղեցկուհու և այն փոսաչքանի աև ու փրչոտ մարդու մէջ, որ խօսում էր ներքինիանման անմիրուք ու նիհար մարդու հետ։

Այն գործը, որի մասին Վերա Եֆրեմօվան ուզում էր խօսել Նեխլիւդօվի հետ, կայանում էր նրանում, որ նրա ընկերուհիներից մէկին, Շուստօվային, որ նոյն իսկ չէր պատկանում նրանց հնթամանախմբին, ձերբակալել էին, որովհետև մօտը գտել էին որոշ գրքեր ու թղթեր, որոնք պահ էին տրուած հղել նրան։ Վերա Եֆրեմօվնան իրան մասամբ մեղաւոր էր համարում Շուստօվայի կալանաւորութեան մէջ և աղաչում էր Նեխլիւդօվին, իբրև կապեր ունեցող մարդու, որ ամէն հնարաւոր միջոց գործ դնի այդ օրիորդին բանտից ազատելու համար։

Նեխլիւդօվը ասաց, որ դժուար թէ ինքը կարողանայ որևէ բան անել, բայց խոստացաւ, որ Պետերբուրգ գնացած ժամանակը կը փորձի անել ամէն բան, ինչ հնարաւոր կը լինի։

Իր մասին այսպէս պատմեց Վերա Եֆրեմօվնան։ Մանկաբարձական կուրսերը աւարտելուց յետոյ նա յարել էր մի որոշ կուսակցութեան։ Սկզբում բանը լաւ էր գնում, բայց յետոյ մէկին բռնեցին, թղթեր գտան մօտը ու սկսեցին ամենքին ձերբակալել։

—Ինձ էլ ձերբակալեցին և ահա այժմ աքսոր են ուղարկում... վերջացրեց նա իր պատմութիւնը։—Բայց այդ ոչինչ։ Ես հիանալի եմ զգում ինձ, իմ ինքնագգացութիւնը օլիմպիական է,—ասաց նա ու ժպտաց ողորմելի ժպիտով։

Նեխլիւդօվը հարցրեց գառնաչքանի օրօրոցի մասին։ Վերա Եֆրեմօվնան պատմեց, որ նա մի գեներալի աղջիկ է և ձերբակալուել է այն պատճառով, որ իր վրայ է վերցրել ուրիշի մեղքը, որի համար և այժմ գնում է Սիբիր տաժանակիր աշխատանքների։

—Լաւ անհատ է, ալտրուիստ է... զովելով ասաց Վերա Եֆրեմօվնան։

Միւս գործը, որի մասին Վերա Եֆրեմօվնան ուզում էր խօսել Նեխլիւդօվի հետ, վերաբերում էր Մասլովային։ Բան-

տում ամէն ինչ իսկոյն յայտնի էր դառնում բոլորին և նա գիտէր արդէն Մասլովայի պատմութիւնը ու Նեխլիւդօվի յարաբերութիւնը նրա հետ, ուստի և խորհուրդ էր տալիս աշխատել, որ Մասլովային փոխադրեն քաղաքական յանցաւորների բաժանմունքը կամ գոնէ հիւանդասէր նշանակեն հիւանդանոցում, ուր այժմ չատ չատ հիւանդներ կան և աւելորդ հիւանդապահներ են հարկաւոր։ Նեխլիւդօվը չնորհակալութիւն յայտնեց նրան և ասաց, որ կ'աշխատի օգուտ քաղել նրա տուած խորհուրդից։

LIV

Նրանց խօսակցութեանը վերջ տուեց բանտապետը, որ, տեղիցը վեր կենալով, ասաց, որ տեսակցութեան ժամանակը լրացել է և պէտք է հեռանալ։ Նեխլիւդօվը վեր կացաւ, մնաս բարև արեց Վերա Եֆրեմօվնայի հետ ու գնաց դէպի դուռը, որի մօտ կանգ առաւ, դիտելով, թէ ինչ էր կատարուում իր առջև։

—Պարոններ, ժամանակն է,—կրկնում էր բանտապետը, վեր կենալով տեղից ու նորից նստելով։

Բանտապետի պահանջը սենեակում եղող թէ բանտարկեալներին և թէ այցելուներին առանձին կենդանութիւն տուեց, բայց ոչ ոք չը հեռացաւ։ Ամենք վեր կացան ու չարունակում էին կանգնած խօսել։ Ամենք մնացել էին նստած ու այդպէս չարունակում էին իրանց խօսակցութիւնը։ Ամենք սկսեցին մնաս բարև անել ու լալ։ Սրտաչարժ էր մանաւանդ թոքախտաւոր երիտասարդի ու մօր հրաժեշտը։ Երիտասարդը չարունակ ոլորում էր ձեռքում թուղթը և դէմքը հետզհետէ աւելի ու աւելի չար կերպարանք էր առնում, չնորհիւ այն սաստիկ ձիգերի, որ նա գործ էր դրում, որպէս զի չը վարակուէր մօր լացից։ Իսկ մայրը, լսելով, որ մնաս բարևի ժամանակն է, ընկաւ նրա ուսերն ու սկսեց հեկեկալ, ֆստայնելով քիթը։ Գառնաչքանի աղջիկը, որին ակամայ դիտում էր Նեխլիւդօվը, հեկեկացող մօր առաջ կանգնած, ինչ որ բան էր ասում նրան հանդստացնելու համար։ Կապոյտ աչնոցաւոր ծերուհին՝ կանգնած բռնել էր իր աղջկայ ձեռքից ու գլխով էր անում նրա ասածներին։ Երիտասարդ սիբրահարները վեր էին կացել ու, միմիանց ձեռքերից բռնած, լուռ նայում էին իրար աչքերի։

—Այ միայն դրանք են ուրախ,—ցոյց տալով սիբրահարների զոյգի վրայ, ասաց կարճ ժակէտաւոր երիտասարդը, որ, Նեխլիւդօվի կողքին կանգնած, նոյնպէս դիտում էր մնաս բարև անողներին։

Նեխլիւդօվի և այդ երիտասարդի հայհոյքները իրանց վրայ զգալով, սիրահարները—գուտտապէրչէ բաճկոնաւոր երիտասարդը և չիկահեր սիրուն օրիորդը—մեկնեցին իրար բռնած ձեռքերը, դէպի յետ ձգուեցին ու սկսեցին, ծիծաղելով, պտոյտ պտոյտ գալ։

—Այս երեկոյ պակուելու են այստեղ, բանտում, և նորահարսը մարդու հետ գնալու է Սիբիր, —ասաց երիտասարդը։

—Ո՞վ է այդ պարոնը։

—Տաժանակիր աշխատանքների է դատապարտուած, թէև դրանք ուրախանում են, բայց մարդու սիրտ մղկտում է լսելիս, —աւելացրեց ժակէտաւոր երիտասարդը, ականջ դնելով թաքախտաւորի մօր հեկեկանքներին։

—Պարոններ, խնդրում եմ, մի ատիպէք լինձ խիստ միջոցների դիմել,—ասում էր բանտապետը մի քանի անգամ կրկնելով միևնոյն բանը։—Խնդրում եմ, խնդրում,—ասում էր նա թոյլ ու անվճռական կերպով։—Այսպէս բան կը լինի։ Վաղուց արդէն ժամանակն անցել է։ Չէ, անկարելի է այսպէս։ Վերջին անգամն եմ ասում,—կրկնում էր նա թոյլ-թոյլ, մէկ կպչնելով, մէկ էլ հանդչնելով իր պապիրոսը։

Վերջապէս բանտարկեալներն ու այցելուները սկսեցին հեռանալ, նրանք՝ նեղքին, սրանք՝ արտաքին դռնով։ Անցաւ կալանաւոր տղամարդիկը, գուտտապէրչէ բաճկոնովը, թոքախտաւորը և սև ու փրչոտը. հեռացաւ նաև Մարիա Պաւլօվնան՝ բանտումը ծնուած փոքրիկ տղայի հետ։

Այցելուներն էլ սկսեցին դուրս գալ։ Դուրս գնաց կապոյտ ակնոցաւոր ծերունին իր ծանր քայլուածքով. նրա յետևից դուրս գնաց և Նեխլիւդօվը։

—Այո, զարմանալի հարցեր են,—ասաց խօսել սիրող երիտասարդ պարոնը Նեխլիւդօվի հետ սանդուխներով իջնելիս, կարծես չարունակելով ընդհատուած խօսակցութիւնը։—Դեռ չաւ է, որ կապիտանը բարի մարդ է ու կանոններին խիստ չի հետևում։ Գոնէ խօսում են իրար հետ ու միխիթարուում։

Երբ Նեխլիւդօվը, խօսելով Մագինոյվի հետ,—այդպէս ասաց իր ազգանունը խօսել սիրող երիտասարդը,—իջաւ սրահը, նրանց մօտեցաւ բանտապետը յոգնած կերպարանքով։

—Ուրեմն եթէ ուզում էք տեսնուել Մասլօվայի հետ, վաղը համեցէք,—ասաց նա, ակնհայտօրէն ցանկանալով սիրաւիր լինել Նեխլիւդօվի վերաբերմամբ։

—Շատ լաւ,—ասաց Նեխլիւդօվը ու չտապեց դուրս գալ։

«Ինչո՞ւ է այսպէս», հարցնում էր ինքն իրան Նեխլիւդօվը, որ այժմ աստիճ այժով զգում էր այն բարոյական, գրեթէ ֆիզիկական փոխուող, զզուանքը, որ նա միշտ զգում էր բանտում,—հարցնում էր և պատասխան չէր գտնում։

LV

Միւս օրը Նեխլիւդօվը գնաց փաստաբանի մօտ ու, յայտնելով նրան Մինչօվների գործի էութիւնը, խնդրեց պաշտպանել նրանց դատը։ Փաստաբանը լսեց և ասաց, որ այդ կ'անցնի գործը և, եթէ ամէն ինչ այնպէս է, ինչպէս պատմեց Նեխլիւդօվը, առանց որ և է վարձատրութեան յանձն կ'առնի պաշտպանել նրանց։ Նեխլիւդօվը, ի միջի այլոց, պատմեց փաստաբանին այն, որ 130 հոգի թիւրիմացութեամբ պահում են բանտում, ու հարցրեց՝ ումնից է կախուած այդ, ո՛վ է մեղաւորը։ Փաստաբանը լուռ մնաց մի քիչ ժամանակ, ակնհայտօրէն ցանկանալով ճշտութեամբ պատասխանել։

—Ո՞վ է մեղաւորը։ Ոչ ոք,—ասաց նա վճռական կերպով։—Դատախազին ասէք—նա կ'ասի, որ նահանգապետն է մեղաւոր, նահանգապետին էլ որ ասէք, կ'ասի, թէ դատախազն է մեղաւոր։ Ոչ ոք մեղաւոր չէ։

—Ես իսկոյն գնալու եմ Մասլեննիկովի մօտ. կ'ասեմ նրան։

—Ձեր աշխատանք,—ժպտալով առարկեց փաստաբանը։—Նա այնպիսի, —հօ ազդական կամ բարեկամ չէ ձեզ,—այնպիսի, ներեցէք ասել, հաստագլուխ մարդ է և միևնոյն ժամանակ խորամանկ ազուէս, որ հաւը չէք գտնի։

Նեխլիւդօվը, մտաբերելով, թէ ինչ էր ասում Մասլեննիկովը այդ փաստաբանի մասին, ոչինչ չը պատասխանեց ու, միայն բարև տալով, գնաց Մասլեննիկովի մօտ։

Մասլեննիկովից նա երկու բան ուներ խնդրելու,—մէկ, որ Մասլօվային փոխադրել տար հիւանդանոցը, մէկ էլ, որ, եթէ կարելի էր, օգնէր 130 անանցաթուղթ թշուառներին։ Թէպէտև սաստիկ ծանր էր նրա համար խնդիրքով դիմել մի մարդու, որին ինքը չէր յարգում, սակայն դա միակ միջոցն էր այդ նպատակին հասնելու համար և նա ստիպուած էր դիմել այդ միջոցին։

Կառքով մօտենալով Մասլեննիկովի տանը, Նեխլիւդօվը տեսաւ, որ մուտքի առաջ կանգնած են մի քանի զանազանատեսակ կառքեր, ու յիշեց, որ, ինչպէս վերջին անգամ իրան ասաց Մասլեննիկովը, այդ օրը նրա հնոջ ընդունելութեան օրն էր։ Այն ժամանակ, երբ Նեխլիւդօվի կառքը մօտենում էր մուտքին, այնտեղ կանգնած էր մի փակ կառք և կօկարդատար գլխարկով ու ուսնոցով մի լաքէյ դռան չէմքիրը նստացնում էր կառ-

քի մէջ մի տիկնոջ, որ, հադուստի տուտը բարձրացնելով, բաց էր արել հողաթափները և սնապատ ու բարակ սճեղները։ Կանգնած կառքերի մէջ Նեխլիւդովը ճանաչեց կօրչագինների փակ լանդօն։ Նրանց սպիտակահեր ու կարմրերես կառապանը յարգալից և քաղցր արտայայտութեամբ հանեց գլխարկը նրա առաջ, իբր առանձնապէս ծանօթ աղայի առաջ։ Նեխլիւդովը ուզում էր արդէն հարցնել դռնապանից, թէ որտեղ է Միխայիլ Իվանովիչը (Մասլեննիկովը), երբ նա ինքը երևաց գորգապատ սանդուխի վրայ, ճանապարհ դնելով մի չատ կարևոր հիւրի, այնպիսի հիւրերից մէկին, որոնց նա ճանապարհ էր դնում ոչ միայն մինչև վերնագաւիթը, այլ և մինչև ներքև։ Այդ չատ կարևոր պինուորական հիւրը, ներքև իջնելիս, փրանսերէն լեզուով խօսում էր քաղաքումը հիմնուող ապաստարանների օգտին կայանալիք վիճակախաղի մասին, այն կարծիքը յայտնելով, որ այդ չատ լաւ զբաղմունք է տիկինների համար, «հաւ իրանք են ուրախանում, համ էլ փող են հաւաքում»։

—Qu'elles s'amusent et que le bon Dieu les bénisse (*Թող զուարճանան և Թող բարի Աստուծու օրհնութիւնը լինի նրանց վրայ*)։—Ա՛, բարև, Նեխլիւդով։ Ինչո՞ւ վազուց է չէք երևում,—ողջունեց նա Նեխլիւդովին։—Allez présenter vos devoirs à madame (*գնացէք ձեր յարգանքները մատուցանելու տիկնոջը*)։ Կօրչագիններն էլ այստեղ են։ Et Nadine Bukshevden. Toutes les jolies femmes de la ville (*նաև Նադին Բուկսհէվդէնը և առհասարակ մեր քաղաքի բոլոր սիրուն կանայք*),—ասաց նա, մի քիչ բարձրացնելով իր պինուորական ուսերը ու մօտեցնելով նրանց իր ոսկեբիզատար հոյակապ լաքէյին, որ պատրաստ բռնել էր նրա վերարկուն՝ վրան գցելու համար։—A revoir, mon cher (*տեսութիւն, սիրելիս*)։ Նա մէկ էլ ողջոյց Մասլեննիկովի ձեռքը։

—Դէ գնանք վերև, արդեն ուրախ եմ,—յուզուած ասաց Մասլեննիկովը, թևը գցելով Նեխլիւդովի թևին և, չը նայելով իր ահագին կազմուածքին, արագ-արագ քայ տալով նրան դէպի վեր։ Մասլեննիկովը մի առանձին ուրախ յուզմունքի մէջ էր, որի պատճառը այն ուշադրութիւնն էր, որ ցոյց էր տուել նրա վերաբերմամբ այն կարևոր անձը։ Ամեն մի այդպիսի ուշադրութիւն այնպիսի հրճուանք էր պատճառում Մասլեննիկովին, ինչպիսի հրճուանք զգում է մի չողոքոր շնիկ, երբ տէրը չոյում է նրան, գգւում է ու քորում է ականջատակները։ Շնիկը հրճուանքից պոչն է ածում պչը, կուչ է գալիս, քծնում է, ականջները հուպ է տալիս ու խելառի պէս պոչ-պոչ է գալիս։ Մասլեննիկովը պատրաստ էր նոյնն անել։ Նա չէր նկատում Նեխլիւդովի դէմքի լուրջ արտայայտութիւնը, չէր լսում նրա ասածը և անդիմադրելի կերպով քայ էր տալիս նրան դէպի հիւրասենեակը։ Անկարելի էր հրաժարուել, և Նեխլիւդովը, ճարը կտրած, գնում էր նրա հետ։

—Գործը Թող յետոյ, ինչ որ հրամայես՝ աչքիս վրայ, կ'անեմ,—ասում էր Մասլեննիկովը, անցնելով Նեխլիւդովի հետ դահլիճով։—Զեկուցէք գեներալուհուն, որ իշխան Նեխլիւդովը գալիս է,—անցնելիս ասաց նա լաքէյին. լաքէյը նրանցից առաջ ընկաւ ու վազեվազ գնաց առաջ։—Vous n'avez qu'à ordonner (*հրամայեցէք միայն*)։ Բայց պէտք է անպատճառ կնոջս տեսնես։ Առանց այն էլ անցեալ անգամ ինձ չպատուց նրա համար, որ քեզ չը տարայ մօտը։

Լաքէյը արդէն զեկուցել էր, երբ նրանք ներս մտան և բազմոցի վրայ նստած Աննա Իգնատիեվնան, փոխանհանգապետուհին, կամ, ինչպէս նա ինքն իրան անուանում էր, գեներալուհին, իսկոյն և նէթ փայլուն ժպիտով գլուխ տուեց Նեխլիւդովին՝ իրան չրջապատող կանացի գլխարկների ու գլուխների մէջից։ Հիւրասենեակի միւս ծայրից, Թէյի սեղանի մօտից, ուր նստած էին տիկիններ և կանգնած՝ պինուորական ու ոչ պինուորական պարոններ, լսւում էր առնական և կանացի ձայների անլուռ աղմուկ։

—Enfin (*վերջապէս*)! Ինչ է պատահել, որ փախչում էք մեր ծանօթութիւնից։ Ինչից էք նեղացել։

Աննա Իգնատիեվնան Նեխլիւդովին հանդիպեց այդ տեսակ խօսքերով, որոնք մտերմութիւն էին ենթադրել տալիս նրա և Նեխլիւդովի մէջ, մինչդեռ երբէք նրանց մէջ չէր եղել որ և է մտերմութիւն։

—Դուք ծանօթ էք։ Ծանօթ ենք։—Տիկին Բելեավսկայա, Միխայիլ Իվանովիչ Զերնով։—Աւելի մօտիկ նստէք։

—Միասի, venez donc à notre table. On vous apportera votre thé (*մօտեցէք մեր սեղանին։ Ձեր Թէյը կը բերեն այստեղ*)... Դուք էլ... դիմեց նա Միասիի հետ խօսող օֆիցէրին, որի անունը, ակնհայտաբար, մոռացել էր,—համեցէք այստեղ։ Թէյ կը հրամայէք, իշխան։

—Ինչ ուզում էք ասացէք, չեմ կարող համաձայնել, այդ կինը անկասկած նրան չէր սիրում,—ասում էր մի կանացի ձայն։

—Այլ սիրում էր կարկանդակ։

—Իսկ դուք միշտ սիրում էք յիմար կատակներ անել,—ծիծաղելով վրայ բերեց մի բարձր գլխարկաւոր տիկին, որ փողփողում էր մետաքսի, ոսկու ու ակուռքների մէջ։

—C'est excellent (հիանալի է)—այս խմորեղենը, և շատ թեթև է։ Մի քիչ էլ տուէք այստեղ։

—Ի՞նչպէս էք վճռել, չուտով էք գնալու։

—Այո, այսօր արդէն վերջին օրն է։ Հէնց դրա համար էլ եկանք այստեղ։

Հրաշալի գարուն է. հիանալի է այժմ գիւղում։

Միսսին շատ սիրուն էր այդ օրը իր գլխարկով և ինչ որ մուգ վերտաւոր հագուստով, որ առանց որ և է ծալքի այնպէս էր քիւի պատել նրա բարակ մէջքը, կարծես թէ նա հէնց այդ հագուստովն էր ծնուել։ Նա կարմրեց, Նեխլիւդովին տեսնելով։

—Իսկ ես կարծում էի, թէ դուք գնացել էք արդէն,—ասաց նա Նեխլիւդովին։

—Գնացածի հաշուի եմ,—ասաց Նեխլիւդովը։—Գործերի պատճառով չեմ ընկայ։ Այստեղ էլ գործով եմ եկել։

—Մտէք մայրիկին տեսնելու, նա շատ է հարցնում ձեզ,—ասաց Միսսին և աւելի ևս կարմրեց, զգալով, որ սուտ է ասում և որ Նեխլիւդովը հասկանում է այդ։

—Դժուար թէ ժամանակ գտնեմ,—մռայլ կերպով պատասխանեց Նեխլիւդովը, աշխատելով այնպէս ձևացնել, թէ ինքը չը նկատեց նրա կարմրելը։

Միսսին բարկացած կնճռեց յօնքերը, ուսերը թօթուեց ու դիմեց կողքի չնորհալի օֆիցէրին, որ իսկոյն և եթ վերցրեց նրա ձեռքից թէյի դատարկ գաւաթը ու արիւաբար տարաւ դրեց միւս սեղանի վրայ, որովը դեմ առնելով բաղկաթոռներին։

—Դուք էլ պէտք է նուէր տաք ապաստարանի համար։

—Ես հօ չեմ հրաժարուում, բայց ուզում եմ սպասել և ամբողջ առաւտաձեռնուրիւնս ցոյց տալ վիճակախաղի օրը։ Այն ժամանակ կը տեսնէք իմ չնորհքը։

—Շատ լաւ, բայց տեսէք,—և լուռեց ակնյայտնի կեղծ ծիծաղ։

Ընդունելութեան օրը փայլուն կերպով աչքի էր ընկնում այս անգամ և Աննա Իգնատիեվնան ցնծում էր։

—Ինձ Միկան ասում էր, որ դուք այժմ զբաղուում էք բանաերով։ Ինձ համար այդ բոլորովին հասկանալի է,—ասում էր նա Նեխլիւդովին—Միկան (իր հաստլիկ մարդուն, Մասլենիկովին էր նա այդպէս անուանում) կարող է չատ ուրիշ պակասութիւններ ունենալ, բայց դուք հօ գիտէք, թէ որքան բարի է նա։ Այդ բոլոր թշուառ կալանաւորները նրա զաւակներն են։ Նա չի կարողանում ուրիշ կերպ նայել նրանց վրայ։ Il est d'une bonté... (Նրա բարութիւնը այն աստիճան է, որ)...

Նա կանգ առաւ, խօսք չը գտնելով իր ամուսնու bonté-ն

(բարութիւնը) արտայայտելու համար ու իսկոյն և եթ ժպտալով դիմեց մի կարմրակապոյտ ժապաւէններով զարդարուած ու խորշոմած պառաւ կնոջ, որ ներս մտաւ այդ րոպէին։

Խօսելով այնքան, որքան պէտք էր, և այն աստիճան անբովանդակ, որ աստիճան նոյնպէս պէտք էր՝ վայելչութիւնը խանգարած չը լինելու համար, Նեխլիւդովը վեր կացաւ ու մօտեցաւ Մասլենիկովին։

—Ասա, խնդրեմ, կարող ես այժմ լսել եմ ասելիքը։

—Ա՛խ, հա՛։ Ասա՝ տեսնենք, ինչ կայ։

—Գնանք այստեղ։

Նրանք մտան փոքրիկ եապօնական առանձնասենեակը ու նստեցին պատուհանի մօտ։

LVI

—Դէ այժմ je suis à vous (ես ձեր տրամադրութեան տակ եմ)։ Ծխել կ'ուզես։ Բայց կաց, յանկարծ չ'աղտոտացնենք այստեղ,—ասաց նա ու գնաց մոխրաման բերեց։—Դէ ասա՝ տեսնենք։

—Ես երկու գործ ունեմ քեզ մօտ։

—Օհո։

Մասլենիկովի դէմքը մռայլ ու վհատ արտայայտութիւն ստացաւ։ Բոլորովին անյայտացան ամենաչնչին հետքերն անդամ այն տրամադրութեան, որ յիշեցնում էր տիրոջ ձեռով առկանջատակերը քորուելու արժանացած շնիկի հրճուանքը։ Հիւրասենեակից ձայներ էին լսւում։ Մի կանացի ձայն ասում էր —jamais, jamais je ne croirais (երբէք, երբէք չեմ հաւատալ), իսկ միւս ծայրից մի առնական ձայն ինչ որ բան էր պատմում անդադար կրկնելով՝ la comtesse Voronzoff և Victor Apraksine (կոմսուհի Վօրօնցօվան և Վիկտոր Ապրակսինը)։ Երրորդ կողմից լսւում էր միմիայն ձայների աղմուկ ու ծիծաղ։ Մասլենիկովը ակնոջ էր դնում հիւրասենեակից եկող ձայներին. ականջ էր դնում և Նեխլիւդովը։

—Էլի նոյն կնոջ գործովն եմ եկել,—ասաց Նեխլիւդովը։

—Հա, այն անմեղ դատապարտեալն։ Գիտեմ, գիտեմ։

—Ես կը խնդրէի տեղափոխել նրան հիւանդանոց իբր պաղպեղին։ Ինձ ասացին, որ այդ կարելի է։

Մասլենիկովը չրթունքները հուպ տուեց ու սկսեց մտածել։

—Դժուար թէ կարելի լինի,—ասաց նա։—Սակայն կը խորհրդակցեմ ու վաղը կը հեռագրեմ քեզ։

—Ինձ ասացին, որ այնտեղ այժմ չատ հիւանդներ կան և օդնականուհիներ են հարկաւոր։

—Լաւ, լաւ։ Ցամենայն դէպս քեզ իմաց կը տամ։

—Մնդրում եմ,—ասաց Նեխլիւդովը։

Հիւրասենեակից լսուեց ընդհանուր և միևնոյն անգամ բնական ծիծաղ։

—Վիկտօրի բաներն է,—ասաց Մասլեննիկովը, ժպտալով,—սաստիկ սրախօս է, երբ որ քէֆը տեղն է լինում։

—Բացի այդ,—ասաց Նեխլիւդովը,—այս րոպէիս բանտում նստած են 130 հոգի միայն նրա համար, որ անցաթուղթերի ժամանակն անցել է։ Մի ամիս է՝ պահում են նրանց այստեղ։

Եւ նա պատմեց, թէ ինչու են պահում նրանց։

—Դու ինչպէս իմացար այդ բանը,—հարցրեց Մասլեննիկովը, և նրա դէմքի վրայ յանկարծ երևաց անհանգստութեան ու դժգոհութեան արտայայտութիւն։

—Երբ որ գնացի մի մեղադրեալի տեսնելու, այդ մարդիկը չրջապատեցին ինձ միջանցքում ու սկսեցին խնդրել...

—Ի՞նչ մեղադրեալի էիր գնացել տեսնելու։

—Մի դիւղացու, որին անմեղ տեղն են մեղադրում և որի համար ես պաշտպան հրաւիրեցի։ Բայց բանը դրանում չէ։ Մի՞թէ այդ բոլորովին անմեղ մարդիկը պահում են բանտում միայն այն պատճառով, որ անցաթուղթերի ժամանակն անցել է, և...

—Այդ դատախազի գործն է,—դժկամութեամբ ընդհատեց նրա խօսքը Մասլեննիկովը։—Այ տասում եմ՝ արագ ու արդար դատաստան։ Դատախազի օդնականի պարտականութիւնն է այցելել բանտը և իմանալ, արդեօք օրինական պատճառով են պահում այնտեղ կալանաւորները։ Իսկ այդ պարոնները ոչինչ չեն անում, միմիայն վինտ խաղալով են զբաղուած։

—Ուրեմն դու ոչինչ չես կարող անել,—մռայլ կերպով հարցրեց Նեխլիւդովը, յիշելով փաստաբանի այն խօսքերը, թէ փոխ-նահանգապետը մեղքը դատախազի վրայ է գցելու։

—Չէ, կ'անեմ։ Ես խոկոյն և եթ կը տեղեկանամ։

—Վնասուողը էլի ինքը կը լինի։ C'est un souffre-douleur (կուժն ու կուլան միշտ նրա գլխին է ջարդւում),—լսւում էր հիւրասենեակից մի հնոչ ձայն, որ ակներևաբար բոլորովին անտարբեր էր վերաբերւում իր ասածին։

—Աւելի լաւ, ես այս էլ կը վերցնեմ,—լսւում էր միւս կողմից մի տղամարդու խաղուն ձայն և մի հնոչ խաղուն ծիծաղ, որ ինչ որ մի բան չէր տալիս նրան։

—Չէ, չէ, անկարելի բան է,—ասում էր կանացի ձայնը։

—Այդպէս ուրեմն, ես կ'անեմ ինչ որ կարելի է,—կրկնեց Մասլեննիկովը, հանգցնելով պապիրոսը իր սպիտակ ձեռքով, որ զարդարուած էր փիրուզէ մատանիով,—այժմ գնանք տիկնիկներ մօտ։

—Հա, մի բան էլ,—ասաց Նեխլիւդովը, չը մտնելով հիւրասենեակը և կանգ առնելով դռան մօտ։—Ինձ ասացին, որ երէկ բանտում մի քանի մարդկանց մարմնական պատժի են ենթարկել։ Ճի՞շտ է այդ։

Մասլեննիկովը կարմրեց։

—Ախ, այդ ես հարցնում։ Չէ, mon cher (սիրելիս), իսկապէս քեզ չը պէտք է թողնել, որ գնաս այնտեղ. ամեն բանով հետաքրքրւում ես։ Գնանք, գնանք, Annette-ը (Աննէտը) կանչում է մեզ,—ասաց, բռնելով նրա թևից և դարձեալ արտայայտելով այնպիսի յուզմունք, ինչպէս այն կարևոր անձի ուշադրութիւնից յետոյ, բայց այս անգամ ոչ թէ ուրախ, այլ անհանգիստ յուզմունք։

Նեխլիւդովը դուրս կորզեց թևը նրա թևից և, առանց մէկին բարևելու կամ բան ասելու, մռայլ դէմքով անցաւ հիւրասենեակի միջով դահլիճը և յետոյ նախասենեակն ու փողոցը, առանց ուշք դարձնելու լաքէյներին, որոնք դուրս վազեցին նրան օգնելու։

—Ի՞նչ պատահեց նրան։ Ինչ արեցիր նրան,—հարցրեց Annette-ը ամուսնուց։

—Այդ à la française է (ֆրանսիական ձևով է),—ասաց մէկը։

—Ի՞նչ à la française, à la zoulou է այդ (զուլուսների ձևով է)։

—Էհ, նա միշտ այդպէս է եղել։

Մէկը վեր եկաւ, մի նոր մարդ եկաւ և սկսեցին դարձեալ ճռռոցել,—հասարակութիւնը օգտւում էր Նեխլիւդովի միջնադէպից, իբրև խօսակցութեան յարմար նիւթից այդ օրուայ jour fixe-ի համար։

Մասլեննիկովին տրած այցելութեան հետևեալ օրը, Նեխլիւդովը նրանից առաջ հասաւ, վայլուն և տոհմանիշով ու կնիքներով զարդարուած թղթի վրայ հիանալի, հաստատուն ձեռքով գրուած մի նամակ, թէ նա արդէն բժշկին գրել է Մասլովային հիւանդանոց տեղափոխելու մասին և թէ հաւանօրէն Նեխլիւդովի ցանկութիւնը կ'իրագործուի։ Ստորագրուած էր՝ «քեզ սիրող քո աւագ ընկերը», և «Մասլեննիկով» ստորագրութեան պոչը երկարացրած էր զարմանալի ճարտար կերպով ու հաստատուն ձեռագրով։

—Ճիմմար,—չը կարողանալով իրան զսպել, բացականչեց Նեխլիւդօվը, մանաւանդ այն պատճառով, որ զգում էր, որ այդ «ընկեր» խօսքով Մասլեննիկովը ուզել էր պատիւ անել իրան, այսինքն չը նայելով, որ նա չատ կարևոր մարդ էր համարում իրան, բայց ուզել էր, եթէ ոչ չոյել Նեխլիւդօվի ինքնասիրութիւնը, գոնէ ցոյց տալ, որ ինքը այնուամենայնիւ չատ էլ չի գոռոզանում իր վեհութեամբ, այլ պատրաստ է իրան նրա ընկերը անուանել։

LVII

Ամենասովորական և ամենատարածուած նախապաշարմունքներից մէկն այն է, թէ իւրաքանչիւր մարդ ունի իր որոշ յատկութիւնները, այսինքն բարի է, չար է, խելօք է, յիմար է, եռանդուտ է, թմրած է և այլն։ Մարդիկ այդպէս չեն լինում։ Մենք այս կամ այն մարդու մասին կարող ենք ասել, թէ նա աւելի չատախօս բարի է լինում, քան չար, խելօք, քան յիմար, եռանդուն, քան թմրած, և ընդհակառակը. բայց ճիշտ չի լինի, եթէ մենք մի մարդու մասին ասենք, թէ նա միշտ բարի է լինում կամ խելօք, իսկ մի ուրիշի մասին, թէ նա միշտ չար է լինում կամ յիմար։ Սակայն մենք միշտ այդպէս ենք բաժանում մարդկանց։ Եւ անհիմն կերպով։ Մարդիկ գետերի նման են. բոլոր գետերի մէջ էլ ջուրը միատեսակ է և ամենուրեք միևնոյնը, բայց ամեն մի գետ լինում է երբեմն նեղ, երբեմն արագընթաց, երբեմն լայն, երբեմն դանդաղահոս, երբեմն մաքուր, երբեմն աւազ, երբեմն պղտոր, երբեմն տաք։ Այդպէս էլ մարդիկ։ Իւրաքանչիւր մարդ կրում է իր մէջ մարդկային բոլոր յատկութիւնների սաղմերը և արտայայտում է երբեմն այս, երբեմն այն յատկութիւնները ու չատախօս բոլորովին նման չէ լինում ինքն իրան, մնալով սակայն միշտ միևնոյնը և պահպանելով իր ինքնութիւնը։ Կան մարդիկ, որոնց մէջ այդ փոփոխութիւնները սաստիկ խիտ են լինում։ Այդպիսի մարդկանցից էր և Նեխլիւդօվը... Այդ փոփոխութիւնները առաջանում էին նրա մէջ և ֆիզիկական, և հոգեկան պատճառներից։ Այդպիսի մի փոփոխութիւն պատահեց նրա մէջ և այժմ։

Այն հանդիսաւոր տրամադրութիւնը և վերածնութեան հրճուանքը, որ նա զգում էր դատից և կատիւշայի հետ ունեցած առաջին տեսակցութիւնից յետոյ, բոլորովին անցել էր վերջին տեսակցութիւնից յետոյ, փոխարինուելով երկիւղի, նոյն իսկ զզուանքի զգայմունքով դէպի Մասլօվան և պարտա-

կանութեան բռնագբօսիկ գիտակցութեամբ։ Նա վճռել էր չը թողնել նրան, չը փոխել նրա հետ ամուսնանալու վճիռը, եթէ միայն նա ցանկանայ այդ, բայց այդ ծանր էր նրա համար և տանջում էր նրան։

Մասլեննիկովին արած այցելութեան երկրորդ օրը նա դարձեալ գնաց բանտը Մասլօվային տեսնելու։

Բանտապետը թոյլ տուեց տեսնուել, բայց ոչ դրասենեակում և ոչ փաստաբանական առանձնասենեակում, այլ կանանց բաժանմունքի այցելարանում։ Չը նայելով իր բարեհոգութեանը, բանտապետը այս անգամ աւելի զուսպ էր Նեխլիւդօվի հետ, քան առաջ. ակներևաբար Մասլեննիկովի հետ խօսածների հետևանքը այն էր եղել, որ բանտապետը պատուէր էր ստացել աւելի զգոյշ լինել այդ այցելուի հետ։

—Տեսնուել կարելի է,—ասաց բանտապետը,—բայց փողի վերաբերմամբ, խնդրեմ, այնպէս արէք, ինչպէս անցեալ անգամ առաջարկեցի... Իսկ ինչ վերաբերում է նրան հիւանդանոց տեղափոխելուն, որի մասին նորին գերազանցութիւնը գրել էր, այդ կարելի է անել. բժիշկն էլ համաձայն է։ Բայց ինքը չի ուզում, ասում է, չատ հարկաւորս է մուտտաների ամանները թափեմ... Չէք իմանում, իշխան, թէ ինչ տեսակ մարդիկ են սրանք,—աւելացրեց նա։

Նեխլիւդօվը ոչինչ չը պատասխանեց, այլ խնդրեց, որ թոյլ տան տեսնուի նրա հետ։ Բանտապետը պատուիրեց վերակացուին առաջնորդել Նեխլիւդօվին, և Նեխլիւդօվը, հետևելով նրան, մտաւ կանանց դատարկ այցելարանը։

Մասլօվան արդէն այնտեղ էր և դուրս եկաւ ցանցապատի յետևից՝ հանդարտ ու երկչոտ։ Նա բոլորովին մօտեցաւ Նեխլիւդօվին և նրա կողքովը նայելով, ասաց կամացուկ.

—Ներեցէք ինձ, Դմիտրիյ Իվանովիչ, ես վատ բաներ ասացի երէկ չէ միւս օրը։

—Ոչ թէ ես պէտք է ներեմ ձեզ... սկսեց Նեխլիւդօվը։

—Բայց էլի լաւ կ'անէք, ինձնից ձեռ քաշէք,—աւելացրեց նա, և նայեց Նեխլիւդօվին սաստիկ շլած աչքերով, որոնց մէջ նա դարձեալ նկատեց լարուած ու չար արտայայտութիւն։

—Ինչու՞ ձեռ քաշեմ ձեզանից։

—Այնպէս։

—Ինչո՞ւ այնպէս։

Մասլօվան նայեց նրան, ինչպէս նրան թուաց, դարձեալ նոյն չար հայեացքով։

—Որ այդպէս է, լսէք,—ասաց նա։—Ինձնից ձեռք քաշէք, հասատատ խօսք եմ ասում ձեզ։ Ձեմ կարող։ Բոլորովին թողէք

այդ բանը,—ասաց նա դողդոջուն շրթունքներով ու լռեց։—Ճիշտ եմ ասում։ Կախուեմ լաւ է, քան այդ։

Նեխլիւդովը զգում էր, որ նրա այդ մերժման մէջ կար առելութիւն դէպի ինքը, կար չը մոռացուած քէն, բայց կար և մի ուրիշ—լաւ ու լուրջ բան։ Այն հանգամանքը, որ Մասլովան բոլորովին հանգիստ վիճակում կրկնեց իր առաջուան մերժումը, միանգամից չքացրեց Նեխլիւդովի հոգու մէջ նրա բոլոր կասկածները և վերադարձրեց նրա նախկին լուրջ, հանդիսաւոր և խանդաղատ տրամադրութիւնը։

—Կատիւշա, ինչ որ ասացի, հիմա էլ ասում եմ,—արտասանեց նա սաստիկ լուրջ կերպով։—Ես խնդրում եմ քեզնից, որ իմ կինը դառնաս։ Եթէ դու չես ուզում և քանի որ չես ուզենայ, ես էլի այնպէս, ինչպէս առաջ, այնտեղ կը լինեմ, ուր դու կը լինես, և կ'երթամ այնտեղ, ուր քեզ կը տանեն։

—Այդ ձեր գիտենալու գործն է. ես էլ ոչինչ չեմ ասի,—ասաց Մասլովան և նորից շրթունքները դողացին։

Նեխլիւդովն էլ լուռ էր մնում, լեզուն չէր զօրում խօսել։

—Ես այժմ գնում եմ գիւղը, իսկ յետոյ կ'երթամ Պետերբուրգ,—ասաց նա վերջապէս այժերը հաւաքելով։—Աչխատելու եմ ձեր, մեր գործի համար, և Աստուծով, յոյս ունեմ, որ կը փոխեն դատավճիռը։

—Փոխեն, չը փոխեն միևնոյնն է։ Այդ բանի համար եթէ արժանի չեմ այդ պատժին, ուրիշ բանի համար արժանի եմ... ասաց Մասլովան, և Նեխլիւդովը նկատեց, թէ ինչ մեծ ճիգ գործ դրեց նա արտասուքը զսպելու համար։—Հա, Մենշովին տեսաք,—հարցրեց նա յանկարծ, յուզմունքը ծածկելու համար։

—Ճիշտ է, որ նրանք անմեղ են, չէ՞։

—Այո, կարծում եմ։

—Շատ հիանալի պառաւ է,—ասաց Մասլովան։

Նեխլիւդովը պատմեց նրան, ինչ որ իրան ասել էր Մենշովը, ու հարցրեց, արդեօք բան պէտք չէ՞ նրան. նա պատասխանեց, թէ ոչինչ պէտք չէ։

Նրանք նորից լռեցին։

—Իսկ հիւանդանոցի մասին,—յանկարծ ասաց Մասլովան, նայելով նրան իր չիլ հայեացքով,—եթէ ուզում էք, կ'երթամ, ու օղի էլ չեմ խմի...

Նեխլիւդովը լուռ նայեց նրա աչքերին։ Նրա աչքերը ժպտում էին։

—Շատ լաւ է այդ,—կարողացաւ միայն ասել Նեխլիւդովը։

«Այո, այո, բոլորովին ուրիշ մարդ է այժմ», մտածում էր Նեխլիւդովը, որի մէջ նախկին կասկածներից յետոյ զարթնեց

մի բոլորովին նոր զգացմունք, որ առաջ երբէք չէր զգացել,—հաւատաց, որ սէրը անյաղթելի է։

—

Այդ տեսակցութիւնից յետոյ վերադառնալով իրանց դարչահոտ սենեակը, Մասլովան հանեց խալաթը ու նստեց իր տախտի վրայ, ձեռները կախ գցելով ծնկների վրայ։ Սենեակում կային միմիայն թոքախտաւորը, Վլադիմիրսկայան իր ծծկեր երեխայով, պառաւ Մենշովան և պահապանուհին երկու երեխաներով։

Տիրացուի աղջկան երէկ հիւանդանոց էին ուղարկել, վճռելով, որ նա հոգեկան հիւանդ է։ Իսկ մնացեալ բոլոր կանայք գնացել էին լուացք անելու։ Պառաւը տախտի վրայ պառկած՝ քնած էր. երեխաները միջանգուրան էին, ուր տանող դուռը բաց էր։ Վլադիմիրսկայան, երեխան գրկին, և պահապանուհին, որ մատները արագ-արագ չարժելով անդադար գործում էր ձեռքի գիւլպան, մօտեցան Մասլովային։

—Չ՞ը, տեսնուեցիք,—հարցրեցին նրանք։

—Ի՞նչ ես լաց լինում,—ասաց պահապանուհին։—Ամենից աւելի պէտք է աչխատես սիրտդ կտրիճ պահել։ Ա՛խ, Կատիւխա։ Դէ, պատմի, տեսնուեցիք,—ասաց նա, արագ-արագ չարժելով մատները։

Մասլովան պատասխան չէր տալիս։

—Իսկ մերոնք գնացել են լուացք անելու։ Աստում են, այսօր չատ ողորմութիւն են բերել,—ասաց Վլադիմիրսկայան։

—Ցինոչկա, ուր ես գնացել, հասել, չար Ցուլիանոս,—գոռաց պահապանուհին դռան միջով, ու միլերից մէկը հանելով և կծիկի ու գիւլպայի մէջ խրելով, դուրս գնաց միջանցքը։

Այդ միջոցին միջանցքից լսուեց ոռնաձայն ու կռնաչի խօսակցութիւն, և մի րոպէ անցած ներս մտան այդ սենեակի կալանաւորուհիները, բոբիկ ոտներին բանտային հողաթափներ հագած և իւրաքանչիւրի ձեռքին մի-մի, իսկ ոմանց ձեռքին նոյն իսկ երկ-երկու հաց։ Ֆեդոսեան իսկոյն և եթ մօտեցաւ Մասլովային։

—Չ՞ը, բանդ հօ վատ չի,—հարցրեց Ֆեդոսեան, սիրագին կերպով նայելով Մասլովային իր ջինջ, կապուտակ աչքերով։—Այս էլ մեր թէյի համար,—աւելացրեց նա, ձեռքի հացերը դարաւելով դարակի վրայ։

—Չ՞ը, պատկեում է, թէ միտքը փոխել է,—հարցրեց Կոբրաբլեօվան։

—Չէ, միտքը չի փոխել, բայց ես չեմ ուզում,—պատասխանեց Մասլովան.—իրան էլ այդպէս ասացի։

—Այ քեզ յիմար կնիկ,—ասաց Կօրաբլեօվան իր թաւ ձայնով։

—Մի բան որ միասին չեն ապրելու, էլ ինչ ցաւ ու կրակի համար պէտք է պահուեն,—հարցրեց Ֆեդօսեան։

—Ֆո մարդ հօ քեզ հետ գնում է Սիբիր,—առարկեց պահապանուհին։

—Մեր բանն ուրիշ է, մենք պահուած ենք,—ասաց Ֆեդօսեան։—Իսկ նա ինչու՞ պէտք է պահուի, քանի որ չի ապրելու հետը։

—Այ քեզ յիմար։ Ինչո՞ւ։ Ախր չէ՞ որ եթէ նա պահուի հետը, ոսկու մէջին կը լըւըլըացնի։

—Նա ասաց՝ ուր որ քեզ ուղարկեն, ես էլ յետևիցդ կը գամ,—ասաց Մասլօվան։—Կ'ուզի գայ, կ'ուզի չը գայ։ Ես խընդրողը չեմ։ Հիմա գնում է Պետերբուրգ իմ գործի համար աշխատելու։ Այնտեղ բոլոր մինիստրները բարեկամ են գալիս նրան,—չարունակեց նա,—բայց էլի ինձ հարկաւոր չի նա։

—Ցայտնի բան է,—յանկարծ համաձայնեց նրա հետ Կօրաբլեօվան, իր տոպրակը դատարկելով և ակնարկաբար ուրիշ բանի մասին մտածելով։—Հ՞ը, օղի խմե՞ւմ ենք, թէ չէ։

—Ես՝ չէ,—պատասխանեց Մասլօվան։—Դուք խմեցէք։

Վերջ առաջին մասի։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

I

Երկու չաբաթից յետոյ կարող էր գործը քննուել սենատում, և Նեխլիւդովը մտադիր էր այդ ժամանակ գնալ Պետերբուրգ ու, եթէ սենատում գործը անաչդող անցնէր, խնդիրք տալ Բարձրագոյն անունով, ինչպէս խորհուրդ էր տուել իրենդիրքը գրող փաստաբանը։ Եթէ վճռաչխնջ գանգատը անհետեւանք թողնուէր, որ, փաստաբանի կարծիքով, չատ հնարաւոր էր, որովհետև վճռաչխնջ առիթները չատ թոյլ էին, տաժանապարտների այն խումբը, որի մէջ գտնւում էր և Մասլօվան, կարող էր Սիբիր ուղևորուել յունիսի սկիզբներին, ուստի Նեխլիւդովը այժմ և եթէ պէտք է գնար գիւղերը իր գործերը կարգադրելու, որպէս զի պատրաստ լինէր Մասլօվայի հետ գնալ Սիբիր,—մի բան, որ հաստատ վճռել էր նա։

Ամենից առաջ Նեխլիւդովը գնաց Կուզմինսկոյէ գիւղը, ուր գտնւում էր նրա ամենամօտիկ մեծ սեահող կալուածը, որ նրա եկամուտի գլխաւոր աղբիւրն էր։ Նա երեխայ ու պատանի հասակում ապրել էր այդ կալուածում, այնուհետև արդէն չափահաս ժամանակը երկու անգամ եղել էր այնտեղ և մի անգամ մօր խնդիրքով տարել էր այնտեղ մի գերմանացի կառավարիչ, որի հետ սատուգել էր այնտեղի տնտեսութիւնը, այնպէս որ նրան վաղուց յայտնի էին այդ կալուածի վիճակը և գիւղացիների դէպի դրամատունակը, այսինքն դէպի կալուածատէրը ունեցած յարաբերութիւնները։ Գիւղացիների յարաբերութիւնները կալուածատիրոջ վերաբերմամբ այնպէս էին, որ գիւղացիները լիովին կախուած էին դրամատունակից։ Նեխլիւդովը գիտէր այդ բանը ուսանողութեան ժամանակից, այն ժամանակից, երբ նա դատանում ու քարոզում էր Հէնրի Ջօրջի հայեացքները և երբ այդ հայեացքների հիման վրայ հօրական հողը տուեց գիւղացիներին։ Ճիշտ է, գինուորական ծառայութիւնից յետոյ, երբ նա սովորել էր ծախսել տարին մօտ 20 հազար ռուբլի, այդ բոլոր հայեացքները դադարել էին նրա կեանքի համար պարտադիր լինելուց ու մոռացուել, և նա ոչ միայն երբէք հարց չէր

տալիս իրան, թէ որտեղից են առացուում այն փողերը, որ մայրը տալիս էր իրան, այլ և աշխատում էր չը մտածել այդ մասին, բայց մօր մահը, առացած ժառանգութիւնը և իր դոյքի, այսինքն հողի մասին կարգադրութիւններ անելու անհրաժեշտութիւնը նորից զարթեցրին նրա համար դէպի հողային սեփականութիւնը ունեցած վերաբերմունքի հարցը։ Մի ամիս առաջ Նեխլիւդովը անչուչտ կ'ասէր ինքն իրան, թէ իր ուժից վեր է փոփոխել եղած կարգերը և թէ ինքը չէ կառավարում կալուածքը ու աւել կամ պակաս կը հանգստանար, ապրելով կալուածքից հեռու ու ստանալով նրա եկամուտները։ Իսկ այժմ նա վճռեց, որ թէև ինքը գնալու է Սիբիր և բարդ ու դժուար յարաբերութիւններ է ունենալու բանտային աշխարհի հետ, որի համար նրան անհրաժեշտ է հասարակական դիրք և մանաւանդ փող, բայց և այնպէս չէ կարող այդ գործը թողնել իր առաջուայ դրութեան մէջ, այլ պէտք է, ի վնաս իր, փոխի այդ դրութիւնը։ Դրա համար նա վճռեց, որ այսուհետև ինքն իր հաշուով չի մշակի իր հողերը, այլ էժան գնով կը տայ գիւղացիներին, հնարաւորութիւն տալով նրանց անկախ լինել կալուածատէրից։ Յաճախ, հողատէրերի դրութիւնը համեմատելով ճորտատէրերի հետ, Նեխլիւդովը՝ հողը գիւղացիներին կապալով տալը, փոխանակ վարձու մարդկանցով մշակելու, նմանեցնում էր այն բանին, որ անում էին ճորտատէրերը կոռնատրութիւնը փոխարինելով տուրքով։ Դրանով հարցը չէր լուծուում, բայց այդ մի քայլ էր դէպի նրա լուծումը. այդ փոխանցումն էր մարդատիրութեան չատ կոպիտ ձևից դէպի նուազ կոպիտ ձևը։ Այդպէս էլ վճռել էր նա վարուել։

Կէսօրի մօտ էր, երբ Նեխլիւդովը հասաւ Կուզմինսկոյէ գիւղը։ Աչխատելով ամեն կողմից պարզութիւն մտցնել իր կեանքի մէջ, նա չէր հեռագրել, որ կալուածից սեփական կառք ուղարկեն, այլ կայարանում լծել տուեց մի երկձի սուրհանդակային կառք։ Կառապանը, որ անթև բաճկոն հագած ու մէջքից ներքև ծալքերի վրայով գօտիկը կապած մի ջահել տղայ էր, սուրհանդակային կառապանների սովորութեամբ կողքահան էր նստել իր տեղում և մեծ ախորժակով խօսում էր աղայի հետ, մանաւանդ այն պատճառով, որ նրանց խօսելու ժամանակ փչացած ու կաղ սպիտակ միջնեկ ձին և նիհար ու ծանրաչունչ կողքի ձին կարող էին քայլելով գնալ, մի բան, որ նրանք սաստիկ ցանկանում էին միշտ։

Կառապանը պատմում էր Կուզմինսկոյէ կալուածի կառավարչի մասին, չիմանալով, որ կալուածատիրոջ հետ է խօսում։ Նեխլիւդովը կամաւ չատաց նրան այդ։

—Ջօռ գերմանացի է,—ասում էր նա, կիսով չափ դարձած դէպի Նեխլիւդովը և երբեմն ներքևից, երբեմն վերևից բռնելով մարակի երկար կոթը,—այնպէս երեք չէկ ձի է առել, որ երբ լծում է ու իր աղջիկ պարոնի հետ նստում է կառքը—մարդու քէֆ է գալիս։ Ձմեռը, Ծննդեան տօներին, տօնածառ կար մեծ տանը. ես էլ հիւրեր բերեցի. չատ լաւ զարդարուած էր։ Ամբողջ նահանգում այդպէս տօնածառ չէր գտնուի։ Այնքան փող է դուխել, որ էլ ասել չի լինի։ Ինչու չի դուխի, ամեն բան իր ձեռքին է։ Ասում են, լաւ կալուածք է առել։

Նեխլիւդովը կարծում էր, որ ինքը բոլորովին անտարբեր է վերաբերւում այն բանին, թէ ինչպէս է գերմանացին կառավարում իր կալուածքը ու օգտւում նրանից։ Բայց երկարիրան կառապանի պատմածը անախորժ էր նրան։ Նա աքանչանում էր օրուայ պահի պատմածը անախորժ էր նրան։ Նա աքանչանում էր օրուայ հիանալի եղանակով, խիտ ու մթնդող ամպերով, որոնք երբեմն ծածկում էին արևի երեսը, և գաշտերով, որոնց վրայ ճախրում էին արտուտներ, և անտառներով, որոնք վերևից և ներքևից արդէն պատած էին թարմ դալարով, և մարգագետիններով, որոնց վրայ արդէն բաց էին թողնուած հօտերն ու ձիերը, և արտերով, որոնց մէջ երևում էին հերկողները, և յանկարծ նա յիշում էր որ ինչ որ անախորժ բան կայ, և երբ հարցնում էր ինքն իրան՝ թէ ինչ է այդ անախորժ բանը, մտաբերում էր կառապանի պատմածը, թէ ինչպէս է գերմանացին կառավարում Կուզմինսկոյէ կալուածքը։

Կուզմինսկոյէ հասնելով և սկսելով գործերով զբաղուել, Նեխլիւդովը մոռացաւ այդ անախորժ զգացմունքը։

Աչքի անցնելով հաշուեմատեանները և խօսելով գործակատարի հետ, որ միաժամանակ բացատրում էր նրան այն բանի չատաբի հետ, որ միամտօրէն բացատրում էր նրան այն բանի չահաւէտութիւնը, որ գիւղացիները սակաւահող են և նրանց հողաբաժինները չրջապատուած են կալուածապատկան հողերով, Նեխլիւդովը աւելի ևս հաստատ մտադրուեց վերջ տալ սեփական անտեսութեան և ամբողջ հողը տալ գիւղացիներին։ Հաշուեմատեաններից ու գործակատարի խօսակցութիւնից նա իմացաւ, որ, ինչպէս և առաջ, լաւագոյն վարելահողի երկու երրորդականը մշակւում էր սեփական մարդկանցով և կատարելագործուած գործիքներով, իսկ մի երրորդականը տրւում էր գիւղացիներին մշակելու՝ օրավարձին հինգ ռուբլի վարձով, այսինքն հինգ ռուբլով գիւղացին պարտաւորւում էր երեք անգամ վարել, երեք անգամ տափանել և ցանել մի օրավար տեղ, յետոյ գերանդիով հնձել ու կապել կամ մանգաղով հնձել և կրել կալը, այսինքն այնքան բան անել, որ կամաւոր էժան վարձով կը նստէր ամենաքիչը տաս ռուբլի օրավարին։ Իսկ այն բանների

համար, ինչ որ գիւղացիներին էր պէտք, նրանք վճարում էին գրասենեակին աշխատանքով ամենաթանգ գներով։ Նրանք աշխատում էին, որպէս զի փոխարէնը օգտուէն մարգագետիններից, անտառից և գետնախնձորի կանաչից, և համարեա բոլորն էլ պարտք էին գրասենեակին։ Այդպէս, այն հանգերից, որոնք գիւղացիներին կապալով էին տրւում, ամեն օրավարից այնքան էին վերցնում, որ չորս անգամ աւելի էր, քան կարող էին ստանալ այդ հողերի գնից, հինգ տոկոս հաշուելով։

Այդ բոլորը Նեխլիւդովը առաջ էլ գիտէր, բայց այժմ նրան նոր էր թւում, և նա զարմանում էր, թէ ինչպէս էին կարողանում ինքը և իր դրուքեան մէջ գտնուող միւս բոլոր մարդիկ՝ չը տեսնել այդպիսի յարաբերութիւնների ամբողջ անիօրինութիւնը։ Կառավարչի առաջ բերած պատճառաբանութիւնները, թէ իրանց բոլոր անասուններն ու գործիքները բոլորովին զուր կը կորչէն, որովհետև անկարելի կը լինի ծախել նոյն իսկ իրանց արժէքի քառորդ գնով, թէ գիւղացիները կը փչացնեն հողը, և թէ առհասարակ Նեխլիւդովը ահագին կորուստ կ'ունենայ հողը գիւղացիներին կապալով տալով, միայն աւելի ևս հաստատում էին Նեխլիւդովի մտքում այն համոզմունքը, որ նա լաւ բան է անում՝ հողը գիւղացիներին յանձնելով և ինքն իրան զրկելով եկամուտների մի մեծ մասից։ Նա վճռեց այդ գործը վերջացնել հէնց այժմ, նախ քան կալուածից հեռանալը։ Ինչ վերաբերում է յանած հայցահատիկները հաւաքելուն ու ծախելուն, հողագործական անասուններն ու գործիքները և անպէտք չինութիւնները վաճառելուն, այդ բոլորը կառավարիչը պէտք է անէր նրա գնալուց յետոյ։ Իսկ այժմ նա խնդրեց կառավարչից հետևեալ օրը ժողովի հրաւիրել կուզմինսկոյէ կալուածի հողերով չրջապատուած երեք գիւղերի բնակիչներին, որպէս զի նրանց յայտներ իր դիտաւորութիւնը և պայմանաւորուէր կապալագնի մասին։

Անհրաժեշտ դիտողութեամբ, որ ինքը հաստատ էր մնացել իր վճռին, չը նայելով կառավարչի առաջ բերած պատճառաբանութիւններին, և որ պատրաստ էր զոհողութիւն անել գիւղացիների օգտին, Նեխլիւդովը դուրս եկաւ գրասենեակից և, մտածելով առաջիկայ գործի մասին, սկսեց չրջել տան կողմը, ծաղկանոցներում, որոնք բարձրթող էին արուած այս տարի (ծաղկանոց կար միայն կառավարչի տան առաջ), lawn—tennis խաղալու տեղում, որտեղ սկսել էր եղերդակ բուսանել, և լօրինների ծառուղիում, ուր նա սովորաբար գնում էր սիգար ծխելու և ուր երեք տարի առաջ նրա հետ կօքետութիւն էր անում իրանց մօտ հիւր եկած սիրունիկ կիրիմօվան։ Մտքում

ամփոփի կերպով կազմելով այն ճառը, որ միւս օրը ասելու էր գիւղացիներին, Նեխլիւդովը գնաց կառավարչի մօտ և, թէյ խմելիս մի անգամ էլ քննադատելով նրա հետ այն հարցը, թէ ինչպէս պէտք է ծախել, վերջացնել ամբողջ անտեսութիւնը, նա մտաւ մեծ տան այն սենեակը, որ մշտապէս յատկացրած էր հիւրերին և այժմ պատրաստուած էր իր համար, բոլորովին հանգիստ և գոհ այն բարի գործից, որ ինքը պատրաստւում էր անել գիւղացիների համար։

Այդ փոքրիկ ու մաքուր սենեակում, որ զարդարուած էր Վենեաիկի տեսարանների նկարներով և երկու պատուհանների արանքին կախուած մի մեծ հայելիով, դրուած էր մի զսպանաւոր մահճակալ և մի փոքրիկ սեղան՝ վրան մի չիշ ջուր, մի տուփ լուցկի և մի ճրագմարիչ։ Հայելու մօտի մեծ սեղանի վրայ դրուած էր նրա պայուսակը, որ բաց էր և մէջից երևում էին նրա նէսէսէրը և հետը վերցրած գրքերը,—մէկը ռուսերէն՝ յանցաւորութեան օրէնքների ուսումնասիրութեան փորձ, մէկը գերմաներէն նոյն հարցի մասին և մէկն էլ անգլիերէն։ Նա վերցրել էր այդ գրքերը, որպէս զի գիւղերը չրջելիս կարդար աղատ րոպէներին, բայց այժմ, նայելով նրանց, նա զգաց, որ ինքը չատ հեռու է այդ հարցերից։ Այժմ բոլորովին ուրիշ չան էր զբաղեցնում նրան։

Սենեակի մի անկիւնում դրուած էր մի հին բազկաթոռ, կարմիր փայտից ու դրուագազարդ, և այդ բազկաթոռը, որ առաջ դրուած էր նրա մօր ննջարանում, յանկարծ բոլորովին անսպասելի զգացմունք զարթեցրեց նրա սրտում։ Նա սկսեց յանկարծ սաստիկ ափսոսալ և՛ տանը, որ աւերուելու էր, և՛ պարտէզին, որ անխնամ էր թողնուելու, և՛ անտառներին, որոնց ծառերը կտրատվելու էին, և այն բոլոր գոմանոցներին, ախոռատուններին, գործիքների սրահներին, մեքենաներին, ձիերին ու կովերին, որոնց ձեռք բերելը և պահպանելը այնքան չանք էր նստել, թէպէտև ոչ իրան։ Առաջ նրան չատ հեչտ էր թւում հրաժարուել այդ բոլորից, բայց այժմ նա ափսոս էր զգում ոչ միայն այդ բաների, այլ և հողի համար ու եկամուտի կէսի համար, որ կարող էր այնքան պէտք գալ այժմ։ Եւ իսկոյն և եթ նրա գլխում երևան եկան դատողութիւններ, որոնցով դուրս էր գալիս, որ անխոհեմ բան է և պէտք չէ հողը գիւղացիներին տալ ու սեփական անտեսութիւնը աշնչացնել։

«Ես հողատիրութիւն չը պէտք է անեմ։ Իսկ եթէ հողատիրութիւն չանեմ, չեմ կարող պահպանել այս ամբողջ անտեսութիւնը։ Բացի դրանից, ես այժմ գնալու եմ Սիբիր, ուստի

և ոչ տունս, ոչ կալուածս ինձ պէտք չենն», ասում էր մի ձայն։ «Այդ բոլորը ճիշտ է,—ասում էր մի ուրիշ ձայն,—բայց, նախ, ամբողջ կեանքդ հօ Սիբիրում չես անցնելու։ Իսկ եթէ պատահես, կարող ես երեխաներ ունենալ։ Եւ ինչպէս կարդին ես սատկել կալուածը ծնողներիցդ, այնպէս էլ պէտք է թողնես զաւակներիդ։ Մարդս պարտականութիւններ ունի դէպի հողը։ Ուրիշներին տալ, ոչնչացնել ամեն ինչ—չատ հեշտ է, իսկ ձեռք բերել այդ բոլորը՝ չատ դժուար։ Եւ, որ գլխաւորն է, դու պէտք է կշռադատես քո կեանքը և վճռես, թէ ինչ ես դառնալու, և դրա համեմատ անօրինես անփականութիւնդ։ Վերջապէս, արդեօք իսկ և իսկ խղճով ու անկեղծօրէն ես վարուում այդպէս, թէ այդպէս ես անում, որ մարդիկ տեսնեն ու դու պարծենաս նրանց առաջ»,—հարցնում էր ինքն իրան Նեխլիւդովը և չէր կարողանում չը խոստովանել, որ իր վճռի վրայ մեծ ազդեցութիւն ունէր այն հանգամանքը, թէ ինչ են ասելու նրա մասին ուրիշները։ Եւ որքան աւելի էր նա մտածում, այնքան աւելի ու աւելի հարցեր էին ծագում նրա մէջ և աւելի ու աւելի անլուծելի էին դառնում հարցերը։ Այդ մտքերից ազատուելու համար նա պատկեց սառը անկողնի մէջ և ուզում էր քնել, որպէս զի վաղը թարմ գլխով վճռէր այն հարցերը, որոնց մէջ մոլորուել էր այժմ։ Բայց երկար չէր կարողանում քնել, բայ պատուհաններով՝ զով օդի ու լուսնի շողքերի հետ ներս էր թափանցում գորտերի կռկռոցը, մէջ ընդ մէջ սոխակների կլկլոցի ու սուլոցի հետ, որոնք մեծ թուով գեղգեղում էին հեռուում, ծառաստանում, իսկ մեկը՝ մօտիկ, պատուհանի տակ, փթթած եղրևանիի թփում։ Ականջ դնելով գորտերին ու սոխակներին, Նեխլիւդովը յիշեց բանտապետի աղջկայ դաշնակահարութիւնը. յիշելով բանտապետին, յիշեց Մասլովային և այն, թէ ինչպէս նրա շրթունքներն էլ դողդողում էին գորտերի կռկռոցի պէս, երբ նա ասում էր. «դրանից բոլորովին ձեռք քաշեցէք»։ Ցետոյ գերմանացի կառավարիչը սկսեց գնալ ներքև դէպի գորտերի կողմը։ Պէտք էր նրան չը թողնել, բայց նա ոչ միայն իջաւ, այլ և գարձաւ Մասլովա ու սկսեց յանդիմանել նրան. «ես տաժանապարտ եմ, իսկ դու իշխան»։ «Չէ, տեղի չը պէտք է տամ»,—մտածեց Նեխլիւդովը և սթափուեց ու հարցրեց ինքն իրան.—Արդեօք լաւ եմ անում, թէ վատ։ Չը գիտեմ, վաղը կ'իմանամ»։ Ու ինքն էլ սկսեց իջնել դէպի այն կողմը ուր իջաւ կառավարիչ-Մասլովան, և այնտեղ ամեն ինչ վերջացաւ։

—

II

Միւս օրը Նեխլիւդովը զարթնեց առաւօտեան ժամի 9-ին։ Գրասենեակի ջահել ծառայողը, որ սպասաւորութիւն էր անում աղային, լսելով, որ նա տեղերում չարժուում է, ներս բերեց նրա կօշիկները, որոնք այնքան փայլուն էին, որքան երբէք չէին եղել, և աղբիւրի սառ ու վճիտ ջուր, ու ասաց, որ գիւղացիները հաւաքուում են։ Նեխլիւդովը, սթափուելով, վայր թռաւ անկողնից։ Այն ահռելի ազնիւը, որ նա զգում էր երէկ՝ հողը գիւղացիներին տալու և անտեսութիւնը ոչնչացնելու պատճառով, չքացել էր անհետ։ Նա զարմանալով էր յիշում այդ զգացմունքը և սկսեց չտապով հագնուել, ուրախանալով և ակամայ հպարտութիւն զգալով իր անելիք գործի պատճառով։ Նրա սենեակի լուսամուտից երևում էր lawn-tennis-ի եղերդակով ծածկուած հրապարակը, ուր, կառավարչի ցուցմունքով, հաւաքուում էին գիւղացիները։ Զուր չէր, որ գորտերը կռկռում էին իրիկուանից։ Եղանակը մռայլ էր։ Առաւօտից՝ հանդարտ, անքամի, տաք անձրև էր գալիս, կաթիլ-կաթիլ կախ ընկնելով տերևների, ճիւղերի ու խոտերի վրայ։ Պատուհանում, բացի դալարի հոտից, զգացուում էր անձրևի պատկառ հողի հոտ։ Շորերը հագնելիս Նեխլիւդովը մի քանի անգամ դուրս նայեց լուսամուտից՝ տեսնելու, թէ ինչպէս են հաւաքուում գիւղացիները։ Նրանք մէկ-մէկ մօտենում էին, բարևում էին ամենքին ու չուրջանակի կանգնում և, ձեռնափայտերի վրայ յենուելով, խօսում էին իրար հետ։ Տուղ ու մկանոտ կառավարիչը, բարձր ու կանաչ օձիքով և ահագին կոճակներով կարճ պիջակը հագին, եկաւ ասաց Նեխլիւդովին, որ բոլոր գիւղացիները հաւաքուել են արդէն, բայց ոչինչ, նրանք կը սպասեն, թող նա խմի առաւօտուայ սուրճը կամ թէյը,—երկուսն էլ պատրաստ են։

—Չէ, թէյն ու սուրճը թող մնայ յետոյ, այժմ պէտք է գնալ նրանց մօտ,—ասաց Նեխլիւդովը, իր համար բոլորովին անսպասելի կերպով երկչոտութիւն ու ամօթ զգալով գիւղացիների հետ ունենալիք խօսակցութեան մասին մտածելիս։

Նա գնում էր կատարելու գիւղացիների փայփայած ցանկութիւնը, որի իրագործման մասին նրանք մտածել անգամ չէին համարձակւում, գնում էր նրանց էժան գնով հող վարձով տալու, ուրեմն բարերարութիւն անելու նրանց, և սակայն ինչ որ ամօթ էր զգում նա։ Երբ Նեխլիւդօվը մօտեցաւ հաւաքուած գիւղացիներին, ու տեսաւ, թէ ինչպէս իր առջև բացուեցին նրանց չէկ, գանգրահեր, ճաղատ ու ալեզարդ գլուխները, նա այնպէս չփոթուեց, որ բաւական ժամանակ ոչինչ չէր կարողանում ասել։ Անձրևը դեռ մաղում էր և նրա մանր կաթիլները մնում էին գիւղացիների մազերի, միրուքների և հագուստների վրայ։ Գիւղացիները նայում էին աղային, սպասելով, թէ ինչ է ասելու, իսկ նա այնպէս չփոթուել էր, որ ոչինչ չէր կարողանում ասել։ Այդ չփոթուած լռութիւնը ընդհատեց հանգիստ ու ինքնավստահ գերմանացի կառավարիչը, որ կանոնաւոր ու հիանալի խօսում էր ռուսերէն և համոզուած էր, թէ ինքը չատ լաւ է ճանաչում ռուս գիւղացու բնաւորութիւնը։ Այդ հուժկու և մսի մէջ կորած մարդը, ինչպէս նաև ինքը Նեխլիւդօվը՝ զարմանալի հակապատկեր էին կազմում գիւղացիների նիհար ու խորշոմած դէմքերի և թիակները դուրս ցցուած վախտ մէջքերի հետ։

—Իշխանը ուզում է ձեզ բարիք անել. ուզում է հողը տալ ձեզ, թէև դուք դրան արժանի չէք,—ասաց գերմանացին։

—Ինչու՞ արժանի չենք, Վասիլիյ Կարլիչ. մինչ մենք քեզ համար չենք աշխատել։ Մենք չատ գոհ էինք լուսահոգի աղջիկ-պարոնից. մեր ջահել ազան էլ, չնորհակալ ենք, անտէր չի թողնում մեզ,—սկսեց մի ճարտարախօս կարմրաչէկ գիւղացի։

—Մեր տէրերը մեզ չեն զրկում, միայն թէ նեղուածք է,—ասաց մի ուրիշ գիւղացի՝ լայներես ու մեծամիրուք։—Ապրուստը դժուարացել է։

—Ես ձեզ, հէնց նրա համար եմ կանչել, որ ամբողջ հողը, տամ ձեզ, եթէ ուզում էք,—ասաց Նեխլիւդօվը։

Գիւղացիները լուռ մնացին, կարծես չը հասկանալով կամ չը հաւատալով։

—Այսինքն թէ ինչպէս հողը տաք,—հարցրեց մի միջահասակ գիւղացի։

—Այնպէս, որ վարձը քիչ լինի։

—Հիանալի բան կը լինի,—ասաց մի ծերունի։

—Այնքան լինի, որ ուժներս պատի վարձատրին,—ասաց մի ուրիշը։

—Ինչու՞ չը պէտք է հողը վերցնենք։

—Հօրական, պապական մեր գործն է. մեզ հաց տուողը հէնց հողն է։

—Ձեզ համար էլ հանգիստ կը լինի. փողներդ ստացէք ու դրէք գրպաններդ, թէ չէ ինչքան անիրաւութիւն է լինում,—լսուեցին ձայներ։

—Անիրաւութիւնը ձեր երեսից է,—ասաց գերմանացին,—եթէ կարգին աշխատէիք ու կանոնից դուրս չը գայիք...

—Գիւղացի մարդիկ ենք, չենք կարող, Վասիլիյ Կարլիչ,—սկսեց խօսել մի սրաքիթ, նիհար ծերունի։—Ասում ես, ինչու՞ եմ ձիս թողել արտդ, իսկ ով է թողել. ես օրն ի բուն,—օրն էլ հօ օր չի, ամբողջ տարի է,—գերանդի եմ բանեցրել, կամ ուրիշ բանի եմ եղել, դիշերը քնում եմ, իսկ նա քո արտն է մնում, դու էլ իմ կաշին ես քերթում։

—Ինչու՞ կարգ-կանոն չէք գցում ձեր գործերի մէջ։

—Ինչու՞ չէ, քեզ համար հեշտ է ասել՝ կարգ-կանոն, բայց մի հարցրու, թէ մեր ուժն էլ կը պատի,—առարկեց մի բարձրահասակ, սևահեր և ամբողջապէս փրչոտած բաւական երիտասարդ գիւղացի։

—Ձեզ չասացի՞, որ ցանկապատ քաշէք։

—Թողնում ես փայտ կտրենք որ,—յետևից միջամտեց մի փոքրիկ, անշէնք անշնորհք գիւղացի։—Ամառս ուզում էի ցանկապատ քաշել, մի ձող կտրեցի, երեք ամիս բանտը կոխեցիր, որ ոչիլներ չատացնեմ։ Այ քեզ ցանկապատ։

—Այդ ինչ է ասում,—հարցրեց Նեխլիւդօվը կառավարչից։

—Der erste Dieb im Dorfe (գիւղի առաջին գողն է),—գերմաներէն ասաց Նեխլիւդօվին կառավարիչը։—Ամեն տարի անտառում բանում ես ցախ կտրելիս։ Կարգին մարդ ես՝ սովորիր ուրիշի սեփականութիւնը յարգել,—աւելացրեց նա՝ դիմելով գիւղացուն։

—Ինչով՞ չենք յարգել քեզ,—ասաց ծերունին։—Ի՞նչպէս կարող ենք քեզ չը յարգել, չէ՞ որ ոտով գլխով քո ձեռքին ենք ու հոգիներս հանում ես։

—Զուր բաներ մի՛ ասէք. դուք ուրիշին չը նեղէք, թէ չէ ձեզ ոչ ոք չի կարող նեղել։

—Մենք նեղենք։ Ի՞նչպէս չէ։ Այ, ամառս քիթ ու պռունգս ջարդեցիր, ինչ կարողացայ անել։ Ով կարող է հարուստ մարդու հետ դատուել։

—Ո՞վ է մեղաւոր. ինչու՞ ես օրէնքի հակառակ գնում։

Պարզ էր, որ մարդիկ լեզուակռիւ էին տալիս, առանց լաւ հասկանալու, թէ ինչու են անում այդ և ինչ են ասում։ Նկատելի էր միայն՝ մի կողմից երկիւղից զսպուած զայրոյթ,

միւս կողմից՝ սեփական գերազանցութեան և իշխանութեան գիտակցութիւն։ Նեխլիւդովին չատ անախորժ էր լսել այդ լուրը, և նա աշխատեց վերադառնալ բուն հարցին,—որոշել վարձագինը և վճարի ժամանակը։

—Ուրեմն ինչ էք ասում հողի համար։ Ուզում էք թէ չէ։ Ես ինչ վարձ կը տաք, եթէ ամբողջ հողը ձեզ տամ։

Ապրանքը ձերն է, դուք պէտք է գինը նշանակէք։

Նեխլիւդովը նշանակեց գինը։ Ինչպէս միշտ լինում է, չը նայելով, որ Նեխլիւդովի ասած գինը ցած էր այն գնից, որ տալիս էին ամբողջ չրջակայքում, այնուամենայնիւ գիւղացիները սկսեցին սակարկել, ասելով, թէ գինը բարձր է։ Նեխլիւդովը կարծում էր, թէ իր առաջարկութիւնը ուրախութեամբ կ'ընդունուի, բայց գիւղացիների դէմքերի վրայ ուրախութիւն չէր նկատւում ամենևին։ Նեխլիւդովը միայն այն բանից կարող էր եզրակացնել, թէ իր առաջարկութիւնը ձեռնտու է նրանց, որ երբ խօսք ծագեց թէ ամբողջ հասարակութիւնը կամ ընկերութիւնն է վերցնելու հողը, սաստիկ թունդ վէճ սկսուեց այն գիւղացիների մէջ, որոնք ուզում էին այդ գործից դուրս գցել վճարելու կարողութիւն չունեցող չքաւոր գիւղացիներին, և այն գիւղացիների մէջ, որոնց ուզում էին դուրս գցել. վերջապէս, գերմանացու չնորհիւ, որոշեցին վարձագինն ու վճարի ժամանակը, և գիւղացիները բարձրաձայն խօսելով գնացին դաբրիվայրով դէպի գիւղը, իսկ Նեխլիւդովը գնաց սենեակը՝ կառավարչի հետ միասին պայմանագրութեան նախագիծը կազմելու։

Սրանից հետ կարգադրուեց այնպէս, ինչպէս ուզում և սպասում էր Նեխլիւդովը,—գիւղացիները հողը ստացան չրջակայքում եղած գներից 30 տոկոս էժան գնով. նրա եկամուտը հողից՝ գրեթէ կէսով չափ պակասեց, բայց էլի աւելի քան բաւական էր նրան, մանաւանդ որ նա ստացաւ ծախած անտառի գինը և ստանալու էր ծախուելիք գործիքների և անասունների փողը։ Ըստ երևոյթին, ամեն ինչ հրանալի յաջողուել էր, բայց Նեխլիւդովին պաշարել էին տխրութեան, ձանձրութեան և, որ գլխաւորն է, ամօթի զգացմունքներ։ Նա տեսնում էր, որ գիւղացիները դժգոհ էին ու ինչ-որ աւելի մեծ բանի էին սպասում, թէև նրանցից ոմանք չնորհակալական խօսքեր էին ասում իրան։ Դուրս էր գալիս, որ նա իրան զրկել էր չատ բանից, իսկ գիւղացիների համար չէր արել այն, ինչ ակնկալում էին նրանք։

Հետևեալ օրը տնային պայմանագրութիւնը ստորագրեցին և Նեխլիւդովը, ինչ-որ անասելի թողած լինելու զգացմունքով, նստեց կառավարչի—կայարանից կանչած կառապանի ասելով—

հրաչալի եռաձի կառքը և ուղևորուեց դէպի կայարանը, մնաս բարև ասելով ճանապարհ դնելու համար հաւաքուած ընտրեալ ծերունի գիւղացիներին, որոնք տարակուսաբար և դժգոհութեամբ թափ էին տալիս գլուխները նրա յետևից։ Նեխլիւդովը դժգոհ էր իրանից։ Ի՞նչ բանի համար էր դժգոհ, նա չը գիտէր, բայց ամբողջ ժամանակը մի տեսակ տխուր էր և ամօթահար։

III

Կուզմինսկոէից Նեխլիւդովը գնաց մօրաքոյրներից նրան ժառանգութիւն մնացած կալուածը, այն կալուածը, ուր նա առաջին անգամ տեսել էր Կատիւշային։ Նա ուզում էր այդ կալուածում էլ հողը էժան գնով տալ գիւղացիներին, և բացի այդ՝ ուզում էր իմանալ այն բոլորը, ինչ որ դեռ ևս կարելի էր իմանալ Կատիւշայի մասին և նրա ու իր երեխայի մասին,—ճիշտ է արդեօք, որ այդ երեխան մեռել է և ինչպէս է մեռել։

Նա հասաւ Պանովո վաղ առաւօտեան, և առաջին բանը, որ գրաւեց նրա ուշադրութիւնը, երբ նա մտաւ իր կալուածի տան բակը, այն լքուած և քայքայուած դրութիւնն էր, որի մէջ գտնուում էին բոլոր չէնքերը և մանաւանդ տունը։ Վաղուց չը ներկուած թիթեղէ տանիքը կարմրին էր տալիս ժանգից և մի քանի թիթեղներ ցցուել էին վեր, երևի սաստիկ քամու ոյժից պոկ գալուց յետոյ. տան երեսին քաշած տախտակը տեղ-տեղ պոկոտուած էր՝ անչուշտ մարդկանց ձեռքով, որոնք ժանգոտած մեխերը ծռելով պոկել էին այն տեղերում, որտեղ հեչտ էր եղել այդ։ Երկու պատչգամբն էլ,—թէ տան ճակատինը, թէ նրա համար առանձնապէս յիշատակելի յետին կողմինը,—փտել էին և կոտրտուած էին, այնպէս որ մնում էին միմիայն երկար ձողերը, պատուհաններից մի քանիսի ապակիների տեղ տախտակներ էին գցուած, և տան այն թևը, որի մէջ ապրում էր գործակատարը, և՛ խոհանոցը, և՛ ախոռատները—բոլորը քայքայուել էին ու խուճապել։ Միայն պարտէզն էր, որ ոչ միայն չէր փչացել, այլ և աճել էր, խտացել ու այժմ ծաղկել էր ամբողջապէս. ցանկապատի յետևից, սպիտակ ամպերի նմանութիւն տալով, երևում էին բալի, խնձորի ու սալորի ծաղկավիթխիթ ծառեր։ Սղրևանիների թումբն էլ ծաղկած էր ճիշտ այնպէս, ինչպէս 11 տարի առաջ, այն ժամանակ, երբ Նեխլիւդովը 16 տարեկան Կատիւշայի հետ զօրեկի խաղալիս վայր ընկաւ այդ թումբի յետևում ու եղինջը դաղեց ձեռքերը։ Կուենին, որ Սոֆիա Իվանովնան անկել էր տան մօտ և որ այն ժամանակ ցցի բարձրութիւն ունէր, այժմ ահագին ծառ էր դարձել, որից կար-

գին գերան դուրս կը գար, և ամբողջապէս ծածկուել էր գեղնա-
կանաչագոյն ու աղուամազի պէս քնքոյշ փչատերևներով: Գետը
ափերից դուրս չէր եկել և աղմկում էր ջրաղացում, վայր
թափուելիս: Գետի այն կողմը, մարգագետնում խառնիխուռն
արածում էր գիւղացիների խայտաճամուկ նախիրը: Գործակա-
տարը, որ թերաւարտ սեմինարիստ էր, ժպտալով հանդիպեց
Նեխլիւդովին բակում, չարունակելով ժպտալ՝ հրաւիրեց նրան
դրասենեակը և այնտեղ էլ ժպիտն երեսին, կարծես այդ ժպի-
տով ինչ-որ առանձին բան խոստանալով, մտաւ միջնորմի յե-
տևը: Միջնորմի յետևում չչնջացին ու լռեցին: Կառապանը,
թէյադրամը առանալով, հեռացաւ, և ամեն ինչ խաղաղուեց:
Դրանից յետոյ իսկոյն պատուհանի մօտով վազելով անցաւ մի
ոտաբոբիկ աղջիկ ասղագործ չապկով ու մորթէ ականջօղերով
և աղջկայ յետևից՝ մի գիւղացի հասակ կօչիկներով:

Նեխլիւդովը նստեց պատուհանի մօտ ու սկսեց նայել պար-
տէզին ու ականջ դնել: Փոքրիկ փեղկաւոր պատուհանով՝ փո-
րած հողի հոտ էր փչում և գարնանային թարմ օդ, որ թեթև
կերպով շարժում էր նրա քրտնած ճակատի մազերը և պա-
տուհանի դանակով կտրտուած դարակի վրայ ընկած տոմսակ-
ները: Գետափին, իրար ընդմիջելով, «տըպ-տըպ-տըպ, տըպ-տըպ
տըպ» չրպտում էին լուացք անող գեղջկուհիների թակերը և
այդ հնչիւնները սփռւում էին խոչարգելուած գետի՝ արևի առաջ
փայլող խորշում ու ջրաղացից միակերպ ու միաչափ լսւում էր
ջրի թափման ձայնը:

Եւ յանկարծ Նեխլիւդովը ոչ միայն յիշեց, որ վաղուց, շատ
վաղուց, իր ջահել ու անմեղ ժամանակը, իսկ և իսկ այդպէս
ինքը լսում էր գետափին թաց լուացքաչորի դիպչող թակերի այդ
ձայները՝ ջրաղացի միաչափ աղմուկի հետ, և իսկ և իսկ այդպէս
գարնանային հովը չարժում էր նրա թաց ճակատի մազերը ու
պատուհանի դանակով կտրատած դարակի վրայի տոմսակները
—ոչ միայն յիշեց իրան այնպէս, ինչպէս էր 18 տարեկան պա-
տանի եղած ժամանակը, այլ և զգաց իրան բոլորովին այնպէս,
նոյնքան թարմ, նոյնքան մաքուր և նոյնպիսի անվերջ ու ամե-
նամեծ հնարաւորութիւններով լի ապագայով,—բայց միևնոյն
ժամանակը, ինչպէս լինում է երազում, նա գիտէր, որ այդ ար-
դէն գոյութիւն չունի, ուստի և սիրտը սաստիկ տխրեց:

—Երբ կը հրամայէք ճաշ տալ,—հարցրեց գործակատարը
ժպտալով:

—Ե՞րբ ուզէք. ես սոված չեմ: Դեռ կ'երթամ գիւղը մի քիչ
պտտելու:

—Գուցէ կը հաճէք մտնել տունը նայել. ներսը ամեն ինչ
կարգին է: Բարեհաճեցէք նայել. եթէ դրսից...

—Չէ, յետոյ, իսկ այժմ ասացէք, խնդրեմ, ձեզ մօտ Մատ-
բեօնա Կարինա անունով կին կայ:

Կատիւշայի մօրաքոյրն էր այդ:

—Ինչպէս չէ, գիւղումն է,—ոչ մի կերպ չեմ կարողանում
օգտիլը գալ: Օղետուն է պահում: Գիտեմ այդ, նախատում եմ,
հայհոյում եմ, իսկ արձանագրութիւն չեմ կազմել տալիս, որով-
հետև մեղքս գալիս է. պառաւ կնիկ է, թոռներ ունի,—ասաց
գործակատարը դարձեալ նոյն ժպտուով, որ արտայայտում էր
և՛ յանկուրթիւն դուրս գալու տիրոջը, և՛ հաւաստիութիւն, որ
Նեխլիւդովին էլ, նրա պէս, հասկանում է բոլոր գործերից:

—Ո՞րտեղ է ապրում նա: Կ'ուզէի գնալ նրա մօտ:

—Գիւղի ծայրումը, այն կողմից, երրորդ խրճիթում: Ջախ
կոան վրայ աղիւսէ մնակ կայ, իսկ մնակից յետոյ իսկոյն
նրա խրճիթն է: Բայց աւելի լաւ է՝ ես ինքս կը գամ ձեզ ցոյց
կը տամ,—ուրախ-ուրախ ժպտալով ասաց գործակատարը:

—Չէ, չնորհակալ եմ, ես կը գտնեմ, իսկ դուք, խնդրեմ
հրամայեցէք յայտնեն գիւղացիներին, որ հաւաքուեն. խօսելիք
ունեմ հետները հողի մասին,—ասաց Նեխլիւդովը, մտադիր լի-
նելով այստեղ էլ գիւղացիների հետ այնպէս վերջացնել, ինչ-
պէս կուզմինսկոէ կալուածում և, եթէ կարելի լինի, հէնց այս
երեկոյ:

IV

Դարպասից դուրս գալով, Նեխլիւդովը՝ գառնալեզուով և
վայրի խնկենիով ծածկուած արօտատեղի միջով անցնող շաւղի
վրայ հանդիպեց խայտաճամուկ գոմնոցով և մորթէ ականջօղե-
րով մի գիւղացի աղջկայ, որ վերադառնում էր գիւղը, արագ-ա-
րագ փոխելով հասուխկ բոբիկ ոտները: Աղջիկը արագ-արագ ճօ-
ճում էր ձախ ձեռքը իր ընթացքի լայնքին, իսկ աջով պինդ աղմկել
էր փորին մի կարմիր աքաղաղ: Աքաղաղը իր օրօրուող կարմիր
կատարով բոլորովին հանդիստ էր թւում և միայն սև ոտներից
մէկը անդադար բարձրանում ու ցածանում էր, մագիլներով
ճանկելով աղջկայ գոմնոցը: Երբ աղջիկը սկսեց մօտենալ աղա-
յին, սկզբում չափաւորեց քայլերը ու վազքից անցաւ սովորա-
կան քայլուածքի, իսկ հաւասարուելով նրան՝ կանգ առաւ ու,
գլուխը դէպի յետ թափ տալով, բարևեց նրան և միայն այն
ժամանակ, երբ աղան անցաւ նրա մօտով, նորից վազ տուեց
աքաղաղը գրկին: Իջնելով դէպի ջրհորի կողմը, Նեխլիւդովը

հանդիպեց անթափ քաթանից կեղտոտ վերնաշապիկ հագած մի պառաւ կնոջ, որ կռացած մէջքին դրած տանում էր լիք ու ծանր դոյլեր։ Պառաւը զգուշութեամբ դոյլերը վայր դրեց և, նոյնպէս գլուխը նախապէս դէպի յետ թափ տալով, բարեւեց նրան։

Ջրհորից այն կողմը դիւղն էր սկսւում։ Պայծառ ու տաք օր էր. ժամի 10-ին արդէն արեւը կծում էր. ամպերը սկսում էին կիտուել և երբեմն ծածկում էին արեի երեսը։ Ամբողջ փողոցում կծու, թունդ ու անախորժ աղբահոտ էր կանգնած, որ փչում էր լպրծուն ճանապարհով դարիվեր ձգուող սայլերից և, գլխաւորապէս, բակերի փորիորած աղբից, որոնց բաց դարպասների մօտով անցնում էր Նեխլիւդովը։ Սայլերի յետեից դարիվերով բարձրացող դիւղացիները, ոտաբոբիկ ու աղբաջրի մէջ թաթախուած վարտիքներով ու վերնաշապիկներով, յետ էին նայում բարձրահասակ ու ջահել աղային, որ, արեի առաջ փայլող մետաքսէ ժապաւէնով մոխրագոյն գլխարկը գլխին, դիւղի միջով բարձրանում էր, քայլամէջ դիպչելով գետնին փայլուն գլխով պսպղան ու յօդաւոր ձեռնափայտը։ Դաշտից վերադարձող դիւղացիները ամբոխուում էին դատարկ սայլերի վրայ և, գլխարկները հանելով, զարմանքով դիտում էին իրանց փողոցով անցնող արտասովոր մարդուն. կանայք դուրս էին գալիս գաւիթները ու դարպասների առաջը և իրար յետ էին տալիս նրան, աչքերը յետեիցը մանծելով։

Չորրորդ դարպասի մօտ Նեխլիւդովին կանգնեցրեցին դարպասից ճանչալով դուրս եկող երկու սայլեր, որոնք գլխուն բարձած էին ճիտած աղբով և աղբի վրայից փռած էր խոիր վրան նստելու համար։ Առաջին սայլի յետեից ոտաբոբիկ գալիս էր մի վեց տարեկան տղայ։ Մի արեխաւոր ջահել գեղջուկ լայնլայն քայլերով քշում էր ձիուն դարպասից դուրս։ Մի երկրորդ, հապտաժեռ մարուկ դուրս թռաւ դարպասի մէջից, բայց, Նեխլիւդովից խրտնելով, հոգ եկաւ սայլին ու, ոտները անխնայաբեր խփելով, դուրս պրծաւ դարպասից մատակի առջևով, որ անհանգստացած ու մի թեթև խրխինջ արձակելով, դուրս էր քաշում դարպասից ծանր սայլը։ Միւս ձիու ոտնձից քաշում էր մի նիհար ու ժիր և նոյնպէս ոտաբոբիկ ծերուկ, չերտաւոր վարտիքով և երկար ու կեղտոտ վերնաշապկի տակից դուրս պրծած վոխտ ողնաշարով։

Երբ որ սայլերը դուրս եկան ճիտուն ճանապարհը, ծերուկը վերադարձաւ դէպի դարպասը ու գլուխ տուեց Նեխլիւդովին։

—Ես ասեմ, մեր աղջիկպարոնների քրոջ որդին ես։

—Այո, այո։

—Գալուստդ բարի. ինչ է, եկել ես տեսնես՝ ինչպէս ենք ապրում,—ասաց չատախօս ծերուկը։

—Այո, այո։ Չ՞ը, ինչպէս էք, լաւ էք,—հարցրեց Նեխլիւդովը, չիմանալով ինչ ասել։

—Ի՞նչպէս պէտք է լինենք։ Շան օր է մեր օրը,—կարծէք հաճոյքով ծոր տալով ասաց չատախօս ծերուկը։

—Ինչո՞ւ է վատ ձեր օրը,—հարցրեց Նեխլիւդովը, մտնելով դարպասի տակը։

—Այնպէս, չան օր է էլի,—ասաց ծերուկը, գնալով Նեխլիւդովի յետեից դէպի ծածկի տակը, ուր աղբը մաքրուած էր մինչև հողը։

Նեխլիւդովը նրա յետեից մտաւ ծածկի տակ։

—Այդպէս տասներկու հոգի կայ մեր ընտանիքում,—չարունակեց ծերուկը, ցոյց տալով երկու կանանց վրայ, որոնք՝ գլխաչորերը յետ ընկած, իրանք քրանքոում կորած ու փչչները քչտած և մինչև կէսը աղբաջրում կեղտոտուած մերկ սրունքներով, եղանները ձեռքերին կանգնած էին դեռ չիատակուած աղբակոյտի թմբի վրայ։—Սմեն ամիս 6 դուռ հայ է գնում. պէտք է առնել հա առնել, իսկ այդքան փող որտեղից է լինի։

—Իսկ տանու հայը մի՞թէ չի բաւականանում։

—Տանու հայը,—արհամարհական ժպիտով հարցրեց ծերուկը։—Երեք հոգու հող ունեմ, իսկ այս տարի ընդամենը 8 բարդոց էինք հաւաքել,— մինչև նոր տարուայիան էլ չը հերիքեց։

—Հապա ինչպէս էք անում։

—Ի՞նչպէս պէտք է անենք. մեկին մշակութեան տուեցի կալուածը ու ձերդ ողորմածութիւնից մի քիչ փող վերցրի։ Մինչև բարեկենդանը տառնալիքը արդէն առել ենք, իսկ տուրքերը դեռ չենք տուել։

—Իսկ ինչքան է տուրքը։

—Իմ տանից չորս ամսենը 17 ռուբլի է դուրս գալիս։ Օ՜ֆ, Աստուած թշնամուս չը տայ այսպիսի կեանք. ինքներս էլ չենք իմանում, թէ ինչպէս ենք կարողանում դլուխներս պահել։

—Իսկ կարելի է ձեր տունը մտնել,—հարցրեց Նեխլիւդովը, առաջ գնալով փոքրիկ բակի միջով և իատակած տեղից անցնելով դէպի դեռ նս տեղումը մնացած և եղաններով չուռ տուած սաստիկ հոսաւէտ դեղնա-զաւրանագոյն աղբաչերտերը։

—Ինչու չէ, համեցէք,—ասաց ծերուկը, և արագ քայլելով փափուկ աղբի միջով, որ դուրս էր գալիս բոլիկ ոտների մատների արանքներով, առաջ անցաւ Նեխլիւդովից ու բաց արեց խրճիթի դուռը։

Գեղջկուհիները, չիտկելով գլխաշորերը և վայր թողնելով փեչերը, վախուորած նայում էին իրանց տունը մտնող մաքուր հագնուած և ոսկեկոճակ թևնոցներով աղային։

Խրճիթից չապկահան դուրս վազեցին երկու փոքրիկ աղջիկներ։ Կռանալով ու գլխարկը հանելով՝ Նեխլիւդովը մտաւ սրահը և այնտեղից նեղ ու կեղտոտ խրճիթը, ուր թթուահամ կերակուրների հոտ էր կանգնած և որ ամբողջապէս բռնուած էր ոստայնագործիքներով։ Ներսում վառարանի մօտ կանգնած էր մի պառաւ, վախտ, արևառ և ջլուտ կռները քշտած։

—Մեր աղան է, հիւր է եկել մեզ մօտ,—ասաց ծերուկը։

—Գլխներիս վրայ,—փաղաքշաբար ասաց պառաւը, վայր թողնելով քշտած թևքերը։

—Ուզեցի տեսնել, թէ ինչպէս էք ապրում,—ասաց Նեխլիւդովը։

—Ինչպէս տեսնում ես, այնպէս էլ ապրում ենք։ Խրճիթներս քիչ է մնում փուլ գայ ու մէկին ու մէկին տակովը անի։ Իսկ ծերուկս ասում է, թէ այս էլ լաւ է։ Մենք էլ փառաւոր մեզ համար ապրում ենք,—ասում էր ժիր պառաւը, ջղայնաբար շարժելով գլուխը։—Այ, այս րոպէիս աշխատաւորներիս հաւաքելու եմ ճաշի։

—Ի՞նչ էք ուտելու ճաշին։

—Ի՞նչ ենք ուտելու։ Լաւ-լաւ բաներ։ Առաջինը կվասով *) հաց, իսկ երկրորդը՝ հացով կվաս,—ասաց պառաւը, բանալով կիսովին փչացած ատամները։

—Ձէ, կատակը դէն կենայ, ցոյց տուէք, թէ ինչ էք ուտելու այսօր։

—Մեր ուտելիքն ես հարցնում,—ծիծաղելով ասաց ծերուկը։—Շատ հասարակ բան է։ Ցոյց տուր, պառաւ։

Պառաւը գլուխը թափ տուեց։

—Ուզում ես մեր կերակուրները տեսնել։ Ինչպէս տեսնում եմ, չատ հմուտ աղաներիցն ես։ Ամեն բան ուզում ես իմանալ։ Ասացի էլի,—կվաս ու հաց և մէկ էլ չէի, աղջկերքը երէկ աղցան բերեցին, ես էլ չէի պատրաստեցի այսօր. յետոյ էլ՝ խաչած գետնախնձոր կը լինի։

—Էլ ո՛չինչ։

—Էլ ինչ պէտք է լինի. կաթով էլ մի քիչ կը սպիտակացնենք ու պրծաւ գնաց,—ասաց պառաւը, ծիծաղելով ու դռանը նայելով։

*) Մի տեսակ թթու ըմպելիք, որ պատրաստում են հացից և նոյնպէս պտուղներից։ Ե. Թ.

Դուռը բաց էր և սրահը լինքն էր մարդկանցով։ Փոքրիկ տղաներ ու աղջիկներ և ծծկեր երեխաները գրկած գեղջկուհիներ կպել էին դռնիցը ու նայում էին տարօրինակ աղային, որ հետաքրքրւում էր գիւղացիների ուտելիքով։ Պառաւը, ակներևաբար, հպարտանում էր նրանով, որ լինքը գիտի աղայի հետ վարուել։

—Հա, աղա, մի կեանք չի մեր քաշած կեանքը,—ասաց ծերուկը։—Ո՞ւր էք իջևւում,—դառաց նա դռան մէջ կանգնածների վրայ։

—Դէ, մնաք բարև,—ասաց Նեխլիւդովը, քաշուելով ու ամաչելով, թէն լինքն էլ պարզ չէր հասկանում թէ ինչու։

—Շատ չնորհակալ ենք, որ մեզ տեսութեան եկար,—ասաց ծերուկը։

Սրահում կանգնածները, իրար վրայ խոնուելով, ճանապարհ տուին Նեխլիւդովին, որ դուրս եկաւ փողոցը ու գնաց դէպի վեր։ Նրա յետևից սրահից դուրս եկան երկու ոտաբոբիկ տղաներ, մէկը, մէջներից մեծը, կեղտոտ վերնաշապկով, որ մի ժամանակ սպիտակ էր եղել, իսկ միւսը՝ մաշուած ու խոնաւացած ալ վերնաշապկով։ Նեխլիւդովը յետ նայեց նրանց։

—Իսկ հիմա ո՞ւր ես գնալու,—հարցրեց սպիտակ հագած տղան։

—Մատրեօնա Խարինայի մօտ,—ասաց Նեխլիւդովը։—Ճանապարհ եմ ընկել։

Փոքրիկ երեխան սկսեց ծիծաղել, իսկ մեծը լուրջ կերպով հարցրեց։

—Ինչ Մատրեօնա։ Պառա՞ւ կնիկ է։

—Հա, պառաւ է։

—Օ—օ՛,—ձիդ տուեց տղան։—Այդ Սեմեօնիխան է, գիւղի ծայրումն է կենում։ Մենք քեզ կը հասցնենք։ Հո՞ւ, Ֆեդկա, ո՞ւր տանենք ցոյց տանք։

—Իսկ ձիերը։

—Էհ, բան չի լինի։

Ֆեդկան համաձայնեց, և նրանք երկուով չարունակեցին ճանապարհը դէպի վեր։

V

Նեխլիւդովը երեխաների հետ իրան աւելի լաւ էր զգում, քան մեծերի հետ, և ճանապարհին խօսակցութեան բռնուեց նրանց հետ։ Փոքրիկը ծիծաղը թողեց ու սկսեց նոյնպէս խելօք ու տեղնուտեղին խօսել, ինչպէս և մեծ երեխան։

—Ասէք տեսնենք, ո՛վ է ձեր գիւղում ամենաաղքատը։

—Ամենաաղքատը։ Միխայլօն աղքատ է, Սիմեօն Մակարօվը, մէկ էլ Մարգան չատ աղքատ է։

—Իսկ Անխեան դրանցից էլ աղքատ է։ Նրանք ակի կով էլ չունեն ու հաց են մուրում։

—Նրանք կով չունեն։ Բայց չէ՞ որ մենակ երեք հոգի են, իսկ Մարգայենց տանը հինգ հոգի են,—առարկեց մեծը։

—Հապա որ նա որբևայրի է,—պաշտպանում էր Անխեային ալ չապկաւորը։

—Շատ էլ որբևայրի է։ Մարգան էլ որբևայրու հաշուի է,—չարունակեց մեծ երեխան։—Մէկ է, նրա մարդն էլ չը կայ։

—Հապա որտեղ է մարդը,—հարցրեց Նեխլիւդօվը։

—Բանտում ոչխի է չատացնում,—ասաց մեծ երեխան, գործածելով ժողովրդական սովորական դարձուածքը։

—Սմառս աղայենց անտառում երկու փոքրիկ ծառ կտրեց, բռնեցին, նատեցրեցին։ Հինգ ամիս է, ինչ նստած է, իսկ կինը ողորմութիւն է հաւաքում ու երեք երեխայ ու մի անկեալ պառաւ պահում,—տեղնուտեղին ասաց երեխան։

—Ո՞րտեղ է ապրում այդ Մարգան,—հարցրեց Նեխլիւդօվը։

—Այ հէնց այս բակում,—պատասխանեց երեխան ցոյց տալով մօտակայ մի տուն, որի առջևում, հէնց Նեխլիւդօվի գնացած չաւղի վրայ, կանգնած էր մի չիկապլուխ պատիկ աղայ, որ հազիւ հաղ էր կարողանում կենալ ծնկներումը դուրս ճկուած ծուռ ոտների վրայ ու կանգնած տեղումը օրօրւում էր։

—Վասկա, այդ ո՞ւր ես հասել, չար Ցուլիանոս,—գոռաց կեղտոտ ու գորշ, կարծես վրան մոխիր ցանած, վերնաշապկով մի կին, որ, դուրս սլրծնելով խրճիթից, վախտորած դէմքով վազ տուեց Նեխլիւդօվի առաջը, խտտեց երեխային ու ներս տարաւ, կարծես վախենալով, թէ Նեխլիւդօվը մի բան կը բերի իր զաւակի գլխին։

Այդ հէնց այն կինն էր, որի մարդը Նեխլիւդօվի անտառից կտրած երկու փոքրիկ ծառերի համար նստած էր բանտում։

—Իսկ Մաարեօնան ինչպէս, աղքատ է,—հարցրեց Նեխլիւդօվը, երբ որ արդէն մօտենում էին նրա խրճիթին։

—Ո՞րտեղի աղքատն է, արաղ է ծախում,—վճռաբար պատասխանեց ալ չապկաւոր նիհար երեխան։

Հասնելով Մաարեօնայի տնակին, Նեխլիւդօվը յետ ուղարկեց երեխաներին և մտաւ սրահը ու այնտեղից խրճիթը։ Պա-

ռաւի տնակը վեց արշին երկարութիւն ունէր, այնպէս որ եթէ մի մեծ մարդ պառկէր վառարանի յետևում դրուած մահճակալի վրայ՝ չէր կարողանայ կարգին մեկնուել։ «Այս մահճակալի վրայ է աղատուել ու յետոյ հիւանդ պառկել Կատիւշան»,—մտածեց նա։ Գրեթէ ամբողջ խրճիթը բռնել էր մի ոստայնագործիք, որ այն ժամանակ, երբ Նեխլիւդօվը՝ գլուխը ցածրիկ դռանը խփելով ներս մտաւ, պառաւը իր մեծ թոռնուհու հետ սարքում էր։ Աղայի յետևից երկու թոռնիկներ էլ գլխապատառ ներս վազեցին ու դռան կողքի տախտակները բռնելով կանգ առան։

—Ո՞ւմ էք ուզում,—բարկացած հարցրեց պառաւը, որ վատ տրամադրութեան մէջ էր, որովհետև գործիքը չէր յաջողում լաւ սարքել, և որ, բացի այդ, իբր գաղտուկ օղի ծախող, վախենում էր անծանօթ մարդկիկներից։

—Այստեղի կալուածատէրն եմ։ Խօսելիք ունեմ ձեզ հետ։

Պառաւը լուռ, ուշի ուշով նայում էր նրան. յետոյ յանկարծ բոլորովին կերպարանափոխուեց։

—Ախ, դու՛ես եղել, աչքիս լոյսը, իսկ ես, յիմարագլուխս, չը ճանաչեցի քեզ. անցորդի մէկը կը լինի էլի, ասում էի,—կեղծ փաղաքշական ձայնով սկսեց խօսել պառաւը։—Ներողութիւն կ'անես, ի սէր Աստուծոյ։

—Չէր կարելի, որ առանձին խօսէինք,—ասաց Նեխլիւդօվը, նայելով բաց դռանը, ուր կանգնած էին երեխաները, իսկ նրանց յետևին մի նիհար կին, գրկին բռնած մի դունատ, ճլերքանման, բայց դեռ ևս ժպտուն երեխայ՝ զանազան կտորտանքներից կարած թաւասակով։

—Ի՞նչ է, մարդ չէք տեսել. մի ձեռնափայտս բեր, ես դրանց ցոյց տամ,—գոռաց պառաւը դռան մէջ կանգնածների վրայ։—Փակի՛ էլի, ինչ ես մաիկ տալիս։

Երեխաները հեռացան և հիւանդ մանուկը գրկած կինը փակեց դուռը։

—Ես էլ կարծում եմ, թէ ով է եկել։ Դու մի ասա իմ աղան է, իմ գլխի թագաւորն է, իմ աչքի լոյսն է,—ասում էր պառաւը։—Լայաղ արեցիր, մեր չէմքը ոտք դրեցիր, իմ գոհար աղաս։ Այստեղ նստիր, ձերդ վեհամափայլութիւն, այ այստեղ իշոանուկի վրայ,—ասում էր նա, գոգնոցով սրբելով իշոանուկը։ Ես էլ մտածում եմ, թէ որ սատանան է բերել այս անցորդին, իսկ դու՛ մի ասա դու՛ ես եղել, ձերդ վեհամափայլութիւն, իմ անուշիկ, իմ բարերար, իմ հայցատու աղաս։ Ներողութիւն կանես, ոտիդ մատաղ, պառաւ եմ, խելքս յետ եմ տուել, աչքերիս էլ լոյս չի մնացել։

Նեխլիւդօվը նստեց, իսկ պառաւը կանգնեց նրա առաջը,

երեսը ալ ձեռքին յենած ու ձախ ձեռքով աչքի սուլուլիկ արմունկը բռնած, և սկսեց խօսել երգեցիկ ձայնով.

—Դու էլ, ձերդ վեհամիայլուԹիւն, պառաւել ես. այն ժամանակը ոնց որ սրսռան բողկ լինէիր, իսկ հիմա այդ ինչ ես դարձել։ Երևում է դու էլ հոգսեր ունես։

—Ես եկել եմ քեզնից հարցնելու, յիշում ես արդեօք Կատերինա Մասլովային։

—Ի՞նչպէս չը յիշեմ Կատերինային. չէ՞ իմ քրոջ աղջիկն է։ Ի՞նչպէս չը յիշեմ. ինչքան արցունք եմ Թափել նրա պատճառով։ Ինձ ամեն ինչ յայտնի է. է՛, աչխարհք է, կը պատահի. ով կայ, որ Աստուծու առաջ մեղաւոր չը լինի ու Թաղաւորի առաջ յանցաւոր։ Ջահել էիք, Թէյ ու սուրճ էիք խմում, ու մեղք էր, պատահեց։ Ի՞նչ արած։ Ուրիշ բան է, եԹէ դու նրան ձգած լինէիր. բայց դու աղայավարի պարգևատրեցիր նրան. հարիւր ռուբլի ցնծացրեցիր։ Իսկ նա ինչ արեց։ Չը կարողացաւ խելք ժամ գալ։ ԵԹէ ինձ լսած լինէր, կարող էր կարգին ապրել։ Թէկուզ իմ քրոջ աղջիկն է, բայց պէտք է ուղիղն ասեմ, որ անպէտք աղջիկ է։ Գիտես, յետոյ ինչ կարգին տեղ գտայ նրա համար. բայց չէ, չուզեց խոնարհ մնալ, հայհոյեց աղային։ Մեզ կը սազի աղաներին հայհոյել. ի հարկէ իսկոյն ճանապարհ դրեցին։ Այնուհետև էլ կարող էր կարգին ապրել անտառապահ մօտ, բայց էլի չուզեց։

—Ուզում էի հարցնել երեխայի մասին։ Ջեզ մօտ աղաւուեց նա, չէ՞։ Ո՞ւր է երեխան։

—Երեխայի համար այն ժամանակ շատ լաւ կարգադրեցի։ Կաթիչան շատ Թունդ հիւանդ էր, ասում էի՝ էլ չի վեր կենայ։ Ես էլ երեխային մկրատել տուեցի, ինչպէս պէտքն է, ու անտէր երեխաների ապաստարանը ուղարկեցի։ Տեսնում էի՝ մայրը մեռնում է, չէի ուզում խեղճ հրեշտակիկ երեխային տանջել այստեղ։ Ուրիշները երեխային պահում են, բան չեն տալիս ուտելու ու խեղճիկը մեռնում է. բայց ես այդպէս չարեցի. ասացի, ոչինչ, նեղութիւն կը քաշեմ, ապաստարան կ՚ուղարկեմ։ Փող էլ, վառք Աստուծու, կար. տուեցի, տարան։

—Իսկ համար ունէր։

—Համար ունէր, բայց երեխան տանելուն պէս մեռել էր։ Կնիկն ասում էր, բերեցի Թէ չէ, հոգին տուեց։

—Ի՞նչ կնիկ։

—Ապաստարան տանողը։ Սկօրօդնօէ գիւղումն էր ապրում։ Հէնց դրանով էր պարապում։ Մալանեա էր անունը. հիմա նա էլ մեռել է։ Շատ խելօք կնիկ էր։ Գիտես, ինչպէս էր

անում։ Երբ որ մի երեխայ էին բերում մօտը, վերցնում էր ու տանը պահում, կերակրում էր, մինչև որ պէտք եղած Թիւը լրանար։ Հէնց որ երեք կամ չորս երեխայ էր հաւաքւում մօտը, վեր էր կենում տանում Մոսկուա, ապաստարանը։ Շատ էլ խելօք կերպով էր սարքել. մի մեծ օրօրոց էր չինել, երկուտեղանիի նման, այնպէս որ այս կողմիցն էլ տեղ կար, այն կողմիցն էլ։ Բռնելու տեղ էլ ունէր։ Վերցնում էր, չորսին էլ պառկացնում մէջը գլուխները իրարից հեռու, որ իրար չը խփէին, իսկ ոտները իրար մօտ, ու այդպէս էլ տանում էր։ Բերանները պռուկ էր դնում, խեղճիկները ծծում էին ու ձայն չէին հանում։

—Է՛, յետոյ։

—Ցետոյ, Կատերինայի երեխային էլ այդպէս տարաւ։ Բայց առաջ մէկ-երկու չաբաթ մօտը պահել էր ու երեխան դեռ տանը հալ ու մաշ էր եղել։

—Լաւ երեխայ էր,—հարցրեց Նեխլիւդովը։

—Աննման բան էր։ Իսկ և իսկ քեզ էր գցել,—աւելացրեց պառաւը, ԹարԹելով պուպուշ աչքի մէկը։

—Ինչու՞ էր մաչուել։ Երևի, լաւ չէր կերակրել։

—Ի հարկէ, ինչպէս պէտք է կերակրէր։ Անուն է, Թէ կերակրում էր։ Հօ իր երեխան չէր. այնքան է, որ կենդանի տեղ հասցնէր։ Ասում էր, հէնց Մոսկուա հասցրել էր, տեղն ու տեղը հոգին տուել էր։ Վկայական էր բերել այնտեղից, ինչպէս հարկն է։ Շատ խելօք կին էր։

Այդքանը միայն կարողացաւ իմանալ Նեխլիւդովը։

VI

Էլի գլուխը դիպցնելով Թէ խրճիթի, Թէ սրահի դռանը, Նեխլիւդովը դուրս եկաւ փողոց։ Սպիտակ ու ալ չապկաւոր երեխաները սպասում էին նրան։ Մի քանի ուրիշ երեխաներ էլ էին միացել նրանց հետ։ Մի քանի կանայք էլ էին սպասում նրան ծծի երեխաները գրկներին, և նրանց Թւում կար նաև այն նիհար կինը, որ Թեթև կերպով գրկին բռնել էր կլոտորտանքներից կարած Թաւակով անարիւն երեխային։ Այդ երեխան անընդհատ տարօրինակ կերպով ժպտում էր իր ամբողջ ներունական դէմքով։ Նեխլիւդովը գիտեր, որ այդ՝ տանջանքի ժպիտ է։ Նա հարցրեց, ով է այդ կինը։

—Այն Անիսեան է, որ քեզ ասում էի,—ասաց մեծ երեխան։

Նեխլիւդովը դիմեց Անիսեային։

—Ի՞նչպէս ես ասլրում,—հարցրեց նա։—Ի՞նչպէս ես կեբակրւում։

—Ի՞նչպէս։ Ողորմութիւն եմ հաւաքում,—պատասխանեց Անիսեան ու լաց եղաւ։

Իսկ ծերունակերպ երեխան բերանը չռած ժպտում էր, կծկելով իր որդանման բարակ ոտները։

Նեխլիւդօվը քսակը հանեց ու տասը ռուբլի տուեց Անիսեային։ Երկու քայլ չարած, յետևիցը հասաւ մի ուրիչ կին՝ երեխան գրկին, յետոյ մի պառաւ, յետոյ էլի մի կին։ Բոլորն էլ իրանց աղքատութեան մասին էին խօսում ու օգնութիւն էին խնդրում։ Նեխլիւդօվը բաժանեց այն բոլոր 60 ռուբլու չափ մանր թղթադրամը, որ կար քսակումը, և սարսափելի վշտահար սրտով վերադարձաւ տուն, այսինքն գործակատարի բնակարանը։ Գործակատարը ժպտալով հանդիպեց Նեխլիւդօվին ու յայտնեց, որ գիւղացիք երեկոյեան կը հաւաքուին։ Նեխլիւդօվը չնորհակալութիւն յայտնեց նրան և, առանց ներս մրտնելու, գնաց պարտէզը, ուր մեն գալով խնձորի ծաղիկների ապիտակ թերթիկներով ծածկուած ուղիներով, մտածում էր այն բոլորի մասին, ինչ որ տեսել էր այդ օրը։ «Ժողովուրդը ջնջըւում է, ընտելացել է իր ջնջուելուն, նրա մէջ կենսագործութեան այնպիսի ձևեր են գոյացել, որոնք յատուկ են ջնջըմանն, երեխաների մահացութիւն, կանանց աշխատանք իրանց ոյժերից վեր, անուղի պակասութիւն ամենքի, մանաւանդ ծերերի համար։ Եւ այնպէս աստիճանաբար է ժողովուրդը այդ դրութեան մէջ ընկել, որ ինքը չի նկատում այդ դրութեան սարսափելիութիւնը և չի դանգատւում նրանից։ Ուստի և մենք էլ բնական ենք համարում նրա դրութիւնը և կարծում ենք, թէ հէնց այդպէս էլ պէտք է լինի նա»։ Այդ բոլորը այն աստիճան պարղ էր այժմ իր համար, որ նա անչափ զարմանքով էր մտածում, թէ ինչպէս է, որ մարդիկ չեն ուտում և ինքը այնքան ժամանակ չէր ուտում այդքան ակներև մի բան։ Բոլորովին պարզ էր, որ երեխաները և ծերերը կոտորւում են, որովհետև կաթ չունեն, իսկ կաթ չը կայ, որովհետև հող չը կայ, որի վրայ կարելի լիներ տաւար արածացնել և խոտ ու հացաբոյս հաւաքել։ Եւ նա իր գլխում մի ծրագիր կազմեց, որի համաձայն պէտք է հողը գիւղացիներին վարձով տար որոշ վճարով, այն պայմանով, որ այդ վճարը գիւղացիների սեփականութիւն համարուի, որպէս զի նրանք այդ գումարով տուրքերը վճարեն և մնացածը գործ դնեն հասարակական գործերի վրայ։

Singletax չէր այդ, բայց չատ մօտ էր նրան, այնքան, որքան հնարաւոր էր այժմեան կարգերի ժամանակ։ Գլխաւորն այն էր, որ նա հրաժարւում էր իր հողային սեփականութեան իրաւունքից օգտուելուց։

Երբ նա տուն դարձաւ, գործակատարը, առանձնապէս ուրախ ժպտալով, առաջարկեց ճաշել, երկիւղ յայտնելով, թէ մի գուցե կերակուրների եփն անցնի և փչանայ ամբողջ ճաշը, որ պատրաստում էր նրա կինը մորթէ ականջօղերով աղջկայ օգնութեամբ։

Սեղանը ծածկուած էր անթափ սփռոցով, անձեռոցիկի տեղ դրուած էր աղտոտած երեսսրբիչ և ունկը կոտրուած vieux-saxe (հին-սաքսօնական) սպասամանում լցրած էր գետնախնձորի ապուր այն նոյն աքաղաղով, որ փոքրիկ աղջկայ դրկին փոխէփոխ դուրս էր ցցում սև ոտներից մէկը կամ միւսը, և որ այժմ կոտրուած, նոյն իսկ յօշոտուած էր մանր կտորների, որոնք չատ տեղ ծածկուած էին աղուամազով։ Ապուրից յետոյ բերեցին տապակած նոյն աքաղաղի մսից, որ ծածկուած էր խանձած աղուամազով, և յետոյ թանհատով բլիթներ մեծ քանակութեամբ իւղով ու չաքարով։ Թէև կերակուրները ամենևին համեղ չէին, Նեխլիւդօվը սակայն ուտում էր, չը նկատելով, թէ ինչ է ուտում,—այնքան զբաղուած էր նա իր ծրագրով, որ միանգամից փարատեց այն թախիծը, որով նա վերադարձել էր գիւղից։

Գործակատարի կինը նայում էր դառն բացուածքով, մինչ մորթէ ականջօղաւոր վախուորած աղջիկը կերակուրը մօտ էր տանում, իսկ ինքը գործակատարը, հպարտանալով իր կնոջ վարպետութեամբ, քանի գնում աւելի ու աւելի ուրախ էր ժպտում։

Ճաշից յետոյ Նեխլիւդօվը, բաւական դժուարութեամբ, ներս տացրեց գործակատարին, և մասամբ ուզելով ինքն իրան ստուգել, մասամբ էլ պահանջ զգալով մէկին ու մէկին յայտնել այն բանը, որ այնքան զբաղեցնում էր նրան այժմ, հաղորդեց նրան իր ծրագիրը հողը գիւղացիներին տալու վերաբերմամբ և հարցրեց նրա կարծիքը այդ մասին։ Գործակատարը ժպտում էր, ձևացնելով, թէ այդ նոյն բանը վաղուց իր մտքովն էլ անցել է և ինքը չատ ուրախութեամբ է լսում այժմ այդ, բայց իսկապէս ոչինչ չէր հասկանում, ամենևաբար, ոչ այն պատճառով, որ Նեխլիւդօվը պարզ չէր արտայայտում իր միտքը, այլ այն պատճառով, որ այդ ծրագրով դուրս էր գալիս, որ Նեխլիւդօվը հրաժարւում էր իր օգտից ուրիշների օգտի համար, մինչդեռ այն համոզմունքը, թէ ամեն մարդ հոգս է տանում միայն իր

օգտի մասին ի վնաս ուրիշների, այնքան խոր էր արմատացել գործակատարի գլխում, որ նա ենթադրում էր, թէ ինքը ինչ որ մի բան չի հասկանում, երբ Նեխլիւդովը ասում էր, թէ հողի ամբողջ եկամուտը մտնելու է գիւղացիների հասարակական դրամագլխի մէջ։

—Հասկացայ։ Դուք ուրեմն այդ դրամագլխի տոկոսը պիտի ստանաք,—ասաց նա, ժպտից բոլորովին փայլելով։

—Չէ, ինչ տոկոս։ Հասկացէք. հողը բոլորովին տալիս եմ գիւղացիներին։

—Բայց այդպէս՝ չէ՞ որ դուք այլ ևս հասոյթ չէք ստանայ,—հարցրեց գործակատարը, դադարելով ժպտալուց։

—Այո, ես հրաժարւում եմ հասոյթից։

Գործակատարը ծանր հոգոց քաշեց ու յետոյ նորից սկսեց ժպտալ։ Այժմ նա հասկացաւ։ Հասկացաւ, որ Նեխլիւդովը չատ էլ առողջամիտ մարդ չի, և իսկոյն և նէթ սկսեց անձնական օգուտ քաղելու հնարաւորութիւն վնտռել հողից հրաժարուող Նեխլիւդովի ծրագրից և անպատճառ ուզում էր այնպէս հասկանալ ծրագիրը, որ ինքը կարողանար օգտուել Նեխլիւդովի տուած հողից։

Իսկ երբ հասկացաւ, որ այդ էլ անկարելի է, սաստիկ վշտացաւ ու այլ ևս չէր հետաքրքրւում ծրագրով և միմիայն իր պարոնին դուր գալու համար՝ չարունակում էր ժպտալ։ Տեսնելով, որ գործակատարը չի հասկանում իր ասածները, Նեխլիւդովը ճանապարհ դրեց նրան, իսկ ինքը նստեց կարտուշած ու թանաքոտած սեղանի մօտ և սկսեց գրի անցնել իր ծրագիրը։

Արևը արդէն իջել էր նոր ծաղկաւորուած լօրիի յետևը և մոծակները ամբողջ պարերով լցւում էին սենեակը ու կծոտում Նեխլիւդովին։ Միաժամանակ վերջացնելով իր աշխատանքը և լսելով դիւղում մայող հօտերի ձայնը, բացուող դարպասի ճռնչոցը և ժողովի հաւաքուած գեղջուկների խօսակցութիւնը, Նեխլիւդովը ասաց գործակատարին, որ պէտք չէ գիւղացիներին գրասենեակի առաջը կանչել, այլ ինքը կ'երթայ գիւղը, այն բակը, ուր նրանք հաւաքւում են։ Շտապով խմելով գործակատարի բերած մի բաժակ թէյը, Նեխլիւդովը գնաց գիւղը։

VII

Տանուտէրի տան մօտ կանգնած ամբոխի կողմից ժխոր էր լսւում, բայց հէնց որ Նեխլիւդովը մօտեցաւ, ամբոխը լռեց և

բոլորը, ինչպէս և Կուզմինսկոէ կալուածում, մէկ-մէկի յետևից հանեցին գլխարկները։ Այդ տեղի գիւղացիները չատ աւելի հասարակ էին հագնուած, քան Կուզմինսկոյէի գիւղացիները. կանայք ու աղջիկները մորթի կտորներ էին կրում ականջի օղերի տեղ, իսկ տղամարդիկ գրեթէ բոլորն էլ տրեխներով էին ու տնագործ վերնաշապիկներով ու բաճկոններով։ Ամենք ոտաբոբիկ էին ու միայն վերնաշապկով, ինչպէս որ աշխատանքից վերադարձել էին։

Նեխլիւդովը ճիգ գործ դրեց իր վրայ և սկսեց ճառը, յայտնելով գիւղացիներին, որ ինքը ուզում է հողը բոլորովին տալ նրանց։ Գիւղացիները լուռ մնացին և նրանց դէմքերի արտայայտութեան մէջ ոչ մի փոփոխութիւն չեղաւ։

—Որովհետև, իմ համոզմունքով,—կարմրելով ասաց Նեխլիւդովը,—ամեն մարդ իրաւունք ունի օգտուել հողից։

—Յայտնի բան է։ Հէնց այդպէս էլ պէտք է լինի,—լսուեցին ձայներ գիւղացիների մէջից։

Նեխլիւդովը չարունակելով խօսել այն բանի մասին, թէ ինչպէս պէտք է եկամուտը բաժանուի ամենքի մէջ, ասաց, որ ինքը առաջարկում է հողը վարձով վերցնել իրանց որոշած գնով և վարձապինը մտցնել հասարակական դրամագլխի մէջ, որից էլի իրանք են օգտուելու յետոյ։ Շարունակում էին լսուել հաւանութեան և համաձայնութեան խօսքեր, բայց գիւղացիների լուրջ դէմքերը գնալով աւելի ու աւելի լրջանում էի և աչքերը որոնք առաջ ուղղուած էին աղայի վրայ, խոնարհւում էին դէպի գետին, կարծես թէ նրանք չէին ուզում ամաչեցնել աղային, ցոյց տալով, որ հասկացել են նրա խորամանկութիւնը, այնպէս որ նա ոչ ոքի չի խաբի։

Նեխլիւդովը բաւական պարզ էր խօսում, գիւղացիներն էլ բթամիտ մարդիկ չէին. բայց նրան չէին կարող հասկանալ նոյն պատճառով, ինչ պատճառով որ գործակատարը երկար չէր հասկանում նրան։ Նրանք անպայման կերպով համոզուած էին, որ ամեն մարդու յատուկ է պաշտպանել իր օգուտը։ Իսկ կալուածատէրերի վերաբերմամբ նրանք մի քանի սերունդների փորձով վաղուց գիտէին, որ կալուածատէրը միշտ պաշտպանում է իր օգուտը։

—Դէ, ասէք տեսնենք, ինչքան վարձ էք ուզում դնել հողին,—հարցրեց Նեխլիւդովը։

—Ի՞նչ պէտք է դնենք։ Մենք այդ բանը չենք կարող անել։ Հողն էլ է ձերը, իրաւունքն էլ,—պատասխանեցին ամբոխի մէջից։

—Բայց չէ՞ որ դուք ինքներդ էք օգտուելու այդ վարձատրից ձեր հասարակական պէտքերի համար։

—Չէ, այդ մեր բանը չի։ Հասարակութիւնը ինքն ըստ ինքեան, այդ էլ ինքն ըստ ինքեան։

—Հասկացէք,—ժպտալով ասաց Նեխլիւդօվի յետևից եկած գործակատարը, ցանկանալով պարզել հարցը,—իշխանը հողը ձեզ փողով է տալիս, բայց այդ փողը էլի ձեր հասարակութեանն է տալիս, ձեր դրամագլխի մէջ է մանելու։

—Մենք չատ լաւ հասկանում ենք,—ասաց մի անատամ բարկացած ծերուկ, առանց աչքերը վեր բարձրացնելու։—Ոնց որ թէ բանկում լինի, իսկ մենք պէտք է ժամանակին վճարենք։ Մենք այդ չենք ուզում, որովհետև առանց այն էլ չատ ծանր է, իսկ այդպէս բոլորովին տուններս կը քանդուի։

—Այդպիսով բան դուրս չի գայ։ Աւելի լաւ է էլի առաջուայ պէս մնայ,—լսուեցին դժգոհ և նոյն իսկ կոպիտ ձայներ։

Առանձնապէս տաք կերպով սկսեցին հրաժարուել, երբ Նեխլիւդօվը յիշեց այն բանը, որ պայմանադրութիւն կը կազմի, որին ինքն էլ կը ստորագրի, գիւղացիներն էլ։

—Ի՞նչ ստորագրութիւն։ Ինչպէս աշխատել ենք, այնպէս էլ կ'աշխատենք։ Ինչի՞ պէտք է ստորագրութիւնը։ Մենք կոյր մարդիկ ենք։

—Համաձայն չենք, որովհետև անսովոր բան է։ Ինչպէս եղել է, թող այնպէս էլ լինի։ Միայն թէ սերմացուի բանը փոխեցէք,—լսուեցին ձայներ։

Սերմացուի բանը փոխել կը նշանակէր այն, որ այժմեան կարգերով կիսաթար ցանքսի համար գիւղացին իր սերմացուն պէտք է ցանէր, իսկ նրանք խնդրում էին, որ սերմացուն կատածատերը տար։

—Ուրեմն հրաժարուում էք, չէք ուզում հողը վերցնել,—հարցրեց Նեխլիւդօվը, դիմելով մի բաւական երիտասարդ, փայլուն երեսով, զգզգուած չորերով ու ոտաբոբիկ գիւղացու, որ ձկած ձախ կռան վրայ առանձնապէս ուղիղ կերպով էր պահում իր զգզգուած գլխարիկը, այնպէս, ինչպէս գինուորներն են պահում, երբ, ըստ հրամանի, հանում են գլխարկները։

—Հրամել էք,—ասաց այդ գիւղացին գինուորների սովորական խօսքերով։

—Ուրեմն, ձեր հողը բաւականանում է ձեզ,—նկատեց Նեխլիւդօվը.

—Ամենևին ոչ,—արհեստական ուրախ կերպով պատասխանեց նախկին գինուորը, հոգատարութեամբ պահելով իր առ-

ջևում զզգզուած գլխարկը, կարծէք թէ առաջարկելով ամենքին, ում կարող էր հարկաւոր գալ նա։

—Բայց էլի մի լաւ մտածեցէք իմ ասածի մասին։

Եւ Նեխլիւդօվը, որ մնացել էր զարմացած գիւղացիների վրայ, կրկնեց իր առաջարկութիւնը։

—Մտածելու ոչինչ չունենք, ինչպէս ասացինք, այն է լինելու,—բարկացած ասաց անատամ, մռայլ ծերուկը։

—Ես վաղը մինչև երեկոյ այստեղ եմ լինելու. եթէ միտքներդ փոխէք, իմաց տուէք։

Գիւղացիները ոչինչ չը պատասխանեցին։

Եւ այդպէս, Նեխլիւդօվը առանց իր նպատակին հասնելու վերադարձաւ գրասենեակը։

—Թոյլ տուէք ձեզ յայտնել, իշխան,—ասաց գործակատարը, երբ նրանք վերադարձան տուն,—որ դուք նրանց բան չէք կարող հասկացնել։ Գիւղացիները կողքաւոր մարդիկ են. հէնց որ ժողովի հաւաքուեցին, երկու ոռները մի մաչիկ կը գնեն, ու էլ տեղներիցը չարժել չի լինի։ Որովհետև աչքները վախեցած է. բայց այդ նոյն գիւղացիները, թէկուզ հէնց այն ալևորը կամ սևուկը, խելօք մարդիկ են։ Երբ որ գրասենեակն են գալիս, նստացնում ես, թէյ ես խմացնում,—ժպտալով ասում էր գործակատարը,—և խօսացնում ես, տեսնում ես, որ խելքի բուն է, մինիստր է, ինչ հարց ասես տեղն ու տեղին կը քննի։ Իսկ ժողովում բոլորովին ուրիշ մարդ է դառնում, հէնց իր էշն է քշում...

—Որ այդպէս է, չի կարելի արդեօք կանչել այստեղ այդպիսի ամենահասկացող գիւղացիներից մի քանիսին,—ասաց Նեխլիւդօվը։—Ես նրանց մանրամասն կը բացատրէի։

—Ինչո՞ւ չի կարելի,—ժպտալով ասաց գործակատարը։

—Ուրեմն վաղուայ համար, խնդրեմ, կանչէք մի քանիսին։

—Շատ լաւ. վաղը կը հաւաքեմ այստեղ,—ասաց գործակատարը և աւելի ևս ուրախ ժպտաց, տեսնելով պատչգամբի մօտ կանգնած երկու գեղջկուհիների։

Նա ինչ որ նշան արեց գեղջկուհիներին և նրանց հետ միասին գնաց դէպի յետին պատչգամբը։ Իսկ Նեխլիւդօվը, փոխանակ դրասենեակը մտնելու, նստեց պատչգամբի աստիճանների վրայ և սկսեց մտածել իր ծրագրի մասին ու երկու ձեռքով սատկացնել մոծակներին, որոնք փոթորիկից առաջ ահագին խմբերով թափւում էին նրա վրայ։ Նրա ուշքը գրաւեցին զայրացած կանացի ձայներ, որոնք ընդհատւում էին գործակատարի հանդիստ ձայնով։ Նա սկսեց ականջ դնել։

—Հոգինաես հանեցիր, ինչ ես վզներիս խաչն էլ դուրս քաշում,—ասում էր զայրացած կանացի ձայներից մեկը։

—Հո ոչինչ չէր արել. հէնց նոր էր մեջը մտել,—ասում էր միւս կանացի ձայնը։—Տուր ասում եմ։ Ինչ ես խեղճ անասունին չարչարում, երեխաներիս էլ անկաթ թողնում։

—Փողը տուր կամ տեղակն աշխատի,—պատասխանում էր գործակատարի հանգիստ ձայնը։

Նեխլիւդօվը դուրս եկաւ տանից ու մօտեցաւ յետին պատշգամբին, որի առաջ կանգնած էին երկու գլուխուած գեղջկուհիներ, որոնցից մեկը ակներևաբար յդի էր։ Աստիճանների վրայ կանգնած էր գործակատարը, ձեռները քաթանէ վերարկուի գրպանները դրած։ Աղային տեսնելով, գեղջկուհիները լռեցին ու սկսեցին ծռուած գլխաչորերը չիտկել, իսկ գործակատարը ձեռները հանեց գրպանից ու սկսեց ժպտալ։

Բանը նրանում էր, որ, գործակատարի ասելով, գիւղացիները դիտմամբ իրանց հորթերին ու նոյն իսկ կովերին թողնում էին կալուածատիրոջ մարգագետինը։ Եւ ահա այդ գեղջկուհիների երկու կովը բռնել էին մարգագետնում ու քշել կալուածատիրոջ բակը։ Գործակատարը 30-ական կոպէկ էր պահանջում գեղջկուհիներից ամեն մի կովի համար կամ երկու օրուայ աշխատանք։ Իսկ գեղջկուհիները պնդում էին, նախ, որ իրանց կովերը հէնց նոր էին մտել մարգագետինը, երկրորդը, որ իրանք փող չունեն, և երրորդ, թէկուզ աշխատելու պայմանով, խնդրում էին իսկոյն և եթ վերադարձնել կովերին, որոնք առաւօտուանից ի վեր կանգնած են գոմում առանց բան ուտելու և աղեկտուր կերպով բառանչում են։

—Քանի քանի անգամ մարգաւարի կերպով խնդրել եմ,—ասաց ժպտուն գործակատարը, յետ նայելով Նեխլիւդօվին, կարծէք վկայ կանչելով նրան,—երբ որ ճաշին տուն էք անում տաւարը, լաւ մտիկ տուէք։

—Մի րոպէով վազ տուեցի երեխին ակը տալու, գամ տեսնեմ՝ գնացել են։

—Ո՞վ է մեղաւոր. ինչու՞ ես հեռանում, երբ որ յանձն ես առել տաւարին մտիկ տալ։

—Իսկ երեխային ո՞վ կերակրի. դու հօ ծիծ չես տայ։

—Գոնէ մարգագետինը փչացրած լինէին, սիրտս այնքան չէր ցաւիլ. կ'ասէի տեղն է. թէ չէ հէնց նոր էին մտել,—ասում էր միւսը։

—Բոլոր մարգագետինները փչացրել են,—դիմեց գործակատարը Նեխլիւդօվին։—Եթէ տուգանք առնելու չը լինենք, մի շիւղ խոտ չի մնայ։

—Հոգուդ մեղք մի արա,—գոռաց յդի գեղջկուհին։—Իմանքըս երբ են բռնուել։

—Հիմա հօ բռնուեցին. դէ տուգանքի փողը տուր կամ աշխատիր տեղակը։

—Շատ լաւ, կ'աշխատեմ։ Միայն թէ բաց թող խեղճ անասունին, քաղցած մի սատկացնիլ,—զայրացին գոռաց գեղջկուհին։—Առանց այն էլ ոչ ցերեկը հանգիստ ունեմ, ոչ գիշերը։ Սկեսուրս հիւանդ է։ Մարդս մեռել է։ Հազար կտոր եմ լինում, որ ամեն տեղ հասնեմ գործին։ Այժ չի մնացել վրաս, դու էլ հիմա այդ աշխատանքն ես հնարում ինձ համար. տեսնեմ, խոռվ կենայ գլխիդ աշխատանքը,—գոռաց նա ու սկսեց լալ։

Նեխլիւդօվը խնդրեց գործակատարին բաց թողնել կովերին և ինքը գնաց տուն, զարմանալով, թէ ինչպէս է, որ մարդիկ չեն տեսնում այն բանը, որ այդքան անկասկածելիօրէն պարզ է։

—Տեսար, ինչ ճարպիկն է,—ասում էր մի փրչոտ, երբէք սանրի երես չը տեսնող միրուքով գիւղացի, որ օրօրւում էր մատակի վրայ, մի ուրիշ, պատռուած կապայով, ծեր ու նիհար գիւղացու, որ գնում էր ձիով նրա կողքով, զնգզնգացնելով ձիերի երկաթէ ոտնակապերը։

Նրանք գնում էին ձիերին դիշերուայ կեր տալու ճանապարհի կողքերին և գաղտուկ՝ կալուածատէրի անտառում։

—Հողը ձրի կը տամ, միայն թէ ձեռ քաշի Թղթի տակին։ Քիչ են այդպիսինները մեզ նման մարդկանց խաբել, ինչ է։ Չէ, սխալ ես, մեր բարեկամ, հիմա մենք էլ ենք բան հասկանում,—աւելացրեց նա ու սկսեց կանչել յետ ընկած մարուկին։—«Քուռիկ, քուռիկ»,—ձայն էր տալիս նա, կանգնեցնելով ձին ու յետ նայելով, բայց մարուկը յետևումը չէր, այլ կողքում,—գնացել էր մարգագետինները։

—Տեսնում ես չան ցնգնածին, սովորել է աղնց խոտերիցը ուտել,—ասաց փրչոտ միրուքաւոր սեռուկ գիւղացին, լսելով, թէ ինչպէս էին ճարճատում վայրի Թրթնջուկները, որոնց միջով Թռչկոտալով ու խրխնջալով գալիս էր յետ ընկած մարուկը ճահճային լաւ հոտ բուրող յօղապատ մարգագետիններից։

—Տես, մարգագետինները լցուում են, պէտք է տօներին հնանոնց ուղարկել քաղհանք անելու,—ասաց պատռած կապայով նիհար գիւղացին,—Թէ չէ գերանդիները կը փչանան։

—Ձեռ քաշիր Թղթին, ասում է,—չարունակում էր փրչոտ

գիւղացին իր դատողութիւնները աղայի ճառի մասին։— Ձեռ քաշելիք թէ չէ, ողջ-ողջ կուլ կը տայ քեզ։

—Դրուստ ես ասում,—հաստատեց ծերը։

Եւ նրանք այլ ևս ոչինչ չասացին, ու լսւում էր միայն ձիերի ոտնաձայնը կարծր գետնի վրայ։

VIII

Տուն մտնելով, Նեխլիւդովը իր գիշերվայ համար պատրաստած գրասենեակում գտաւ մի բարձր անկողին աղուամազէ ներքնակներով, երկու բարձով և բօրդօ-կարմիր գոյնով մետաքսէ երկտեղանի, մանր ու նկարչէն կարուտւած և չը ծալուող վերմակով,—ամենևին գործակատարի կնոջ բաժինքի տեղացորով։ Գործակատարը առաջարկեց Նեխլիւդովին ճաշից մնացածը, բայց մերժում ստանալով և նեղդուելութիւն խնդրելով վատ հիւրասիրութեան ու կահասորութեան համար, հեռացաւ, մենակ թողնելով Նեխլիւդովին։

Գիւղացիների մերժումը ամենևին չը չփոթեցրեց Նեխլիւդովին։ Ընդհակառակը, չը նայելով որ այնտեղ, Կուզմինսկոյէ կալուածում, նրա առաջարկութիւնը ընդունելին ու չարունակ չնորհակալութիւն էին անում, իսկ այստեղ անվստահութիւն և նոյն իսկ թշնամական վերաբերմունք ցոյց տուին դէպի նա, այնուամենայնիւ նա այժմ հանդիստ և ուրախ էր զգում իրան։ Գրասենեակը կեղտոտ էր և օդը խեղդուկ։ Նեխլիւդովը դուրս եկաւ բակը և ուզում էր գնալ պարտէզը, բայց յիշեց այն գիշերը, աղախինների սենեակի պատուհանը, յետին պատշգամբը —ու չը գնաց, որովհետև նրա համար անախորժ էր մանգալ այն տեղերով, որոնք պղծուած էին յանցաւոր յիշատակներով։ Նա նստեց պատշգամբի աստիճանների վրայ և ծծելով ցարասիի մատղաշ տերևների թունդ հոտը, որ լցրել էր տաք օդը, երկար ժամանակ նայում էր մթնող պարտէզին և ականջ էր գնում ջրաղացին, առուակներին և ինչ որ մի ուրիշ թռչունի, որ միատեսակ չը-չըւացնում էր պատշգամբի կողքի թփի մէջ։ Գործակատարի պատուհանում ճրագը հանդցրեցին, արևելքում, ցախատան յետևից, երեաց ծագող լուսնի չառագոյն փայլը, փայլակները հեռուհեռու աւելի ու աւելի պայծառ սկսեցին լուսաւորել ծառախիտ ու ծաղկաթիթեռի պարտէզը և քայքայուղ տունը, լսուեց հեռաւոր որոտմունք և երկնակամարի մի երրորդ մասը պատեցին սև-սև թուխպեր։ Առուակներն ու միւս թռչունը լռեցին։ Ջրաղացի ջրի ձայնի հետ խառնուելով լսուեց սագերի կռկռոց, իսկ յետոյ գիւղում ու գործակատարի բակում

սկսեցին խօսել վաղորդեան աքաղաղները, ինչպէս նրանք սովորաբար ժամանակից չուտ են կանչում ամպրոպային չոգ գիշերները։ Առած կայ, թէ աքաղաղների վաղ կանչելը ուրախ գիշեր է աւետում։ Նեխլիւդովի համար այդ գիշերը աւելի քան ուրախ էր։ Այդ նրա համար մի բերկրալից, երջանիկ գիշեր էր։ Երևակայութիւնը վերարտադրեց նրա մէջ այն երջանիկ ամառուայ տպաւորութիւնները, որ նա անցրել էր այստեղ անմեղ պատանի ժամանակը, և նա զգաց իրան այնպէս, ինչպէս էր ինքը ոչ միայն այն ժամանակ, այլ և առհասարակ իր կեանքի բոլոր լաւագոյն րոպէներին։ Նա ոչ միայն յիշեց, այլ և զգաց իրան այնպէս, ինչպէս որ էր այն ժամանակ, երբ 14 տարեկան եղած միջոցին աղօթում էր Աստուածուն, որ Աստուած պարզի նրա առաջ ճշմարտութիւնը, երբ երևակայ միջոցին լալիս էր մօր գոգին, նրա հետ անջատուելիս, և խոստանում էր նրան միշտ բարի լինել ու չը վշտացնել նրան,— զգաց իրան այնպէս, ինչպէս որ էր, երբ ինքն ու Նիկոլենկա Իրտենեվը վճռում էին, որ միշտ կ'աջակցեն իրար բարի կեանք վարելու և կ'աշխատեն երջանկացնել բոլոր մարդկանց։

Նա յիշեց այժմ, թէ ինչպէս Կուզմինսկոյէ կալուածում փորձութիւն եկաւ վրան ու սկսեց ափսոսալ և՛ տանը, և՛ անտառին, և՛ մտաւորութեանը, և՛ հողին, ու հարցրեց այժմ ինքն իրան—ափսոսում է արդեօք։ Եւ նրան նոյն իսկ տարօրինակ էր թւում, որ ինքը այն ժամանակ կարող էր ափսոսալ։ Նա յիշեց այն բոլորը, ինչ որ տեսել էր այսօր,—և՛ երեխաները վղին մնացած կնոջը, որի մարդուն բանտ էին դրել իր, Նեխլիւդովի անտառում ցախ կտրելու համար, և՛ սարսափելի Մատրեոնային, որ այնպէս էր համարում կամ դռնէ ասում էր, թէ իրանց դասակարգի կանայք պէտք է աղաների սիրուհիները դառնան. յիշեց նրա վերաբերմունքը դէպի երեխաները, նրանց ապաստարան տանելու ձևը և այն թշուառ, ծերունակերպ, ժրպտուն, անդադարութիւնից մեռնող թասակաւոր երեխային. յիշեց այն յղի կնոջը, որին ստիպելու էին աշխատել իր, Նեխլիւդովի համար, որովհետև խեղճ կինը, աշխատանքից չարդուած լինելով, չէր կարողացել լաւ հսկել քաղցած կովին...

Պայծառ, գրեթէ լրացած լուսինը դուրս եկաւ ցախատան յետևից, լսկի մէջ ձգուեցին սև-սև ստուերներ և սկսեց չողչողալ աւերուող տան կտուրի թիթեղը։

Եւ կարծէք ողջունելով այդ լոյսը, պարտէզում սկսեց խօսել ու գղգղալ լռած սոխակը։

Նեխլիւդովը յիշեց, թէ ինչպէս ինքը Կուզմինսկոյէ կալուածում սկսել էր մտածել իր կեանքի մասին, վճռել, թէ ինչ

է անելու, ինչպէս է անելու, և մտաբերեց, թէ ինչպէս ինքը մոլորուել էր այդ հարցերի մէջ ու չէր կարողանում ոչինչ վճռել, որովհետև իւրաքանչիւր հարց հազար ու մի նկատումներ էր ծնեցնում։ Նա այժմ ինքն իրան առաջարկեց նոյն հարցերը և զարմացաւ, թէ ինչ աստիճան պարզ են նրանք։ Նրանք պարզ էին այժմ նրա համար, որովհետև նա այժմ չէր մտածում այն մասին, թէ ինչ կը պատահի իրան,—նրան այդ նոյն իսկ չէր հետաքրքրում,—այլ մտածում էր միայն, թէ ինքը ինչ պէտք է անի։ Եւ զարմանալի բան. նա ամենևին չէր կարողանում վճռել, թէ ինչ է պէտք իրան, բայց անկասկածօրէն գիտէր, թէ ինչ պէտք է անել։ Նա այժմ անկասկածօրէն գիտէր, որ հողը պէտք էր տալ գիւղացիներին, որովհետև վատ բան էր հողը իրան պահելը։ Գիտէր անկասկածօրէն, որ պէտք էր չը թողնել Կատիւշային, օգնել նրան, ամեն բան յանձնառու լինել նրա առաջ իր մեղքը քաւելու համար։ Գիտէր անկասկածօրէն, որ պէտք էր ուսումնասիրել, քննել, պարզել, հասկանալ այդ դատական ու պատժական բոլոր գործերը, որոնց մէջ՝ նա զգում էր, որ ինքը ինչ-որ մի բան է տեսնում, որ ուրիշները չեն տեսնում։ Ինչ էր դուրս գալու այդ բոլորից՝ նա չը գիտէր, բայց անկասկածօրէն գիտէր, որ թէ առաջինը, թէ երկրորդը, թէ երրորդը անհրաժեշտ է անել։ Եւ այդ հաստատ հաւատարմութիւնը ուրախացնում էր նրան։

Սև թուխպը բոլորովին մօտեցաւ, և սկսեցին երևալ արդէն ոչ թէ փայլակներ, այլ կայծակներ, որոնք լուսաւորում էին ամբողջ բակը ու կոտրտուած պատշգամբներով աւերուող տունը, և որտի ձայնը լսուեց արդէն ուղիղ գլխավերևում։ Բոլոր թռչունները սրսկուեցին, բայց դրա փոխարէն սկսեցին ասպարիզ տերևները և քամին հասաւ պատշգամբին, ուր նստած էր Նեխլիւդովը, ու հովհարեց նրա մազերը։ Մի կաթիլ վայր ընկաւ, յետոյ երկրորդը, անձրևը սկսեց դոդոջացնել խոտերով ու թիթեղով ծածկուած տանիքը, և ամբողջ օդը պայծառ բոցավառուեց ու, դեռ Նեխլիւդովը մինչև երեքը չը հաշուած, սարսափելի որոտ լսուեց նրա գլխավերևում, որ սկսեց գոռալով անցնել ամբողջ երկնակամարով։

Նեխլիւդովը նեքսև մտաւ։

«Այո, այո,—մտածում էր նա։—Այն գործը, որ կատարւում է մեր կեանքով, ամբողջ գործը, այդ գործի ամբողջ իմաստը անհասկանալի է ինձ և չի կարող հասկանալի լինել,—ինչու էին ապրում մօրաքոյրներս, ինչու Նիկոլենկա Իրտենևը մեռաւ, իսկ ես կենդանի եմ։ Ինչու համար էր Կատիւշան։ Եւ իմ խելագարութիւնը, և ամբողջ իմ յետագայ անառակ կեանքը։

Այդ բոլորը հասկանալ, ըմբռնել Տիրոջ ամբողջ գործը՝ իմ ուժից վեր է։ Բայց կատարել Նրա կամքը, որ գրուած է իմ խղճմտանքի մէջ, այդ ես կարող եմ եւ այդ ես գիտեմ անկասկածօրէն։ Եւ երբ ես անում եմ այդ, անկասկած հանգիստ եմ լինում»։

Անձրևը արդէն տարափ էր դարձել և չհչալով տանիքներից թափւում էր ներքևում դրուած տաններից. կայծակը աւելի ուշ-ուշ էր լուսաւորում բակը և տունը։ Նեխլիւդովը գնաց սենեակը, հանուեց ու պառկեց անկողնի մէջ, ահով մտածելով տախտոջիների մասին, որոնց ներկայութիւնը կասկածել էին տալիս պատերից պոկոտուած կեղտոտ թղթերը։

«Այո, մարդ պէտք է իրան զգայ ոչ թէ տէր, այլ ծառայ», մտածում էր նա և ուրախանում այդ մտքի վրայ։

Նրա ահը արդարացի դուրս եկաւ։ Ձրագը փչեց թէ չէ, միջատները թափուեցին վրան ու սկսեցին կծոտել։

«Հողը տամ իրանց ու գնամ Սիբիր,—իսկ այնտեղ լու, տախտոջիլ, կեղտ... Էհ, ինչ արած. եթէ պէտք է տանել այդ բանը, կը տանեմ»։ Բայց չը նայելով իր ամբողջ ցանկութեանը, նա չէր կարողանում տանել այդ և վեր կացաւ նստեց բայց պատուհանի մօտ ու սկսեց դիտել հեռացող թուխպը և նորից բացուած լուսինը։

IX

Նեխլիւդովը միայն առաւօտեան դէմ կարողացաւ քնել, ուստի և միւս օրը ուշ զարթնեց։

Կէսօրին, գործակատարի հրաւէրով, եօթ ընտրեալ գիւղացիներ եկան խնձորենիների պարտէզը, ուր գործակատարը գետինը խրած սիւնակների վրայ չինել էր տուել սեղան ու նստարաններ։ Բաւական ժամանակ քաշեց, մինչև որ գիւղացիներին համոզեցին գլխարկները ծածկել և նստել նստարանների վրայ։ Առանձին յամառութիւն էր ցոյց տալիս մանաւանդ նախկին գլխաւորը, որ այսօր մաքուր ոտաթաթաթաններ ու արևիններ էր հագել և որ իր պատռտուած գլխարկը բռնել էր առջևում այնպէս, ինչպէս, կանոնի համաձայն, պէտք է բռնել թաղման ժամանակ։ Բայց երբ մէջներից մէկը,—պատկառելի տեսքով, Միքէլ-Անջելոյի Մովսէսի նման դանդուր ալեխառն միրուքով և արևուտ ու ճաղատ գանգնագոյն ճակատը պսակող սպիտակ ու խիտ խուճուճ մազերով մի լայնաթիկունք ծերուն, ծածկեց իր ահագին գլխարկը և, փաթաթուելով նոր մտա-

գործ կապալի մէջ, գնաց նստեց նստարանի վրայ, միւսները հետևեցին նրա օրինակին։

Երբ որ բոլորը տեղաւորուեցին, Նեխլիւդովը նստեց նրանց դիմացը և, կռթնելով սեղանի վրայ ու գլուխը կախ գցելով թղթի վրայ, որի մէջ գրուած էր նրա ծրագրի ամփոփումը, սկսեց բացատրել ծրագիրը։

Արդեօք այն պատճառով, որ գիւղացիների թիւը քիչ էր, թէ որովհետև Նեխլիւդովը զբաղուած էր ոչ թէ իրանով, այլ գործով, այս անգամ նա չէր զգում ոչ մի չփոթութիւն։ Ակամայ նա դիմում էր գլխաւորապէս սպիտակ ու գանգուր միրուքաւոր լայնաթիկունք ծերունուն, հաւանութիւն կամ առարկութիւն ապասելով նրանից։ Բայց այն գաղափարը, որ Նեխլիւդովը կազմել էր նրա մասին, սխալ էր։ Վասիլչակերպ ծերունին, թէպէտ և հաւանութեան եղանակով շարժում էր կամ թափահարում իր նահապետային գլուխը, խոժոռուելով, երբ միւսները առարկում էին, ամենևաւբար մեծ դժուարութեամբ էր հասկանում Նեխլիւդովի ասածը, այն էլ միայն այն ժամանակ, երբ ուրիշները իրանց խօսքերով բացատրում էին նոյն բանը։ Շատ աւելի լաւ էր հասկանում Նեխլիւդովի խօսքերը նահապետանման ծերունու կողքին նստած փոքրիկ, մի աչքով չիլ, կարկատած բաճկոնով ու հնամաչ, մի կողմի վրայ ծռուած կօշիկներով, գրեթէ անմիրուք ծերուկը, որ վառարան չինող էր, ինչպէս յետոյ իմացաւ Նեխլիւդովը։ Այդ մարդը արագ-արագ շարժում էր յօնքերը, ուշադրութիւնը լարելով, և իսկոյն և նէ պատմում էր իր խօսքերով Նեխլիւդովի ասածները։ Նոյնպէս չուտ էր հասկանում նաև մի սպիտակ միրուքով ու փայլուն, խելօք աչքերով կարճահասակ ու թիկնաւէտ ծերունի, որ ամեն առիթից օգտւում էր Նեխլիւդովի խօսքերին զուարճալի, հեգնական նկատողութիւններ աւելացնելու և ամենևաւբար պարծենկոտութեամբ էր անում այդ։ Ամենից լուրջ կերպով էր վերաբերում գործին մի երկարաքիթ, փոքրամիրուք, բարձրահասակ և մաքուր հնազգործ չորեր ու նոր տրեխներ հագած գիւղացի, որ խօսում էր թաւ ու հաստ ձայնով։ Այդ գիւղացին հասկանում էր բոլոր ասածները և խօսում էր միայն այն ժամանակ, երբ պէտք էր խօսել։ Մնացեալ երկու ծերերը, մէկը՝ այն անհատը, որ երէկ ժողովում գոռգոռում էր մերժելով Նեխլիւդովի բոլոր առաջարկութիւնները, և միւսը՝ մի բարձրահասակ, սպիտակած ու կաղ ծերուկ բարեհոգի դէմքով, չուստերով և վարտ ոտներին պինդ փաթաթած սպիտակ փաթաթաններով,—երկուսն էլ գրեթէ ամբողջ ժամանակը լուռ էին, թէև լսում էին ուշադրութեամբ։

Նեխլիւդովը նախ և առաջ յայտնեց իր հայեացքը հողային սեփականութեան մասին։

—Հողը, իմ կարծիքով,—ասաց նա,—չի կարելի ոչ ծախել, ոչ առնել, որովհետև եթէ կարելի լինի ծախել, այն ժամանակ փող ունեցողները կը գնեն ամբողջ հողը և այնուհետև հող չունեցողներից ինչքան ուզեն կ'առնեն՝ հողից օգտուելու իրաւունքի համար։ Նոյն իսկ գետնի վրայ կանգնելու համար փող կը վերցնեն,—աւելացրեց նա, մէջ բերելով Սպենսերի պատճառաբանութիւնը։

—Մի հնարք կը մնայ, թևեր կապել ու թռչել,—ասաց ծիծաղուն աչքերով ու սպիտակ միրուքով ծերունին։

—Ճիշտ ես ասում,—թաւ ձայնով ասաց երկարաքիթը։

—Հրամել էք,—ասաց նախկին գլխաւորը։

—Խեղճ կնիկը մի քիչ խոտ է քաղում կովի համար, ձեռաց բռնում, բանան են գցում,—ասաց բարեհոգի կաղիկ ծերունին։

—Մեր հողերը հինգ վերստի վրայ են, իսկ կապալով վերցնելու հնարք չը կայ. գլինը այնքան են բարձրացրել, որ ծախսը չի հանի,—աւելացրեց անհատամ գաղափած ծերունին։

—Ես էլ ձեր կարծիքին եմ,—ասաց Նեխլիւդովը,—ուստի և ուզում եմ հողը տալ ձեզ։

—Ինչու չէ, լաւ բան կը լինի,—ասաց Մոլսէսի գանգուրներով ծերունին, ակնհայտօրէն կարծելով, թէ Նեխլիւդովը ուզում է կապալով տալ հողը։

—Ես հէնց դրա համար եմ եկել այստեղ. այլ ես չեմ ուզում հողատիրութիւն անել. բայց պէտք է քննել, թէ ինչ անել հողը։

—Տուր գիւղացիներին, պրծնի, գնայ,—ասաց անհատամ գաղափած ծերունին։

Նեխլիւդովը առաջին րոպէին չփոթուեց, այդ խօսքերում կասկած նշմարելով իր գիտաւորութեան անկեղծութեան նկատմամբ։ Բայց չփոթութիւնը իսկոյն և նէ անցաւ և նա օգտուեց այդ նկատողութիւնից իր ասելիքը յայտնելու համար։

—Ուրախութեամբ կը տայի,—ասաց նա,—բայց ում և ինչպէս։ Ո՞ր գիւղացիներին։ Ինչու՞ ձեր հասարակութեանը և ոչ Դեմինսկոյէ գիւղին (այդ՝ կողքի գիւղն էր աղքատիկ հողաբաժնով)։

Բոլորը լուռ էին։ Միայն նախկին գլխաւորն ասաց—«Հրամել էք»։

—Այ ասէք տեսնենք,—ասաց Նեխլիւդովը,—եթէ դուք լինէիք իմ տեղը և ուզէիք հողը բաժանել, ինչպէս կ'անէիք։

—Ինչպէս կ'անէիք։ Բոլորի մէջ մարդագլուխ հաւասար կը բաժանէինք,—ասաց վառարան չինողը, արագ-արագ բարձրացնելով ու ցածացնելով յօնքերը։

—Հապա ուրիշ ինչ կերպ պէտք է լինի։ Պէտք է մարդագլուխ բաժանել,—հաստատեց սպիտակ փաթաթաններով բարեհոգի կաղիկ ծերունին։

Միւսները բոլորն էլ բաւարար համարելով այդ վճիռը, հաւանութիւն տուեցին նրան։

—Ի՞նչպէս մարդագլուխ,—հարցրեց Նեխլիւդօվը։—Ուրեմն կալուածում ծառայողներին էլ պէտք է տալ։

—Անենին ոչ,—ասաց նախկին գինուորը, աչխատելով ուրախ ու ժիր արտայայտութիւն տալ դէմքին։ Բայց բարձրահասակ խոհուն ծերունին չը համաձայնեց նրա հետ։

—Երբ որ բաժանելու է, պէտք է ամենքի վրայ հաւասար բաժանել,—պատասխանեց նա իր թաւ ձայնով, մի քիչ մտածելուց յետոյ։

—Ջի կարելի,—ասաց Նեխլիւդօվը, որ արդէն առաջուց էր պատրաստել իր առարկութիւնը։—Եթէ ամենքին հաւասար տրուի, այն ժամանակ նրանք, որոնք չեն աչխատում, վար սը ցանք չեն անում, կ'առնեն իրանց բաժիններն ու կը ծախեն հարուստներին։ Եւ դարձեալ հողը կը հաւաքուի հարուստների ձեռքում։ Իսկ նրանք, որոնք կը պահեն իրանց բաժինները, նոր զաւակներ կ'ունենան, մինչդեռ հողը արդէն ամբողջապէս սրա, նրա ձեռքին կը լինի։ Էլի հարուստները իրանց բռի մէջ կը հաւաքեն նրանց, որոնց հող է պէտք։

—Հրամել էք,—չտապեց հաստատել գինուորը։

—Պէտք է արգելել, որ հողը չը ծախուն, և հող միայն նրան տրուի, ով ինքն է վարելու,—ասաց վառարան չինողը, բարկացած ընդմիջելով գինուորի խօսքը։

Նեխլիւդօվը առարկեց դրան, որ դժուար է հսկել, թէ ում համար է մարդ վարում, ինր համար թէ ուրիշի։

Այն ժամանակ բարձրահասակ, խոհուն գիւղացին առաջարկեց այնպես կարգադրել, որ բոլորը ընկերովի վարեն հողը։—Ով որ վար անի, նրանց մէջ բաժանել։ Իսկ ով վար չի անի, ոչինչ չը տալ,—վճռաբար ասաց նա իր թաւ ձայնով։

Այդ կոմմունիստական ծրագրի դէմ էլ Նեխլիւդօվը պատրաստ առարկութիւններ ունէր և ասաց, որ դրա համար պէտք է որ բոլորն էլ գութաններ ունենան, ու միատեսակ ձիեր, և որ իրարից յետ չընկնեն աչխատանքի մէջ կամ թէ ձիերը, գութանները, կալսիչները և բոլոր անտեսութիւնը՝ ընդհանուր լինեն, իսկ որպէս դի այդպէս լինի, պէտք է ամենքը համաձայն լինեն։

—Մերոնց որ Քրիստոս էլ իշնի երկնքից, չի կարող համաձայնեցնել,—ասաց գաղազած ծերունին։

—Ամբողջ օրը վէճ ու կռիւ կը լինի,—ասաց սպիտակ մորուքով ու ծիծաղուն աչքերով ծերունին։—Կնանիք իրար աչքեր կը չանդռատեն։

—Ցետոյ, ինչպէս պէտք է բաժանել հողերը իրանց լաւութեան համեմատ,—ասաց Նեխլիւդօվը։—Ինչու պէտք է մէկը սև հող ստանայ, իսկ միւսները՝ կաւ ու աւազ։

—Կտոր-կտոր անել հողերը և բոլորին հաւասար բաժանել ամեն տեսակ կտորներից,—ասաց վառարան չինողը։

Նեխլիւդօվը առարկեց դրան, որ հարցը մի հաստարակութեան մէջ բաժանելու մասին չէ, այլ նրա մասին, թէ ինչպէս պէտք է հողը բաժանել առհասարակ զանազան նահանգներում։ Եթէ հողը ձրի տրուի գիւղացիներին, ինչու պէտք է ոմանք լաւ հող ունենան, իսկ միւսները՝ վատ։ Ամենքն էլ կ'ուզենան հողը ստանալ։

—Հրամել էք,—ասաց գինուորը։

Միւսները լուռ էին։

—Այնպէս որ հարցը այնքան էլ պարզ չի, ինչպէս ձեզ թւում է,—ասաց Նեխլիւդօվը։—Եւ դրա մասին միայն մենք չենք, որ մտածում ենք, այլ շատ մարդիկ են մտածում։ Այ, մի ամերիկացի կայ, Ջորջ անունով. ահա ինչ միջոց է մտածել նա։ Ես էլ նոյն կարծիքին եմ։

—Ինչ խօսելու բան կայ. հողի տէրը դու չես, տուր, պրծնի, գնայ։ Քո կամքը չէ,—ասաց գաղազած ծերունին։

Այդ ընդմիջումը չխոթեցրեց Նեխլիւդօվին, բայց նա ուրախութեամբ նկատեց, որ միայն ինքը չէր, որ դժգոհ էր այդ ընդմիջումից։

—Կաց, Սիմեօն քեռի, թող ասի,—ասաց խոհուն գիւղացին իր ազդու թաւ ձայնով։

Այդ սիրտ տուեց Նեխլիւդօվին և նա սկսեց բացատրել նրանց մի-միակ տուրքի ծրագիրը ըստ Հէնրի Ջորջի։

—Հողը ոչ ոքի չի, Աստուածունն է,—սկսեց նա։

—Այդ ճիշտ է։ Բոլորովին ճիշտ,—լսուեցին մի քանի ձայներ։

—Ամբողջ հողը ընդհանուրինն է։ Ամենքը հաւասար իրաւունք ունեն նրա վրայ։ Բայց լաւ հող էլ կայ, վատ հող էլ։ Իսկ ամեն մարդ ուզում է վերցնել լաւը։ Ի՞նչպէս պէտք է անել հաւասարեցնելու համար։ Այ ինչպէս. ով որ լաւ հողի

տէր է՝ պէտք է իր հողի արժէքը վճարի նրանց, որոնք հող չունեն,—ինքն իրան պատասխանում էր Նեխլիւդովը։—Եւ որովհետև դժուար է որոշել, թէ ով ում պէտք է վճարի, իսկ առանց այդ էլ պէտք է փող հաւաքել ընդհանուրի պէտքերի համար, ուստի այնպէս պէտք է անել, որ հողի տէրերը իրանց հողի արժէքը վճարեն հասարակութեանը՝ զանազան պէտքերի համար։ Այդպէս ամենքին հաւասար կը դայ։ Ով ուզում է հողատէր լինել, թող փող տայ, լաւ հողի համար՝ շատ, վատ հողի համար՝ քիչ։ Իսկ ով որ չի ուզում հողատէր լինել՝ ոչինչ չի տալիս, իսկ նրա տեղը հասարակական պէտքերի համար փող տալիս են հողատէրերը։

—Այդ շատ կանոնաւոր բան է,—ասաց վառարան չինողը, յօնքերը շարժելով։—Ում հողը լաւ է, թող շատ տայ։

—Լաւ գլուխ է ունեցել այդ ժօրժան,—ասաց գանգրամիրուք պարթև ծերունին,

—Միայն թէ վճարը մարդու ուժից վեր չը լինի,—թաւ ձայնով ասաց բարձրահասակը, ակներևաբար, արդէն նախատեսելով թէ բանը ուր է յանգելու։

—Վճարը այնպէս պէտք է լինի, որ ոչ թանգ լինի, ոչ էժան... Եթէ թանգ լինի, չեն կարողանայ վճարել ու վնաս կը լինի, իսկ եթէ էժան լինի, ամենքը կը սկսեն իրարից գնել հողերը, հողավաճառութեամբ պարապել։ Ահա այս բանն էի ես ուզում անել ձեղնում։

—Այդ արդար բան է, հիմնաւոր բան է։ Ինչու չէ, այդ կարելի է,—ասում էին գիւղացիները, լիովին հասկանալով, թէ ինչումն է բանը, և հաւանութիւն յայտնելով Նեխլիւդովի առաջին։

—Գլուխ եմ ասել է,—կրկնում էր լամպաթիկոնը ու գանգրամիրուք ծերունին։—Այ թէ ժօրժա։ Տեսնում էք, ինչ է հնարել։

—Իսկ ինչպէս կը լինի, եթէ ես էլ ուզենամ հող վերցնել,—ժպտալով հարցրեց գործակատարը։

—Եթէ ազատ հողաբաժին մնայ, ինչու չէ, վերցրէք ու այխատեցէք,—ասաց Նեխլիւդովը։

—Ինչ ինչի պէտք է։ Դու առանց այն էլ կուշտ ես,—ասաց ծիծաղուն աչքերով ծերունին։

Դրանով վերջացաւ խորհրդակցութիւնը։

Նեխլիւդովը դարձեալ կրկնեց իր առաջարկութիւնը, բայց չէր պահանջում, որ իսկոյն և եթ պատասխանէին, այլ խորհուրդ տուեց խօսել գիւղական հասարակութեան հետ ու յետոյ գալ պատասխան տալու։

Գիւղացիները ասացին, որ կը խորհրդակցեն հասարակութեան հետ ու պատասխան կը տան, և մնաս բարև անելով հեռացան գրգռուած դրութեան մէջ։ Ճանապարհի կողմից երկար ժամանակ լսում էր նրանց բարձր խօսակցութեան հետզհետէ հեռացող ձայնը։ Եւ մինչև ուշ երեկոյեան աղմկում էին նրանց ձայները, որոնք հասնում էին Նեխլիւդովին գիւղից գետի վրայով։

—

Հետևեալ օրը գիւղացիները չէին աշխատում, այլ քննում էին աղայի առաջարկութիւնը։ Հասարակութիւնը երկու կողմի բաժանուեց. մէկը՝ աղայի առաջարկութիւնը ձեռնտու և անվտանգ էր համարում, միւսը՝ այդ բանի մէջ մի խաղ էր տեսնում, որի էութիւնը չէր կարողանում հասկանալ, ուստի աւելի ևս չատ էր վախենում։ Սակայն երրորդ օրը ամենքն էլ համաձայնեցին ընդունել առաջարկուած պայմանները և եկան Նեխլիւդովին յայտնելու ամբողջ հասարակութեան վճիռը։ Այդ համաձայնութիւնը կայացաւ մի պառաւի յայտնած կարծիքի չնորհիւ, որ ընդունեցին ծերունիները և որ ցրեց բոլոր երկիւղները աղայի վարմունքի խաբէական լինելու կողմից. պառաւը աղայի առաջարկութիւնը բացատրեց նրանով, որ նա սկսել է հոգու մասին մտածել և այդպէս է վարուում հոգին փրկելու համար։ Այդ բացատրութիւնը հաստատւում էր այն առատ ողորմութիւններով, որ Նեխլիւդովը բաժանում էր Պանօվոյի աղքատ բնակիչներին։ Իսկ այն բանի պատճառը, որ Նեխլիւդովը այդպէս ողորմութիւն էր բաժանում, այն էր, որ նա այդտեղ առաջին անգամը իմացաւ, թէ ինչ ծայրայեղ աղքատութեան և խստակեցութեան են հասել գիւղացիները։ Սաստիկ աղդուելով այդ աղքատութիւնից, նա թէև գիտէր, որ իր արածը խելացի բան չէ, բայց չէր կարողանում չը բաժանել ձեռքի ունեցած փողերը, որոնք չատ չատ էին, որովհետև նա ստացել էր անցեալ տարի ծախած՝ կուզմինսկօէ կալուածի անտառի գինը և բացի դրանից՝ նախաւճար կալուածի անասունների և գործիքների համար։

Հէնց որ իմացան, որ աղան փող է տալիս ուզուորներին, իսկոյն ոչ միայն գիւղից, այլ և ամբողջ չրջակայքից սկսեցին խումբ-խումբ գիւղացիներ, մանաւանդ կանայք, դիմել նրան՝ օգնութիւն խնդրելով։ Նա բոլորովին չը գիտէր ինչ անել, ինչպէս վճռել, թէ ում և որքան պէտք է տալ։ Նա զգում էր, որ անկարելի էր խնդրող ու ակնյայտնի աղքատ մարդկանց չը տալ փող, որից ինքը չատ ունէր։ Իսկ տալ պատահաբար նրանց,

որոնք խնդրում են, միաք չունեը։ Այդ դլուխիցից դուրս գալու միակ ելքը գիւղից հեռանալն էր։ Եւ նա չսպասեց հեռանալ։

Պանօվոյում անցկացրած վերջին օրը Նեխլիւդովը սկսեց տնտղել տան մէջ մնացած բաները։ Բանալով մօրաքրոջ՝ կարմիր վայտէ, ուռած փորով և առիւծների գլուխների մէջ անցրած անագապղնձէ օղակներով հին պահարանի ներքնի աչքը, նա գտաւ այնտեղ մեծ թուով նամակներ և նրանց արանքին մի լուսանկար, ուր խմբով հանուած էին Սօֆիա Իվանօվնան, Եկատերինա Իվանօվնան, ինքը՝ ուսանող ժամանակ և Կատիւշան՝ մաքուր, թարմ, սիրուն և կենսուրախ։ Տան մէջ եղած բոլոր բաներից Նեխլիւդովը վերցրեց միայն նամակները և այդ լուսանկարը։ Մնացած բոլոր բաները նա թողնց ջրաղացպանին, որ, մշտաժպիտ գործակատարի միջնորդութեամբ, տանապատիկ էժան գնով առաւ Պանօվոյի տունը, որ պէտք է քանդէր ու նիւթերը վերցներ, և բոլոր կահ-կարասիքը։

Յիշելով, թէ ինչպէս էր ինքը կուզմինսկոյ կալուածում ափսոսանք զգում անկանութիւնից դրկուելու համար, Նեխլիւդովը այժմ զարմանում էր, թէ ինչպէս կարող էր ինքը այդպիսի բան զգալ։ Այժմ նա չարունակ զգում էր ազատման բերկրութիւն և նորութեան հրճուանք, նոյնպիսի հրճուանք, ինչպէս զգում են անչուշտ ճանապարհորդները՝ նոր երկիր գտնելիս։

X

Քաղաքը այս անգամ առանձնապէս տարօրինակ ու մի նոր տեսակ տպաւորութիւն գործեց Նեխլիւդովի վրայ։ Երեկոյ էր, երբ կայարանից իր բնակարանն էր գնում, և լապտերները արդէն վառել էին։ Բոլոր սենեակներում դեռ նաֆթալինի հոտ էր փչում և Ագրաֆենա Պետրօվնան ու Կօրնէյը, երկուսն էլ, ջարդուած ու զաղզադած էին և նոյն իսկ կուռել էին իրար հետ տան բանները կարգի բերելու պատճառով, որոնց գործածութիւնը, կարծես, նրանով էր սահմանափակուում, որ նրանց փոում էին չորացնելու և յետոյ պահում էին։ Նեխլիւդովի սենեակը ազատ էր, բայց այնտեղ այնքան անդուլներ էին դարանել, որ մէջը դժուար էր անց ու դարձ անել, այնպէս որ պարզ էր, որ Նեխլիւդովի գալը խանգարել էր այն գործերին, որոնք, ինչ-որ տարօրինակ լնէրգիայով, կատարուում էին այդ բնակարանի մէջ։ Այդ բոլորը իր ակնյայտնի անմտութեամբ, որին նա ինքն էլ մի ժամանակ մասնակից էր,

այնքան անախորժ թուաց Նեխլիւդովին գիւղական կարօտութեան ապաւորութիւնից յետոյ, որ նա վճռեց միւս օրն և եթ տեղափոխուել հիւրանոց, թող տալով որ Ագրաֆենա Պետրօվնան տուն ու տեղը հաւաքի այնպէս, ինչպէս նա հարկաւոր է համարում, մինչև իր քրոջ գալը, որ վերջնապէս կը կարգադրի տան մէջ եղած բոլոր բաները։

Նեխլիւդովը առաւօտը վաղ դուրս եկաւ տանից, բանտի մօտերքը առաջին պատահած չատ համեստ ու կեղտոտ կահաւորուած սենեակներում վարձեց երկու համարից բաղկացած կացարան և, կարգադրելով, որ տեղափոխեն այնտեղ տանից վերցրած բաները, գնաց փաստաբանի մօտ։

Դրսից ցուրտ էր։ Փոթորկալից ու անձրևային եղանակներից յետոյ սկսուել էին գարնանը սովորաբար տեղի ունեցող ցրտերը։ Այնքան ցուրտ էր և այնպիսի սուր քամի էր փչում, որ Նեխլիւդովը մրսում էր իր բարակ վերարկուով և հետզհետէ արագացնում էր քայլերը տաքանալու համար։

Նրա յիշողութեան մէջ պատկերանում էին դիւղացի մարդիկ,—կանայք, երեխաներ, ձերունիներ, որոնց աղքատութիւնը և ուժասպառութիւնը նա, կարծես, այժմ առաջին անգամն էր տեսնում, և մանաւանդ ժպտերես ձերանման երեխան, որ տատրտալով էր ճլորք ոտները,—և նա յակամայից համեմատում էր նրանց հետ այն, ինչ որ տեսնում էր քաղաքում։ Մտաւաճառների, ձկնավաճառների և հագուստեղէնի խանութների առջով անցնելիս նա ապշած էր մնում,—կարծես թէ առաջին անգամն էր տեսնում այդ,—նկատելով այդքան մեծ թուով կուշտ ու կուռ, մսում կորած ու մաքուր խանութպաններ, որոնց նման մի հատ մարդ չէր կարելի գտնել գիւղում։ Նոյնպէս կուշտ ու կուռ էին սեփական կառքերի հաստաքամակ ու մէջքերը կռճակներով զարդարած կառապանները, երիզապատ գլխարկներով դռնապանները, դռնապետաւոր ու խոպոպաւոր աղախինները, և մանաւանդ վարձու սրընթաց կառքերի ածիլած թիկ ընկած, արհամարհաբար և անտարակարար նայում էին անց ու դարձ անողներին։ Այդ բոլոր մարդկանց մէջ Նեխլիւդովը յակամայից տեսնում էր այժմ նոյն գիւղացիներին, որոնք վըրկել էին հողից և այդ պատճառով թափուել էին քաղաքը։ Նրանցից ոմանք կարողացել էին օգուտ քաղել քաղաքային պայմաններից ու դարձել էին աղաների նման մարդիկ և ուրախանում էին այդ բանից. միւսները՝ քաղաքում աւելի ևս վատ պայմանների մէջ էին ընկել, քան գիւղում, և աւելի ևս ողորմելի էին, քան այնտեղ։ Այդպէս ողորմելի թուացին Նեխլիւ-

դօվլին այն կօչկակարները, որոնց նա տեսաւ բանելիս մի ներքնայարկի պատուհանի առաջ. այդպէս էին նաև նիհար, գուշնատ ու գղգուած լուացարար կանայք, որոնք քչտած վախտ ձեռներով արդուկում էին բաց պատուհանների առաջ, որոնցից փաթիլ-փաթիլ սապնաչոգի էր դուրս ժայթքում. այդպէս էին այն երկու՝ գոգնոցաւոր և անկօշիկ ու միմիայն ոտի փաթաթաններով ներկարարները, որոնք պճեղներից մինչև գլուխ թաթախուած էին ներկի մէջ: Արմունկից վերև քչտած արևառ, ջլուտ ու թոյլ ձեռքերով նրանք կրում էին ներկի մի դոյլ և չարունակ կռւում էին իրար հետ: Նրանց դէմքերը յոգնատանջ էին ու զայրացած: Նոյնպիսի դէմք ունէին նաև փոշոտած ու սևուկ ապրանքակիր կառապանները, որոնք ամմամբում էին իրանց կառքերի վրայ: Նոյնպիսի դէմք ունէին նաև ուռուտած և գլչատած մարդիկ ու կանայք, որոնք իրանց երեխաների հետ փողոցների անկիւններում կանգնած ողորմութիւն էին խնդրում: Նոյնպիսի դէմքեր էին երևում նաև այն պանդոկի բաց պատուհաններում, որի մօտով անցաւ Նեխլիւդօվը: Կեղտոտ սեղաններ չուրջը, որոնց վրայ դարսած էին չիչեր և թէյի ամաններ և որոնց արանքներով, օրօրուելով, արագ-արագ անց ու դարձ էին անում փոքրաւորները, նստած էին և զռռոռում ու երգում էին զանազան մարդիկ, քրտնած, կարմրատակած ու չչմած երեսներով: Մէկը նստած էր պատուհանի մօտ, յօնքերը վեր քաշած ու շրթունքները դուրս հռած, և նայում էր դէպի առաջ, կարծես աշխատելով յիշել ինչ-որ մի բան:

«Մի հարցնող լինի, թէ ինչու են այդ մարդիկը բոլորը հաւաքուել այստեղ», մտածում էր Նեխլիւդօվը ակամայ ներս չնչելով յուրա քամու բերած փոշու հետ նոր ներկի կծուած իւղի ամեն տեղ տարածուած հոտը:

Մի փողոցում նրա յետևից հասաւ ապրանքակիր կառքերի մի շարք, որոնք բարձած էին ինչ-որ երկաթեղէնով և այնպէս սաստիկ դղրդոց էին հանում, որ նրա ականջներն ու գլուխը սկսեցին ցաւել: Նա արագացրեց քայլերը, ուզելով առաջ անցնել, բայց յանկարծ երկաթեղէնի դղրդոցի մէջ լսեց իր անունը: Նա կանգ առաւ և իրանից մի քիչ առաջ տեսաւ արընթաց կառքի մէջ նստած մի արածայր ու չրեչած բեխերով և լպստած վայլուն երեսով մի գինուորականի, որ ողջոյնի նշան էր անում նրան ձեռքով և ժպտում էր, բանալով չափից վեր ապիտակ ատամները:

—Դու՛ւռ ես, Նեխլիւդօվ:

Նեխլիւդօվի առաջին զգացածը հաճոյք էր:

—Ա՛ա, Շէնբօկ,—ուրախ-ուրախ բացականչեց նա, բայց իսկոյն և ետ հասկացաւ, որ ուրախանալու ոչինչ չը կար:

Այդ նոյն Շէնբօկն էր, որ այն ժամանակ հիւր եկաւ հօրաքոյրների մօտ: Նեխլիւդօվը վաղուց նրան աչքից կորցրել էր, բայց լսել էր նրա մասին, որ, չը նայելով պարտքերին, նա զօրացնդից դուրս գալով և հնձելաշօրքի պահեստի մէջ մնալով, մի կերպ ինչ-որ միջոցներով կարողանում էր իր դիրքը պահպանել հարուստների չրջանում: Նրա ուրախ և գոհ կերպարանքը հաստատում էր այդ:

—Ինչ լաւ էր, որ քեզ պատահեցի: Թէ չէ ոչ ոք չը կայ քաղաքում: Բայց պէտք է ասեմ, մեր տղայ, որ ծերացել ես,—ասում էր նա կառքից վայր գալով և ուսերը չիտկելով:—Միմիայն քայլուածքիդ ճանաչեցի քեզ: Հ՛ը, այսօր միասին նկ ճաշելու, չէ: Ձեզնում որեղ կարելի է կարգին ճաշ ստանալ:

—Ձը դիտեմ, ժամանակ կ՛ունենամ թէ չէ,—պատասխանեց Նեխլիւդօվը, մտածելով միայն այն բանի մասին, որ դևխիցը ցանի ընկերին, առանց նրան վիրաւորելու:—Ինչու՞ ես եկել այստեղ,—հարցրեց նա:

—Գործեր ունեմ, սիրելիս: Ինամակալութեան վերաբերեալ գործեր: Աւիր խնամակալ եմ նշանակուած: Կառավարում եմ Սամանօվի գործերը: Ճանաչում ես, յայտնի հարուստ է: Նա վաճառիչ է, իսկ ունի 54 հազար օրավար հող,—ասաց նա մի առանձին հպարտութեամբ, կարծես թէ իր ձեռքի չնորհքն էին այդ բոլոր օրավարները:—Գործերը սաստիկ անփոյթ էին թողուած: Հողը ամբողջապէս մաս-մաս կտրելով էր տրուած գիւղացիներին: Նրանք ոչինչ չէին վճարում. 80 հազարից աւելի սպառիկ կար վրանները: Մի տարում ամեն բան փոխեցի և խնամակալութեանը 70% աւելի տուեցի: Հը՞, ինչ կ՛ասես,—հարցրեց նա հպարտութեամբ:

Նեխլիւդօվը յիշեց, որ լսել էր, թէ ինչպէս այդ Շէնբօկը հէնց այն պատճառով, որ կևրել էր իր ամբողջ ստացուածքը և խրուել անվճարելի պարտքերի մէջ, մի առանձին հովանաւորութեան չնորհիւ խնամակալ էր նշանակուել մի վանիչ ծերունի հարուստի կարողութեան վրայ և այժմ, ակներևաբար, պարում էր այդ խնամակալութիւնից ստացած միջոցներով:

«Ի՞նչպէս անեմ, որ օձիքս ազատեմ սրանից, առանց վիրաւորելու»,—մտածում էր Նեխլիւդօվը, նայելով նրա լպստած, լիքը երեսին ու փիքասատուար քաշած բեխերին և լսելով նրա բարեհոգի—ընկերական դատարկախօսութիւնը այն բանի մասին, թէ որտեղ կարելի է լաւ ճաշել, և նրա պարծենկոտութիւնը

այն բանի մասին, թէ ինչպէս է ինքը կարգի դնել խնամակալութեան գործերը։

—Դէ ասա տեսնենք, ո՞րտեղ ենք ճաշում։

—Ես ժամանակ չունեմ,—ասաց Նեխլիւդովը, նայելով ժամացոյցին։

—Որ այդպէս է, այսպէս կ'անենք։ Այս երեկոյ ձիարշաւ կայ։ Կը լինես այնտեղ։

—Չէ, չեմ լինի։

—Եկ այնտեղ։ Ես այլ ևս սեփական ձիեր չունեմ։ Բայց գրազ եմ բռնում Գրիչայի ձիերի համար։ Ցիշում ես։ Նա լաւ ախոռատուն ունի։ Արի ուրեմն, միասին կ'ընթրենք։

—Ընթրել էլ չեմ կարող,—ժպտալով ասաց Նեխլիւդովը։

—Վա, այդպիսի բան կը լինի՞։ Լաւ, հիմա ուր ես գնում։ կ'ուզես քեզ հասցնեմ։

—Փաստաբանի մօտ եմ գնում։ Նա չատ մօտ է կենում, այն անկիւնի այն կողմը,—ասաց Նեխլիւդովը։

—Ճիշտ է, դու ինչ որ մի բանով զբաղուած ես բանտում։ Բանտային փաստաբան ես դարձել։ Կօրչագինները ասացին ինձ,—ծիծաղելով ասաց Շէնբօկը։—Նրանք արդէն գնացել են։ Աւա տեսնենք, ինչ բան է այդ։

—Ինչ որ ասել են՝ ճիշտ են ասել,—պատասխանեց Նեխլիւդովը,—այստեղ ինչ տեղն է պատմելու։

—Գիտեմ, գիտեմ, դու միշտ մի քիչ տարօրինակ մարդ էիր։ Ուրեմն կը գաս ձիարշաւին։

—Չէ, չեմ կարող, և չեմ ուզում գալ։ Ը՛ը նեղանաս, խնդրեմ։

—Ինչեր ես ասում, ինչ նեղանալու բան կայ։ Հա, դու ո՞րտեղ ես կենում,—հարցրեց նա, և յանկարծ նրա դէմքը լրջացաւ, աչքերը կանգ առան, յօնքերը բարձրացան։ Նա, ակներեւաբար, ուզում էր ինչ-որ մի բան յիշել, և Նեխլիւդովը նկատեց նրա դէմքի վրայ իսկ և իսկ նոյն բուռն արտայայտութիւնը, որ ունէր պանդոկի պատուհանի առաջ նստած՝ յօնքերը վեր քաշած ու չրթունքները չռած մարդը։

—Այ թէ ցուրտ է անում, հա՛։

—Ճիշտ որ չատ ցուրտ է։

—Առած բաներս քո մօտ են,—դիմեց Շէնբօկը կառապանին։

—Ուրեմն մնաս բարև, աստիկ ուրախ եմ, որ քեզ հանդիպեցի,—ասաց նա Նեխլիւդովին և պինդ սեղմելով ձեռքը, թռաւ նստեց կառքը, լսուած երևի առաջ թափ տալով նոր

ու սպիտակ ձեռնոցով լայն ձեռքը և իր սովորական ժպիտով բանալով չափազանց սպիտակ առամները։

«Մ'թէ ես էլ այդպէս էի,—մտածում էր Նեխլիւդովը, չարունակելով ճանապարհը դէպի փաստաբանի բնակարանը։—Այո, թէև գուցե բոլորովին այդպէս չէի, բայց ուզում էի այդպէս լինել և կարծում էի, թէ ամբողջ կեանքս անցնելու եմ այդպէս։

XI

Փաստաբանը հերթից առաջ ընդունեց Նեխլիւդովին ու իսկոյն և նէթ սկսեց խօսել Մենշօվների գործի մասին, որ նա արդէն կարդացել էր, և իր վրդովմունքը յայտնեց մեղադրանքի անհիմն լինելու նկատմամբ։

—Վրդովեցուցիչ գործ է,—ասում էր նա։—Շատ հասկանալի է, որ ինքը ուէրն է կրակ դնել ապահովագրութեան արժէքը ստանալու համար. յամենայն դէպս, Մենշօվների մեղաւորութիւնը ամենևին ապացուցուած չէ։ Ոչ մի փաստ չը կայ նրանց դէմ։ Նրանք բանտ են ընկել քննիչի առանձին եռանդի և դատախազի օրինականի անհոգութեան չնորհիւ։ Եթէ գործը գաւառում չը վճռուի, այլ այստեղ, ես հաստատ խօսք եմ տալիս տանել և ոչ մի վարձատրութիւն չեմ ուզում։ Ինչ վերաբերում է միւս գործին, Ֆէօդօսիա Բիբիկովայի խնդիրքը Բարձրագոյն անունով գրուած պատրաստ է. եթէ գնալու էք Պետերբուրգ, վերցրէք հետներդ, ինքներդ տուէք ու խնդրեցէք։ Թէ չէ այնտեղից այստեղ կը հարցնեն ու ոչինչ դուրս չի գալ։ Դուք աշխատեցէք այնպիսի անձանց տեսնել, որոնք ազդեցութիւն ունեն խնդրագիրների յանձնաժողովում։ Այս էր բոլորը, չէ՞։

—Չէ, ահա ինձ գրում են բանտից…

—Ինչպէս տեսնում եմ, գուք մի տեսակ աղբիւրի ակ էք դարձել, որտեղից դուրս են բղխում բանտի բոլոր գանգատները,—ժպտալով ասաց փաստաբանը։—Չափազանց չատ գործ կը լինի, գուցէ ուժներդ չը պատի։

—Բայց այս չատ զարմանալի գործ է,—ասաց Նեխլիւդովը ու սկսեց կարճառօտ պատմել գործի էութիւնը։

—Ի՞նչն է ձեզ այդտեղ զարմացնում։

—Ամեն ինչ. ես դեռ հասկանում եմ ուրեադնիկի արածը, նրան հրամայուած է եղել. բայց մեղադրական թուղթը կազմող դատախազի օրինականը չէ՞ որ կրթուած մարդ է…

—Սխալն էլ հէնց դրանում է, որ մենք սովորել ենք կար-

ծել, թէ դատախազները և առհասարակ դատական պաշտօնեաները՝ ինչ-որ նոր, ազատամիտ մարդիկ են։ Մի ժամանակ նըբանք ճիշտ որ այդպէս էին, բայց այժմ բոլորովին ուրիշ բան են։ Նրանք այժմ ոչ այլ ինչ են, եթէ ոչ միմիայն ամսի 20-ի *) մասին մտածող ատիճանաւորներ։ Նրանք առճիկ են ստանում, նրանց պէտք է որքան կարելի է շատ առճիկ, և դրա մէջն են նրանց բոլոր սկզբունքները։ Նրանք ում ուզում էք կը մեղադրեն, կը դատեն, կը դատապարտեն... Ես միշտ ասում եմ պարոն դատաւորներին,—շարունակում էր փաստաբանը,—որ ես չեմ կարողանում առանց երախտագիտական զգացմունքի տեսնել նրանց, որովհետև եթէ ես, դուք, մենք բոլորս առհասարակ՝ բանտում չենք, այդ միմիայն նրանց շնորհիւ է. ոչինչ չարժի ապացուցանել, որ մեղնից իւրաքանչիւրը արժանի է առանձին իրաւունքներից զրկուելու և ոչ այնքան հեռաւոր տեղեր աքսորուելու պատժին։

—Բայց եթէ ամեն ինչ կախուած է դատախազի կամայականութիւնից և այն անձերից, որոնք կարող են օրէնքը գործադրել կամ չը գործադրել, էլ ինչու համար է դատարանը։

Փաստաբանը ուրախ-ուրախ քրքջաց։

—Շատ թունդ հարցեր էք տալիս։ Այդ արդէն փիլիսոփայութիւն է։ Եթէ ուզում էք՝ կարելի է դրա մասին էլ խօսել։ Այ հաւեցէք այստեղ չաքաթ օրը։ Ինձ մօտ կը հանդիպէք գիտնականների, դրողների, արուեստագէտների։ Այն ժամանակ կը խօսենք ընդհանուր հարցերի մասին,—ասաց փաստաբանը հեգնական ոգևորութեամբ արտասանելով «ընդհանուր հարցեր» խօսքերը։—Կնոջս հետ ծանօթ էք։ Համեցէք չաքաթ օր։

—Այո, կ'աշխատեմ գալ,—պատասխանեց Նեխլիւդովը, զգալով, որ ինքը ստում է ասում և ոչ միայն չի աշխատի գալ, այլ, ընդհակառակը, կ'աշխատի չը գտնուել երեկոյեան փաստաբանի տանը՝ նրա մօտ հաւաքուող գիտնականների, դրողների և արուեստագէտների չը ջանում։

Այն ծիծաղը, որով փաստաբանը պատասխանեց Նեխլիւդովի այն նկատողութեանը, թէ դատարանը ոչ մի նշանակութիւն չունի, եթէ դատաւորները իրանց քմահաճոյքով կարող են գործադրել կամ չը գործադրել օրէնքը, և այն չէչոը, որով նա արտասանեց «փիլիսոփայութիւն» ու «ընդհանուր հարցեր» խօսքերը, ցոյց տուեցին Նեխլիւդովին, թէ ինչպէս բոլորովին տարբեր կերպով են նայում իրերի վրայ ինքը ու փաստաբանը

*) Ինչպէս յայտնի է, Պետերսբուրգում ատիճանաւորները առճիկ ստանում են ամսի 20-ին։ Ե. Թ.

և, հաւանականօրէն, նաև փաստաբանի բարեկամները, և թէ ինչպէս ինքը իրան աւելի հեռու է զգում փաստաբանից ու նրա չրջանի մարդկանցից, քան իր նախկին բարեկամներից, օրինակ Շէնբօկից, որոնցից այնքան հեռացել է այժմ։

XII

Բանտը հեռու էր, իսկ ժամանակը՝ ուշ, ուստի Նեխլիւդովը կառք վարձեց բանտը գնալու համար։ Մի փողոցով անցնելիս կառապանը, որ միջին տարիքի մարդ էր՝ խելօք ու բարեհոգի դէմքով, դիմեց Նեխլիւդովին, ցոյց տալով նոր չինուող մի ահագին տուն։

—Տեսէք. ինչ ահագին բան են չինել,—ասաց նա, կարծես թէ ինքն էլ մասամբ այդ տունը չինողներիցն էր և պարծենում էր դրանով։

Ճիրաւի, ահագին տուն էր՝ ինչ որ բարդ, արտասովոր ոճով։ Սոճիի խոշոր գերաններից չինուած ամուր աստղաձագարը, որ փակցուած էր երկաթէ գօղերով, չրջապատում էր կառուցուող չինքը, բաժանելով նրան փողոցից վայել պատուարով։ Աստղաձագարի տախտակամածներով մրջիւնների նման գնում-գալիս էին կրաչաղալս բանուորներ, որոնցից ոմանք քար էին տաչում, միւսները՝ պատ գնում, ոմանք էլ կրում էին դէպի վերև ծանր և դէպի ներքև՝ դատարկ կրելիքներ ու դոյլեր։

Մի հաստլիկ ու գեղեցիկ հագնուած պարոն, երևի ճարտարապետը, աստղաձագարի մօտ կանգնած ու վերևում ինչ-որ մի բան ցոյց տալով, խօսում էր կապալառուի հետ, որ ակնածութեամբ լսում էր նրան։ Դարպասի միջով ճարտարապետի կողքով դուրս էին գալիս դատարկ սայլեր և ներս մտնում բարձած սայլեր,

«Ի՜նչպէս դրանք բոլորն էլ հաւատացած են, և՛ նրանք, որոնք աշխատում են, և՛ նրանք, որոնք բանեցնում են աշխատողներին, թէ այդ այդպէս էլ պէտք է լինի, թէ այն ժամանակ, երբ նրանց կանայք ուժից վեր աշխատում են տանը և նաև, երբ նրանց երեխաները, թաւալները գլուխներին, վերահաս աւելի մահութիւնից առաջ ծերունակերպ ժպտում են, տարուբերելով ճկերք ոտները, իրանք պէտք է այստեղ չինեն այդ յիմար ու անպէտք տունը ինչ-որ յիմար ու անպէտք մարդու համար», մտածում էր Նեխլիւդովը, նայելով այդ տանը։

—Հա, շատ յիմար տուն է,—ասաց նա բարձրաձայն իր մտայղացը։

—Ի՞նչպէս թէ յիմար,—վիրաւորուելով ասաց կառապանը։

—Փառք Աստուծու, աշխատանքի դուռ է բաց արել ժողովրդի համար։ Ո՞րտեղի յիմար բանն է։

—Բայց չէ՞ որ անպէտք աշխատանք է։

—Անպէտք որ լինէր, չէին չինի,—առարկեց կառապանը,—ինչքան մարդու հաց է տալիս։

Նեխլիւդովը լռեց, մանաւանդ այն պատճառով, որ դժուար էր խօսել անիւների դղրդոցի մէջ։ Բանտի մօտերքը կառքը սահլայատակից անցաւ խճուղու վրայ, այնպէս որ աւելի հեշտ էր խօսել, և կառապանը նորից դիմեց Նեխլիւդովին.

—Հիմմա սկսել են քաղաք թափուել այս արհեստաւորները հա,—ասաց նա, չուռ գալով դէպի Նեխլիւդովը և ցոյց տալով մի խումբ գիւղացի գործաւորների վրայ, որոնք, աղոյները, կացինները, կիսամուշտակները ու տոպրակները չալակներին, գալիս էին նրանց հանդէպի կողմից։

—Մի թէ այժմ աւելի են գալիս, քան առաջուայ տարիները,—հարցրեց Նեխլիւդովը։

—Ի՞նչ ասել կ'ուզի։ Հիմա այնպէս են կիսուում քաղաքը, ինչպէս ճանճը մեղրի վրայ։ Ամեն տեղ լցուել են։ Գործաւէրների համար բանուորը կամ տաչեղը՝ մէկ հաչիւ է, երբ ուզում են՝ դէն են չպրտում։

—Ինչի՞ն է այդպէս եղել։

—Շատացել են։ Տեղը քչութիւն է անում։

—Ի՞նչ անենք, որ շատացել են։ Ինչո՞ւ չեն մնում գիւղում։

—Գիւղում մնան ինչ անեն։ Հող չը կայ։

Նեխլիւդովը նոյնն էր զգում, ինչ որ լինում է, երբ մարդու մարմնի մի տեղը ցաւացրած է լինում։ Թւում է, թէ որ կողմն էլ չուռ ես գալիս՝ կարծես կամաւ ցաւոտ տեղն ես դիպցնում, իսկ այդ այդպէս է թւում միմիայն այն պատճառով, որ ցաւոտ տեղը դիպչելիս է միայն մարդ զգում։

«Մի թէ ամեն տեղ նոյնն է», մտածեց նա ու սկսեց հարց ու փորձ անել կառապանին, թէ որքան հող ունի իրանց գիւղը և ինքը կառապանը, և թէ ինչո՞ւ է նա քաղաքում ապրում։

—Մեր գիւղում չունչին մի օրավար հող է գալիս, աղա։ Մենք երեք հոգու հող ունենք,—յօժարութեամբ բացատրում էր կառապանը։ Մեր տանը հայրս է մնացել ու եղբայրս. միւս եղբօրս դինուոր են տարել։ Նրանք են կառավարում ամեն ինչ։ Ասենք, կառավարելու բան չը կայ։ Եղբայրս էլ ուզում էր Մոսկուա գալ։

—Չի՞ կարելի միթէ կապալով հող վերցնել։

—Հիմա ո՞վ հող կը տայ կապալով։ Աղանները ունեցած հողերը կերան, վչացրին։ Վաճառականները ինչ կայ չը կայ հաւաքեցին իրանց բուի մէջ։ Նրանցից առնել չէ կարելի, իրանք են վարուցանքս անել տալիս։ Մեղնում մի ֆրանսիացի է առել հողը աղայից։ Ինչ անում ենք՝ կապալով չէ տալիս։

—Ի՞նչ ֆրանսիացի։

—Դիւֆար է անունը, դուցէ լսած լինէք։ Մեծ թատրոնում դերասանուհիների համար կեղծամներ է չինում։ Շահաւէտ գործ է, հարստացել է։ Մեր աղչիկպարոնից ամբողջ կալուածը առաւ ու հիմա նա է մեր տէրը։ Որ կողմն ուզում է, դէնն էլ քշում է մեզ։ Փառք Աստուծու, որ լաւ մարդ է։ Մի այն թէ կինը, որ մեր ռուսներից է, կապովի չուն լինի կարծես։ Գըռփում է ժողովուրդին։ Հոգինները հանում է... Ահա և բանար։ Ո՞ւր էք ուզում, որ տանեմ ձեզ. դռան մօտ։ Ես ասեմ՝ չեն թողնում։

XIII

Սրտատրոփ և լի երկիւղով այն մտածմունքից, թէ ինչ դրութեան մէջ կը գտնի այսօր Մասլօվային, և այն գաղտնիքից, որ կազմում էին նրա համար թէ Մասլօվան և թէ բանտում եղող մարդկանց բազմութիւնը, Նեխլիւդովը քաշեց գլխաւոր մուտքի զանգը և, երբ վերակացուն դուրս եկաւ, հարցրեց նրանից Մասլօվայի մասին։ Վերակացուն տեղեկացաւ ու ասաց որ նա հիւանդանոցումն է։ Նեխլիւդովը գնաց հիւանդանոց։ Հիւանդանոցի պահապանը, որ մի բարեհոգի ծերուկ էր, իսկոյն և եթ ներս թողեց նրան և, իմանալով, թէ ում է ուզում տեսնել, ուղղեց նրան երեխաների բաժանմունքը։

Երիտասարդ բժիշկը, որ ամբողջապէս տոգորուած էր կարբոլեան թթուտուով, դուրս եկաւ միջանցքը և խիստ կերպով հարցրեց Նեխլիւդովից, թէ ինչ է ուզում նա։ Այդ բժիշկը միշտ կատարում էր կալանաւորների խնդիրքը, ուստի և չարունակ անախորժ ընդհարումներ էր ունենում բանտային վարչութեան և նոյն իսկ գլխաւոր բժշկի հետ։ Վախենալով, թէ մի դուցէ Նեխլիւդովը որևէ ապօրինի բան խնդրի իրանից, և, բացի այդ, ուզելով ցոյց տալ, որ ինքը ոչ ոքի համար բացառութիւն չէ անում, նա բարկացած ձևացաւ։

—Այստեղ կանայք չը կան, այս երեխաների բաժանմունքն է,—ասաց նա։

—Ես գիտեմ այդ, բայց այստեղ կայ բանտից տեղափոխուած մի հիւանդացած աղախին։

—Այո, երկուսը կան այստեղ։ Բայց ինչ էք ուզում։

—Ես մօտիկ մարդ եմ նրանցից մէկին, Մասլօվային,—ասաց Նեխլիւդօվը,—և ուզում եմ տեսնել նրան. գնում եմ Պետերբուրգ նրա գործի համար վճռաշինչ դանգատ տալու։ Բայց այդ, ուզում էի նրան տալ այս բանը։ Ոչինչ չը կայ մէջը, միայն մի լուսանկար պատկեր է,—ասաց Նեխլիւդօվը, գրպանից հանելով մի ծրար։

—Ինչու չէ, այդ կարելի է,—ասաց բժիշկը մեղմանալով և, դիմելով մի սպիտակ գոգնոցաւոր պառաւ կնոջ, պատուիրեց կանչել հիւանդապահ կալանաւորուհի Մասլօվային։—Ջեք ուզի նստել կամ մտնել ընդունարանը։

—Շնորհակալ եմ,—ասաց Նեխլիւդօվը և, օգտուելով բժշկի մէջ կատարուած իր համար բարենպաստ փոփոխութիւնից, հարցրեց, թէ արդեօք գո՞հ են հիւանդանոցում Մասլօվայից։

—Ոչինչ, վատ չէ աշխատում, մանաւանդ եթէ նկատի առնենք այն պայմանները, որոնց մէջ նա ապրել է,—պատասխանեց բժիշկը,—բայց ահա և ինքը։

Մի դռան մէջից դուս եկաւ պառաւ հիւանդապահը ու նրա յետևից Մասլօվան։ Նա չերտաւոր շրջազգեստով էր ու սպիտակ գոգնոցով. գլխին շոր էր կապած, որ ծածկում էր մազերը։ Նեխլիւդօվին տեսնելով, նա կարմրեց, կանգ առաւ՝ կարծես անվճռականութեան մէջ ու յետոյ խոժոռուեց և, աչքերը կախ գցելով, արագ քայլերով գնաց դէպի նա՝ միջանցքում փռած փալասի վրայով։ Մօտենալով Նեխլիւդօվին, նա առաջ չէր ուզում ձեռք տալ նրան, յետոյ տուեց ձեռքը ու աւելի ևս կարմրեց։ Նեխլիւդօվը նրան չէր տեսել այն իսօսակցութիւնից յետոյ, որի ժամանակ նա ներողութիւն էր խնդրել, որ տաքացել էր, և կարծում էր, թէ նրան կը գտնի այնպէս, ինչպէս նա այն ժամանակն էր։ Բայց այսօր նա բոլորովին ուրիշ տեսակ էր և նրա դէմքի արտայայտութեան մէջ ինչ-որ նոր բան կար, զուսպ, ամօթխած ու ինչպէս Նեխլիւդօվին թուաց, չարակամ դէպի ինքը։ Նա նրան էլ նոյնը ասաց, ինչ որ բժշկին,—թէ գնում է Պետերբուրգ,—և տուեց Պանովոյից բերած լուսանկարը։

—Պանովոյումը գտայ, վաղուցուայ լուսանկար է, գուցէ ձեզ հաճոյք պատճառի։ Վերցրէք։

Մասլօվան, վեր քաշելով սև յօնքերը, զարմացած նայեց նրան իր չիլ աչքերով, կարծես հարցնելով, թէ ինչի համար է այդ։ Եւ լուռ վերցրեց ծրարը ու խրեց գոգնոցի յետևը։

—Ես այնտեղ տեսայ ձեր մօրաքրոջը,—ասաց Նեխլիւդօվը։

—Տեսաք հա,—ասաց Մասլօվան անտարբեր կերպով։

—Լաւ է այստեղ ձեզ համար,—հարցրեց Նեխլիւդօվը։

—Ոչինչ, լաւ է,—ասաց Մասլօվան։

—Շատ դժուար հօ չէ՞։

—Չէ, ոչինչ։ Դեռ չեմ ընտելացել։

—Ես չատ ուրախ եմ, որ ձեզ այստեղ են փոխադրել։ Ինչքան չը լինի, այնտեղից լաւ է։

—Ո՞rտեղից լաւ է,—հարցրեց Մասլօվան, կարմրելով։

—Բանտից,—չտապեց ասել Նեխլիւդօվը։

—Ինչո՞վ է լաւ,—հարցրեց Մասլօվան։

—Կարծում եմ, որ այստեղի մարդիկը աւելի լաւ են։ Այնպէս չեն, ինչպէս այնտեղի մարդիկը։

—Այնտեղ լաւ մարդիկ չատ կան,—ասաց Մասլօվան։

—Մենչօվների համար խօսելի և յոյս ունեմ, որ նրանց կ'ազատեն,—ասաց Նեխլիւդօվը։

—Տայ Աստուած, չատ հիանալի պառաւ է,—ասաց Մասլօվան, կրկնելով այն բնորոշումը, որ ինքը արել էր պառաւի վերաբերմամբ, և թեթև ժպտալով։

—Ես այսօր գնում եմ Պետերբուրգ։ Ձեր գործը չուտով կը քննուի սենատում. յոյս ունեմ, որ դատավճիռը կը ջնջեն։

—Ջնջեն չը ջնջեն, այժմ ինձ համար մէկ է,—ասաց Մասլօվան։

—Ինչո՞ւ այժմ։

—Այնպէս,—ասաց Մասլօվան հարևանցի ու հարցական հայեացք գցելով նրա վրայ։

Նեխլիւդօվը այդ խօսքը և այդ հայեացքը այն մտքով հասկացաւ, թէ նա ուզում է իմանալ, արդեօք ինքը հաստատ է մնում իր վճռին, թէ ընդունել է նրա մերժումը ու փոխել է վճիռը։

—Ձը գիտեմ՝ ինչու է միևնոյն բանը ձեզ համար,—ասաց նա։—Բայց ինձ համար ճիշտ որ մէկ է, կ'արդարացնեն ձեզ թէ ոչ։ Ինչ էլ լինի, ես պատրաստ եմ անել այն, ինչ որ ասացի այն օրը,—ասաց նա վճռաբար։

Մասլօվան բարձրացրեց գլուխը, և նրա սև ու չիլ աչքերը կանգ առան Նեխլիւդօվի դէմքի վրայ, միևնոյն ժամանակ նայելով նրա կողքով, ու ամբողջ երեսահարքը փայլեց ուրախութիւնից։ Բայց նա բոլորովին ուրիշ բան ասաց, քան այն, ինչ որ արտայայտում էին նրա աչքերը։

—Զուր բան էք ասում,—ասաց նա։

—Ասում եմ, որ դուք իմանաք։

—Այդ բանի մասին արդէն ամեն ինչ ասել էք ու էլ ասելու ոչինչ չի մնացել,—ասաց Մասլօվան, դժուարութեամբ պահելով ժպիտը։

Հիւանդասենեակից ինչ որ աղմուկ եկաւ։ Մանկական լաց լսուեց։

—Կարծեմ ինձ կանչում են,—ասաց Մասլօվան, անհանգստաբար յետ-յետ նայելով.

—Մնաք բարև, ուրեմն,—ասաց Նեխլիւդօվը։

Մասլօվան այնպէս ձեռացրեց, թէ չի նկատում Նեխլիւդօվի դէպի ինքը մեկնած ձեռքը և, ձեռք չը տալով, չուռ եկաւ ու, աշխատելով ծածկել իր յնծութիւնը, արագ քայլերով հեռացաւ միջանցքի փալասի վրայով։

«Ի՞նչ է կատարուում այդ հինգ հոգու մէջ։ Ի՞նչպէս է նա մտածում։ Ի՞նչպէս է զգում։ Ուզում է արդեօք փորձել ինձ, թէ յիրաւի չի կարողանում ներել։ Արդեօք չի՞ կարողանում ասել այն բոլորը, ինչ որ մտածում ու զգում է, թէ չի ուզում ասել։ Մեղմացել է արդեօք, թէ աւելի զայրացել»,—հարցնում էր ինքն իրան Նեխլիւդօվը ու չէր կարողանում պատասխան տալ։ Մի բան նա հաստատ գիտէր,—այն, որ նա փոխուել է, որ նրա մէջ կատարուում է նրա հոգու համար կարևոր փոփոխութիւն և որ այդ փոփոխութիւնը միացնում է իրան, Նեխլիւդօվին, ոչ միայն նրա հետ, այլ և Տիրոջ հետ, Որի անունով էր կատարուում այդ փոփոխութիւնը։ Եւ այդ միացումն էր նրա բերկրալից ու գորովալից արամադրութեան պատճառը։

Վերադառնալով հիւանդասենեակը, ուր դրուած էին ութ մանկական մահճակալներ, Մասլօվան, դժուարութեան քրոջ հրամանով, սկսեց փոխել անկողինը և, սաւանը ձեռքին չատ հեռու կանգնելով, սայթաքեց ու քիչ մնաց վայր ընկնի։ Հիւանդներից մէկը, վիզը կապած մի ազայ, որ արդէն լաւանում էր, ծիծաղեց, և Մասլօվան, այլ ևս չը կարողանալով զսպել իրան, նստեց մահճակալի վրայ, փռթկացրեց ու սկսեց այնպէս բարձրաձայն ու վարակիչ կերպով ծիծաղել, որ երեխաներից մի քանիսն էլ սկսեցին քրքջալ, իսկ դժուարեան քոյրը դառաց նրա վրայ.

—Ի՞նչ ես կչկչում։ Կարծեմ ես, էլի առաջուան տեղումն ես։ Գնա, կերակուրները բեր։

Մասլօվան լսեց և, ամանները վերցնելով, գնաց կերակուր բերելու, բայց յետ նայելով վիզը կապած ազային, որին արգելուած էր ծիծաղել, նորից փռթկացրեց։ Ամբողջ օրը, հէնց որ մենակ էր մնում, լուսանկարը դուրս էր քաշում ծրարի մէջից և հիանում վրան, բայց միայն երեկոյեան, երբ հերթապահութիւնը վերջացրեց ու մնակ մնաց այն սենեակում, ուր քնում էին ինքն ու միւս հիւանդապահ կինը, նա բոլորովին հանեց պատկերը ծրարից և երկար ժամանակ անշարժ նստած, աչքերով գգուելով ամենաչնչին մանրամասները և՛ դէմքերի, և

հագուստների, և՛ պատչամբի աստիճանների, և՛ այն թփերի, որոնք նկարահանք էին կազմում իր, Նեխլիւդօվի ու հօրաքոյրների կերպարանքների համար, նայում էր խուզնացած, դեղնած պատկերին և չէր կշտանում դիտելով մանաւանդ իր նկարը, իր ջահել, սիրուն և գանգրապատ ճակատով դէմքը։ Նա այնքան տարուել էր այդպէս դիտելով, որ չը նկատեց իր ընկերուհի հիւանդապահի ներս մտնելը։

—Այդ ինչ բան է։ Նա տուեց,—հարցրեց հաստլիկ ու բարեհոգի հիւանդապահուհին, կռանալով լուսանկարի վրայ։—Մինթէ այդ դու ես։

—Հապա ո՞վ պէտք է լինի,—ասաց Մասլօվան, ժպտերես նայելով իր ընկերուհու դէմքին։

—Իսկ այս մէկն ո՞վ է։ Նա է։ Իսկ սա, մայրն է։

—Հօրաքոյրն է։ Որ ես չասէի, ինձ չէիր ճանաչի,—հարցրեց Մասլօվան։

—Ո՞րտեղից պէտք է ճանաչէի։ Որ մեռնէի էլ չէի ճանաչի։ Բոլորովին ուրիշ դէմք է։ Մի տասը տարի հօ անցած կը լինի այն ժամանակից, չէ՞։

—Բանը տարիներումը չէ, այլ իմ վարած կեանքում,—ասաց Մասլօվան, և յանկարծ նրա ամբողջ դուարթութիւնը չքացաւ։ Դէմքը վհատ արտայայտութիւն ստացաւ և յօնքերի արանքին կնճիռ երևաց։

—Ձո կեանքիցդ էլ թեթև՝ էլ ինչ պէտք է լինէր։

—Ի՜նչպէս չէ, չատ թեթև էր,—կրկնեց նրա խօսքը Մասլօվան, աչքերը խփելով ու գլուխը թափ տալով։—Տաժանակիր աշխատանքներից էլ վատ էր։

—Ինչո՞վ էր վատ։

—Ինչո՞վ պէտք է լինի։ Երեկոյեան ժամի 8-ից մինչև առաւօտուայ 4-ը։ Եւ ամեն օր։

—Հապա ինչու՞ չեն թողնում, հեռանում։

—Շատ էլ ուզում են հեռանալ, բայց չեն կարող։ Է՜հ, չարժի խօսել,—բացականչեց Մասլօվան, վեր թռաւ տեղից, լուսանկարը չպրտեց սեղանի աչքը և, հազիւ հազ պահելով չթացած արցունքները, դուրս վազեց միջանցքը, դուռը պինդ խփելով յետևից։ Լուսանկարին նայելիս նա զգում էր իրան այնպէս, ինչպէս դուրս էր բերուած այնտեղ, յիշում էր, թէ որքան երջանիկ էր այն ժամանակ ինքը նրա հետ, և արդում էր, թէ դեռ կարող էր նոյնպէս երջանիկ լինել։ Ընկերուհու խօսքերը յիշեցրին նրան, թէ ինչ էր ինքը այժմ, նրա միտքը բերեցին իր վարած կեանքի ամբողջ սարսափելիութիւնը, որ ինքը անորոշ կերպով զգում էր այն ժամանակ, բայց թոյլ չէր տալիս

ինքն իրան որոշ դիտակցել։ Միայն այժմ վառ կերպով յիշեց նա այն բոլոր սոսկալի գիշերները և մանաւանդ մի բարեկենդանի գիշեր, երբ ինքը սպասում էր մի ուսանողի, որ խոստացել էր փող տալ անառակատան տիրուհուն ու ազատել նրան։ Յիշեց, թէ ինչպէս ինքը կիսաբաց ու գինոտուած կարմիր մետաքսէ հագուստով և խճճուած մազերը զարդարող կարմիր հանդոյցով, յոգնած, ուժասպառ ու հարբած, գիշերուայ ժամի երկուսի մօտ ճանապարհ դրեց այցելուներին և պարերի ընդմիջման ժամանակ նստեց ջութակահարին նուագակցող նիհար, ոսկրոտ ու պղուկոտ դաշնակահարուհու կողքին ու սկսեց դանդաղաւուել իր ծանր վիճակի մասին, և թէ ինչպէս այդ նուագակցուհին նոյնպէս ասում էր, որ ինքն էլ ճնշւում է իր վիճակից և ուզում է փոխել դրութիւնը, և թէ ինչպէս մօտեցաւ նրանց իր ընկերուհի կլարան և իրանք երեքով յանկարծ վճռեցին թողնել այդ կեանքը։ Նրանք ուզում էին արդէն գնալ իրանց սենեակները, երբ յանկարծ հարբած այցելուների ազմուկ լսուեց։ Ջութակահարը բիտուրնել ածեց, դաշնակահարուհին դադաղրեց քաղրիլի առաջին ձևի համար ռուս ժողովրդական մի ուրախ երգի նուագակցութիւն դինի հոտող ու գլուտացող մի հարբած մարդուկ, սպիտակ փողպատով և փրակով, որ նա հանեց երկրորդ ձևի ժամանակ, գրկեց նրան, իսկ միւս այցելուն, որ մի հաստլիկ ու միրուքաւոր մարդ էր, նոյնպէս փրակով (նրանք ինչ որ պարահանդէսից էին եկել) գրկեց Կլարային, և նրանք երկար ժամանակ պտոյտ-պտոյտ էին գալիս, պարում էին, դոռդոռում էին ու խմում... Եւ այդպէս չարունակ մի տարի, երկու տարի, երեք տարի։ Էլ ինչպէս չը փոխուէր։ Եւ այդ բոլորի պատճառը Նեխլիւդովն էր։ Եւ նրա մէջ յանկարծ նորից զարթնեց առաջուան զայրոյթը դէպի Նեխլիւդովը, յանկութիւն հայհոյել, նախատել նրան։ Նա ափսոսում էր, որ այսօր դէպքից չէր օգտուել մի անգամ ևս նրան ասելու, որ ինքը ճանաչում է նրան ու չի խաբուի նրանից, թոյլ չի տալ նրան չահագործել իրան հոգեպէս, ինչպէս չահագործել էր մարմնապէս, թոյլ չի տալ նրան իրան դարձնել նրա մեծահոգութեան առարկան։ Եւ մի կերպ հանգչնելու համար դէպի ինքը զգացած կարեկցութեան և Նեխլիւդովին ուղղուած ապարդիւն նախատինքի կսկիծը, նա ուզեց գինի խմել։ Եւ նա չէր պահի խօսքը ու գինի կը խմէր, եթէ բանտում լինէր։ Բայց այդտեղ գինի կարելի էր գտնել միմիայն ֆէլդշէրի մօտ, իսկ ֆէլդշէրից նա վախենում էր, որովհետև նա հետամուտ էր լինում իրան։ Տզամարդկանց հետ որ և է յարաբերութիւն ունենալը այժմ զզուելի էր Մասլովային։ Մի քիչ միջանցքի նստարանի վրայ նստելուց յետոյ, նա վերադարձաւ իրանց սենեակը և, ընկերուհու հարցերին պատասխան չը տալով, երկար ժամանակ լալիս էր իր անցրած կեանքի վրայ։

XIV

Պետերբուրգում Նեխլիւդովը չորս գործ ունէր,—Մասլովայի վճռայինչ խնդիրը՝ սենատում, Ֆեդօսեա Բիւրիւկովայի գործը՝ խնդրագիրների յանձնաժողովում, Վերա Բօգօդուխովսկայի յանձնարարած գործը ժանդարմային վարչութեան մէջ Շուստովայի ազատման մասին և մի գործ մի մօր տեսակցութեան մասին ամրոցում պահուող իր որդու հետ, որի մասին տոմսակ էր գրել նրան նոյն Վերա Բօգօդուխովսկայան։

Մասլենիկովին վերջին անգամ արած այցելութիւնից և մանաւանդ գիւղը գնալուց յետոյ Նեխլիւդովը իր ամբողջ էութեամբ զգուանք զգաց դէպի այն միջավայրը, որի մէջ ապրում էր ինքը մինչև այժմ, դէպի այն միջավայրը, ուր, նրա կարծիքով, այնքան մեծ չանքով էին ծածկում այն տանջանքները, որ միլիոնաւոր մարդիկ կրում են փոքրաթիւ մարդկանց յարմարութիւնները ու զուարճութիւնները ապահովելու համար, որ այդ միջավայրի մարդիկ չեն տեսնում ու չեն կարող տեսնել այդ տանջանքները, ուստի նաև իրանց կեանքի անգթութիւնը ու յանցաւորութիւնը։ Նեխլիւդովը այժմ այլ ևս չէր կարող յարաբերութիւն ունենալ այդ միջավայրի մարդկանց հետ առանց ամաչելու և ինքն իրան յանդիմանելու։ Եւ սակայն նրան դէպի այդ միջավայրն էին գրաւում նրա անցեալ կեանքի սովորոյթները, ազգականական ու բարեկամական յարաբերութիւնները, և գլխաւորապէս այն, որ այժմ նրան զբաղեցնող միակ բանը անելու համար, այն է՝ Մասլովային և միւս բոլոր անմեղ տանջուողներին օգնելու համար, նա պարտական էր աշակցութիւն ու ծառայութիւններ խնդրել այդ միջավայրի մարդկանցից, որոնց ոչ միայն նա չէր յարգում, այլ յաճախ վերաբերւում էր վրդովմունքով և արհամարհանքով։

Պետերբուրգ հասնելով և իջևանելով իր մօրաքրոջ, նախկին մինիստր կոմս Զարակիյի հինգ մօտ, Նեխլիւդովը միանգամից ընկաւ այժմ իր համար այնքան խորթացած արիստոկրատ շրջանի ուղղակի կենտրոնը։ Նրան անտանելի էր այդ բանը, բայց նա չէր կարող ուրիշ կերպ վարուել։ Եթէ մօրաքրոջ մօտ չիջևնէր, այլ հիւրանոցում, դրանով կը վիրաւորէր նրան։ Բայց այդ, մօրաքրոջը մեծ կապեր ունէր և կարող էր վերին աստիճանի

օգտակար լինել նրան այն բոլոր գործերում, որոնց մասին նա պէտք է աչխատէր։

—Այս ինչքա՜ն եմ լսում քո մասին։ Ինչ որ տաբօրինակ բաներ,—ասում էր նրան կոմսուհի Եկատերինա Իվանօվնան, գալուն պէս ուրճ տալով նրան իմ հետ։—Vous posez pour un Howard *)։ Օգնում ես յանցաւորներին։ Այցելում ես բանտերը։ Դարձի ես բերում։

—Ինչեր էք ասում, ամենևին մտքովս էլ չի անցնում այդ։

—Ինչո՞ւ, լաւ բան է այդ։ Միայն թէ, ասում են, մէջը ինչ-որ սիրային պատմութիւն կայ։ Պատմիր տեսնենք։

Նեխլիւդովը պատմեց իր ու Մասլովայի մէջ պատահածը, բոլորը ինչպէս որ եղել էր։

—Ցիշում եմ, յիշում, խեղճ էլէնը ինչ որ պատմում էր ինձ այն ժամանակ, երբ դու այն պատահների մօտ էիր ապրում **), նրանք կարծեմ քեզ ուզում էին պահել իրանց ձեռնասուն աղջկայ հետ (կոմսուհի Եկատերինա Իվանօվնան միշտ արհամարհանքով էր վերաբերւում Նեխլիւդովի հօրաքոյրներին)... Ուրեմն նա՛ է այդ։ Elle est encore jolie? (Դեռ սիրո՞ւն է նա)։

Եկատերինա Իվանօվնա մօրաքոյրը մի 60 տարեկան առողջատես, ուրախ, եռանդուն ու չատախօս կին էր։ Նա բարեբարոյական էր, չատ դէր, և չրթունքի վրայ սև բեխեր էին նըշմարւում։ Նեխլիւդովը սիրում էր նրան և երեխայութիւնն ժամանակից սովոր էր վարակուել նրա եռանդից և ուրախութիւնից։

—Չէ, ma tante (մօրքոյր), այդ բոլորը վերջացել պրծել է։ Ես միայն ուզում էի օգնել նրան, որովհետև նա անմեղ տեղն է դատապարտուած, և ես մեղաւոր եմ այդ բանում, ինչպէս և առհասարակ նրանում, որ նա այդպիսի վիճակի մէջ է ընկել։ Ես ինձ պարտաւոր եմ զգում անել նրա համար ինչ որ կարող եմ...

—Հապա ինչո՞ւ էին ասում, թէ ուզում ես պահուել հետը։

—Ես իսկապէս ուզում էի, բայց նա չէ ուզում։

Եկատերինա Իվանօվնան, դուրս պրծացնելով ճակատը և

*) «Հօուարդ էք ձեանում» (ֆրանսերէն գրքի մէջ են ասում նոյն իսկ այն դէպքերում, երբ ռուսերէն խօսելիս գրու՞ն են ասում)։ Հօուարդ (18-րդ դարում) հռչակաւոր բանտագէտ էր և մեծ մարդասէր։ Ե. Թ.

**) Խօսքը Նեխլիւդովի հօրաքոյրների մասին է, որ մենք սխալմամբ մինչև այժմ մօրաքոյր ենք թարգմանել, ռուսերէն тетя բառի անորոշութեան շնորհիւ։ Ե. Թ.

քաշ դնելով աչքերի բիբերը, զարմացած ու լուռ նայեց իր քրոջդու վրայ։ Ցանկարծ նրա դէմքը փոխուեց, զուարճութեան արտայայտութիւն առաւ։

—Պէտք է ասել, որ նա քեզնից խելօք է։ Ինչ յիմարն ես եղել դու։ Եւ դու կը պահուէիր նրա հետ։

—Անպատճառ։

—Այնպիսի կին լինելուց յետո՞յ։

—Եւս աւելի։ Չէ՞ որ ես եմ եղել այդ բոլորի պատճառը։

—Չէ, դու ուղղակի դմբո մարդ ես եղել,—ասաց մօրաքոյրը, զսպելով ժպիտը։—Սարսափելի դմբո մարդ, բայց ես քեզ հէնց նրա համար եմ սիրում, որ դու այդպիսի սարսափելի դմբո մարդ ես,—կրկնում էր նա, ըստ երևոյթին առանձնապէս հաւանելով այդ խօսքը, որ, նրա կարծիքով, ճիշտ էր արտայայտում իր քրոջդու մտաւոր և բարոյական վիճակը։—Գիտե՞ս, որքան ի դէպ է այդ,—չարունակում էր նա։—Aline-ը հիանալի Մագդալինեան ապաստարան ունի։ Ես միանգամ եղել եմ այնտեղ։ Այն տեղի կանայք սաստիկ զզուելի են։ Ցետոյ մի գլուխ լուացւում էին։ Բայց Aline corps et âme (հոգով մարմնով) զբաղուած է այդ գործով։ Այդ քո ասածին էլ կը տանք նրա ապաստարանը։ Եթէ նրան ուղղելու ճար կայ, Aline-ից լաւ ոչ ոք չի ուղղի։

—Բայց նա պատապարտուած է տաժանակիր աչխատանքների։ Ես հէնց նրա համար եմ եկել, որ աչխատեմ փոխել տալ այդ վճիռը։ Այդ առաջինն է այն գործերից, որ ես ունեմ ձեզ մօտ։

—Օհո՛։ Ո՞րտեղ է նրա գործը։

—Սենատում։

—Սենատո՞ւմ։ Իմ սիրելի cousin Լիսովչկան սենատո՞ւմն է։ Բայց նա հէրօլդիայի բաժանմունքո՞ւմն է։ Իսկ իսկականներից ոչ ոքի չեմ ճանաչում։ Ասուած գիտէ, թէ ովքեր են,—կամ գերմանացիներ՝ Գէ, Ցէ, Դէ—tout l'alphabet (ամբողջ այբբենարանը), կամ գանազան Իվանօվներ, Սեմիօնօվներ, Նիկիտիններ, կամ Իվանենկօ, Սիմօնենկօ, Նիկիտենկօ, pour varier (փոփոխութիւն դնելու համար)։ Des gens de l'autre monde (ուրիշ տեսակ մարդիկ)։ Բայց այնուամենայնիւ ես կ'ասեմ ամուսնուս։ Նա ծանօթ է հետները։ Նա ամեն տեսակ մարդկանց հետ ծանօթութիւն ունի։ Ես իրան կ'ասեմ։ Իսկ դու բայաարիր, թէ ինչումն է բանը, ապա թէ ոչ նա երբէք իմ ասածս չէ հասկանում։ Ինչ որ ասում եմ, ասում է, թէ ոչինչ չէ հասկանում։ C'est un parti pris (գիտմամբ է անում)։ Ամենքը հասկանում են, միայն նա է, որ չէ հասկանում։

Այդ ժամանակ գիւղապետը լաքէյը արծաթէ մատուցարանի վրայ մի նամակ բերեց։

—Հէնց Aline-ինն է։ Այ, ի դէպ, կիզէվէտաէրին էլ կը լսես։

—Ի՞նչ կիզէվէտաէր է այդ։

—Կիզէվէտաէրը։ Այ այսօր արի ու կ'իմանաս, թէ ով է։ Նա այնպէս է խօսում, որ ամենաբերթ չարագործները ծունկ են չոքում և լալիս են ու զղջում։

Կոմսուհի Եկատերինա Իվանօվնան,—որքան էլ այդ տարօրինակ էր և որքան քիչ էր յարմարում նրա բնաւորութեանը,—ջերմ կուսակից էր այն վարդապետութեան, որի համաձայն՝ քրիստոնէութեան էութիւնը կայանում է քաւութեանը հաւատալու մէջ։ Նա այցելում էր այն ժողովները, ուր քարոզւում էր այն ժամանակ մօդա ընկած այդ վարդապետութիւնը, և ժողովներ էր հրաւիրում իր մօտ հաւատացեալներին։ Զը նայելով որ այդ վարդապետութիւնը հերքում էր ոչ միայն բոլոր ծէսերը ու արքերի պատկերները, այլ և եկեղեցու խորհուրդները, կոմսուհի Եկատերինա Իվանօվնայի բոլոր սենեակներում և նոյն իսկ նրա մահճակալի գլխավերեւում արքերի պատկերներ էին կախ տուած, և նա կատարում էր եկեղեցու պահանջած բոլոր ծէսերը, ոչ մի հակասութիւն չը տեսնելով դրա մէջ։

—Այ եթէ քո Մագդաղինէն լսէր նրա քարոզը, խակին և եթ դարձի կը գար,—ասաց կոմսուհին։—Իսկ դու անպատճառ տանը եղիր այս երեկոյ։ Կը լսես նրան։ Զարմանալի մարդ է։

—Այդ ինձ համար հետաքրքրական չէ, ma tante.

—Իսկ ես քեզ ասում եմ, որ հետաքրքրական է։ Անպատճառ արի։ Դէ ասա տեսնենք էլ ինչ ես ուզում ինձանից։ Videz votre sac (տոպրակդ թափ տուր)։

—Մի գործ էլ կայ ամրոցում։

—Ամրոցում։ Այդ հնչում է, տոմսակ կը տամ քեզ բարօն Կրիգամուտի անունով։ C'est un très brave homme (հիանալի մարդ է)։ Աւանք, դու ինքդ էլ ճանաչում ես նրան։ Նա քո հօր ընկերն է։ Il donne dans le spiritisme (գրաււում է սպիրիտիզմով)։ Սակայն այդ ոչինչ։ Նա չատ բարի է։ Ի՞նչ գործ ունես ամրոցում։

—Պէտք է խնդրեմ, որ թոյլ տան մի հինոյ տեսնուել իր որդու հետ, որ բռնուած է այնտեղ։ Բայց ինձ ասացին, որ այդ Կրիգամուտից չի կախուած, այլ Չերվեանսկիյից։

—Չերվեանսկիյին ես չեմ սիրում, բայց ոչինչ, նա Mariette-ի ամուսինն է։ Կարելի է Mariette-ին խնդրել։ Նա ինձ համար կ'անի այդ բանը։ Elle est très gentille (նա չատ համակրելի է)։

—Պէտք է մի ուրիշ հինոյ համար էլ խնդրեմ։ Մի քանի ամիս է ինչ բռնուած է, բայց ոչ ոք չը գիտի, թէ ինչու։

—Ասում ես էլի.—ինքը անչուշտ լաւ գիտի, թէ ինչու է բռնուած։ Նրանք միշտ չատ լաւ են իմանում։ Եւ տեղն է նրանց, այդ խուզուածներին։

—Զը գիտեմ՝ տեղն է թէ չէ։ Բայց հաստատ է, որ նրանք տանջւում են։ Դուք քրիստոնեայ էք ու հաւատում էք Աւետարանին և սակայն այդպէս անգութ էք...

—Ի՞նչ զարմանալու բան կայ այդտեղ։ Աւետարանը՝ Աւետարան էլ կը մնայ, իսկ ինչ որ գարչելի է՝ գարչելի է։ Աւելի վատ կը լինի, եթէ ես կեղծեմ ու ասեմ, թէ սիրում եմ նիհիլիստներին, մանաւանդ խուզուած նիհիլիստուհիներին, մինչդեռ ես նրանց տանել չեմ կարողանում։

—Ինչու՞ չէք կարողանում տանել նրանց։

—Ինչու՞ են խառնւում այնպիսի բաների մէջ, որ իրանց գործը չէ։ Այդ՝ կանացի գործ չէ։

—Հապա ինչու՞ պէտք չէք, որ Mariette-ը պարապում է գործերով,—ասաց Նեխլիւդովը։

—Mariette-ը՞։ Mariette-ը՝ Mariette է։ Իսկ դրանք՝ Աստուած գիտէ՝ թէ ովքեր են,—մի որ և է Խալտուրկինա ուզում է խելք սովորեցնել ամենքին։

—Խելք սովորեցնելու բան չը կայ, ուղղակի ուզում են օգնել ժողովրդին։

—Առանց նրանց էլ լաւ գիտեն, թէ ում պէտք է օգնել և ում պէտք չէ օգնել։

—Բայց չէ որ ժողովուրդը տառապում է։ Այ ես հէնց այժմ գիւղից եմ գալիս։ Մի քանի լաւ բան է, որ գիւղացիները ուժից վեր աշխատում են ու կուշտ չեն ուտում, իսկ մենք ապրում ենք սարսափելի չոայլ կերպով,—ասում էր Նեխլիւդովը, մօրաքրոջ բարեհոգութեան չնորհիւ ակամայ ցանկութիւն զգալով յայտնել նրան այն բոլորը, ինչ որ ինքը մտածում էր։

—Իսկ քո ասածդ ինչ է,—որ ես աշխատեմ ու ոչինչ չուտեմ։

—Չէ, ես չեմ ուզում, որ դուք սոված մնաք,—ակամայ ժպտալով ասաց Նեխլիւդովը,—այլ ուզում եմ, որ բոլորս էլ աշխատենք և բոլորս էլ ուտենք։

Մօրաքոյրը, նորից քաշ գցելով ճակատն և բիբերը, հետաքրքրութեամբ յառեց հայեացքը նրա վրայ։

—Mon cher, vous finirez mal (*վերջդ վատ կը լինի, սիրելիս*)—ասաց Նա։

—*Ինչու՞ պէտք է վատ լինի։*

Այդ ժամանակ ներս մտաւ մի բարձրահասակ ու լայնաթիկունք դիւներալ։ Զարսկայա կոմսուհու ամուսինն էր այդ պաշտօնաթող մինիստրը։

—*Աա՛, բարև, Դմիտրիյ,*—ասաց Նա, *դէմ անելով նրան նոր ածիլած թուշը։*—*Ե՞րբ ես եկել։*

Նա լուռ համբուրեց հինոջ ճակատը։

—Non, il est impayable (*չատ ծիծաղելի մարդ է սա*)—*դիմեց կոմսուհի Եկատերինա Իվանօվնան իր ամուսնուն։—Ինձ առաջարկում է դնալ գետում լուացք անել և միմիայն գետնախնձոր ուտել։ Շատ յիմարն է, բայց այնուամենայնիւ ինչ որ խնդրում է՝ կատարիր։ Սարսափելի դիքս մարդ է,—սւղղեց Նա իր ասածը։—Իսկ լսել ես, Կամինսկայան, ասում են, այնպիսի յուսահատութեան մէջ է, որ վախենում են՝ մեռնի,—դիմեց Նա ամուսնուն,—լաւ կը լինի՝ գնաս մօտը։*

—*Այո, սարսափելի բան է,*—*ասաց ամուսինը։*

—*Ուրեմն գնացէք, իսօսեցէք, ես նամակներ ունեմ գրելու։*

Երբ Նեխլիւդօվը մտաւ հիւրասենեակի կողքի սենեակը, Նա գոռաց նրան հիւրասենեակից։

—*Ուրեմն գրե՞մ* Mariette-*ին։*

—*Խնդրեմ,* ma tante.

—*Ուրեմն բայ տեղ կը թողնեմ, ինքդ կը գրես ինչ որ պէտք է այն խուզուածի համար, իսկ* Mariette-*ը կը յանձնարարի իր ամուսնուն։ Ամուսինն էլ կը կատարի։ Մի կարծիր, թէ չար սիրտ ունեմ։ Իմ* protégée-*ները (քո հավանաւորեալ կանայք) բոլորն էլ դարչելի բաներ են, բայց* je ne leur veux pas de mal (*ես նրանց վատ բան չեմ ցանկանում*)։ *Տէրն իրանց հետ։ Դէ, գնա։ Իսկ երեկոյեան անպատճառ տանը եղիր։ Կը լսես կիզէվեատէրին։ Եւ ի՛նչօթենք։ Եւ եթէ չը հակառակես,* ça vous fera beaucoup de bien (*քեզ վրայ շատ լաւ ազդեցութիւն կ՚ունենայ*)։ *Ես գիտեմ, էլէնն էլ, դուք բոլորդ էլ այդ բանում շատ էք յիս ընկել։ Ուրեմն յաւետութիւն։*

XV

Կոմս Իվան Միխայլովիչը պաշտօնաթող մինիստր էր և հատուստ համոզմունքների տէր։

Կոմս Իվան Միխայլովիչի համոզմունքները, երիտասարդ ժամանակից ի վեր, նրանումն էին կայանում, որ ինչպէս թըռ-

չունին յատուկ է կերակրուել զեռուններով, ունենալ փետուրէ ու աղուամազէ հագուստ և թռչել օդի մէջ, այնպէս էլ իրան յատուկ է ուտել թանկագին խոհարարների ձեռքով պատրաստուած թանկագին կերակուրներ, հագնել ամենայարմար ու թանկագին հագուստներ և մեն գալ ամենահանգիստ ու արագընթաց ձիեր լծած կառքով, այնպէս որ այդ բոլորը պէտք է անպատճառ պատրաստ լինի նրա համար։ Բացի այդ, կոմս Իվան Միխայլովիչի կարծիքով՝ որքան ինքը չատ ստանար զանազան տեսակ հատկութիւններ պետական գանձարանից, որքան չատ չքանչաններ ունենար և որքան յուճախ տեսնուէր երկու սեռի բարձրաստիճան անձերի հետ, այնքան լաւ կը լինէր։

Իսկ մնացեալ ամեն ինչ, այդ հիմնական գաւանանքների համեմատութեամբ, կոմս Իվան Միխայլովիչը համարում էր չնչին ու անհետաքրքրական։ Մնացեալ ամեն ինչ կարող էր այսպէս էլ լինել, այնպէս էլ։ Այդ հատատի համաձայն կոմս Իվան Միխայլովիչը 40 տարի ապրել էր ու գործել Պետերբուրգում և 40 տարուց յետոյ հասել էր մինիստրի պաշտօնի։

Այն գլխաւոր յատկութիւնները, որոնց չնորհիւ կոմս Իվան Միխայլովիչը հասել էր այդ բանին, կայանում էին նրանում, որ, առաջինը, նա կարողանում էր հասկանալ գրուած թղթերի ու օրէնքների իմաստը և, թէև անչնորհք կերպով, բայց էլի կարողանում էր կազմել հասկանալի թղթեր և գրել՝ առանց ուղղագրական սխալների. երկրորդ, նրանում, որ նա չափազանց փառահեղ տեսք ունէր և, որտեղ պէտք լինէր, կարող էր ոչ միայն հպարտ, այլ և անմատչելի և վեհ տեսք ընդունել, իսկ որտեղ պէտք լինէր՝ կարող էր քաջ լինել. երրորդ, նրանում, որ նա չունէր ոչ մի ընդհանուր սկզբունք կամ կանոն, ոչ բարոյական, ոչ պետական, այնպէս որ ամենքի հետ կարող էր համաձայն լինել, երբ պէտք լինէր, և հարկը պահանջած ժամանակ՝ անհամաձայն լինել ամենքի հետ։ Այդպէս վարուելիս՝ նա միայն այն բանի մասին էր աչխատում, որ արտաքին վայելչութիւնը պահպանուած լինի և ակներն ինքնահաճոյութիւն դուրս չը գայ. իսկ թէ բարոյական են արդեօք իր արածները ինքն ըստ ինքեան թէ անբարոյական, արդեօք մեծագոյն բարիք կը յառաջանայ այդ բանից ուրացող կայսրութեան կամ ամբողջ աչխարհի համար թէ մեծագոյն չնաս, այդ նրա համար բոլորովին միևնոյնն էր։

Երբ որ Նա՝ մինիստր դարձաւ, ոչ միայն բոլոր նրանից կախումն ունեցողները,—իսկ նրանից չատ մարդիկ ու մարձաւորներ կախումն ունէին,—այլ և բոլոր կոլլեգիակի անձինք և նա ինքը հաւատացած էին, թէ նա չատ խելօք պետական անձն է։

Բայց երբ բաւական ժամանակ անցաւ, և նա ոչինչ չարեց ու ոչինչ ցոյց չը տուեց, և երբ, գոյութեան կռուի օրէնքի համաձայն, բոլորովին նոյնպիսի՝ թղթեր պրկ ու հաւակնալ առաջուց, վայելչատես և անակնդրուկնք ատաֆեանաւորներ նրան տեղահան արեցին և նա սոխալուած եղաւ դուրս գալ պաշտօնից, սոնները համոզուեցին, որ նա ոչ միայն մի առանձին խելքի տէր չէր, այլ և չատ սահմանափակ ու սակաւակիրթ, թէև չատ անձնապատան մարդ էր, որ հաղիւ հազ էր կարողանում իր հայեացքներով հասնել պահպանողական թերթերի առաջնորդող յօդուածների բարձրութեան։ Դուրս եկաւ, որ նրա մէջ չը կայ ոչ մի բան, որ նրան զանազանելիս լինէր նրան տեղահան առնող միւս սակաւակիրթ ու անձնապատան ատաֆեանաւորներից և նա ինքն էլ հասկացաւ այդ, բայց այդ ամենին չը թուլացրեց նրա այն համոզմունքը, թէ ինքը սոնն տարի պէտք է սոսանայ մեծ քանակութեամբ արքունի վոզ և նոր չքանչաններ։

Կոմս Իվան Միխայլովիչը լսեց Նեխլիւդովի ասածը այնպէս, ինչպէս մի ժամանակ լսում էր գործերի կառավարչի զեկուցումները, և լսելուց յետոյ ասաց, որ երկու տոմսակ կը տայ նրան։ Տոմսակներից մէկը վճռաչինչ բաժանմունքի անդամ Վօլֆի անունով էր։

—Շատ բաներ են ասում նրա մասին, բայց dans tous les cas c'est un homme très comme il faut (յամենայն դէպս, նա չատ վայելուչ մարդ է),—ասաց նա։—Ես նրան չատ եմ պարտաւորեցրել, այնպէս որ ինչ որ կարողանայ՝ կ'անի։

Միւս տոմսակը խնդրագիրների յանձնաժողովի մի ազդեցիկ պաշտօնեայի անունով էր։ Ֆեդօսեա Բիրիւկովայի գործը, Նեխլիւդովի պատմածով, չատ հետաքրքրեց կոմսին։ Երբ որ Նեխլիւդովը ասաց նրան, որ ինքը ուզում է նամակ գրել մի չատ բարձրագիրք անձնաւորութեան, նա ասաց, որ յիրաւի չատ արտաչարժ գործ է այդ և որ հարկ եղած ժամանակը կարելի է պատմել այդ բանը։ Բայց խոստանալ չէր կարող։ Թող խնդիրքը տրուի իր կարգին։ Իսկ եթէ դէպք լինի,—մտածեց նա,—եթէ հրաւիրեն petit comité-ի նիստի, գուցէ այնտեղ ասի։

Ստանալով կոմսից այդ երկու տոմսակները և մօրաքրոջ տոմսակը Mariette-ի անունով, Նեխլիւդովը իսկոյն և եթ գնաց տոմսակները յանձնելու։

Ամենից առաջ նա գնաց Mariette-ի մօտ։ Նա ճանաչում էր Mariette-ին, երբ նա 14—15 տարեկան աղջիկ էր իր հօրական ոչ հարուստ, բայց արիստոկրատ ընտանիքում, նա գիտէր, որ նա ամուսնացել էր կաբիէբրա անող մի մարդու հետ, որի մասին ինքը զտնապան վատ բաներ էր լսել, և ինչպէս միչտ, տարօրինակ ծանր էր նրա համար խնդիրքով դիմել այնպիսի մարդու, որին ինքը չէր յարգում։ Այդ դէպքերում նա միչտ ներքին մաքառումն էր զգում և զժգոհութիւն իրանից ու տատանումն —խնդրել արդեօք թէ չը խնդրել, բայց միչտ էլ վճռում էր, թէ պէտք է խնդրել։ Նա մի տեսակ կեղծութիւն էր զգում իր դրութեան մէջ, իրը խնդրող գտնուելով այնպիսի մարդկանց մէջ, որոնց ինքը այլ ևս իր չրջանի մարդ չէր համարում, բայց որոնք նրան իրանց չրջանի մարդ էին համարում։ Բայի դրանից նա զգում էր, իր ինքը նորից սկսում էր գնալ առաջուան տոկորական չատզով և ակամայ ենթարկւում էր այդ չրջանում տիրող թևթևամիտ ու անբարոյական մթնոլորտին։ Նա այդ զգացել էր արդէն եկատերինա Իվանօվնա մօրաքրոջ մօտ։ Դեռ այս առաւօտ, մօրաքրոջ հետ ամենալուրջ բաների մասին խօսելիս, նա երբեմն կատակի եղանակ էր տալիս խօսքերին։

Առհասարակ Պետերբուրգը, որտեղ նա վաղուց չէր եղել, գործում էր նրա վրայ իր տոկորական՝ մարմնապէս կազդուրող և բարոյապէս բթացնող ազատութիւնը,—ամեն ինչ այնքան մաքուր է, յարմար ու բարեկարգ և մանաւանդ մարդիկ այնքան տակաւապահանջ են բարոյապէս, որ կեանքը չատ թեթև է թռում...

Մի հիանալի, մաքուր ու քաղաքավարի կառապան տարաւ նրան հիանալի, քաղաքավարի ու մաքուր փողոցապահ ատիկանների կողքով հիանալի, մաքուր ջրջնքած տալայատակի վրայով և հիանալի ու մաքուր տների մօտով այն տունը, ուր ապրում էր Mariette-ը։

Փողոցագրան մօտ կանգնած էին մի զոյգ անգլիական ձիեր աչքանոցներով և կապի տոպրակներով հպարտ-հպարտ նատած էր անգլիացու նման մի կառապան մինչև թչերի կէսը հասնող ձնօտամիրուքով, հատազդեստով և խարտեաշով։

Զարմանալի մաքուր հատազդեստ հագած մի գնդապան բաց արեց դուռը դէպի սրահը, որտեղ կանգնած էին աւելի ևս մաքուր ու երիզաւոր հատազդեստ հագած դրսեի լաքէյը՝ հրաչալի սանրած ձնօտամիրուքով և օրապահ զեկուցատուն նոր ու մաքուր հատազդեստով։

—Գեներալը չի ընդունում։ Գեներալուհին նոյնպէս չի ընդունում և այս րոպէիս կը բարեհաճի դուրս գալ տանից։

Նեխլիւդովը, հանելով կոմսուհի Եկատերինա Իվանօվնայի նամակը և իր այցետոմսը, մօտեցաւ այն սեղանին, որի վրայ դրուած էր այցելուների անունները դրի անցնելու մատեանը, և արդէն սկսել էր գրել, թէ ինքը ցաւում է, որ տանը չը կացրուցաւ գտնել ոչ ոքի, երբ լաքէյը քաչուեց գէպի սանդուխը,

դռնապանը դուրս եկաւ փողոցը ու գոռաց կառապանին, որ կառքը մօտեցնի դռան, իսկ վեհուցաւուն ձգուելով ու ձեռքերը ուղղահայեաց կախ տալով, սրսկուեց, աչքերով հանդիպելով ու ուղեկցելով իր կարճահասակ ու բարակակազմ աղջիկ պարոնին, որ իջնում էր սանդուխով իր վեհութեանը անհամապատասխան արագ քայլուածքով։

Mariette-ը սև զգեստով էր, սև թիկնոցով, մեծ ու փառաւոր գլխարկով և նոր ու սև ձեռնոցներով և երեսին քօղ ունէր։

Նեխլիւդովին տեսնելով, նա վեր քաշեց քօղը, բայց արեց իր շատ սիրունատես երեսն ու փայլուն աչքերը և հարցական կերպով նայեց նրան։

—Սա՛, իչխան Դմիտրիյ Իվանովիչ,—ուրախ ու ախորժելի ձայնով ասաց նա։—Ես կը ճանաչէի...

—Ի՞նչպէս, դուք նոյն իսկ յիշում էք իմ անունը։

—Ինչպէս չը յիշեմ. ես ու քոյրս նոյն իսկ սիրահարուած էինք ձեր վրայ,—ասաց նա ֆրանսերէն.—բայց ինչպէս փոխուել էք։ Սխ, որքան ցաւում եմ, որ ես սոխպուած եմ դուրս գնալ տանից։ Սակայն, գնանք վերև,—ասաց նա, կանգ առնելով սանդուխի մէջ։

Նա նայեց պատի ժամացոյցին։

—Չէ, չի կարելի։ Ես գնում եմ հոգեհանգստի կամենակայի մօտ։ Նա սարսափելի վշտի մէջ է։

—Ի՞նչ կամենակայա է այդ։

—Միթէ չէք լսել. որդին սպանուել է մենամարտում։ Պօզենի հետ է մենամարտել։ Միակ զաւակն էր։ Սարսափելի բան է։ Մայրը սոսկալի վշտի մէջ է։

—Այո, լսել եմ։

—Չէ, աւելի լաւ է ես գնամ, իսկ դուք եկէք վաղը կամ այս երեկոյ,—ասաց նա և արագ ու թեթև քայլերով գնաց դէպի փողոցի դուռը։

—Այս երեկոյ չեմ կարող,—ասաց Նեխլիւդովը դուրս գալով նրա հետ պատին։—Գիտէք, ես գործ ունեմ ձեզ մօտ,—չարունակեց նա, նայելով դատին մօտեցող չիկագոյն ձիերի գոյգին։

—Ի՞նչ գործ։

—Ահա մօրաքոյրս ձեզ գրում է,—ասաց Նեխլիւդովը, տալով նրան մեծ փակագրով զարդարուած նեղլիկ ծրարը։—Կը կարդաք, ամեն ինչ կ'իմանաք։

—Գիտեմ. կոմսուհի Կատերինա Իվանովնան կարծում է, թէ ես գործերի մէջ ազդեցութիւն ունեմ ամուսնուս վրայ։

Սխալւում է։ Ես ոչինչ չեմ կարող անել և չեմ էլ ուզում խառնուել։ Բայց, ի հարկէ, կոմսուհու և ձեզ համար ես պատրաստ եմ չեզուել իմ կանոնից։ Ինչումն է բանը,—ասում էր նա ան ձեռնոցով պատած փոքրիկ ձեռքով ի գուր փնտռելով գրպանը։

—Ամրոցում մի աղջիկ կայ բռնուած, մինչդեռ նա հիւանդ է և խառն չի եղել ոչինչում։

—Ի՞նչպէս է ազգանունը։

—Շուտուովա, Լիդկա Շուտուովա։ Տոմսակումը գրուած է։

—Շատ լաւ, կ'աշխատեմ կատարել,—ասաց Mariette-ը և, թեթև չարժումով բարձրանալով փափուկ ատտառած ու աբեի առաջ թեքերը պատպատնող կառքը, բաց արեց հովանոցը։ Լաբէյը նստեց կառապանի կողքին և նչան արեց նրան, որ քշի։ Կառքը չարժուեց, բայց նոյն րոպէին Mariette-ը հովանոցը դիպցրեց կառապանի մէջքին, և անպլիացրած նրբակաշի գեղեցկուհի մատակները, կծկելով սանձասլիրի գեղեցիկ պլուխները, կանգ առան և սկսեցին կանգնած տեղում փոխփոխել նրբակազմ ոտները։

—Տեսէք, անպատճառ եկէք, միայն թէ անչահասէր կերպով,—ասաց Mariette-ը Նեխլիւդովին ու ժպտաց այնպիսի ժպիտով, որի ոյժը շատ լաւ գիտէր, և կարծես վերջացնելով ներկայացումը՝ իջեցրեց վարագոյրը,—վայր քաշեց քօղը։—Դէ, քշէք,—ասաց նա, նորից հովանոցը դիպցնելով կառապանի մէջքին։

Նեխլիւդովը հանեց գլխարկը, իսկ չիկագոյն, զուտաբիւն մատակները, ֆռնչացնելով, փռխեցին պայտերով սալայատակը և կառքը արագ-արագ սլացաւ, միայն երբեմն խոտոտբորտ տեղերում կակուղ վեր-վեր թռչելով իր նոր ռէսինէ անուադատերի վրայ։

XVI

Յիշելով այն ժպիտը, որ փոխանակեցին ինքն ու Mariette-ը, Նեխլիւդովը գլուխը թափ տուեց ինքն իր վրայ։

«Մէկ էլ տեսար յանկարծ կը խրուեմ այս կեանքի մէջ»,—մտածեց նա, երկուսաթիւն և կատածներ զգալով, որոնք յառաջ էին գալիս նրա մէջ այնպիսի մարգկանց սիրաշահելու անհրաժեշտութիւնից, որոնց նա չէր յարգում։ Հաշուելով, թէ ուր գնայ առաջ, ուր՝ յետոյ, որպէս զի ստիպուած չը լինի մէկ էլ վերադառնալ, Նեխլիւդովը ուղղուեց նախ դէպի սենատը։ Այնտեղ նրան առաջնորդեցին պիւանատուները, ուր նա հոյակապ չինուածքեան մէջ տեսաւ անսպին թուով չափազանց քաղաքավարի և մաքուր ատիճանաւորներ։

Ինչպէս ասացին այդ ասիճանաւորները, Մասլովայի խնդիրքը ստացուած էր և յանձնուած քննելու և զեկուցում կազմելու նոյն սենատոր Վոլֆին, որի անունով նա նամակ ունէր մօրաքրոջ մարդուց։

—Իսկ սենատի նիստը այս չաբաթ է լինելու, բայց Մասլովայի գործը դժուար թէ ընկնի այդ օրը։ Սակայն ևթէ խընդրէք, կարելի է յուսալ, որ այս չաբաթ նշանակին, չորեքշաբթի օրը,—ասաց մէկը։

Սենատի դիւանատանը խնդրած տեղեկութեանը ստանալիս, Նեխլիւդովը դարձալ լսեց խոսակցութիւն մենատարութեան մասին և մանրամասն պատմութիւն, թէ ինչպէս էր հակառակորդը ստանել երիտասարդ Կամենսկիյին։ Այստեղ նա առաջին անգամը իմացաւ այդ ամբողջ Պետերբուրգը զբաղեցնող պատմութեան մանրամասնները։ Բանը այսպէս էր եղել։ Մի քանի օֆիցէրներ պանդոկում ասպէներ էին ուսելիս եղել և, ինչպէս միշտ, շատ խմել էին։ Մէկը ինչ-որ վատ բան էր ասել այն գնդի մասին, որտեղ ծառայում էր Կամենսկին. Կամենսկին նրան ստախօս էր անուանել։ Նա խփել էր Կամենսկիյին։ Հանւեալ օրը մենամարտել էին։ Գնդակը դիպել էր Կամենսկիյի փորին և նա երկու ժամից յետոյ մեռել էր։ Պօղէնին ու վկաներին ձերբակալել էին, բայց թէև նրանց հանւալավախտ էին նստացրել, սակայն աղատելու էին երկու չաբաթից յետոյ։

Սենատի դիւանատնից Նեխլիւդովը գնաց իննդրագիրների յանձնաժողովը, այդ յանձնաժողովում աղեկցութիւն ունեցող ստիճանաւոր բարոն Վօրօբեովի մօտ, որ հիանալի ընակարան ունէր արքունի տան մէջ։ Դռնապանն ու լաքէյը խիստ կերպով յայտնեցին Նեխլիւդովին, որ բարոնին կարելի է տեսնել միմիայն ընդունելութեան օրերին։ Նեխլիւդովը նամակը յանձնեց ու գնաց սենատոր Վոլֆի մօտ։

Վոլֆը հէնց նոր նախաճաշել էր և ընդունեց Նեխլիւդովին, իր սովորութեան համեմատ նպաստելով մարդասիրութեանը սիգար ծխելով ու սենեակում քայլելով։ Վլադիմիր Վասիլիեվիչ Վոլֆը յիրաւի un homme très comme il faut էր, և իր այդ յատկութիւնը նա ամեն բանից բարձր էր գասում, նրա բարձրութիւնից էր նայում բոլոր միւս մարդկանց վրայ և չէր կարող բարձր չը գնահատել այդ յատկութիւնը, քանի որ միմիայն նրա չնորհիւ էր նա վայելուն կարիերա արել, իր ցանկացած կարիերան, այն է՝ որ ամուսնութեան միջոցով ձեռք էր բերել տարեկան 18 հազար եկամուտ տուող կարողութիւն, իսկ իր աշխատանքների միջոցով՝ սենատորի պաշտօն։ Նա իրան համարում էր ոչ միայն un homme très comme il faut, այլ և ապետական աղնուական տէր։ Իսկ աղնուականի նա այն էր հասկանում, որ չը պէտք է գաղտուկ կաշառքներ վերցնել մանաւոր անձերից։ Իսկ թախանձել, որ իրան տան արքունի գանձարանից հազար ու մի տեսակ ճանապարհածախսեր, նախապատրաստութեան միջոցներ և կապալներ՝ նա անպատուութիւն չէր համարում։ Անպատուութիւն չէր համարում նաև այն, որ կողոպտել էր իր վրայ սիրահարուած կնոջն ու քենիին։ Ընդհակառակը այդ համարում էր ընտանեկան կեանքի խելացի յարդարանք։

Վլադիմիր Վասիլիեվիչի ընտանիքը կազմում էին նրա անձնազոհ կինը, քենին, որի կրթութիւնն էլ նա իր բուռն էր հատուցել, ծախելով նրա կալուածն ու փողը իր անունով բանկը դնելով, և հեզ, վախուորած, տգեղ աղջիկը, որ միայնակ ու ծանր կեանք էր վարում և որ վերջերքս սկսել էր սիրահանգ դառնալ աւետարանականութեան մէջ,—Aline-ի և կոմսուհի Կաւերինա Իվանովնայի մօտ կայացող ժողովներում։

Իսկ Վլադիմիր Վասիլիեվիչի բարեհոգի որդին,—որ արդէն 15 տարեկան հասակում միրուքտուրուել էր և այն ժամանակից սկսել խմել ու անտսուկ կեանք վարել, որ չարունակում էր մինչև 20 տարեկան հասակը,—արտաքսուած էր տանից նրա համար, որ ոչ մի տեղ ուսումը չէր աւարտել և, վատ հասարակութեան մէջ ժամանակ անցնելով ու պարտքեր անելով, կոտրում էր հօր անունը։ Հայրը մի անգամ վճարել էր որդու տեղ 230 ռուբլի պարտք, երկրորդ անգամն էլ վճարել էր 600 ռուբլի, բայց յայտնել էր նրան, որ այդ վերջին անգամն է և որ, ևթէ նա չուղղուի, դուրս կ'անի նրան տանից և յարաբերութիւնները կը կտրի հետը. որդին ոչ միայն չէր ուղղուել, այլ և դարձեալ հազար ռուբլի պարտք էր արել և թոյլ էր տուել իրան ասել հօրը, որ իր համար առանց այն էլ տանջանք է տանը ապրելը։ Այն ժամանակ Վլադիմիր Վասիլիեվիչը յայտնել էր որդուն, որ նա կարող է գնալ ուր ուզում է, և որ նա այլ ևս իր որդին չէ։ Այնուհետև Վլադիմիր Վասիլիեվիչը այնպէս էր ձևացնում, թէ ինքը որդի չունի և անցկիներից ոչ ոք չէր համարձակւում խոսել նրա հետ որդու մասին։ Եւ Վլադիմիր Վասիլիեվիչը լիովին հաւատացած էր, թէ ինքը ամենալաւ կերպով է յարդարել իր ընտանեկան կեանքը։

Վոլֆը, որ քայլում էր առանձնասենեակում, կանգ առաւ և բարևեց Նեխլիւդովին ու սկսեց կարդալ տոմսակը՝ իր սովորական փաղաքշական ու մի քիչ հեգնական ժպիտով, որ ակամայ արտայայտութիւն էր այն դիտակցութեան, թէ ինքը իր կօմիլֆոյութեամբ բարձր է մարդկանց մեծամասնութիւնից։

—Նստեցէք, խնդրեմ, իսկ ինձ կը ներէք։ Ես կը չարունակեմ քայլել, եթէ թոյլ կը տաք,—ասաց նա, ձեռքերը խրելով իր վերնաբաճկոնի գրպանները և թեթև ու կակուղ քայլերով մանգալով իր խիստ ոճով կահաւորած մեծ առանձնասենեակի անկիւնագծով։—Շատ ուրախ եմ ձեզ հետ ծանօթանալուս և, աւելորդ է ասել, մեծ ուրախութեամբ կ'աչխատեմ կատարել կոմս Իվան Միխայլովիչի յանկութիւնը,—ասաց նա բերնից բաց թողնելով անուշաբոյր կապտագոյն ծուխը և զգուշութեամբ մի կողմ տանելով սիգարը, մոխիրը չը թափելու համար։

—Ես միայն այն էի խնդրելու, որ գործը չուտով նչանակուէր, որովհետև եթէ մեղադրեալը պէտք է Սիբիր գնայ, ցանկալի է, որ շուտ գնայ,—ասաց Նեխլիւդովը։

—Այո, այո, Նիժնիյից մեկնող առաջին չոգնաւերով, գիտեմ,—իր ներողամիտ ժպիտն երեսին ասաց Վօլֆը, որ միշտ առաջուց գիտէր այն բոլոր բանները, ինչ որ սկսում էին ասել նրան։—Ի՞նչպէս է մեղադրեալի ազգանունը։

—Մասլօվա...

Վօլֆը մօտեցաւ սեղանին ու նայեց նրա վրայ դրուած թղթերի մէջ։

—Ճիշտ է, Մասլօվա։ Շատ լաւ, ես կը խնդրեմ ընկերներիս և գործը կը քննենք չորեքշաբթի օրը։

—Կարող եմ փաստաբանին հեռագրել այդպէս։

—Ախ, փաստաբան էլ ունէք։ Ինչի՞ պէտք է։ Բայց եթէ ուզում էք, ինչու չէ, հեռագրեցէք։

—Գուցէ վճռաբեկ ատեանները քիչ կան,—ասաց Նեխլիւդովը,—բայց, կարծում եմ, գործիցը պարզ երևում է, որ դատապարտութիւնը թիւրիմացութեան հետևանք է։

—Այո, գուցէ այդպէս է, բայց անհատը չի կարող գործը քննել բատ էութեան,—խստօրէն ասաց Վլադիմիր Վասիլևիվիչը, նայելով սիգարի մոխրին։—Սենատը հսկում է միայն, որ օրէնքը կանոնաւոր կերպով գործադրուի և մեկնուի։

—Սակայն սա, իմ կարծիքով, բացառիկ դէպք է։

—Գիտեմ, գիտեմ։ Բոլոր դէպքերը բացառիկ են։ Մենք կ'անենք, ինչ որ պէտք է։ Ահա մեր բոլոր անելիքը։—Մոխիրը դեռ կենում էր իր տեղում, բայց արդէն ճաքել էր և վտանգի մէջ էր։—Իսկ դուք ուշ-ուշ եք լինում Պետերբուրգում,—հարցրեց Վօլֆը, այնպէս պահելով սիգարը, որ մոխիրը վայր չը թափուի։ Մոխիրը այնուամենայնիւ տատանուեց, և Վօլֆը զգուշութեամբ մօտեցրեց սիգարը մոխրամանին, ուր և փուլ եկաւ նա։—Իսկ ինչ տարաբախտ բան է կատինակիի դէպքը,—ասաց նա։—Հիանալի երիտասարդ էր։ Միամօր զաւակ։ Մանուանդ

մօր գրութիւնը,—ասում էր նա, գրեթէ բառ առ բառ կրկնելով այն բոլորը, ինչ որ ամենքը Պետերբուրգում ասում էին այդ ժամանակ կատինակիի մասին։

Մի քիչ էլ խօսելով Կատերինա Իվանօվնայի մասին և նրա ողբերգութեան մասին կրօնականնոր ուղղութեամբ, որ Վլադիմիր Վասիլևիվիչը ոչ դատապարտում էր, ոչ արդարացնում, բայց որ նրա պէս կոմիլֆօ մարդու համար, այնուհանդերձ, աւելորդ բան էր, նա զանգահարեց։

Նեխլիւդովը հրաժեշտի ողջոյն տուեց։

—Եթէ ձեզ համար յարմար է, եկէք ճաշելու,—ասաց Վօլֆը, ձեռք տալով նրան,—թէկուզ չորեքշաբթի օրը։ Այն ժամանակ ես ձեզ դրական պատասխան կը տամ։

Ուշ էր արդէն, և Նեխլիւդովը գնաց տուն, այսինքն մօրաքրոջ մօտ։

XVII

Կոմսուհի Կատերինա Իվանօվնայենց մօտ ճաշում էին ժամի հօթ և կէսին, և ճաշը մատուցանւում էր նոր ձևով, այնպիսի ձևով, որ դեռ չէր տեսել Նեխլիւդովը։ Սպասաւորները կերակուրները դնում էին սեղանի վրայ ու իսկոյն և եթ հեռանում, այնպէս որ ճաշողները իրանք էին վերցնում կերակուրը։ Տղամարդիկ թոյլ չէին տալիս, որ տիկիններին նեղութիւն կրեն ու աւելորդ չարժուէներ անեն, և, իբր ուժեղ սեռի ներկայացուցիչներ, արիաբար յանձն էին առնում տիկինների ու իրանց համար կերակուր վերցնելու և խմիչքներ լցնելու ամբողջ ծանրութիւնը։ Իսկ երբ կերակուրը ուտում պրծնում էին, կոմսուհին սղմում էր սեղանի մէջ չինուած էլեկտրական զանգի կոճակը և սպասաւորները անձայն ներս էին մտնում, արագ-արագ հաւաքում ու փոխում սմոնները և բերում հետևեալ կերակուրը։ Թէ կերակուրները, թէ գինիները՝ նուրբ էին։ Մեծ ու լուսաւոր խոհանոցում բանում էր ֆրանսիացի խոհարարապետը իր երկու սպիտակ օգնականներով։ Ճաշողները վեց հոգի էին՝ կոմսն ու կոմսուհին, նրանց որդին, թիւնապահ գնդի մի մտայլ օֆիցէր, որ արմունկները դնում էր սեղանի վրայ, Նեխլիւդովը, ֆրանսուհի ընթերցուհին և կոմսի կալուածների գլխաւոր կառավարիչը, որ գիւղից էր եկել։

Այդտեղ էլ խօսակցութիւն սկսուեց մինսամարտի մասին։ Ամենքն էլ ներողամիտ էին վերաբերւում Պօլէնին, որ պաշտպանել էր հասարակաց պատիւը։ Միայն կոմսուհի Կատերինա

Իվանօվնան էր, որ իր աղատաթերթևամբ դատապարտում էր սպանողին։

—Լաւ է էլի, հարբեն ու սպանեն կարգին երիտասարդներ... ինձնից որ կախուած լինէր, երբէք չէին ների,— ասաց նա։

—Ես այդ չեմ կարողանում հասկանալ,—ասաց կոմսը։

—Ես գիտեմ, որ դու երբէք չես հասկանում իմ ասածը,—ասաց կոմսուհին դառնալով դէպի Նեխլիւդօվը—ամէնքը հասկանում են, բացի ամուսնուցս։ Ես ասում եմ, որ մեղքս է գալիս մայրը, և չեմ ուզում, որ մարդու սպանեն ու յետոյ էլ շատ գոհ լինեն։

Այդ միջոցին նրա որդին, որ մինչ այդ լուռ էր, սկսեց պաշտպանել Պօզէնին ու յարձակուել մօր վրայ, բաւական կոպիտ կերպով ապացուցանելով, որ օֆիցէրը չէր կարող ուրիշ կերպ վարուել և որ այլապէս նրան կ'ենթարկէին ընկերական դատի ու դուրս կ'անէին գնդից։ Նեխլիւդօվը լռում էր, առանց խօսակցութեանը խառնուելու և, իբր նախկին օֆիցէր, հասկանում էր, թէև չէր ընդունում, երիտասարդ Զարեկիի պատճառաբանութիւնները, բայց միևնոյն ժամանակ ակամայ զգացողում էր ընկերոջը սպանող օֆիցէրին բանտումը տեսած գեղեցկադէմ պատանի կալանաւորի հետ, որ տաժանակիր աշխատանքների էր դատապարտուած կոտի մէջ գործած սպանութեան համար։

Նա պատմեց այդ դէպքը։ Սկզբում կոմսուհի Կատերինա Իվանօվնան համարեա համաձայնեց իր քրոջդու հետ, բայց յետոյ լռեց, ինչպէս և ամէնքը, և Նեխլիւդօվը զգաց, որ այդ բանը պատմելով ինքը կարծես մի տեսակ անվայել բան արեց։

Երեկոյեան, ճաշից շատ չանցած, մեծ դահլիճում, ուր մի առանձին տեսակ, կարծես դասախօսութեան համար, չարել էին բարձր ու քանդակակերտ թիկունքներով աթոռներ և սեղանի առաջը դրել քարոզչի համար մի բազկաթոռ և մի փոքրիկ սեղանի վրայ չիչով ջուր, սկսեցին հաւաքուել ժողովականները լսելու համար եկուսր քարոզիչ Կիզեվէտտերին։

Փողոցային մօտ կանգնած էին Թանկագին կառքեր։ Թանկագին կերպով կահաւորուած դահլիճում նստած էին մեծատաքսապատ, թաւշապատ ու ժանեակապատ սիկիներ դնովի մազերով և ձգուած ու դնովի իրաններով։ Տիկիններին արանքին նստած էին ազամարդիկ—զինուորական ու քաղաքացիական զգեստներով և նրանց թեւում հինգ հոգի հասարակ դասակարգից՝ երկու բակապան, մի խոհարար, մի լաքէյ և մի կառապան։

Կիզեվէտտերը, որ մի ամրակազմ ու ապիտակել սկսած աղամարդ էր, անպլիերէն էր խօսում, իսկ մի ջահել, նիհար ու

պէնսնէյով օրիորդ թարգմանում էր՝ բաւական լաւ ու արագ արագ։

Քարոզիչը ասում էր, թէ մեր մեղքերը այնքան մեծ են և նրանց պատիժը այնքան սաստիկ ու անխուսափելի, որ անկարելի է ապրել սպասելով այդ պատժին։

—Բաւական է, սիրելի քոյրեր և եղբայրներ, մտածենք մեր մասին, մեր կեանքի մասին, այն բանի մասին, թէ ինչեր ենք անում, ինչպէս ենք զայրացնում սիրառատ Աստուծուն, ինչպէս ենք տանջում Քրիստոսին, որպէս զի հասկանանք, որ չը կայ մեզ թողութիւն, չը կայ փրկութիւն, և որ մենք ամենքըս դատապարտուած ենք կորուստի։ Սարսափելի կորուստ և յաւիտենական տանջանքներ են սպասում մեզ,—ասում էր նա դողդողուն, լացակրկնած ձայնով։—Ի՞նչպէս փրկուենք, եղբայրներ, այս զարհուրելի հրդեհից։ Նա պատել է արդէն ամբողջ տունը և ելք չը կայ։

Նա լռեց, և իսկական արցունքներ էին հոսում նրա երեսով։ Սրդէն ութ տարի կը լինէր, որ, հէնց որ նա հասնում էր իրան չատ դուր եկող իր ճառի այդ տեղին, անպատճառ զգում էր, որ կոկորդը սեղմուում է, քիթը քոր է գալիս, և իսկոյն արցունքներ էին հոսում աչքերիցը։ Եւ այդ արցունքները աւելի ևս խանդաղատեցնում էին նրան։ Ամենասկզբում հեկեկանքներ էին լսուում։ Կոմսուհի Կատերինա Իվանօվնան մօտակի սեղանի մօտ նստած գլուխը քաշ էր գցել երկու ձեռքի վրայ և հաստ ուսերը ցնցուում էին։ Կառապանը զարմացած ու վախուորած նայում էր գերմանացու վրայ, կարծես թէ իր կառքի լծափայտը դիպչելու էր նրան, իսկ նա մի կողմ չէր քաշւում։ Մեծամասնութիւնը նոյն դիրքով էր նստած, ինչ որ կոմսուհի Կատերինա Իվանօվնան։ Վօլֆի աղջիկը, որ հօր նման էր, մօտակին զգեստ հագած՝ ծունկ էր չոքել և երեսը ծածկել ձեռներով։

Հոգեորը յանկարծ բաց արեց իր երեսը ու այնպիսի ժպիտ յառաջ բերեց նրա վրայ, որ չատ նման էր իսկական ժպիտին և որով գերասանները ուրախութիւն են արտայայտում,—և քաղցր ու քնքոյշ ձայնով սկսեց ասել.

—Սակայն փրկութիւն կայ։ Ահա նա, հէնց և բերկրալից։ Այդ փրկութիւնը այն արիւնն է, որ մեզ համար թափեց Աստուծու միածին Որդին, որ Ինքն Իրան չարչարանքի մատնեց մեզ համար։ Նրա արիւնը մեզ փրկում է։ Եղբայրներ և քոյրեր,—դարձեալ արտասուալից ձայնով ասաց նա,—երախտագէտ լինենք Աստուծուն, որ Իր միածին Որդուն տուեց ի քաւութիւն մարդկային ցեղի։ Նրա Սուրբ արիւնը...

Նեխլիւդովի համար այնքան ծանր էր լսել այլ ևս, որ նա կամացուկ վեր կացաւ տեղիցը և, կնճռուելով, ոտների ծայրի վրայ դուրս եկաւ ու գնաց իր սենեակը։

XVIII

Միւս օրը՝ Նեխլիւդովը նոր հագնուել էր և ուզում էր արդէն ներքև իջնել, երբ ծառան ներս բերեց Մոսկուայի փաստաբանի այցետոմսը։ Փաստաբանը Մոսկուայից եկել էր իր գործերով և ուզում էր ներկայ գտնուել նաև Մասլովայի գործը սենատում քննուելիս, եթէ այդ գործը չուտ քննուէր։ Նեխլիւդովի ուղարկած հեռագիրը դեռ հասած չէր եղել, երբ նա դուրս էր եկել Մոսկուայից։ Երբ Նեխլիւդովը նրան ասաց, թէ երբ է քննուելու Մասլովայի գործը և որ սենատորներն են ատենակալ այդ օրը, նա ժպտաց։

—Սենատորների երեք տիպերիցն էլ կան,—ասաց նա.—Վոլֆը պետերբուրգցի ասիճանաւոր է. Սկօվօրօդնիկովը՝ դիւանական իրաւաբան է, իսկ Բէն՝ գործնական իրաւաբան է, ուստի և մէջներից ամենակենդանի մարդը,—ասաց փաստաբանը։—Ամենից չուտ նրա վրայ կարելի է յոյս դնել։ Իսկ ինչ արեցիք խնդրագիրների յանձնաժողովում։

—Այսօր գնալու եմ բարօն Վօրօբիեովի մօտ. երէկ չը կարողացայ ունկնդրութիւն ստանալ։

—Շատ լաւ. եկէք միասին գնանք, ես ձեզ կը հասցնեմ։

Երբ որ դուրս էին գնում, նախասենեակում հանդիպեցին նրանց Mariette-ի ծառան, որ տոմսակ էր բերել նրանից Նեխլիւդովին.

«Pour vous faire plaisir, j'ai agi tout à fait contre mes principes, et j'ai intercédé auprès de mon mari pour votre protégée. Il se trouve que cette personne peut être relâchée immédiatement. Mon mari a écrit au commandant. Venez donc immédiatement. Je vous attend. M.».

(Ձեզ հաճոյք պատճառելու համար՝ ես վարուելի միանգամայն հակառակ իմ սկզբունքներին և բարեխօսեցի ամուսնուս առաջ ձեր հովանաւորած կնոջ համար։ Դուրս եկաւ, որ այդ կնոջը կարող են իսկոյն ազատ թողնել։ Ամուսինս գրեց ամրոցապետին։ Եկէք ուրեմն անյապաղ։ Սպասում եմ ձեզ։ Մ.»)։

—Ուրեմն ես ձեզ կը հասցնեմ,—ասաց փաստաբանը, երբ նրանք դուրս եկան գաւիթը, և փաստաբանի վարձած հիանալի կառքը մօտեցաւ գաւթին։

Փաստաբանը ասաց կառապանին, թէ ուր պէտք է տանի, և կարիճ ձիերը չատ չուտով հասցրեցին Նեխլիւդովին բարօնի կացած տունը։ Բարօնը տանն էր։ Առաջին սենեակում կային երկու տիկիններ և մի վիրտուոզիր հագած երիտասարդ աստիճանաւոր՝ չափազանց երկար վզով ու դուրս ցցուած խռչափոզով և վերին աստիճանի թեթև քայլուածքով։

—Ձեր ազգանունը,—հարցրեց խռչափոզաւոր երիտասարդ աստիճանաւորը, չափազանց թեթև ու չնորհալի կերպով անցնելով տիկիններից մօտից դէպի Նեխլիւդովը։

Նեխլիւդովը ասաց իր ազգանունը։

—Բարօնը ասաց, որ դուք գալու էք։ Այս րոպէին։

Ադիւտանտը բաց արեց փակած դուռը, ներս մտաւ և դուրս բերեց մի քօղաւոր լայակրկնած տիկնոջ։ Տիկինը ոսկրոտ մատներով աշխատում էր իջեցնել խճճուած քօղը, արցունքները ծածկելու համար։

—Համեցէք,—դիմեց երիտասարդ աստիճանաւորը Նեխլիւդովին, թեթևակայլ մօտենալով առանձնասենեակին, բանալով դուռը և կանգ առնելով չէմքի վրայ։

Առանձնասենեակը մտնելով, Նեխլիւդովը տեսաւ մի միջահասակ, թիկնաւէտ ու կարճ խուզած մազերով և սիւրտուկով մի պարոնի, որ մեծ գրասեղանի մօտ դրուած բազկաթոռում նստած ուրախ արտայայտութեամբ նայում էր դէպի առաջ։ Նրա բարեսիրտ դէմքի վրայ, որի կարմրութիւնը առանձնապէս աչքի էր ընկնում սպիտակ բեխերի ու միրուքի մէջ, փաղաքշական ժպիտ փայլեց, երբ նա տեսաւ Նեխլիւդովին։

—Շատ ուրախ եմ ձեզ տեսնելուս։ Ես ու ձեր մայրիկը հնուց ծանօթներ ու բարեկամներ էինք։ Ձեզ դեռ երեխայ ժամանակներդ եմ տեսել, յետոյ էլ օֆիցէր ժամանակներդ։ Դէ, խնդրեմ, նստէք ու ասէք՝ տեսնենք ինչ ծառայութիւն կարող եմ մատուցանել ձեզ։ Այո, այո,—ասում էր նա, թափ տալով կարճ խուզած ալեւոր գլուխը, մինչ Նեխլիւդովը պատմում էր Ֆեդոսեայի գործը։—Շարունակեցէք, շարունակեցէք, ես ամեն ինչ հասկացայ. այո, այո, միրաւի չատ արտաչարժ բան է դա։ Էհ, խնդիրը տալ էք։

—Խնդիրը պատրաստել եմ,—ասաց Նեխլիւդովը, հանելով խնդրագիրը գրպանից,—բայց ուզում էի խնդրել ձեզ և յոյս ունէի, որ առանձին ուշադրութիւն կը դարձնեն այս գործի վրայ։

—Ես չատ լաւ էք արել։ Անպատճառ ես ինքս կը զեկուցանեմ,—ասաց բարօնը, չատ տարօրինակ կերպով կարեկցութիւն արտայայտելով իր ուրախ դէմքի վրայ։—Շատ արտաչարժ

դէպք է։ Անկերևաբար, նա երեխայ է եղել, մարդը կոպիտ է վարուել հետը, այդ խրտնացրել է նրան, իսկ յետոյ իրան ժամանակին սկսել են սիրել միմեանց... Այո, այո, ես կը զեկուցանեմ։

—Կոմս Իվան Միխայլովիչը ասում էր, որ ինքը ուզում էր խնդրել...

Հէնց որ Նեխլիւդովը այդ մի քանի խօսքը ասաց, բարօնի դէմքի արտայայտութիւնը փոխուեց։

—Հա, դուք խնդիրքը տուէք դիւանատունը, իսկ ես ինչ որ կարողանամ կ'անեմ,—ասաց նա Նեխլիւդովին։

Այդ ժամանակ ներս մտաւ երիտասարդ աստիճանաւորը, որ ամենաբաց ուզում էր ամենքին հրաժշտել իր քայլուածքով։

—Այն տիկինը ուզում է դարձեալ մի քանի խօսք ասել։

—Ինչ արած, կանչեցէք։ Ախ, mon cher (սիրելիս), որքան արցունքների վկայ եմ լինում. երանի կարողանայի բոլորը սրբել։ Անում եմ, ինչ որ կարողանում եմ։

Տիկինը ներս մտաւ։

—Ես մոռացայ խնդրել, որ Թոյլ չը տաք հօրը, որ աղջկան տայ, թէ չէ նա ամեն բանի...

—Ձ՞ը որ ասացի, որ կ'անեմ։

—Ի սէր Աստուծոյ, բարօն, դրանով դուք կը փրկէք մօրը։

Նա բռնեց բարօնի ձեռքը ու սկսեց համբուրել։

—Ամեն ինչ կ'անեմ, ինչպէս խնդրում էք։

Տիկնոջ դուրս գալուց յետոյ Նեխլիւդովն էլ սկսեց մնաս բարև անել։

—Կ'անենք, ինչ որ կարելի կը լինի։ Կը բանակցենք արդարադատութեան մինիստրութեան հետ։ Նրանք մեզ կը պատասխանեն և այն ժամանակ մենք կ'անենք, ինչ որ կարելի կը լինի։

Նեխլիւդովը դուրս եկաւ ու գնաց դիւանատունը։

XIX

Այն մարդը, որից կախուած էր Պետերբուրգում կալանաւորուածների վիճակի թեթևացումը, մի հնուց ծառայող ծեր գեներալ էր գերմանական բարօններից, որ բազմաթիւ չքանշաններ ունէր, թէև կրում էր միայն սպիտակ խաչի նշանը, և որի մասին ասում էին, թէ զառամութիւնից խելքը յետ է տուել։ Առաջ նա ծառայել էր Կովկասում, ուր և ստացել էր այդ խաչը, յետոյ՝ Լեհաստանում ու էլի մի տեղ և այնուհետև ստացել ներկայումս ունեցած պաշտօնը, որի հետ կապուած էին այնպիսի բարիքներ, ինչպէս լաւ բնակարան, լաւ առճիկ և

պատուաւոր դիրք։ Նա խստիւ կատարում էր բարձր իշխանութեան հրամանները և առանձնապէս բարձր էր գնահատում այդ բանը։ Առանձին նշանակութիւն տալով այդ հրամաններին, նա այն համոզմունքին էր, թէ աշխարհումս ամեն ինչ կարելի է փոխել, բայց ոչ այդ հրամանները։

Այն ժամանակ, երբ Նեխլիւդովը մօտենում էր ծեր գեներալի բնակութեան տեղին, աշտարակի երաժշտաւոր ժամացոյցը սկսեց իր նուրբ զանգակներով նուագել «Коль славенъ Богъ» և յետոյ խփեց ժամի երկուսը։ Ծեր գեներալը այն միջոցին, երբ Նեխլիւդովը մօտեցաւ կառքով նրա բնակարանի փողոցադռանը, նստած էր մթնացրած հիւրասենեակում դրուագաւոր սեղանի մօտ և մի թէյի ափսէ էլ, պատռտնում մի թերթ թղթի վրայ մի երիտասարդ նկարչի հետ, որ իր ստորադրեալներից մէկի եղբայրն էր։ Նկարչի բարակ, թաց ու թոյլ մատները անց էին կացրած ծեր գեներալի կոշտ, խորշոմած ու զօդերումը ոսկրացած մատների մէջ և այդ կցուած ձեռները ջղաձգաբար շարժւում էին կործած ափսէի հետ թղթի վրայով, ուր նշանակուած էին այբբենի բոլոր տառերը։ Ափսէն պատասխանում էր գեներալի տուած հարցին այն բանի մասին, թէ մահից յետոյ ինչպէս են իրար ճանաչելու հոգիները։

Այն ժամանակ, երբ սենեակի սպասաւորի պաշտօն կատարող ղինուոր ծառան ներս բերեց Նեխլիւդովի այցետոմսը, ափսէի միջոցով խօսում էր ծան դ' Արկի հոգին։ Ծան դ' Արկի հոգին տառերը ցոյց տալով արդէն ասել էր «իրար ճանաչելու են» խօսքերը, և նրանք այդ գրել էին։ Երբ որ ծառան ներս մտաւ, ափսէն, կանգ առնելով մէկ «П», յետոյ «О» տառի վրայ և այնուհետև հասնելով «С» տառին, մնաց կանգնած այդ տառի վրայ ու սկսեց քաշքշուել դէս ու դէն։ Այն պատճառովն էր նա քաշքշուում, որ հետևեալ տառը, գեներալի կարծիքով, պէտք է լինէր «Д», այսինքն ծան դ' Արկը, նրա կարծիքով, պէտք է ասէր, որ հոգիները իրար ճանաչելու են միայն բոլոր երկրային բաներից զատուելուց յետոյ *) կամ դրա նման մի բան, ուստի և հետևեալ տառը լինելու էր «Д», իսկ նկարիչը կարծում էր, թէ հետևեալ տառը լինելու է «В», թէ հոգին ասելու է, որ հոգիները իրար ճանաչելու են այն լոյսով **), որ բղխելու է հոգիների եթերային մարմնից։ Գեներալը, խիտ ու սպիտակած յօնքերը մռայլ կերպով կիտած, աչքերը յառել էր ձեռքերին և երևակայելով, թէ ափսէն ինքն իրան է շարժում, ձգում էր նրան դէպի «Д»

*) Ѣхавъ=послѣ.

**) Въ лучахъ=по свѣту.

տառը։ Իսկ երիտասարդ, անարիւն նկարիչը, որի նօսր մազերը խրած էին ականջի յետևը, իր կապոյտ ու անկենդան աչքերով նայում էր հիւրասենեակի մութ անկիւնին և, ջղայնաբար շարժելով չրթունքները, քաշում էր ափսէն դէպի «B» տառը։ Գեներալը խոժոռուեց, տեսնելով, որ ընդհատում են իր զբաղմունքը, և մի րոպէ լուռ մնալուց յետոյ վերցրեց այցետոմսը, պէնանէն դրեց ու, լայն մէջքի ցաւիցը տնքալով, վեր կացաւ իր ամբողջ ահագին հասակով, արտրելով իր ընդարմացած մատները։

—Հրաւիրիր հիւրասենեակը։

—Թոյլ տուէք, ձերդ գերազանցութիւն, մենակ վերջացնեմ,—ասաց նկարիչը վեր կենալով։—Մէջս բան եմ ղգում։

—Լաւ, վերջացրէք,—խստօրէն ասաց գեներալը և, իր չը ծռուած ոտները լայն-լայն փոխելով, վճռական ու չափածոյ քայլուածքով գնաց դէպի առանձնասենեակը։—Շատ ուրախ եմ ձեզ տեսնելուս,—ասաց գեներալը Նեխլիւդովին, ցոյց տալով դրասեղանի կողքին դրուած բազկաթոռը։—Վաղուց էք եկել Պետերբուրգ։

Նեխլիւդովը ասաց, որ նոր է եկել։

—Ձեր մայրիկը, իշխանուհին, ինչպէս է, առոյղ է։

—Մայրս մեռած է։

—Ներեցէք, շատ ցաւեցի, երբ իմացայ. որդիս ասաց, որ ձեզ հանդիպել էր։

Գեներալի որդին նոյնպիսի կարիէրա էր անում, ինչպէս և հայրը, և շատ հպարտանում էր այն պարապմունքներով, որոնք յանձնուած էին իրան։

—Հապա, ես ու ձեր հայրիկը միասին ծառայել ենք։ Մտերիմ ընկերներ էինք։ Իսկ դուք, ծառայո՞ւմ էք։

—Ո՛չ, չեմ ծառայում։

Գեներալը չմահաւանօրէն թափ տուեց գլուխը։

—Մի խնդիրք ունեմ ձեզ, գեներալ,—ասաց Նեխլիւդովը։

—Շատ ուրախ եմ։ Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել։

—Եթէ խնդիրքս անտեղի է, խնդրեմ, ներէք։ Բայց չեմ կարող չը հաղորդել ձեզ այդ խնդիրքը։

—Ի՞նչ բան է։

—Ձեր մօտ բռնուած կայ մի ոմն Գուրկևիչ։ Մայրը խնդրում է, որ թոյլ տաք տեսնուի հետը կամ գոնէ իրաւունք տաք գրքեր ուղարկելու նրան։

Գեներալը Նեխլիւդովի ասածը լսելիս ոչ զուարճութիւն արտայայտեց, ոչ տհաճութիւն, այլ միայն, կողքի վրայ թեքելով գլուխը, աչքերը պչեց, կարծես միտք անելով։ Իսկապէս ա-

սած, նա ամենևին միտք չէր անում և նոյն իսկ չէր էլ հետաքրքրուում Նեխլիւդովի հարցով, չատ լաւ իմանալով, որ ինքը պատասխանելու է նրան օրէնքի համաձայն։ Նա ուղղակի հանգստանում էր մտաւորապէս, ոչ մի բանի մասին չը մտածելով։

—Ձեզ պէտք է ասեմ, որ այդ ինձնից չի կախուած,—ասաց նա մի քիչ հանգստանալուց յետոյ։—Տեսակցութիւնների մասին հարձրագոյն հաստատուած կանոնադրութիւն կայ և ինչ որ այնտեղ թոյլ է տրուած, թոյլ է տրւում։ Ինչ վերաբերում է գրքերին, մենք գրագարան ունենք, և նրանց տալիս են կարդալու այն գրքերը, որոնք թոյլ են տրուած։

—Այո, բայց նրան պէտք են գիտնական գրքեր. նա ուզում է պարապել։

—Մի հաւատաք այդ բաներին։—Գեներալը լռեց։—Պարապելու համար չեն ուզում այդ։ Այլ հէնց այնպէս, անհանգստացնում են միայն։

—Բայց չէ՞ որ նրանք պէտք է մի բանով անց կացնեն ժամանակը իրանց ծանր վիճակի մէջ,—ասաց Նեխլիւդովը։

—Նրանք միշտ դանգատուում են,—առարկեց գեներալը։—Մենք նրանց լաւ ենք ճանաչում...

Նա նրանց մասին խօսում էր ընդհանուր առմամբ, իբր մարդկանց մի առանձին տեսակի մասին։

—Իսկ այստեղ այնպիսի յարմարութիւններ են տրուում նրանց, որ դժուար կարելի է գտնել ուրիշ բանտերում,—շարունակեց նա։

Եւ նա, կարծես իրան արդարացնելու համար, սկսեց մանրամասն նկարագրել բանտարկեալներին տրուող բոլոր յարմարութիւնները, կարծես թէ այդ հիմնարկութեան գլխաւոր նպատակը նրանումն էր կայանում, որ բանտարկեալները աւելի լաւ բնակավայր ունենային։

—Առաջ, ճիշտ որ, բաւական տաժանելի էր, բայց այժմ հիանալի ենք պահում նրանց այստեղ։ Նրանց միշտ երեք տեսակ կերակուր է տրւում և մէկը անպատճառ մսեղէն է լինում։ Կիրակի օրերը չորրորդ տեսակ էլ է տրւում—քաղցրեղէն։ Այնպէս որ, տայ Աստուած, որ ամեն մի ռուս մարդ կարողանայ այդպէս կերակրուել։

Գեներալը, ինչպէս առհասարակ ծեր մարդիկ, սկսելով խօսել իր սիրած նիւթի մասին, կրկնում էր այն, ինչ որ հազար անգամ ասել էր ապացուցանելու համար բանտարկեալների պահանջկոտութիւնը և ապերախտութիւնը։

—Գրքեր տրւում են նրանց թէ հոգևոր բովանդակութեամբ

և թէ հին ամաագիրներ։ Մենք ունենք այդ տեսակ գրքերի դրա-
դարան։ Միայն թէ նրանք չատ քիչ են կարդում։ Սկզբում կար-
ծէք թէ հետաքրքրւում են, իսկ յետոյ նոր գրքերը թողնում
են կէսից դէնը չը կտրած, իսկ հները առանց բաց անելու։
Շատ անգամ փորձել ենք,—ժպիտի հետ հեռաւոր նմանութիւն
ունեցող արտայայտութեամբ ասաց գեներալը,—կամաւ թուղթ
ենք դրել մէջը։ Ինչպէս դնում ենք, այնպէս էլ մնում է մէջը։
Գրել էլ թոյլ ենք տալիս,—չարունակեց գեներալը։—Բարե-
տախտակ ենք տալիս և քարեգրիչ, այնպէս որ կարող են գրել
զուարճութեան համար։ Կարող են ջնջել ու նորից գրել։ Եւ
նոյնպէս չեն գրում։ Ձէ, նրանք չատ չուտով բոլորովին հան-
գըստանում են։ Միայն սկզբում են յուզւում, իսկ յետոյ մին-
չև անգամ հաստատւում են ու բոլորովին մեղմանում,—ասում
էր գեներալը։

Նեխլիւդօվը ականջ էր դնում նրա խռպոտ ծերունական
ձայնին, նայում էր նրա ոսկրացած ձեռներին, սպիտակած յօն-
քերի տակ երևացող հանգած աչքերին, նրա ծերունական ա-
ծիլած ու կախ ընկած ծնօտներին, որոնք դէմ էին առնում
զինուորական օձիքին, նրա սպիտակ խաչին, և հասկանում էր,
որ անօգուտ է առարկել, բայատրել նրան նրա խօսքերի նշա-
նակութիւնը։ Բայց նա այնուամենայնիւ, ճիգ գործ դնելով իր
վրայ, հարցրեց նրանից միւս գործի մասին, Շուստօվա կալա-
նաւորուհու մասին, որի վերաբերմամբ այսօր տեղեկութիւն էր
ստացել, թէ հրամայուած է բաց թողնել։

—Շուստօվա։ Շուստօվա... Չեմ յիշում բոլորին անունէա-
նուն։ Շատ չատ են.—ասաց նա, ակներևաբար մեղադրելով
նրանց, որ այդպէս լցրել են բանաը։

Նա զանգահարեց և հրամայեց կանչել գործավարին։ Մինչ
գնացել էին գործավարի յետևից, նա յորդորում էր Նեխլիւդօ-
վին ծառայել, ասելով, որ ազնիւ մարդիկ առանձնապէս հար-
կաւոր են հայրենիքին։

—Այ տեսէք ինձ. ծեր եմ, բայց այնուամենայնիւ ծառայ-
ում եմ, որքան ոյժերս ներում են։

Գործավարը,—չոր ու նիհար մի մարդ անհանգիստ ու խե-
լօք աչքերով,—եկաւ զեկուցեց, թէ Շուստօվան բանտում է և
նրա մասին թուղթ չի ստացուել։

—Երբ որ ստանում ենք, նոյն օրն և եթ արձակում ենք։
Մենք նրանց չենք պահում, առանձին գին չենք տալիս նրանց
այստեղ լինելուն,—ասաց գեներալը, դարձեալ փորձելով խա-
ղուն կերպով ժպտալ, որից միայն ծամածռւում էր նրա ծեր
դէմքը։—Ցտեսութիւն, սիրելիս,—չարունակեց նա,—չը նեղանաք,

ինձանից, ձեզ սիրելով եմ ասում։ Ցարաբերութիւն մի ունե-
ցէք մեր մօտ բռնուած մարդկանց հետ։ Մէչները անմեղներ
չեն լինում։ Եւ բոլորն էլ ամենաանբարոյական մարդիկ են։
Մենք նրանց չատ լաւ ենք ճանաչում,—ասաց նա այնպիսի ե-
ղանակով, որ թոյլ չէր տալիս կասկածի հնարաւորութիւն։—
Իսկ ամենից լաւն այն կը լինի, որ ծառայէք։ Թագաւորին չատ
հարկաւոր են ազնիւ մարդիկ... նոյնպէս և հայրենիքին,—աւե-
լացրեց նա։—Շատ լաւ, իսկ եթէ ես էլ, բոլոր միւսներն էլ
ձեզ պէս չը ծառայէինք։ Ո՞վ կը մնար։ Տեսնում էք, եղած կար-
գերը մենք դատապարտում ենք, բայց ինքներս չենք ուզում
օգնել կառավարութեան։

Նեխլիւդօվը խոր հոգոց քաշեց, յետ գլուխ տուեց, սրմնց՝
ներողամտաբար դէպի ինքը մեկնուած ոսկրոտ մեծ ձեռքը
և դուրս եկաւ սենեակից։

Գեներալը չմահաւանութեամբ թափ տուեց գլուխը և,
տրորելով մէջքը, դնաց հիւրասենեակը, ուր նրան սպասում էր
նկարիչը, որ արդէն գրել էր ժան դ' Արկի հոգուց ստացած պա-
տասխանը։ Գեներալը պէնսնէն դրեց ու կարդաց. «Ճանաչելու
են միմեանց այն լոյսով, որ ըղխում է եթերային մարմիններից»։

—Ա՛,—հաւանութեամբ ասաց գեներալը, փակելով աչքե-
րը։—Բայց ինչպէս կարելի կը լինի ճանաչել, եթէ նրանց բոլո-
րի լոյսն էլ միատեսակ է,—հարցրեց նա ու, նորից մատները
խաչմերուկ դնելով նկարչի հետ, նստեց սեղանի մօտ։

—

Նեխլիւդօվի կառքը դուրս եկաւ դարպասից։

—Շատ ձանձրալի է այստեղ, աղա,—ասաց կառապանը,
դիմելով Նեխլիւդօվին։—Ուզում էի ձեզ չը սպասած գնալ։

—Հա, ձանձրալի է,—համաձայնեց Նեխլիւդօվը, ամբողջ
կրծքով չունչ քաշելով և հանգստացած սրտով յառելով աչքերը
երկնքի երեսին սահող ծխագոյն ամպերի և Նեվա գետի փայ-
լուն ծփանքի վրայ, որ յառաջանում էր երթևեկող նաւակների
ու շոգենաւերի չարժումից։

XX

Միւս օրը պէտք է քննուէր Մասլօվայի գործը, և Նեխ-
լիւդօվը գնաց սենատ։ Փաստաբանն ու նա միաժամանակ հա-
սան սենատի չէնքի վեհատեսիլ մուտքին, որի առաջ արդէն
կանգնած էին մի քանի կառքեր։ Հոյակապ, հանդիսակերպ
սանդուխով բարձրանալով երկրորդ յարկը, փաստաբանը, որ
դիտէր սենատի բոլոր ծակուծուկները, գնաց դէպի ձախակող-

մեան դուռը, որի վրայ նշանակուած էր դատական օրէնսդրութեան ներմուծման տարուայ թուականը։ Առաջին երկարուկ սենեակում վերարկուն հանելով և գոնապանից տեղեկանալով, որ բոլոր սենատորները արդէն եկել են և վերջինը հէնց նոր է անցել, Ֆանարինը, որ փրակ ուներ հագին և չապկի ապիտակ կրծկալի վրայից կապել էր ապիտակ փողպատ, ուրախ ու վրատահ մտաւ հետևեալ սենեակը։ Այդ երկրորդ սենեակում՝ աջակողմում կար մի պահարան, յետոյ մի սեղան, իսկ ձախակողմում պատուհան սանդուխ, որով այդ ժամանակ իջնում էր մի չնորհալի աստիճանաւոր՝ վիցմունդիրով և թղթակալը կռնատակին։ Սենեակում ուշադրութիւն էր գրաւում երկար ու սպիտակ մազերով, պիջակով ու մոխրագոյն կրկնավարտիքով, մի նահապետական ծերունի, որի կողքին առանձին պատկառանքով կանգնած էին երկու ծառայողներ։

Սպիտակ մազերով ծերունին գնաց դէպի պահարանը և ծածկուեց այնտեղ։ Այդ ժամանակ՝ Ֆանարինը, տեսնելով իր ընկեր փաստաբաններից մէկին, որ նոյնպէս փրակով էր ու սպիտակ փողպատով, իսկոյն նեթ սկսեց տաք-տաք խօսել նրա հետ։ Իսկ Նեխլիւդովը գնում էր սենեակում եղողներին։ Հասարակութիւնը բաղկացած էր 15 հոգուց, որոնցից երկուսը կին էին։ Կանանցից մէկը ջահել էր ու պէնանէյով, իսկ միւսը՝ պառաւ, սպիտակած մազերով։ Այդ օրը քննուելու էր մի գործ մամուլի միջոցով զրպարտման մասին, ուստի և սովորականից աւելի հասարակութիւն էր հաւաքուել, գլխաւորապէս լրագրական աշխարհին պատկանող անձերից։

Դատական պրիստաւը, որ մի կարմրերես, գեղեցիկ մարդ էր, հիանալի չքազգեստով ու մի թերթ թուղթ ձեռքին՝ մօտեցաւ Ֆանարինին ու հարցրեց, թէ ինչ գործի համար է եկել, և իմանալով, որ, Մասլօվայի գործի համար է եկել, ինչ որ մի բան գրեց թղթի վրայ ու հեռացաւ։ Այդ ժամանակ պահարանի դուռը բացուեց և այնտեղից դուրս եկաւ նահապետական ծերունին, բայց ոչ պիջակով, այլ փայլուն չքազգեստով, որ թոչունի կերպարանք էր տալիս նրան։

Ծերունին ինքն էլ, ինչպէս պարզ երևում էր, վատ էր զգում իրան այդ չքազգեստում, ուստի և չոպ-չոպ, սովորականից արագ քայլուածքով անցաւ գնաց մուտքի հակառակ կողմի գոնով։

—Ինն է այդ, մի չատ յարգելի անձնաւորութիւն,—ասաց Ֆանարինը Նեխլիւդովին և, ծանօթացնելով նրան իր ընկերակցի հետ, պատմեց այդ օրը քննուելի մի գործի մասին, որ, նրա կարծիքով, չատ հետաքրքրական գործ էր։

Գործը չուտով սկսուեց, և Նեխլիւդովին ամբողջ հասարակութեան հետ մտաւ նիստերի դահլիճը, որ գտնուում էր ձախակողմում։ Ամենքը, Ֆանարինն էլ հետները, անցկացան վանդակապատի յետևը, հասարակութեան համար նշանակուած տեղը։ Միայն պետերբուրգի փաստաբանը գնաց վանդակապատի այն կողմը, բարձր սեղանի մօտ։

Սենատի նստադահլիճը նահանգական դատարանի դահլիճից փոքր էր, աւելի պարզ կահաւորուած, և աչքի էր ընկնում միայն նրանով, որ այն սեղանը, որի առաջ նստած էին սենատորները, ծածկուած էր ոչ թէ կանաչ մահուդով, այլ մոռագոյն և ոսկեթելապատ թաւիշով, իսկ դատականատեանների մչտական պարագաները—սրբի պատկերը և օրինատախտակը նոյնն էին։ Նոյնպէս, ինչպէս և նահանգական դատարանում, պրիստաւը հանդիսաւոր կերպով յայտարարեց՝ «ատեանը գալիս է»։ Նոյնպէս ամենքը վեր կացան, նոյնպէս ներս մտան սենատորները չքազգեստները հագնելին, նոյնպէս նստեցին բարձր թիկունք բազկաթոռների վրայ և նոյնպէս կռթնում էին սեղանի վրայ, աչխատելով բնական կերպարանք ստանալ։

Սենատորները չորս հոգի էին։ Նախագահող Նիկիտինը,—ամբողջ երեսը ածիլած մի մարդ, նեղ դէմքով ու պողպատագոյն աչքերով. վոլֆը, որ սատիկ հուպ էր տուել չրթունքները և սպիտակ ու մանր ձևաձևերով թերթում էր գործը. յետոյ Սկովօրօդնիկովը, որ գիտնական իրաւաբան էր՝ հաստ ու ծանր մարմնով և չէչահար երեսով, և չորրորդը՝ Բէն, այն նահապետական ծերունին, որ ամենից վերջն էր եկել։ Սենատորների հետ միասին դուրս եկաւ քարտուղարապետը և դատախազապետի օգնականը, որ մի միջահասակ, չոր ու ցամաք և ածիլուած ջահել մարդ էր, չատ թեթև դէմքով և սև ու տխուր աչքերով։ Նեխլիւդովը իսկոյն և նեթ, չը նայելով նրա տարօրինակ չքազգեստին և այն բանին, որ մօտ վեց տարի չէր տեսել նրան, ճանաչեց, որ այդ՝ իր ուսանող ժամանակուայ ամենամտերիմ ընկերներից մէկն է։

—Դատախազապետի օգնական Սելենինն է այդ,—հարցրեց նա փաստաբանից։

—Հա, ինչ կայ։

—Շատ լաւ ճանաչում եմ, հիանալի մարդ է...

—Նէ չատ լաւ դատախազապետի օգնական է, բանիմաց։ Այ դրան պէտք էր խնդրել,—ասաց Ֆանարինը։

—Նա յամենայն դէպս խղճի դէմ բան չի անիլ,—ասաց Նեխլիւդովը, յիշելով թէ ինչպիսի սերտ յարաբերութիւններ ու բարեկամութիւն ունէին իրանք և թէ ինչպիսի համակրելի

յատկութիւնների տէր էր, ինչպիսի մաքուր, ազնիւ և, բառի ամենալաւ նշանակութեամբ, կարգին երիտասարդ էր Սվենինը։

—Բայց այդ, այժմ արդէն ուշ է,—չընկայց Ֆանարինը, ուշի ուշով լսելով սկսուած զեկուցումը։

Գործը սկսուել էր սենատում նրանով, որ վճռաբեկ դատարան էին տուել դատական պալատի վճռի դէմ, որով անփոփոխ էր թողնուած նահանգական դատարանի վճիռը։

Նեխլիւդովը սկսել էր լսել, աշխատելով հասկանալ լսածի իմաստը, բայց նոյնպէս, ինչպէս և նահանգական դատարանում, գլխաւոր դժուարութիւնը այդ կողմից կայանում էր նրանում, որ խօսում էին ոչ այն բանի մասին, որ բնականօրէն ամենագլխաւորն էր գործի մէջ, այլ բոլորովին կողմնակի բաների մասին։ Գործը վերաբերում էր մի լրագրական յօդուածի, որի մէջ մերկացուած էին մի բաժնետիրական ընկերութեան նախագահի գողութիւնները։ Ըստ երևոյթին, այդտեղ կարևոր հարցը միայն այն կարող էր լինել, թէ արդեօք ճիշտ է, որ բաժնետիրական ընկերութեան նախագահը գողանում է իր հաւատարմատարներին պատկանող փողերը, և եթէ ճիշտ է, ինչպէս անել, որ նա այլ ևս չը կարողանայ գողանալ։ Բայց դրա մասին խօսք անգամ չեղաւ։ Խօսում էին միայն այն բանի մասին, թէ արդեօք, օրէնքի համաձայն, իրաւունք ունէր հրատարակիչը տպելու ֆէլիէտօնիստի յօդուածը, և ինչ յանցանք է գործել նա, տպելով այդ յօդուածը,—անուանարկութեան թէ զրպարտութեան, և թէ արդեօք անուանարկութիւնը պարունակում է իր մէջ զրպարտութիւն կամ զրպարտութիւնը՝ անուանարկութիւն, և էլի ինչ որ բանների մասին, որոնք շատ քիչ հասկանալի էին հասարակ մահկանացուների համար,—զանազան յօդուածների մասին և ինչ որ ընդհանուր բաժանմունքի վճիռների մասին։

Այնքանը միայն հասկացաւ Նեխլիւդովը, որ թէև գործը զեկուցանող Վօլֆը երէկ այնպէս խիստ կերպով բացատրում էր նրան, թէ սենատը չի կարող քննել գործը ըստ էութեան, սակայն այս գործում ամենաերևաբար կողմնապահօրէն էր զեկուցանում ի նպաստ դատական պալատի վճիռը ընկճելուն, և որ Սվենինը, բոլորովին հակառակ իր բնորոշ զգուշաբանութեան, անսպասելի կերպով տաք կերպով արտայայտուց իր ներհակ կարծիքը։ Մշտազուսպ Սվենինի տաքանալը, որ աստիճ զարմացրեց Նեխլիւդովին, յառաջանում էր նրանից, որ նա գիտէր բաժնետիրական ընկերութեան նախագահի՝ փողային գործերում կեղտոտ մարդ լինելը, մինչդեռ պատահմամբ իմացել էր, որ գործը քննուելու դրեթէ նախընթաց օրը Վօլֆը հրաւիրուած

էր եղել այդ ճարպիկ գործչի տունը չքեղ ճաշկերոյթի։ Ուստի այժմ, երբ Վօլֆը չատ զգոյշ, բայց ակնյայտնի միակողմանի կերպով զեկուցեց գործը, Սվենինը տաքացաւ և իր կարծիքը յայտնեց սովորական գործին անհամապատասխան ջղայնութեամբ։ Նրա ճառը, ակներեւաբար վիրաւորեց Վօլֆին, որ կարմրեց, սկսեց ջղաձգուել ու զարմանքի լուռ չարժումներ անել և վերջը վերին աստիճանի արժանավայել և վիրաւորուած կերպարանքով հեռացաւ միւս սենատօրների հետ խորհրդակցական սենեակը։

—Դուք ո՛ր գործի համար էք եկել,—նորից հարցրեց Ֆանարինին դատական պրիստաւը, հէնց որ սենատօրները դուրս եկան դահլիճից։

—Ես արդէն ասացի ձեզ, որ Մասլօվայի գործի համար եմ եկել,—ասաց Ֆանարինը։

—Ճիշտ է, այսօր է քննուելու գործը։ Բայց...

—Ի՞նչպէս թէ «բայց»,—հարցրեց փաստաբանը։

—Բանն այն է, որ ենթադրւում էր, թէ քննուելու է առանց կողմերի ներկայութեան, այնպէս որ պարոն սենատօրները դժուար թէ դուրս գան վճիռը յայտնելուց յետոյ։ Բայց... ես կը զեկուցանեմ...

—Այսինքն ինչպէս։

—Ես կը զեկուցանեմ, կը զեկուցանեմ—և պրիստաւը ինչ որ նշանակեց իր թղթի վրայ։

Սենատօրները, ճիշտ որ, մտադիր էին՝ զրպարտութեան գործի վճիռը յայտնելուց յետոյ միւս գործերը, որոնց թւում և Մասլօվայի գործը, վերջացնել խորհրդակցական սենեակում թէյ խմելիս ու ծխելիս։

XXI

Հէնց որ սենատօրները նստեցին սեղանի չուրջը խորհրդակցական սենեակում, Վօլֆը սկսեց չատ տաք-տաք առաջարկել այն պատճառները, որոնցով վճիռը պէտք էր բեկանել։

Նախագահողը, որ առանց այն էլ բարեացակամ մարդ չէր, այսօր առանձնապէս վատ տրամադրութեան մէջ էր։ Նիստի ժամանակ գործը լսելիս նա արդէն իր կարծիքը կազմել էր, և այժմ նստած՝ ընկած էր մտածմունքների մէջ ու չէր լսում Վօլֆին։ Իսկ նրա մտածմունքները կայանում էին նրանում, որ նա մտաբերում էր այն, ինչ որ ինքը երէկ գրել էր իր յիշատակարանում իր վաղուց սպասուած կարևոր պաշտօնի համար ոչ իրան, այլ Վելհանովին նշանակելու առիթով։ Նախագահող

Նիկիտինը բոլորովին անկեղծ կերպով համոզուած էր, թէ իր դատողութիւնները առաջին երկու կարգի այն ասպիճանաւորների մասին, որոնց հետ ինքը յարաբերութիւններ էր ունեցել իր ծառայութեան միջոցին, շատ կարևոր պատմական նիւթ են կազմում։ Երէկ մի գլուխ գրած լինելով, որի մէջ Թունդ յարձակուել էր առաջին կարգի մի քանի ասպիճանաւորների վրայ այն բանի համար, որ նրանք, իր ասելով, խանգարել էին նրան վրկել Ռուսաստանը կորուստից, իսկ իրօք միմիայն նրա համար, որ նրանք խանգարել էին նրան հիմիկուանից աւելի ռոճիկ ստանալ,—նա մտածում էր այժմ այն բանի մասին, թէ ինչպէս այդ հանգամանքը բոլորովին նոր լուսաբանութիւն կը ստանայ ապագայ սերունդների աչքում։

—Ի հարկէ, ի հարկէ,—ասաց նա Վօլֆին, երբ նա դիմեց իրան, առանց լսելու նրա խօսքերը։

Իսկ Բէն լսում էր Վօլֆին մեծ դէմքով, ծաղկողկոյզներ նկարելով առջևում դրուած թղթի վրայ։ Բէն ամենազուտ ազատամիտներիցն էր։ Նա սրբութեամբ պահպանում էր վաթսունական թուականների աւանդութիւնները և նիթէ երբեմն չեղում էր խիստ անկողմնապահութիւնից, այդ չեզումը լինում էր միմիայն դէպի ազատամտութեան կողմը։ Այդպէս և ներկայ դէպքում, բայց այն, որ բաժնեհարական ընկերութեան նախագահը, որ զանգուածում էր ղրպարտութեան մասին, կեղտոտ մարդ էր, Բէն՝ վճռաջինջ զանգուած անհետանալ թողնելու կողմն էր նաև այն պատճառով, որ լրագրական գործչի վրայ բարդուած այդ մեղադրանքը մամուլի ազատութեան ճնշումն էր։ Երբ Վօլֆը վերջացրեց իր պատճառաբանութիւնները, Բէն, առանց աւարտելու ծաղկողկոյզի նկարը, տխուր-տխուր—նա տխուր էր, որովհետև ստիպուած էր ապացուցանել այդպիսի ծանծուած ճշմարտութիւններ—մեղմ ու դանդաղ ձայնով կարճ, պարզ ու համոզեցուցիչ կերպով ապացուցեց զանգուածի անհիմն լինելը և, քաշ գցելով սպիտակահեր գլուխը, չարունակեց նկարել ծաղկողկոյզը։

Հէնց որ Բէն դադարեց խօսելուց, Սկօվօրօդնիկօվը, որ նստած էր Վօլֆի դիմացը և ամբողջ ժամանակը հատ հատ անելով բռնում էր միրուքն ու բեխերը և խրում բերանը, դադարեց միրուքը ծամելուց, և բարձր, ճղղան ձայնով յայտնեց, որ թէն բաժնեհարական ընկերութեան նախագահը ստոսիկ անպիտան մարդ է, ինքը այնուամենայնիւ ձայն կը տար վճիռը բեկանելու համար, եթէ լինէին օրինական հիմքեր, բայց որովհետև այդպիսի հիմքեր չը կան, ինքը միանում է Իվան Սեմիօնովիչի (Բէնի) կարծիքին,—ասաց նա, ուրախանալով, որ կարողացաւ այդպիսով խայթել Վօլֆին։ Նախագահողը միացաւ Սկօվօրօդնիկօվի կարծիքին և գործը վճռուեց բացասական կերպով։

Վօլֆը դժգոհ էր, մանաւանդ այն բանից, որ կարծես թէ ապացուցեցին, որ ինքը անբարեխիղճ ու կողմնապահ կերպով էր վերաբերում գործին, բայց, անտարբեր ձևանալով, բայ արեց հետևեալ գործը, որ Մասլօվային էր, և խորասուզուեց նրա ընթերցման մէջ։ Իսկ միւս սենատօրները այդ ժամանակ զանգահարեցին, թէյ պահանջեցին և սկսեցին խօսել մի դէպքի մասին, որ, կամենակիչի մենամարտի հետ, զբաղեցնում էր բոլոր պետերբուրգցիներին։

Այդ ժամանակ պրիստաւը ներս մտաւ ու զեկուցեց, որ փաստաբանն ու Նեխլիւդովը ուզում են ներկայ լինել Մասլօվայի գործը քննելիս։

—Ահա այդ գործը,—ասաց Վօլֆը,—մի ամբողջ սիրային պատմութիւն է այդ,—և պատմեց Լիզ որ դիմաբեր Նեխլիւդովի և Մասլօվայի յարաբերութիւնների մասին։

Այդ բանի մասին խօսելուց և թէյն ու պապիրօսները վերջացնելուց յետոյ սենատօրները դուրս եկան նստարանիցը, յայտարարեցին նախընթաց գործի վճիռը և սկսեցին քննել Մասլօվայի գործը։

Վօլֆը իր բարակ ձայնով չատ հանդամանօրէն զեկուցեց Մասլօվայի վճռաջինջ զանգուածը և դարձեալ ոչ բոլորովին ապացուցեց, այլ ակներև յանկութեամբ բեկանելու դատարանի վճիռը։

—Բան ունէք աւելացնելու,—դիմեց նախագահողը փաստաբանին։

Փաստաբանը վեր կացաւ և, դուրս պրծացնելով իր սպիտակ և լայն կուրծքը ու զարմանալի աղդու և որոշ արտայայտելով իր միտքը, կէտ առ կէտ ապացուցեց, որ դատարանը վնաս կէտ տուել է օրէնքի ճիշտ իմաստից և բացի այդ, թոյլ տուեց իրան, թէն կարճառօտ կերպով, չօշափել նաև գործի էութիւնը, մանաւանդ անելով դատարանի վճռի սարսափելի անարդարութիւնը։ Փաստաբանը իր կարճ, բայց աղդու ճառը այն եղանակով ասաց, թէ ինքը ներողութիւն է խնդրում, որ պնդում է մասնաների վրայ, որովհետև պարոն սենատօրները իրանց նուրբ մտքով և իրաւաբանական իմաստութեամբ իրանից նուրբ մտքով և իրաւաբանական իմաստութեամբ նրանց լաւ են տեսնում և հասկանում այդ բանները, բայց ինքը ստիպուած է այդպէս անել, որովհետև այդպէս է պահանջում իր ստանձնած պարտականութիւնը։ Փաստաբանի ճառից յետոյ, ըստ երևոյթին, բոլորովին անկասկած էր, որ սենատօրները պէտք է

փոխեն դատարանի վճիռը։ Վերջացնելով ճառը, Ֆանարինը յաղթական կերպով ժպտաց։ Նայելով իր փաստաբանին և տեսնելով այդ ժպիտը, Նեխլիւդովը հաւատացած էր, որ գործը տարել են։ Բայց նայելով սենատորներին, նա տեսաւ, որ Ֆանարինը միայնակ էր ժպտում ու ցնծում։ Սենատորներն ու դատախազապետի օգնականը չէին ժպտում ու ցնծում, այլ ձանձրոյթ էին զգում և կարծես ուզում էին ասել Ֆանարինին— չատ ենք լսել ձեզ պէսներին և զուր է այդ բոլորը։ Նրանք բոլորն էլ աներևաբար գոհ մնացին միայն այն ժամանակ, երբ փաստաբանը վերջացրեց ճառը, որով զուր տեղը պահում էր նրանց դահլիճում։ Փաստաբանը խօսքը վերջացրեց թէ չէ՝ նախագահողը դիմեց դատախազապետի օգնականին։ Սելենինը կարճ, բայց պարզ ու որոշ կերպով յայտնեց իր կարծիքը, թէ գործը պէտք է թողնել անփոփոխ, որովհետև վճռաջինջ դանգատի բոլոր պատճառաբանութիւնները անհիմն են։ Այնուհետև սենատորները վեր կացան ու գնացին խորհրդակցելու։ Խորհրդակցական սենեակում ձայները բաժանուեցին։ Վօլֆը վճիռը բեկանելու կողմն էր. Բէն էլ, հակառակելով բանի էութիւնը, չատ տաք կերպով սկսեց պնդել, թէ պէտք է բեկանել վճիռը, վառ կերպով նկարագրելով ընկերներին, թէ ինչպէս է տեղի ունեցել դատը և ինչպէս էին սխալուել երդուեալատենակալները։ Նիկիտինը, որ միշտ խստութեան և խիստ ձևականութեան կուսակից էր, դէմ էր վճիռը բեկանելուն։ Գործը ամբողջապէս կախուած էր Սկովորոդնիկովի ձայնից։ Եւ նա ձայն տուեց բարոյական կերպով, գլխաւորապէս այն պատճառով, որ Նեխլիւդովի վճիռը—պահպանել այդ աղջկայ հետ յանուն բարոյական պահանջների—վերին աստիճանի հակակրելի էր նրա համար։

Սկովորոդնիկովը մասերիալիստ էր, դարվինիստ, և վերացական բարոյականութեան կամ, աւելի ևս վատ, կրօնական ղեկամունքի ամեն մի արտայայտութիւն համարում էր ոչ միայն արհամարհելի անմտութիւն, այլ և անձնական վիրաւորանք։ Այդ բոլոր իրարանցումը մի որ և է անտեսակ կնոջ համար և նրան պաշտպանող հռչակաւոր փաստաբանի ու Նեխլիւդովի ներկայութիւնը այստեղ, սենատում, վերին աստիճանի հակակրելի էր նրա համար։ Եւ նա չարունակ միրուքը բերանն էր խրում և, ծամածռութիւններ անելով, չատ բնական կերպով ձևացրեց, թէ ինքը ոչինչ չը գիտի այդ գործի մասին, բացի այն, որ վճռաբեկ առիթներ չը կան, ուստի և համաձայն է նախագահողի հետ, որ դանգատը պէտք է անհետևանք թողնել։

Եւ այդպիսով դանգատը մերժուեց։

XXII

—Սարսափելի բան է,—ընդունարանը դուրս գալիս ասում էր Նեխլիւդովը փաստաբանին, որ թղթերը դարսում էր թղթակալի մէջ։—Ամենաանկարգ գործի մէջ էլ ձևականութեան յետևից են ընկնում ու բացասական վճիռ կայացնում։ Սարսափելի բան է։

—Գործը դատարանումն են փչացրել,—ասաց փաստաբանը։

—Սելենինն էլ մերժման կողմն էր։ Սարսափելի բան է, սարսափելի,—չարունակում էր կրկնել Նեխլիւդովը։—Ի՞նչ կարող ենք անել այժմ։

—Խնդիրք կը տանք Բարձրագոյն անունով։ Հէնց ինքնըբերդ տուէք քանի այստեղ էք։ Ես կը գրեմ ձեզ համար։

Այդ միջոցին փոքրիկ Վօլֆը, չքազգեստը հագին ու կուրծքը աստղերով զարդարած, դուրս եկաւ ընդունարանը ու մօտեցաւ Նեխլիւդովին։

—Ի՞նչ արած, սիրելի իչխան։ Բաւականաչափ առիթներ չը կային,—ասաց նա, վեր քաշելով նեղ ուսերը ու փակելով աչքերը, և գնաց ուր պէտք էր։

Վօլֆի յետևից դուրս եկաւ Սելենինը, իմանալով սենատորներից, որ իր նախկին բարեկամ Նեխլիւդովը սենատումն է։

—Ա՛մենևին չէի սպասում քեզ այստեղ հանդիպել,—ասաց նա, մօտենալով Նեխլիւդովին ու ժպտալով չրթունքներով, մինչդեռ աչքերը մնում էին առաջուան պէս տխուր։—Ես չը գիտէի նոյն իսկ, թէ Պետերբուրգումն ես։

—Իսկ ես չը գիտէի, թէ դու դատախազապետ ես...

—Դատախազապետի օգնական,—ուղղեց Սելենինը։—Ի՞նչպէս է պատահել, որ սենատումն ես,—հարցրեց նա, տխուր ու լքուած հայեացքով նայելով իր բարեկամի վրայ։—Ես գիտէի, որ Պետերբուրգումն ես, բայց ինչպէս է պատահել, որ սենատն ես եկել։

—Սենատը. նրա համար, որ յոյս ունէի արդարութիւն գտնել և փրկել անմեղ տեղը դատապարտուած մի կնոջ։

—Ի՞նչ կնոջ։

—Որի գործի վերաբերմամբ հէնց նոր վճիռ կայացուեց։

—Ա՛խ, Մասլօվայի գործը,—մտաբերելով ասաց Սելենինը։—Բոլորովին անհիմն բողոք էր։

—Բանը բողոքումը չէ, այլ նրա մէջ, որ անմեղ մի կին պատժուում է։

Սելենինը հոգոց քաշեց։

—Շատ կարելի է, բայց...

—Շատ կարելի չէ, այլ հաստատ է...

—Դու ինչից գիտես:

—Նրանից, որ ես ինքս էլ երդուեալ ատենակալ էի նրան դատելիս: Ես գիտեմ, թէ ինչպէս մենք սխալուելինք:

Սելենինը մտածմունքի մէջ ընկաւ:

—Պէտք է հէնց այն ժամանակը յայտնէիք,—ասաց նա:

—Ես յայտնեցի:

—Պէտք էր արձանագրութեան մէջ մտցնել: Եթէ այդ բանը լինէր վճռաթղթի մէջ...

Սելենինը, որ առհասարակ ատեանի զբաղուած էր և շատ քիչ էր լինում հասարակութեան մէջ, աներևութապէս, ոչինչ չէր լսել Նեխլիւդովի սիրային պատմութեան մասին, իսկ Նեխլիւդովը, նկատելով այդ, վճռեց, որ պէտք էլ չէ յայտնել նրան իր ու Մասլովայի մէջ եղած առանձին յարաբերութիւնների մասին:

—Բայց չէ որ այժմ էլ ակներև էր, որ դատավճիռը անհեթեթ է,—ասաց նա:

—Սենատը իրաւունք չունի այդ ասելու: Եթէ սենատը թոյլ տար իրան բեկանել դատարանների վճիռները այդ վճիռների արդար լինելու մասին իր ունեցած հայեացքի հիման վրայ, այն ժամանակ բացի նրանից, որ սենատը կը կորցնէր իր դոյութեան յենակէտը և աւելի շուտ ընդունակ կը լինէր խախտել արդարութիւնը, քան վերականգնել,—ասում էր Սելենինը, յիշելով նախընթաց գործը,—այլ և երդուեալ ատենակալների վճիռները, բոլորովին կը կորցնէին իրանց նշանակութիւնը:

—Ես միայն այնքանը գիտեմ, որ այդ կինը բոլորովին անմեղ է և որ կորաւ վերջին յոյսը փրկելու նրան ապարժան պատժից: Բարձրագոյն դատական հիմնարկութիւնը հաստատեց կատարուած ապօրինութիւնը:

—Նա ոչինչ չը հաստատեց, որովհետև չը քննեց և չէր էլ կարող քննել գործի էութիւնը,—ասաց Սելենինը, պչելով աչքերը:—Դու երևի մօրաքրոջդ մօտ ես իջել,—աւելացրեց նա, անկերևաբար ցանկանալով փոխել խօսակցութեան նիւթը:—Ես երէկ իմացայ, որ դու այստեղ ես: Կոմսուհի Եկատերինա Իվանովնան հրաւիրում է ինձ քեզ հետ միասին ներկայ լինել ժողովի՝ եկուոր քարոզչին լսելու,—ասաց Սելենինը, ժպտալով միմիայն շրթունքներով:

—Ես արդէն եղայ այդ ժողովին և զզուանքով հեռացայ այնտեղից,—բարկութեամբ ասաց Նեխլիւդովը, գժգոհ լինելով այն բանից, որ Սելենինը խօսքը կտուրն է դցում:

—Ինչու պէտք է զզուանք զգայիր: Ջէ որ այնտ ամենայնիւ այդ՝ կրօնական զգացմունքի արտայայտութիւն է, թէև միակողմանի ու ազանդային,—ասաց Սելենինը:

—Այդ մի վայրենի անհեթեթութիւն է միայն,—ասաց Նեխլիւդովը:

—Ջէ, սխալւում ես: Այստեղ տարօրինակն այն է միայն, որ մենք այնքան քիչ գիտենք մեր եկեղեցու վարդապետութիւնը, որ ինչ որ նոր յայտնութիւն ենք համարում այն բանները, որոնք մեր եկեղեցու հիմնական դաւանանքն են կազմում,—ասաց Սելենինը, կարծես չտապալով յայտնել նախկին բարեկամին իր այժմեան, նրա համար նոր հայեացքները:

Նեխլիւդովը զարմացած և ուշադիր հայեացքով նայեց Սելենինի վրայ: Սելենինը քաշ չը գցեց աչքերը, որոնց մէջ արտայայտուեց ոչ միայն ախորժութիւն, այլ և չարաճճութիւն:

—Սակայն թողնենք այդ, յետոյ կը խօսենք,—ասաց Սելենինը:—Գալիս եմ,—գիմեց նա դատական պրիստաւին, որ պատկառանքով մօտեցաւ նրան:—Անպատճառ պէտք է տեսնուենք,—աւելացրեց նա, հոգոց քաշելով:—Միայն թէ, ով գիտի, կարող եմ արդեօք քեզ տանը գտնել: Իսկ ինձ միշտ կարող ես տանը գտնել ժամի 7-ին, ճաշի ժամանակ: Նադեժդինսկայա փողոց,—նա ասաց տան համարը:—Շատ բան է փոխուել այն ժամանակից յետոյ,—աւելացրեց նա գնալիս, դարձեալ ժպտալով միմիայն շրթունքներով:

—Եթէ ժամանակ գտայ, կը գամ,—ասաց Նեխլիւդովը, զգալով, որ Սելենինը, որ մի ժամանակ նրա մտերիմն էր ու սիրելին, այժմ, այդ կարճատև խօսակցութեան ընթացքում, յանկարծ խորթ, օտար ու անհասկանալի, գուցէ և թշնամի մարդ դարձաւ իր համար:

XXIII

Այն ժամանակ, երբ Սելենինը ուսանող էր Նեխլիւդովի հետ միասին, նա հիանալի որդի էր, հաւատարիմ ընկեր և, իր տարիքի համեմատ, լաւ կրթուած աշխարհիկ մարդ, մեծ տակտի տէր, միշտ վայելչատես ու սիրուն և միևնոյն ժամանակ զարմանալի չիտակ ու ազնիւ: Նա առանց առանձին ջանք թափելու և առանց ամենաչնչին պէզանատութեան հիանալի էր տօղորում և չարունակ մէզդաներ էր ատանում չարաչրութիւններ համար:

Ոչ միայն խօսքով, այլ և իրապէս նա իր երիտասարդ կեանքի նպատակը տեսնում էր մարդկանց ծառայելու մէջ: Այդ ծառայութիւնը նա հասկանում էր միմիայն իրրև պատասխան

ծառայութիւն, ուստի և համալսարանն աւարտելուն պէս սիստեմաբար քննել գործունէութեան այն բոլոր ասպարէզները, որոնց ինքը կարող էր նուիրել իր ոյժերը, և վճռել, որ ինքը ամենից աւելի օգտակար կը լինի օրէնքներ յօրինելով զբաղուող սեփական դիւանատան երկրորդ բաժանմունքում ու մտաւ այնտեղ։ Բայց, չը նայելով, որ ամենայն ճշտութեամբ ու բարեխղճութեամբ կատարում էր իրանից պահանջուած ամեն ինչ, այնուամենայնիւ նա այդ բաժանմունքում բաւարարութիւն չը գտաւ իր՝ օգտակար լինելու պահանջին և չը կարողացաւ առաջ բերել իր մէջ այն գիտակցութիւնը, թէ ինքը անում է այն, ինչ որ պէտք է անել։ Այդ անբաւարարութեան զգացմունքը այնքան սաստկացաւ վերին աստիճանի բծախնդիր ու մնափառ մերձաւոր իշխանաւորների հետ ունեցած ընդհարումների չնորհիւ, որ նա դուրս եկաւ երկրորդ բաժանմունքից ու մտաւ սենատ։ Սենատում նա աւելի լաւ էր զգում իրան, բայց նրան դարձեալ հալածում էր նոյն անբաւարարութեան զգացմունքը։ Նա չարունակ զգում էր, որ այդ ամենին այն չէր, ինչ որ նա ապասում էր և ինչ որ պէտք է լինէր։ Այն ժամանակ, երբ նա ծառայում էր սենատում, նրա ազգականների խնդիրքով նրան նշանակեցին կամէր-իւնկէր, և նա պէտք է ասղեգործ զարդարանքներով չքազգեստ հագած գնար սրան նրբան չնորհակալութիւն յայտնելու։ Այժմ նա աւելի հս, քան ծառայութեան ժամանակ, զգում էր, որ այդ «այն չէր» և սակայն, մի կողմից, նա չէր կարող հրաժարուել այդ պալատական պաշտօնից՝ չը վհատացնելու համար նրանց, որոնք հաւատացած էին, թէ իրանք դրանով մեծ լաւութիւն են անում նրան, իսկ, միւս կողմից, այդ պաշտօնը չոյում էր նրա ինքնասիրութիւնը։ Նա հաճոյք էր զգում ոսկեգործ չքազգեստը հագին հայելուն նայելիս և այն չարգանքը վայելելիս, որով սկսեցին վերաբերուել դէպի նա չաւերը, երբ նրան նշանակեցին կամէր-իւնկէր։

Նոյնը պատահեց նրան նաև ամուսնանալիս։ Նրա ամուսնութիւնը սարքեցին, աշխարհիկ հասարակութեան տեսակէտից, փայլուն կերպով։ Եւ նա պակուց նոյնպէս գլխաւորաբար այն պատճառով, որ հրաժարուելով նա վիրաւորանք կը հասցնէր ու ցաւ կը պատճառէր թէ նրա հետ ամուսնանալ ցանկացող հարսնացուին, թէ այդ պակը սարքողներին, և, բացի այդ, այն պատճառով, որ այդպիսի ջահել, սիրունատես ու տոհմիկ կին ունենալը հաճելի էր նրան և չոյում էր նրա ինքնասիրութիւնը։ Բայց չատ չուտով նա համոզուեց, որ ամուսնութիւնը ծառայութիւնից ու պալատական պաշտօնից էլ աւելի «այն չէ»։ Առաջին երեխայից յետոյ կինը չուզեց այլ ևս երեխայ ունենալ ու սկսեց

վարել չքեղ աշխարհիկ կեանք, որին նա էլ ստիպուած եղաւ կամայ-ակամայ մասնակից լինել։ Կինը, չը նայելով որ դրանով թունաւորում էր ամուսնու կեանքը և ինքն էլ ոչինչ չէր ստանում այդ կենցաղավարութիւնից բացի սարսափելի ձիգերից յառաջ եկող յոգնածութիւնից, այնուամենայնիւ ամեն կերպ աշխատում էր յետ չընկնել այդ աշխարհիկ կեանքից։ Մարդու բոլոր փորձերը փոխոխել իրանց կենցաղավարութեան եղանակը ջախջախուում էին, ընդհարուելով կնոջ և նրա բոլոր ազգականների ու ծանօթների՝ ապառաժի նման հաստատ համոզմունքին, թէ այդպէս պէտք է ապրել։

Նրանց երեխան,—մի փոքրիկ աղջիկ ոսկեգոյն երկար խոպոպաներով ու մերկ արունքներով,—հօր համար բոլորովին խորթ էակ էր, մանաւանդ այն պատճառով, որ նրան ամենևին այնպէս չէին դաստիարակում, ինչպէս ուզում էր հայրը։ Ամուսինների մէջ հաստատուել էր՝ այժմ սովորական դարձած յարաբերութիւնը, այսինքն նրանք չէին հասկանում միմեանց և նոյն իսկ չէին ուզում հասկանալ ու չարունակ մղում էին իրար դէմ հանդարտ, լուռ ու մռունչ, ուրիշներից թաղուն և վայելչութեան կանոններով չափաւորուող խուլ կռիւ, որի չնորհիւ ամենու կեանքը չատ ծանր էր դարձել միւսների համար։ Այնպէս որ ընտանեկան կեանքը ծառայութիւնից ու պալատական պաշտօնից էլ աւելի «այն չէր»...

Դրանից էր, որ նրա աչքերը միշտ մեծ էին։ Այդ էր նոյնպէս պատճառը, որ տեսնելով Նեխլիւդովին, որին նա ճանաչում էր այն ժամանակ, երբ այդ բոլոր ստութիւնները չէին արմատացել իր մէջ, նա յիշեց իրան այնպէս, ինչպէս այն ժամանակն էր, և աւելի քան երբ և իցէ զգաց, որ այդ բոլորը «այն չէ», ու սարսափելի կսկիծ զարթնեց սրտումը։ Հին բարեկամին տեսնելու ուրախութեան առաջին տպաւորութիւնից յետոյ միևնոյն բանը զգաց նաև Նեխլիւդովը։

Եւ այդ էր պատճառը, որ նրանք երկուսն էլ, խոստանալով միմեանց տեսնուել դարձեալ, ամենևին չաչխատացին տեսնուել ու այլ ևս չը տեսան իրար Նեխլիւդովի այս անգամ Պետերբուրգ եղած միջոցին։

XXIV

Սենատից դուրս գալով, Նեխլիւդովն ու փաստաբանը միասին գնացին փողոցի մայթով։ Իր վարձած փակ կառքի կառապանին փաստաբանը պատուիրեց գնալ իրանց տեսից ու սկսեց պատմել Նեխլիւդովին, թէ ինչպէս այս

ինչի սիրուհին բօրսայում միլիօններ է վաստակել ու ինչպէս այս ինչը ծախել է իր կնոջը, իսկ այն ինչը գնել, և այնուհետև մի չարք պատմութիւններ զանազան խարդախութիւնների և ամեն տեսակ յանցանքների մասին, որոնց կատարողները բանտում նստած կալանաւորներ չէին, այլ զանազան հիմնարկութիւնների նախագահական աթոռների վրայ բազմող աչքի ընկնող գործիչներ։ Այդ պատմութիւնները, որոնց պաչարը, ըստ երևոյթին, անսպառ էր, փաստաբանին մեծ հաճոյք էին պատճառում, ակնյայտնի կերպով ցոյց տալով, որ փոշ վաստակելու համար փաստաբանի գործ դրած միջոցները բոլորովին կանոնաւոր ու անմեղ էին, համեմատած այն միջոցների հետ, որ նոյն նպատակով գործ էին դնում Պետերբուրգի աչքի ընկնող գործիչները։ Ուստի և փաստաբանը սառնարիւն զարմացաւ, երբ Նեխլիւդովը կիսատ թողնելով նրա վերջին պատմութիւնը, հրաժեշտ տուեց նրան և կարգ վարձելով ասաց կառապանին, որ տուն տանի իրան։

Շատ տխուր էր Նեխլիւդովը։ Նա տխուր էր գլխաւորապէս այն պատճառով, որ սենատի մերժումի չնորհիւ վերջնականապէս հաստատւում էր անմեղ Մասլօվայի անհեթեթ նահատակութիւնը և որ այդ մերժումը աւելի ևս դժուար իրագործելի էր դարձնում նրա անփոփոխելի որոշումը՝ միացնել իր բախտը նրա բախտի հետ։ Այդ տխրութիւնը աւելի ևս ատելացնում էր չարիքի տիրապետութիւնը ապացուցանող այն սարսափելի փաստերի չնորհիւ, որ այնքան սիրով պատմում էր փաստաբանը, և բացի այդ այն բանի չնորհիւ, որ նա չարունակ յիշում էր երբեմն այնքան քաղցր, բայց սիրա ու ազնիւ Սեվինների չարակամ, սառը և խորչելիորող հայեացքը։

Երբ Նեխլիւդովը վերադարձաւ տուն, դռնապանը մի տեսակ արհամարհական կերպով տուեց նրան մի տոմսակ, որ դռնապանի սենեակում «ինչ որ մի կին» էր գրել, նրա ասելով։ Շուտասելայի մօր գրածն էր այդ։ Նա գրում էր, թէ եկել էր չնորհակալութիւն յայտնելու իր աղջկայ ազատողին, իրանց բարերարին, և, բացի այդ, խնդրելու, աղաչելու, որ նա գնայ իրանց մօտ Վասիլիեվսկիյ կղզին, 5-րդ փողոցը, այս ինչ տունը։ Նրա գալը, գրում էր նա, աստիճ հարկաւոր էր վնաս եկրեմօվնայի համար։ Թող նա չը վախենայ, թէ իրան կը ձանձրացնեն չնորհակալութիւններ յայտնելով. չնորհակալութեան մասին խօսք չի լինիլ, այլ պարզապէս ուրախ կը լինեն նրան տեսնելու։ Եթէ կարելի է, արդեօք չի ցանկանալ գնալ հէնց վաղը առաւօտ։

Նեխլիւդովը, վերջին օրերի ապատրութիւններից յուսոյ,

յոյսը բոլորովին կորցրել էր որ և է բան յաջողեցնելու վերաբերմամբ։ Այն ծրագիրները, որ ինքը կազմել էր Մոսկուայում, թւում էին նրան այն պատանեկական ցնորքների նման մի բան, որոնց նկատմամբ անհրաժեշտօրէն հիասթափւում են մարդիկ կեանք մտնելիս։ Բայց այնուամենայնիւ նա իր պարտականութիւնն էր համարում անել այժմ այն բոլորը, ինչ որ մտադիր էր անել Պետերբուրգում։

Նա կարդում էր թղթակալից հանած թղթերը, երբ դուռը ծեծեց ու ներս մտաւ սենեակը կոմսուհի Եկատերինա Իվանովնայի սպասաւորը, որ հրաւիրեց նրան գնալ վերև թէյ խմելու։

Նեխլիւդովը ասաց, որ իսկոյն կ'երթայ, ու թղթերը դնելով թղթակալի մէջ՝ գնաց մօրաքրոջ մօտ։ Վերև բարձրանալիս նա լուսամուտով նայեց փողոցը ու տեսաւ Mariette-ի չիկապոյն ձիաղոյգը, և յանկարծ անսպասելի կերպով ուրախացաւ սիրտը ու ժպտալու ցանկութիւն զարթնեց մէջը։

Mariette-ը գլխարկով, բայց ոչ առաջուան պէս, այլ մի ուրիշ, բայց-պոյն և գոյզգոյն հագուստով, սուրթի գաւաթը ձեռքին կոմսուհու բազկաթոռի մօտ նստած, ինչ որ ծրագրաւորում էր, փայլեցնելով իր սիրուն ու ժպտուն աչքերը։ Նեխլիւդովի ներս մտնելուց մի քանի առաջ Mariette-ը ինչ որ սաստիկ ծիծաղելի և անվայել—Նեխլիւդովը այդ նկատեց ծիծաղի բնաւորութիւնից—կատակ էր արել, որից բարեհոգի ու բեխաւոր կոմսուհի Եկատերինա Իվանովնան քրքջում էր, ցնցուելով իր ամբողջ հսկայ մարմնով, իսկ ինքը Mariette-ը, մի առանձին mischievous արտայայտութեամբ՝ ժպտուն բերանը մի քիչ ծռած ու ետևդուն և ուրախ դէմքը կողքերան թեքած, լուռ նայում էր իր խօսակցի վրայ։

Նեխլիւդովը նրանց ասած մի քանի խօսքից հասկացաւ, որ նրանք խօսում էին Պետերբուրգում այդ ժամանակ երկրորդ նորութիւնը կազմող Ջ. դէպքի մասին և որ այդ նորութեան վերաբերմամբ էր Mariette-ը այնքան սաստիկ ծիծաղելի բան ասել, որ կոմսուհին երկար ժամանակ չէր կարողանում զսպել քրքիջը։

—Քիչ է մնում մեռնեմ ծիծաղից,—ասում էր կոմսուհի Եկատերինա Իվանովնան, հազալով։

Նեխլիւդովը բարևեց նրանց ու նստեց կողքներին։ Նա պատրաստւում էր արդէն դատապարտել Mariette-ին նրա թեթևամտութեան համար, երբ Mariette-ը, նկատելով նրա դէմքի լրջութիւնը և հազիւ նշմարելի դժգոհ արտայայտութիւնը, նրան դուր գալու համար,—իսկ այդ նրա սիրան ուզում էր նրան տեսնելու առաջին օրից ի վեր,—իսկոյն և եթ փոխեց ոչ միայն

իր դէմքի արտայայտութիւնը, այլ և իր ամբողջ հոգեկան տրամադրութիւնը։ Նա յանկարծ զարձաւ լուրջ, իր կեանքից զըժգոհ, ինչ որ բան փնտռող, ինչ որ բանի ձգտող մի մարդ,— և այն ոչ թէ նա ձևացաւ այդպէս, այլ իրօք իւրացրեց այն հոգեկան տրամադրութիւնը, որի մէջ գտնւում էր այդ րոպէին Նեխլիւդովը, թէև նա ամենևին չէր կարող խօսքով արտայայտել, թէ ինչ տրամադրութիւն է այդ։

Նա հարցրեց Նեխլիւդովից, թէ ինչպէս էր վերջացրել գործերը։ Նեխլիւդովը պատմեց սենատում ունեցած գործի անյաջողութիւնը և Սիլենինին հանդիպելը։

—Ախ, ինչ անարատ հոգի է։ Ահա կատարեալ chevalier sans peur et sans reproche (աներկիւղ և անյանդիմանելի ասպետ)։ Անարատ հոգի,—կրկնեցին երկու տիկիններն էլ այն մշտական մակդիրը, որով Սիլենինը յայտնի էր հասարակութեան մէջ։

—Կինը ինչպէս է,—հարցրեց Նեխլիւդովը։

—Կինը։ Չեմ ուզում մեղադրել նրան, բայց պէտք է ասեմ, որ նա չի հասկանում իր ամուսնուն։ Ի՞նչ, մի՞թէ Սիլենինն էլ մերժման կողմն էր,—հարցրեց նա անկեղծ կարեկցութեամբ։—Սարսափելի բան է։ Ո՛րքան խղճում եմ ձեր կալանաւորուհուն,—աւելացրեց նա հառաչելով։

Նեխլիւդովը յօնքերը կիտեց և, խօսակցութիւնը փոխելու համար, սկսեց խօսել Շուստովայի մասին, որ բանտարկուած էր ամրոցում և այժմ ազատութիւն էր ստացել Mariette-ի բարեխօսութեան շնորհիւ։ Նա շնորհակալութիւն յայտնեց տիկնոջը՝ ամուսնու մօտ բարեխօսելու համար և ուզում էր ասել, թէ ինչ սարսափելի բան է, որ Շուստովան և նրա ամբողջ ընտանիքը տանջւում էին միմիայն այն պատճառով, որ ոչ ոք չէր յիշեցնում նրանց մասին, բայց տիկինը թոյլ չը տուեց, որ նա խօսքը վերջացնի, ու ինքը զայրոյթ արտայայտեց այդ առիթով։

Կոմսուհի Եկատերինա Իվանովնան տեսնում էր, որ Mariette-ը կօքէտութիւն է անում իր քրոջու հետ, և այդ զուարճացնում էր նրան։

—Գիտես ինչ,—ասաց նա, երբ նրանք լսեցին,—վաղը երեկոյ արի գնանք Aline-ի մօտ. կիզէվետտերը այնտեղ է լինելու։ Դու էլ,—դիմեց նա Mariette-ին։

—Il vous a remarqué (նա քեզ նկատել է),—ասաց նա քրոջուն։—Նա ինձ ասաց, որ քո բոլոր ասածները,—ես պատմեցի իրան,—լաւ նշաններ են, և որ դու անպատճառ կը յաջողես

Քրիստոսին։ Անպատճառ գնա։ Mariette, ասա սրան, որ գայ գնանք։ Ու ինքդ էլ արի։

—Ես, կոմսուհի, առաջինը, ոչ մի իրաւունք չունեմ որևէ խորհուրդ տալու իշխանին,—ասաց Mariette-ը, նայելով Նեխլիւդովին և այդ հայեացքով իր և նրա մէջ կատարեալ հասկացողութիւն հաստատելով կոմսուհու խօսքերի և առհասարակ աւետարանականութեան նկատմամբ,—և երկրորդը, դուք գիտէք, որ ես չուտ էլ չեմ սիրում...

—Աւենք, դու միշտ այդպէս ես. ամեն ինչ ներհակ ես անում և քո կերպի։

—Ի՞նչպէս թէ իմ կերպի։ Ես հաւատում եմ, ինչպէս մի ամենահասարակ գեղջկուհի,—ասաց նա, ժպտալով։—Ես երբորդը,—չարունակեց նա,—ես վաղը գնում եմ ֆրանսիական թատրոն։

—Ա՛խ։ Դու տեսել ես այդ... ինչպէս է անունը,—ասաց կոմսուհի Եկատերինա Իվանովնան։

Mariette-ը ասաց հռչակաւոր ֆրանսիական դերասանուհու անունը։

—Անպատճառ գնա տես,— մի զարմանալի բան է։

—Բայց առաջ ում գնամ տեսնելու, ma tante, դերասանուհուն, թէ քարոզչին,—հարցրեց Նեխլիւդովը ժպտալով։

—Դէ, դէ, խօսքերիս պոչիցը մի բռնի։

—Ես կարծում եմ, լաւ կը լինի առաջ քարոզչին տեսնեմ, յետոյ ֆրանսիական դերասանուհուն, թէ չէ յանկարծ բոլորովին կը կորցնեմ քարոզ լսելու ցանկութիւնս,—ասաց Նեխլիւդովը։

—Չէ, լաւ է առաջ ֆրանսիական թատրոնից սկսէք ու յետոյ ազաչխարէք,—ասաց Mariette-ը։

—Ինդրեմ, չը համարձակուէք ձեռք առնել ինձ։ Քարոզիչն իր տեղն ունի, թատրոնն էլ իր տեղը։ Հոգին փրկելու համար մարդ չը պէտք է անպատճառ երեսը մի արչին կախ դրի ու չարունակ լայ։ Պէտք է միայն հաւատալ, և մարդուս սիրտը ուրախ կը լինի։

—Դուք, ma tante, բոլոր քարոզիչների էլ լաւ էք քարոզում։

—Գիտէք ինչ,—ասաց Mariette-ը Նեխլիւդովին՝ մի րոպէ մտածելուց յետոյ։—Վաղը եկէք իմ օթեակը։

—Վախենում եմ չը կարողանամ։

Խօսակցութիւնը ընդհատեց սպասաւորը, որ եկաւ յայտնելու, թէ սպասում է եկել Այն բարեգործական ընկերութեան քարտուղարն էր այդ, որի նախագահն էր կոմսուհին։

—Օ՜հ, սարսափելի ձանձրալի մարդ է։ Լաւ կը լինի ես նրան այնտեղ ընդունեմ։ Իսկ յետոյ կը գամ ձեզ մօտ։ Թէյ տուէք դրան համր, Mariette,—ասաց կոմսուհին իր արագ, կոկտան քայլուածքով գնալով դահլիճը։

Mariette-ը հանեց ձեռնոցը և մերկացրեց եռանդուն, բաւական տափակ ձեռքը, որի մատանեմատը ծածկուած էր մատանիներով։

—Ուշում էք,—ասաց նա, բռնելով սպիրտի վրայ դրուած արծաթէ թէյամանը և տարօրինակ կերպով չռելով ճկոյթը։

Նրա դէմքը չոլբշ և տխուր արտայայտութիւն ստացաւ։

—Ինձ միշտ սարսափելի կսկիծ է պատճառում այն միտքը, թէ այն մարդիկ, որոնց կարծիքը թանգ է ինձ համար, չիմանում են ինձ այն դրութեան հետ, որի մէջ ես գտնւում եմ։

Նա կարծէք պատրաստ էր լալ վերջին խօսքերը ասելիս։ Եւ թէպէտ, եթէ լաւ քննելու լինէք, այդ խօսքերը բոլորովին անիմաստ էին կամ չատ անորոշ իմաստ ունէին, սակայն նրանք Նեխլիւդօվի վրայ գործեցին վերին աստիճանի խորհրդաւոր, անկեղծ ու բարի խօսքերի տպաւորութիւն,—այնքան գրաւում էր նրան վայլուն աչքերի այն հայեացքը, որով արտասանուց այդ խօսքերը այդ ջահել, սիրուն և լաւ հագնուած կինը։

Նեխլիւդօվը լուռ նայում էր նրան և չէր կարողանում աչքերը հեռացնել նրա երեսից։

—Դուք կարծում էք, ես չեմ հասկանում ձեզ և այն ամենը, ինչ որ կատարւում է ձեր մէջ։ Ձէ որ ձեր արածը յայտնի է ամենքին։ C'est un secret de polichinelle (ամենքին յայտնի մի գաղտնիք է այդ)։ Եւ ես հիանում եմ ձեր արածից և գովում եմ ձեզ։

—Անկեղծ եմ ասում, այդտեղ հիանալու ոչինչ չը կայ. ես դեռ չատ քիչ բան եմ արել։

—Այդ միևնոյնն է. ես հասկանում եմ ձեր զգացմունքը և հասկանում եմ այն կնոջը. լաւ, լաւ, էլ այդ բանի մասին չեմ խօսի,—ընդհատեց նա իր խօսքը, տհաճութիւն նկատելով Նեխլիւդօվի երեսին,—բայց ես հասկանում եմ նաև այն, որ, տեսնելով այն տանջանքները, այն սարսափները, որոնց ենթարկուում են մարդիկ բանտերում,—ասում էր Mariette-ը, միմիայն մի բան ցանկանալով, այն է՝ գրաւել Նեխլիւդօվին, իր կանացի բնազդով գուշակելով այն ամենը, ինչ որ կարեւոր և թանգ էր նրա համար,—դուք ուզում էք օգնել նրանց, որոնք այդպէս սարսափելի կերպով տանջւում են մարդկանց ձեռքից, նրանց անտարբերութիւնից, նրանց անդթութիւնից... Ես հասկանում եմ, թէ ինչպէս մարդ կարող է իր կեանքը նուիրել

այդ բանին, և ինքս էլ կը նուիրէի։ Բայց ամեն մարդ իր ճակատագիրն ունի...

—Մի՞թէ դուք դժգոհ էք ձեր ճակատագրից։

—Ե՞ս,—հարցրեց նա, կարծէք ապշած այն բանից, որ մարդիկ կարողանում են այդպիսի հարց տալ իրան։—Ես պէտք է գոհ լինեմ իմ ճակատագրից,—և գոհ եմ։ Բայց կայ մի ներքին ցաւ, որ զարթնում է...

—Եւ չը պէտք է թողնել, որ նա քնի, պէտք է հաւատալ այդ ներքին ձայնին,—ասաց Նեխլիւդօվը, բոլորովին ենթարկուելով նրա խարէութեանը։

Յետոյ չատ անգամ Նեխլիւդօվը ամօթ էր զգում, յիշելով նրա հետ ունեցած իր այդ խօսակցութիւնը, յիշելով նրա ոչ այնքան սուտ սրբան իրան համակերպած խօսքերը և այն իր թէ խանդաղատանքի արտայայտութիւն կրող դէմքը, որով նա ականջ էր դնում իրան, երբ ինքը պատմում էր նրան բանտում տիրող սարսափների և գիւղից իր ստացած տպաւորութիւնների մասին։

Երբ կոմսուհին վերադարձաւ, նրանք խօսում էին ոչ միայն իրր հին բարեկամներ, այլ և իրր բացառիկ բարեկամներ, որոնք երկուսով միայն՝ անհասկացող ամբոխի մէջ հասկանում էին միմեանց։

Նրանք խօսում էին զօրեղների անարդարութեան, թշուառների տառապանքների, ժողովրդի աղքատութեան մասին, բայց իրօք նրանց աչքերը, միմեանց նայելով, ամբողջ խօսակցութեան միջոցին անզգալ հարցնում էին իրարից՝ «կարող ես արդեօք սիրել ինձ» ու պատասխանում էին՝ «կարող եմ», և սեռական զգացմունքը, հազար ու մի անապատելի ու ծիծաղելի ձևեր ընդունելով, քաշում էր նրանց դէպի իրար։

Գնալուց՝ Mariette-ը ասաց Նեխլիւդօվին, որ ինքը միշտ պատրաստ է ծառայել նրան ինչով կարող է, ու խնդրեց, որ միւս երեկոյ, թէկուզ մի րոպէով, անպատճառ գնայ նրա օթեակը, որովհետև խօսելիք ունի հետը մի կարեւոր բանի մասին։

—Բայց այդ, ով դիտի, երբ կարող եմ նորից ձեզ տեսնել,—աւելացրեց նա, հոգոց քաշելով, ու սկսեց զգուշութեամբ հագնել ձեռնոցը մատանիքներով ծածկուած ձեռքի վրայ։—Դէ, խօսք տուէք, որ կը գաք։

Նեխլիւդօվը խոստացաւ։

Այդ գիշեր, երբ Նեխլիւդօվը, իր սենեակում մենակ մնալով, անկողին մտաւ ու ճրագը հանգցրեց, երկար ժամանակ քունը չը տարաւ։ Երբ նա յիշեց Մասլովային, սենեակի վճիռը և այն, որ ինքը այնուամենայնիւ վճռել է դնալ նրա յետևից ու

հրաժարուել է հողատիրութեան իրաւունքից, յանկարծ, իբր պատասխան այդ հարցերին, նրա երեւակայութեան մէջ զարթնեց Mariette-ի դէմքը, նրա հառաչը և հայեացքը, երբ նա ասաց՝ «երբ կարող եմ ձեզ նորից տեսնել» և նրա ժպիտը՝ այնպէս պարզ կերպով, կարծես թէ աչքի առջևը լինէր այդ բոպէին, և երեւակայելով այդ՝ նա ինքն էլ ժպտաց։ «Աւրևօք լաւ կ'անեմ, եթէ Սիբիր գնամ։ Լաւ կ'անեմ, եթէ ինքս ինձ զրկեմ հարստութիւնից», հարցրեց նա մտքում։

Եւ անորոշ պատասխաններ ստացուելին այդ հարցերին այդ լուսաւոր պետերբուրգեան գիշերը, որ նշմարւում էր ոչ քիչ ծածկուած վարագոյրի միջով։ Սմին ինչ խառնաչփոթուել էր նրա գլխում։ Նա զարթեցնում էր իր մէջ առաջուան արամադրութիւնը և մտաբերում էր իր մտքերի առաջուան ընթացքը, բայց այդ մտքերը այլ ևս չունէին իրանց նախկին համոզիչ ոյժը։

«Իսկ եթէ յանկարծ դուրս գայ, որ այդ բոլորը գլխից զօռ եմ առել և չը կարողանամ այդպէս ապրել ու ղղջամ, որ լաւ եմ վարուել», ասաց նա ինքն իրան և, անկարող լինելով պատասխանել այդ հարցերին, նա այնպիսի թախիծ ու յուսահատութիւն զգաց, ինչպէս վաղուց չէր զգացել, ու քննց այնպիսի ծանր քնով, ինչպէս մի ժամանակ քնում էր թղթում մնծ գումարներ տարուելուց յետոյ։

XXV

Երբ Նեխլիւդովը զարթնեց միւս առաւօտ, առաջին բանը, որ նա զգաց, այն էր, թէ ինքը մի անպիտան բան է արել նախընթաց օրը։

Նա սկսեց մտաբերել,—անպիտան բան չէր եղել, ոչինչ վատ բան չէր արել նա, բայց վատ բաներ էր մտածել, մտածել էր, թէ իր այժմեան դիտաւորութիւնները՝ Կատիւշայի հետ պահուելու և հողը գիւղացիներին տալու վերաբերմամբ՝ անիրագործելի երազներ են, թէ ինքը չի կարողանայ դիմանալ այդ կեանքին, թէ այդ բոլորը արհեստական, անբնական բաներ են և թէ ինքը պէտք է ապրի այնպէս, ինչպես ապրում էր առաջ։

Վատ արարմունք չը կար, բայց կար այն բանը, որ չատ աւելի վատ է, քան վատ արարմունքը,—կային այն մտքերը, որ բանից ծագում են բոլոր վատ արարմունքները։ Վատ արարմունքը կարելի է չը կրկնել և ղղջալ վատ վարուած լինելու համար, մինչդեռ վատ մտքերը յառաջ են բերում բոլոր վատ արարմունքները։

Վատ արարմունքը միմիայն ճանապարհ է հարթում վատ արարմունքի համար, մինչդեռ վատ մտքերը անդիմադրելի կերպով մղում են մարդուս այդ ճանապարհով։

Առաւօտեան կրկնելով իր երեւակայութեան մէջ երէկուան մտքերը, Նեխլիւդովը զարմանում էր, թէ ինչպէս կարող էր ինքը նոյն իսկ մի րոպէ հաւատալ նրանց։ Ինչքան էլ նոր ու դժուար լինէր այն, ինչ որ նա մտադիր էր անել, նա գիտէր սակայն, որ այդ այժմ միակ հնարաւոր կեանքն էր նրա համար, և ինչքան էլ սովորական ու թեթև բան լինէր վերադառնալ կենցաղավարութեան նախկին եղանակին, նա գիտէր, որ իր համար մահ է այդ։ Երէկուան գայթակղութիւնը այժմ թւում էր նրան այնպիսի մի բան, ինչպէս լինում է, երբ մարդ քնով է անցնում և զարթնելիս ուզում է, եթէ չը քնել, գոնէ պառկած մնալ, հնչտանալ անկողնում, թէպետև գիտի, որ ժամանակ է վեր կենալ առաջիկայ կարևոր և բերկրալից գործի համար։

Այդ օրը, որ Պետերբուրգում անցրած վերջին օրն էր, նա առաւօտից գնաց Վասիլիևսկիյ կղզին Շուստովայի մօտ։

Շուստովայի բնակարանը երկրորդ յարկումն էր։ Բակապանը տան յետևի մուտքը ցոյց տուեց Նեխլիւդովին, որ ուղիղ ու դիք սանդուխով բարձրանալով, մտաւ ուղղակի տաք խոհանոցը, ուր կերակուրների թանձր հոտ էր կանգնած։ Մի հասակն առած կին, քշտած թևերով, գոգնոցով ու ակնոցներով, կանգնած էր վառարանի մօտ ու խառնում էր կերակուրը չոգիակալած կաթսայում։

—Ո՞ւմն էք ուզում,—խիստ կերպով հարցրեց նա, ակնոցների վրայովը նայելով Նեխլիւդովին։

Հէնց որ Նեխլիւդովը իր անունը ասաց, կնոջ դէմքը իսկոյն վախուորած և ուրախ արտայայտութիւն ստացաւ։

—Ախ, դուք էք, իշխան,—բացականչեց նա, գոգնոցով սրբելով ձեռքները։—Ինչու՞ էք յետևի սանդուխով եկել։ Մեր տան բարերարն էք դուք։ Ես նրա մայրն եմ։ Մեր փրկողն էք դուք,—ասում էր նա, բռնելով ու աշխատելով համբուրել Նեխլիւդովի ձեռքը։—Երէկ եկայ ձեզ մօտ։ Ձայրս չատ խնդրեց ինձ։ Նա այստեղ է։ Եկէք այստեղ, այստեղ իմ յետևից,—ասում էր Շուստովայի մայրը, առաջնորդելով Նեխլիւդովին նեղ դռնով ու մութ միջանցքով և ճանապարհին ուղղելով երբեմն քշտած չորը, երբեմն մաղերը։—Ձրօջս ազգականները Կօրնիլովա է... երևի լսած կը լինէք,—չչունչով աւելացրեց նա, կանգ առնելով դռան առաջ։—Նա էլ խառնուած էր։ Շատ խելօք կին է։

Բանալով միջանցքի կողմի դուռը, Շուստովայի մայրը

Նեխլի-դօվին տարաւ մի փոքրիկ սենեակ, ուր մի փոքրիկ բազմոցի վրայ սեղանի առջևը նստած էր նրա կարճահասակ ու լիքը-լիքը աղջիկը չերտաւոր չթէ չորով և չիկագոյն ու գանգուր մազերով, որոնք չրջապատում էին նրա կլոր ու սաստիկ գունատ դէմքը, որ չատ նման էր մօր դէմքին։ Նրա գիմացը, բազկաթոռում երկու տակ ծալուած, նստած էր մի երիտասարդ՝ ռուսական սաղգործ օձիքաւոր վերնաչապկով և սև ու փոքրիկ բեխերով ու մօրուքով։ Նրանք երկուսն էլ, ակներևաբար, այնքան զբաւուած էին խօսակցութեամբ, որ չատ նայեցին միայն այն ժամանակ, երբ Նեխլի-դօվը արդէն ներս էր մտել դահլիճը։

—Լիդա, իշխան Նեխլիւդօվն է, այն մարդը...

Գունատ օրիորդը չղաչնաբար վեր թռաւ, ուղղելով ականջի յետևից դուրս պրծած մազերի խոպոպը, և վախտաւրած դէմքով յառեց իր մեծ ու մոխրագոյն աչքերը ներս մտնողի վրայ։

—Դուք էք ուրեմն այն սարսափելի կինը, որի մասին խնդրել էր Վերա Եֆրեմօվնան,—ասաց Նեխլիւդօվը, ժպտալով ու ձեռքը պարզելով դէպի նա։

—Այո, ես եմ,—ասաց Լիդիան և ժպտաց բարի, մանկական ժպիտով, լայն բանալով բերանը ու ցոյց տալով գեղեցիկ առաջնեների չարքը։—Մօրաքոյրս էր չատ ուզում ձեզ տեսնել։ Մօրքոյր,—ձայն տուեց նա քաղցր, քնքոյշ ձայնով, դառնալով դէպի դուռը։

—Վերա Եֆրեմօվնան չատ վչտացած էր ձեր ձերբակալման պատճառով,—ասաց Նեխլիւդօվը։

—Նստէք այստեղ, չէ, աւելի լաւ է այստեղ,—ասում էր Լիդիան, ցոյց տալով կոտրտուած փափուկ բազկաթոռը, որի վրայից մի րոպէ առաջ վեր էր կացել երիտասարդը։—Չօրաբաբրոջս արդէն է, Զախարօվ,—ասաց նա, նկատելով այն հայեացքը, որով Նեխլիւդօվը գննում էր երիտասարդին։

Երիտասարդը նոյնպիսի բարևոգի ժպիտով, ինչպէս Լիդիան, բարևեց հիւրին և, երբ Նեխլիւդօվը նստեց նրա տեղը, վերցրեց պատուհանի մօտի աթոռը ու նստեց նրա կողքին։ Միւս սենեակից դուրս եկաւ մի չիկահեր, տասնհինգ, տասնըվեց տարեկան գեղնագիսա ու լուռ գնաց նստեց պատուհանի մէջ։

—Վերա Եֆրեմօվնան չատ սերտ բարեկամ է մօրաքրոջս հետ, իսկ ես համարեա թէ չեմ ճանաչում նրան,—ասաց Լիդիան։

Այդ ժամանակ կողքի սենեակից դուրս եկաւ մի կին չատ դուրեկան ու խելօք դէմքով և սպիտակ բամիոնով, որի վրայից կապած էր կաչուէ գօտի։

—Բարև, չատ չնորհակալ ենք, որ եկաք,—սկսեց նա, հէնց որ նստեց բազմոցի վրայ Լիդիայի կողքին։—Հը, ինչպէս է Վերօչկան։ Տեսել էք նրան, չէ՞, ի՞նչպէս է տանում իր դրութիւնը։

—Չի դանդաղում իր դրութիւնից,—ասաց Նեխլիւդօվը,—ասում է, որ ինքնագոհացումը օլիմպիական է։

—Այդպէս է Վերօչկան,—ժպտալով ու գլուխը թափ տալով ասաց մօրաքոյրը։—Մարդ պէտք է ճանաչի նրան. հրաչալի անձնաւորութիւն է։ Ամեն ինչ ուրիշների համար և ոչինչ իր համար։

—Այո. նա ոչինչ չէր ուզում իր համար, այլ միայն հոգս էր տանում ձեր քրոջ աղջկայ մասին։ Նրան տանջում էր մանաւանդ այն բանը, որ ձեր քրոջ աղջկան, նրա ասելով, առանց որ և է պատճառի են ձերբակալել։

—Ճիշտ է,—ասաց մօրաքոյրը,—սարսափելի բան է։ Իսկապէս իմ պատճառովն է վնասուել խեղճը։

—Չէ, մօրքոյր,—ասաց Լիդիան։—Առանց ձեզ էլ ես այն թղթերը կը վերցնէի պահելու։

—Կը ներես, այդ ես քեզնից լաւ կարող եմ իմանալ,—առարկեց մօրաքոյրը։—Գիտէք,—չարունակեց նա, դիմելով Նեխլիւդօվին,—ամեն ինչ նրանից յառաջացաւ, որ մի անձնաւորութիւն խնդրեց ինձնից առ ժամանակ պահել իր թղթերը, իսկ ես, բնակարան չունենալով, տուեցի սրան։ Նոյն գիշերը խուզարկեցին սրանց բնակարանը, գտան թղթերը, սրան էլ ձերբակալեցին և ահա մինչև այժմ պահում էին, պահանջելով, որ ասի՝ թէ ումից էր ստացել այդ թղթերը։

—Ես էլ չասացի,—արագ-արագ ասաց Լիդիան, ջղաչնաբար չիակելով խոպոպը, որ, սակայն, ամենևին չէր խանգարում նրան։

—Ո՞վ է ասում, թէ ասել ես,—առարկեց մօրաքոյրը։

—Ես ամենևին մեղաւոր չեմ այն բանում, որ Միտինին ձերբակալել են,—ասաց Լիդիան, կատմրելով ու անհանգիստ կերպով նայելով իր չուրջը։

—Ես քեզ չը խնդրեցի, որ այդ բանի մասին չը խօսես,—ասաց մայրը։

—Ինչու՞ չը պէտք է խօսեմ. չէ, ես ուզում եմ պատմել,—ասաց Լիդիան, առանց այլ ևս ժպտալու, այլ կատմրելով և մազերի խոպոպը ոչ թէ չիակելով, այլ ոլորելով մատի չուրջը ու չարունակ չորս կողմը նայելով։

—Մեծ է ինչ եղաւ երէկ, երբ որ սկսեցիր խօսել այդ բանի մասին։

—Ոչինչ էլ չեղաւ... Թող, խնդրեմ, մայրիկ։ Ես ամենևին չասացի, այլ միայն լռեցի։ Երբ որ նա ինձ երկու անգամ հարց ու փորձ արեց մօրքոյրի և Միխինի մասին, ես ոչինչ չասացի և յայտնեցի, որ ոչ մի պատասխան չեմ տայ նրա հարցերին։ Այն ժամանակ այդ հարց ու փորձ անողը, Պետրօվը սկսեց համոզել ինձ. «Այն բոլորը, ասում է, ինչ որ ասէք ինձ, ոչ ոքի չի կարող վնասել, այլ ընդհակառակը... եթէ ասէք, գրանով կ'ազատէք անմեղներին»։ Բայց ես, այնուամենայնիւ, ասացի, որ ոչինչ չեմ ասի։ Այն ժամանակ նա ասաց, թէ՝ «վաւ, ոչինչ մի ասէք, միայն թէ մի հերքէք իմ ասածները»։ Եւ սկսեց զանազան անունններ տալ ու Միխինի անունն էլ տուեց։

—Ինչ ասում են՝ մի խօսիլ այդ բանի մասին,—ասաց մօրքոյրը։

—Խնդրեմ, չը խանգարէք, մօրքոյր...—և նա անդադար ձգում էր իր խոսքը ու չարունակ նայում չորս կողմը,—և յանկարծ, երևակայեցէք, միւս օրը իմանում եմ,—պատը թրխթխկացնելով իմաց տուին ինձ,—թէ Միխինին բռնել են։ Ուրեմն ես եմ մատնել նրան, մտածեցի ես։ Եւ այնպէս սկսեց տանջել ինձ այդ բանը, այնպէս սկսեց տանջել, որ քիչ էր մնում գժուէի։

—Իսկ դուրս եկաւ, որ ամենևին քո պատճառով չէին բռնել նրան,—ասաց մօրաքոյրը։

—Բայց ես ինչ գիտէի։ Ե՛ս եմ մատնել նրան, մտածում էի ես։ Գնում գալիս եմ մի պատից միւսը ու չեմ կարողանում չը մտածել։ Մտածում եմ,—ես եմ մատնել։ Պառկում եմ, վերմակը քաշում եմ երեսիս ու լսում եմ—մէկը չչնջում է ականջիս՝ «մատնել ես, մատնել... Միխինին մատնել ես»։ Գիտեմ, որ զառանցանք է այդ, բայց չեմ կարողանում այնպէս անել, որ չը լսեմ։ Ուզում եմ քնել—չեմ կարողանում։ Ուզում եմ չը մտածել, նոյնպէս չեմ կարողանում։ Այդ էր ամենաասարսափելին,—ասում էր Լիդիան, աւելի ու աւելի յուզուելով, խոսոսքը մատի վրայ փաթաթելով ու նորից յետ տալով մատի վրայից ու չարունակ չորս կողմը նայելով։

—Հանգստացիր, հոգիս,—կրկնեց մայրը, ձեռքը դնելով նրա ուսի վրայ։

Բայց Լիդիան չէր կարողանում այլ ևս դադար առնել։

—Նրանով է այդ սարսափելի...—սկսեց նա մի նոր նախադասութիւն, բայց կէսում հեծկլտաց և բազմոցից վեր թռչելով ու բազկաթոռին դէմ առնելով, դուրս վազեց սենեակից։ Մայրը գնաց նրա յետևից, բայց չուտով վերադարձաւ ու

յայտնեց, որ Լիդօչկան այլ ևս դուրս չի գայ, որովհետև ջղերը շատ վատ են։

—Այդպէս անմեղ տեղը փչացրել են այդ ջահել կեանքը,—ասաց մօրաքոյրը։—Սիրտս կտրտուում է, երբ մտածում եմ, որ ես եմ եղել այդ բանի ակամայ պատճառը։

—Աստուծով գիւղական օդում կը լաւանայ,—ասաց մայրը,—կ'ուղարկենք հօր մօտ։

—Դուք որ չը լինէիք, բոլորովին կը կորչէր,—ասաց մօրաքոյրը Նեխլիւդօվին։—Շատ չնորհակալ ենք ձեզնից։ Իսկ ես ձեզ ուզում էի տեսնել նրա համար, որ խնդրելու եմ մի նամակ յանձնել Վերա Եֆրեմօվնային,—ասաց նա, նամակը հանելով գրպանից։—Ծրարը փակուած չէ. կարող էք կարդալ և յետոյ պատռել կամ յանձնել, նայելով թէ որը աւելի համապատասխան կը լինի ձեր համոզմունքներին,—ասաց նա։—Նամակում ոչինչ այնպիսի բան չը կայ, որ կասկածի տակ դնէր ձեզ։

Նեխլիւդօվը վերցրեց նամակը ու խոստանալով յանձնել Վերա Եֆրեմօվնային, վերկացաւ ու հրաժեշտ տալով դուրս եկաւ փողոցը։

Նամակը, առանց կարդալու, փակեց ու վճռեց յանձնել ըստ պատկանելոյն։

XXVI

Նեխլիւդօվը հէնց նոյն երեկոյ ճանապարհ ի'ընկնէր, բայց Mariette-ին խոստացել էր գնալ թատրոն և թէև գիտէր, որ չը պէտք է գնալ, բայց և այնպէս, ինքն իր առաջ կեղծելով, գնաց, իրան պարտաւորուած համարելով տուած խոստումով։ Նա ուզում էր մի անգամ էլ տեսնել Mariette-ին և բացի այդ, ինչպէս թւում էր նրան, վերջին անգամ փորձել, թէ ինչպէս է զգում ինքն իրան այդ միջավայրում, որ առաջ այնքան մօտիկ, այնքան հարազատ էր իրան և այժմ այնքան խորթ։

«Կարող եմ արդեօք դիմադրել այդ հրապոյրներին,—մտածում էր նա ոչ բոլորովին անկեղծօրէն։—Փորձեմ վերջին անգամը»։

Ֆրակը հագնելով, նա գնաց թատրոն, ուր հասաւ երբ ներկայացնում էին երկրորդ գործողութիւնը յաւէրժական «Dame aux camélias»-ի («Կամելիազարդ տիկին»), որի մէջ մի նորեկ դերասանուհի ցոյց էր տալիս մի նոր ձևով, թէ ինչպէս են մեռնում թոքախտաւոր կանայք։

Թատրոնը լիքն էր, և սպասաւորները, պատկառանքով

դէպի հարցնողի անձնաւորութիւնը, իսկոյն և եթ ցոյց տուին Նեխլիւդովին Mariette-ի բէնիւարտ օթեակը։

Միջանգքում կանգնած էր Mariette-ի համազգեստաւոր սպասաւորը, որ գլուխ տուեց Նեխլիւդովին, իբր ծանօթ անձնաւորութեան, և բաց արեց օթեակի դուռը։

Հակադիր չարքերով ձգուող բոլոր օթեակներում նստած ու կանգնած կերպարանքները, և պարտէրում նստածների մօտակայ մէջքերը, և ալևոր, կիսաալևոր, կունտ ու ճաղատ և օծուած ու գանգուր դրած գլուխները,—բոլոր, բոլոր հանդիսատեսները կենտրոնացած դիտում էին զուգուած, զարդարուած, մետաքսում ու ժանեակներում կորած նիհար ու ոսկրոտ դերասանուհուն, որ բեմի վրայ կոտրտւում էր ու անբնական ձայնով ինչ որ մինախօսութիւն արտասանում։ Մէկը «սը՛սս» արեց, երբ դուռը բացուեց, և սառը ու տաք օդի երկու հոսանքներ անցան քսուելով Նեխլիւդովի դէմքին։

Օթեակում նստած էին Mariette-ը ու մի անծանօթ կին կարմիր ուսնոցով և ահագին, ծանրագոգոթ վարսով և երկու տղամարդ, մէկը՝ Mariette-ի գեղեցիկ ու բարձրահասակ ամուսինը, որ գիներալ էր՝ խիստ, անթափանցելի, կորագիծ դէմքով և պինուորական, բամբակով ու կտաւով լցրած, չինովի բարձր կուրծքով, և մի չէկ ու ճաղատ պարոն՝ չքեղ ծնօտամիրուքներով և նրանց արանքին ածիլուած փոսորակաւոր կզակով։ Mariette-ը, գողտրիկ, նուրբ, չնորհալի, դէկոլտէ, իր կոբովի ու մկանուտ ուսերով, որոնք թեք իջնում էին վղից, որի՝ ուսերի հետ միանալու կէտում սկսին էր տալիս մի խալ, իսկոյն յետ նայեց և, հովհարով ցոյց տալով Նեխլիւդովին իր յետևի ազատ աթոռը, ժպտաց քաղցր, չնորհակալ ու, ինչպէս նրան թուաց, խորհրդաւոր ժպիտով։ Նրա ամուսինը հանդիսատեսի կերպով,—ինչպէս նա անում էր ամէն բան,—նայեց Նեխլիւդովին ու գլուխ տուեց։ Այն հայեացքում, որ նա փոխանակեց իր կնոջ հետ, պարզ երևում էր սիրուն կնոջ սեփականատէր, իշխան։

Երբ որ մինախօսութիւնը վերջացաւ, թատրոնը ղղրդաց ծափահարութիւններից։ Mariette-ը վեր կացաւ ու, պահելով խշխշացող մետաքսէ ներքնազգեստը, անցաւ օթեակի յետևի մասը ու ծանօթացրեց ամուսնուն Նեխլիւդովի հետ։ Գիներալը չարունակ ժպտում էր աչքերով և, ասելով, որ չատ ուրախ է Նեխլիւդովի հետ ծանօթանալուն, լռեց ու մնաց այդպէս հանդիսատ ու անթափանցելի։

—Ես այսօր պէտք է գնայի, բայց ձեզ խոստացել էի,—ասաց Նեխլիւդովը, դիմելով Mariette-ին։

—Եթէ ինձ չէք ուզում տեսնել, գոնէ կը տեսնէք մի աքան-

չելի դերասանուհու,—պատասխանելով նրա խօսքերի իմաստին, ասաց Mariette-ը։—Այնպէս չէ, նա չատ լաւ խաղաց վերջին տեսարանը,—դիմեց նա ամուսնուն։

Ամուսինը գլխով արեց։

—Այդ չի կարող յուզել ինձ,—ասաց Նեխլիւդովը։—Այսօր ես այնքան իսկական թշուառութիւն տեսայ, որ...

—Դէ նստէք, պատմէք։

Ամուսինը լսում էր և աչքերով հետազոտէ աւելի ու աւելի հետաքրքրական ժպտում։

—Ես այսօր գնացել էի այն կնոջ մօտ, որին ազատ թողնելին այնքան երկար ժամանակ պահելուց յետոյ, բոլորովին խորտակուած մարդ է նա այժմ։

—Այդ այն կինն է, որի մասին ես քեզ ասացի,—ասաց Mariette-ը ամուսնուն։

—Այո, ես չատ ուրախ էի, որ կարելի եղաւ նրան ազատել,—հանդիսատ կերպով ասաց ամուսինը, գլխով անելով և արդէն, ինչպէս թուաց Նեխլիւդովին, բոլորովին հետաքրքրուելով բեխերի տակին։—Ես կ'երթամ ծխելու։

Նեխլիւդովը նստած սպասում էր, որ Mariette-ը ասի նրան այն իսկ որ կարևոր բանը, որ ասելու էր իրան, բայց նա ոչինչ չասաց նրան և նոյն իսկ դիտաւորութիւն ցոյց չը տուեց ասելու, այլ կատակներ էր անում ու խօսում ներկայացուող պիէսի մասին, որ, նրա կարծիքով, պէտք է առանձնապէս յուզէր Նեխլիւդովին։

Նեխլիւդովը տեսնում էր, որ Mariette-ը իսկապէս ոչինչ չունէր նրան ասելու, այլ ուզում էր միայն իրան ցոյց տալ նրան իր երևոյեան զգեստաւորութեան ամբողջ հրապոյրով, իր ուսերով ու խալով, և Նեխլիւդովին միանգամայն և' ախորժելի, և' զզուելի էր այդ բանը։

Թէպէտ, ինչպէս և առաջ, այդ բոլորը պատած էր Նեխլիւդովի համար հրապոյրի քօղով, բայց այժմ նա տեսնում էր, թէ ինչ կայ քօղի տակ։ Նայելով Mariette-ին, նա հաճոյք էր զգում, բայց գիտէր, որ նա մի սոսկալ կին է, որ ապրում է իր՝ կարիէրա անող ամուսնու հետ, և որ այն բոլորը, ինչ որ նա ասում էր երէկ, սուտ էր, և որ նա ուզում է—Նեխլիւդովը չը գիտէր, թէ ինչու, ինչպէս նա ինքն էլ չը գիտէր—սոսկալ նրան սիրել իրան։ Եւ այդ և' գրաւիչ էր Նեխլիւդովի համար, և' զզուելի։ Նա մի քանի անգամ պատրաստւում էր գնալ, վերցնում էր գլխարկը, սակայն էլի մնում էր։ Բայց վերջապէս, երբ ամուսինը, ծխախոտի հոտը հաստ բեխերի վրայ, վերադարձաւ օթեակը և հովանաւորիչ ու արհամարհական կերպով

նայեց Նեխլիւդովի վրայ, կարծես թէ չը ճանաչելով նրան, Նեխլիւդովը չը թողնելով, որ դուռը փակուի, դուրս եկաւ միջանցքը ու, գտնելով վերարկուն, դուրս եկաւ թատրոնից։

Նեվսկից փողոցով տուն վերադառնալիս, նա իր առջև ամբամայ նկատեց մի բարձրահասակ, չատ լաւ կազմուած և աչք ծակելու չափ զուգուած, զարդարուած կնոջ։ Բոլոր հանդիպողները և առաջ անցնողները շուռ էին գալիս ու նայում այդ կնոջ։ Նեխլիւդովը նրանից արագ էր գնում և նոյնպէս ակամայ նայեց նրա դէմքին։ Դէմքը, որ երևի քաուած էր, գեղեցիկ էր, և կինը ժպտաց Նեխլիւդովին, փայլեցնելով աչքերը։ Եւ տարօրինակ բան—Նեխլիւդովը իսկոյն նեթ յիշեց Mariette-ին, որովհետև զգաց միևնոյն զգուանքախառն հաճոյքը, ինչ որ զգում էր թատրոնում։ Շտապով նրանից առաջ անցնելով, Նեխլիւդովը, ինքն իր վրայ բարկացած, ծռեց դէպի Մօրսկայա փողոցը և, դուրս գալով սալափի վրայ, սկսեց, զարմացնելով փողոցային ոստիկանին, յետ ու առաջ գնալ-գալ այնտեղ։

«Նա էլ այդպէս ժպտաց ինձ, երբ մտայ օթեակը,—մտածում էր Նեխլիւդովը,—և միևնոյն իմաստն ունէին այն ժպիտն ու այս ժպիտը։ Տարբերութիւնը միայն նրանումն է, որ սա պարզ և ուղիղ ասում է. «եթէ պէտք եմ քեզ—վերցրու։ Եթէ պէտք չեմ—անց կաց, գնա»։ Իսկ նա այնպէս է ձևացնում, թէ ինքը այդ բանի մասին չի մտածում, այլ ապրում է ինչ որ գերագոյն, նուրբ զգացումներով, մինչդեռ հիմքը միևնոյնն է։ Սա գոնէ չիտակ է, մինչդեռ նա սուտ է։ Բացի այդ, սրան կարիքն է զգել այդ դրութեան մէջ, իսկ նա խաղում է, զուարճանում այդ գեղեցիկ, զգուելի ու սարսափելի կրքով։ Այս փողոցային կինը—հոտած, կեղտոտ ջուր է, որ առաջարկւում է այն մարդկանց, որոնց մէջ ծարաւը զգուանքից զօրեղ է, իսկ նա, թատրոնինը՝ թոյն է, որ աննկատելի կերպով վարակում է ամեն բան, ինչի մէջ որ ընկնում է»։ Նեխլիւդովը մտաբերեց իր սիրային կապը ազնուականուհեան պարագլխի կնոջ հետ, և ամօթալի յիշողութիւններ խուռն կերպով զարթնեցին նրա մէջ։ «Զգուելի է գազանի անասնութիւնը մարդուս մէջ,—մտածում էր նա,—բայց երբ նա դուստ ձևով է, դու քո հոգևոր կեանքի բարձրութիւնից տեսնում ես ու արհամարհում նրան և, յաղթւում ես թէ յաղթում, միևնոյնն է՝ մնում ես այն մարդը, ինչ որ էիր առաջ. բայց երբ այդ նոյն անասունը ծածկւում է կարծեցեալ գեղեցկագիտական, բանաստեղծական քողով և երկրպագութիւն է պահանջում քեզնից, այն ժամանակ դու, պաշտելով անասնականը, ոտով-գլխով թաղւում ես նրա

մէջ և այլևս չես կարողանում տարբերել չարն ու բարին։ Այն ժամանակ սարսափելի է այդ»։

Եւ ինչպէս որ այդ գիշեր երկրիս երեսին չը կար անդորրացնող, հանգիստ տուող մթութիւն *), այլ կար անորոշ, անզուարթ, անբնական լոյս առանց իր աղբիւրի, այնպէս էլ Նեխլիւդովի հոգու մէջ չը կար այլևս հանգիստ տուող մթութիւն, անգիտութիւն։ Ամեն ինչ պարզ էր նրա համար։ Պարզ էր, որ այն բոլորը, ինչ որ կարևոր ու լաւ է համարւում, չնչին ու զզուելի բան է, և որ այդ բոլոր փայլը, այդ բոլոր ճոխութիւնը ծածկում է իր տակ հինաւուրց, ամենքի համար սովորական դարձած յանցանքներ, որոնք ոչ միայն չեն պատժւում, այլ սիգապանծ ի ցոյց են դրւում, զարդարուած այն բոլոր հրապոյրով, որ ընդունակ են հնարել մարդիկ։

Նեխլիւդովը ուզում էր մոռանալ այդ, չը տեսնել այդ, բայց արդէն չէր կարողանում չը տեսնել։ Թէպէտ և նա չէր տեսնում այն լոյսի աղբիւրը, որ լուսաւորում էր նրա առաջ այդ բոլորը, ինչպէս չէր տեսնում Պետերբուրգի վրայ սփռուած լոյսի աղբիւրը, և թէպէտ այդ լոյսը անորոշ, անզուարթ ու անբնական էր թւում նրան, նա չէր կարող չը տեսնել այն, ինչ որ տեսանելի էր դառնում այդ լոյսով, և նա ուրախութիւն ու այլայլմունք էր զգում միևնոյն ժամանակ։

XXVII

Մոսկուա հասնելով, Նեխլիւդովը նախ և առաջ գնաց բանտի հիւանդանոցը Մասլովային յայտնելու այն տխուր լուրը, որ սենատը հաստատել էր դատարանի վճիռը և որ պէտք էր ուրիշն պատրաստուել Սիբիր գնալու։

Նա քիչ յոյս ունէր փաստաբանի գրած խնդիրքի վրայ, որ տալու էին Բարձրագոյն անունով և որ նա այժմ տանում էր բանտը Մասլովային ստորագրել տալու համար։ Սակայն, որքան էլ տարօրինակ թւում այդ, այժմ նա չէր էլ ուզում, որ այդ խնդիրքը յաջողութիւն ունենայ։ Նա արդէն ընտելացել էր Սիբիր գնալու և աքսորեալների ու տաժանապարտների մէջ ապրելու մտքին, և նրա համար դժուար էր երևակայել, թէ ինչպէս պէտք է ինքն ու Մասլովան ապրէին, եթէ նրան արձակուրդ տային։

*) Պետերբուրգում, ինչպէս բևեռին բաւական մօտ գտնուող տեղում, ձերեկները երկարանալով այնտեղ են հասնում, որ գրեթէ գիշեր չի լինում կամ լինում են, ինչպէս ասում են, „սպիտակ գիշերներ“։

Ե. Թ.

Հիւանդանոցի դռնապանը ճանաչեց Նեխլիւդովին ու իսկոյն և եթ հաղորդեց, որ Մասլովան այլ ևս իրանց մօտ չէ։

—Հապա ո՞րտեղ է։

—Դարձեալ բանտումը։

—Ինչո՞ւ են նրան նորից տեղափոխել այնտեղ,—հարցրեց Նեխլիւդովը։

—Չգիտեմ, ձերդ վեհամեծարելութիւն, թէ ինչ տեսակ մարդիկ են դրանք,—ասաց դռնապանը արհամարհական կերպով ժպտալով,—սիլի-բիլի էր անում ֆելդշերի հետ։ Գլխաւոր բժիշկն իմացաւ ու յետ ղրկեց բանտը։

Նեխլիւդովը երբէք չէր կարող մտածել, թէ Մասլովան ու նրա հոգեկան դրութիւնը այդքան մօտ են իր սրտին։ Այդ լուրը ուղղակի չմեկնեց նրան։ Նա այնպիսի բան զգաց, ինչպէս այն մարդիկ, որոնք յանկարծ անսպասելի լուր են լսում մի մեծ դժբախտութեան մասին։ Սիրտը կսկծաց։ Առաջին բանը, որ նա զգաց այդ լուրը լսելիս, ամօթի զգացմունք էր։ Ամենից առաջ նա ինքն իրան ծաղրելի թուաց իր բերկրալից հաւատարութեամբ, թէ Մասլովայի հոգեկան դրութիւնը փոխուում էր դէպի լաւը։ Մասլովայի բոլոր ասածները, թէ չի ուզում ընդունել նրա զոհաբերութիւնը, ինչպէս և բոլոր յանդիմանութիւնները ու արցունքները, մտածեց Նեխլիւդովը, ոչ այլ ինչ էին, եթէ ոչ խորամանկութիւններ մի փչացած կնոջ կողմից, որ ուզում էր որքան կարելի էր լաւ օգտուել նրանից։ Նրան թուում էր այժմ, թէ վերջին այցելութեան ժամանակ ինքը նկատել էր նրա մէջ այն անուղղելիութեան նշանները, որ այժմ պարզուում էր վերջնականապէս։ Այդ բոլոր մտքերը արագ-արագ անցան նրա գլխով այն ժամանակ, երբ նա, մեքենայօրէն դնելով գլխարկը, դուրս էր գալիս հիւանդանոցից։

«Բայց ինչ պէտք է անել այժմ,—հարցրեց նա ինքն իրան։—Արդեօք ես կապուած եմ նրա հետ։ Արդեօք նրա այդ վարմունքը ազատութիւն չի տալիս ինձ»։

Բայց հէնց որ նա ինքն իրան տուեց այդ հարցը, իսկոյն և եթ հասկացաւ, որ, ինքն իրան ազատ համարելով ու նրան ձգելով, նա կը պատժի ոչ թէ նրան, ինչպէս ուզում էր, այլ ինքն իրան, և հասկանալով այդ՝ նա սարսափեց։

«Չէ։ Այն, ինչ որ պատահել է, չի կարող փոխել, այլ ընդհակառակը աւելի հաստատուն է դարձնում իմ վճիռը։ Թող նա անի այն, ինչ որ բղխում է նրա հոգեկան դրութիւնից—եթէ սիրտն ուզում է, թող սիլի-բիլի անի ֆելդշերի հետ—այդ իր գործն է... Իսկ իմ գործն է՝ անել այն, ինչ որ պահանջում է ինձնից իմ խիղճը,—ասաց նա ինքն իրան—Իսկ իմ խիղճը պա-

հանջում է, որ ես, մեղքս քաւելու համար, զոհեմ ազատութիւնս, և իմ վճիռը՝ ամուսնանալ նրա հետ թէկուզ առերես ամուսնութեամբ ու գնալ նրա յետևից ուր և ուղարկեն նրան՝ մնում է անփոփոխ»,—ասաց նա չար յամառութեամբ ու, դուրս գալով հիւանդանոցից, վճռական քայլերով դիմեց դէպի բանտի դարպասը։

Դարպասին մօտենալով, նա օրապահին խնդրեց զեկուցանել բանտապետին, որ ինքը ուզում է տեսնել Մասլովային։ Օրապահը ճանաչում էր Նեխլիւդովին և, իբր ծանօթ մարդու, յայտնեց նրան իրանց բանտային կարևոր նորութիւնը,—կապիտանը դուրս էր եկել պաշտօնից, և նրա տեղը նշանակուել էր մի ուրիշ, խիստ բանտապետ։

—Շատ թունդ խստութիւններ է մտցրել բանտում,—ասաց վերակացուն։—Նա այժմ այստեղ է. իսկոյն կը զեկուցանեմ։

Ցիրաւի, բանտապետը բանտումն էր և չուտով դուրս եկաւ իմանալու, թէ ինչ է ուզում Նեխլիւդովը։ Նոր բանտապետը մի չատ դանդաղաշարժ, մռայլ և բարձրահասակ ու ոսկրոտ մարդ էր, դուրս ցցուած այտոսկրներով։

—Տեսակցութիւն թոյլ է տրւում միայն որոշեալ օրերը այցելարանում,—ասաց նա առանց Նեխլիւդովին նայելու։

—Բայց ինձ հարկաւոր է ստորագրել տալ խնդիրք Բարձրագոյն անունով։

—Կարող էք խնդիրքը յանձնել ինձ։

—Ինձ հարկաւոր է անձամբ տեսնել կալանաւորուհուն։ Առաջ ինձ միշտ թոյլ էին տալիս։

—Այդ առաջ էր,—հարևանցօրէն նայելով Նեխլիւդովին, ասաց բանտապետը։

—Ես թոյլտուութիւն ունեմ նահանգապետից,—պնդում էր Նեխլիւդովը, հանելով գրպանի թղթակալը։

—Տուէք տեսնենք,—դարձեալ առանց նայելու Նեխլիւդովի աչքերին ասաց բանտապետը և, երկար, չոր ու սպիտակ մատներով, որոնցից յուրաքանչիւրի վրայ ոսկէ մատանիք կար, վերցնելով նրա պարզած թուղթը, սկսեց դանդաղօրէն կարդալ։

—Համեցէք դրասենեակը,—ասաց նա։

Այս անգամ գրասենեակում ոչ ոք չը կար։ Բանտապետը նստեց սեղանի մօտ ու սկսեց թերթել նրա վրայի թղթերը, անկերևաբար մտադիր լինելով նորից լինել նրանց տեսակցութեանը։ Նեխլիւդովի հարցին, թէ ինքը չի կարող արդեօք տեսնել քաղաքական յանցաւոր Բոգոդուխովային, բանտապետը կարճ կերպով պատասխանեց, որ դա կարելի։ «Քաղաքական յան-

ցաւորների հետ տեսակցութիւն թոյլ չի տրուած, ասայ նա ու նորից խորասուզուեց թղթերի ընթերցման մէջ։ Գրպանուած Բօգդանովսկայայի անունով նամակ ունենալով, Նեխլիւդովը զգում էր իրան այնպիսի մեղանչած մարդու դրութեան մէջ, որի դիտումները յայտնի էին դարձել և ի դերև հանուել։

Երբ որ Մասլովան մտաւ գրասենեակը, բանտապետը գլուխը բարձրացրեց և, առանց նայելու ոչ Մասլովային, ոչ Նեխլիւդովին, ասայ՝ «կարող էք», ու շարունակեց զբաղուել իր թղթերով։

Մասլովան դարձեալ առաջուան պէս էր հագնուած—վրան ապիտակ բաճկոն ու ներքնազգեստ ու գլխին գլխաչոր։ Մօտենալով Նեխլիւդովին ու տեսնելով նրա սառ ու չար դէմքը, նա չառագունուեց, ու մատներով խաղալով բաճկոնի փէշի հետ, աչքերը քաչ քցեց։ Նրա չփոթութիւնը, Նեխլիւդովի աչքում, հաստատում էր հիւանդանոցի դռնապանի ասածը։

Նեխլիւդովը ուզում էր այնպէս վարուել նրա հետ, ինչպէս նախընթաց տեսակցութեան ժամանակ, բայց, իր ցանկութեան հակառակ, չը կարողացաւ ձեռք տալ նրան,—այնքան զզուելի էր թուում այժմ Մասլովան նրան։

—Վատ լուր եմ բերել ձեզ,—ասայ նա անելևէչ ձայնով, առանց նայելու Մասլովային ու առանց ձեռք տալու։—Սենատը մերժեց։

—Ես այդպէս էլ կարծում էի,—ասայ Մասլովան տարօրինակ ձայնով, կարծես խեղդուելով։

Առաջ Նեխլիւդովը կը հարցնէր, թէ ինչու է նա ասում, որ այդպէս էլ կարծում էր, բայց այժմ ոչինչ չը հարցրեց ու միայն նայեց նրա վրայ և տեսաւ, որ աչքերը լիքն էին արցունքով։

Բայց այդ ոչ միայն չը մեղմացրեց նրան, այլ աւելի ևս գրգռեց Մասլովայի դէմ։

Բանտապետը վեր կացաւ ու սկսեց գնալ-գալ սենեակում։

Չը նայելով այն բոլոր զզուանքին, որ Նեխլիւդովը զգում էր այժմ դէպի Մասլովան, այնուամենայնիւ հարկաւոր համարեց իր ցաւակցութիւնը յայտնել սենատի մերժման առիթով։

—Մի յուսահատուէք,—ասայ նա,—այն խնդիրքը, որ տալու ենք Բարձրագոյն անունով, կարող է յաջողութիւն ունենալ, և ես յոյս ունեմ, որ...

—Ես դրա համար չեմ...—ասայ Մասլովան թոյլ ու չիլ աչքերով աղիողորմ կերպով նայելով նրան։

—Ուրիշ ինչ կայ հապա։

—Դուք երևի գնացել էիք հիւանդանոց և ձեզ անչուչա ասել են իմ մասին...

—Ինչ անենք, որ ասել են. այդ ձեր գործն է,—սառը կերպով ասայ Նեխլիւդովը, խուժռելով դէմքը։ Վիրաւորուած ինքնասիրութեան դաժան զգացմունքը, որ արդէն մեղմանալու վրայ էր, նոր ոյժով զարթնեց նրա մէջ, հէնց որ Մասլովան տուեց հիւանդանոցի անունը։ «Ինքը, աշխարհիկ մարդ լինելով, որի հետ պատկուելը բախտաւորութիւն կը համարէին բարձր շրջանի բոլոր օրիորդները, առաջարկել էր ամուսին դառնալ այդ կնոջը, իսկ այդ կինը չէր կարողացել մի քիչ համբերել և սկսել էր սիլի-բիլի անել փէլդշէրի հետ», մտածում էր նա, աչքերով նայելով Մասլովային։

—Ահա ստորագրեցէք այս խնդիրքը,—ասայ նա ու, գրպանիցը մի մեծ ծրար հանելով, դրեց սեղանի վրայ։ Մասլովան գլխաչորի ծայրով սրբեց արտասուքը ու, մօտենալով սեղանին, հարցրեց, թէ որտեղ և ինչ պէտք է գրել։ Նեխլիւդովը ցոյց տուեց, թէ ինչ է գրելու և որտեղ, և նա նստեց սեղանի մօտ, ձախ ձեռքով ուղղելով ալ թևքը։

Նեխլիւդովը կանգնած էր Մասլովայի գլխավերևը ու լուռ նայում էր նրա կռացած մէջքին, որ սեղանին կպած երբեմն-երբեմն ցնցուում էր զսպուած հեկեկանքներից, և նրա հոգու մէջ կռւում էին չարի և բարիի զգացմունքները, վիրաւորուած ինքնասիրութիւնը ու կարեկցութիւնը դէպի տանջուող Մասլովան, և վերջին զգացմունքը յաղթող դուրս եկաւ։

Ո՞րը առաջ տեղի ունեցաւ նրա մէջ,—արդեօք առաջ խղճաց նրան սրտումը ու յետոյ մտաբերեց իր մեղքը, թէ առաջ մտաբերեց ինքն իրան, իր մեղքերը, իր գարշելիութիւնը հէնց այն բանում, ինչում որ մեղադրում էր նրան,—նա չէր յիշում, բայց յանկարծ միաժամանակ նա մեղաւոր զգաց ինքն իրան ու խղճաց նրան։

Խնդիրքը ստորագրելով և թանաքոտած մատը ներքնազգեստով սրբելով, Մասլովան վեր կացաւ ու նայեց նրան։

—Ինչ էլ դուրս գայ այդ խնդիրքից ու ինչ էլ պատահի, ոչինչ չի կարող փոխել իմ վճիռը,—ասայ Նեխլիւդովը։

Այն միտքը, որ ինքը ներում է նրան, ասատկացրեց նրա մէջ կարեկցութիւնը և քնքշութիւնը դէպի Մասլովան, և նա ուզեց մխիթարել նրան։

—Ասածս անպատճառ կ'անեմ։ Ուր էլ ուղարկեն ձեզ, ես ձեզ հետ կը լինեմ։

—Ի զուր,—չտապով ընդհատեց նրա խօսքը Մասլովան ու ամբողջապէս պայծառակերպուեց։

—Միտներդ բերէք, թէ ինչ է հարկաւոր ձեզ ճանապարհի համար։

—Կարծեմ, ոչ մի առանձին բան։ Շնորհակալ եմ։

Բանտապետը մօտեցաւ Նրանց, և Նեխլիւդօվը, առանց սպասելու Նրա ասելուն, մնաս բարև արեց Մասլօվայի հետ ու դուրս եկաւ, զգալով այնպիսի մեղմ բերկրութիւն, անդորրութիւն և սէր դէպի բոլոր մարդիկ, որի նմանը երբէք չէր զգացել Նեխլիւդօվին՝ դեռ երբէք չը զգացուած բերկրութիւն և յափշտակութիւն էր պատճառում այն գիտակցութիւնը, որ Մասլօվայի վարմունքը, ինչ էլ անելու լինի նա, չի կարող սառցնել իր սէրը դէպի նա։ Թող նա սիլի-բիլի անի Փեդդէրի հետ— այդ նրա գիտենալու բանն է. ինքը սիրում է նրան ոչ թէ իր, այլ նրա և Աստուծու համար։

—

Եւ սակայն ահա թէ ինչ էր եղել Փեդդէրի հետ Մասլօվայի պատճը, որ, բոլորի ասելովը և Նեխլիւդօվի հաւատալովը, սիրաշահութիւն էր և որի համար նրան հեռացրել էին հիւանդանոցից։ Մի անգամ Փեդդէրուհու յանձնարարութեամբ գնալով դեղատունը, որ միջանցքի ծայրումն էր գտնւում և որտեղ այդ ժամանակ ոչ ոք չը կար բացի բարձրահասակ, պզուկնեռով լիքը դէմքով Փեդդէր Ուսաինօվից, որ արդէն վաղուց ընկել էր նրա յետևից, Մասլօվան, դուրս պրծնելով նրա ձեռքից, այնպէս սաստիկ հրեց նրան, որ նա յետ յետ գնալով դիպաւ պահարանին և երկու սրուակ, դարակից վայր ընկնելով, կոտրուեցին։

Գլխաւոր բժիշկը, որ այդ ժամանակ անցնում էր միջանցքով, լսելով ջարդուող ամանների ձայնը և տեսնելով դեղատնից դուրս վազող կարմրատակած Մասլօվային, բարկացած գոռաց նրա վրայ.

—Է՛, մեր բարեկամ, եթէ այստեղ էլ սիլի-բիլի ես անելու սրա հետ, ես պոչդ այստեղից կը խուզեմ։ Ի՞նչ է պատահել,—դիմեց նա Փեդդէրին, ակնոցի վրայով խստօրէն նայելով նրան։

Փեդդէրը սկսեց, ժպտալով, արդարացնել իրան։ Բժիշկը, նրա ասածը մինչև վերջը չը լսելով, գլուխը այնպէս բարձրացրեց, որ սկսեց նայել ակնոցի միջով ու գնաց հիւանդների սենեակները և հէնց նոյն օրը ասաց բանտապետին, որ Մասլօվայի տեղ մի աւելի ծանրաբարոյ օգնականուհի ուղարկի հիւանդանոցը։ Տղամարդկանց հետ սիրաքաշիկ լինելու պատրուակով հիւանդանոցից արտաքսուած լինելը կսկծալի էր Մասլօվայի համար մանաւանդ այն պատճառով, որ Նեխլիւդօվի հետ հանդիպելուց յետոյ նա աւելի զզուելի էր դարձել նրա համար տղամարդկանց հետ այդպիսի յարաբերութիւն ունենալը, որ առաջ էլ արդէն զզուեցրել էր նրան։ Այն բանը, որ ամենքը, և ի միջի այլոց պզուկաւոր երեսով Փեդդէրը, իրաւունք էին համարում, նկատի առնելով նրա անցեալ և ներկայ դրութիւնը, անպատուել նրան և զրմանալ մերժման հանդիպելով նրա կողմից, սաստիկ վիրաւորում էր նրա սիրտը և կարեկցութիւն էր զարթեցնում նրա մէջ դէպի ինքը ու արցունք էր բերում աչքերին։ Այժմ, գնալով դրասենեակը Նեխլիւդօվի հետ տեսնուելու, նա ուզում էր արդարացնել իրան այդ անարդար մեղադրանքից, որ անչուշտ կը հասնէր նրա ականջին։ Բայց սկսելով ինքն իրան արդարացնել, նա զգաց, որ Նեխլիւդօվը չի հաւատում իր խօսքերին և որ իր արդարացումը միմիայն հաստատում է նրա կասկածները, և արցունքները սղմեցին նրա կոկորդը ու նա լռեց։

Մասլօվան դեռ ևս կարծում էր և չարունակում էր ինքն իրան հաւատացնել, թէ ինքը, ինչպէս որ յայտնել էր Նեխլիւդօվին երկրորդ տեսակցութեան ժամանակ, չի ներել նրան և ատում է նրան, բայց իսկապէս նա արդէն վաղուց սկսել էր նորից սիրել նրան և այնպէս սիրել, որ ակամայ կատարում էր այն բոլորը, ինչ որ նա ցանկանում էր,—դադարել էր խմել, ծխել, այլ ևս կօքէտութիւն չէր անում ու մտել էր ծառայելու հիւանդանոցում։ Այդ բոլորը նա անում էր այն պատճառով, որ գիտէր, որ Նեխլիւդօվը այդպէս է ցանկանում։ Եթէ նա միշտ այնպէս վճռական կերպով հրաժարւում էր ընդունել Նեխլիւդօվի զոհաբերութիւնը, երբ Նեխլիւդօվը յայտնում էր, որ վճռել է ամուսնանալ նրա հետ, այդ յառաջանում էր, նախ, իր մի անգամ ասած գոռոզ խօսքերը կրկնելու ցանկութիւնից, և, գլխաւորապէս, նրանից, որ նա համոզուած էր, որ Նեխլիւդօվը կ'անբախտանայ պսակուելով իր հետ։ Նա հաստատ վճռել էր չընդունել Նեխլիւդօվի զոհաբերութիւնը և սակայն նրան կսկիծ էր պատճառում այն միտքը, թէ Նեխլիւդօվը արհամարհում է իրան, թէ նա կարծում է, որ ինքը չարունակում է լինել այն, ինչ որ էր առաջ, և չի տեսնում իր մէջ կատարուած փոփոխութիւնը։ Այն ենթադրութիւնը, թէ գուցէ Նեխլիւդօվը կարծում է այժմ, թէ նա մի վատ բան է արել հիւանդանոցում, աւելի էր տանջում Մասլօվային, քան այն լուրը, թէ վերջնականապէս հաստատուել է նրան տուժանակիր աշխատանքների դատապարտող վճիռը։

—

XXVIII

Մասլովային կարող էին ուղարկել սիբիրականների առաջին խմբի հետ, ուստի Նեխլիւդովը ճանապարհի պատրաստութիւններ էր տեսնում։ Բայց այնքան գործ ունէր նա, որ զգում էր, թէ, ինչքան էլ ազատ ժամանակ ունենար, երբէք չէր կարողանալու վերջացնել բոլոր գործերը։ Առաջուան եղածի բոլորովին հակառակն էր այժմ։ Առաջ նա պէտք է աշխատէր մի գործ հնարել իր համար և գործի նպատակակէտը միշտ միևնոյնն էր, այն է՝ Դիմիտրիյ Իվանովիչ Նեխլիւդովը, և սակայն չը նայելով, որ կեանքի ամբողջ իմաստը այն ժամանակ կենտրոնացած էր Դիմիտրիյ Իվանովիչի վրայ, այնուամենայնիւ բոլոր գործերն էլ ձանձրալի էին թւում։ Իսկ այժմ բոլոր գործերն էլ վերաբերւում էին ոչ թէ Դիմիտրիյ Իվանովիչին, այլ ուրիշ մարդկանց, և բոլորն էլ հետաքրքրական էին ու գրաւիչ, և աշխարհքի գործ կար այդ տեսակ։

Բացի այդ, առաջ Դիմիտրիյ Իվանովիչի գործերով զբաղուելը միշտ բարկացնում, զրդռւում էր նրան. իսկ այդ օտարների գործերը մեծ մասամբ բերկրալից տրամադրութիւն էին ազդում նրան։

Այդ ժամանակ Նեխլիւդովին զբաղեցնող գործերը երեք տեսակի էին բաժանւում. նա ինքն էր իր սովորական պէդանտութեամբ այդպէս բաժանել նրանց և ըստ այդմ դասել երեք թղթակալների մէջ։

Առաջին գործը վերաբերւում էր Մասլովային և նրան հասցնելիք օգնութեան։ Այդ գործը այժմ կայանում էր նրանում, որ նա պէտք է միջնորդէր, որ անհետանք չը թողնուի Բարձրագոյն անունով տրուած խնդիրքը, և պէտք է պատրաստութիւն տեսնէր Սիբիր գնալու։

Երկրորդ գործը կալուածքների կարգադրութիւնն էր։ Պանովոյում հողը տրուած էր գիւղացիներին այն պայմանով, որ նրանց վճարած կապալավարձը գործադրուի իրանց ընդհանուր գիւղական կարիքների վրայ։ Բայց այդ պայմանագրութիւնը հաստատուն դարձնելու համար պէտք էր պայմանագիր ու կտակ կազմել և ստորագրել։ Իսկ Կուզմինսկոյէ կալուածում գործը դեռ այն դրութեան մէջ էր, ինչպէս ինքը կարգադրել էր, այսինքն, կապալավարձը ինքը պէտք է ստանար, բայց պէտք էր պայմանաժամեր նշանակել և որոշել, թէ այդ փողերի որ մասը ինքը պէտք է վերցներ իր ապրուստի համար և որ մասը պէտք է թողնէր գիւղացիների օգտին։ Զիմանալով, թէ ինչ ծախսեր

կարող են հարկաւոր լինել Սիբիր գնալիս, նա դեռ սիրտ չէր անում բոլորովին զրկուել այդ եկամուտից, թէպէտ և կիսով չափ պակասեցրել էր այդ եկամուտը։

Երրորդ գործը այն էր, որ նա օգնում էր կալանաւորներին, որոնք, քանի գնում, աւելի ու աւելի յաճախ էին դիմում նրան։

Սկզբում, յարաբերութեան մէջ մտնելով իր օգնութեանը դիմող կալանաւորների հետ, նա իսկոյն և եթ սկսում էր միջնորդել նրանց օգտին, աշխատելով թեթևացնել նրանց վիճակը. բայց յետոյ խնդրողների թիւը այնքան չատացաւ, որ նա զգաց, որ անհնար է օգնել բոլորին, և ակամայ սկսեց պարապել մի չորրորդ գործով, որ վերջին ժամանակները ամենից չատ էր զբաղեցնում նրան։

Այդ չորրորդ գործը կայանում էր նրանում, որ նա աշխատում էր լուծել այն հարցը, թէ ինչ է, ինչի համար գոյութիւն ունի և որտեղից է յառաջացել այն տարօրինակ հաստատութիւնը, որ կոչւում է քրէական դատարան և որի հետևանքն են այն բանտը, որի բնակիչների հետ ինքը մասամբ ծանօթացել էր, և այն բոլոր արգելարանները, Պետրօպաւլեան ամրոցից սկսած մինչև Սախալինը, ուր տառապում էին այդ՝ նրա համար տարօրինակ քրէական օրէնքի հարիւրաւոր, հազարաւոր զոհերը։

Կալանաւորների հետ ունեցած անձնական յարաբերութիւններից, փաստաբանի, բանտային քահանայի ու բանտապետի խօսքերից և բանտարկեալների ցուցակից Նեխլիւդովը այն եզրակացութեանն էր եկել, որ կալանաւորների, այսպէս կոչուած եղեռնագործների՝ կազմը բաժանւում է հինգ տեսակի։ Առաջին տեսակը կազմում էին բոլորովին անմեղ մարդիկ, որոնք զոհ էին դարձել դատական սխալանքի, ինչպէս օրինակ՝ կարծեցեալ հրկիզող Մենչօվը, ինչպէս Մասլովան և ուրիշները։ Այդ տեսակ կալանաւորների թիւը այնքան չատ չէր, քահանայի դիտողութիւնների համաձայն՝ բոլոր բռնուածների եօթ տոկոսի չափ կը լինէր միայն, բայց դրանց դրութիւնը առանձին հետաքրքրութիւն էր զարթեցնում։ Միւս տեսակը կազմում էին այնպիսի կալանաւորներ, որոնք յանցանք էին գործել բացառիկ հանգամանքներում, օրինակ զայրացած, խանդոտուած, հարբած ժամանակ և այլն,—այնպիսի հանգամանքներում, որոնց մէջ ընկնելով՝ անշուշտ նոյնպիսի յանցանք կը գործէին այն ամենքը, որոնք դատել ու պատժում էին նրանց։ Այդ տեսակի կալանաւորները, Նեխլիւդովի դիտածով, գրեթէ բոլոր յանցաւորների թուի կէսից աւելի էին։ Երրորդ տեսակը կազմում էին

այն կալանաւորները, որոնք դատապարտուած էին նրա համար, որ այնպիսի բաներ էին արել, որոնք իրանց հակակացողութեամբ ամենասովորական և նոյն իսկ լաւ բաներ էին, իսկ իրանցից օտար մարդկանց, օրէնքներ գրողների հակակացողութեամբ յանցանք էին համարւում։ Այդ տեսակին էին պատկանում գաղանի օղի վաճառողները, մաքսանենգութեամբ պարապողները, խոշոր կալուածատէրերին ու պետութեան պատկանող անտառներում խոտ քաղողները ու ցախ հաւաքողները։ Այդ տեսակին էին պատկանում նաև գողութեամբ պարապող լեռնաբնակները։

Չորրորդ տեսակը կազմում էին այն կալանաւորները, որոնք, նրա կարծիքով, միմիայն այն պատճառով էին յանցաւորների թիւը դասում, որ նրանք բարոյապէս բարձր էին կանգնած հասարակութեան միջին մակերոյթից։ Այդ մարդկանց տոկոսը, որոնք իրանց անկախութիւնն էին պաշտպանում կամ դատապարտուած էին իշխանութիւններին դիմադրութիւն ցոյց տալու պատճառով, չատ մեծ էր, Նեխլիւդովի դիտածով։

Վերջապէս, հինգերորդ տեսակը կազմում էին այնպիսի մարդիկ, որոնց առաջ հասարակութիւնը չատ աւելի մեղաւոր էր, քան նրանք հասարակութեան առաջ։ Դրանք անհոգ թողնուած մարդիկ էին, որոնց չյմեցրել էին մշտական ճնշումը և զանազան գայթակղութիւնները, ինչպէս օրինակ այն փալանները դողացող պատանին և հարիւրաւոր ուրիշները, որոնց տեսել էր Նեխլիւդովը բանտում ու բանտից դուրս և որոնց՝ կեանքի պայմանները կարծէք սիստեմաբար հասցնում են այնտեղ, որ նրանք անհրաժեշտօրէն կատարում են յանցանք կոչուող արարմունքներ։ Այդպիսի մարդկանց թիւն էին պատկանում, Նեխլիւդովի դիտածով, չատ չատերը դողերից ու մարդասպաններից, որոնցից մի քանիսի հետ նա յարաբերութիւններ ունէր վերջին ժամանակներս։ Այդ մարդկանց թիւը սկսել նա, հետևերը մօտիկից ծանօթանալուց յետոյ, նաև այն փչացած, անտառկացած մարդկանց, որոնց՝ քրէագէտների նոր դպրոցը յանցաւոր տիպ է անուանում և որոնց գոյութիւնը հասարակութեան մէջ՝ քրէական օրէնքի ու պատժի անհրաժեշտութեան գլխաւոր ապացոյցն է համարւում։ Այդ՝ այսպէս կոչուած փչացած, յանցաւոր, աննորմալ տիպերը, Նեխլիւդովի կարծիքով, ոչ այլ ինչ էին, եթէ ոչ նոյնպիսի մարդիկ, ինչպէս և նրանք, որոնք հասարակութեան առաջ աւելի քիչ մեղաւոր են, քան հասարակութիւնը իրանց առաջ, բայց այն տարբերութեամբ, որ սրանց առաջ հասարակութիւնը մեղաւոր է ոչ անմիջապէս, այլ նրա-

նով, որ մեղաւոր է գտնուել նրանց ծնողների և նախորդների վերաբերմամբ։

Այդ մարդկանցից, մանաւանդ այդ կողմից, ամենից աւելի գրաւեց Նեխլիւդովի ուշադրութիւնը կրկնայանցագործ (рецидивист) գող Օխօտինը, որ, պառնիկ կնոջ ապօրինի զաւակ ու դիչերային օթեանի սան լինելով, ակնհայտաբար, մինչև 30 տարեկան հասակը երբէք չէր հանդիպել փողոցային ոստիկաններից աւելի բարձր բարոյականութեան տէր մարդկանց ու չահել հասակից ընկել էր գողերի խմբի մէջ և միևնոյն ժամանակը օժտուած էր արտասովոր կօմիկական ձիրքով, որով գրաւում էր մարդկանց դէպի ինքը։ Նա պաշտպանութիւն էր խնդրում Նեխլիւդովից և սակայն ծաղրով էր վերաբերում և՛ ինքն իրան, և՛ դատաւորներին, և՛ բանտին, և բոլոր ոչ միայն քրէական, այլ և աստուածային օրէնքներին։ Այդ տեսակ կալանաւորներից միւսը գեղեցկադէմ Ֆեօդօրօվն էր, որ իր գեկավարութեան տակ գտնուող աւազակախմբի հետ սպանել ու կողոպտել էր մի ծերունի աստիճանաւորի։ Դա մի գիւղացի մարդ էր, որի հօրից բոլորովին ապօրինի կերպով խլել էին տունը և որ այնուհետև զինուոր էր ընկել ու զինուոր ժամանակ պատժի էր ենթարկուել օֆիցերի սիրուհու վրայ սիրահարուելու համար։ Մի գրաւիչ, կրքոտ բնաւորութիւն էր այդ, այնպիսի մի մարդ, որ անպատճառ ուզում էր գուարճութիւններ վայելել և որ երբէք չէր տեսել այնպիսի մարդկանց, որոնք որ և է բանի համար իրանք իրանց զրկէին գուարճութիւնից, և երբէք ոչ ոքից չէր լսել, թէ կեանքը կարող որ և է ուրիչ նպատակ ունենալ բացի գուարճութիւնից։ Նեխլիւդովի համար պարզ էր, որ դրանք երկուսն էլ հարուստ բնաւորութիւններ են, միայն թէ փչացել են ու այլանդակուել, ինչպէս փչանում ու այլանդակուում են անհոգ թողնուած բոյսերը։ Նա աւելի ուշադրութեան էր արժանի մի թափառաշրջիկ մարդու և մի կնոջ, որոնք հակակրութիւն էին ազդում իրանց բթամտութեամբ և կարծէք անգթութեամբ, բայց նա չէր կարողանում ամենևին նրանց համարել իտալական դպրոցի ասած եղեռնագործ տիպին պատկանող անհատներ, այլ համարում էր՝ նրանց անձամբ իր համար հակակրելի անհատներ, որոնց նման նա չատ չատերին էր տեսել ու տեսնում բանտից դուրս ֆրակով, ուսանոցներով և ժանեակազարդ։

Եւ ահա այդպէս՝ այդ ժամանակ Նեխլիւդովին զբաղեցնող չորրորդ գործը կայանում էր նրանում, որ նա ուսումնասիրում էր այն հարցը, թէ ինչու այդ բոլոր՝ տեսակ-տեսակ մարդիկ բանտն են դրուած, մինչդեռ բոլորովին համանման մարդիկ ի-

բանց համար ազատ ման են գալիս դրսևում ու նոյն իսկ դատում են այդ մարդկանց։

Սկզբում Նեխլիւդովը յոյս ունէր այդ հարցի պատասխանը գտնել դրքերում, ուսաի և գնաց այն բոլորը, ինչ որ վերաբերում էր այդ նիւթին։ Նա գնաց Լօմբրոզոյի, Գարօֆալոյի, Ֆէրրիի, Լիստի, Մաուդսլէյի և Տարդի դրքերը և ուշի ուշով կարդաց բոլորը։ Բայց որքան աւելի էր կարդում, այնքան աւելի էր հիասթափւում։ Նրա հետ նոյնը պատահեց, ինչ որ միշտ պատահում է այն մարդկանց հետ, որոնք դիմում են գիտութեան ոչ թէ նրա համար, որ գիտութեան մէջ դեր խաղան, գրեն, վիճեն, սովորեցնեն, այլ նրա համար, որ պատասխան ստանան իրանց զբաղեցնող կենսական ուղիղ, պարզ հարցերին,—գիտութիւնը պատրաստ պատասխաններ ունէր քրէական օրէնքների հետ կապ ունեցող հազար ու մի ամենախրթին ու մանուածապատ հարցերին, բայց ոչ մի պատասխան չէր տալիս նրան զբաղեցնող հարցին։ Նա չատ պարզ բան էր հարցնում։ Նա հարցնում էր ինչու և ինչ իրաւունքով են մարդկանցից ոմանք բանտարկել և տանջում, ծեծում, սպանում միւսներին, մինչդեռ իրանք էլ բոլորովին նոյնպիսի մարդիկ են, ինչպէս և նրանք, որոնց տանջում են, ծեծում ու սպանում։ Իսկ նրան ի պատասխան՝ դատողութիւններ էին անում այն բանի մասին, թէ արդեօք ազատ է մարդու կամքը թէ ոչ։ Կարելի է արդեօք թէ ոչ մարդուս յանցաւոր ճանաչել նրա դատը չափելով։ Ի՞նչ դեր է խաղում ժառանգականութիւնը յանցագործութեան մէջ։ Կայ արդեօք բնածին անբարոյականութիւն։ Ի՞նչ է բարոյականութիւնը։ Ի՞նչ է խելագարութիւնը։ Ի՞նչ է տէմպերամէնտը։ Ի՞նչպէս են ազդում յանցագործութեան վրայ կլիման, մնունդը, տգիտութիւնը, նմանողութիւնը, հիպնօտիզմը, կրքերը։ Ի՞նչ է հասարակութիւնը։ Որո՞նք են նրա պարտականութիւնները և այլն, և այլն։

Այդ դատողութիւնները Նեխլիւդովի միտքն էին բերում այն պատասխանը, որ մի օր տուել էր նրան դպրոցից տուն գնացող մի տղայ։ Նեխլիւդովը հարցրել էր այդ տղայից, արդեօք սովորել է նա վանկ կապել։—«Սովորել եմ»,—պատասխանել էր տղան։—Որ այդպէս է, կապիր թաթիկ բառը։—«Ի՞նչ թաթիկ—չան թաթիկ»,—խորամանկ դէմքով հարցրել էր տղան։ Իսկ և իսկ այդպիսի հարցաձև պատասխաններ էր գտնում Նեխլիւդովը գիտական դրքերում իր մի հատիկ հիմնական հարցին։

Նրանց մէջ չատ խելօք, ուսումնական, հետաքրքրական բաներ կային, բայց չը կար պատասխան ամենագլխաւոր հարցին—ինչ իրաւունքով են մարդկանցից ոմանք պատժում միւսներին։ Ոչ միայն չը կար այդ պատասխանը, այլ և բոլոր դատողութիւնների վերջնական նպատակը այն էր, որ բացատրէին ու արդարացնէին պատիժը, որի անհրաժեշտութիւնը ակնյայտնի ճշմարտութիւն էին համարում։ Նեխլիւդովը չատ էր կարդում, բայց կկտուր, և պատասխանի բացակայութիւնը վերադրում էր հարցը այդպէս վայրիվերոյ ուսումնասիրելուն, յուսալով ապագայում գտնել այդ պատասխանը, ուսաի և թոյլ չէր տալիս իրան դեռ ևս հաւատալ այն պատասխանի իրաւացիութեանը, որ վերջին ժամանակները, քանի գնում, աւելի ու աւելի յաճախ էր ծագում նրա մտքում։

XXIX

Կալանաւորների այն խումբը, որի մէջ էր գտնւում Մասլօվան, պէտք է Սիբիր ուղարկէին յունիսի 5-ին։ Նեխլիւդովը էլ պատրաստուեց այդ օրը ճանապարհ ընկնելու։ Նրա ուղեորման նախընթաց օրը քաղաք եկաւ հետը տեսնուելու նրա քոյրը իր ամուսնու հետ։

Նեխլիւդովի քոյրը, Նատալիա Իվանօվնա Րագոժինսկայան, 10 տարով մեծ էր նրանից։ Նեխլիւդովը մասամբ նրա ազդեցութեան տակ էր մեծացել։ Քոյրը չատ էր սիրում եղբօրը, երբ նա փոքր էր, իսկ վերջը, ամուսնանալուց քիչ առաջ, երբ նա 25 տարեկան աղջիկ էր, իսկ եղբայրը՝ 15 տարեկան տղայ, նրանք մտերմացան իրր գրեթէ հասակակիցներ։ Քոյրը այն ժամանակ սիրահարուած էր նրա հանգուցեալ ընկեր Նիկօլենկա Իրտենիեվի վրայ։ Նրանք երկուսն էլ սիրում էին Նիկօլենկային և սիրում թէ նրա և թէ իրանց մէջ այն բանը, որ լաւագոյնն էր նրանց մէջ՝ և որ միացնում է բոլոր մարդկանց։

Այնուհետև նրանք երկուսն էլ փչացել էին,—եղբայրը՝ չնորհիւ իր վարած վատ կեանքի, իսկ քոյրը՝ չնորհիւ այն բանի, որ ամուսնացել էր այնպիսի մարդու հետ, որին ինքը սիրել էր զղայական սիրով և որը ոչ միայն չէր սիրում այն ամենը, ինչ որ մի ժամանակ Նատալիա Իվանօվնայի ու Դմիտրիյի համար ամենանուիրական ու ամենաթանկագին բանն էր աշխարհումս, այլ և նոյն իսկ չէր հասկանում, թէ ինչ բան է այդ, և այն բոլոր ձգտումները դէպի բարոյական կատարելագործութիւնը և ծառայութիւնը մարդկանց չաների, որոնցով մի ժամանակ ապրում էր Նատալիա Իվանօվնան, վերադրում էր իր համար միմիակ հասկանալի դրդումին—ցուցամոլ ինքնասիրութեան։

Րագոժինսկին ոչ անունի տէր էր, ոչ հարստութեան, բայց

չատ ճարպիկ ծառայող էր և կարողացել էր դատական պաշտօնեներում համեմատաբար փայլուն կարիերա անել, ճարտար կերպով նաւավարելով ազատամտութեան ու պահպանողականութեան արանքին, օգտուելով այդ երկու ուղղութիւններից նրանով, որը որոշ ժամանակ և որոշ դէպքում լաւագոյն հետևանքներ կարող էր տալ նրա ապրուստի համար, և մանաւանդ իր մի առանձնայատկութեամբ, որով նա դուր էր գալիս կանանց: Արդէն առաջին ջահելութիւնը անցրած ժամանակը նա ծանօթացել էր արտասահմանում Նեխլիւդօվների հետ, սիրահարեցրել էր իր վրայ Նատաչային, որ նոյնպէս ջահել չէր, ու պսակուել էր նրա հետ գրեթէ Նատաչայի մօր կամքի հակառակ, որ mésalliance *) էր համարում այդ ամուսնութիւնը: Նեխլիւդօվը, թէպէտև ծածկում էր այդ ինքն իրանից, թէպէտև կուռում էր իր այդ զգացմունքի հետ, ատում էր իր փեսային: Նա հակակրելի էր թուում Նեխլիւդօվին իր զգայմունքների գռեհկանութեամբ, իր ինքնապաստան սահմանափակութեամբ և գլխաւորապէս այն պատճառով, որ քոյրը կարողացել էր սիրել այդ գծուծ բնաւորութեան տէր մարդուն կրքոտ, եսական ու զգայական սիրով և ի հաճոյս այդ մարդու խեղդել այն բոլոր լաւ բանները, ինչ որ կար իր մէջ: Նեխլիւդօվը երբէք չէր կարողանում առանց խորին կսկիծի մտածել, որ Նատաչան՝ այդ պայծառ ճաղատ գլխով ու փրչոտ մարմնով ինքնապաստան մարդու կինն է: Նա չէր կարողանում նոյն իսկ զսպել իր զզուանքը դէպի այդ մարդու երեխաները: Եւ ամեն անգամ, երբ իմանում էր, որ քոյրը պատրաստւում է երեխայ բերելու, այնպիսի զգայմունք էր զարթնում մէջը, կարծես թէ յաւ զգալիս լինէր, որ քոյրը նորից ինչ որ վատ բանով է վարակուել այդ՝ իրանց ամենքի համար օտար մարդուց:

Րագօժինսկիները մինակ էին եկել, առանց երեխաների,—նրանք երկու երեխայ ունէին՝ մի տղայ ու մի աղջիկ,—և իջել էին ամենալաւ հիւրանոցի ամենալաւ համարում: Նատալիա Իվանօվնան գալուն պէս գնաց իրանց հին բնակարանը, բայց եղբօրը այնտեղ չը գտնելով և Ագրաֆենա Պետրօվնայից իմանալով, որ նա տեղափոխուել է կահաւորուած համարներ, գնաց այնտեղ: Կահաւորուած համարների կեղտոտ ծառան, հանդիպելով նրան մութ ու ծանրահոտ միջանցքում, որ ցերեկն էլ լուսաւորւում էր լամպի լոյսով, յայտնեց, որ իշխանը տանը չէ:

Նատալիա Իվանօվնան ասաց ծառային, որ ցոյց տայ իրան

*) Ամուսնութիւն՝ ստորադաս անձի հետ:

եղբօր համարը, որովհետև ուզում էր տոմսակ թողնել նրան: Ծառան առաջնորդեց նրան:

Մտնելով եղբօր համարը՝ Նատալիա Իվանօվնան ուշի ուշով զննեց նրա երկու փոքրիկ սենեակները: Ամեն բանում երևում էր եղբօր մաքրասիրութիւնը ու ճշտապահութիւնը, յատկութիւններ, որոնք վաղուց յայտնի էին նրան: Բացի այդ նա իսկոյն նկատեց կահաւորութեան մէջ տիրող համեստութիւնը, որ բոլորովին նոր բան էր նրա համար և սաստիկ զարմացրեց նրան: Գրասեղանի վրայ նա տեսաւ հնուց ծանօթ թղթածանրոցը բրօնզէ չնիկով, կարգով դարսած թղթակալներ, թղթեր ու գրելու պարագաներ, պատժագրքի հատորները, Հէնրի Ջօրջի անգլիերէն գիրքը և Տարդի ֆրանսերէն գիրքը, որի մէջ դրուած էր նրան ծանօթ կեռ փղոսկրէ թղթահատը:

Նստելով սեղանի առաջը, Նատալիա Իվանօվնան տոմսակ գրեց եղբօրը, որով խնդրում էր նրան անպատճառ նոյն օրն և եթ գնալ իր մօտ, և զարմանքի արտայայտութեամբ գլուխը թափ տալով իր տեսածի վրայ՝ վերադարձաւ իրանց իջած հիւրանոցը:

Նատալիա Իվանօվնային այժմ եղբօր վերաբերմամբ երկու հարց էր հետաքրքրում,—նրա ամուսնութիւնը Կատիւշայի հետ, որի մասին նա լսել էր իրանց քաղաքում, որովհետև ամենքը խօսում էին այդ բանի մասին, և այն, որ նա հողը տուել էր գիւղացիներին, որ նոյնպէս յայտնի էր ամենքին և որին չատերը քաղաքական ու վտանգաւոր նշանակութիւն էին տալիս: Կատիւշայի հետ ամուսնանալը մի կողմից դուր էր գալիս Նատալիա Իվանօվնային: Նա հիանում էր այդ վճռականութեան վրայ, այդ բանում ճանաչում էր նրան և իրան այնպէս, ինչպէս էին իրանք այն լաւ ժամանակները, երբ ինքը դեռ չէր ամուսնացած, բայց միևնոյն ժամանակ նա սարսափում էր, երբ մտածում էր, որ իր եղբայրը պսակուելու է այդպիսի մի զարհուրելի կնոջ հետ: Վերջին զգայմունքը աւելի զօրեղ էր, և նա վճռեց՝ որքան հնար էր աղղել եղբօր վրայ ու արգելք լինել նրա պսակուելուն, թէպէտև գիտէր, թէ որքան գժուար է այդ:

Իսկ միւս գործը, հողը գիւղացիներին տալը, այնքան էլ մօտ չէր նրա սրտին, բայց նրա ամուսինը սաստիկ վրդովւում էր այդ բանից և պահանջում էր նրանից, որ ազդի եղբօր վրայ: Իգնատիյ Նիկիֆօրովիչը ասում էր, որ չի կարող լինել աւելի անհիմն, աւելի թեթևամիտ ու գոռոզ բան, քան Նեխլիւդօվի այդ արածը, և որ նրա այդ վարմունքը կարելի է բացատրել—եթէ որ և է հնարաւորութիւն կայ բացատրելու—միմիայն այ-

քի ընկնելու, պարծենալու, խօսակցութիւնների առիթ տալու ցանկութեամբ։

—Ի՞նչ միտք ունի տալ հողը գիւղացիներին այն պայմանով, որ նրանք վարձ վճարեն իրանք իրանց,—ասում էր նա։— Եթէ նա անպատճառ ուզում էր այդպիսի բան անել, կարող էր հողը ծախել գիւղացիներին գիւղական բանկի միջոցով։ Այդ մի բանի նման կը լինէր։ Առհասարակ նրա արածը խելագարութեան մօտեցող մի բան է,—ասում էր Իգնատիյ Նիկիֆօրօվիչը, արդէն մտածելով խնամակալութիւն նշանակել տալու մասին, և պահանջում էր կնոջից, որ նա լուրջ կերպով խօսի եղբօր հետ նրա այդ տարօրինակ դիտաւորութեան մասին։

XXX

Տուն վերադառնալով և սեղանի վրայ քրոջ տոմսակը տեսնելով, Նեխլիւդօվը խակոյն և եթ գնաց նրա մօտ։ Երեկոյ էր արդէն։ Իգնատիյ Նիկիֆօրօվիչը հանգստանում էր միւս սենեակում, այնպէս որ միայն քոյրը հանդիպեց Նեխլիւդօվին։ Նա սև մետաքսէ զգեստով էր ու կարմիր հանդոյց ունէր կրծքին և սև մազերը փուշ-փուշ էր ածել ու սանրել մօդայածն։ Նա ակնհայտօրէն աշխատում էր ջահել կերպարանք ստանալ իր հասակակից ամուսնուն պառաւ չերևալու համար։ Եղբօրը տեսնելով նա վեր թռաւ բազմոցից ու արագ քայլերով դուրս եկաւ նրան ընդ առաջ, խշխշացնելով մետաքսէ շրջազգեստը։ Նրանք համբուրուեցին և ժպտալով նայեցին միմեանց։ Տեղի ունեցաւ հայեացքների այն խորհրդաւոր, խորհրդաստ փոխանակութիւնը, որի մէջ ամէն ինչ ճշմարիտ էր, և սխալուել բառերի փոխանակութիւն, որի մէջ արդէն չը կար նոյն ճշմարտութիւնը։ Նրանք չէին տեսնում իրանց մօր մահից ի վեր։

—Դու հասցրել ու ջահէլացել ես,—ասաց Նեխլիւդօվը։

Քրոջ շրթունքները կուչ եկան ուրախութիւնից։

—Իսկ դու նիհարացել ես։

—Հապա ուր է Իգնատիյ Նիկիֆօրօվիչը,—հարցրեց Նեխլիւդօվը։

—Հանգստանում է։ Գիշերը չի քնել։

Շատ բան կար այդտեղ ասելու, բայց բառերը ոչինչ չասացին, իսկ հայեացքները ասացին, որ այն, ինչ որ պէտք էր ասել, չասուեց։

—Ես եկայ քո մօտ։

—Հա, գիտեմ։ Ես տանից դուրս եմ եկել։ Շատ մեծ է ինձ համար, միայնակ եմ զգում ինձ այնտեղ ու սիրտս տխրում է։

Ինձ այնտեղի բաներից ոչինչ պէտք չի, բոլորը ինչ կայ չը կայ վեր առ քեզ։

—Հա, Ագրաֆենա Պետրօվնան ասաց ինձ։ Ես գնացել էի այնտեղ։ Շատ չնորհակալ եմ։ Բայց...

Այդ միջոցին հիւրանոցի ծառան ներս բերեց թէյի արծաթէ սարքը։

Նրանք լուռ մնացին, մինչ ծառան դարսում էր թէյի սարքը։ Նատալիա Իվանօվնան գնաց նստեց սեղանի առջևի բազկաթոռի վրայ ու թէյը գցեց առանց խօսելու։ Լուռ էր նաև Նեխլիւդօվը։

—Ես արդէն ամեն բան գիտեմ, Դմիտրիյ,—վճռաբար ասաց Նատաշան, նայելով նրան։

—Շատ ուրախ եմ, որ գիտես։

—Բայց մի՞թէ դու յոյս ունես ուղղել նրան՝ այնպիսի կեանք անցկացնելուց յետոյ,—ասաց Նատալիա Իվանօվնան։

Նեխլիւդօվը առանց կոթնելու, ուղիղ նստած էր փոքրիկ աթոռի վրայ և ուշադրութեամբ լսում էր քրոջը, աչքատելով լաւ հասկանալ նրա ասածը ու լաւ պատասխանել։ Այն տարամադրութիւնը, որ զարթեցրել էր նրա մէջ Մասլօվայի հետ ունեցած վերջին տեսակցութիւնը, դեռ չարունակում էր լցնել նրա հոգին անդորը բերկրութեամբ և բարեացակամութեամբ դէպի բոլոր մարդիկ։

—Ես ուզում եմ ուղղել ոչ թէ նրան, այլ ինձ,—պատասխանեց նա։

Նատալիա Իվանօվնան հոգոց քաշեց։

—Դրա համար ուրիշ միջոցներ կան բացի ամուսնութիւնից։

—Իսկ իմ կարծիքով, այդ աւելի լաւ միջոց է։ բացի դրանից, այդ ինձ կը մոցնի այն աշխարհը, ուր ես կարող եմ օգտակար լինել։

—Չեմ կարծում,—ասաց Նատալիա Իվանօվնան,—որ դու կարողանաս այդպիսով բախտաւոր լինել։

—Հարցը իմ բախտաւորութեան մէջ չէ։

—Ի հարկէ. բայց նա էլ, եթէ սիրտ կայ կրծքումը, չի կարող բախտաւոր լինել... չի կարող նոյն իսկ ցանկանալ այդ բանը։

—Նա չի էլ ցանկանում։

—Հասկանում եմ, բայց կեանքը...

—Չը՞, կեանքը...

—Ուրիշ բան է պահանջում։

—Կեանքը ոչինչ չի պահանջում, բացի նրանից, որ մենք

անենք այն, ինչ որ պէտք է անել,—ասաց Նեխլիւդովը, նայելով նրա դեռ ևս գեղեցիկ, թէև աչքի ու բերանի չուրջը մանր խորշոմներով ծածկուած դէմքին։

—Ջեմ հասկանում,—ասաց քոյրը, հոգոց քաշելով։

«Մեղմ քոյրիկս։ Ի՜նչքան փոխուել է»,—մտածում էր Նեխլիւդովը, մտաբերելով Նատաշային այնպէս, ինչպէս նա ամուսնանալուց առաջ էր, և զգալով նրա վերաբերմամբ մի տեսակ քնքոյշ զգայմունք, հիւսուած անթիւ մանկական յիշողութիւններից։

Այդ միջոցին սենեակը մտաւ, ինչպէս միշտ՝ լայն կուրծքը դուրս ցցած ու գլուխը բարձր պահելով, կակուղ ու թեթև քայլելով և ժպտալով, Իգնատիյ Նիկիֆօրովիչը, իր փայլուն ան միրուքով, ճաղատ գլխով ու ակնոցներով։

—Բարև ձեզ, բարև ձեզ,—ասաց նա, գիտակցաբար անբնական չեչառ դնելով բառերի վրայ։

(Ամուսնութեան սկզբի ժամանակները փեսայ ու աներօրդի աչխատում էին «դու»-ով խօսել, բայց այդ չը յաջողուց նրանց և նրանք չարունակեցին «դուք»-ով խօսել)։

Նրանք սղմեցին միմեանց ձեռք, և Իգնատիյ Նիկիֆօրովիչը թեթև կերպով ընկաւ բազկաթոռի վրայ։

—Հօ չեմ խանգարում ձեր խօսակցութիւնը։

—Ոչ, ես ոչ ոքից չեմ թագցնում ասածս ու արածս։

Չէնց որ Նեխլիւդովը տեսաւ այդ դէմքը, այդ մաղոտ ձեռները և լսեց խօսելու այդ հովանաւորիչ ու անձնապաստան եղանակը, հեզ տրամադրութիւնը իսկոյն չքացաւ։

—Հա, մենք խօսում էինք սրա դիտաւորութեան մասին,—ասաց Նատալիա Իվանօվնան։—Թէյ ածեմ քեզ համար,—աւելացրեց նա, բռնելով թէյամանի կոթից։

—Այո, խնդրեմ. ինչ դիտաւորութեան մասին էիք խօսում։

—Ուզում եմ Սիբիր գնալ կալանաւորների այն խմբի հետ, որի մէջ գտնւում է մի կին, որի առաջ ես ինձ մեղաւոր եմ համարում,—ասաց Նեխլիւդովը։

—Իմ լսածով, դուք մտադիր էք ոչ միայն ուղեկցել, այլ և աւելի։

—Այո, ամուսնանալ, եթէ միայն նա համաձայնի։

—Այդպէս։ Բայց եթէ ձեզ անախորժ չէ, բացատրեցէք ինձ ձեր շարժառիթները։ Ինձ համար նրանք անհասկանալի են։

—Շարժառիթներս այն են, որ այդ կինը... որ նրա առաջին քայլերը անառակութեան չափիղում...—Նեխլիւդովը բարկացաւ ինքն իր վրայ, որ չէր կարողանում գտնել պէտք եղած

խօսքերը.—Շարժառիթներս այն են, որ մեղաւորը ես եմ, իսկ նա է պատժուել։

—Եթէ նրան պատժել են, ուրեմն, հաւանականօրէն, նա անմեղ չէ։

—Նա կատարեալապէս անմեղ է։

Եւ Նեխլիւդովը անտեղի յուզմունքով պատմեց ամբողջ գործը։

—Այո, նախագահողը սխալուել է և երդուեալատենակալները առանց լաւ մտածելու են պատասխանել։ Բայց այդպիսի դէպքերի համար սենատ կայ։

—Սենատը մերժեց։

—Իսկ եթէ սենատը մերժել է, կը նշանակի բեկանման հիմնական առիթներ չեն եղել,—ասաց Իգնատիյ Նիկիֆօրովիչը, ակնհայտաբար այն յայտնի համոզմունքը դաւանելով, թէ ճշմարտութիւնը դատախազութեան արդիւնքն է։—Սենատը չի կարող քննել գործը ըստ էութեան։ Իսկ եթէ յիրաւի դատարանը սխալուել է, պէտք է խնդիրք տալ Բարձրագոյն անունով։

—Խնդիրք տուել ենք, բայց ոչ մի հաւանականութիւն չը կայ, որ յաջողութիւն ունենանք։ Տեղեկութիւն կը հարցնեն մինիստրութիւնից, մինիստրութիւնը կը հարցնի սենատից, սենատն էլ կը կրկնի իր վճիռը։ Եւ, ինչպէս միշտ, անմեղը պատժի կ'ենթարկուի։

—Նախ, մինիստրութիւնը հարց չի տայ սենատին,—ներողամիտ ժպիտով ասաց Իգնատիյ Նիկիֆօրովիչը,—այլ դատաքանից կը պահանջի իսկական գործը և, եթէ սխալ գտնի, իր կարծիքը կը յայտնի այդ իմաստով, իսկ երկրորդը, անմեղները երբէք չեն պատժուում, կամ պատժուում են միմիայն չափազանց բացառիկ դէպքերում։ Պատժուում են մեղաւորները,—առանց չտալու և ինքնագոհ ժպիտով ասում էր Իգնատիյ Նիկիֆօրովիչը։

—Իսկ ես հակառակ համոզմունքն եմ կայացրել,—ասաց Նեխլիւդովը չարանալով փեսայի դէմ,—ես այն համոզմունքն եմ կայացրել, որ դատարանների դատապարտածների կէսից աւելին անմեղ է լինում։

—Ի՞նչպէս թէ անմեղ։

—Անմեղ՝ բառի բուն նշանակութեամբ, ինչպէս անմեղ է այդ կինը թունաւորութեան գործում. ինչպէս անմեղ է բանտում բռնուած մի գիւղացի, որի հետ ես ծանօթացայ, սպանութեան գործում. ինչպէս անմեղ են նոյնպէս բանտում բռնուած մայր ու որդի, որոնց քիչ էր մնում դատապարտէին հրկիզութեան համար, որ ինքը տանտէրն է արել։

—Ի հարկէ, խօսք չը կայ, միշտ եղել են և կը լինեն դա-

տական սխալմունքներ։ Մարգկային հաստատութիւնը չի կարող կատարեալ լինել։

—Բայց դրանից ահագին թռուով բանտարկեալներ կան, որոնք անմեղ են, որովհետև, որոշ միջավայրում կրթուած լինելով, յանցանք չեն համարում իրանց արածները։

—Ներեցէք, այդ անարդար բան էք ասում, ամեն մի գող գիտի, որ գողութիւնը լաւ բան չէ և որ չը պէտք է գողութիւն անել, գիտի, որ գողութիւնը անբարոյական բան է,—ասաց Իգնատիյ Նիկիֆորովիչը, հանգիստ, անձնապատան ու միշտ միևնոյն՝ փոքր ինչ արհամարհական ժպիտով, որ սաստիկ զրգռում էր Նեխլիւդովին։

—Չէ, չը գիտի. նրան ասում են՝ մի գողանար, իսկ նա տեսնում է և գիտի, որ գործարանատէրերը գողանում են նրա աշխատանքը, կարելով նրա վարձը, որ աստիճանաւորները չարունակ կողոպտում են նրան։

—Այդ ձեր ասածը հօ անիչխանականութիւն է,—հանգիստ կերպով ընդհատեց Իգնատիյ Նիկիֆորովիչը անկորդու ասածների խօսքը։

—Ես չը գիտեմ թէ ինչ է, բայց ասում եմ այն, ինչ որ կայ,—չարունակեց Նեխլիւդովը։—Նա գիտի, որ աստիճանաւորները կողոպտում են նրան։ Գիտի, որ մենք, հողատէրերս, տիրում ենք հողին, որ պէտք է ընդհանուրին պատկանի, իսկ յետոյ երբ նա չոր ճիւղեր է ժողովում իր վառարանը վառելու համար, մենք նրան բանտն ենք գցում և ուզում ենք հաւատացնել, որ նա գող է։

—Չեմ հասկանում ձեր ասածը, իսկ որքան հասկանում եմ, համաձայն չեմ։ Հողը չի կարող մէկն ու մէկի սեփականութիւնը չը լինել։ Եթէ վերցնէք ու հողը բաժանէք ամենքի մէջ,—սկսեց Իգնատիյ Նիկիֆորովիչը լիովին ու անկասկած հաւատացած լինելով, որ Նեխլիւդովը սոցիալիստ է և որ սոցիալիստութեան պահանջները այն են, որ հողը հաւասար բաժանեն ամենքի մէջ, մինչդեռ այդ չատ չիմար միտք է և ինքը կարող է հեշտութեամբ հերքել այդ միտքը,—եթէ դուք այսօր բոնէք բաժանէք հողը ամենքի մէջ, վաղը դարձեալ նա կ'անցնի աւելի աշխատասէրների ու ընդունակների ձեռքը...

—Ոչ ոք չի առաջարկում հողը հաւասար բաժանել։ Հողը չը պէտք է ոչ ոքի սեփականութիւն լինի, չը պէտք է առուծախի կամ փոխատուութեան առարկայ լինի։

—Սեփականութեան իրաւունքը բնածին է մարդուս։ Առանց սեփականութեան իրաւունքի ոչ ոք ցանկութիւն չի ունենայ հողը մշակելու։ Ոչնչացրէք սեփականութեան իրաւունքը

և մենք նորից կ'ընկնենք վայրենի վիճակի մէջ,—հեղինակաբար արտասանեց Իգնատիյ Նիկիֆորովիչը։

—Ընդհակառակը, միայն այն ժամանակ հողը այնպէս անաչառ չի մնայ, ինչպէս այժմ։

—Լսեցէք, Դմիտրիյ Իվանովիչ, չէ որ այդ կատարեալ անմտութիւն է։ Միթէ կարելի է մեր ժամանակ ոչնչացնել հողատիրութեան իրաւունքը։ Ես գիտեմ, այդ էլը դուք վաղուց էք քչում։ Բայց թոյլ տուէք ինձ ուղղակի ասել ձեզ...—Եւ Իգնատիյ Նիկիֆորովիչը գունատուեց, ու ձայնը դողաց. ակնհայտ էր, որ այդ հարցը չատ մօտ էր նրա սրտին։—Ես ձեզ խորհուրդ կը տայի լաւ կշռադատել այդ հարցը, նախ քան նրա գործնական լուծման ձեռնարկելը։

—Դուք խօսում էք իմ անձնական գործերի մասին։

—Այո։ Ես կարծում եմ, մենք բոլորս դրուած ենք որոշ պայմանների մէջ և պէտք է կատարենք այն պարտականութիւնները, որոնք բղխում են այդ դրութիւնից, պէտք է պահպանենք կենցաղավարութեան այն պայմանները, որոնց մէջ մենք ծնուել ենք, որ ժառանգել ենք մեր նախորդ սերունդներից և որ պէտք է կատարենք մեր յաջորդ սերունդներին։

—Ես իմ պարտականութիւնն եմ համարում...

—Ներեցէք,—չարունակեց Իգնատիյ Նիկիֆորովիչը, թոյլ չը տալով ընդհատել իր խօսքը։—Ես ինձ ու իմ երեխաների համար չեմ խօսում։ Իմ երեխաների վիճակը ապահովուած է, և ես այնքան եմ վստահում, որ մենք ապրում ենք—յոյս ունեմ, երեխաներս էլ կ'ապրեն—առանց կարօտութեան, ուստի և իմ բողոքը ձեր, թոյլ տուէք ասել, ոչ լիովին կշռադատուած վարմունքների դէմ չի բղխում անձնական չահի տեսակէտից, այլ ես ուղղակի սկզբունքով չեմ կարողանում համաձայնել ձեզ հետ։ Եւ խորհուրդ կը տայի ձեզ աւելի ևս մտածել, աւելի ևս կարդալ...

—Խնդրեմ թոյլ տաք, որ ես ինքս վճռեմ իմ գործերը և ինքս դատեմ, թէ ինչ պէտք է կարդամ ու ինչ չը պէտք է կարդամ,—գունատուելով, ասաց Նեխլիւդովը և զգալով, որ ձեռքերը սկսում են սառել և ինքը այլ ևս անկարող կը լինի զսպել իրան, լռեց ու սկսեց թէյ խմել։

XXXI

—Երեխաներն ինչպէս են,—հարցրեց Նեխլիւդովը քրոջից, մի քիչ հանգստանալուց յետոյ։

Քոյրը պատմեց երեխաների մասին, թէ նրանք մնացել են

տատի մօտ, և սաստիկ ուրախանալով, որ եղբօր ու ամուսնու վէճը վերջացաւ, սկսեց պատմել, թէ ինչպէս իր երեխաները ճանապարհորդութիւն են խաղում, իսկ և իսկ այնպէս, ինչպէս նա, Դմիտրին, փոքր ժամանակը խաղում էր իր երեք տիկնիկների, սև արաբի ու փրանսուհի կոչուող տիկնիկի հետ։

—Մի՞թէ յիշում ես,—ասաց Նեխլիւդովը ժպտալով։

—Եւ երևակայիր, նրանք իսկ և իսկ քեզ պէս են խաղ անում։

Անախորժ խօսակցութիւնը վերջացաւ։ Նատաշան հանգըստացաւ, բայց չէր ուզում ամուսնու մօտ խօսել այն բանի մասին, որ հասկանալի էր միայն եղբօր համար, ուստի, ընդհանուր խօսակցութիւն սկսելու համար, խօսք բաց արեց պետերբուրգեան նորութեան մասին, մինամարտութեան մէջ սպանուած միամօր զաւակ կամենսկիյի մօր վշտի մասին։

Իգնատիյ Նիկիֆօրօվիչը իր դժգոհութիւնը յայտնեց այն օրէնքի դէմ, որով մինամարտութեան մէջոյին կատարուած սպանութիւնը դուրս է հանւում ընդհանուր եղեռնագործութիւնների չարքից։

Նեխլիւդովը առարկեց նրա այդ նկատողութեանը, և դարձեալ նոյն նիւթի մասին վէճ սկսուեց, որի ժամանակ ամեն ինչ թերատ էր աւում, ու խօսակիցները ինչպէս հարկն է չարտայայտեցին իրանց միտքը, այլ երկուսն էլ մնացին իրանց՝ միմեանց փոխադարձաբար դատապարտող համոզմունքներով։

Իգնատիյ Նիկիֆօրօվիչը զգում էր, որ Նեխլիւդովը դատապարտում է նրան, արհամարհելով նրա ամբողջ գործունէութիւնը, և նա ուզում էր ցոյց տալ Նեխլիւդովին, որ նրա դատողութիւնները միանգամայն անարդար են։ Իսկ Նեխլիւդովը, բայի այն, որ զայրանում էր, թէ ինչու է փեսան խառնըւում իր հողային գործերի մէջ (որի խորքում նա զգում էր, որ փեսան ու քոյրը և նրանց երեխաները, իբր նրա ժառանգները, իրաւունք ունեն խառնուելու այդ հարցում), սաստիկ վրդովւում էր այն բանից, որ այդ սահմանափակ մարդը կատարեալ հաւատարմութեամբ ու հանգստութեամբ չարունակում էր կանոնաւոր ու օրինաւոր համարել այն բանը, որ այժմ անկասկածօրէն անմիտ էր թւում Նեխլիւդովին։ Այդ ինքնավստահութիւնը գրգռում էր Նեխլիւդովին։

—Ի՞նչ կարող էր անել դատարանը,—հարցրեց Նեխլիւդովը։

—Մինամարտողներից մէկին, ինչպէս սովորական մարդասպանի, կը դատապարտէր տաժանակիր աշխատանքների։

Նեխլիւդովի ձեռները դարձեալ սառեցին, ու նա սկսեց տաք-տաք խօսել.

—Շատ լաւ, ինչ դուրս կը գար դրանից։

—Արդարութիւն։

—Կարծես թէ արդարութիւնն է դատարանի գործունէութեան նպատակը,—ասաց Նեխլիւդովը։

—Հապա ինչ է դատարանի նպատակը։

—Դասակարգային չահերի պաշտպանութիւնը։ Դատարանը, իմ կարծիքով, միմիայն մի միջոց է պահպանելու համար իրերի այն կարգը, որ ձեռնտու է մեր դասակարգին։

—Այդ բոլորովին նոր հայեացք է,—հանգիստ ժպիտով ասաց Իգնատիյ Նիկիֆօրօվիչը։—Սովորաբար մի փոքր ուրիշ նշանակութիւն են վերագրում դատարանին։

—Տեսականօրէն և ոչ թէ գործնականապէս, ինչպէս ես տեսայ ու համոզուեցի։ Դատարանի նպատակն է միմիայն պահպանել հասարակութիւնը իր ներկայ վիճակում և այդ բանի համար հալածել ու պատժել թէ նրանց, որոնք բարձր են ընդհանուր մակերևոյթից և ուզում են բարձրացնել նրան, և թէ նրանց, որոնք ցած են այդ մակերևոյթից։

—Չեմ կարող համաձայնել, նախ և առաջ, այն մտքի հետ, թէ յանցաւորները պատժի են ենթարկւում այն պատճառով, որ բարձր են միջին մակերևոյթից։ Մեծ մասամբ դրանք հասարակութեան թափթփուքներն են, նոյնքան փչացած, թէպէտ փոքր ինչ ուրիշ կերպ, որքան և այն յանցաւոր տիպերը, որոնց դուք միջին մակերևոյթից ցած էք համարում։

—Ես գիտեմ այնպիսիներին, որոնք անհամեմատ բարձր են, քան իրանց դատաւորները։

Բայց Իգնատիյ Նիկիֆօրօվիչը, այնպիսի մարդու սովորութեամբ, որի խօսքը չեն ընդհատում երբէք, չէր լսում Նեխլիւդովի ասածը և, դրանով առանձնապէս գրգռելով Նեխլիւդովին, չարունակում էր խօսել միաժամանակ Նեխլիւդովի հետ։

—Չեմ կարող համաձայնել նաև այն մտքի հետ, թէ դատարանի նպատակն է պահպանել իրերի ներկայ կարգը։ Դատարանը իր յատուկ նպատակներն ունի, այն է կամ ուղղել...

—Լաւ են ուղղում բանտերում,—վրայ բերեց Նեխլիւդովը։

—Կամ դուրս գցել,—յամառութեամբ չարունակում էր Իգնատիյ Նիկիֆօրօվիչը,—փչացածներին և այն գազանանման մարդկանց, որոնք վտանգ են սպառնում հասարակութեան գոյութեանը։

—Բանն էլ հէնց այն է, որ դատարանը դրանցից ոչ մէկին է անում, ոչ միւսը։ Հասարակութիւնը ոչ մի միջոց չունի այդ անելու։

—Ի՞նչպէս թէ չունի։ Ձեմ հասկանում,—զօռով ժպտալով հարցրեց Իգնատիյ Նիկիֆօրօվիչը։

—Ուզում եմ ասել, որ իսկապէս կան միմիայն երկու բանական պատիժներ, այն, որոնք գործ էին դրւում հնումը,—մարմնական պատիժ ու մահապարտութիւն,—բայց որոնք, բարքերի մեղմացման չնորհիւ, հետզհետէ աւելի ու աւելի դուրս են գալիս գործածութիւնից,—ասաց Նեխլիւդօվը։

—Ահա այդ և նոր բան է, և զարմանալի է լսել ձեզանից։

—Այո, բանական բան է ցաւ պատճառել մարդուն, որպէս զի նա այլ ևս չանի այն, ինչի համար որ ցաւ պատճառեցին նրան, և բոլորովին բանական է՝ գլխատել հասարակութեան վնասակար, վտանգաւոր անդամին։ Այդ երկու պատիժներն էլ բանական իմաստ ունեն։ Բայց ինչ իմաստ ունի պարապութեան ու վատ օրինակի չնորհիւ փչացած մարդուն փակել բանտում, ապահովուած ու պարտադիր պարապութեան պայմաններում և ամենափչացած մարդկանց ընկերութեան մէջ, կամ թէ, չը գիտեմ ինչու, պետական հաշուով տանել նրանց—ամեն մէկը 500 ռուբլուց աւելի է նստում—Տուլայի նահանգից Իրկուտսկի նահանգը, կամ Կուրսկի նահանգից...

—Եւ սակայն մարդիկ վախենում են պետական հաշուով կատարուող ճանապարհորդութիւնից, և եթէ այդ ճանապարհորդութիւնները ու բանտերը չը լինէին, մենք այժմ այսպէս մեզ համար հանդիստ նստած չէինք խօսի այստեղ։

—Այդ բանտերը չեն կարող մեզ ապահովել վտանգներից, որովհետև կալանաւորները անվերջ չեն մնում այնտեղ, նրանց բաց են թողնում։ Ընդհակառակը, այդ հիմնարկութիւններում այդ մարդկանց հասցնում են արատաւորութեան ու անառակութեան ծայրայեղ աստիճանին, այսինքն, սատկացնում են վտանգը։

—Դուք ուզում էք ասել, թէ պէտք է կատարելագործել բանտային սիստեմը։

—Կատարելագործել անկարելի է։ Կատարելագործուած բանտերը աւելի փող կը նստէին, քան այն, որ ծախսւում է ժողովրդական կրթութեան վրայ, և մի նոր ծանրութիւն կը լինէին նոյն ժողովրդի վզին։

—Բայց բանտային սիստեմի պակասութիւնները չեն կարող ամենևին ոչնչացնել դատարանի նշանակութիւնը,—դարձեալ առանց անհրաժեշտ տեսած ակամայ դնելու՝ չարունակում էր Իգնատիյ Նիկիֆօրօվիչը։

—Չի կարելի ուզղել այդ պակասութիւնները,—ասում էր Նեխլիւդօվը, բարձրացնելով ձայնը։

—Ներեցէք, ձեր ասելով, պէտք է սպանել յանցաւորներին, կամ, ինչպէս առաջարկում էր մի պետական գործիչ, հանել նրանց աչքերը,—ասաց Իգնատիյ Նիկիֆօրօվիչը յաղթական կերպով ժպտալով։

—Այո, այդ անգութ բան կը լինէր, բայց նպատակայարմար կը լինէր։ Իսկ այն, ինչ որ այժմ անւում է, թէ անգութ է և թէ աննպատակայարմար։

—Իսկ ես մասնակցում եմ այդ բանին,—ասաց Իգնատիյ Նիկիֆօրօվիչը գունատուելով։

—Այդ ձեր գործն է։ Բայց ես չեմ հասկանում այդ։

—Ես կարծում եմ, որ դուք չատ բան չէք հասկանում,—ասաց Իգնատիյ Նիկիֆօրօվիչը դողդողուն ձայնով։

—Մի անգամ ես տեսայ դատարանում, թէ ինչպէս դատախազի օգնականը իր բոլոր ոյժերով աշխատում էր մեղադրել տալ մի թշուառ տղայի, որ ամեն մի չը խեղաթիւրուած մարդու մէջ կարող էր միմիայն կարեկցութիւն զարթեցնել...

—Ես չէի ծառայի, եթէ այդ կարծիքին լինէի,—ասաց Իգնատիյ Նիկիֆօրօվիչը ու վեր կացաւ տեղիցը։

Նեխլիւդօվը մի առանձին փայլ տեսաւ փեսայի ակնոցների տակ։ «Մթթէ արցունք է այդ»,—մտածեց Նեխլիւդօվը։ Եւ յիրաւի, վիրաւորուած ինքնասիրութեան արցունքներ էին այդ։ Իգնատիյ Նիկիֆօրօվիչը, մօտենալով պատուհանին ու հազալով հանեց թաշկինակը ու սկսեց սրբել ակնոցները և յետոյ, հանելով ակնոցները, սրբեց նաև աչքերը։ Վերադառնալով իր տեղը՝ Իգնատիյ Նիկիֆօրօվիչը սկսեց ծխել ու այլ ևս ոչինչ չասաց։ Նեխլիւդօվը կսկիծ ու ամօթ էր զգում, որ այդ աստիճան վշտացրեց փեսային ու քրոջը, մանաւանդ որ վաղը գնալու էր ու այլ ևս չէր տեսնուելու նրանց հետ։ Այլայլուած դրութեամբ նա մնաս բարև արեց նրանց հետ ու գնաց տուն։

«Շատ կարելի է, որ ասածս ճիշտ էր,—գոնէ նա ոչինչ չառարկեց ինձ։ Բայց այդպէս չը պէտք էր ասել։ Կը նշանակի չատ քիչ եմ փոխուել ես, որ կարողացայ այդքան դրաւուել չար զգացմունքով և այդպէս վիրաւորել նրան ու վշտացնել խեղճ Նատաչային»,—մտածում էր նա։

XXXII

Այն խումբը, որի մէջն էր Մասլօվան, պէտք է երկաթուղու կայարանից ճանապարհ ընկնէր ժամի 3-ին, ուստի Նեխլիւդօվը վճռել էր բանտը գնալ 12-ից առաջ, որպէս զի այն-

տեղ լինէր այն ժամանակ, երբ խումբը դուրս էր գալու, և կալանաւորների հետ միասին գնար կայարանը։

Բաներն ու թղթերը դարսելիս, Նեխլիւդովը կանգ առաւ իր յիշատակարանի վրայ, կարդաց մի քանի տեղ և այն, ինչ որ գրել էր վերջին անգամը։ Վերջին անգամը՝ Պետերբուրգ գնալուց առաջ նա գրել էր հետեւեալը. «Կատիւշան չի ուզում, որ ես զոհաբերութիւն անեմ, այլ ինքն է ուզում անել։ Նա յաղթեց, ես էլ յաղթեցի։ Նա ուրախանում է ինձ այն ներքին փոփոխութեամբ, որ, թւում է ինձ,—վախենում եմ հաւատալ,—կատարւում է նրա մէջ։ Վախենում եմ հաւատալ, բայց ինձ թւում է, թէ նա վերակենդանանում է»։ Նոյն երեսում, այդ կտորից յետոյ, գրուած էր. «Շատ ծանր և չատ բերկրալից զգայմունքներ զգացի։ Իմացայ, որ նա լաւ չի պահել իրան հիւանդանոցում։ Եւ յանկարծ սիրտս սարսափելի կսկծաց։ Չէի կարող կարծել, թէ սիրտս այդքան կը կսկծայ նրա համար։ Զղուանքով ու ատելութեամբ խօսեցի նրա հետ և յետոյ յանկարծ յիշեցի ինձ, յիշեցի այն, թէ քանի-քանի անգամ ես ինքս մեղաւոր եմ եղել և նոյն իսկ այժմ, թէպէտ և միայն մտքումս, մեղաւոր եմ լինում այն բանում, որի համար ատում էի նրան, և յանկարծ միևնոյն ժամանակ և՛ զղուանք զգայի դէպի ինքս ինձ, և՛ խղճահարութիւն նրա վերաբերմամբ, ու քաղցր տրամադրութիւն ևս վրաս։ Ո՛րքան բարի կը լինէինք մենք, եթէ կարողանայինք միշտ ժամանակին տեսնել գերանը մեր աչքում»։ Այդ օրը նա գրել էր. «Գնացել էի Կատիւշայի մօտ և հէնց այն պատճառով, որ գոհ էի ինձանից, բարի չէի, չար էի նրա վերաբերմամբ, և դուրս եկայ բանտից ծանր զգայմունքով։ Էհ, ինչ արած։ Վաղուանից նոր կեանք է սկսուելու։ Մնաս բարև իմ հին կեանք, մնաս բարև ընդ միշտ։ Շատ տպաւորութիւններ է հաւաքուել մէջս, բայց դեռ չեմ կարողանում բոլորը ի մի վերածել»։

Միւս առաւօտը որ զարթնեց, առաջին բանը, որ զգայ Նեխլիւդովը, ղղջումն էր իր ու փեսայի մէջ պատահածի առիթով։

«Այսպէս չի կարելի բաժանուել,—մտածեց նա,—պէտք է գնալ նրանց մօտ և ուղղել երէկուայ արածս»։

Բայց, նայելով ժամացոյցին, տեսաւ, որ այլ ևս ժամանակ չի մնացել ու պէտք է չտապել խմբի դուրս գալուն հասնելու համար։ Վռազ-վռազ կապելով բանները և ուղարկելով կայարանը դռնապանի ու Ֆեդօսեայի ամուսնի Տարասի հետ, որ հետը գնալու էր Սիբիր, Նեխլիւդովը վարձեց սոսկային պատահած կառապանին ու գնաց բանտը։ Պօստային գնացքը, որով գնալու էր Նեխլիւդովը, դուրս էր գալու կալանաւորների գնացքից երկու ժամ յետոյ, ուստի նա հաշիւները վերջնականապէս մաքրեց համարներում, չուզելով այլ ևս վերադառնալ այնտեղ։

—

Ծուլիսեան ծանր չոքեր էր անում։ Փողոցների ու տների քարերը և կտուրների երկաթէ ծածկերը, որոնք չէին հովացել ութօթային գիշերուայ ընթացքում, իրանց տաքութիւնը հաղորդում էին ջերմ, անչարժ օդին։ Քամի չը կար, իսկ երբ բարձրանում էր, փոշիով լիքը ու իւղային ներկի գարշահոտութեամբ տոգորուած տաք օդ էր բերում հետը։ Մարդ քիչ կար փողոցներում. եղածներն էլ աշխատում էին տների չուաքովը գնալ։ Միայն արևից սևացած տրեխաւոր սալայատակող գիւղացիներն էին, որ փողոցների մէջտեղում նստած խճաքարեր էին խրում տաքացած աւազի մէջ ու մուրճերով պնդացնում, մէկ էլ մռայլ փողոցային ոստիկանները, որոնք, իրանց անթափ կիտէլներով ու ռէվոլվէրների նարնջագոյն գերձաններով, փողոցների մէջտեղում կանգնած տխուր-տխուր փոխում էին տոները, և արևի կողմից վարագուրուած ձիաքարշները, որոնք զրնգզրնգացնելով անց ու դարձ էին անում փողոցներում և որոնց ձիերի ականջները դուրս էին ցցուած սպիտակ գլխանոցների ծակերի միջից։

Երբ Նեխլիւդովը մօտեցաւ բանտին, կալանաւորների խումբը դեռ չէր դուրս եկել և բանտում դեռ չարունակւում էր ուղարկուող կալանաւորների յանձնումը և ընդունելութիւնը, որ սկսուել էր առաւօտուայ ժամի 4-ից։ Ուղարկուող խմբի մէջ կային 623 տղամարդիկ և 64 կանայք. պէտք էր բոլորին ատուդել ցուցակների համաձայն, ջոկել հիւանդներին ու թոյլերին և յանձնել ուղեկցող պահապաններին։ Նոր բանտապետը իր երկու օգնականներով, բժիշկը, ֆելդշէրը, ուղեկցող պահակախմբի օֆիցէրը և գրագիրը, նստած բակում պատատակի չուաքում դրուած սեղանի մօտ, որի վրայ դարսած էին թղթեր ու գրելու պարագաներ, մէկ-մէկ կանչում էին անունէանուն և գնում, հարց ու փորձի ենթարկում ու ցուցակագրում կալանաւորներին։

Սեղանի կէսի վրայ արդէն ընկնում էին արևի չոզքերը։ Սկսում էր սաստիկ չոր անել և մարդու չունչ կտրւում էր օդի անչարժութիւնից և մօտում խմբուած կալանաւորների շնչառութիւնից։

—Ի՞նչ է, վերջ չի՞ լինելու,—պապիրոսի ծուխը ներս ծծելով ասում էր բարձրահասակ, հասուկի, կարմրերես, վեր քաշած ուսերով ու կարճլիկ ձեռներով պահապանապետ օֆիցէրը,

որ չարունակ ծխում էր ու ծուխը դուրս թողնում բեխերի միջով, որոնք բոլորովին ծածկում էին բերանը։—Հոգիներս հանեցին։ Որտեղից էք այդքան հասաքել դրանց։ Շատ կայ դեռ։

Գրագիրը նայեց ցուցակին։

—Դեռ քսան չորս հոգի տղամարդ է մնացել, բացի կանանցից։

—Դէ ինչ էք կանգնել, մօտեցէք,—գոռաց օֆիցերը դեռ չը ստուգուած կալանաւորների վրայ, որոնք հուպ էին եկել իրար։

Երեք ժամից աւելի կը լինէր, որ կալանաւորները այդպէս չարէչար կանգնած սպասում էին հերթին, այն էլ ոչ թէ ստուերում, այլ արեւում։

Այդ տեղի էր ունենում բանտի բակում, իսկ դրսից, դարպասի մօտ կանգնած էր ինչպէս միշտ, մի պահապան զինուոր, հրացանը ձեռքին, և բացի այդ՝ մօտ քսան սայլեր կալանաւորների բանների ու թոյլերի համար, իսկ անկիւնի մօտ խմբուած էին կալանաւորների աղգականները ու բարեկամները, որոնք սպասում էին նրանց դուրս գալուն, որ տեսնեն Սիբիր ուղարկուողներին և, եթէ կարելի լինի, խօսեն հետները ու տան հետները բերած բան ու մանր։ Նեխլիւդօվն էլ գնաց միացաւ այդ խմբին։

Նա մնաց այդտեղ կանգնած մօտ մի ժամ։ Մի ժամից յետոյ դարպասի յետևից լսուեց չղթաների չաչիւն, ոտների թըփ-թըփոց, իշխանական ձայներ և մեծ բազմութեան հաղոց ու ցած խօսակցութիւն։ Այդպէս տևեց մօտ հինգ րոպէ, որից յետոյ դռնակով ներս ու դուրս էին անում վերակացուները։ Վերջապէս, լսուեց օֆիցերի հրամանը։

Դարպասը դղրդալով բացուեց, չղթաների զրնգոցը սկսեց աւելի պարզ լսուել, սպիտակ կիտէներ հագած ուղեկցող զինուորները, հրացանները ձեռքերին, դուրս եկան փողոց և, ակնհայտօրէն կատարելով մի լաւ ծանօթ ու սովորական բան, չարուեցին դարպասի առաջը, կանոնաւոր ու ընդարձակ շրջան կազմելով։ Երբ որ նրանք տեղաւորուեցին, կրկին լսուեց օֆիցերի հրամանը, և սկսեցին զոյգ-զոյգ դուրս գալ կալանաւորները, ածիլած գլուխներին դրած թասակներով, չալակները գլած տոպրակներով, քաշ տալով չղթայուած ոտները ու ճօճելով աղատ ձեռները, մինչդեռ միւս ձեռքով պահում էին չալակած տոպրակները։ Առաջ դուրս եկան տաժանապարտ տղամարդիկ, բոլորն էլ միակերպ մոխրագոյն անդրավարտիքներով ու խալաթներով, որոնց մէջքերին կարած էր սպաձև կտոր։ Բոլորն էլ—ծեր ու ջահել, նիհար ու գեր, գունատ, կարմրերես ու սև, բեխաւոր, միրուքաւոր ու անմիրուք, ոտաբոբիկ, հրէայ—դուրս էին գալիս, չղթաները զրնգացնելով ու ժիր կերպով ճօճելով ձեռները, կարծես պատրաստուելով գնալ ուր որ չատ հեռու տեղ, բայց, 10 քայլ անելուց յետոյ, կանգ էին առնում ու խոնարհ կերպով չորս-չորս շարուում իրար յետևից։ Նրանց յետևից, անընդմիջաբար, դուրս թափուեցին նոյնպէս ածիլուած և նոյնպիսի հագուստով տղամարդիկ, բայց առանց ոտնաչղթայի, այլ միայն ձեռնաչղթայով իրար կապած կռներով։ Դրանք աքսորականներն էին։ Նրանք էլ ժիր-ժիր դուրս էին գալիս, կանգ էին առնում ու նոյնպէս չորս-չորս շարուում իրար յետևից։ Այնուհետև դուրս եկան հասարակական վճիռներով աքսորուածները։ Յետոյ՝ կանայք, նոյնպէս կարգով, նախ՝ տաժանապարտները բանտային մոխրագոյն բաճկոններով ու գլխաչորերով, յետոյ՝ աքսորականներն ու յօժարակամ գնացողները իրանց քաղաքային կամ գիւղական հագուստներով։ Կանանցից մի քանիսը բաճկոնների փէշի մէջ գրկած ունէին ծծկեր երեխաներ։

Կանանց հետ ոտքով գնում էին նաև երեխաներ՝ տղաներ ու աղջիկներ։ Այդ երեխաները, ինչպէս քուռակները ձիերի ջոկերում, սղմուում էին կալանաւորուհիների արանքներին։ Տղամարդիկ կանգնում էին լուռ, միայն երբեմն-երբեմն հաղորդակցութիւններ անելով։ Իսկ կանանց մէջ լսուում էր անլուռ զրոյց։ Նեխլիւդօվին թուաց, թէ ինքը տեսաւ Մասլօվային, երբ նա դուրս էր գալիս բանտից. բայց յետոյ նա կորաւ ուրիշների բազմութեան մէջ, և Նեխլիւդօվը տեսնում էր միմիայն մոխրագոյն, կարծես մարդկային, մանաւանդ կանացի կերպարանքից զրկուած արարածների մի ահագին խումբ, որոնք երեխաների հետ ու տոպրակները չալակներին չարուում էին տղամարդկանց յետևից։

Չը նայելով, որ բոլոր կալանաւորներին հաչուել էին բանտի պատերի մէջ, այնուամենայնիւ ուղեկցող զինուորները սկսեցին նորից հաչուել նրանց և նոր հաչիւը համեմատել առաջին հաչուի հետ։ Այդ ստուգումը երկար տևեց, մանաւանդ այն պատճառով, որ կալանաւորներից մի քանիսը չարժուում էին, փոխելով տեղերը, և դրանով խառնում էին զինուորների հաչիւը։ Զինուորները հայհոյում էին ու հրհրում՝ խոնարհ կերպով, բայց զայրացած սրտով հնազանդուող կալանաւորներին ու սկսում էին նորից հաչուել։ Երբ որ բոլորին նորից հաչուեցին պրծան, օֆիցէրը ինչ որ հրաման տուեց, և բազմութիւնը իրար անցաւ։ Թոյլ տղամարդիկը, կանայք ու երեխաները, միմեանցից առաջ անցնելով, դիմեցին դէպի սայլերը ու սկսեցին դարսել

նրանց վրայ տոպրակները ու յետոյ ինքներն էլ սկսեցին բարձրանալ նաւեր։ Բարձրանում ու նաւում էին ճուացող ծծկեր երեխաներ գրկած կանայք, ուրախ ու տեղի համար իրար հետ կռուող երեխաներ և մռայլ ու վհատ կալանաւորներ։

Մի քանի կալանաւորներ, գլխարկները հանած, մօտեցան պահակախմբի օֆիցէրին ու սկսեցին ինչ որ մի բան խնդրել նրանից։ Ինչպէս յետոյ իմացաւ Նեխլիւդովը, նրանք խնդրում էին, որ իրանց էլ թոյլ տան նաւեր սայլերի վրայ։ Նեխլիւդովը տեսնում էր, թէ ինչպէս օֆիցէրը լուռ, առանց խնդրողին նայելու, ծծում էր պապիրոսի ծուխը և ինչպէս յետոյ չանկարծ կարճլիկ ձեռքը թափ տուեց չարքից դուրս եկած ու իրան մօտեցած մի կալանաւորի վրայ և ինչպէս այդ կալանաւորը, հարուածի վախից ծռիլած գլուխը ուսերի մէջ քաշելով, փախաւ նրա մօտից։

—Ես քեզ այնպէս աղնուական կը դարձնեմ, որ կնանքումդ չես մոռանալ։ Ոտով էլ լաւ տեղ կը հասնես,—գոռաց օֆիցէրը։

Միայն մի օրօրուող երկարահասակ ծերունու, որ չղթայ ուներ ոտներին, օֆիցէրը թոյլ տուեց նաւել սայլի վրայ, և Նեխլիւդովը տեսաւ, թէ ինչպէս այդ ծերունին, հանելով իր տափակ թասակը, խաչակնքում էր երեսը, դիմելով դէպի սայլերը, և ինչպէս յետոյ երկար ժամանակ չէր կարողանում բարձրանալ սայլի վրայ չղթաների պատճառով, որոնք խանգարում էին բարձրացնել թոյլ, ծերունական, կաշկանդուած ոտը, և ինչպէս մի կին, որ արդէն նաւել էր սայլի վրայ, օգնեց նրան, ձեռքից բռնելով ու վեր քաշելով։

Երբ որ բոլոր սայլերը բարձրացին տոպրակներով ու տոպրակների վրայ նաւեցին նրանք, որոնց թոյլ էր տուած այդ, օֆիցէրը գլխարկը հանեց, թաշկինակով սրբեց ճակատը, ճաղատ գլուխը և հատ ու կարմիր վիզը ու երեսը խաչակնքեց։

—Մարշ,—հրաման տուեց նա։

Զինուորները չրխկացրին հրացանները, կալանաւորները, գլխարկները հանելով,—ոմանք ձախ ձեռքով,—սկսեցին խաչ հանել երեսներին, ճանապարհ դնողները լինչ որ գոռացին, կալանաւորներն էլ լինչ որ գոռացին ի պատասխան, կանանց մէջ լաց ու կոծ բարձրացաւ և խառնուեց, չրջապատուած սպիտակազգեստ զինուորներով, շարժուեց, փոշի բարձրացնելով չղթայակապ ոտներով։ Առաջից գնում էին զինուորները, նրանց յետևից, ոտնաչղթաները զրնգացնելով, տաժանապարտները՝ չորս-չորս ամէն մի շարքում, յետոյ աքսորականները, յետոյ հասարակական վճիռներով աքսորուածները, որոնք երկու կապուած էին իրար ձեռնաչղթաներով, յետոյ կանայք։ Ամենքից վերջը գնում էին տոպրակներով ու թոյլ կալանաւորներով լիքը սայլերը, որոնցից մէկի վրայ բարձր նստած էր մի չորսամ կոլոլուած կին, որ չարունակ հեկեկում էր ու հեկեկում։

XXXIII

Ճանապարհորդութիւնը այնքան երկար էր, որ տոպրակներով ու թոյլերով լի սայլերը միայն այն ժամանակ չարժուեցին տեղից, երբ առաջին չարքերը արդէն ծածկուել էին տեսողութիւնից։ Երբ սայլերը չարժուեցին, Նեխլիւդովը նստեց իրան սպասող կառքը ու հրամայեց կառապանին խմբից առաջ անցնել, ուղևորվ տեսնել՝ հո ծանօթ կալանաւորներ չը կան տղամարդկանց մէջ և, բացի այդ, գտնել կանանց մէջ Մասլովային ու հարցնել թէ արդեօք ստացել է իրան ուղարկուած բանները։ Սկսեց սաստիկ չոր անել։ Ջամի չը կար, և հալարաւոր ոտների բարձրացրած փոշին ամբողջ ժամանակը կանգնած էր կալանաւորների վրայ, որոնք գնում էին փողոցի մէջտեղով։ Կալանաւորները արագ քայլերով էին գնում, և Նեխլիւդովի վարձած կառքի հասարակաքայլ ձին միայն դանդաղօրէն էր առաջ անցնում նրանցից։ Շարք առ շարք գնում էին տարօրինակ ու սարսափելի տեսքով անծանօթ էակներ, չարժելով իրանց հազարաւոր միակերպ հագնուած ոտները և քայլերին համաչափ թափահարելով ազատ ձեռքերը, կարծես իրանք իրանց խրախուսելու համար։ Այնքան չատ էին նրանք, այնքան միակերպ էին նրանք և այնպիսի առանձնատեսակ ու տարօրինակ պայմանների մէջ էին դրուած, որ Նեխլիւդովին թուում էր, թէ մարդիկ չեն այդ, այլ ինչ որ առանձնատեսակ, սարսափելի աբրաժններ։ Երա այդ տպաւորութիւնը փարատուեց միայն նրանով, որ նա տաժանապարտների բազմութեան մէջ տեսաւ մարդասէր Ֆեոդօրովին և աքսորականների մէջ՝ կոմիկ Օխոտինին ու մի թափառաշրջիկի, որ նոյնպէս դիմել էր նրա օգնութեան։ Գրեթէ բոլոր կալանաւորները գլուխները ծռում էին ու աչքի պոչով նայում իրանցից առաջ անցնող կառքին ու նրա մէջ նստած պարոնին, որ ուշի ուշով դիտում էր նրանց։ Ֆեոդօրովը գլուխը թափ տուեց դէպի վերև ի նշան այն բանի, որ ինքը ճանաչեց Նեխլիւդովին։ Օխոտինը աչքով արեց։ Բայց ոչ մէկը, ոչ միւսը չը բարևեցին, արգելուած համարելով գլուխ տալը։ Հասնելով կանանց չարքերին, Նեխլիւդովը խնայն և եթ տեսաւ Մասլովային։ Նա գնում էր կանանց երկրորդ չարքում։ Շարքի

ծայրումը գնում էր մի կարմրատակած, կարճոտանի, սևաչեայ, անճոռնի կին, որ խալաթի փէշերը քշտել, խրել էր գոտիկի մէջ,—հոգոչավական էր այդ. նրա կողքին գնում էր մի չղի կին, որ հազիւ հազ էր քաշ տալիս ոտները, իսկ երրորդը՝ Մասլովան էր։ Նա տոպրակ ունէր չալակին և նայում էր ուղիղ իր առջևը։ Դէմքը հանգիստ էր ու վճռական։ Նոյն չարքի չորրորդը կարճ խալաթ հագած ու գլխաչորը գեղջկուհիավարի կապած մի չահէլ ու սիրուն կին էր, որ ժիր-ժիր գնում էր Մասլովայի կողքին,—այդ էլ Ֆեդօսեան էր։ Նեխլիւդովը իջաւ կառքից ու մօտեցաւ առաջ չարժուող կանանց, ուղելով հարցնել Մասլովայից, թէ արդեօք ստացել է բաները և թէ ինչպէս է զգում իրան, բայց ուղեկցող պահակախմբի ունտեր-օֆիցերը, որ այդ կողմիցն էր գնում, իսկոյն և եթ նկատեց նրան ու վազեվազ եկաւ դէպի նա գոռալով.

—Պարոն, չի կարելի մօտենալ կալանաւորներին, արգելուած է։

Մօտենալով Նեխլիւդովին ու ճանաչելով նրան (բանտում արդէն ամենքը ճանաչում էին նրան), ունտեր-օֆիցերը մատնեբը տարաւ դէպի գլխարկը ու, կանգ առնելով Նեխլիւդովի կողքին, ասաց.

—Այժմ չի կարելի։ Կայարանում կարող էք, իսկ այստեղ թոյլ չի տրւում։ Ցետ մի ընկնէք, մարշ,—գոռաց նա կալանաւորների վրայ, և ժիր-ժիր, չը նայելով չոքին, վազ տուեց իր տեղը իր նոր, պապղան կօշիկներով։

Նեխլիւդովը վերադարձաւ դէպի մայթը և պատուիրելով կառապանին հետևել իրան՝ չարունակեց ճանապարհը ոտով, կալանաւորներին համահաւասար։ Կալանաւորների խումբը փողոցներով անցնելիս ամէն տեղ կարեկցութեամբ ու սարսափով խառն ուշադրութիւն էր դարձնում իր վրայ։ Կառքով գընացողները դուրս էին մեկնւում կառքերից և, քանի դեռ կարող էին տեսնել կալանաւորներին, աչքով հետևում էին նրանց։ Ոտով գնացողները կանգ էին առնում և զարմացած ու վախուռան նայում այդ սարսափելի տեսարանին։ Ոմանք մօտենում էին ու ողորմութիւն էին տալիս։ Ողորմութիւնը ընդունում էին ուղեկցող զինուորները։ Ոմանք, հիւանդացածների նման, գնում էին խմբի յետևից, բայց յետոյ կանգ էին առնում և գլուխները թափ տալով՝ մնում էին ու միմիայն աչքերով հետևում խմբին։ Շատերը փողոցագործներից ու դարպասաներից, միմեանց ձայն տալով, դուրս էին վազում ու պատուհաններից կախ ընկնում և անշարժ ու լուռ նայում էին այդ սարսափելի գնացքին։ Մի փողոցաբաժանքում խումբը խանգարեց անցնել

մի հարուստ կառքի։ Առջևում նստած էր լպստած երեսով հաստաքամակ կառապանը, մէջքին երկու չարք կոճակներ կարած, իսկ կառքի մէջ յետևի կողմում նստած էին մարդ ու կին. կինը, գունատ ու նիհար, բացգոյն գլխարկով ու վառգոյն հովանոցով, իսկ մարդը՝ ցիլինդրով ու բացգոյն չքնդ վերարկուով։ Նրանց առջևը նստած էին նրանց երեխաները,—զուգած-զարդարած ու ծաղկի նման թարմ մի փոքրիկ աղջիկ՝ բաց թողած չէկ մազերով, նոյնպէս վառգոյն հովանոցով, և մի ութ տարեկան տղայ՝ երկար ու բարակ վզով և դուրս ցցուած անբանհներով, գլխին դրած՝ երկար ժապաւէններով զարդարած նաւաստիական գլխարկ։ Հայրը բարկացած յանդիմանում էր կառապանին, որ նա չէր կարողացել ժամանակին կալանաւորների խմբի առաջիկը անցնել, իսկ մայրը զգուանքով պչում էր աչքերը ու կնճռում դէմքը, արևից ու փոշուց պատսպարուելով մետաքսէ հովանոցով, որ բոլորովին քաշել էր երեսին։ Հաստաքամակ կառապանը բարկացած խոժոռուում էր, անարդար յանդիմանութիւններ լսելով պարոնից, որ ինքն էր հրամայել նրան տանել այդ փողոցով, և դժուարութեամբ էր կարողանում պահել գլխակապի ու վզի տակին փրփրակալած սևաթոյր նժոյգներին, որոնք իրանց կտրատում էին առաջ գնալու համար։

Փողոցապահ ոստիկանը ի բոլոր սրտէ ուզում էր ծառայութիւն մատուցանել հարուստ կառքի տիրոջը ու ճանապարհ տալ նրան, կանգնեցնելով կալանաւորներին, բայց զգում էր, որ այդ գնացքի մէջ ինչ որ մռայլ հանդիսաւորութիւն կար, որ չէր կարելի խանգարել նոյն իսկ այդպիսի հարուստ պարոնի համար։ Նա միայն ձեռքը դրեց գլխարկի ճակատնոցին ի նշան իր յարգանքի դէպի հարստութիւնը և սկսեց խեթ-խեթ նայել կալանաւորների վրայ, կարծես խոստանալով յամենայն դէպս պաշտպանել նրանցից կառքի մէջ նստածներին։ Այնպէս որ կառքը ստիպուած էր սպասել ամբողջ խմբի անցնելուն և առաջ չարժուեց միայն այն ժամանակ, երբ նրա կողքով դղրդոցով անցաւ վերջին սայլը վրան բարձած տոպրակներով ու նստած կալանաւորուհիներով, որոնց մէջից իստերիկաւոր կինը, որ արդէն հանդստանալու վրայ էր, տեսնելով հարուստ կառքը, սկսեց նորից հեկեկալ ու հեծկլտալ։ Միայն այդ ժամանակ կառապանը թեթևակի իրար տուեց սանձափոկերը, և սևաթոյր ու սրընթաց նժոյգները, պայտերով ղրնգայնելով փողոցի խճայատակը, տարան բեղմնէ դողերի վրայ փոփուկ ե-րերուող կառքը դէպի ամարանոց, ուր գնում էին զուարճանա-

լու հարուստ պարոնը, իր կինը, աղջիկը ու բարակ վզով և ցցուած անթրակներով ազան։

Ո՛չ հայրը, ոչ մայրը չը բացատրեցին ո՛չ աղջկան, ոչ ծըղայինն նրանց տեսածը։ Այնպէս որ երեխաները իրանք պէտք է լուծէին այն հարցը, թէ ինչ նշանակութիւն ունէր այդ տեսարանը։

Աղջիկը, նկատի առնելով մօր դէմքի արտայայտութիւնը, հարցը այնպէս լուծեց, թէ դրանք ամենևին այնպիսի մարդիկ չէին, ինչպէս իր ծնողներն ու նրանց ծանօթները, թէ դրանք վատ մարդիկ էին, և թէ այդ պատճառով պէտք էր հէնց այնպէս վարուել նրանց հետ, ինչպէս որ վարուել էին։ Ուստի և նա միայն սարսափ էր զգում և ուրախացաւ, երբ այլ ևս չէր տեսնում այդ մարգկանց։

Բայց երկար ու նիհար վզով ազան, որ, առանց աչքերը թարթելու ու հեռացնելու, նայում էր կալանաւորների գնացքին, հարցը ուրիշ կերպ լուծեց։ Նա հաստատ ու անկասկած գիտէր, իմացած լինելով այդ բանը ուղղակի Աստուծուց, որ այդ մարդիկը բոլորովին նոյնպիսի էակներ էին, ինչպէս ինքը և առհասարակ բոլոր մարդիկ, և որ այդ պատճառով կը նշանակի ով որ վատ բան էր արել դրանց, այնպիսի բան, որ չը պէտք է անել, և նա խղճում էր նրանց և սարսափ էր զգում այն մարգկանցից, որոնք չղթայուած էին ու ածիլուած կամ նրանցից, որոնք չղթայել էին նրանց ու ածիլել նրբանց գլուխը։ Եւ այդ պատճառով տղայի չրթունքները քանի գնում, ուռչում էին, և նա ահագին ճիգ էր թափում, որ լաց չը լինի, կարծելով, թէ ամօթ է լալ այդպիսի դէպքերում։

XXXIV

Նեխլիւդովը նոյնքան արագ քայլերով էր գնում, որքան և կալանաւորները, և նոյն իսկ թեթև հագնուած լինելով, թեթև վերարկու ունենալով, նա սարսափելի չոր էր զգում և, որ գլխաւորն է, խեղդւում էր փոշուց ու փողոցներում կանգնած անշարժ տաք օդից։ Մօտ քառորդ վերստ անցնելուց յետոյ՝ նա նայեց կառքը ու այդպէս չարունակեց ճանապարհը, բայց կառքի մէջ, փողոցի մէջտեղում, նրան ուրիշ ևս չոր էր թըւում։ Նա փորձեց զբաղեցնել իր միտքը իր ու փեսայի երէկուայ խօսակցութեամբ, բայց այժմ այդ հարցը այլ ևս նրան այնպէս չէր յուզում, ինչպէս առաւօտեան։ Այդ մտահոգութիւնը այժմ աջողւում էր կալանաւորների խմբի բանտից դուրս գալու և ոտով կայարան գնալու աղդած տպաւորութիւններով։

Իսկ որ գլխաւորն էր, չոքը մարդու հոգի էր հանում։ Ճանկապատի մօտ, ծառերի ստուերում, երկու բէալիստ տղաներ, գլխարկները հանած, կանգնել էին իրանց առջևը չոքած պաղպաղակ ծախողի գլխին։ Տղաներից մէկը արդէն մեծ ախորժանքով ծծում էր պաղպակը եղջիւրե գդալից, իսկ միւսը սպասում էր հերթին, մինչդեռ պաղպաղակ ծախողը ինչ որ մի դեղնագոյն բանով գլխանոց լցնում էր փոքրիկ բաժակը։

—Ո՞րտեղ կարելի է խմելու բան գտնել,—հարցրեց Նեխլիւդովը իր կառապանից, զովանալու անդիմադրելի պահանջ զգալով։

—Հէնց այստեղ մի լաւ պանդոկ կայ,—ասաց կառապանը և, ծռելով անկիւնի միւս կողմը, կանգնեցրեց կառքը մի փողոցագռան մօտ, որի վրայ կախուած էր մի մեծ ցուցանակ։

Հաչուելսեղանի յետևում կանգնած թխլիկ գործակատարը, որ վերնաչապիկ ունէր հագին, և սպասաւորները, որոնց հագուստները մի ժամանակ սպիտակ գոյն էին ունեցել և որոնք այցելուների բացակայութեան պատճառով նստած էին սեղանների չուրջը, հետաքրքրութեամբ նայեցին արտասովոր հիւրի վրայ ու առաջարկեցին իրանց ծառայութիւնը. Նեխլիւդովը սէլտերեան ջուր պահանջեց ու նստեց պատուհանից հեռու մի կեղտոտ սփռոցով ծածկուած փոքրիկ սեղանի մօտ։

Երկու հոգի սեղաններից մէկի մօտ նստած, թէյի սարքն ու սպիտակ ապակիե չիչն առաջներին, սրբում էին ճակատների քրտինքը ու հանգիստ կերպով ինչ որ հաչիւ տեսնում։ Նրանցից մէկը սև էր ու ճաղատ գլխով և ծոծրակին ունէր սև մազերի նոյնպիսի եզերագիծ, ինչպէս և Իգնատիյ Նեկրիֆօրովիչը։ Այդ տպաւորութիւնը նորից յիշեցրեց Նեխլիւդովին իր ու փեսայի երէկուայ խօսակցութիւնը և իր ցանկութիւնը՝ գնալուց առաջ տեսնուել նրա ու քրոջ հետ։ «Հապի թէ յետոյ կարողանամ հասնել գնացքին,—մտածեց նա։—Աւելի լաւ է նամակ գրեմ։ Եւ, թուղթ, ծրար ու նամականիշ պահանջելով, նա սկսեց, զով ու պճպճան ջուրը կում-կում խմելով, մտածել, թէ ինչ գրի։ Բայց մտքերը ցրիւ էին գալիս և նա ոչ մի կերպ չէր կարողանում կազմել նամակը։

«Սիրելի Նատաչա, չեմ կարող գնալ այստեղից Իգնատիյ Նեկրիֆօրովիչի հետ ունեցած խօսակցութեանս ծանր տպաւորութեան տակ»...—սկսեց նա։ «Իսկ յետոյ՝ ներողութիւն խընդրել երէկուայ ասածներիս համար։ Բայց չէ որ ես ասացի այն, ինչ որ մտածում էի։ Եւ նա կը կարծի, թէ ես հրաժարւում եմ իմ ասածից։ Բացի այդ, նրա միջամտութիւնը իմ գործերի մէջ... Չէ, չեմ կարող»,—մտածեց նա ու զգալով, որ նորից ա-

տելութիւն է զարթնում սրտումը դէպի այդ օտար, ինքնապատան և իրան չը հասկացող մարդը, նամակը, առանց վերջացնելու, դրեց գրպանը ու պահանջածի փողը վճարելով դուրս եկաւ փողոցը և կառք նստելով պատուիրեց կառապանին հասնել կալանաւորների յետից։

Շոգը աւելի սաստկացել էր։ Պատերն ու քարերը կարծես ջերմ օդ էին արտաշնչում։ Մարդուս ոտները կարծես խաչւում էին փողոցի տաքացած քարերի վրայ, և Նեխլիւդովը այրուածքի տպաւորութիւն զգաց, երբ մերկ ձեռքը դիպցրեց կառքի փայլուկած թիկքին։

Ձին թմրած քայլերով քաշ էր տալիս կառքը փողոցի միջով, համաչափ բաղխումով զարկելով պայտերը փշոտ ու անհարթ խճայատակին. կառապանը անդադար ննջում էր. իսկ Նեխլիւդովը ոչինչի մասին չէր մտածում ու անտարբեր կերպով նայում էր դէպի առաջ։ Փողոցի էջքում մի մեծ տան դարպասի դիմաց կանգնած էր մարդկանց մի խումբ ու մի ղինուոր հրացանը ձեռքին. Նեխլիւդովը կանգնեցնել տուեց կառքը։

—Ինչ է այդ,—հարցրեց նա մօտակայ տան բակապանից։

—Ինչ որ բան է պատահել կալանաւորին։

Նեխլիւդովը իջաւ կառքից ու մօտեցաւ մարդկանց խմբին։ Մայթի մօտ զառիվայր խճայատակի խորդ ու բորդ քարերի վրայ՝ գլուխը ոտներից ցած պառկած էր մի մոխրագոյն խալաթ ու նոյնպիսի անդրավարտիք հագած հասակաւոր լայնամարմին կալանաւոր՝ կարմրաչէկ միրուքով, կարմրած երեսով ու ճապաղ քթով։ Նա փռնչում էր երեսնիվեր, պէպէնոտ ձեռները ափնիվայր չոած, և երկար ընդմիջումներից յետոյ, հազմաչափ կերպով ցնցելով բաձր ու հուժկու կուրծքը, հեծկլտում էր, նայելով երկնքին արիւնակալած սեւեռուն աչքերով։ Նրա գլխին կանգնած էին մի մոայլ փողոցային ոստիկան, մի լրագրավաճառ, մի նամակատար, մի գործակատար, մի պառաւ կին հովանոցը ձեռքին և մի խուզուած տղայ գատարկ զամբիւղը կռնից կախ արած։

—Բանտումը թուլացել, այժից ընկել են, ինչպէս կարելի է կայարան տանել այսպիսի ժամանակ, երբ կրակ է թափւում երկնքից,—ում որ մեղադրում էր գործակատարը, դիմելով Նեխլիւդովին, երբ նա մօտեցաւ խմբին։

—Երևի կը մեռնի,—լալագին ձայնով ասում էր հովանոցաւոր կինը։

—Շատկի օձիքը պէտք է բանալ,—ասաց նամակատարը։

Փողոցային ոստիկանը սկսեց հաստ ու դողդոջուն մատներով անշնորհք կերպով բանալ օձիքի կապերը կալանաւորի

ջլուտ ու կարմրած վզի վրայ։ Նա, ըստ երևոյթին, յուզուած ու չփոթուած էր, բայց և այնպէս հարկաւոր համարեց դիմել ամբոխին.

—Ի՞նչ էք կիտուել։ Առանց այն էլ չոք է։ Քամու առաջը բռնում էք։

—Բժիշկը պէտք է քննէր։ Թոյլերին պէտք է թողնել տար բանտումը։ Ինքը որ բռնես հոգին կը տայ. կարելի՞ է միթէ այսպիսիներին տանել,—ասում էր գործակատարը, ակներևաբար աչխատելով ցոյց տալ, որ ինքը գիտի թէ կարգը ինչպէս է։

Ոստիկանը, արձակելով օձիքի կապերը, ուղղուեց ու նայեց չուրջը։

—Աստմ եմ, ցրուեցէք։ Ինչ գործ ունէք այստեղ, չէք տեսել ինչ է,—ասաց նա հաւաքուած մարդկանց, նայելով Նեխլիւդովին ու համակրութիւն ապատելով նրանից, բայց, համակրութիւն չը տեսնելով նրա հայեացքում, նայեց ուղեկցող ղինուորին։

Բայց ղինուորը կանգնած էր մի կողմ և, նայելով իր ծռուած կրունկին, բոլորովին անտարբեր կերպով էր վերաբերուում ոստիկանի դժուար գրութեանը։

—Ում գործը որ է՝ նրանք հոգս չեն տանում։ Մէթէ օրէնք է մարդկանց մահուան դուռը հասցնել։

—Շատ էլ կալանաւոր է, բայց չէ որ մարդ է, Աստուծու ստեղծած է,—ասում էին ամբոխում։

—Գլուխը բարձր տեղ դրէք ու ջուր տուէք խմի,—ասաց Նեխլիւդովը։

—Գնացել են ջուր բերելու,—պատասխանեց ոստիկանը ու կալանաւորի կռնատակերից բռնելով՝ դժուարութեամբ քաշ տուեց իրանը աւելի բարձր տեղ։

—Ի՞նչ էք կիտուել այստեղ,—յանկարծ լսուեց մի վճռական ու իշխանական ձայն, և կալանաւորի չուրջը համախմբուած մարդկանց արագ քայլերով մօտեցաւ թաղական ոստիկանը, չափից վեր մաքուր ու փայլուն կիսէլով և աւելի ևս փայլուն բարձրահիւք կօշիկներով։—Ցրուեցէք։ Նայելու բան չը կայ այստեղ,—գոռաց նա ամբոխի վրայ, դեռ չը տեսած, թէ ինչու են մարդիկ հաւաքուել այնտեղ։

Իսկ երբ հասաւ եղելութեան տեղը ու տեսաւ մերձիմահ կալանաւորին, նա հաւանութեան նշան արեց գլխով, կարծես թէ հէնց այդ բանին էր սպասում, ու դիմեց փողոցային ոստիկանին.

—Ի՞նչպէս է պատահել։

Փողոցային ոստիկանը զգուշացեց, որ կալանաւորների խումբը տանելիս մէջներից այս մէկը վայր էր ընկել և ուղեկցող պահակախմբի օֆիցէրը հրամայել էր նրան Թողնել այնտեղ։

—Էլ ինչ էք սպասում։ Պէտք է տանել ոստիկանատուն։ կառապան կանչիր։

—Բակապանը գնայ կանչելու,—ասաց փողոցային ոստիկանը, ձեռքը դնելով գլխարկի ճակատնոցին։

Գործակատարը սկսեց ինչ որ ասել չոքի մասին։

—Ձո ինչ գործն է այդ։ Գնա՝ ուր որ գնալու ես,—ասաց Թաղականը ու այնպէս խիստ կերպով նայեց գործակատարի վրայ, որ նա ձայնը կտրեց։

—Պէտք է ջուր տալ խմելու,—ասաց Նեխլիւդօվը։

Թաղականը խեթ-խեթ նայեց նաև Նեխլիւդօվի վրայ, բայց ոչինչ չասաց։ Իսկ երբ բակապանը մի Թասով ջուր բերեց, նա պատուիրեց փողոցային ոստիկանին՝ առաջարկել կալանաւորին։ Փողոցային ոստիկանը բարձրացրեց կալանաւորի քաչ ընկած գլուխը ու փորձեց ջուրը ածել բերանը, բայց կալանաւորը չէր խմում. ջուրը թափւում էր մրուքի վրայով ու թրջում բաճկոնի կուրծքը և քաթանէ փոշոտ վերնաշապիկը։

—Ածա գլխին,—հրամայեց Թաղականը, և փողոցային ոստիկանը հանեց կալանաւորի գլխից տափակ Թասակը ու ջուրը չուռ տուեց նրա կարմրաչէկ խուճուճ մազերի ու լերկ գանգի վրայ։

Կալանաւորի աչքերը աւելի նս լայն բացուեցին, կարծես վախեցրած, բայց նրա դրութիւնը չը փոխուեց. փոշիախառն ջուրը կեղտոտ հոսանքներով Թափւում էր նրա երեսի վրայով, բայց բերանը էլի համառօրէն հեծկլտում էր և ամբողջ մարմինը դնգռւում չզաձգաբար։

—Հապա սա ինչ է։ Այս կառքով տարէք,—դիմեց Թաղականը փողոցային ոստիկանին, ցոյց տալով Նեխլիւդօվի վարձած կառքը։—Է՛հ, դու, մօտեցիր այստեղ։

—Ռռնուած եմ,—մռայլ կերպով ասաց կառապանը, առանց աչքերը բարձրացնելու։

—Այդ իմ կառքն է,—ասաց Նեխլիւդօվը,—բայց ոչինչ, վերցրէք։ Ես կը տամ վարձը,—աւելացրեց նա, դիմելով կառապանին։

—Էլ ինչ էք կանգնել,—գոռաց Թաղական ոստիկանը։—Բարձրացրէք։

Փողոցային ոստիկանը, բակապանը և գինուորը բարձրացրին մնացող կալանաւորին ու տարան դրեցին կառքի մէջ։

Բայց կալանաւորը չէր կարողանում նստած մնալ,—գլուխը կախ էր ընկնում դէպի յետ և ամբողջ մարմինը նստելու տեղից սլլում էր ներքև։

—Պահպացրէք,—հրամայեց Թաղականը։

—Ոչինչ, ձերդ բարձննդութիւն, այսպէս էլ կը տանեմ,—ասաց փողոցային ոստիկանը, պինդ նստելով մեռնող կալանաւորի կողքին ու զօրեղ աջ ձեռքով գրկելով նրան կանաչելից։

Գինուորը բարձրացրեց կալանաւորի ոտները, որոնց բանտային ոտնամաններ էին հագցրած առանց փաթաթանների, և դրեց կառքի մէջ ու ձգեց դէպի կառապանի նստելու տեղը։

Թաղական ոստիկանը նայեց չուրջը և խճայատակի վրայ տեսնելով կալանաւորի տափակ Թասակը՝ վերցրեց ու դրեց նրա յետ ընկած Թայ գլխին։

—Մարշ,—հրամայեց նա։

Կառապանը բարկացած յետ նայեց, Թափ տուեց գլուխը, և գինուորի ուղեկցութեամբ կամաց-կամաց յետ քշեց կառքը դէպի Թաղական ոստիկանատունը։ Կալանաւորի կողքին նստած ոստիկանը անդադար գրկում էր կալանաւորի ներքև իջնող մարմինը, որի գլուխը ճօճւում էր ամեն կողմ։ Ուղեկցող գինուորը, որ գնում էր կողքիցը, ուզում էր կալանաւորի ոտները։ Նեխլիւդօվը գնաց նրանց յետևից։

XXXV

Մօտենալով Թաղական ոստիկանատանը ու անցնելով հրադեհաշէջ պահապանի մօտով, կալանաւորին տանող կառքը մօտաւ ոստիկանատան բակը ու կանգ առաւ դռներից մէկի առաջ։

Բակում հրդեհաշէջները, Թևերը քշտած, բարձրաձայն խօսելով ու ծիծաղելով լուանում էին իրանց կառքերից մէկը։

Հէնց որ կալանաւորին բերող կառքը կանգ առաւ, մի քանի հասարակ ոստիկաններ չրջապատեցին նրան, գրկեցին կալանաւորի անշունչ մարմինը կռնատակերից ու ոտներից և վեր առան տափներին ճոռացող կառքի վրայից։

Կալանաւորին բերող ոստիկանը, կառքից իջնելով, Թափ տուեց Թմրած ձեռքը, հանեց գլխարկը ու խաչակնքեց երեսը։ Մեռելին դռնով ներս մտցրին ու սանդուխով տարան վերև։ Նեխլիւդօվը գնաց նրա յետևից։ Մեռելին ներս տարան մի փոքրիկ ու կեղտոտ սենեակ, ուր կային 4 մահճակալներ։ Երկուսի վրայ՝ խալաթներ հագած նստած էին երկու հիւանդներ՝

մէկը մի ծուռբերան մարդ կապած վզով, միւսը՝ մի թոքախտաւոր։ Երկու մահճակալ ազատ էին։ Կալանաւորին դրեցին ներքանից մէկի վրայ։ Փայլուն աչքերով ու անդադար չարժուող յօնքերով մի փոքրիկ մարդուկ, որ միմիայն փոխնորդ ունէր հագին ու գուլպաներ, արագ ու մանր քայլերով մօտեցաւ կալանաւորին, նայեց նրան, յետոյ Նեխլիւդօվին ու սկսեց բարձրաձայն ծիծաղել։ Այդ մի խելագար էր, որ պահւում էր ոստիկանատան կից հիւանդանոցում։

—Ուզում են ինձ վախացնել,—ասաց նա։—Բայց չէ, չեն կարող։

Մեռելին ներս բերող ոստիկանների յետևից ներս մտան թաղական ոստիկանը և փելդշէրը։

Փելդշէրը, մօտենալով մեռելին, բռնեց կալանաւորի դեղնաւուն, պէպէնոտ, դեռ փափուկ, բայց արդէն մեռելատիպ գունատ ձեռքը, պահեց մի քիչ այդպէս ու յետոյ բաց թողեց։ Կալանաւորի ձեռքը անկենդան կերպով վայր ընկաւ փորի վրայ։

—Պատրոնց մօտ է գնացել,—ասաց փելդշէրը, թափ տալով գլուխը, բայց անչուշտ պահանջած կարգը կատարելու համար բաց արեց մեռելի անթափ թաց չապիկը և, յետ դնելով իր խուճուճ մազերը ականջի վրայից, երեսը դրեց կալանաւորի դեղնաւուն անշարժ բարձր կրծքին։ Ամենքը լուռ էին։ Փելդշէրը բարձրացրեց գլուխը, նորից թափ տուեց և մատով չօշափեց մեռելի կապտագոյն, սևեռուած ու բաց աչքերի վերին կոպերից մէկը, յետոյ միւսը։

—Ձեք կարող վախացնել, չէք կարող,—ասում էր խելագարը, ամբողջ ժամանակը թքելով դէպի փելդշէրի կողմը։

—Հը, ինչպէս է,—հարցրեց թաղական ոստիկանը։

—Ի՞նչպէս է,—կրկնեց փելդշէրը։—Պէտք է տանել մեռելատունը։

—Լաւ նայեցէք, հո չէք սխալւում,—հարցրեց թաղականը։

—Նո՛ր պէտք է սովորեմ, ինչ է,—ասաց փելդշէրը, չը գիտեմ ինչու ծածկելով մեռելի բաց կուրծքը։—Կ'ուղարկեմ Մատֆէյ Իլյանովիչի յետևից, թող նա էլ նայի։ Պետրօվ, գնա կանչի,—ասաց փելդշէրը ու հեռացաւ մեռելից։

—Տարէք մեռելատունը,—ասաց թաղական ոստիկանը։—Իսկ դու յետոյ արի դիւանատունը, որ ստորագրես,—աւելացրեց նա, դիմելով ուղեկցող զինուորին, որ ամբողջ ժամանակը չէր հեռանում կալանաւորից։

—Լսում եմ,—պատասխանեց զինուորը։

Փողոցային ոստիկանները վերցրին մեռելին ու նորից ներքև տարան սանդուխով։ Նեխլիւդօվը ուզում էր գնալ ներքանց յետևից, բայց խելագարը կանգնեցրեց նրան։

—Դուք էլ հո նրանց հետ դաւ չէք կազմել ինձ դէմ։ Մի պապիրոս տուէք ուրեմն,—ասաց նա։

Նեխլիւդօվը հանեց պապիրոսները ու մի հատ տուեց նրան։ Խելագարը, յօնքերը չարժելով ու սաստիկ արագ խօսելով, սկսեց պատմել, թէ ինչպէս են իրան տանջում հիպնօզացնելով։ Բոլորն էլ ինձ դէմ են և իրանց մէդիտումների միջոցով տանջում, չարչարում են ինձ...

—Ներողութիւն,—ասաց Նեխլիւդօվը և կիսատ թողնելով նրա ասածը՝ դուրս եկաւ բակը, որպէս զի իմանայ, թէ ուր են տանում մեռելին։

Ոստիկանները իրանց բեռով արդէն անցել էին ամբողջ բակը և մտնում էին ներքնատան դռնով։ Նեխլիւդօվը ուզեց մօտենալ նրանց, բայց թաղականը կանգնեցրեց նրան.

—Ի՞նչ էք ուզում։

—Ոչինչ,—պատասխանեց Նեխլիւդօվը։

—Որ ոչինչ, ուրեմն գնացէք ձեր բանին։

Նեխլիւդօվը հնազանդուեց ու գնաց դէպի իր կառքը։ Կառապանը ննջում էր։ Նեխլիւդօվը զարթեցրեց նրան ու պատուիրեց նորից քշել դէպի կայարան։

Դեռ 100 քայլ անցած չէր լինի, որ հանդիպեց դարձեալ մի սայլի, որին նոյնպէս ուղեկցում էր մի զինուոր հրացանը ձեռքին և որի վրայ պառկած էր մի ուրիշ, ահներևաբար արդէն մեռած կալանաւոր։ Կալանաւորը պառկած էր մէջքի վրայ, և սև միրուքաւոր ածիլած գլուխը, որի վրայի տափակ թասակը իջել էր մինչև քիթը, անդադար ճօճւում էր ու դիպչում սայլին։ Հաստ կօշիկներ հագած սայլապանը քշում էր ձին, քայլելով սայլի կողքից։ Ցեխից գալիս էր մի փողոցապահ ոստիկան։ Նեխլիւդօվը ձեռքը դիպցրեց կառապանի ուսին։

—Ինչեր են անում,—ասաց կառապանը, կանգնեցնելով ձին։

Նեխլիւդօվը իջաւ կառքից ու հետևելով սայլին՝ դարձեալ հրդեհաչէջ պահապանի մօտով մտաւ ոստիկանատան բակը։ Բակում այժմ հրդեհաչէջները արդէն լուացել վերջացրել էին իրանց կառքը, և նրանց տեղում կանգնած էր կապտերիզ գըլխարկ դրած բարձրահասակ ու ահռելի բրանդմայորը, որ ձեռները գրպանները խրած՝ խստօրէն նայում էր կծոտած վզով բաց դեղնագոյն մի նժոյգի, որին հրդեհաչէջ զինուորը ման էր ածում նրա առաջին։ Նժոյգը մի քիչ կաղում էր առաջի ոտ

վրայ, և բրանդմայորը բարկացած ինչ որ մի բան էր ասում այնտեղ կանգնած անասնաբոյժին։

Թաղական ոստիկանն էլ այնտեղ էր։ Տեսնելով երկրորդ մեռելին, նա մօտեցաւ ասլին։

—Ո՞րտեղ վերցրեցիք,—հարցրեց նա, չմահաւանօրէն թափ տալով գլուխը։

—Ստարայա Գօրբատօվսկայա փողոցում,—պատասխանեց փողոցային ոստիկանը։

—Կալանաւոր է,—հարցրեց բրանդմայորը։

—Հրամել էք։

—Այս երկրորդն է այսօր,—ասաց թաղականը։

—Լաւ կարգեր են։ Ասենք իրանք էլ մի բան չեն,—ասաց բրանդմայորը և դիմելով կաղ ձիուն տանող հրդեհաշէջին՝ գոռաց.—անկիւնի մսուրքի մօտ կանգնեցրու։ Իսկ քեզ, չուն չանորդի, ցոյց կը կամ, թէ ինչ կը նշանակի փչացնել այնպիսի մի ձի, որ քեզնից թանդ արժի։

Այդ մեռելին էլ փողոցային ոստիկանները վերցրին այնպէս, ինչպէս վերցրել էին առաջինին, ու տարան հիւանդանոցը։ Նեխլիւդօվը հիպնօզացածի նման գնաց նրանց յետևից։

—Ի՞նչ էք ուզում,—հարցրեց ոստիկաններից մէկը։

Նեխլիւդօվը առանց պատասխանելու չարունակեց գնալ նրանց յետևից։

Ախլադարը, մահճակալի վրայ նստած, ագահաբար ծխում էր Նեխլիւդօվի տուած պապիրոսը։

—Հը՛, վերադարձաք,—ասաց նա ու սկսեց քրքջալ։ Մեռելին տեսնելով, նա կնճռեց դէմքը։—Դարձեալ,—ասաց նա։—Ջանձրայրին բոլորովին։ Երեխայ հօ չեմ։ Ճիշտ եմ ասում, չէ,—դիմեց նա Նեխլիւդօվին հարցական կերպով ժպտալով։

Իսկ Նեխլիւդօվը այդ միջոցին նայում էր մեռելին, որին այժմ այլ ևս ոչ ոք չէր պօզում նրանից և որի դէմքը, որ առաջ ծածկուած էր գլխարկի տակ, այժմ բոլորովին բաց էր։ Որքան այն առաջին կտրուածքը այլանդակ էր, այնքան սա չափից վեր գեղեցիկ էր թէ դէմքով, թէ ամբողջ մարմնով։ Այժերի ամենածաղկած վիճակում գտնուող մի տղամարդ էր այդ։ Զբ նայելով գլխի մի կէսին, որ այլանդակուած էր ածիլելու չնորհիւ, յածիկ և ուղղաձիգ ճակատը, որ բարձրութիւններ էր կազմում նրա սեռրակ, այժմ անկենդան, աչքերի վերևում, շատ գեղեցիկ էր, ինչպէս նաև փոքրիկ ու մի քիչ կոր քիթը և բարակ ու սև բեխերը։ Արդէն կապտած շրթունքները ժպիտ էին արտայայտում. փոքրիկ միրուքը հաղիւ ծրում էր դէմքի ներքևի մասը, իսկ գանդի ածիլած կողմից երևում էր

գեղեցիկ ականջը։ Դէմքի արտայայտութիւնը և՛ անդորր էր, և՛ խիտա, և՛ բարի։ Մի կողմ թողած այն, որ այդ դէմքից երեւում էր, թէ հոգեկան կեանքի ինչ հնարաւորութիւններ էին ոչնչացրած այդ մարդու մէջ,—ձեռքերի ու չղթայակապ ոտների նուրբ ոսկորներից ու բոլոր համաչափ անդամների զօրեղ մկաններից երեւում էր, թէ նոյն իսկ լոկ իբրև մարդկային ցեղին պատկանող մի կենդանի՝ որքան աքանչելի, հուժկու ու ճարպիկ արարած էր այդ, մի արարած, որ իր տեսակում աւելի կատարեալ կենդանի էր, քան այն բոլոր դեղնագոյն նժոյգը, որը փչացնելու համար այնքան բարկանում էր բրանդմայորը։ Եւ սակայն նրան մահացրել էին, և ոչ միայն ոչ ոք չէր խղճում նրան, իբրև մարդու, այլ և ոչ ոք չէր խղճում նրան, իբրև զուր փչացած աշխատաւոր կենդանու։ Միակ զգացմունքը, որ բոլոր չրջապատողների մէջ զարթեցնում էր այդ մարդու մահը, այն էր, որ դժկամակութեամբ մտածում էին այն գլխացաւանքի մասին, որ պատճառում էր նրանց այդ՝ քայքայուել սպառնացող մարմինը մի կերպ հեռացնելու անհրաժեշտութիւնը։

Հիւանդանոցը մտան բժիշկը, փելդշէրը ու քաղաքամասի ոստիկանը։ Բժիշկը մի հուժկու և կարճ ու թիկնաւէտ մարդ էր չէտունչէ պիջակով ու նոյն կտորից նեղ անդրավարտիքով, որ քիփ չրջապատում էր նրա մկանուտ ազդրերը։ Քաղաքամասի ոստիկանը մի փոքրիկ ու հասակիկ մարդ էր գնդաձև և կարմիր երեսով, որ աւելի ևս կլոր ձև էր ստանում, որովհետև նա սովորութիւն ունէր թշերի մէջ հաւաքել օդը ու յետոյ կամաց-կամաց դուրս թողնել բերնից։ Բժիշկը նստեց մահճակալի վրայ մեռելի կողքին և նոյնպէս, ինչպէս փելդշէրը, բռնեց ձեռքերը, ականջը դրեց սրտին ու վեր կացաւ նեղքն ձգելով անդրավարտիքը։

—Սրանից էլ կարգին մեռնել չի լինի,—ասաց նա։

Քաղաքամասի ոստիկանը բերանը լցրեց օդով ու կամաց-կամաց բաց թողեց դուրս։

—Ո՞ր բանտիցն է,—դիմեց նա ուղեկցող զինուորին։

Զինուորը պատասխանեց ու յիշեցրեց մեռելի տներին կապած շղթայի մասին։

—Կը հրամայեմ հանեն, վաւրէ Աստուծու դարբիններ կան,—ասաց քաղաքամասի ոստիկանը ու նորից ուռցնելով թշերը, գնաց դէպի դուռը, կամաց-կամաց դուրս թողնելով բերնից օդը։

—Ինչո՞ւ է այդպէս լինում,—դիմեց Նեխլիւդօվը բժշկին։

Բժիշկը նայեց նրան ակնոցի վրայով։

—Ի՞նչն է ինչից լինում։ Որ արնահոսութիւնից մեռ-

նում են. նրանից, որ ամբողջ ձմեռը առանց չարժուելու ու առանց լոյս տեսնելու նստած են լինում բանտում, և յանկարծ դուրս են թողնում արևի մէջ, այն էլ այսօրուայ նման մի օր, ու ահագին խմբով գնում են իրար յետևից։ Ի հարկէ, արևը կը տայ գլխներին։

—Որ այդպէս է, ինչո՞ւ են նրանց ուղարկում այսպիսի ժամանակ։

—Ուղարկողներից հարցրէք այդ։ Բայց դուք մեռելի ինչն էք։

—Ոչինչ։

—Որ այդպէս է... ներողութիւն, ես ժամանակ չունեմ, —ասաց բժիշկը ու բարկացած՝ ներքև ձգելով անդրավարտիքը, գնաց դէպի հիւանդների մահիճները։

—Հը՛, ինչպէս են գործերդ,—դիմեց նա վիզը կապած ու ծուռբերան գունատ հիւանդին։

Իսկ խելագարը այդ միջոցին նստած էր իր մահճակալի վրայ ու, դադարելով ծխելուց, թքում էր բժշկի ուղղութեամբ։

Նեխլիւդօվը իջաւ բակը և, անցնելով հրդեհաշէջների ձիերի, հաւերի ու պղնձէ սաղաւարտով հրդեհաշէջ պահապանի մօտով՝ դուրս եկաւ դարպասովը և նստելով կառքը ու զարթեցնելով կառապանին, որ դարձեալ ննջում էր, գնաց երկաթուղու կայարանը։

XXXVI

Երբ Նեխլիւդօվը հասաւ կայարան, կալանաւորները բոլորն էլ արդէն նստել էին վանդակաձեւ պատուհաններով վագոնները։ Պլատֆօրմում կանգնած էին մի քանի ճանապարհ գնողներ. նրանց՝ մօտ չէին թողնում վագոններին։ Ուղեկցող զինուորները այսօր առանձնապէս մտահոգ էին։ Բանտից մինչև կայարանը ճանապարհին արևահարութիւնից վայր էին ընկել ու մեռել, բացի Նեխլիւդօվի տեսած երկու հոգուց, էլի երեք հոգի. մէկին, առաջին երկուսի նման, տարել էին մօտակայ ոստիկանատունը, իսկ երկուսը վայր էին ընկել կայարան հասնելուց յետոյ *)։ Զինուորները մտահոգ էին ոչ այն պատճառով, որ իրանց ուղեկցած կալանաւորների մէջից մեռել էին հինգ հոգի, որոնք կարող էին կենդանի մնալ։ Այդ նրանց չատ փոյթը չէր։ Նրանց հոգս էր պատճառում այն, թէ ինչպէս կատարեն այն բոլորը, որ օրէնքով պահանջւում է այդպիսի դէպքերում։ Պէտք էր մեռելներին և նրանց թղթերն ու բաները յանձնել ուր հարկն է և հանել նրանց անունները այն կալանաւորների ցանկից, որոնց պէտք էր տանել Նիժնիյ, իսկ այդ չատ դլխացաւանք բան էր, մանաւանդ այդպիսի չոր ժամանակ։

Դրանով էին զբաղուած զինուորները, ուստի և, մինչև այդ բոլոր կարգադրութիւնները վերջացնելը, չէին թողնում Նեխլիւդօվին և ուրիշ խնդրողներին՝ մօտենալ վագոններին։ Նեխլիւդօվին այնու ամենայնիւ թոյլ տուեցին, որովհետև նա փող տուեց ունտեր-օֆիցէրներից մէկին։ Այդ ունտեր-օֆիցէրը ճանապարհ տուեց Նեխլիւդօվին, միայն թէ խնդրեց, որ չուտով վերջացնի խօսելիքը ու հեռանայ վագոնից, որպէս զի օֆիցէրը չը տեսնի։ Գնացքում 18 վագոն կար և բոլորն էլ, բացի իշխանաւորների վագոնից, լիք-լեցուն էին կալանաւորներով։ Վագոնների պատուհանների մօտով անցնելիս Նեխլիւդօվը ականջ էր դնում, թէ ինչ է կատարւում ներսը։ Բոլորումն էլ լսւում էր չղթաների չաչիւն, իրարանցում, խօսակցութեան աղմուկ, լի անմիտ պղծախօսութեամբ, բայց Նեխլիւդօվի սպասածի հակառակ՝ ոչ մի տեղ չէին խօսում ճանապարհին ընկած ընկերների մասին։ Խօսակցութիւնները աւելի վերաբերում էին տոպրակներին, խմելու ջրին ու տեղի ընտրութեանը։ Վագոններից մէկի պատուհանով ներս նայելով, Նեխլիւդօվը տեսաւ վագոնի մէջտեղում, անցքում՝ երկու ուղեկցող զինուորների, որոնք հանում էին կալանաւորների ձեռնակապերը։ Կալանաւորները մեկնում էին կռները և զինուորներից մէկը բանալիքով բանում էր ձեռնակապերի կողպէքը ու հանում չղթաները նրանց ձեռներից, իսկ միւսը հաւաքում էր չղթաները։ Տղամարդկանց բոլոր վագոնների մօտով անցնելուց յետոյ Նեխլիւդօվը մօտեցաւ կանանց վագոններին։ Այդ վագոններից երկրորդի մէջ լսւում էր համաչափ կանացի հեծեծանք և վայնասուն՝ «Օ՛ֆ, Տէր Աստուած։ Օ՛ֆ, Տէր Աստուած»։

Նեխլիւդօվը այդ վագոնն էլ անցաւ և այնտեղ կանգնած ուղեկցող զինուորի յուսմունքով մօտեցաւ երրորդ վագոնի պատուհանին։ Հէնց որ Նեխլիւդօվը դլուխը մօտեցրեց այդ վագոնի պատուհանին, ներսից վրան փչեց տաք օդ, լի մարդկային քրտինքի թանձր հոտով, և պարզ կերպով լսւեցին կանացի ճղղան ձայներ։ Բոլոր նստարանների վրայ նստոտած էին ու

*) 80-ական թուականների սկզբում հինգ կալանաւոր մի օրում մեռան այն միջոցին, երբ նրանց տանում էին Մոսկուայի Բուտիրկա բանտից Նիժնիյ-Նովգորոդի երկաթուղու կայարանը։ Ծան. հեղ.

պիլ ձայնով խօսում էին կարմրատակած ու քրտնաթոր կառնապ խալաթներով ու բաճկոններով։ Երբ Նեխլիւդովը երևնը մօտեցրեց պատուհանի վանդակին, այդ պրաւեց նրանց ուշադրութիւնը։ Մօտիկ նստածները լռեցին ու մօտեցան նրան։ Մասլովան՝ միայն բաճկոնով և գլուխը բաց նստած էր դիմացի պատուհանի մօտ։ Աւելի դէսը նստած էր սպիտակ ու ժպտուն Ֆեդօսեան։ Նեխլիւդովին ճանաչելով, նա հրեց Մասլովային ու ձեռքով ցոյց տուեց պատուհանի կողմը։ Մասլովան, որի կարմրած ու քրտնաթոր դէմքը իսկոյն աչխուժացաւ ու սկսեց ժպտալ, չտապով վեր կացաւ, գլխաչորը գցեց սև մազերի վրայ և մօտեցաւ պատուհանին ու բռնեց վանդակը։

—Համա չոր է հա,—ասաց նա՝ ուրախ-ուրախ ժպտալով։

—Բանները ստացաք։

—Շնորհակալ եմ, ստացայ։

—Էլ ոչինչ պէտք չի,—հարցրեց Նեխլիւդովը, զգալով թէ ինչպէս ջեռուցած վագոնից տաքութիւնը փչում է երեսին, կարծես բաղնիսի մէջից։

—Շնորհակալ եմ, ոչինչ պէտք չի։

—Ջուր որ լինէր խմէինք, չատ լաւ կը լինէր,—ասաց Ֆեդօսեան։

—Հա, լաւ կը լինէր,—կրկնեց Մասլովան։

—Բայց միթէ այդտեղ ջուր չը կայ խմելու։

—Ջուր գնում են, բայց բոլորը խմել պրծել ենք։

—Այս րոպէիս,—ասաց Նեխլիւդովը,—կը խնդրեմ գինուորից։ Էլ այժմ մինչև Նիժնիյ չենք տեսնուի։

—Բայց միթէ դուք էլ էք գալիս,—իբր թէ չհամնալով հարցրեց Մասլովան, ուրախ-ուրախ նայելով Նեխլիւդովին։

—Հետևեալ գնացքով ճանապարհ կ'ընկնեմ։

Մասլովան ոչինչ չասաց ու միայն մի քանի վայրկեան անցած խոր հոգոց քաշեց։

—Ճիշտ է, պարոն, որ 12 կալանաւոր մահացել են ճանապարհին,—կոպիտ գեղջկային ձայնով հարցրեց մի պառաւ ու դաժան կալանաւորուհի։

Կօրաբլեովան էր այդ։

—Լաւած չը կամ, թէ տասներկու հոգի են։ Ես տեսայ երկուսին,—ասաց Նեխլիւդովը։

—Աստւած ներ, տասներկու հոգի են։ Միթէ դրա համար ոչինչ չի լինի այդ օձի ծնունդներին։

—Իսկ կանանցից ոչ ոք չի հիւանդացել,—հարցրեց Նեխլիւդովը։

—Կինարամասները պինդերես են,—ծիծաղելով ասաց մի փոքրիկ կալանաւորուհի,—բայց մէկի խելքը չը գիտեմ ինչ է փչել, ուզում է երեխայ բերել։ Լաւում էք, ինչպէս է ձայնը դլուխը գցել,—չարունակեց նա, ցոյց տալով հարևան վագոնը, որտեղից չարունակ լսւում էին հեծեծանքներ։

—Հարցնում էիք, ոչինչ հարկաւոր չի,—ասաց Մասլովան, աշխատելով պահել չրթունքները ուրախ ժպտալուց,—չի կարելի արդեօք թողնել այդ կնոջը, թէ չէ խեղճը սարսափելի տանջւում է։ Չէիք կարող ասել իշխանաւորին։

—Շատ լաւ, կ'ասեմ։

—Մէկ էլ չի կարելի արդեօք, որ սրան թողնեն տեսնուի իր մարդու, Տարասի հետ,—աւելացրեց նա, աչքերով ցոյց տալով ժպտացող Ֆեդօսեայի վրայ։—Նա ձեզ հետ է գալիս, չէ։

—Պարոն, չի կարելի խօսել,—լսուեց ունտեր-օֆիցէրներից մէկի ձայնը։ Այդ այն ունտեր-օֆիցէրը չէր, որ թոյլ էր տուել Նեխլիւդովին մօտենալ վագոնին։

Նեխլիւդովը հեռացաւ ու գնաց փնտռելու օֆիցէրին, որպէս զի խնդրէր ազատուող կնոջ ու Տարասի մասին, բայց երկար ժամանակ ոչ կարողանում էր գտնել նրան, ոչ էլ մի պատասխան ստանալ գինուորներից։ Գինուորները սաստիկ իրարանցման մէջ էին. ոմանք մի կալանաւորի տանում էին ինչ-որ մի տեղ, միւսները վազում էին մթերքներ գնելու ճանապարհի համար ու դարսում էին իրանց բանները վագոնները, ոմանք էլ կատարում էին օֆիցէրի հետ գնացող տիկնոջ պատուէրները, և առհասարակ չկամութեամբ էին պատասխանում Նեխլիւդովի հարցերին։

Նեխլիւդովը օֆիցէրին տեսաւ միայն այն ժամանակ, երբ արդէն խփել էին երկրորդ զանգը։ Օֆիցէրը, ուսերը վեր քաշած ու կարճլիկ ձեռքովը սրբելով բերանը ծածկող բեխերը, ինչ որ մի բանի համար յանդիմանում էր ֆէլդֆէբէլին։

—Ի՞նչ էք ուզում,—հարցրեց նա Նեխլիւդովից։

—Այնտեղ մի կին ազատւում է վագոնում, կարծում եմ...

—Ազատւում է թող ազատուի, այն ժամանակ կը տեսնենք, թէ ինչ է հարկաւոր անել,—ասաց օֆիցէրը գնալով իր վագոնը և ժիր-ժիր ճօճելով կարճ ձեռքերը։

Այդ ժամանակ անցաւ կօնդուկտօրը սուլիչը ձեռքին. լսուեց վերջին զանգը ու սուլոցը և պատփօրմում կանգնած ճանապարհ դնողների մէջ ու կանանց վագոնում սուզ ու չիւան բարձրացաւ։ Նեխլիւդովը կանգնած էր պատփօրմում Տարասի կողքին և նայում էր, թէ ինչպէս միմեանց յետևից նրա մօտով կամաց-կամաց անցնում էին վագոնները վանդակապատ

պատուհաններով, որոնց միջով երևում էին ածիլուած առնական գլուխներ։ Ցետոյ Նրան հասաւ կանանց առաջին վագօնը, որի պատուհանում երևում էին բաց և ծածկած կանացի գլուխներ, յետոյ երկրորդ վագօնը, որտեղից դարձեալ լսւում էր նոյն կանացի հեծեծանքը, յետոյ այն վագօնը, որտեղ գտնւում էր Մասլօվան։ Նա միւսների հետ կանգնած էր պատուհանի մօտ, նայում էր Նեխլիւդօվին և աղիողորմ ժպտում նրան։

XXXVII

Մինչև այն դնայքը, որով ճանապարհ էր ընկնելու Նեխլիւդօվը, դեռ երկու ժամ կար։ Սկզբում Նա մտադիր էր այդ ժամանակամիջոցում գնալ քրոջ մօտ, բայց այժմ, այդ առաւօտուայ տպաւորութիւններից յետոյ, Նա այն աստիճան յուզուած ու ջարդուած էր, որ նստեց մի բազմոցի վրայ առաջին կարգի ուղևորների դահլիճում և բոլորովին անսպասելի կերպով այնպիսի քնկոտութիւն զգայ, որ չուռ եկաւ մի կողքի վրայ, ձեռքը դրեց երեսի տակը ու իսկոյն և նիթ քնեց։

Նրան զարթեցրեց մի լաքէյ՝ թուաւկիր ֆրակը հագին ու անձեռոցիկը ձեռքին։

—Պարոն, պարո՛ն, դուք չէք իչխան Նեխլիւդօվը։ Մի տիկին ձեզ փնտռում է։

Նեխլիւդօվը՝ աչքերը տրորելով վեր թռաւ տեղից և յիշեց որտեղ լինելը և այն բոլորը, որ տեղի էր ունեցել այդ առաւօտ։

Նրա յիշողութեան մէջ պատկերանում էին՝ կալանաւորների յուզարկախումբը, մեռելները, վանդակապատ վագօնները և այնտեղ փակուած կանայք, որոնցից մէկը անօգնական չարչարւում է երկունքի մէջ, իսկ միւսը աղիողորմ կերպով ժպտում է իրան երկաթէ վանդակի միջով։ Իսկ իրականութեան մէջ բոլորովին ուրիշ պատկեր էր նրա առաջին. մի երկար սեղան, որի վրայ դարսած էին չիլերներ, անօթներ, աչտանակներ և կերակրատարքեր, սեղանի չուրջը իրար անցնող մեր լաքէյներ, դահլիճի խորքում, պատուհաններով լի անօթների ու չիլերի յետևին և պահարանի առջևում կանգնած բուֆէտ պահողը և բուֆէտի մօտ կանգնած ճանապարհորդների մէջքերը։

Այն ժամանակ, երբ Նեխլիւդօվը պառկած տեղից վեր թռաւ նստեց ու սկսեց քիչ-քիչ ուշքի գալ, Նա նկատեց, որ դահլիճում եղողները բոլորն էլ հետաքրքրութեամբ նայում են դռան մէջ կատարուող ինչ որ մի բանի։ Նա էլ նայեց այն կողմը և տեսաւ մարդկանց մի խումբ, որոնք ներս էին բե-

րում բազկաթոռի մէջ դրած մի տիկնոջ, որ գլխին փաթաթած ունէր չղարչէ քօղ։ Առջևի բեռնակիրը մի լաքէյ էր, որ ծանօթ թուաց Նեխլիւդօվին։ Ցետևի բեռնակիրն էլ ոսկերիզապատ գլխարկով մի դռնապան էր, նոյնպէս ծանօթ Նեխլիւդօվին։ Բազկաթոռի յետևից գալիս էր գոգնոցաւոր ու խոպոպաւոր մի գողտրիկ աղախին, որ ձեռքին ունէր մի կապոց—ինչ որ կոլոր բան կաշուէ ամանում ու հովանոցներ։ Նրա յետևից կուրծքը դուրս ցցած և ճանապարհորդական գլխարկ դրած գալիս էր իչխան Կօրչագինը իր հաստ պռօշներով ու կաթուածահար վզով և ապա Միսսին, Միչան (նրանց ազգականը) և Նեխլիւդօվի ծանօթ դիւանագէտ Օստէնը իր երկար վզով, դուրս պրծած խոչափողով և մշտական ուրախ տեսքով ու տրամադրութեամբ. Նա ինչ որ ասում էր ժպտացող Միսսին ազդու կերպով, բայց ակնհաճոյ կատակով։ Ամենից վերջը գալիս էր բժիշկը, բարկացած ծխելով բերնի պապիրոսը։

Կօրչագինները իրանց քաղաքամերձ կալուածքից տեղափոխւում էին իչխանի քենու կալուածքը, որ գտնւում էր Նիժնիյ-Նովգօրօդի երկաթուղու գծի վրայ։

Ծառաները, աղախինը և բժիշկը անցան գնացին կանանց սենեակը, հետաքրքրութիւն և պատկառանք ազդելով բոլոր ներկայ եղողներին։ Իսկ ծեր իչխանը նստեց մի սեղանի մօտ ու իսկոյն նեթ կանչելով լաքէյներից մէկին՝ սկսեց ինչ որ պատուիրել նրան։ Միսսին ու Օստէնը նոյնպէս մնացին սեղանատանը և այն է ուզում էին նստել, որ դռան մէջ տեսան մի ծանօթ կնոջ ու գնացին նրան ընդ առաջ։ Այդ ծանօթ կինը Նատալիա Իվանօվնան էր։ Նատալիա Իվանօվնան, որ հետը բերել էր Սդրաֆինա Պետրօվնային, մտաւ սեղանատուն, չորս կողմը նայելով։ Նա գրեթէ միաժամանակ տեսաւ Միսսիին ու իր եղբօրը։ Նա առաջ մօտեցաւ Միսսիին, միայն գլխով անելով եղբօրը։ Բայց համբուրուելով Միսսիի հետ, Նա իսկոյն դիմեց Նեխլիւդօվին։

—Վերջապէս գտայ քեզ,—ասաց Նա։

Նեխլիւդօվը վեր կացաւ, բարևեց Միսսիին, Միչային և Օստէնին և սկսեց կանգնած խօսել։ Միսսին պատմեց նրան, թէ ինչպէս իրանց տունը գիւղում այրուեց, այնպէս որ ստիպուած են տեղափոխուել մօրաքրոջ մօտ։ Օստէնը այդ առիթով սկսեց մի ծիծաղելի անէկդօտ պատմել հրդեհի մասին։

Նեխլիւդօվը, ականջ չը դնելով Օստէնի ասածին, դիմեց քրոջը։

—Շատ ուրախ եմ, որ եկար։

—Ես վաղուց եմ եկել,—ասաց նա։—Ես ու Ագրաֆենա Պետրօվնան,—նա ցոյց տուեց Ագրաֆենա Պետրօվնայի վրայ, որ գլխարկը գլխին ու վատէրպրուֆը հագին փաղաքշանքի և արժանապատուութեան արտայայտութեամբ և քաշուելով հեռուից գլուխ տուեց Նեխլիւդօվին, չուզելով խանգարել նրան,—մեռանք քեզ փնտռելով։

—Իսկ ես այստեղ թիին տուեցի ու քունս տարաւ։ Շատ ուրախ եմ, որ եկար,—կրկնեց Նեխլիւդօվը։—Ես ուզում էի քեզ նամակ գրել, մինչև անգամ սկսեցի գրել,—ասաց նա։

—Նամակ,—հարցրեց քոյրը վախուորած։—Ինչի՞ մասին։

Միասին ու կաւալէրները, նկատելով, որ քոյր ու եղբօր մէջ մտերիմ խօսակցութիւն է սկսւում, մի կողմ քաշուեցին. իսկ Նեխլիւդօվն ու քոյրը նստեցին պատուհանի մօտ մի թաւշապատ բազմոցի վրայ, ուր որ բաների, պլէդի ու գլխարկամանի կողքին։

—Երէկ, ձեզնից հեռանալուց յետոյ, ուզում էի վերադառնալ ու ներողութիւն խնդրել, բայց չը գիտէի, թէ ինչպէս կ'ընդունի նա,—ասաց Նեխլիւդօվը։—Ես լաւ չէի խօսում քո մարդու հետ, և այդ յետոյ տանջում էր ինձ,—ասաց նա։

—Ես գիտէի, ես հաւատացած էի,—ասաց քոյրը,—որ դու չէիր ուզում։ Դու հո գիտես...

Եւ աչքերը արտասուակալեցին ու նա բռնեց եղբօր ձեռքը։ Այդ նախադասութեան մէջ քնքշութիւն կար. Նեխլիւդօվը լիովին հասկացաւ քրոջ ասածը ու խանդավառուեց այդ ասածի իմաստից։ Քրոջ խօսքերի իմաստն այն էր, որ բացի դէպի մարդը տածած սէրից, որով տոգորուած է նրա ամբողջ էութիւնը, նրա համար մեծ նշանակութիւն ունի և շատ թանգ է նաև դէպի եղբայրը տածած սէրը և որ ամեն մի գժտութիւն նրանց մէջ՝ ծանր տանջանք է իր համար։

—Շնորհակալ եմ քեզնից, չնորհակալ եմ։ Ախ, եթէ իմանայիր ինչ տեսայ այսօր,—ասաց նա յանկարծ յիշելով երկրորդ մեռած կալանաւորին։—Երկու կալանաւորի մահացրեցին։

—Ի՞նչպէս թէ մահացրեցին։

—Ուղղակի մահացրեցին։ Այս չոքով բերեցին կայարան և երկուսը մեռան ճանապարհին արևահարութիւնից։

—Չէ՛։ Ճի՛շտ։ Այսօր։ Հէնց այժմ։

—Այո, հէնց այժմ։ Ես իմ աչքովս տեսայ նրանց դիակները։

—Բայց ինչո՞ւ մահացրեցին։ Ո՞վ մահացրեց,—հարցրեց Նատալիա Իվանօվնան։

—Նրանք մահացրին, որոնք զօռով կայարան բերեցին նրբանց,—դժգոհած ասաց Նեխլիւդօվը, զգալով, որ քոյրը այդ բանի վրայ էլ նայում է իր մարդու հայեացքով։

—Ա՛խ, Տէր Աստուած,—ասաց Ագրաֆենա Պետրօվնան, որ մօտեցել էր նրանց։

—Այո, մենք ամենայնիւնին զազափար անդամ չունենք, թէ ինչեր են կրում այդ խեղճ մարդիկը, իսկ այդ պէտք է իմանալ,—աւելացրեց Նեխլիւդօվը, նայելով ծեր իշխանին, որ անձեռոցիկը վզի տակիցը կապած և չիչը առաջին՝ նստած էր սեղանի մօտ և հէնց այդ ժամանակ յետ նայեց Նեխլիւդօվի վրայ։

—Նեխլիւդօվ,—ձայն տուեց նա,—չէք ուզի մի քիչ զովանալ։ Ճանապարհ գնալուց առաջ շատ լաւ է։

Նեխլիւդօվը հրաժարուեց ու չուռ եկաւ։

—Շատ լաւ, բայց ինչ կարող ես անել,—չարունակեց Նատալիա Իվանօվնան։

—Ինչ որ ձեռքիցս գայ։ Ջը գիտեմ, թէ ինչ, բայց զգում եմ, որ պարտական եմ մի բան անել։ Եւ ինչ որ կարողանամ, կ'անեմ։

—Լաւ, ես հասկանում եմ։ Բայց սրանից հետ,—ասաց քոյրը՝ ժպտալով և աչքերով կօրչագինի վրայ ցոյց տալով,—մի՞թէ բոլորովին վերջացրել ես։

—Բոլորովին, և, կարծում եմ, նրանք էլ չեն ցաւում այդ բանի մասին։

—Ափսո՛ս։ Ես ցաւում եմ։ Ես Միսսիին սիրում եմ։ Բայց լաւ, դիցուք այդ այդպէս լինի։ Սակայն ինչո՞ւ ես ուզում կապել ձեռք ու ոտք,—աւելացրեց նա վախկոտելով։—Ինչու՞ ես գնում։

—Գնում եմ, որովհետև պէտք է գնալ,—լուրջ ու չոր կերպով ասաց Նեխլիւդօվը, կարծես ուզելով ընդհատել այդ խօսակցութիւնը։

Բայց իսկոյն և նա ամօթ զգաց քրոջ հետ այդպէս սառնութեամբ խօսելու համար։ «Ինչո՞ւ չասեմ նրան այն բոլորը, ինչ որ մտածում եմ,—մտածեց նա։—Եւ թող Ագրաֆենա Պետրօվնան էլ լսի»,—ասաց նա ինքն իրան, նայելով պառաւ աղախնի վրայ։

Ագրաֆենա Պետրօվնայի ներկայութիւնը աւելի նա դրդեց նրան կրկնել քրոջը իր վճիռը։

—Դու խօսում ես կատուշայի հետ պահուելու դիտաւորութեանս մասին։ Այո, ես վճռել եմ պահուել, բայց նա հասատատ կերպով և որոշակի մերժեց իմ առաջարկութիւնը,—ասաց

Նա և նրա ձայնը դողաց, ինչպէս դողում էր միշտ, երբ նա խօսում էր այդ բանի մասին։—Նա չի ուզում զոհաղութիւն ընդունել ինձանից, իսկ ինքը, իր դրութեան մէջ, շատ բան է զոհում դրանով։ Ես չեմ կարող ընդունել այդ զոհաղութիւնը, եթէ մի րոպէական բան է այդ։ Ուստի և գնում եմ նրա յետեւից և կը լինեմ այնտեղ, ուր նա կը լինի, և որքան ձեռքիցս գայ կ'օգնեմ նրան, կը թեթեւացնեմ նրա վիճակը։

Նատալիա Իվանօվնան ոչինչ չասաց։ Ագրաֆենա Պետրօվնան հարցական կերպով նայում էր Նատալիա Իվանօվնային ու թափ տալիս գլուխը։ Այդ ժամանակ կանանց սենեակից դեղկատէմ լաքէյ Ֆիլիպպը և դռնապանը դուրս բերեցին բազկաթոռի վրայ իշխանուհուն։ Նա կանգնեցրեց իրան տանողներին, ձեռքով կանչեց իր մօտ Նեխլիւդօվին և աղիողորմ մղկտալով՝ մեկնեց նրան մատանիազարդ սպիտակ ձեռքը, սարսափով սպասելով պինդ սղմումի։

—Epouvantable! (սարսափելի է),—ասաց նա չոքի մասին։—Չեմ կարողանում դիմանալ։ Ce climat me tue (այս կլիման ինձ սպանում է)։—Եւ խօսելով Ռուսաստանի կլիմայի սարսափելիութեան մասին ու հրաւիրելով Նեխլիւդօվին գնալ իրանց մօտ, նա նշան արեց իրան տանողներին։—Տեսէք, անպատճառ եկէք,—աւելացրեց նա, հեռանալիս չուռ տալով դէպի Նեխլիւդօվը իր երկար դէմքը։

Նեխլիւդօվը դուրս եկաւ պլատֆօրմը։ Իշխանուհուն տանողները ծռուեցին դէպի աջ, դէպի առաջին կարգի վագօնը։ Իսկ Նեխլիւդօվը իր բանները տանող ծանրոցակրի հետ և Տարասը իր տոպրակներով՝ գնացին դէպի ձախ։

—Սա է իմ ճանապարհի ընկերը,—ասաց Նեխլիւդօվը քրոջը, ցոյց տալով Տարասի վրայ, որի պատմութիւնը առաջուց պատմել էր նրան։

—Մինչէ երրորդ կարգովն ես գնում,—հարցրեց Նատալիա Իվանօվնան, երբ որ Նեխլիւդօվը կանգ առաւ երրորդ կարգի վագօնի առաջ և ծանրոցակիրն ու Տարասը մտան այնտեղ։

—Այո, այսպէս աւելի յարմար է ինձ համար, այստեղ Տարասի հետ միասին կը լինեմ,—ասաց Նեխլիւդօվը։—Հա, չը մոռանամ,—աւելացրեց նա,—Կուզմինսկոյէ կալուածում դեռ հողը չեմ տուել գիւղացիներին, այնպէս որ եթէ մեռնեմ՝ քո որդիները կը ժառանգեն։

—Ինչեր ես ասում, Դմիտրէյ,—ասաց Նատալիա Իվանօվնան։

—Իսկ եթէ տամ էլ, այնքանը միայն կարող եմ ասել, որ

մնացած բոլորը քո երեխաներինը կը լինի, որովհետև դժուար թէ ես ամուսնանամ։ Իսկ եթէ ամուսնանամ էլ, երեխաներ չեմ ունենայ... այնպէս որ...

—Դմիտրէյ, խնդրում եմ, այդպիսի բաներ մի ասիլ,—պնդում էր Նատալիա Իվանօվնան, և սակայն Նեխլիւդօվը տեսնում էր, որ նա ուրախացաւ լսելով իր ասածը։

Առաջի կողմում առաջին կարգի վագօնների դիմացը միայն մարդկանց մի փոքրիկ խումբ էր մնացել կանգնած, որ դեռ նայում էր այն վագօնի վրայ, ուր ներս էին տարել իշխանուհի Կօրչագինսկային։ Մնացած մարդիկ ամենքը տեղաւորուել էին վագօններում։ Ուշացած ուղեորները չտապ-չտապ վազում էին դէպի վագօնները, թխթխկացնելով պլատֆօրմի տախտակները, և կօնդուկտօրները փակում էին վագօնների դռները, առաջարկելով գնացողներին ներս մտնել, իսկ ճանապարհ դնողներին դուրս գալ։

Նեխլիւդօվը մտաւ արևից սաստիկ տաքացած ու գարշահոտ վագօնը և իսկոյն նեթ դուրս եկաւ կանգնեց վագօնի արտաքին մասում։

Նատալիա Իվանօվնան իր մօդայաձև գլխարկով ու վերարկուով կանգնած էր վագօնի դիմացը Ագրաֆենա Պետրօվնայի կողքին և աննկատաբար խօսակցութեան նիւթ էր փնտռում ու չէր կարողանում գտնել։ Չէր կարելի նոյն իսկ ասել «écrivez» (նամակ գրի), որովհետև նա ու եղբայրը վաղուց արդէն ծիծաղում էին ճանապարհորդների այդ սովորական խօսքի վրայ։ Դրամական գործերին ու ժառանգութեան վերաբերեալ խօսակցութիւնը իսկոյն չքացրեց նրանց մէջ ակսուած քնքոյշ քոյրեղբայրական յարաբերութիւնները։ Նրանք այժմ միմեանց վերաբերմամբ մի տեսակ խորթութիւն էին զգում։ Այնպէս որ Նատալիա Իվանօվնան ուրախացաւ, երբ գնացքը չարժուեց և երբ նա կարող էր արդէն, գլխով անելով, տխուր ու փաղաքշական դէմքով ասել՝ «գնաս բարև, Դմիտրէյ, գնաս բարև»։ Բայց հէնց որ վագօնը հեռացաւ, նա սկսեց մտածել, թէ ինչպէս հաղորդի ամուսնուն իր ու եղբօր խօսակցութիւնը, և դէմքը լուրջ ու մտահոգ արտայայտութիւն ստացաւ։

Նեխլիւդօվն էլ, թէև ոչինչ, բայց ամենաբարեացակամ զգայմունքներից, չէր տածում դէպի քոյրը և ոչինչ չէր ծածկում նրանից, նմանապէս այժմ նեղւում էր նրա ներկայութեամբ և ուզում էր որքան կարելի է չուտով ազատուել նրանից։ Նա զգում էր, որ այլևս դոյութիւն չունի այն Նատաչան, որ մի ժամանակ այնքան մօտ էր իրան, այլ կայ միմիայն իր համար օտար և անախորժ սև ու փրչոտ մարդու ստրկուհին։

Նա պարզ տեսաւ այդ, որովհետև Նատալիա Իվանօվնայի դէմքը առանձնապէս աչխուժացաւ միայն այն ժամանակ, երբ ինքը խօսեց այն բանի մասին, որ հետաքրքրեցնում էր նրա մարդուն—հողը գիւղացիներին տալու և ժառանգութեան մասին։ Եւ այդ տիրեցրեց Նեխլիւդօվի սիրտը։

XXXVIII

Ամբողջ օրուայ ընթացքում կիզիչ արևի տակ տաքացած և բաղմութեամբ լի՝ երրորդ կարգի մեծ վագոնում այնպէս խեղդուկ չոր էր, որ Նեխլիւդօվը չը մտաւ վագոնը, այլ մնաց դրսեում։ Բայց դրսեումն էլ տօթ էր, և Նեխլիւդօվը ամբողջ կրծքով չնչեց միայն այն ժամանակ, երբ վագոնները դուրս եկան տների արանքից և սկսեց փչել հակառակ քամի։ «Այո, մահացրեցին», կրկնեց նա մտքումը՝ քրոջը ասած խօսքերը։ Եւ նրա երևակայութեան մէջ այդ օրուայ բոլոր տպաւորութիւնների մէջից արտասովոր կենդանութեամբ զարթնեց երկրորդ մեռած կալանաւորի դեղնցիկ դէմքը չրթունքների ժպտուն արտայայտութեամբ, ճակատի խիտ արտայայտութեամբ և ածիլած, կապոյտին տուող գանգի տակին երևցող փոքրիկ ու ամուր ականջով։ «Եւ ամենաասրտաճմլիկն այն է, որ ապանեցին, բայց ոչ ոք չը գիտի, թէ ով է սպանողը։ Այդ կալանաւորին, ինչպէս և միւս բոլոր կալանաւորներին, տանում էին Մասլեննիկովի կարգադրութեամբ։ Մասլեննիկովը հաւանական օրէն ըստ իր տեսութեան արել էր իր կարգադրութիւնը, տատրագրել էր տպած մակագրութեամբ թուղթը իր չէմար սեթևեթ տատրագրութեամբ և, ի հարկէ, ամենևին մեղաւոր չի համարի իրան այդ բանում։ Եւս ասելի մեղաւոր չի կարող համարել իրան կալանաւորներին քննող բանտային բժիշկը։ Նա ճշտօրէն կատարել էր իր պարտականութիւնը, ջոկել էր թոյլերին և չէր կարող ամենևին նախատեսել ոչ այն, որ այդպիսի տարտափելի չոր կ'անի, ոչ էլ այն, որ նրանց այդքան ուշ կը տանեն ու այդպիսի մեծ խմբով։ Բանտապետը... բայց բանտապետը միմիայն կատարել էր իրան տուած հրահանգը, որ այս ինչ օրը այս ինչ թուով տաժանապարտներ ու պատրականներ, տղամարդ ու կին՝ ուղարկեն կայարան։ Չէր կարող մեղաւոր լինել նաև ուղեկցող օֆիցէրը, որի պարտականութիւնը կայանում էր նրանում, որ հաշուով այս ինչ տեղը ընդունէր այս ինչ թուով կալանաւորներ և մի որոշեալ տեղ յանձնէր նրանց նոյն թուով։ Նա տանում էր կալանաւորներին, ինչպէս տալորաբար տանում էին ու ինչպէս կանոնով պահանջւում էր, և

չէր կարող ամենևին նախատեսել, որ այնպիսի ուժեղ մարդիկ, ինչպէս այն երկուսը, որոնց տեսել էր Նեխլիւդօվը, չեն դիմանալ ու կը մեռնեն ճանապարհին։ Ոչ ոք մեղաւոր չի,—և սակայն մի քանի մարդ մահացան և մահացան այնուամենայնիւ այդ մահերի նկատմամբ անմեղ մարդկանց չնարհիւ»։

«Այդ բոլորը նրանից յառաջացաւ,—մտածում էր Նեխլիւդօվը,—որ ամենքը՝ թէ նահանգապետները, թէ բանտապետները, թէ թաղական ոստիկանները, թէ փողոցային ոստիկանները՝ իրանց առջև տեսնում էին ոչ թէ իրանց նման մարդկանց և իրանց պարտականութիւնները նրանց նկատմամբ, այլ իրանց ծառայութիւնը և այդ ծառայութեան պահանջները, որ նրանք գերադասում էին մարդկային յարաբերութիւնների պահանջներից։ Դրանումն է ամեն ինչ»,—մտածում էր Նեխլիւդօվը։

Նեխլիւդօվը այնքան տարուել էր այդ մտքերով, որ չը նկատեց եղանակի փոփոխութիւնը,—արևը ծածկուել էր առջևի ցածիկ, բզկտուած ամպի յետևին, և հորիզոնի արևմտեան կողմից առաջ էր խաղում միապաղաղ բայմոխրագոյն մի թուխպ, որից այնտեղ, հեռուում, չեղ գծերով անձրև էր թափւում դաշտերի ու անտառների վրայ։ Թուխպից՝ խոնաւ, անձրևային օդի հոտ էր գալիս։ Երբեմն-երբեմն կայծակը կտրատում էր թուխպը, և քանի գնում վագոնների դղրդոցին ասելի ու ասելի յստակ էր խառնւում ամպերի որոտը։ Թուխպը հետզհետէ ասելի ու ասելի էր մօտենում և քամու բերած անձրևի չեղ կաթիլները սկսեցին բծերով ծածկել վագոնի տախտակամածի դուրս ցցուած մասը և Նեխլիւդօվի վերարկուն։ Նա անց կացաւ միւս կողմը և ներս չնչելով վաղուց անձրևի կարօտ հողի խոնաւ զովութիւնն ու հացահատիկների հոտը, նայում էր յետ յետ վազող պարէզներին, անտառներին, հաճարի դեղնաւուն արտերին, վարսակի դեռ կանաչ չերտերին և ծաղկող մուգ կանաչ գետնախնձորի ևս ակօսներին։ Կարծես ամեն բան ծածկուել էր փայլուկով. կանաչը ասելի կանաչ էր դարձել, դեղինը՝ ասելի դեղին, սևը՝ ասելի սև։

—Սրի, էլի սրի,—ասում էր Նեխլիւդօվը, ու բախտութեամբ նայելով անձրևի բարերար ազդեցութեան տակ վերակենդանացող դաշտերին, պարէզներին ու բանջարանոցներին։

Վարար անձրևը երկար չը տևեց։ Թուխպը մասամբ թափուեց, մասամբ անց կացաւ գնաց, և թաց հողի վրայ ընկնում էին արդէն անձրևի վերջին ուղղածիգ, անընդմէջ ու մանր կաթիլները։ Արևը նորից դուրս նայեց, ամեն ինչ սկսեց փայլել, իսկ արևելքում հորիզոնի վրայ աղեղ կապեց ցածիկ, բայց

պայծառ և միայն մի ծայրում ընդհատուող ծիածանը, որի մէջ աչքի էր ընկնում մանիչակի գոյնը։

—Հա, ինչի՞ մասին էի մտածում,—հարցրեց ինքն իրան Նեխլիւդովը, երբ ընութեան այդ բոլոր փոփոխութիւնները վերջացան ու գնացքը իջաւ դէպի բարձր զառիվայրով փոսորակը։

—Հա, ես այն էի մտածում, որ այդ ամենքը՝ բանտապետը, ուղեկցող զինուորները, բոլոր այդ ծառայողները, որոնք մեծ մասամբ հեզ ու բարի մարդիկ են, չարասիրտ են դարձել։

Նա յիշեց Մասլեննիկովի անտարբերութիւնը, երբ ինքը պատմում էր նրան, թէ ինչեր է կատարւում բանտում, բանտապետի խստութիւնը, ուղեկցող օֆիցէրի դաժանութիւնը, երբ նա չէր թողնում, որ կալանաւորները նստեն սայլի վրայ և երբ ուշադրութիւն չը դարձրեց այն բանի վրայ, որ գնացքում երկունքից տանջւում է մի կին։ Այդ բոլոր մարդիկ, ակներևաբար, անթափանցելի էին մարդասիրութեան զգացմունքի համար, «ինչպէս այս սալայատակած հողը անձրևի համար»,—մտածում էր Նեխլիւդովը, նայելով փոսորակի գոյնզգոյն քարերով սալած զառիվայրին, որի վրայով անձրևաջուրը հոսում էր փոքրիկ հեղեղատներով, չը կարողանալով ծծուել հողի մէջ։ «Գուցէ և պէտք է փոսորակները սալայատակել, բայց մարդ տխրում է նայելով այդ բուսազուրկ հողին, որ կարող էր հացահատիկ, խոտ, թուփ ու ծառ բուսցնել, ինչպէս փոսորակի վերև գտնուած հողերը։ Նոյնն է և մարդկանց վերաբերմամբ—մտածում էր Նեխլիւդովը։—Ամբողջ հարցը նրանումն է, որ մարդիկ կարծում են, թէ կան դրութիւններ, որոնց մէջ կարելի է մարդկանց հետ վարուել առանց սիրոյ. իսկ այդպիսի դրութիւններ չը կան։ Իրերի հետ կարելի է վարուել առանց սիրոյ,—կարելի է կտրատել ծառերը, աղիւս թրծել, երկաթ կռել առանց սիրոյ. բայց մարդկանց հետ չի կարելի վարուել առանց սիրոյ, ինչպէս մեղուների հետ՝ առանց զգուշութեան։ Այդպէս է մեղուների առանձնայատկութիւնը։ Եթէ անզգոյշ վարուես նրանց հետ, թէ նրանց կը վնասես թէ քեզ։ Նոյնն է և մարդկանց նկատմամբ։ Եւ այդ չի կարող ուրիշ կերպ լինել, որովհետև փոխադարձ սէրը մարդկային կեանքի հիմնական օրէնքն է։ Ճիշտ է, մարդ չի կարող ինքն իրան ստիպել, որ սիրի, ինչպէս որ կարող է ստիպել իրան, որ աշխատի. բայց դրանից չի կարելի եզրակացնել, թէ կարելի է մարդկանց հետ վարուել առանց սիրոյ, մանաւանդ

երբ որ և է բան ես պահանջում նրանցից։ Եթէ սէր չես զգում դէպի մարդիկ, հանգիստ նստիր տեղդ,—մտածում էր Նեխլիւդովը, դիմելով ինքն իրան,—զբաղուիր ինքդ քեզնով, զանազան իրերով, մի խօսքով ինչով կ'ուզես, բայց ոչ մարդկանցով։ Ինչպէս անվնաս և օգտաւէտ կերպով կարելի է ուտել միայն այն ժամանակ, երբ մարդ ուզում է ուտել, այնպէս էլ մարդկանց հետ կարելի է անվնաս ու օգտաւէտ կերպով վարուել միայն այն ժամանակ, երբ մարդ սիրում է նրանց։ Բնական է թոյլ տաս քեզ վարուել մարդկանց հետ առանց սիրոյ, ինչպէս դու երէկ վարուեցիր փեսայիդ հետ, և կը տեսնես, որ սահման չի լինի անգթութեանդ ու գազանութեանդ ուրիշների վերաբերմամբ, ինչպէս ես տեսայ այսօր, և սահման չի լինի սրտիդ տանջանքին, ինչպէս ես իմացայ ամբողջ իմ կեանքից։ Այո, այո, այդպէս է,—մտածում էր Նեխլիւդովը։—Ի՞նչ լաւ է, ինչ լաւ է»,—կրկնում էր նա ինքն իրան, կրկնակի հաճոյք զգալով տանջող չոքից յետոյ տիրած զովութիւնից և իրան վաղուց զբաղեցնող հարցի վերաբերմամբ պարզ գիտակցութեան ամենաբարձր աստիճանին հասնելուց։

XXXIX

Այն վագօնը, ուր տեղ էր ընտրել Նեխլիւդովը, կիսով չափ լիքն էր ուղևորներով։ Այդտեղ կային ծառաներ, արհեստաւորներ, բանուորներ, մսագործներ, հրէաներ, գործակատարներ, կինարմատներ, բանուորների կանայք, մի զինուոր, երկու աղջիկպարոններ, մէկը՝ ջահել, միւսը հասակաւոր՝ մերկ թեւերին ապարանջաններ անց կացրած, և մի խիստ կերպարանքով պարոն՝ կօկարդաւոր սև գլխարկով։ Դրանք բոլորը՝ տեղաւորուելուց յետոյ հանգստացել էին և հանդարտ նստած՝ ոմանք արևածաղկի կորիզ էին չոթում, ոմանք պապիրոս ծխում, ոմանք էլ տաք-տաք խօսում հարևանների հետ։

Տարասը երջանիկ կերպարանքով նստած էր անցքից դէպի աջ, տեղ պահելով Նեխլիւդովի համար, և տաք-տաք խօսում էր դիմացը նստած մի մկանուտ մարդու հետ, որ բաց էր արել հագի ժահուզէ բամկոնի կոճակները և որ, ինչպէս Նեխլիւդովը յետոյ իմացաւ, պարտիզպան էր ու գնում էր գաւառը, ուր նրան տեղ էին առաջարկել։ Տարասին չը հասած՝ Նեխլիւդովը կանգ առաւ անցքում մի սպիտակամիրուք պատկառելի ծերունու կողքին, որ խօսում էր մի գիւղական չորեր հագած ջահել կնոջ հետ։ Կնոջ կողքին, ոտները յատակից մի

թղաչափ բարձր, նստած էր մի հսկա տարեկան աղջիկ նոր չոբեր հագած ու գրեթե սպիտակ մազերի բարակ ծամով և չարունակ կորիզ էր ջոթում։ Ցետ նայելով Նեխլիւդովի վրայ՝ ծերունին իր նստած լայրծուն նստարանի վրայից հաւաքեց հագուստի մի փէչը ու քաղցրութեամբ ասաց։

—Համեցէք նստէք։

Նեխլիւդովը չնորհակալութիւն յայտնեց ու նստեց նրա ցոյց տուած տեղը։ Հէնց որ Նեխլիւդովը նստեց, գիւղացի կինը չարունակեց ընդհատուած պատմութիւնը։ Նա պատմում էր, թէ ինչպէս էր քաղաքում նրան ընդունել իր մարդը, որի մօտից վերադառնում էր այժմ։

—Մէկ բարեկենդանին էի գնացել, մէկ էլ, Աստուած յաջողեց հիմա գնացի,—ասում էր նա։—Հիմա, Աստուած յաջողի, մէկ էլ Ծննդեան տօներին կ'երթամ։

—Լաւ ես անում,—ասաց ծերունին գեղջկուհուն, յետ նայելով Նեխլիւդովի վրայ,—պէտք է մէկ-մէկ տեսութեան գնաս, թէ չէ ջահել մարդ է, քաղաքում գլխահան կ'անենս։

—Չէ, պապի, իմ մարդը այդպիսիներից չէ։ Այդպիսի գործութիւններ չի սիրում, կարծես ամաչկոտ աղջիկ լինի։ Ինչ փող տանում է՝ մինչև վերջին կոպէկը տուն է ուղարկում։ Այնպէս ուրախացաւ այս լակոտին տեսնելով, որ էլ չեմ կարող ասել,—ասաց գեղջկուհին ժպտալով։

Աղջիկը, որ չոթած կորիզները դուրս թքելով լսում էր մօր ասածը, իր հանգիստ ու խելօք աչքերով նայեց ծերունի ու Նեխլիւդովի երեսին, կարծես հաստատելով մօր խօսքերը։

—Իսկ եթէ խելօք է, աւելի լաւ,—ասաց ծերունը։—Իսկ այդպիսի բաներով չի պարապում,—աւելացրեց նա, աչքերով ցոյց տալով անցքի միւս կողմում նստած մարդ ու կնոջ վրայ, որոնք ակներևաբար գործարանային բանուորներ էին։

Մարդը, գլուխը դէպի յետ գցած ու չիչը բերնին կորցած, ծծում էր օղին, իսկ կինը, այն տոպրակը բռնած, որի մէջից հանել էին չիչը, յառած աչքերով նայում էր մարդուն։

—Չէ, իմ մարդս ոչ խմում է, ոչ ծխում,—ասաց ծերունի խօսակից կինը, աւելից օգտուելով մարդուն մի անգամ էլ գովելու։—Նրա նման մարդ քիչ կը գտնուի։ Հազարի մէջից կը ջոկուի,—ասաց նա, դիմելով նաև Նեխլիւդովին։

—Աւելի լաւ,—կրկնեց ծերունը, որ նայում էր օղի խմող բանուորին։

Բանուորը, իր բաժինը խմելով, չիչը տուեց կնոջը։ Կինը վերցրեց չիչը և, ծիծաղելով ու գլուխը թաւ տալով, նոյնպէս

կորցրեց բերնին։ Նկատելով իր վրայ Նեխլիւդովի ու ծերունի հայեացքը, բանուորը դիմեց նրանց։

—Հը՛, պարոն, մեր խմելուն էք նայում։ Երբ որ աշխատում ենք, ոչ ոք չի տեսնում, իսկ երբ խմում ենք, ամենքը տեսնում են։ Ձեռքիս աշխատանքով փող եմ վաստակել ու խմում եմ և կնոջս էլ համցէք ասում։ Պրծաւ գնաց։

—Այո՛, այո,—ասաց Նեխլիւդովը, չիմանալով, թէ ինչ պատասխանի նրան։

—Ճիշտ եմ ասում, պարո՛ն։ Կինս կարգին կնիկ է։ Ես գոհ եմ նրանից, որովհետև խղճում է ինձ։ Ճիշտ եմ ասում, թէ չէ, Մաւրա։

—Դէ լաւ, առ։ Էլ չեմ ուզում,—ասաց կինը, տալով ներսը չիչը։—Ի՞նչ կա յիմար-յիմար բաները պատմելու,—աւելացրեց նա։

—Այ այսպէս է,—չարունակում էր բանուորը,—կարգին, անդին կնիկ է, բայց մէկ էլ տեսնես կը սկսի ճռճռալ ականջիս խղճալ սայլի նման։ Ճիշտ չեմ ասում, Մաւրա։

Մաւրան ծիծաղեց ու հարբածի չարժումով թաւի տուեց ձեռքը։

—Այդ է հա, դուրս տուր գլխիդ...

—Այ այսպէս է, մի առժամանակ կարծես անդին կնիկ է, բայց հէնց որ սանձերը պոչատակն ընկան, այնպիսի բան կ'անի, որ մարդու մաքուն էլ չի անց կենայ... Ճիշտ չեմ ասում։ Խմդրեմ ինձ ներէք, պարո՛ն։ Մի քիչ խմել եմ, ինչ անեմ...—ասաց բանուորը ու թեք ընկաւ քնելու, գլուխը դնելով ժըպտուն կնոջ ծնկների վրայ։

Նեխլիւդովը մի քիչ ժամանակ մնաց նստած ծերունու կողքին, որ պատմեց, թէ ինքը վառարան չինող է, 53 տարի է որ աշխատում է և իր կեանքումը անթիւ վառարաններ է չինել, իսկ այժմ ուզում է հանգստանալ, բայց ժամանակ չունի։ Քաղաքից է գալիս, որտեղ զաւակներին բանի էր դրել, իսկ այժմ գնում է գիւղը մնացոց տեսնելու։ Երբ ծերունը վերջացրեց ասելիքը, Նեխլիւդովը վեր կացաւ ու գնաց այն տեղը, որ Տարասը պահում էր նրա համար։

—Նստէք, պարո՛ն, տոպրակը այս կողմը կը դնենք,—դէպի վեր՝ Նեխլիւդովի երեսին նայելով, քաղցրութեամբ ասաց Տարասի գիմացը նստած պարտիզպանը։

—Մի կերպ եօլա կ'երթանք,—երգեցիկ ձայնով ու ժըպտերես ասաց Տարասը և իր հաւժկու ձեռքերով վիճաւորի նման վերցրեց իր երկու փթանոց տոպրակը ու դրեց պատուհանի

մօտ։—Տեղ չատ կայ, չը լինի էլ, կարելի է կանգնել, կարելի է և նստարանի տակը պառկել։ Այնպէս հանգիստ է այնտեղ, ես իմ Աստուածը։ Արժէ տեղի համար աղմուկ բարձրացնել,—ասում էր նա, և երեսը փայլում էր բարեհոգի ու քաղցր արտայայտութեամբ։

Տարասը իր մասին ասում էր, որ չը խմած ժամանակ խօսք չի գալիս բերանը, իսկ երբ մի քիչ գլուխ է՝ հիանալի խօսքեր է գտնում և ինչ ուզես կարող է ասել։ Եւ յիրաւի, լուրջ ժամանակը Տարասը առհասարակ լուռ էր լինում, իսկ երբ խմում էր,—որ չատ քիչ էր պատահում և միմիայն արտասովոր դէպքերում,—այն ժամանակ չատ ախորժելի կերպով ջրիկանում էր։ Կռնծած ժամանակը նա և՛ չատ էր խօսում, և՛ լաւ էր խօսում,—չատ պարզ ու չիտակ կերպով և, որ գլխաւորն է, չատ քաղցրութեամբ, որ ուղղակի փայլում էր նրա բացկապտագոյն աչքերի և չրթունքներից չը հեռացող անուշ ժպիտի մէջ։

Այդպիսի դրութեան մէջ էր նա այսօր։ Նեխլիւդովի գալովը մի րոպէով ընդհատուեց նրա խօսքը։ Բայց տոպրակը տեղաւորելուց յետոյ նա նստեց, ինչպէս առաջ նստած էր, և հուժկու աշխատաւոր ձեռքերը դնելով ծնկների վրայ ու նայելով ուղիղ պարտիզպանի աչքերի մէջ՝ չարունակեց իր պատմութիւնը։ Նա իր նոր ծանօթին ամենայն մանրամասնութեամբ պատմում էր կնոջ արածը, որի համար նրան աքսորի էին դատապարտել, և այն, թէ ինչու է ինքը այժմ նրա յետեւից Սիբիր գնում։

Նեխլիւդովը երբէք մանրամասնօրէն չէր լսել այդ պատմութիւնը, ուստի և սկսեց հետաքրքրութեամբ ականջ դնել։ Նա պատմութեան այն տեղին էր հասել, երբ թունաւորումը արդէն կատարուել էր և ընտանիքը իմացել էր, որ թունաւորողը Ֆեդոսեան է։

XL

—Իմ զարդս եմ պատմում,—ասաց Տարասը, սրտագին մտերմութեամբ դիմելով Նեխլիւդովին։—Իսկ քրիստոնեայ մարդ է. խօսքի բռնուեցինք, ես էլ սկսեցի պատմել։

—Այո, այո,—պատասխանեց Նեխլիւդովը։

—Հիմա ասեմ, եղբայր, թէ ինչպէս բանը բացուեց։ Մայրիկս վերցրեց այդ բլիթը ու ասում է՝ «գնում եմ ոստիկանի մօտ»։ Հայրիկս չատ խղճով հալւոր է։ «Կաց», ասում է, «այ պառաւ, չես տեսնում, որ հարսը դեռ բոլորովին երեխայ է. ինքն էլ չի իմացել, թէ ինչ է անում. մեղք է խեղճ կնիկը։ Ապասի, կարելի է խելքի է գալիս»։ Բայց մայրիկիս ասած, թէ այս պատին «Մինչև մենք սպասենք», ասում է, «նա մեզ մըկների նման բնաջինջ կ'անի»։ Թարսուեց այդպէս ու վեր կացաւ գնաց ոստիկանի մօտ։ Նա էլ իսկոյն ձեռք ու ոտք ընկած եկաւ... Ձեռաց վկաներ կանչեց։

—Իսկ դու ինչ էիր անում,—հարցրեց պարտիզպանը։

—Ե՞ս։ Ի՞նչ պէտք է անէի. փորս բռնած, սիրտս չարուճար վայր էի ածում։ Աղէք մաղիքս այրում, փոթորիկում էր. լեզուս բերնումս պատյա չէր գալիս։ Հայրիկս սայլը ձեռաց լծեց, Ֆեդոսեային նստացրեց ու տարաւ գաւառական ոստիկանատունը, իսկ այնտեղից քննիչի մօտ։ Իսկ Ֆեդոսեան, դու ես իմ բարեկամը, ինչպէս սկզբից ամեն բան չիտակը խոստովանել էր, այնպէս էլ քննիչի մօտ ամեն բան մէկ առ մէկ պատմել էր, թէ որտեղից էր մինդեղը վերցրել ու ինչպէս էր բլիթներ չինել։ «Ինչու, ասում է, այդպէս արեցիր»։ —«Որովհետև, ասում է, գրող է դարձել ինձ համար։ Ասում է, աւելի լաւ է Սիբիր գնամ, քան թէ ապրեմ նրա հետ», այսինքն թէ ինձ հետ,—ժպտալով բացատրեց Տարասը։—Մի խօսքով ամեն բան խոստովանում է։ Էլ ինչ ասել կ'ուզի, բըռնում, գնում են բանտը։ Հայրիկը մենակ վերադարձաւ։ Մնացինք չուարած. աշխատանքների ժամանակը մօտենում էր, իսկ մեր տան կնիկը մենակ մայրիկն էր, այն էլ այժից ընկած։ Մտածեցինք, թէ ինչ անենք, չի կարելի արդեօք երաշխաւորութեամբ դուրս հանել տալ Ֆեդոսեային։ Հայրիկը գնաց մի իշխանաւորի դուռ, բան դուրս չեկաւ, գնաց մի ուրիշի մօտ՝ էլի բան չը յաջողեց։ Այդպէս հինգ իշխանաւորի դուռ գնաց։ Այն է բոլորովին ուզում էինք ձեռք քաշել, որ յանկարծ մի հասկացող մարդ պատահեց, միրզաներից։ Այնպիսի ճարպիկ մարդ էր, որ հատը չի գանուի։ «Մի հնգանոց տուր, ասում է, ձեռաց ազատել տամ»։ Երեք մանէթով բարիշեցինք։ Ֆեդոսեայի քաթանները դրաւ դրեցի, տուեցի իրան։ Հէնց որ գրեց նա այդ թուղթը,—ծոր տուեց Տարասը, կարծես թէ գնդակ արձակելու մասին խօսելիս լինէր,—ձեռաց հրամանը դուրս եկաւ։ Ես այդ ժամանակ արդէն ոտի վրայ էի. ինքս գնացի քաղաք նրան բերելու։ Եկայ, դու ես իմ բարեկամը, քաղաք, իսկոյն սայլս քշեցի մի քարվանսարայ ու թուղթս վեր առած գնացի բանտը։ «Ի՞նչ ես ուզում»։ Այսպէս ու այսպէս, ասում եմ, մեր կնիկարմատը այստեղ բանտարկուած է։ «Իսկ հրամանաթուղթ, ասում է, ունէք»։ Ձեռաց հանեցի, տուեցի թուղթը։ Մտիկ ա-

րեց։ «Սպասիր», ասում է։ Նստարան կար այնտեղ դրած, նըստեցի։ Կէսօրից անց էր, արևը արդէն թեքուել էր։ Դուրս եկաւ իշխանաւորը. «Դու ես, ասում է, վարգուշովը»։ Հրամիլ էք։ «Դէ, վեր կալ տար», ասում է։ Իսկոյն դարպասը բաց արեցին։ Դուրս բերեցին Ֆեդօսեային իր չորերով, ինչպէս որ կարգն է։—Դէ արի գնանք։—«Ոտով ես եկել միթէ»։—Չէ, սայլով եմ եկել։—Գնացինք քարվանսարան, ինչ որ տալու էի տուեցի տիրոջը, մատակս լծեցի, ինչ խոտ մնացել էր հաւաքեցի՝ նստելու տեղը դրստեցի։ Ֆեդօսեան նստեց, փաթաթուեց չալի մէջ։ Ձին քշեցի։ Ոչ Ֆեդօսեան է խօսում, ոչ ես։ Բայց երբ որ սկըսեցինք մօտենալ տանը, հարցրեց. «Մայրիկը ինչպէս է, ողջ է»։ Ողջ է, ասում եմ։ «Իսկ հայրիկը ողջ է»։—Ողջ է։—«Ներիր, ասում է, ինձ, Տարաս, իմ յիմարութիւնը։ Սատանան խելքս առել էր, չէի հասկանում, թէ ինչ էի անում»։ Ասում եմ, «չատ խօսել չի ուզի, ես վազուց եմ ներել քեզ»։ Էլ ոչինչ չասացի։ Հէնց որ տուն հասանք, նա իսկոյն ընկաւ մայրիկի ոտները։ Մայրիկն ասաց. «Աստուած թողութիւն տայ»։ Իսկ հայրիկը բարևեց ու ասաց. «Հին դարմանը քամուն չեն տայ։ Ջո քէֆին ապրի։ Հիմա, ասում է, բանի թունդ ժամանակն է, հանդից պէտք է հունձը կրել։ Հաճարը, ասում է, այնպէս առատ հունձ է տուել, որ խճճուել է իրար ու թաղիքի նման պառկել, գերանդի չի բռնում։ Պէտք է մանգաղով հնձել։ Էգուց Տարասի հետ վեր կացէք գնացէք հնձելու»։ Մեր Ֆեդօսեան միւս առաւօտն և եթ բանի կպաւ։ Ու այնպէս էր բանում, որ մարդ մըտնում էր զարմացած։ Այն ժամանակ երեք օրավար տեղ ունէինք վարձած, Աստուծու տուածից էլ՝ հաճարն էլ, վարսակն էլ չը տեսնուած բերք էին տուել։ Ես գերանդիով հնձում եմ, նա կապում է, կամ երկուսով էլ մանգաղով հնձում ենք։ Ես գործում աջողակ եմ, ձեռքումս զօրութիւն կայ, իսկ նա ինձնից էլ աջողակ է ու ամեն բանի չնորհք ունի։ Ջահել կնիկ է, ժիր ու կրակոտ։ Ու այնպէս արտով էր կպել աշխատանքին, որ ես էի յետ կացնում։ Տուն ենք գալիս, մատները ուռչում են, ձեռները մրմռում են, պէտք է հանգստանալ, իսկ նա, առանց իրիկնահաց ուտելու, վազում է խոտանոցը՝ միւս օրուայ համար ճոպաններ պատրաստելու։ Հրաշք էր, հրաշք։

—Իսկ դէպի քեզ քաղցր էր վերաբերում,—հարցրեց պարտիզպանը։

—Էլ մի ասիլ. ձուլի ու ծամոնի նման կպել էր ինձանից. մի սիրտ, մի հոգի էինք դարձել։ Բաւական էր մի բան մտքովս անցնէր, ձեռաց հասկանում էր։ Մայրիկս անգամ, չը նայած իր բարկացկոտ բնաւորութեանը, ասում էր. «Կարծես Ֆեդօսեային փոխած լինեն. կարծեսիլ այն Ֆեդօսեան չը լինի»։ Մի անգամ գնում ենք խուրձ կրելու, ես ու նա նստած ենք առաջին սայլում։ Ասում եմ. «Ի՞նչպէս եղաւ, Ֆեդօսեա, որ այն բանը արեցիր»։—«Ի՞նչպէս պէտք է անէի, ասում է. չէի ուզում քեզ հետ ապրել։ Լաւ է, մտածում էի, մեռնեմ, քան քեզ հետ ապրեմ»։—«Իսկ այժմ, ասում եմ»։—«Իսկ այժմ, ասում է, դու իմ սրտիս սիրեկանն ես»։ Տարասը կանգ առաւ և ուրախ զարմանքի արտայայտութեամբ գլուխը թափ տուեց։—Հէնց որ դաշտիցը խուրձերը կրեցինք պրծանք, գնացի կանեփը թրմելու. տուն եմ գալիս,—չարունակեց նա, մի բոպէ լռելուց յետոյ,—տեսնեմ ծանուցագիր է եկել. դատ են կանչում։ Իսկ մենք բոլորովին մոռացել էինք, թէ պէտք է դատուեն։

—Անպատճառ սատանական բան է,—ասաց պարտիզպանը,—մի՞թէ մարդս ինքն ու ինքը կարող է մտածել ուրիշին սպանել։ Այդպէս մեզնում էլ մի մարդ...—ու պարտիզպանը սկսում էր պատմել, բայց գնացքը կանգ առաւ։

—Վա՛, արդէն կայարան հասանք,—ասաց նա,—գնամ թէյ խմեմ։

Խօսակցութիւնը ընդհատուեց, և Նեխլիւդովը պարտիզպանի յետևից իջաւ վագոնից պլատֆորմի թաց տախտակների վրայ։

XLI

Նեխլիւդովը, դեռ վագոնից դուրս չեկած, կայարանի բակում նկատեց մի քանի հարուստ կառքեր, որոնց լծած էին երեք-երեք և չորս-չորս կուշտուկուռ ձիեր, որոնք զնգզնգացնում էին իրանց բժժոցները, իսկ երբ դուրս եկաւ անձրևից մթագնած թաց պլատֆորմի վրայ, առաջին կարգի վագոնի առաջ տեսաւ մարդկանց մի խումբ, որոնց մէջ աչքի էին ընկնում մի բարձրահասակ ու հաստ-հաստ տիկին թանկագին փետուրներով զարդարած գլխարկով ու վատերպլրուֆով և մի բարակ ոտներով ու վէլիսօպէդիտաի չորերով երկարահասակ երիտասարդ, որ բռնած պահում էր մի թանկագին վզնոցով ահագին ու կուշտուկուռ շուն։ Նրանց յետևին կանգնած էին լաքէյները, վերարկուները ու հովանոցները բռնած, և կառապանը, որոնք եկել էին եկողներին հանդիպելու։ Այդ ամբողջ խմբի մարդկանց վրայ, սկսած հաստ-հաստ տիկնոջով ու վերջացրած կառապանով, որ ձեռքով պահում էր իր երկար կապայի փէշերը, երևում էր հանդիսատ ինքնավստահութեան ու առատութեան դրոշմ։ Նրանք բոլորն էլ կուշտուկուռ էին ու կոկիկ։ Բոլորի

հագի չորերն էլ նոր էին ու թարմ։ Այդ խմբի չուրջը իսկոյն և եթ չրջան կազմեցին հարստութեան առաջ քծնող հետաքրքրքիր մարդիկ,—կայսրանապետը կարմիր գլխարկով, ժանդարմը, ոստիկան յուշնքազարդ զգեստ հագած մի նիհար օրիորդ, որ ամառը միշտ ներկայ էր լինում գնացքները գալիս, հեռագրապետը և ուղեորներ՝ աղամարդ ու կին։

Շան վզակապից բռնող երիտասարդին Նեխլիւդովը ճանաչում էր. Կօրչագինի տղան էր, գիմնազիստը։ Իսկ հասա-հասա տիկինը իշխանուհու քոյրն էր, որի կալուածն էին տեղափոխում Կօրչագինները։ Պապան երիզներով ու կօշիկներով օբերկօնդուկտորը վագոնի դուռը բաց արեց և, ի նշան յարգանքի, այդպէս բռնած պահեց, մինչև որ Ցիլիպպը մի սպիտակ գոմոնոյատոր ծանրոցակրի հետ զգուշութեամբ դուրս բերեցին երկարերես իշխանուհուն իր ծալովի բազկաթոռի վրայ. քոյրը բարևեցին իրար, լսուեցին ֆրանսերէն նախադասութիւններ այն մասին, թէ արդեօք փակ թէ բաց կառքով կ'երթայ իշխանուհին, և ամբողջ խումբը, որի յետին ծայրում գնում էր խոպոպաւոր աղախինը՝ հովանոցներն ու կոլոր պատանը ձեռքին, ուղղուեց դէպի կայարանի դուռը։

Նեխլիւդովը չուզելով հանդիպել կօրչագիններին, որպէս զի նորից մնաս բարև անէր, կայարանի դռանը չը հասած կանգ առաւ ու սպասեց, որ նրանք անցնեն։ Իշխանուհին ու որդին, Միսաին, բժիշկը ու աղախինը առաջ անցած գնացին, իսկ ծեր իշխանը իր քենու հետ յետ ընկաւ ու կանգ առաւ, և Նեխլիւդովը հեռուից լսում էր միայն կցկտուր նախադասութիւններ նրանց ֆրանսերէն խօսակցութիւնից։ Իշխանի արտասանած նախադասութիւններից մէկը, ինչպէս յաճախ պատահում է, չը գիտեմ ինչու ամուր դրոշմուեց Նեխլիւդովի յիշողութեան մէջ իշխանի ձայնի բոլոր երևէյթներով և բոլոր հնչիւններով.

—Oh, il est du vrai grand monde, du vrai grand monde (Օ՜օ, նա իսկական մեծ աշխարհի (բարձր շրջանի) մարդ է),—չը գիտեմ ումի մասին ասաց իշխանը իր բարձր ու անձնագոհաստան ձայնով և քենու հետ միասին անցաւ կայարանի դռնով, ուղեկցուած՝ յարգանքով լի կօնդուկտորներով։

Հէնց այդ միջոցին կայարանի յետևից դուրս եկան պլատֆօրմի վրայ մի խումբ տրեխաւոր ու ամռնամուշտակաւոր բանուորներ, տոպրակները չալակներին։ Բանուորները վրճռական ու կակուղ քայլերով մօտեցան առաջին վագոնին և ուզում էին մանել մէջը, բայց կօնդուկտորը իսկոյն քշեց նրանց այնտեղից։ Առանց կանգ առնելու բանուորները, չոգալով ու միմեանց ոտներ տրորելով, գնացին դէպի կողքի վագոնը ու սկսեցին, տոպրակներով վագոնի անկիւններին ու դռանը դէմ առնելով, ներս մտնել, բայց մի ուրիշ կօնդուկտոր տեսաւ նրանց կայարանի դռնից ու խիստ կերպով գոռաց վրանները։ Ներս մտած բանուորները իսկոյն և եթ վազ-վազ դուրս եկան և դարձեալ նոյն կակուղ ու վճռական քայլերով գնացին դէպի հետևեալ վագոնը, ուր նստած էր Նեխլիւդովը։ Կօնդուկտորը դարձեալ կանգնեցրեց նրանց։ Նրանք այն է ուզում էին կանգ առնել, վճռելով գնալ էլ առաջ, բայց Նեխլիւդովը ասաց նրանց, որ ներս մտնեն, որովհետև վագոնում ազատ տեղեր կան։ Նրանք լսեցին նրան և նա ներս մտաւ նրանց յետևից։ Բանուորները ուզում էին արդէն տեղաւորուել, բայց կօկարդաւոր պարոնը և երկու տիկինները, նրանց այդ վագոնում տեղաւորուելու ցանկութիւնը անձնական վիրաւորանք համարելով իրանց համար, վճռաբար հակառակեցին այդ բանին ու սկսեցին դուրս անել նրանց վագոնից։ Բոլոր բանուորները,—մօտ քսան հոգի,—ահէլ ու ջահէլ, ամենքն էլ յոգնատանջ արևատ ու չոր դէմքերով, իսկոյն և եթ, տոպրակներով դէմ առնելով նստարաններին, պատերին ու դռներին, ակներևաբար լիովին միաւոր զգալով իրանց, առաջ անցան վագոնի միջով, ակներևաբար պատրաստ լինելով գնալ մինչև աշխարհի ծայրը և նստել, ուր որ հրամայէն, թէկուզ մեխերի վրայ։

—Ո՞ւր էք առաջ քշում, սատանի ձագեր, տեղաւորուեցէք այստեղ,—գոռաց մի կօնդուկտոր ներս մտնելով վագոնը հակառակ կողմից։

—Voilà encore des nouvelles? (այ քեզ նոր լուր),—ասաց երկու տիկիններից ջահէլը, լիովին հաւատացած, որ իր հիանալի ֆրանսերէնով կը գրաւի Նեխլիւդովի ուշադրութիւնը։ Իսկ ապարանջանաւոր տիկինը չարունակ հոտ էր քաշում միայն, ինձուում էր, ինչ որ մի բան ասելով հոտած գիւղացիների հետ նստելու ախորժելիութեան մասին։

Իսկ բանուորները, մեծ վտանգից ազատուածների ուրախութիւն ու հանգստութիւն զգալով, կանգ առան ու սկսեցին տեղաւորուել, ուսերի չարժումով վայր գլորելով չալակների տոպրակները ու ոտով ներս խցկելով նստարանների տակը։

Տարասի հետ խօսող պարտիզպանը, որ իր տեղում չէր նստած, գնաց իր տեղը, այնպէս որ Տարասի կողքին ու դիմացը երկու ազատ տեղ մնաց։ Բանուորներից երկքը նստեցին այդ տեղերը, բայց երբ Նեխլիւդովը մօտեցաւ նրանց, նրա ազնուական հագուստի տեսքը այնպէս չփոթեցրեց նրանց, որ նրանք վեր կացան և ուզում էին գնալ, բայց Նեխլիւդովը

խնդրեց, որ մնան, իսկ ինքը նստեց նստարանի թեւի վրայ անցքի կողմից։

XLII

Երկու բանուորներից մէկը, որ մօտ 50 տարեկան կը լինէր, տարակուսանքի և նոյն իսկ երկիւղի արտայայտութեամբ նայեց Ջահէլ բանուորի երեսին։ Այն բանը, որ Նեխլիւդովը, փոխանակ, ինչպէս յատուկ է պարոններին, հայհոյելու և քշելու նրանց, գիմեց նրանց իր տեղը, տաստիկ զարմացրեց ու ապշեցրեց նրանց։ Նրանք նոյն իսկ վախենում էին, թէ մի գուցէ դրանից մի վատ բան գայ նրանց գլխին։ Սակայն տեսնելով, որ ոչ մի նենգ նպատակ չը կար այդ բանում և որ Նեխլիւդովը իր համար հանգիստ խօսում է Տարասի հետ, նրանք հանգստացան և հրամայելով փոքրիկին նստել տոպրակի վրայ, պահանջեցին, որ Նեխլիւդովը նստի իր տեղը։ Սկզբում, Նեխլիւդովի դիմացը նստած հասակաւոր բանուորը ամբողջապէս կծկուել էր ու խնամքով մի կողմ քաշել իր տրեխաւոր ոտները, աղային չը դիպչելու համար, բայց յետոյ այնպիսի բարեկամական խօսակցութեան բռնուեցին Նեխլիւդովի ու Տարասի հետ, որ նոյն իսկ սկսեց ափսիլներ դարձրած ձեռքով խփել Նեխլիւդովի ծընկին իր պատմութեան այն տեղերում, որտեղ վրայ ուզում էր գարձնել նրա առանձին ուշադրութիւնը։ Նա պատմեց Նեխլիւդովին իր կեանքի բոլոր հանգամանքների և այն աշխատանքների մասին, որ իրանք կատարում էին տօրֆային ճահիճներում, որտեղից այժմ վերադառնում էին, երկու ու կէս ամիս աշխատելուց յետոյ, տուն տանելով ամեն մէկը 10 ռուբլի իրանց վաստակից, որովհետև վարձի մի մասը տացել էին առաջուց, վարձուելու ժամանակ։ Նրանք բանում էին, ինչպէս նա պատմում էր, ծնկնահաս ջրի մէջ և նրանց աշխատանքը տևում էր լուսաբացից մինչև մութն ընկնելը, երկու ժամուայ ընդմիջումով ճաշի միջոցին։

—Ով որ սովոր չի, ի հարկէ, նրա համար չատ դժուար է,—ասում էր նա,—բայց մարդ որ սովորեց՝ ոչինչ։ Միայն թէ ուտելիքը կարգին լինի։ Առաջ ուտելիքը վատ էր։ Բայց յետոյ բոլորն էլ արտնջացին և ուտելիքը լաւացրին ու աշխատանքները էլ հեշտացաւ։

Այնուհետև նա պատմեց, թէ ինչպէս ինքը քանուէթ տարի այդպէս աշխատանքի էր գնում և իր բոլոր վաստակը տալիս էր տնեցոց,—առաջ հօրը, յետոյ մեծ եղբօրը, այժմ էլ տունը կառավարող եղբօրորդուն, իսկ ինքը իր տարեկան յիսունվաթսուն ռուբլի վաստակից միայն երկու-երեք ռուբլի էր ծախսում քէֆի համար—պապիրոսի ու լուցկիի վրայ։

—Մեղքս ինչ թագցնեմ, մէկ-մէկ յոգնած ժամանակս օղի էլ եմ խմում,—աւելացրեց նա, մեղաւորի պէս ժպտալով։

Այն էլ պատմեց, թէ ինչպէս են կանայք իրանց տեղ տները կառավարում, ինչպէս այդ օրը կապալառուն ճանապարհ ընկնելուց առաջ նրանց հիւրասիրել էր օղիով, ինչպէս նրանցից մէկը մնացել էր, իսկ միւսը հիւանդ է ու տանում են տուն։ Նրա ասած հիւանդը նոյն վագօնումն էր նստած, մի անկիւնում։ Մի կապտաչրթունք մոխրագեղնագոյն պատանի էր այդ։ Ամենևին տենդը ուժասպառ էր արել նրան։ Նեխլիւդովը մօտեցաւ նրան, բայց պատանին այնպիսի խիստ ու ցաւատանջ հայեացքով նայեց նրան, որ Նեխլիւդովը չուզեց անհանգիստ անել նրան իր հարցերով, այլ միայն խորհուրդ տուեց մեծ բանուորին քինաքինա տալ ու մի թղթի վրայ գրել դեղի անունը, տուեց իրան։ Նա ուզում էր փող էլ տալ, բայց մեծ բանուորը ասաց, որ պէտք չէ, ինքը կը տայ։

—Ես իմ Աստուած, ինչքան տեղ ման եմ եկել, այսպիսի աղա չեմ տեսել։ Ոչ միայն վզակոթներիս տալով դուրս չի քշում, այլ և իր տեղն է մեզ տալիս։ Կը նշանակի աղաներն էլ զանազան տեսակ են լինում,—ասաց բանուորը, դիմելով Տարասին։

«Այո, բոլորովին տարբեր, նոր աշխարհ է»,—մտածում էր Նեխլիւդովը, նայելով այդ չոր, մկանոտ անդամներին, այդ տնաշէն գործ կոպիտ հագուստներին ու այդ առնական ու յոգնատանջ քաղցր դէմքերին և զգալով, որ իրան ամեն կողմից շրջապատում են բոլորովին նոր մարդիկ իրանց իրական, աշխատասէր ու մարդավարի կեանքի լուրջ չահերով, ուրախութիւններով ու տանջանքներով։

«Ահա le vrai grand monde-ը (իսկական մեծ աշխարհը)»,—մտածում էր Նեխլիւդովը, յիշելով իշխան Կօրչագինի ասած խօսքերը և Կօրչագինների ամբողջ այդ դատարկ ու ճոխ աշխարհը նրանց չնչին ու գծուծ չահերով։

Եւ նա զգում էր այն ուրախութիւնը, որ զգում են ճանապարհորդները, երբ գտնում են մի նոր, անլայտ ու գեղեցիկ աշխարհ։

Վերջ երկրորդ մասի։

ՄԱՍՆ ԵՐԲՈՐԴ

I

Կալանաւորների այն խումբը, որի մէջ էր Մասլօվան, անցաւ մօտ հինգ հազար վերստ։ Մինչև Պերմ թէ երկաթուղով, թէ չոգենաւով Մասլօվան գնում էր քրէական յանցաւորների հետ, և միայն այդ քաղաքում յաջողեց Նեխլիւդօվին նստեցնել տալ Մասլօվային քաղաքական յանցաւորների հետ, ինչպէս խորհուրդ էր տուել նրան Բօգօդուխօվսկայան, որ կալանաւորների նոյն խմբի մէջ էր։

Մինչև Պերմ քաղաքը Մասլօվան չատ տանջուեց ճանապարհին թէ ֆիզիկապէս, թէ բարոյապէս,—ֆիզիկապէս տեղի նեղուածքութիւնից, անմաքրութիւնից ու զզուելի միջատներից, որոնք հանգիստ չէին տալիս նրան, իսկ բարոյապէս՝ նոյնքան զզուելի տղամարդիկներից, որոնք ինչպէս և միջատները, թէև փոխուում էին ամէն մի էտապում *), սակայն բոլորն էլ միակերպ կպչում էին նրանից, պոկ չէին գալիս ու հանգիստ չէին տալիս։ Կալանաւորուհիների, կալանաւորների, վերակացուների և ուղեկցող պինուորների մէջ այնպէս սովորական բան էր անամօթ անառակութիւնը, որ ամէն մի կին, մանաւանդ ջահէլներից, պէտք է միշտ պատրաստ լինէր պաշտպանուելու տղամարդկանց հետամտութիւնից։ Իսկ այդ մշտական երկիւղի և մաքառման վիճակը սաստիկ ծանր էր։ Մանաւանդ Մասլօվան չատ էր ենթարկուում այդպիսի հետամտութեան թէ իր տեսքի գրաւչութեան և թէ իր՝ ամենքին յայտնի անցեալի պատճառով։ Այն վճռական դիմադրութիւնը, որ նա այժմ ցոյց էր տալիս իրան հետամուտ եղող տղամարդկանց, վիրաւորական էր թուում նրանց և գրգռում էր նրանց նրա դէմ։ Նրա դրութիւնը այդ կողմից քիչ թեթևացնում էին Ֆեդօսեան ու Տարասը, որ, իմանալով, որ տղամարդիկ հետամուտ են լինում իր կնոջ, ցանկութիւն յայտնել էին կալանաւորուելու, որպէս դի կարողանար

*) Ճանապարհին գտնուող բանտ, որ օթևան է ծառայում կալանաւորների համար և ուր փոխուում են ուղեկցող պինուորները։ Ե. Թ.

պաշտպանել կնոջը, ու Նիժնիյ-Նովգորոդից գնում էր իրը կալանաւոր միւս կալանաւորների հետ։

Քաղաքական յանցաւորների մօտ փոխադրուելուց յետոյ Մասլօվայի դրութիւնը լաւացաւ ամեն կողմից։ Մի կողմ թողած այն, որ քաղաքական յանցաւորների տեղն ու անունը աւելի լաւ էր և որ նրանց հետ այնքան կոպիտ չէին վարուում, որքան միւս կալանաւորների հետ, այդտեղ փոխադրուելուց յետոյ Մասլօվան ազատուեց տղամարդկանց հետամտութիւնից և այլ ևս ամեն րոպէ նրան չէին յիշեցնում նրա անցեալը, որ նա այնքան ուզում էր մոռացութեան տալ այժմ։ Իսկ փոխադրութեան ամենամեծ առաւելութիւնն այն էր, որ նա ծանօթացաւ մի քանի մարդկանց հետ, որոնք վճռական ազդեցութիւն գործեցին նրա վրայ։

Խառներում Մասլօվային թոյլ էր տրուած զուգընկերել քաղաքական յանցաւորների հետ, բայց ճանապարհ գնալիս նա, իրը առողջ կին, պէտք է գնար քրէականների հետ։ Այդպէս նա ոտքով գնում էր չարունակ սկսած Տօմսկից։ Նրա հետ, նոյնպէս ոտքով, գնում էին երկու քաղաքական յանցաւորներ՝ Մարիա Պաւլօվնա Շչետինինան,—այն սիրուն ոչխարաչք աղջիկը, որ Նեխլիւդօվի ուշադրութիւնը գրաւել էր Բօգօդուխօվսկայի հետ ունեցած տեսակցութեան միջոցին, և Եակուտսկի նահանգը աքսորուող մի ոմն Սիմոնսօն,—այն խորաչքանի սև ու փրչոտ մարդը, որի վրայ Նեխլիւդօվը նոյնպէս ուշադրութիւն էր դարձրել այդ տեսակցութեան ժամանակ։ Մարիա Պաւլօվնան ոտով էր գնում, որովհետև սայլում իր տեղը զիջել էր քրէական յանցաւոր յղի կնոջը, իսկ Սիմոնսօնը՝ այն պատճառով, որ անարգարութիւն էր համարում օգտուել դասակարգային արտօնութիւնից։ Այդ երկքը քրէական յանցաւորների հետ ոտով ճանապարհ էին ընկնում վաղ առաւօտեան, իսկ քաղաքական յանցաւորները սայլով աւելի ուշ էին դուրս գալիս։ Այդպէս եղաւ նաև մի մեծ քաղաքից առաջ գտնուող վերջին էտապում, ուր մի նոր ուղեկցող օֆիցէր ստանձնեց խումբը։

Վաղ առաւօտ էր։ Սեպտեմբեր ամիսն էր և վատ եղանակ էր անում։ Զիմնախառն անձրև էր գալիս և երբեմն-երբեմն փչում էր ցուրտ քամի։ Խմբի մէջ գտնուող բոլոր կալանաւորները, 400 տղամարդ և մօտ 50 կին, արդէն էտապի բակումն էին և ոմանք խռնուում էին աւազ-ուղեկցի չուրջը, որ խմբապետներին պարէնատիպ էր բաժանում երկու օրուայ համար, ոմանք էլ ուտելիք էին առնում էտապի բակը ներս թողնուած մթերավաճառուհիներից։ Լսւում էր խոզերը հաչուող

ու մթերք գնող կալանաւորների ձայների ժխորը և մթերավաճառուհիների ճղղան խօսակցութիւնը։

Կատիւշան ու Մարիա Պաւլօվնան—երկուսն էլ կօչիկ ու ռամկամուշտակ հագած և չալերով փաթաթուած—էտապի չէնքից դուրս եկան բակը ու դիմեցին դէպի մթերավաճառուհիները, որոնք, քամուց պատսպարուելու համար հիւսիսային պատի տակ նստած, երարից առաջ ընկնելով առաջարկում էին իրանց ապրանքները՝ թարմ հաց, կարկանդակ, ձուկ, պլոճիկներ, տաւարի միս, ձու, կաթ. մէկը մինչև անգամ տապակած խոճկոր էր ծախում։

Սիմօնսօնը, գուտտապէրչէ բաճկոնով և ոչխարի կրկնակօշիկներով, որոնք բրդէ գուլպաների վրայից ամրացրած էին գերձաններով [նա վէգէտարական *) էր և գործ չէր դնում սպանուած կենդանիների մորթի], նոյնպէս բակումն էր ու սպասում էր խմբի ճանապարհ ընկնելուն։ Նա կանգնած էր պատշգամբի մօտ և յիշատակարանում գրում էր այն, ինչ որ այդ րոպէին յանկարծ անցաւ մտքովը։ Ահա թէ ինչ էր այդ.

«Եթէ,—գրում էր նա,—բահաէրիան դիտէր և ուսումնասիրէր մարդուս եղունգը, նա մարդուս կը համարէր անգործածական արարած։ Հէնց այդպէս է, որ մենք երկրագունդը անգործածարանաւոր բան ենք համարում, դիտելով միմիայն նրա կեղևը։ Այդ ճիշտ չէ»։

Երբ Մասլօվան առած ձուկը, օղակաձև բլիթների կապոցը, ձկները ու թարմ յօրինի հացը դարսում էր տոպրակը, իսկ Մարիա Պաւլօվնան տալիս էր մթերավաճառուհիներին հասնելիք փողը, կալանաւորների մէջ իրարանցումն ընկաւ։ Ամենքը լռեցին ու սկսեցին չարուել։ Օֆիցէրը դուրս էր եկել և վերջին կարգադրութիւններն էր անում ճանապարհ ընկնելուց առաջ։

Ամեն ինչ կատարւում էր, ինչպէս միշտ. համարում էին կալանաւորներին, ստուգում էին չղթաների դրութիւնը և միացնում էին ձեռնակապերով գնացող զոյգերը։ Բայց յանկարծ լռեց օֆիցէրի իշխանական զայրացկոտ աղաղակը և մի երեխայի լաց։ Ամեն ինչ սքսկուեց մի րոպէ, իսկ յետոյ արտասուքի խուլ չղուկ անցաւ ամբողջ բազմութեան մէջ։ Մասլօվան ու Մարիա Պաւլօվնան գնացին դէպի աղմուկի տեղը։

*) Վէգէտարականները դէմ են անասուններին մորթելուն, համարելով այդ անխիղճ բան, ուստի նրանք միս չեն գործ ածում կերակրի մէջ։ Նրանք ուտում են կաթ, իւղ և մեծ մասամբ բուսական կերակուրներ։ Վէգէտարականի բառացի նշանակութիւնն է բուսակեր։ Ե. Թ.

II

Մօտենալով աղմուկի տեղին, Մարիա Պաւլօվնան ու կատիւշան տեսան հետևեալը. մի մեծ ու չէկ բեխաւոր հաստատիկ օֆիցէր, կնճռուելով, ձախ ձեռքով տրորում էր աչ ձեռի ափը, որ ցաւացրել էր ապտակելով մի կալանաւորի, և անընդհատ հայհոյանքներ էր թափում այդ կալանաւորի գլխին։ Նրա առաջ կանգնած էր մի կարճ խալաթ ու աւելի կարճ անդրավարտիք հագած և գլխի կէսը ածիլած երկար ու նիհար կալանաւոր, գրկին՝ չալում փաթաթած մի փոքրիկ աղջիկ, որ ճղղում էր զիլ ձայնով։

—Ես քեզ յոյց կը տամ, թէ ինչ կը նշանակի դատողութիւններ անել։ Տուր կնիկներից մէկին,—գոռում էր օֆիցէրը։

—Ձեռաց անց կացրու կառնդ։

Օֆիցէրը պահանջում էր, որ ձեռնակապ անց կացնեն այդ կալանաւորի կռանը, որ աքսորւում էր հասարակական վճռով և որ Տօմսկից սկսած ինքն էր գրկած տանում իր փոքրիկ աղջկան, որովհետև կինը Տօմսկում մեռել էր տիֆից։ Օֆիցէրը վատ տրամադրութեան մէջ էր և սաստիկ զրգռուել էր լսելով կալանաւորի առարկութիւնը, թէ կապած ձեռքով չի կարող տանել երեխային։

Կալանաւորի դիմացը կանգնած էին մի պինուր և մի ուրիշ, թիկնեղ ու սևամորուք կալանաւոր, որ, մի կոճը ձեռով նախապով կապած, յօնքերի տակից մռայլ կերպով նայում էր օֆիցէրին, սպասելով, որ իրան զուգակցեն երեխան գրկած կալանաւորի հետ։ Օֆիցէրը կրկին հրամայեց պինուորին՝ առնել կալանաւորի ձեռքից երեխային։ Կալանաւորների ղեկուցը աւելի ու աւելի սաստկանում էր։

—Տօմսկից մինչև այստեղ առանց ձեռնակապի է եկել,—լսուեց մի խռպոտ ձայն յետին շարքերից։

—Շան լակոտ հօ չի, երեխայ է։

—Հապա ինչ պէտք է անի երեխային։

—Օրէնք չի այդ,—ասաց էլի մի ձայն։

—Այդ ոմն է համարձակւում,—գոռաց օֆիցէրը, օձից խայթուածի պէս, ու վրայ պրծաւ դէպի կալանաւորները։—Ես քեզ այնպէս օրէնք յոյց տամ ձեր։ Այդ ոմն էր օրէնք ասողը։ Դուռ էիր։ Դուռ էիր։

—Ամենքն են ասում։ Որովհետև...—ասաց մի լայներես, կարճլիկ կալանաւոր։

—Ապստամբութիւն էք անում, կացէք, ես ձեզ ցոյց կը տամ։ Ա՛ռ, ասում եմ, լակոտին։

Ամբոխը սբսկուեց։ Զինուորներից մէկը խլեց կալանաւորի ձեռքից յուսահատ ճչացող երեխային, իսկ մի ուրիշը սկսեց ձեռնակապը անց կացնել կալանաւորի կռանը, որ նա մնկնել էր հրու կերպով։

—Տար տուր կանանց,—գոռաց օֆիցերը զինուորին, ուղղելով իր վրայի թրակալը։

Երեխան, որի արիւնը տուել էր երեսը, աշխատում էր ազատել ձեռքերը չալի մէջից ու ճչում էր անդադար։ Ամբոխի մէջից դուրս եկաւ Մարիա Պաւլօվնան ու մօտեցաւ զինուորին։

—Պարոն օֆիցեր, թոյլ տուէք ես տանեմ երեխային։

Երեխան գրկած զինուորը կանգ առաւ։

—Դու ո՞վ ես,—հարցրեց օֆիցերը։

—Քաղաքական յանցաւոր եմ։

Անվերապահ, Մարիա Պաւլօվնայի սիրուն դէմքը իր գեղեցիկ կոկոն աչքերով (օֆիցերը արդէն նկատել էր նրան խումբը ստանձնելիս) ազդեց օֆիցերի վրայ։ Նա լուռ կերպով նայեց նրան, կարծես ինչ որ կշռադատելով մտքումը։

—Ինձ համար միևնոյնն է, տարէք, եթէ ուզում էք։ Ձեզ ինչ, դուք կարող էք խղճալ նրանց, բայց եթէ փախչի, ո՞վ է պատասխանատուն։

—Իո՞նչպէս կարող էր նա փախչել երեխան գրկին,—ասաց Մարիա Պաւլօվնան։

—Ժամանակ չունեմ ձեզ հետ խօսելու։ Որ ուզում էք, վերցրէք։

—Իրաւունք տալիս էք տամ իրան,—հարցրեց զինուորը։

—Տուր։

—Սրի մօտս,—ասում էր Մարիա Պաւլօվնան, ձեռքով կանչելով իր մօտ երեխային։

Բայց երեխան, որ զինուորի գրկից մնկնում էր դէպի հայրը, չարունակում էր ճղռալ և չէր գնում Մարիա Պաւլօվնայի գիրկը։

—Կացէք, Մարիա Պաւլօվնա, նա ինձ մօտ կը գայ,—ասաց Մասլօվան տոպրակից մի բլիթ հանելով։

Երեխան ճանաչում էր Մասլօվային և տեսնելով նրա դէմքն ու բլիթը՝ գնաց նրա գիրկը։

Ամէն ինչ խաղաղուեց։ Դարպասը բաց արեցին, կալանաւորները դուրս եկան ու չարուեցին, զինուորականները նորից համարեցին նրանց, տոպրակները կապեցին ու դարսեցին և

թոյլերին նստեցրին սայլակների վրայ։ Մասլօվան, երեխան գրկին, կանգնեց կանանց չարքում, Ֆեդօսեայի կողքին։ Սիմօնսօնը, որ ամբողջ ժամանակը դիտում էր, թէ ինչ է կատարուում, լայն-լայն ու վճռական քայլերով մօտեցաւ օֆիցերին, որ, բոլոր կարգադրութիւնները վերջացրած, արդէն նստում էր իր կառքը։

—Դուք վատ վարուեցիք, պարոն օֆիցէր,—ասաց Սիմօնսօնը։

—Կորէք ձեր տեղը, այդ ձեր բանը չի։

—Իմ բանն էր ձեզ ասել եւ ես ասացի, որ դուք վատ վարուեցիք,—առարկեց Սիմօնսօնը, աչքերը սևեռած օֆիցերի երեսին իր խիտ յօնքերի տակից։

—Պատրաստ է։ Մարշ,—գոռաց օֆիցերը առանց ուշադրութիւն դարձնելու Սիմօնսօնի վրայ և բռնելով կառապան զինուորի ուսից՝ բարձրացաւ նստեց կառքի մէջ։ Կալանաւորների չարքերը չարժուեցին և, ձգուելով, դուրս եկան անիւների հետքերից խորդ ու բորդ դարձած ցեխոտ ճանապարհը, որ անցնում էր միապաղաղ անտառի միջով և որի երկու կողմից փորուած էին խանդակներ։

III

Վերջին վեց տարին անառակութեան ճոխ ու հեշտասէր կեանքով ապրելուց և երկու ամիս էլ բանտում քրէական յանցաւորների մէջ անցկացնելուց յետոյ Կատիւշան իրան չատ լաւ էր զգում ընկնելով քաղաքական յանցաւորների մէջ, չը նայելով նրանց կեանքի պայմանների ամբողջ ծանրութեանը։ Օրը 20—30 վերստ ոտով գնալով, լաւ կերակրուելով և երկու օր ճանապարհ գնալուց յետոյ մի օր հանգստանալով, նա կազդուրուեց ֆիզիկապէս, իսկ յարաբերութիւն ունենալով նոր ընկերների հետ՝ նա դաղափար ստացաւ կեանքի այնպիսի չափերի մասին, որոնց մասին առաջ ոչ մի հասկացողութիւն չունէր։

Նա հիացած էր իր բոլոր նոր ընկերակիցներից։ Բայց ամենից աւելի նա հիացած էր Մարիա Պաւլօվնայից և ոչ միայն հիացած էր նրանից, այլ և սիրեց նրան մի առանձին պատկառելից ու յափշտակուած սիրով։ Նրան ապշեցնում էր այն, որ այդ հարուստ գեներալական ընտանիքից ծագող սիրուն աղջիկը, որ երեք լեզուով խօսել գիտէր, իրան այնպէս էր պահում, ինչպէս մի ամենահասարակ աշխատաւոր կին և ինչ որ հարուստ եղբայրը ուղարկում էր՝ բոլորը տալիս էր ուրիշ-

ներին ու հագնւում էր ոչ միայն հասարակ, այլ և աղքատիկ կերպով, ամենևին ուշադրութիւն չը դարձնելով իր արտաքինի վրայ։ Նրա այդ առանձնայատկութիւնը, կօքետութեան այդ կատարեալ բացակայութիւնը չափազանց զարմացնում էր Մասլօվային և այդ պատճառով չատ դրաւիչ էր թւում նրան։ Մասլօվան տեսնում էր, որ Մարիա Պաւլօվնան գիտէր, որ ինքը սիրուն է և նոյն իսկ այդ բանը հաճոյք էր պատճառում նրան, բայց ոչ միայն չէր ուրախանում, որ տպաւորութիւն էր գործում տղամարդկանց վրայ, այլ ընդհակառակը վախենում էր դրանից և ուղղակի զզուանքով ու երկիւղով էր վերաբերւում սիրահարութեանը։ Նրա ընկեր տղամարդիկ գիտէին այդ բանը և, եթէ քնքոյշ զգայմունք էին տածում դէպի նա, թոյլ չէին տալիս իրանց՝ ցոյց տալ այդ և վարւում էին նրա հետ, իբր ընկեր տղամարդու հետ։ Բայց անծանօթ մարդիկ յաճախ հետամուտ էին լինում նրան և նրանցից, ինչպէս ինքը պատմում էր, ամենատում էր նրան նրա ֆիզիկական մեծ ոյժը, որով նա առանձնապէս պարծենում էր։ «Մի անգամ,—պատմում էր նա ծիծաղելով,—մի պարոն յետևիցս ընկաւ փողոցում ու չէր ուզում պակ գալ, բայց ես այնպէս թափահարեցի նրան, որ վախեցաւ ու թողեց փախաւ»։

Նա պատմում էր, որ ինքը երեխայութիւնից զզուանք էր զգում դէպի աղայական կեանքը և ընդհակառակը սիրում էր հասարակ մարդկանց կեանքը և որ իրան անդադար թքում էին, որ դահլիճումը ինալու տեղեակ, չարունակ վայր ընկած է լինում աղախինների սենեակում, խոհանոցում ու գոմում։

—Ինհարարուհիների ու կառապանների հետ ժամանակս ուրախ էր անցնում, իսկ երբ մեր պարոնների ու տիկիններին հետ էի լինում, սիրտս նեղանում էր,—պատմում էր նա։—Ցետոյ, երբ սկսեցի հասկանալ ամեն բան, տեսայ, որ մեր կեանքը չատ վատ կեանք է։ Մայրս կենդանի չէր. հօրս չէի սիրում. քոյրս չատ վատ կեանք է։ Մայրս կենդանի չէր. հօրս չէի սիրում. տանինները տարեկան հասակում հեռացայ տանից ու ընկերուհիներից մէկի հետ մտայ մի գործարան իբր բանուորուհի։

Գործարանից յետոյ նա ապրել էր գիւղում, յետոյ վերադարձել էր քաղաք, ձերբակալուել էր ու դատապարտուել տաժանակիր աշխատանքների։ Մարիա Պաւլօվնան երբէք ոչինչ չէր ասում այդ մասին, բայց կատիւշան ուրիշներից իմացել էր, որ նա դատապարտուել էր տաժանակիր աշխատանքների, որովհետև իր վրայ էր առել մի ուրիշի յանցանքը։

Նրան ճանաչելու օրից կատիւշան տեսնում էր, որ որտեղ էլ լինէր նա, ինչ պայմաններ էլ լինէին, նա երբէք չէր

մտածում իր մասին, այլ միշտ հոգս էր տանում, թէ ինչպէս ծառայութիւն մատուցանի, ինչպէս օգնի ուրիշներին մեծ կամ փոքր բանում։ Նրա այժմեան ընկերներից մէկը, Նօվօդվօրօվը, կատակով ասում էր թէ նա գրաւուած է բարեգործութեան սպօրտով։ Եւ այդ ճիշտ էր։ Ինչպէս որսորդին հետաքրքրողը միայն այն է, որ որս գտնի, այնպէս էլ նրա կեանքի միակ չարը այն էր, որ առիթ գտնէր ուրիշին լաւութիւն անելու։ Եւ այդ սպօրտը նրա համար սովորութիւն, կեանքի նպատակակէտ էր դարձել։ Եւ այնքան բնական կերպով էր անում նա այդ, որ նրան ճանաչողները այլ ևս չէին զնահատում այդ, այլ ուղղակի պահանջում էին նրանից։

Երբ որ Մասլօվան մտաւ նրանց խումբը, Մարիա Պաւլօվնան հակակրութիւն ու զզուանք զգաց դէպի նա. կատիւշան նկատեց այդ։ Բայց յետոյ այն էլ նկատեց, որ Մարիա Պաւլօվնան, ձիւդ գործ դնելով իր վրայ, սկսեց նրա հետ վարուել առանձնապէս բարի ու քաղցր կերպով։ Եւ այդպիսի մի արտասովոր. էակի բարութիւնն ու քաղցրութիւնը այնքան խանդաղատեցին Մասլօվային, որ նա ի բոլոր սրտէ նուիրուեց նրան ու սկսեց անպիտակցաբար իւրացնել նրա հայեացքները ու ակամայ նմանուել նրան ամեն բանում։ Կատիւշայի այդ անձնուէր սէրը՝ խանդաղատեցրեց Մարիա Պաւլօվնային, և նա էլ սկսեց նոյնպէս սիրել Կատիւշային։

Այդ կանանց մտերմութեանը նպաստում էր նաև այն, որ երկուսն էլ զզուանք էին զգում դէպի ֆիզիկական սէրը։ Մէկը ատում էր այդ սէրը, որովհետև փորձով ճանաչել էր նրա ամբողջ սարսափելիութիւնը, միւսը—որովհետև, երբէք զգացած չը լինելով այդպիսի սէր, համարում էր այդ սէրը մի անհասկանալի և միևնոյն ժամանակ մի զզուելի ու մարդկային արժանաւորութեան համար վիրաւորական բան։

IV

Մարիա Պաւլօվնայի աղդեցութիւնը այն աղդեցութիւններից մէկն էր, որոնց ենթարկւում էր Մասլօվան։ Նա յառաջանում էր նրանից, որ Մասլօվան սիրում էր Մարիա Պաւլօվնային։ Միւս աղդեցութիւնը, որին ենթարկւում էր Մասլօվան, Սիմոնսոնի աղդեցութիւնն էր։ Այդ աղդեցութիւնն էլ նրանից էր յառաջանում, որ Սիմոնսոնը սիրում էր Մասլօվային։

Բոլոր մարդիկ ապրում և գործում են մասամբ իրանց, մասամբ ուրիշների հայեացքներով։ Մարդկանց մէջ եղած գլխաւոր տարբերութիւններից մէկը հէնց նրանումն է կայանում, թէ ինչ

չափով են մարդիկ իրանց հայեացքներով ապրում և ինչ չափով ուրիշների հայեացքներով։ Մարդկանցից շատերը մեծ մասամբ իրանց մտածմունքներին վերաբերում են իբրև մի մեռած խաղի և իրանց բանականութեան հետ վարւում են իբրև մի մեքենավար անուի հետ, որի վրայից հանուած է հաղորդիչ փոկը, իսկ իրանց վարմունքների մէջ ենթարկւում են ուրիշների հայեացքներին,—սովորոյթներին, աւանդութեանը, օրէնքին։ Բայց կան այնպիսի մարդիկ էլ, որոնք իրանց հայեացքները հաստատելով իրանց ամբողջ գործունէութեան գլխաւոր դրդիչը, գրեթէ միշտ ակամայ են դնում իրանց բանականութեան պահանջներին ու ենթարկւում են նրան, միմիայն հաղուագիւտ դէպքերում, այն էլ քննադատական դնահատութիւնից յետոյ, վարւելով ուրիշների վճռածի համաձայն։ Այդպիսի մարդ էր Սիմօնսօնը։ Նա ամեն ամեն ինչ սուտում ու վճռում էր իր խելքով և ինչ որ վճռում էր, այն էլ անում էր։

Դեռ գիմնազիստ ժամանակը վճռելով, որ այն կարողութիւնը, որ վատահել էր իր հայրը, լինելով զօրքի մէքանոյի ատեհանաւոր, անարնիւ միջոցներով է ձեռք բերուած, նա յայտնեց հօրը, որ այդ կարողութիւնը պէտք է տալ ժողովրդին։ Իսկ երբ հայրը ոչ միայն չը լսեց նրա ասածին, այլ և նախատեց նրան, նա հեռացաւ տանից, չուզելով այլ ևս օգտուել հօր կարողութիւնից։ Վճռելով, որ գոյութիւն ունեցող չարիքը ամբողջապէս յառաջանում է ժողովրդի տգիտութիւնից, նա, դուրս գալով համալսարանից, մտերմացաւ նարօդնիկների (ժողովրդասէրների) հետ, գիւղական ուսուցիչ դարձաւ և սկսեց համարձակ կերպով քարոզել թէ աշակերտներին և թէ գիւղացիներին այն ամենը, ինչ որ ինքը արդար էր համարում, և բացասել այն, ինչ որ սուտ ու կեղծ էր համարում։

Նրան ձերբակալեցին ու դատի ենթարկեցին։

Դատի ժամանակ նա վճռեց, որ դատաւորները իրաւունք չունեն իրան դատելու, և յայտնեց նրանց այդ բանը։ Իսկ երբ դատաւորները չը համաձայնեցին նրա հետ ու շարունակեցին դատել նրան, վճռեց չը պատասխանել նրանց հարցերին և լուռ մնաց մինչև վերջը։ Նրան աքսորեցին Արխանգելսկի նահանգը։ Այնտեղ նա մի կրօնական վարդապետութիւն կազմեց իր համար, որին ենթարկում էր այնուհետև իր ամբողջ գործունէութիւնը։ Այդ կրօնական վարդապետութիւնը կայանում էր նրանում, թէ ամեն ինչ աշխարհումս կենդանի է, թէ չը կայ անկենդան բան, թէ այն բոլոր բաները, որ մենք անկենդան, անգործարանաւոր ենք համարում, լոկ մասեր են մի անհուն կենդանի, գործարանաւոր էակի, որ մենք ըմբռնել, մտքով ընդ-

գրկել չենք կարող, և թէ այդ պատճառով մարդս, լինելով այդ անհուն գործարանաւոր էակի մի մասնիկը, կեանքի նպատակակէտ պէտք է ունենայ պահպանել այդ էակի և նրա բոլոր կենդանի մասերի կեանքը։ Ուստի և նա յանգամանք էր համարում կենդանի էակների ոչնչացումը ու պատերազմների, մահհուան պատժի ու ամեն տեսակ սպանութեան,—թէ մարդասպանութեան, թէ անասնասպանութեան,—դէմ էր։ Ամուսնութեան վերաբերմամբ էլ նա իր տեսութիւնն ունէր, որ կայանում էր նրանում, թէ մարդկանց բազմացումը միմիայն մարդուս ստորին պաշտօնն է, իսկ գերագոյն պաշտօնը՝ արդէն գոյութիւն ունեցող կենդանի էակներին ծառայելն է։ Այդ հայեացքի հաստատութիւնը նա գտնում էր այն բանում, որ արիւնի մէջ գոյութիւն ունեն ֆագօցիտներ *)։ Անամուսին մարդիկ, նրա կարծիքով, մի տեսակ ֆագօցիտներ են, որոնց կոչումն է օգնել օրգանիզմի թոյլ, տկար մասերին։ Այնուհետև նա իր այդ վճռի համեմատ էլ ապրում էր, թէև առաջ, պատանի ժամանակը անձնատուր էր լինում անառակութեան։ Նա ինքն իրան ու Մարիա Պաւլօվնային համաչխարհային ֆագօցիտներ էր համարում։

Նրա սէրը դէպի Կատիւշան չէր խախտում այդ սկզբունքը, որովհետև նա սիրում էր նրան պատօնական կերպով, ենթադրելով, թէ այդպիսի սէրը ոչ միայն չէ խանգարում թոյլերին օգնելու ֆագօցիտային գործունէութեանը, այլ և աւելի ևս ոգևորում է մարդուս այդ նկատմամբ։

Բայց նա իւրատեսակ էր վճռում ոչ միայն բարոյական հարցերը, այլ և գործնական հարցերի մեծ մասը։ Նա բոլոր գործնական հարցերի համար իր սկզբունքներն ունէր. կանոններ ունէր, թէ քանի ժամ պէտք է աշխատի, քանի ժամ՝ հանգստանայ, ինչպէս ուտի, ինչպէս հագնուի, ինչպէս վառի վառարանը, ինչպէս լուսաւորի սենեակը գիշերները։

Այն էլ պէտք է ասել, որ Սիմօնսօնը չատ ամաչկոտ ու համեստ մարդ էր։ Բայց երբ մի բան վճռել էր, այլ ևս ոչինչ չէր կարող կասեցնել նրան։

Ահա այդ մարդն էր, որ վճռական ազդեցութիւն ունէր Մասլօվայի վրայ, չնորհիւ այն բանի, որ սիրում էր նրան։ Մասլօվան իր կանացի նրբազգացութեամբ չատ չուտով հասկացաւ այդ բանը և այն դիտակցութիւնը, թէ ինքը կարողա-

*) Սպիտակ գնդակներ, որոնք կռիւ են մղում միկրօբների դէմ և յաջողութեան դէպքում ազատում են մարմինը վարակիչ հիւանդութիւններից։ Ե. Թ.

ցել էր սէր զարթեցնել այդպիսի արտասովոր մարդու մէջ, բարձրացրեց նրան իր աչքում։ Նեխլիւդովը առաջարկում էր ամուսնանալ հետը մեծահոգութիւնից և անյանգի պատճառով, իսկ Սիմոնսոնը սիրում էր նրան այնպէս, ինչպէս որ նա էր այժմ, և սիրում էր պարզապէս այն պատճառով, որ սիրում էր։ Բայի այդ՝ նա զգում էր, որ Սիմոնսոնը նրան համարում էր արտակարգ, միւս բոլորից տարբերուող, առանձին բարձր բարոյական արժանաւորութիւնների տէր կին։ Նա լաւ չը գիտէր, թէ ինչ առանձնայատկութիւններ է վերագրում իրան Սիմոնսոնը, բայց, յամենայն դէպս, նրան խաբած չը լինելու համար, ամեն չանք գործ էր դնում յառաջ բերել իր մէջ ամենալաւ տրամադրութիւններ, որքան որ խելքը հասնում էր։ Եւ այդ ամիսում էր նրան աշխատել լինել այնքան լաւ, որքան որ նա կարող էր։

Այդ սկսուել դեռ բանտում, երբ քաղաքական յանցաւորների ընդհանուր տեսակցութեան ժամանակ, նա նկատեց, թէ ինչպէս Սիմոնսոնը մի առանձին յամառութեամբ յառել է նրա վրայ իր անմեղ ու բարի մուգ կապտագոյն աչքերի հայեացքը՝ առաջ ընկած ճակատի ու յօնքերի տակից։ Դեռ այն ժամանակ նա նկատեց, որ նա մի առանձին տեսակ է նայում իր վրայ, և նկատեց նոյնպէս այդ դղրդած մազերից ու կիտուած յօնքերից յառաջացած գաժանութեան և հայեացքի մանկական բարութեան ու անմեղութեան զարմանալի միայոմը մի դէմքի մէջ։ Յետոյ, երբ Տօմսկում նրան փոխադրեցին քաղաքական յանցաւորների խումբը, նա նորից տեսաւ Սիմոնսոնին։ Եւ չը նայելով, որ նրանք ոչ մի խօսք չասացին իրար, բայց և այնպէս նրանց փոխանակած հայեացքը արտայայտեց, որ նրանք կարևոր են միմեանց համար։ Այնուհետև էլ նրանց մէջ առանձին կարևոր իսօսակցութիւններ տեղի չէին ունեցել, բայց Մասլօվան զգում էր, որ երբ Սիմոնսոնը խօսում էր իր ներկայութեամբ, նրա խօսքը ուղղուած էր լինում իրան և նա խօսում էր իր համար, աշխատելով արտայայտել մտքերը որքան կարելի է հասկանալի ոճով։ Իսկ աւելի մտերմանալ սկսեցին նրանք մանաւանդ այն ժամանակից, երբ Սիմոնսոնը սկսեց ոտով գնալ քրէական յանցաւորների հետ։

V

Նիժնիյից մինչև Պերմ Նեխլիւդովին յաջողեց տեսնուել Կատիւշայի հետ միմիայն երկու անգամ. մի անգամ Նիժնիյում, նախքան կալանաւորներին ցանցապատ ապրանքանաւը նստացնելը,

իսկ միւս անգամ՝ Պերմում, բանտի գրասենեակում, եւ այդ երկու տեսակցութիւնների ժամանակ էլ ծածկամիտ ու չար թուաց նրան կատիւշան։ Երբ Նեխլիւդովը հարցնում էր, թէ լաւ է զգում իրան և արդեօք ոչինչ պէտք չի՞ նրան, նա չփոթւում էր ու խուսափում էր ուղղակի հարցին պատասխանելուց, և, ինչպէս Նեխլիւդովին թուում էր, պատասխանում էր յանդիմանական ու թշնամական զգացմունքով, որ առաջ էլ արտայայտւում էր նրա մէջ։ Եւ նրա այդ մռայլ տրամադրութիւնը, որ յառաջանում էր միմիայն այն հետաքրքրութիւնից, որին նա ենթարկում էր այդ ժամանակ տղամարդկանց կողմից, տանջում էր Նեխլիւդովին։ Նա վախենում էր, որ մի գուցէ Մասլօվան այն ծանր ու անառակացնող պայմանների ազդեցութեան տակ, որոնց մէջ նա գտնւում էր ճանապարհորդութեան ժամանակ, յանկարծ նորից ընկնի առաջուան պէս այն ինքնապահպանման և յուսահատ վիճակի մէջ, որի մէջ նա գրգռւում էր նրա դէմ և սկսում էր սաստիկ ծխել ու խմել, ինքնամոռացութեան մէջ ընկնելու համար։ Բայց նա ոչ մի բանով չէր կարող օգնել Մասլօվային, որովհետև ճանապարհորդութեան այդ սիզքի ժամանակները հնարաւորութիւն չունէր տեսնուելու նրա հետ։ Միայն այն ժամանակ, երբ Մասլօվան փոխադրուեց քաղաքական յանցաւորների խումբը, նա ոչ միայն համոզուեց, որ իր ահը անհիմն էր, այլ և, ընդհակառակը, ամեն մի նոր տեսակցութեան միջոցին աւելի ու աւելի էր նկատում նրա մէջ այն ներքին փոփոխութիւնը, որ ինքը այնքան սաստիկ ցանկանում էր տեսնել նրա մէջ։ Հէնց առաջին տեսակցութեան ժամանակ Տօմսկում, Մասլօվան գարձեալ այնպէս հանդիպեց նրան, ինչպէս Մոսկուայից ճանապարհ ընկնելուց առաջ։ Նա չը նօթատուեց ու չը չփոթուեց տեսնելով Նեխլիւդովին, այլ, ընդհակառակը, ուրախ-ուրախ և պարզ կերպով հանդիպեց նրան ու չնորհակալութիւն յայտնեց այն բոլորի համար, որ նա արել էր իր համար, և մանաւանդ այն բանի համար, որ իրան մղուցրել էր այն մարդկանց շրջանը, որոնց մէջ էր գտնւում նա այժմ։

Երկու ամիս ճանապարհ գնալուց յետոյ նրա մէջ կատարուած փոփոխութիւնը սկսել էր արտայայտուել նաև նրա արտաքինի մէջ։ Նա նիհարել էր, արևից սևացել և կարծես թէ պառաւել. քունքերի վրայ և բերնի երկու կողմը սկսել էին խորշումներ երևալ, մազերը այլևս ճակատին չէր շաղ տալիս, այլ գլխին չոր էր կապուած, և ոչ հագուստի, ոչ սանրուածքի, ոչ էլ վարմունքի մէջ չը կար այլ ևս ոչ մի նշան անցեալ կզբէտութիւնից։ Եւ նրա մէջ կատարուած այդ փոփոխութիւնը չարու-

նակ չափազանց բերկրալից զգացմունք էր զարթեցնում Նեխլիւդովի մէջ։

Նեխլիւդովը զգում էր այժմ դէպի Մասլովան այնպիսի զգացմունք, որ առաջ երբէք չէր զգացել։ Այդ զգացմունքը ամենևին նման չէր ոչ առաջին բանաստեղծական յափշտակութեանը, ոչ էլ նա առաւել այն զգայական սիրահարութեան, որ նա զգում էր յետոյ, և ոչ նոյն իսկ այն ինքնահիացման հետ խառն գոհունակութեան զգացմունքին, որ յառաջանում էր պարտականութիւնը կատարած լինելու գիտակցութիւնից և որ նա զգում էր, երբ գտից յետոյ վճռեց պսակուել Մասլովայի հետ։ Այդ զգացմունքը նոյն կարեկցութեան և խանդաղատանքի պարզ զգացմունքն էր, որ նրա սրտում զարթել էր առաջին անգամ, երբ նա տեսնուել էր Կատիւշայի հետ բանտում, և յետոյ, մի նոր այժով, երբ Մասլովային դուրս էին արել հիւանդանոցից և երբ ինքը, յաղթելով իր զգացած զզուանքին, ներել էր նրան ֆելդշէրի հետ ունեցած երևակայեալ պատմութեան համար (որի անիրաւացի լինելը պարզուել էր յետոյ)։ Նոյն զգացմունքն էր այդ, միայն թէ այն տարբերութեամբ, որ այն ժամանակ նա ժամանակաւոր բան էր, իսկ այժմ դարձել էր մշտական։ Ինչի մասին էլ որ մտածելիս լինէր այժմ և ինչ էլ որ անելիս լինէր, նրա ընդհանուր տրամադրութիւնը կարեկցութեան և խանդաղատանքի այդ զգացմունքն էր ոչ միայն դէպի Մասլովան, այլ և դէպի բոլոր մարդիկ։

Այդ զգացմունքը կարծես Նեխլիւդովի հոգու մէջ սիրոյ մի հեղեղատ էր բացել, որ առաջ ելք չէր գտնում, իսկ այժմ ուղղուում էր դէպի բոլոր մարդիկ, որոնց նա հանդիպում էր։

Նեխլիւդովը ամբողջ ճանապարհորդութեան ժամանակ գտնուում էր այն գրգռուած դրութեան մէջ, որի միջոցին նա ակամայ կարեկից և ուշադիր էր դառնում դէպի բոլոր մարդիկ, սկսած կառապանից ու ուղեկցող զինուորից և վերջացրած այն բանտապետներով ու նահանգապետներով, որոնց հետ նա գործ էր ունենում։

Այդ միջոցին, Մասլովայի քաղաքական յանցաւորների խումբը փոխադրուելու չնորհիւ, Նեխլիւդովը ծանօթացաւ շատ քաղաքական յանցաւորների հետ, սկզբում Եկատերինբուրգում, ուր նրանց շատ ազատ էին պահում բոլորին միասին մի մեծ սենեակում, իսկ յետոյ ճանապարհին այն 5 տղամարդկանց և 4 կանանց հետ, որոնց խմբակն էին փոխադրել Մասլովային։

Նրանց աւելի մօտիկ ճանաչելուց յետոյ Նեխլիւդովը համոզուեց, որ նրանք մեծից մինչև փոքրը չարագործներ չէին, ինչպէս երևակայում էին շատերը, և ոչ էլ մեծից մինչև փոքրը

հերոսներ, ինչպէս նրանցից ոմանք կարծում էին իրանց կուսակցութեան պատկանողների մասին, այլ սովորական մարդիկ, որոնց մէջ կային, ինչպէս ամեն տեղ, և՛ լաւ, և՛ վատ, և՛ միջակ մարդիկ։ Նրանց մէջ կային և այնպիսիները, որոնք զեկավարում էին եսական, անձական դրդումներով. իսկ մեծամասնութեան գրաւուելու պատճառն եղել էր՝ Նեխլիւդովին զինուորական ծառայութեան ժամանակից ծանօթ ցանկութիւնը վտանգի ենթարկուել, այն հաճոյքը, որ մարդ զգում է, երբ նա խաղում է իր կեանքի հետ,—զգացմունքներ, որոնք յատուկ են ամենասովորական եռանդուն երիտասարդութեան։ Սակայն մօտիկ ճանաչելով նրանց, Նեխլիւդովը համոզուեց, որ նրանք նոյնպիսի մարդիկ էին, ինչպէս և ուրիշները, միայն թէ այն տարբերութեամբ, որ նրանց մէջ նրանք, որոնք բարձր էին միջին մակերևոյթից, չատ չատ բարձր էին, իսկ նրանք, որոնք ցած էին այդ մակերևոյթից, չատ չատ ցած էին ու յաճախ ստախօս, կեղծաւոր ու մի և նոյն ժամանակ անձնապաստան ու հպարտ։ Այնպէս որ Նեխլիւդովը դէպի իր նոր ծանօթներից մի քանիսը աւելի քան անտարբեր կեպով էր վերաբերուում, իսկ մի քանիսին սիրում էր ի բոլոր սրտէ։

Մանաւանդ չատ սիրեց Նեխլիւդովը տաժանակիր աշխատանքների դատապարտուած մի թոքախտաւոր երիտասարդի,—Կրիլցով ազգանունով,—որ այն խմբակումն էր, ուր փոխադրել էին Մասլովային։ Նեխլիւդովը ծանօթացել էր նրա հետ դեռ Եկատերինբուրգում և այնուհետև ճանապարհին մի քանի անգամ տեսնուել ու խօսել էր հետը։ Մի անգամ ամառը էտապներից մէկում ցերեկուայ հանգստի ժամանակ Նեխլիւդովը գրեթէ ամբողջ ցերեկը անցկացրեց նրա հետ և Կրիլցովը, խօսքի բռնուելով, պատմեց նրան իր ամբողջ կեանքը։ Նրա կենսագրութիւնը մինչև բանտ ընկնելը չատ կարճ էր։ Նրա հայրը, որ հարուստ կալուածատէր էր հարաւային նահանգներից մէկում, մնում էր երբ նա դեռ փոքր երեխայ էր։ Նա ծնողների միակ որդին էր և մայրն էր դաստիարակել նրան։ Նա լաւ էր սովորում թէ գիմնազիայում, թէ համալսարանում և երբ ուսումը աւարտել էր մաթեմատիկական բաժանմունքում առաջին կանդիդատի աստիճանով, նրան առաջարկել էին մնալ համալսարանում ու գնալ արտասահման։ Բայց նա տատանուում էր։ Մի աղջիկ կար, որին նա սիրում էր, և նա մտածում էր պսակուել և նուիրուել հասարակական գործունէութեան՝ զեմստվոյի ասպարէզում։ Սիրոը ամեն բան ուզում էր, բայց չէր կարողանում որ և է բան վճռել։ Այդ ժամանակ համալսարանական ընկերները փող էին ուզել նրանից մի ընդհանուր գործի համար։ Նա գիտէր, թէ ինչ

ընդհանուր գործ է այդ, և այն ժամանակ ամենևին չէր հետաքրքրուում այդ գործով, բայց ուզած փողը տուել էր, դրդուած ընկերական զգայմունքից և ինքնասիրութիւնից, որպէս դի չը կարծեն, թէ ինքը վախենում է։ Փողը ստացողները բռնուել էին և նրանց մօտ գտնուել էր մի տոմսակ, որից երևում էր, որ փող տուողը կրիլցօվն է եղել. այն ժամանակ նրան էլ բռնել էին ու կալանաւորել՝ նախ ոստիկանատանը, յետոյ բանտում։

Բանտից դուրս գալուց յետոյ նա զանազան յանձնարարութիւններով գնում էր երբեմն հարաւային նահանգները, երբեմն Պետերբուրգ, երբեմն էլ Կիև կամ Օդեսսա։ Բայց մի մարդ, որին նա վերաբերում էր կատարեալ վստահութեամբ, նրան մատնել էր։ Նրան ձերբակալել էին, դատի ենթարկել, երկու տարի պահել բանտում և վերջը դատապարտել մահուան պատժի, որ սակայն փոխարինել էին ցկեանս տաժանակիր աշխատանքներով։

Բանտում նա թոքախտ էր ստացել և այժմ այն պայմաններում, որոնց մէջ նա գտնուում էր, նա կարող էր հազիւ-հազ մի քանի ամիս ապրել, և նա գիտէր այդ։

VI

Այն օրը, երբ էտապից դուրս գալիս երեխայի պատճառով ընդհարում տեղի ունեցաւ ուղեկցող օֆիցէրի և կալանաւորների մէջ, Նեխլիւդօվը, որ գիշերել էր քարվանսարայում, ուշ զարթնեց և յետոյ էլ երկար ժամանակ նստած նամակներ էր գրում, որ ուզում էր պատրաստել մինչև նահանգական քաղաք հասնելը՝ այնտեղից ուղարկելու համար, այնպէս որ քարվանսարայից սովորականից ուշ դուրս եկաւ և չը հասաւ կալանաւորների յետևից ճանապարհին, ինչպէս այդ լինում էր առաջ, այլ արդէն մթնով հասաւ այն գիւղը, որի մօտ գտնուում էր կիսաէտապը։ Զորացնելով չորերը քարվանսարայում, որի պահողը մի տարիքով ու հաստլիկ այրի կին էր՝ արտասովոր հաստութեամբ սպիտակ վզով, Նեխլիւդօվը՝ բազմաթիւ սրբերի պատկերներով ու նկարներով զարդարուած մաքուր սենեակում թէյ խմեց ու չտապեց գնալ էտապը՝ տեսակցութեան համար օֆիցէրից թոյլտուութիւն խնդրելու։

Նախընթաց վեց էտապներում՝ ուղեկցող օֆիցէրները թէև փոխուում էին, բայց բոլորն էլ արգելում էին Նեխլիւդօվին մտնել էտապի չէնքը, այնպէս որ մի շաբաթից աւելի կը լինէր, ինչ նա չէր տեսել Կատիւշային։ Այդ խստութեան

պատճառն այն էր, որ պէտք է այդ ճանապարհով անցնէր մի բարձրաստիճան բանտային իշխանաւոր։ Իսկ այժմ այդ իշխանաւորը արդէն անցել գնացել էր, առանց էտապները ոտք դնելու, և Նեխլիւդօվը յոյս ունէր, որ այդ առաւօտ խումբը ընդունած օֆիցէրը, առաջին օֆիցէրների նման թոյլ կը տայ նրան տեսնուել Կատիւշայի հետ։

Իշնանի տիրուհին կառք առաջարկեց գիւղի ծայրում գըտնուող կիսաէտապը գնալու համար, բայց Նեխլիւդօվը գերադասեց ոտով գնալ։ Մի պարթև հասակով ու լայնաթիկունք ջահել մշակ, նոր հոտաւէտ ձիւթ քսած ու ահագին կօշիկներով, յանձն առաւ առաջնորդել նրան։ Երիկնքից մառախուղ էր իջնում և այնքան մութ էր, որ հէնց որ մշակը երկու-երեք քայլ հեռանում էր այն տեղերում, ուր լոյս չէր ընկնում պատուհաններից, Նեխլիւդօվը այլ ևս չէր տեսնում նրան, այլ միայն լսում էր նրա կօշիկների չիչխոցը մածուցիկ ու խոր ցեխի մէջ։ Անցնելով հրապարակը, ուր գտնուում էր եկեղեցին, և մի երկար փողոց, որի երկու կողմից չարչէչար ձգուում էին պայծառ լուսաւորուած պատուհաններ, Նեխլիւդօվը, հետևելով ուղեկցոյին, դուրս եկաւ գիւղի ծայրը, ուր կատարեալ խաւար էր տիրում։ Բայց չուտով այդ խաւարի մէջ սկսեցին երևալ էտապի մօտ վառուող մշուշապատ լապտերների չողքերը։ Ձրագների կարմրագոյն բծերը հետզհետև աւելի մեծանում ու պայծառանում էին. սկսեցին երևալ ցանկապատի սրածայր ու հաստ ձողերը, յետ ու առաջ գնացող պահապանի սև կերպարանքը, չերտաւոր սիւնը և պահապանի խուզը։ Պահապանը, նկատելով մօտեցողներին, ձայն տուեց ըստ սովորութեան՝ «ով էք» և իմանալով, որ իրանցից չեն, այնքան խիստ վերաբերուեց, որ չէր ուզում թոյլ տալ, որ սպասեն ցանկապատի մօտ։ Բայց Նեխլիւդօվի ուղեկցոյը չը չփոթուեց պահապանի խստութիւնից։

—Վա, ինչ խիստն ես եղել, ած,—ասաց նա նրան։—Պահապանապետին կանչիր, իսկ մենք այստեղ կը սպասենք։

Պահապանը, առանց նրանց պատասխան տալու, ինչ որ մի բան գոռաց դռնակի միջով ու կանգ առաւ, յառած աչքերով նայելով, թէ ինչպէս լապտերի լոյսով թիկնաւէտ մշակը տալիս կոտրով սրբում էր Նեխլիւդօվի կօշիկներին կպած ցեխը։ Ցանկապատի ձողերի յետևից լսում էր առնական ու կանացի ձայների ժխոր։ Երկու-երեք րոպէից յետոյ երկաթը զրնգաց, դռնակը բացուեց ու խաւարի մէջից դուրս եկաւ լապտերի լոյսի մէջ պահապանապետը, վերարկուն ուսերին գցած, ու հարցրեց, թէ ինչ են ուզում։ Նեխլիւդօվը տուեց նրան իր նախապէս պատրաստած այցետոմսը, որի վրայ գրել էր, որ խնդրո-

բում է ընդունել իրան անձնական գործով, և խնդրեց տալ այդ այցեառմսը օֆիցէրին։ Պահապանապետը այնքան խիստ չէր, որքան պահապանը, բայց սաստիկ հետաքրքիր էր։ Նա անպատճառ կամենում էր իմանալ, թէ ինչու էր Նեխլիւդովը ուզում տեսնել օֆիցէրին և թէ ով է նա, ամենևաբար չը դանկանալով ձեռքից բաց թողնել այդպիսի հիանալի որս։ Նեխլիւդովը ասաց, որ ինքը առանձին գործ ունի և որ նա իր վարձատրութիւնը կը սաանայ, ու խնդրեց, որ առմսակը յանձնի օֆիցէրին։ Պահապանապետը վերցրեց առմսակը ու գլուխը թափ տալով՝ գնաց։ Նրա գնալուց յետոյ, մի քիչ անցած, դռնակը նորից զրնգաց և սկսեցին դուրս գալ կանայք զամբիւղներով, պտուկներով ու տոպրակներով։ Նրանք լոք էին տալիս դռնակի չէմքի վրայով, զիլ ձայնով պոպատացնելով իրանց առանձին սիբիրական բարբառով։ Նրանց բոլորի հագուստն էլ գեղջկական չէր, այլ քաղաքային—վերարկու և մուշտակ. ներքնազգեստները բարձր քշել էին, իսկ գլխներին գլխաշոր ունէին կապած։ Նրանք լապտերի լոյսով հետաքրքրութեամբ նայում էին Նեխլիւդովին ու նրա ուղեցոյցին։ Իսկ մէկը՝ ամենևաբար ուրախացաւ, տեսնելով թիկնաւէտ մշակին, ու իսկոյն և նէթ փաղաքշաբար հայհոյեց նրան սիբիրեցիավարի։

—Ինչ ես անում այստեղ, զրողի տարած,—դիմեց նա առաջնորդին։

—Այս ճանապարհորդին ճանապարհ ցոյց տուեցի,—պատասխանեց ուղեցոյցը։—Իսկ դու ինչ էիր բերել այստեղ։

—Կաթնեղէն. ասացին, որ առաւօտն էլ գամ։

—Իսկ չասացին, որ գիշերն էլ մնաս,—հարցրեց մշակը։

—Ո՛ը, գետինը մանես, վայրահաչ,—գոռաց կինը, ծիծաղելով։—Հայդա, արի մեզ ճանապարհ գցի մինչև գիւղը։

Ուղեցոյցը մի այնպիսի բան ասաց նրան, որ ոչ միայն կանայք ծիծաղեցին, այլ և պահապանը, ու դիմեց Նեխլիւդովին.

—Մենակ կը գանէք ճանապարհը։ Չէք կորչի։

—Կը գանեմ, կը գտնեմ։

—Եկեղեցին որ անցնէք, երկյարկանի տանից դէպի ա՛յ երկրորդն է։ Այ այս մահակն էլ վերցրէք,—ասաց նա, տալով Նեխլիւդովին իր հաստակից աւելի երկար ձեռնափայտը, և ահագին կօշիկներով չվչփացնելով ցեխը՝ անհետացաւ խաւարում կանանց խմբի հետ։

Նրա ձայնը դեռ լսւում էր մշուշի մէջից, ընդհատուելով կանանց ձայներով, երբ դռնակը նորից զրնգաց և պահապանապետը դուրս եկաւ ու Նեխլիւդովին հրաւիրեց օֆիցէրի մօտ։

VII

Այդ կիսաէտապը, ինչպէս առհասարակ Սիբիրի ճանապարհի բոլոր էտապները ու կիսաէտապները, չինուած էր սրածայր գերանների պատուարով չրջապատուած բակի մէջ։ Նա բաղկացած էր երեք հատ մի յարկանի տնից։ Ամենամեծ տան մէջ, որի պատուհանները վանդակապատ էին, գտնւում էին կալանաւորները, երկրորդ տան մէջ՝ ուղեկցող զինուորները, երրորդի մէջ՝ օֆիցէրը և դիւանատունը։ Երեք տան մէջ էլ այդ ժամանակ ճրագներ էին վառուած, որոնք, ինչպէս ամեն տեղ, այնպէս էլ մանաւանդ այդտեղ, խաբուսիկ կերպով ինչ որ լաւ ու յարմարուկ բան էին խոստանում լուսաւորուած չինուածքի մէջ։ Տների պատշգամբների առջևը լապտերներ էին վառուած և, բացի դրանից, հինգ լապտեր էլ վառւում էին պատերի մօտ, լուսաւորելով բակը։ Ուենաէր—օֆիցէրը տախտակի վրայով Նեխլիւդովին առաջնորդեց դէպի ամենափոքր տան պատշգամբը։ Երեք աստիճան բարձրանալով, նա թողեց, որ Նեխլիւդովը առաջ անցնի ու մտնի նախասենեակը, որ լուսաւորւում էր մի փոքրիկ լամպով և լիքն էր ծխահոտով։ Վառարանի մօտ կանգնած էր մի՝ կոչտ չապկով, փողպատով ու սև անդրավարտիքով զինուոր, որ միայն մի ոտքին ունէր կօշիկ, իսկ միւս կօշիկը ձեռքին բռնած ու կտացած՝ ճիպքովը փչում էր ինքնաեռը։ Նեխլիւդովին տեսնելով, զինուորը թողեց ինքնաեռը, վերցրեց Նեխլիւդովի վրայից կաշուէ վերարկուն ու մտաւ ներքսի սենեակը։

—Եկաւ, ձերդ բարեծննդութիւն։

—Ներս կանչի,—լսուեց մի բարկացկոտ ձայն։

—Ներս մտէք դռնովը,—ասաց զինուորը ու իսկոյն և նէթ սկսեց նորից զբաղուել ինքնաեռով։

Երկրորդ սենեակում, որ լուսաւորւում էր մի կախովի լամպով, հայի սեղանի մօտ, որի վրայ երևում էին ճաշի մնացորդները և երկու չիշ, նստած էր մեծ ու չէկ բեխերով և սաստիկ կարմիր դէմքով մի օֆիցէր, աւստրիական բանակոն հագած, որ քիփ չրջապատում էր նրա լայն կուրծքը և ուսերը։ Տաք սենեակում բացի թուխթունի հոտից զգացւում էր նաև ինչ որ վատ անուշահոտութիւնների սաստիկ թունդ հոտ։ Տեսնելով Նեխլիւդովին, օֆիցէրը տեղիցը բարձրացաւ և կարծես ծաղրական ու կասկածաւոր հայեացքով աչքերը յառեց նրա վրայ։

—Ինչ էք կամենում,—ասաց նա ու, չը սպասելով Նեխ-

լիւդովի պատասխանին, գոռաց դէպի նախասենեակը դառն մի-ջով,—Բերնօվ, վերջ ի վերջոյ ինքնաեռը բերելու ես թէ չէ։

—Այս րոպէիս։

—Այնպէս «այս րոպէիս» ցոյց կը տամ քեզ, որ այն աշխարհումն էլ չես մոռանայ,—գոռաց օֆիցէրը, աչքերը փայլատակեցնելով։

—Բերում եմ,—գոռաց զինուորը ու ներս մտաւ ինքնաեռը ձեռքին։

Նեխլիւդովը ապասաց, մինչեւ որ զինուորը ինքնաեռը տեղաւորեց (օֆիցէրը հետեւում էր զինուորին իր մանր ու չար աչքերով, կարծես նշան անելով, թէ որտեղին խփի)։ Երբ զինուորը տեղաւորեց ինքնաեռը, օֆիցէրը թէյ գցեց։ Ցետոյ մատանիկից հանեց կօնեակի քառանկիւնի չիշը ու Ալբերտի բիսկուիտներ։ Այդ բոլորը դարսելով սիրոցի վրայ, նա նորից դիմեց Նեխլիւդովին.

—Ի՞նչ ծառայութիւն կարող եմ մատուցանել ձեզ։

—Ես կը խնդրէի թոյլ տալ տեսնուել կալանաւորուհիներից մէկի հետ,—ասաց Նեխլիւդովը առանց նստելու։

—Քաղաքական յանցաւոր է։ Օրէնքով այդ արգելուած է,—ասաց օֆիցէրը։

—Ոչ, քաղաքական չէ,—ասաց Նեխլիւդովը։

—Ինդրեմ նստէք,—հրաւիրեց օֆիցէրը։

Նեխլիւդովը նստեց։

—Նա քաղաքական յանցաւոր չէ, բայց իմ խնդիրքով,—չարունակեց Նեխլիւդովը,—բարձր իշխանութիւնը իրաւունք է տուել նրան գնալ քաղաքականների հետ...

—Հա, գիտեմ,—ընդհատեց օֆիցէրը։—Մի փոքրիկ ու սեւուկ կալանաւորուհի է։ Ինչու չէ, այդ կարելի է։ Կը կամենաք ծխել։

Նա մօտեցրեց Նեխլիւդովին պապիրոսների արկղիկը և, ձչտաձաճօրէն լցնելով երկու բաժակ թէյ, մէկը մօտեցրեց Նեխլիւդովին։

—Խնդրեմ,—ասաց նա։

—Շնորհակալ եմ։ Ես կը կամենայի տեսնուել...

—Գիշերը երկար է։ Դեռ ժամանակ կայ։ Կը հրամայեմ, որ նրան դուրս կանչեն։

—Իսկ չի կարելի, որ նրան դուրս կանչել չը տաք, այլ ինձ թոյլ տաք գնալ նրանց կայարանը,—ասաց Նեխլիւդովը։

—Քաղաքականների մօտ։ Օրէնքի դէմ է այդ։

—Ինձ մի քանի անգամ թոյլ են տուել։ Եթէ վախենում

էք, որ ես որևէ բան կարող եմ տալ քաղաքականներին, չէ՞ որ մինոյնն է, եթէ ուզենամ, նրա միջոցով կը տամ։

—Չէ, ներողութիւն կ'անէք, նրան կը խուզարկեն,—ասաց օֆիցէրը ու ծիծաղից անախորժ ծիծաղով։

—Լաւ, ինձ էլ խուզարկեցէք։

—Չէ, առանց խուզարկութեան էլ կարելի է,—ասաց օֆիցէրը, մօտենալով կօնեակի չիշը Նեխլիւդովի բաժակին։—Թոյլ կը տաք։ Դուք դիտէք։ Չէք կարող երևակայել, թէ որքան ուրախանում ենք, երբ Սիբիրի այս անկիւններում մի կրթուած մարդու հետ հանդիպում։ Դուք ինքներդ էլ գիտէք, թէ որքան տխուր պաշտօն է մեր պաշտօնը։ Իսկ երբ մարդ սովոր է ուրիշ կեանքի, սաստիկ դժուար է այս կեանքը տանել։ Մեր մասին այնպիսի գաղափար ունեն ամենքը, թէ ուղևկցող պահակախմբի օֆիցէրը անպատճառ կոպիտ, անկիրթ մարդ պէտք է լինի, իսկ չեն մտածում, թէ այդ մարդը գուցէ բոլորովին ուրիշ բանի համար է ծնուած եղել։

Օֆիցէրի կարմիր երեսը, նրա անուշահոտութիւնները, մատանին և մանաւանդ անախորժ ծիծաղը չատ հակակրելի էին Նեխլիւդովին, բայց նա այժմ, ինչպէս և ամբողջ ճանապարհորդութեան միջոցին, գտնւում էր այնպիսի լուրջ և ուշադիր տրամադրութեան մէջ, որի մէջ եղած ժամանակը թոյլ չէր տալիս իրան թեթևամիտ ու արհամարհական կերպով վերաբերուել ամի և իրէ և անհրաժեշտ էր համարում ամենքի հետ խօսել «ի բոլոր սրտէ», ինչպէս ինքն իր մէջ որոշում էր այդ վերաբերմունքը։ Լսելով օֆիցէրի ասածը ու հասկանալով նրա հոգեկան դրութիւնը, նա լուրջ կերպով ասաց.

—Ես կարծում եմ, որ հէնց ձեր պաշտօնում կարող էք սփոփանք գտնել, թեթևացնելով ուրիշների տանջանքները։

—Ի՞նչ տանջանքներ են քաչում։ Ձը գիտէք, թէ ինչ տեսակ մարդիկ են դրանք։

—Ի՞նչ տեսակ են,—ասաց Նեխլիւդովը։—Այնպիսի մարդիկ են, ինչպես մենք բոլորս։ Անմեղներ էլ կան մէջները։

—Ի հարկէ, ամեն տեսակ մարդիկ կան մէջները։ Ի հարկէ, ես էլ մարդ եմ, խղճում եմ նրանց։ Ուրիշները ամեն բան խիստ կերպով պահանջում են, իսկ ես, որտեղ կարողանում եմ, աշխատում եմ թեթևացնել նրանց դրութիւնը։ Աւելի լաւ է ես վնասուեմ, քան նրանք տանջուեն։ Ուրիշները ամենաչնչին բան պատահելիս՝ օրէնքի համեմատ են վարուում, իսկ իմ խեղճը գալիս է։ Թոյլ կը տաք։ Մէկ էլ խմէք,—ասաց նա մի բաժակ թէյ

Էլ ածելով։—Ի՞նչ կին է այն կալանաւորուհին, որին ուզում էք տեսնել,—հարցրեց նա։

—Մի անբախտ կին. անիրաւացի կերպով նրան դատապարտել են թունաւորման համար. մինչդեռ նա անմեղ է և չատ լաւ կին է,—ասաց Նեխլիւդովը։

Օֆիցերը գլուխը թափ տուեց։

—Հա, պատահում է։ Կազանում մէկը կար, էմմա էր անունը։ Մաջառուհի էր, իսկ աչքերը՝ կատարեալ պարսկական,—չարունակեց նա, չը կարողանալով զսպել ժպիտը այդ յիշողութեան ժամանակ։—Այնքան կոկլիկ-սօթլիկ էր, որ կ'ասես կոմսուհի լինէր...

Նեխլիւդովը ընդհատեց օֆիցերի խօսքը ու վերադարձաւ առաջուան խօսակցութեանը։

—Ես կարծում եմ, որ դուք կարող էք թեթևացնել այդ մարդկանց դրութիւնը այն միջոցին, երբ նրանք ձեր իշխանութեան տակ են գտնւում։ Ես այդպէս վարուելով, հաւատացած եմ, դուք մեծ սիրուհք կը գտաք,—ասում էր Նեխլիւդովը, աշխատելով որքան կարելի է պարզ արտասանել խօսքերը, այնպէս, ինչպէս արտասանում են օտարազգիների կամ երեխաների հետ խօսելիս։

Օֆիցերը նայում էր Նեխլիւդովին փայլուն աչքերով և, ըստ երևոյթին, անհամբերութեամբ սպասելով, թէ երբ կը վերջացնի խօսքը, որպէս զի ինքը չարունակէր իր սկսած պատմութիւնը պարսկական աչքեր ունեցող մաջառուհու մասին, որ անկներևաբար կենդանի կերպով պատկերանում էր նրա երևակայութեան առաջ, դրաւելով նրա ամբողջ ուշ ու միտքը։

—Այո, ճիշտ էք ասում,—ասաց նա։—Ես էլ խղճում եմ նրանց։ Բայց ես ուզում էի պատմել էմմայի մասին։ Տեսէք, թէ նա ինչ էր անում...

—Այդ ինձ չի հետաքրքրում,—առարկեց Նեխլիւդովը,—և պէտք է ուղիղ ասեմ ձեզ, որ, թէպէտ ես էլ առաջ ուրիշ տեսակ էի, բայց այժմ այդպիսի վերաբերմունք դէպի կանայք ատելի է ինձ։

Օֆիցերը վախուորած հայեացքով նայեց Նեխլիւդովին։

—Ձեք կամենայ էլի մի բաժակ թէյ,—ասաց նա։

—Չէ, չնորհակալ եմ։

—Բերնօվ,—գոռաց օֆիցերը,—այս պարոնին տար վակուլօվի մօտ, ասա, որ թողնեն քաղաքականների առանձին սենեակը. կարող է մնալ այնտեղ մինչև առաւօտեան ժամանակը։

VIII

Օֆիցերի սպասաւոր զինուորի հետ Նեխլիւդովը դուրս եկաւ խաւար բակը, որ աղօտ կերպով լուսաւորւում էր կարմիր ցոլքով վառուող լապտերներով։

—Ո՞ւր,—հարցրեց օֆիցերի սպասաւորից մի ուղեկցող զինուոր, որ հանդիպեց նրանց։

—Առանձին սենեակը, 5-րդ համարը։

—Այստեղով չես կարող գնալ, կողպած է. միւս պատչգամբով գնա։

—Ի՞նչ անենք որ կողպած է։

—Պահապանապետը կողպեց ու ինքը գնաց գիւղը։

—Ուրեմն այս կողմով գնանք։

Սպասաւոր զինուորը տարաւ Նեխլիւդովին միւս պատշգամբը և տախտակների վրայով մօտեցաւ միւս մուտքին։ Դեռ բակից լսւում էր ձայների ղվվոց և ներքին չարժում, ինչպէս մի փեթակաթոզի պատրաստուող մեծ մեղուանոցում, բայց երբ Նեխլիւդովը աւելի մօտեցաւ ու դուռը բացուեց, այդ ղվվոցը սաստկացաւ ու դարձաւ գոռգոռացող, հայհոյող ու ծիծաղող ձայների ժխոր։ Լսուեց չղթաների յեղյեղուկ չաչիւն և փչից ծանօթ ու ծանր հոտ։

Այդ երկու տպաւորութիւնները—ձայների ժխորը չղթաների չաչիւնի հետ և այդ սարսափելի հոտը—միչտ Նեխլիւդովի մէջ ի մի էին ձուլւում և մի ընդհանուր զգացմունք յառաջացնում,—մի տեսակ բարոյական սրտախառնութիւն, որ վոխարկւում էր ֆիզիկական սրտախառնութեան։ Եւ այդ երկու տպաւորութիւնները խառնւում էին իրար ու սաստկացնում միմեանց։

Կիսաէտապի հաշուում դրուած էր մի ահագին, գարշահոտ սանդ։ Հաշուից սկսւում էր միջանցք, որի մէջ բացւում էին սենեակների դռները։ Առաջին սենեակը ընտանիքաւորների համար էր, յետոյ մի մեծ սենեակ էր գալիս՝ ամուրիների համար, իսկ միջանցքի ծայրի երկու փոքրիկ սենեակները քաղաքականների համար էին։ Էտապի չէնքը 150 հոգու համար էր չինուած, բայց 450 հոգի կային մէջը, այնպէս որ սենեակներում տեղ չէր բաւականանում և կալանաւորներից չատերը իրար գլխի թափուած էին միջանցքում։ Ոմանք նստած ու պառկած էին յատակին, ոմանք էլ գնում-գալիս էին ձեռքներին տանելով դատարկ կամ եռման ջրով լի թէյամաններ։ Նրանց թուում էր նաև

Տարասը։ Նա հասաւ Նեխլիւդօվի յետեւից ու փաղաքշաբար բաբեւեց նրան։ Տարասի բարի դէմքը այլանդակուած էր կապտածներով քթի վրայ ու աչքի տակին։

—Այդ ինչ է պատահել քեզ,—հարցրեց Նեխլիւդօվը։

—Բան էր, պատահեց,—ասաց Տարասը ժպտալով։

—Միշտ իրար միս են ուտում, կուում են,—արհամարհական կերպով ասաց ուղեկցող գինուորը։

—Կնկայ պատճառով էր,—աւելացրեց նրանց յետեւից եկող մի կալանաւոր,—կոյր Ֆեդկայի հետ կուել բռնուեցին։

—Իսկ Ֆեդօսեան ինչպէս է,—հարցրեց Նեխլիւդօվը։

—Ոչինչ, լաւ է, այ թէյի համար եռման ջուր եմ տանում նրան,—ասաց Տարասը ու մաւր ընտանիքաւորների սենեակը։

Նեխլիւդօվը ներս նայեց դռնովը։ Ամբողջ սենեակը լիքն էր կանանցով ու տղամարդիկներով, որոնք թափուած էին թէ տախտակների վրայ, թէ տախտակի տակին։ Սենեակում գոլորշի էր կանգնած չորացուող թաց շորերից և լսւում էր կանացի ձայների անընդհատ գոռգոռոց։ Հետեւել դուռը ամուրիների սենեակի դուռն էր։ Այդ սենեակը աւելի ևս լիքն էր, և նոյն իսկ դռան մէջ ու դռան առաջը միջանցքում խմբուած աղմկում էին թաց հագուստներով կալանաւորներ, որոնք ինչ որ մի բան բաժանում էին իրանց մէջ կամ վճռում։ Ուղեկից գինուորը բացատրեց Նեխլիւդօվին, թէ կալանաւորները չուկայից մթերքներ են գնում, փողի տէզ խաղաթղթից չլինած տոմսակներ տալով, կամ հէնց առանց ոչինչ գնելու թուղթ են խաղում ու տարուում, և այժմ ահա խմբապետը իր մօտ եղած պարէնափողից տալիս է այդ տոմսակների արժէքը։ Ունաէր-օֆիցէրին ու նրա հետ եկող պարոնին տեսնելով, աւելի մօտիկ կանգնածները լռեցին, անբարեացակամ կերպով դիտելով անցնողներին։ Բաժանողների թուում Նեխլիւդօվը նկատեց իր ծանօթ տաժանապարտ Ֆեօդօրօվին, որ միշտ իր հետ էր մանաւանդ մի ողորմելի, բարձրացած յօնքերով, սպիտակամորմին, կարծես ուռած երիտասարդ կալանաւորի և մի դղուելի, չէչոտ ու անքթի թափառաշրջիկի, որ յայտնի էր նրանով, որ ասում էին, թէ բանտից փախած ժամանակը Սիբիրի անտառներում ապանել էր իր հետ փախած ընկերոջը ու կերակրուել նրա մսով։ Թափառաշրջիկը կանգնած էր միջանցքում, թաց խալաթը մի ուսին գցած, և ծաղրական ու յանդուգն հայեացքով նայում էր Նեխլիւդօվին ու մի կոպէկ չէր քաշւում նրան ճանապարհ տալու համար։ Նեխլիւդօվը պատռտ տուեց նրա կողքովը։

Թէև շատ ծանօթ էր Նեխլիւդօվին այդ տեսարանը, թէև նա վերջին երեք ամսուայ ընթացքում հազար ու մի անգամ

տեսել էր այդ 400 բրէական կալանաւորներին ամեն տեսակ դրութիւնների մէջ,—և չոր ժամանակ ճանապարհին, իրանց ոտներով քաշ տուած չղթաներով բարձրացրած փոշու մէջ, և ճանապարհին հանգիստ առնելիս, և տաք եղանակին էտապների բակերում, ուր տեղի էին ունենում բացարձակ անառակութեան սարսափելի տեսարաններ,—այնուամենայնիւ ամեն անգամ, երբ նա մտնում էր նրանց մէջ ու զգում, որ նրանց ուշադրութիւնը դարձած է իր վրայ, կսկիծ էր զգում ամօթից ու այն պիտակցութիւնից, թէ ինքը մեղաւոր է նրանց առաջ։ Ամենածանրը նրա համար այն էր, որ այդ մեղաւորութեան գիտակցութեան ու ամօթի զգացմունքին խառնուում էր նաև զզուանքի ու սարսափի անյաղթելի զգացմունք։ Նա գիտէր, որ նրանց զբաղուած պայմաններում չէր կարելի նրանց նման չը լինել, և սակայն չէր կարողանում զսպել իր զզուանքը դէպի այդ մարդիկ։

—Ինչու՞ չէ, իրանց համար քէֆ են քաշում այդ ձրիակերները,—լսեց Նեխլիւդօվը, երբ արդէն մօտենում էր քաղաքականների սենեակի դռանը։ Այդ խօսքերը ասաց մի խռպոտ ձայն, աւելացնելով նաև մի անվայել հայհոյանք։

Լսուեց անբարեացակամ, ծաղրական քրքիջ։

IX

Ամուրիների սենեակը անցնելուց յետոյ, Նեխլիւդօվին ուղեկցող ունտեր-օֆիցէրը ասաց նրան, որ տուգումից առաջ կը գայ նրա յետեւից և յետ դարձաւ գնաց, Հէնց որ ունտեր-օֆիցէրը մի քիչ հեռացաւ, ոտաբոբիկ արագ-արագ քայլերով ու չղթաները պահելով, որ ձայն չը հանեն, Նեխլիւդօվին քիփ մօտեցաւ մի կալանաւոր, որից ծանր ու թթուած քրտնքահոտ էր փչում, և ասաց խորհրդաւոր չշունչով.

—Պաշտպանեցէք, ազա։ Խեղճին բոլորովին իշացրել են։ Հարբեցրել են։ Այսօր ընդունելութեան ժամանակ ասաց, որ իր աղգանունը կարմանօվ է։ Պաշտպանեցէք. մենք չենք կարող, կը սպանեն մեզ,—ասաց կալանաւորը, անհանգիստ կերպով չորս կողմը նայելով, ու իսկոյն հեռացաւ Նեխլիւդօվի մօտից։

Բանը նրանումն էր, որ տաժանապարտ կարմանօվը համոզել էր դէմքով իրան չատ նման մի կալանաւորի, որ աքսորման էր դատապարտուած, փոխուել իր հետ, այնպէս որ ինքը աքսոր գնար, իսկ աքսորականը տաժանակիր աշխատանքների։

Նեխլիւդօվը այդ գիտէր արդէն, որովհետև նոյն կալանաւորը մի չաբաթ առաջ յայտնել էր նրան այդ պայմանաւորման

մասին։ Նեխլիւդովը գլխով նշան արեց, թէ հասկացաւ նրա ասածը ու ինչ որ ձեռքիցը գայ՝ կ'անի, և առանց յետ նայելու չարունակեց ճանապարհը։

Նեխլիւդովը ճանաչում էր այդ կալանաւորին Եկատերինբուրգից, ուր այդ կալանաւորը ծանրգրել էր նրան միջնորդել, որ իր կնոջը թոյլ տան գնալ իր հետ։ Նրա արածը չատ էր զարմացնում Նեխլիւդովին։ Մի միջահասակ ու ամենասովորական գեղջկական տեսքով մօտ երեսուն տարեկան մարդ էր այդ, որին տաժանակիր աշխատանքների էին դատապարտել կողոպտման ու սպանութեան փորձ կատարելու համար։ Նրա անունն էր Մակար Դեվկին։ Նրա յանցանքը չատ տարօրինակ էր։ Այդ յանցանքը, նրա ասելով, իր գործը չէր, այլ Ճրա (սատանայի) գործը։ Մակարի հօր մօտ,—պատմում էր նա Նեխլիւդովին,—մի ճանապարհորդ է գալիս և երկու ռուբլով վարձում է նրա սահնակը 40 վերստ հեռաւորութեամբ գնուող մի գիւղ գնալու համար։ Հայրը հրամայում է Մակարին, որ սահնակը լծի ու ճանապարհորդին տանի գիւղը։ Մակարը լծում է ձին, հագնւում է ու սկսում է թէյ խմել ճանապարհորդի հետ։ Ճանապարհորդը՝ թէյի ժամանակ պատմում է, թէ գնում է պահակութեան և հետը տանում է 500 ռուբլի, որ վաստակել է Մոսկուայում։ Այդ լսելով, Մակարը դուրս է գալիս բակը ու կացինը վերցնում, գնում է սահնակի մէջ, յարդի տակ։

—Ինքս էլ չեմ իմանում, թէ ինչու վերցրի կացինը, պատմում էր նա։ «Վերցրու, ասում է Ճա, կացինը», ես էլ վերցրի։ Նատեցինք, քշեցի։ Գնում ենք, ոչինչ։ Կացինը բոլորովին մոռահան էի արել։ Այն է հա մօտենում էինք գիւղին. հինգ-վեց վերստ էր մնացել։ Ճանապարհը այդտեղ դարիդուս է գնում։ Վայր իջայ ու սկսեցի ոտով գնալ սահնակի յետևից, իսկ Ճա չընկնում է. «ի՞նչ խելքի ես։ Սարը որ բարձրանաք, մեծ ճանապարհը կ'ընկնէք, գնացող-եկողը կը չատանայ, մի քիչ դէնն էլ գիւղն է։ Է՛լ ոչ տեսանես նրա փողերը. եթէ մի բան անելու ես, հիմա պէտք է անես։ Կռացայ սահնակի վրայ, իբր թէ յարդն եմ ուղղում, իսկ կացնի կոթը կարծես ինքն իրան մըտնում է բուռս։ Ճանապարհորդը յետ նայեց։ «Ի՞նչ ես անում», ասում է։ կացինը բարձրացրի, ուզում էի գագաթին իջեցնել, բայց ճարպիկ մարդ էր, սահնակից դուրս թռաւ ու բռնեց ձեռներից։ «Այդ ինչ ես ուզում, ասում է, անել, անպիտան...» Ու վայր գցեց ինձ ձիւնի վրայ. ես էլ չը հակառակեցի, Աղվեցի ինչ ուզում է անի։ Կռներս գետիկովը կապեց ու չպռտեց սահնակի մէջ։ Տարաւ ուղղակի ոստիկանատուն։ Դրեցին բանտը։ Դատեցին։ Գիւղական հասարակութիւնը լաւ կարծիք յայտնեց

իմ մասին, թէ լաւ մարդ եմ ու ոչինչ վատ բան ինձնից չեն տեսել։ Ում մօտ որ աշակութիւն էի արել, նրանք էլ լաւ կարծիք յայտնեցին։ «Բայց փաստաբան վարձելու փող չունէի,—ասում էր Մակարը,—դրա համար էլ չորս տարով Սիբիր վռնդեցին»։

Եւ ահա այժմ այդ մարդը, ուզելով փրկել իր համագիւղացուն և իմանալով, որ այդ անելով վտանգի է ենթարկում իր կեանքը, այնուամենայնիւ յայտնեց Նեխլիւդովին իրանց կալանաւորական գաղտնիքը, որի համար,—բաւական էր միայն, որ իմանային, թէ նա է այդ անողը,—ընկերները անպատճառ խեղդամահ կ'անէին նրան։

X

Քաղաքական յանցաւորների կացարանը բաղկացած էր երկու փոքրիկ սենեակներից, որոնց դռները բացւում էին միջանցքի ծայրում, որ միջնորմով կտրուած էր միւս մասից։ Մըտնելով միջանցքի այդ մասը, Նեխլիւդովը տեսաւ Սիմոնսոնին, որ սոճիի մի ցախ ձեռքին ու գուտաապերչէ բաճկոնը հագին՝ պպզել էր վառած վառարանի դռնակի առաջ, որի ծածկոցը դողդողում էր ներս ձգտող օդից։

Նեխլիւդովին նկատելով, նա, առանց տեղիցը վեր կենալու, ձեռք տուեց նրան, իր կախ ընկած յօնքերի տակից ներքեից վերև նայելով նրան։

—Շատ ուրախ եմ, որ դուք եկաք, ես ուզում էի ձեզ տեսնել,—ասաց նա նչանակալից կերպով, նայելով ուղղակի Նեխլիւդովի աչքերի մէջ։

—Ի՞նչ կայ,—հարցրեց Նեխլիւդովը։

—Ցետոյ։ Այժմ ես զբաղուած եմ։

Եւ Սիմոնսոնը սկսեց նորից զբաղուել վառարանով, որ նա վառում էր իր յատուկ թէօրիայի համաձայն, աշխատելով այնպէս անել, որ որքան կարելի է քիչ ջերմութիւնն այժ կորչի։

Նեխլիւդովը արդէն ուզում էր մտնել առաջին դռնով, բայց այդ միջոցին միւս դռնից դուրս եկաւ Մասլովան, որ, կռացած, ձեռքի աւելով մօտեցնում էր վառարանին փոչու ու փտորի մի մեծ կոյտ։ Նա ապիտակ բաճկոնով էր, քշտած նեղընազգեստով և գիւղպանոցով։ Մազերը փոչուց պաշտպանելու համար նա գլխին սպիտակ չոր էր կապել, որ ծածկում էր նաև ճակատը մինչև յօնքերը։ Նեխլիւդովին տեսնելով, նա չիտկուեց և կատարմիր ու աչխոյժ կերպարանքով վայր դրեց աւելը ու ձեռքերը ներքնազգեստովը սրբելով՝ ուղիղ կանդնեց նրա դիմացը։

—Կացարանը կարգի էք բերում,—ասաց Նեխլիւդովը, ձեռք տալով նրան։

—Այո, այդ իմ հին պարապմունքն է,—ասաց Մասլովան ու ժպտաց։—Էլ ասել չի լինի, թէ որքան կեղտ կայ։ Հոգիներս դուրս եկաւ սրբելով։—Հը՛, պլեդը չորացա՞ւ,—դիմեց նա Սիմոնսոնին։

—Գրեթէ չորացել է,—ասաց Սիմոնսոնը, նայելով նրան մի առանձին հայեացքով, որ զարմացրեց Նեխլիւդովին։

—Ուրեմն յետոյ կը գամ կը վերցնեմ ու մուշտակներն էլ կը բերեմ չորացնելու։ Մերոնք բոլորն այստեղ են,—ասաց Մասլովան Նեխլիւդովին, գնալով դէպի հեռաւոր դուռը և ցոյց տալով մօտիկի դուռը։

Նեխլիւդովը բաց արեց դուռը ու մտաւ մի փոքրիկ սենեակ, որ աղօտ կերպով լուսաւորուում էր մի տախտի վրայ ցածրահաս դրուած փոքրիկ թիթեղէ լամպով։ Սենեակում ցուրտ էր և չը զգացած փոշու, խոնաւութեան ու թութունի հոտ էր կանգնած։ Թիթեղէ լամպը պայծառ լուսաւորում էր մօտիկ գըտնուողներին, բայց տախտերը չուաքի մէջ էին և պատերի վրայ երերուում էին ստուերներ։

Ամենքը այդտեղ էին, բացի երկու տղամարդից, որոնց պարտականութիւնն էր ուտելեղէնի հոգս տանել և որոնք այժմ գնացել էին եռման ջուր և ուտելիք բերելու։ Այդտեղ էր Նեխլիւդովի հին ծանօթ, այժմ աւելի ևս նիհարացած ու դեղնած, վերա Եֆրեմօվնան իր ահագին վախուորած աչքերով և ճակատի վրայ դուրս պրծած երակով, մոխրագոյն բաճկոնով ու կարճ մազերով։ Նա, նստած, բուռն չարժումներով վերցնում էր թութունը առջևի լրագրի վրայից ու լցնում գիլզաների մէջ։

Այդտեղ էր նաև քաղաքական կալանաւորուհիներից Նեխլիւդովի համար ամենադուրեկաններից մէկը, Էմիլիա Բանցեվան, որ վարում էր արտաքին տնտեսութիւնը, հաղորդելով նրան, նոյն իսկ ամենածանր պայմաններում, կանացի տնարարութեան և դրաչութեան բնաւորութիւն։ Նա նստած էր լամպի մօտ և արևառ, գեղեցիկ ու ճարպիկ կռնները քշտած սրբում էր ու դարսում դաւաթներն ու բաժակները տախտի երեսին փռած թէյաթղթի վրայ։ Բանցեվան մի տգեղ ջահել կին էր, խելօք և հեզ արտայայտութիւն ունեցող դէմքով, որ մի առանձնայատկութիւն ունէր, այն է՝ ժպտալիս չանկարծ կերպարանափոխուում էր ու դառնում ուրախ, ժիր ու համակիչ։ Նա այդպիսի ժըպիտով հանդիպեց այժմ Նեխլիւդովին։

—Իսկ մենք կարծում էինք, թէ դուք բոլորովին թողել գնացել էք Ռուսաստան,—ասաց նա։

Այդտեղ էր նաև Մարիա Պաւլովնան, որ հեռաւոր անկիւնի ստուերում նստած՝ ինչ որ զբաղուած էր մի փոքրիկ սպիտակագլուխ աղջկայ հետ, որ անընդհատ ինչ որ թոթովում էր իր քաղցրիկ մանկական ձայնով։

—Ինչ լաւ է, որ եկաք։ Կատեային տեսաք,—հարցրեց Մարիա Պաւլովնան Նեխլիւդովից։—Տեսէք, ինչ հիւր ունենք,—աւելացրեց նա ցոյց տալով փոքրիկ աղջկայ վրայ։

Այդտեղ էր նաև Անատոլիյ Կրիլցովը։ Նիհարացած ու գունատ, թաղիքէ ոտնամանները հագին, նա ծալապատիկ կուչ էր եկել հեռաւոր անկիւնի տախտի վրայ ու ձեռները կիսամուշտակի թևերի մէջ խրած, գողգողում էր ու տենդոտ աչքերով նայում Նեխլիւդովին։ Նեխլիւդովը ուզում էր մօտենալ նրան, բայց դռնից դէպի ալ նստած էր մի ակնոցով ու գունատադէմչէ բաճկոնով գանգրահեր ու չէկ մարդ, որ ինչ որ տնտղում էր տոպրակի մէջ, խօսելով սիրունատես ու ժպտուն կալանաւորուհի Գրաբեցի հետ։ Նրա անունը Նօվոդվօրօվ էր, և Նեխլիւդովը չտապեց բարևել նրան։ Նեխլիւդովը առանձնապէս չտապում էր այդ անելու, որովհետև այդ խմբի բոլոր քաղաքական յանցաւորների մէջ միմիայն այդ մարդն էր նրան հակակրելի։ Նօվոդվօրօվը ակնոցի միջով փայլատակեցրեց իր կապուտակ աչքերը Նեխլիւդովի վրայ և, յօնքերը կիտելով, մեկնեց նրան իր նեղլիկ ձեռքը։

—Հը՛, դուք է գալիս ձեզ ճանապարհորդութիւնը,—ասաց նա, ակներևաբար, հեգնօրէն։

—Այո, հետաքրքրական չատ բան կայ,—պատասխանեց Նեխլիւդովը, այնպէս ձևացնելով, իբր թէ չի նկատում հարցի հեգնութիւնը, այլ ընդունում է նրա ասածը իբր սիրալիր խօսքեր, և մօտեցաւ Կրիլցովին։

Արտաքուստ Նեխլիւդովը անտարբեր ցոյց տուեց իրան, բայց սրտումը նա ամենևին անտարբեր չէր դէպի Նօվոդվօրօվը։ Նօվոդվօրօվի այդ խօսքերը, նրա ակների ցանկութիւնը՝ անդուրեկան բան ասել ու անել, խանգարեցին այն բարեհոգի տրամադրութիւնը, որի մէջ գտնուում էր Նեխլիւդովը, և նա տխրեց ու վհատուեց։

—Հը՛, ինչպէս է ձեր առողջութիւնը,—ասաց նա, սղմելով Կրիլցովի սառն ու դողդողուն ձեռքը։

—Ոչինչ, միայն թէ չեմ կարողանում տաքանալ, թրջուել եմ,—ասաց Կրիլցովը, չտապով թաղցնելով ձեռքը մուշտակի թևի մէջ։—Այստեղ չունն էլ կը սառչի։ Լուսամուտները ջարդուած են։—Նա ցոյց տուեց երկաթէ վանդակների յետևում երե-

կու տեղ չարդուած ապակիների վրայ։—Ի՞նչ էր պատահել, ինչու չէիք երեւում։

—Ձեն թողնում. քանի դնում, իշխանաւորները խստանում են։ Այստեղ միայն օֆիցերը կակուղ մարդ դուրս եկաւ։

—Լաւ կակուղ մարդ է,—ասաց Կրիլցօվը։—Մաշայից հարցրէք, թող ասի, թէ ինչ քան արեց առաւօտեան։

Մարիա Պաւլօվնան, առանց տեղիցը վեր կենալու, պատմեց այն, ինչ որ առաւօտեան պատահել էր փոքրիկ աղջկայ պատճառով՝ էտապից դուրս գալու միջոցին։

—Իմ կարծիքով, անհրաժեշտ է հաւաքական բողոք յայտնել,—վճռական ձայնով ասաց Վերա Եֆրեմօվնան, միեւնոյն ժամանակ անվճռական ու երկչոտ կերպով նայելով սրա ու նրա երեսին։—Վայելիմերը բողոքեց, բայց այդ բաւական չէ։

—Ի՞նչ բողոք,—դժկամակօրէն կնճռուելով ասաց Կրիլցօվը։ Անկերեւոյթ, Վերա Եֆրեմօվնայի ջղայնութիւնը և խօսելու անբնական, արուեստական եղանակը վատուց գրգռում էին նրան։—Կամեայնին էք փնտռում,—դիմեց նա Նեխլիւդօվին։—Նա շարունակ աշխատում է, սենեակները սրբում է։ Այս սենեակը սրբեց, հիմա կանանց սենեակն է սրբում։ Միայն հազիւ թէ կարողանայ լուսերին վերջ տալ հոգիներս հանելուն։ Իսկ Մաշան ինչ է անում այնտեղ,—հարցրեց նա, գլխով ցոյց տալով այն անկիւնը, ուր նստած էր Մարիա Պաւլօվնան։

—Իր որդեզրի մազերն է առնում,—ասաց Բանցեվան։

—Նրա միջատները մեզ հիւր չուղարկի յանկարծ,—ասաց Կրիլցօվը։

—Չէ, չէ, զզույշ եմ անում։ Սա այժմ բոլորովին մաքուր է,—ասաց Մարիա Պաւլօվնան։—Վերցրէք սրան,—դիմեց նա Բանցեվային,—իսկ ես կ'երթամ կատեային օգնելու։ Համ էլ դրա պլեդը կը բերեմ։

Բանցեվան վերցրեց երեխային ու մայրական քնքշութեամբ աղմելով կրծքին նրա մերկ, փափուկ ձեռքերը, նստացրեց նրան իր ծնկների վրայ ու մի կաթ շաքար տուեց նրան։

Մարիա Պաւլօվնան դուրս եկաւ, և նոյն րոպէին սենեակը մտան այն երկու տղամարդիկ, որոնք գնացել էին հոսման ջուր և ուտելիքներ բերելու։

XI

Ներս մտնողներից մէկը ցածրահասակ ու չորուկ երիտասարդ էր՝ կիսամուշտակով ու բարձր կօշիկներով։ Նա քայլում էր թեթեւ ու արագ քայլուածքով, տաք ջրով լիքը երկու չոգիա-

կաւած մեծ թէյամանն ձեռքին և թաչկինակի մէջ փաթաթած հացը կոնտատիին։

—Վերջապէս մեր իշխանի տեսութեանը արժանացանք,—ասաց նա թէյամանը դաւաթների մէջտեղը դնելով և հացը տալով Մալօվային։

—Հիանալի բաներ ենք առել,—սեւեռացրեց նա, հանելով մուշտակը ու նրանց գլուխների վրայով չպրտելով անկիւնի ախոռի վրայ։—Մարկէլը կաթ ու ձու առաւ. քէֆ ենք անելու այսօր։ Իսկ Կիրիլլօվնան էլի իր գեղասիրական մաքրաքանութեամբն է զբաղուած,—ասաց նա ժպտալով ու նայելով Բանցեվային։—Դէ, հիմա թէյը գցի,—դիմեց նա նրան։

Այդ մարդու ամբողջ տեսքից, նրա շարժուձեւերից, ձայնի հնչիւնից, հայեացքից՝ ուրախութիւն ու զուարթութիւն էր փչում։ Իսկ ներս մտնողներից միւսը,—նոյնպէս ցածրահասակ ու ոսկրոտ, մոխրագոյն դէմքի նիհար թշերի ոսկորները սուր դուրս պրծած, գեղեցիկ, կանաչաւուն աչքերը իրարից հեռու-հեռու և չրթունքները՝ բարակ,—ընդհակառակը, մեայլ ու վհատ տեսքով մարդ էր։ Հագին ունէր մի հին բամբակեղէն վերարկու և կրկնակօշիկներ՝ կօշիկների վրայից։ Ձեռքին ունէր երկու դամբիւղ և երկու պատուկ։ Բերած բաները Բանցեվայի առաջ դնելով, նա բարեւեց Նեխլիւդօվին վզովը, այնպէս որ՝ բարեւելիս չարունակ նայում էր նրան։ Յետոյ, դժկամութեամբ մեկնելով նրան իր քրոնքոտ ձեռքը, ակնց դանդաղօրէն հանել զամբիւղից ու դարսուել դնած մթերքները։

Այդ երկու քաղաքական յանցաւորներն էլ ժողովրդից դուրս եկած մարդիկ էին. առաջինը, Նաբատով ազգանունով, գիւղացի էր, իսկ երկրորդը,—Մարկէլ Կօնդրատիեվ,—գործարանային բանուոր։ Մարկէլը սկսել էր մասնակցել քաղաքական շարժման՝ արդէն տարիքն առած ժամանակ, 35 տարեկան հասակում, իսկ Նաբատովը՝ 18 տարեկանից ի վեր։ Իր աչքի ընկնող ընդունակութիւնների չնորհիւ գիւղական դպրոցից յետոյ գիմնազիան մտնելով և այնուհետեւ չարունակ իր ապրուստը գիմնազիան մտնելով և այնուհետեւ չարունակ իր ապրուստը մասնաւոր դասերով հոգալով, Նաբատովը աւարտել էր դասընթացքը ոսկէ միդալով, բայց համալսարան չէր մտել, որովհետեւ գնո հօրեղբօրդ դասարանում վճռել էր յետ գտնալ գիւղը, որտեղից դուրս էր եկել, որպէս զի յետոյ լուսաւորէր իր մոռացուած եղբայրներին։ Նա այդպէս էլ արել էր։ Սիղրում գրագիր էր դարձել մի մեծ գիւղում, բայց չուտով նրան ձերբակալել էին։ Առաջին անգամ նրան 8 ամիս էին պահել բանտում ու յետոյ բաց թողել, թողնելով գաղտնի հսկողութեան տակ։ Աքսաւելուն պէս նա գնացել էր մի ուրիշ գիւղ, մի ուրիշ նա-

հանգուցյալ Նրան նորից ձերբակալել էին ու այս անգամ արդեն մի տարի ու երկու ամիս պահել բանտում։

Երկրորդ բանտարկութիւնից յետոյ Նրան պաշտօնից ազատել էին Պերմի նահանգը։ Նա փոխել էր այնտեղից։ Նրան նորից ձերբակալել էին և, 7 ամիս բանտում պահելուց յետոյ, պաշտօնից ազատել Արխանգելսկի նահանգը։ Այնտեղից էլ նրան դատապարտել էին պաշտօնական Եակուտսկի նահանգը, այնպէս որ նա իր հաստատուն կեանքի կէսը անցրել էր բանտում և պաշտօնից։ Այդ բոլոր ձախորդութիւնները ամենևին չէին դառնացրել նրա սիրտը մարդկանց դէմ, բայց և չէին թուլացրել նրա եռանդը, այլ ընդհակառակը գուցէ և աւելի ամրապնդել էին։ Մի շարժուն մարդ էր այդ, հիանալի մարտունակութեամբ և միշտ միակերպ գործունեայ, ուրախ ու զուարթ։ Նա երբէք ոչ մի բանում չէր զղջում և ոչինչ չէր աշխատում նախատեսել հեռաւոր ապագայի համար, այլ իր խելքի, ճարպկութեան և գործնականութեան բոլոր ոյժերով գործում էր՝ ի նկատի ունենալով միայն ներկան։ Ազատ ժամանակը նա աշխատում էր իր ընտրած նպատակի համար, այն է՝ աշխատում էր լուսաւորել ու հաժախմբել, կազմակերպել բանուոր, գլխաւորապէս գեղջուկ, դասակարգը, իսկ կալանաւոր ժամանակը նա գործում էր նոյն եռանդով և նոյն գործնականութեամբ, որպէս զի յարաբերութիւններ պահպանէր արտաքին աշխարհի հետ և եղած պայմաններում որքան կարելի է կեանքի յարմարութիւններ ստեղծէր ոչ միայն իր, այլ և ամբողջ խմբի համար։ Ամենից առաջ նա համայնական մարդ էր։ Անձամբ նրան, կարծես, ոչինչ պէտք չէր և մի ամենաչնչին բան կարող էր բաւարարութիւն տալ նրան, բայց ընկերական հարմարքի համար նա շատ բան էր պահանջում և կարող էր թէ ֆիզիկապէս, թէ մտաւորապէս անխոնջ աշխատել, մնալով սոված ու անքուն։ Իբր գիւղացի՝ նա աշխատասէր էր, հնարագէտ, աշխատանքի մէջ ճարպիկ, բնականաբար ժուժկալ և առանց ձիգ գործ դնելու իր վրայ՝ քաղաքավարի ու ուշադիր ոչ միայն դէպի ուրիշների զգայմունքները, այլ և դէպի նրանց հայեացքները։ Նրա պառաւ ու այրի մայրը, որ մի անդրադէպ գեղջկուհի էր, լի նախապաշարումներով, դեռ կենդանի էր, և Նաբատովը օգնում էր նրան ու, բանտում կամ աքսորում չեղած ժամանակը, այցելում էր նրան։ Մօրը տեսութեան գնացած միջոցներին նա մտնում էր նրա կեանքի մանրամասնութիւնների մէջ, օգնում էր նրան աշխատութեան ժամանակ և շարունակում էր իր նախկին յարաբերութիւնները իր երեխայութեան ընկեր գեղջուկների հետ,—թուխն էր ծխում նրանց հետ չան թաթիկ-

ների *) մէջ, բռունցքակռիւ էր անում ու խօսում զանազան բաների մասին։ Նրա համոզմունքով, պէտք չէր փոփոխել ժողովրդի կեանքի հիմնական ձևերը,—այդ բանում նա համաձիտ չէր Նօլոդվօրօվի ու նրա հայեացքներին հետևող Մարկել Կօնդրատիևի հետ,—պէտք չէր կործանել ամբողջ չէնքը, այլ հարկաւոր էր միմիայն այլապէս դասաւորել ներքին կացարանները այդ գեղեցիկ, դիմացկուն ու ահագին հին չէնքի մէջ, որ նա սիրում էր ջերմագին։

Կրօնական տեսակէտից էլ նա տիպային գեղջուկ էր,—երբէք չէր մտածում բնազանցական հարցերի մասին, բոլոր սկզբունաւորութիւնների սկզբնաւորութեան, անդրգերեզմանային կեանքի մասին։ Աստուած նրա համար, ինչպէս և Արտագոյի համար, այնպիսի հիպօթէզ էր, որ դեռ մինչև այժմ նրան պէտք չէր եկել։ Նրա ամենևին հոգը չէր, թէ ինչպէս է սկիզբն առել աշխարհս, և դարվինականութիւնը, որ այնքան կարևոր էր թուում նրա ընկերներին, նրա համար միմիայն մտքի խաղալիք էր։

Աշխարհիս ինչպէս ծագած լինելու հարցը նրան չէր հետաքրքրում այն պատճառով, որ նրա առաջ միշտ կանգնած էր այն հարցը, թէ ինչպէս պէտք է անել այդ աշխարհում լաւ ապրելու համար։ Ապագայ կեանքի մասին էլ նա երբէք չէր մտածում, որովհետև հոգու խորքում նա կրում էր իր նախնիքներից ժառանգած այն հաստատ ու հանգիստ համոզմունքը, որ ընդհանուր է բոլոր երկրագործներին, թէ՝ ինչպէս կենդանական ու բուսական աշխարհում ոչ մի բան վերջ չի ունենում, այլ շարունակ փոխակերպւում է մի ձևից միւսը,—աղբը դառնում է հացահատիկ, հացահատիկը՝ հաւ, չերեփուկը գորտ, թրթուռը՝ թիթեռ, խոզակաղինը՝ կաղնի,—այնպէս էլ մարդս չի ոչնչանում, այլ միայն փոխակերպւում է։ Նա հաւատում էր այդ բանին, ուստի և զուարթ ու նոյն իսկ ուրախ սրտով էր սպասում մահուան և արիութեամբ էր տանում մահ պատճառող տանջանքները, բայց չէր սիրում և չէր կարողանում խօսել այդ մասին։ Նա սիրում էր աշխատել և միշտ զբաղուած էր լինում գործնական պարապմունքներով ու ընկերներին էլ դրդում էր զբաղուել գործով։

*) Գիւղացիները ու բանուորները պապիրոս են չինում հաստակ թղթից, որ ոլորում են ու երկուստակ ծուում և մէջը թուխն լցնում։ Դրան՝ շան թաթիկ են ասում։ Ե. Բ.

XII

Այդ խմբի միջոց՝ ժողովրդից դուրս եկած քաղաքական յանցաւորը, Մարկել Կօնդրատիեվը, ուրիշ տեսակ մարդ էր։ Տանհինդ տարեկանից նա բանուոր էր դարձել և սկսել էր ծըխել ու խմել, վիրաւորանքի անորոշ դիտակցութիւնը խեղդելու համար։ Այդ վիրաւորանքը նա առաջին անգամ զգաց այն ժամանակ, երբ մի Ծննդեան տօնի օր նրան ու միւս բանուոր եղբայրներին տարան գործարանատէրի կնոջ պատրաստած տօնածառին, ուր նրան ու միւս ընկերներին ընծայեցին մի կոպեկանոց չուխիներ, մի-մի խնձոր, ոսկեզօծ ընկոյզ ու թուզ, իսկ գործարանատէրի երեխաներին՝ այնպիսի խաղալիքներ, որոնք նրան թուում էին յաւերժահարսի ընծաներ և որոնք, ինչպէս նա յետոյ իմացաւ, արժէին աւելի քան 50 ռուբլի։ Նա երեսուն տարեկան էր, երբ նրանց գործարանը բանելու մտաւ մի ինտելիգենտ աղջիկ և, նկատելով Կօնդրատիեվի աչքի ընկնող ընդունակութիւնները, սկսեց գրքեր ու գրքոյկներ տալ նրան կարդալու և խօսել հետը, բացատրելով նրան նրա դրութիւնը ու այդ դրութեան պատճառները, ինչպէս նաև այդ դրութիւնը բարւոքելու միջոցները։ Կօնդրատիեվի համար պարզուեց այն հարցը, որ նա և իր ընկերները կարող են ազատուել այն դրութիւնից, որի մէջ գտնուում էին։ Բայց նրա համար պարզ չէր, թէ ինչպես կարող է նրա իդէալի իրագործումը տեղի ունենալ գիտութեան միջոցով։ Նա հաւատում էր, սակայն, որ, ինչպէս գիտութիւնը բայ արեց նրա աչքերը ու ցոյց տուեց նրան իր դրութեան անարդարութիւնը, այնպէս էլ այդ նոյն գիտութիւնը կ'ուղղի այդ անարդարութիւնը։ Բացի դրանից, գիտութիւնը նրա աչքում նրան բարձրացնում էր ուրիշների համեմատութեամբ։ Ուստի և, թարկ անելով խմելն ու ծխելը, նա սկսեց գիտութեանը նուիրել իր ամբողջ ազատ ժամանակը, որ աւելի շատ ունէր այն օրից, երբ նրան մատնապետ չինեցին։

Ինտելիգենտ բանուորուհուն դասեր էր տալիս նրան և ապշած էր մնում այն զարմանալի ընդունակութիւնից, որով նա անյագ կերպով իւրացնում էր ամեն տեսակ գիտելիքներ։ Երկու տարում նա ուսումնասիրեց ալգեբրա, երկրաչափութիւն, ընդհանուր պատմութիւն, որ նա առանձնապէս սիրում էր, և կարդաց ամբողջ գեղարուեստական ու քննադատական գրականութիւնը և գլխաւորապէս սոցիալիստական գրականութիւնը։

Ինտելիգենտ բանուորուհուն ձերբակալեցին և նրա հետ

միասին ձերբակալեցին նաև Կօնդրատիեվին, որին բանտը դրին ու յետոյ աքսորեցին Վօլօգդայի նահանգը։ Կօնդրատիեվը այնտեղ ծանօթացաւ Նօվօդվօրօվի հետ, ուրիշ շատ գրքեր էլ կարդաց, բոլոր կարդացածը յիշողութեան մէջ պինդ դրոշմեց ու աւելի ևս հաստատուեց իր հայեացքների մէջ։ Նա փախաւ աքսորատեղից, նրան ձերբակալեցին ու դատապարտեցին իրաւունքներից զրկման և նոր աքսորի։

Նա իր սովորութիւններով ճգնակեաց էր, բաւականանում էր ամենաչնչին բանով և, ինչպէս բոլոր երեխայութիւնից աշխատանքի վարժուած մարդիկ, զարգացած մկաններ ուներ ու կարող էր թեթև ու ճարպիկ կերպով կատարել ամեն տեսակ երկարատև ֆիզիկական աշխատանք, բայց ամենից աւելի աշխատում էր ազատ ժամանակ ունենալ, որպէս զի շարունակէր սովորել բանտերում և էտապներում։ Նա այժմ ուսումնասիրում էր Մարքսի առաջին հատորը և ամենամեծ հոգատարութեամբ պահում էր այդ գիրքը իր տոպրակում, իբրև մի անգին գանձ։ Բոլոր ընկերակիցներին նա վերաբերում էր զուսպ և անտարբեր կերպով, բացի Նօվօդվօրօվից, որին առանձնապէս նուիրուած էր և որի դատողութիւնները բոլոր հարցերի մասին ընդունում էր իբրև անհերքելի ճշմարտութիւններ։

Իսկ դէպի կանայք, որոնց նա համարում էր լոկ խաչընդոտ պէտքական բանակերում, նա տածում էր անզսպելի արհամարհանք։ Բայց Մասլօվային նա խղճում էր և փաղաքշարար էր վերաբերում նրան, համարելով նրան զոհ այն հարստահարութեան, որին ենթարկուում է տորին դասակարգը բարձր դասակարգի կողմից։ Այդ նոյն պատճառով՝ նա չէր սիրում Նեխլիւդօվին, քիչ էր խօսում նրա հետ և չէր սղմում նրա ձեռքը, այլ միայն մեկնում էր իր ձեռքը և թոյլ տալիս, որ Նեխլիւդօվը սղմի բարեւելիս։

XIII

Վառարանը վառուեց, տաքացաւ, թէյը պատրաստեցին, լցրեցին գաւաթներն ու բաժակները, կաթ ածեցին վրան ու դարեցին սեղանը փոխարինող տախտի վրայ, ինչպէս նաև կլոր բլիթները, թարմ հաճարի ու ցորենի հացերը, պնդախաչ ձուեր կարագ և հորթի ոտ ու գլուխ։ Բոլորը մօտեցան սեղանատախտին ու սկսեցին ուտել, խմել ու խօսակցել։ Բանցեվան, մի տէն

չոր պլեդի մեջ փաթաթուած, պառկած էր իր տեղում ու լռում էր Նեխլիւդովի հետ։

Ճանապարհի ցրտից ու խոնաւութիւնից, այստեղ գտած կեղտից ու անկարգութիւնից, ամեն ինչ կարգի դնելու վրայ գործ դրած աշխատանքներից, և կերակուր ուտելուց ու տաք թէյ խմելուց յետոյ, ամենքն էլ ամենահաճելի և ուրախ տրամադրութեան մէջ էին։

Այն հանգամանքը, որ պատի յետևից լսում էին քրէական յանցաւորների աղաղակները, հայհոյանքները և ոռնոցի դըփդըփոցը,—կարծես յիշեցնելու համար, թէ ինչ չրջապատի մէջ են գտնուում,—աւելի նրա զգալի էր դարձնում իրանց սենեակի յարմարութիւնն ու հանգստութիւնը։ Ինչպէս ծովով չըրջապատուած կղզու մէջ, այդ մարդիկը առժամանակ ազատ էին զգում իրանց այն սաոըացման և տանջանքների ալիքներից, որոնք չրջապատում էին նրանց, ուստի և գտնուում էին վերացած, հաճելի կերպով զբաղուած տրամադրութեան մէջ։ Ինչի մասին ասես խօսում էին, բայց ոչ մի խօսք չէին ասում իրանց դրութեան մասին և այն բանի մասին, ինչ որ սպասում էր նրանց։ Բայց դրանից, ինչպէս միշտ տեղի է ունենում չահել կանանց ու երիտասարդների մէջ, մանաւանդ երբ բոնի կերպով են նրանց միացրել իրար հետ, ինչպէս միացած էին դրանք բոլորը, նրանք գրաւուել էին մէկը միւսով, տածելով փոխադարձաբար համակերպ կամ անհամակերպ և զանազան ուղղութեամբ իրար հետ հիւսուող զգայմունքներ։ Նրանք գրեթէ բոլորն էլ սիրահարուած էին։ Նովոդվորովը սիրահարուած էր սիրունիկ ու ժպտուն Գրաբեցի վրայ։ Այդ Գրաբեցը մի չահել ուսանողուհի էր, որ չատ քիչ էր մտածում և բոլորովին անտարբեր էր դէպի քաղաքականութիւնը։ Բայց նա ենթարկուել էր ժամանակի ազդեցութեանը, ինչ որ մի վարմունքով կասկածելի էր դարձել և աքսորի դատապարտուել։ Ինչպէս սովորական կանանց մեծամասնութեան հետաքրքրողը գլխաւորապէս այն էր, որ յաջողութիւն ունենար տղամարդկանց նկատմամբ, այնպէս էլ այդ յաջողութիւնն էր միայն նրան հետաքրքրում թէ հարց ու փորձի ժամանակ, թէ բանտում և թէ աքսորում։ Այժմ, ճանապարհորդութեան միջոցին, նա մխիթարութիւն գտաւ այն բանում, որ Նովոդվորովը գրաւուել էր իրանով, ու ինքն էլ սիրահարուեց նրա վրայ։ Վերա Եֆրեմովնան, որ չատ չուտ սիրահարուում էր, բայց երբէք սէր չէր զարթեցնում դէպի ինքը, թէև միշտ յուսով էր փոխադարձութիւն գտնելու, սիրահարուած էր լինում երբեմն Նաբատովի, երբեմն Նովոդվորովի վրայ։ Կրիլ-

ցովն էլ սիրահարուածի նման էր Մարիա Պաւլովնայի վերաբերմամբ։ Նա սիրում էր Մարիա Պաւլովնային այնպէս, ինչպէս տղամարդիկ սիրում են կանանց, բայց իմանալով նրա վերաբերմունքը դէպի սիրահարութիւնը, ճարպիկ կերպով թագցնում էր իր զգայմունքը, այնպէս ձևացնելով, իբր թէ բարեկամութեան զգայմունք է այդ և երախտապիտութիւն այն բանի համար, որ Մարիա Պաւլովնան առանձին քնքչութեամբ է խնամում իրան։ Նաբատովն ու Բանցևան կապուած էին իրար հետ սաստիկ բարդ սիրային յարաբերութիւններով։ Ինչպէս Մարիա Պաւլովնան բոլորովին ողջախոհ աղջիկ էր, այնպէս էլ Բանցևան բոլորովին ողջախոհ արամբի կին էր։

Տասնվեց տարեկան հասակում, դեռ գիմնազիայի աշակերտուհի եղած ժամանակ, նա սիրահարուել էր Բանցևի վրայ, որ Պետերբուրգի համալսարանի ուսանող էր, և 19 տարեկան հասակում ամուսնացել էր նրա հետ, երբ նա դեռ ուսանող էր։ Զորրորդ կուրսում եղած ժամանակը մարդը մասնակցել էր ուսանողական խառնակութիւնների, ենթարկուել էր աքսորման ու դարձել էր յեղափոխական։ Բանցևան թողել էր բժշկական կուրսերը ու գնացել մարդու յետևից։ Եթէ նրա ամուսինը, նրա համոզմունքով, աշխարհիս ամենալաւ ու ամենախելօք մարդը չը լինէր, նա չէր սիրահարուի նրա վրայ, իսկ եթէ չը սիրահարուէր, ուրեմն և չէր պսակուի հետը։ Բայց սիրահարուելով, իր համոզմունքով, աշխարհիս ամենալաւ ու ամենախելօք մարդու վրայ ու ամուսնանալով նրա հետ, Բանցևան, ընականօրէն, կեանքը և կեանքի նպատակը այնպէս էր ըմբռնում, ինչպէս իր ամուսինը, որ աշխարհիս ամենալաւ ու ամենախելօք մարդն էր նրա աչքում։ Մարդը սկզբում կեանքի նպատակը ուսանելն էր համարում, կինն էլ նոյն համոզմունքին էր։ Մարդը դարձաւ յեղափոխական, կինն էլ դարձաւ յեղափոխական։ Բանցևան չատ լաւ կարող էր ապացուցանել, որ գոյութիւն ունեցեալն

բեխայից, որին վերցրել էր խնամելու նրա մայրը։ Բայց նա արիաբար ու հանգիստ սրտով էր տանում այդ անջատումը, իմանալով, որ այդ զրկանքը կրում է իր ամուսնու համար և այն գործի համար, որ անկասկածօրեն ճշմարիտ է, որովհետև ամուսինը ծառայում է այդ գործին։ Նա մտքով միշտ ամուսնու հետ էր և ինչպես առաջ ոչ ոքի չէր սիրում բացի նրանից, այնպես էլ այժմ չէր կարող ոչ ոքի սիրել բացի նրանից։ Բայց Նաբաւաօվի անձնուէր ու մաքուր սերը դեպի նա՝ խանդաղատեցնում և յուզում էր նրան։ Նաբաւաօվը, որ բարոյական և պինդ մարդ էր ու նրա ամուսնու բարեկամն էր, աշխատում էր իբրև քրոջ հետ վարուել նրա հետ, բայց նրա յարաբերութիւնների մէջ դեպի Բանդեման՝ ինչ որ ուելի թունդ զգայմունք էր արտայայտւում երբեմն, և այդ զգայմունքը վախ էր ազդում երկուսին էլ, բայց և քաղցրացնում էր նրանց այժմեան ծանր կեանքը։

Այնպէս որ սիրահարութիւնից բոլորովին ազատ էին այդ խմբակում միայն Մարիա Պաւլօվնան ու Կօնդրատիեվը։

XIV

Ցոյս ունենալով Կատիւշայի հետ առանձին խօսել ընդհանուր թեյից ու ընթրիքից յետոյ, ինչպէս նա սովորաբար, Նեխլիւդօվը Կրիլցօվի կողքին նստած՝ խօսում էր հետը։ Նա, ի միջի այլոց, պատմեց Կրիլցօվին այն բանի մասին, որ յայտնել էր իրան Մակարը, և Մակարի գործած յանցանքի մասին։ Կրիլցօվը լսում էր ուշադիր կերպով, փայլուն հայեացքը յառած Նեխլիւդօվի դէմքին։

—Այո,—ասաց նա յանկարծ։—Ինձ յաճախ զբաղեցնում է այն միտքը, թէ ահա մենք գնում ենք իրար կողքի նրանց հետ, —ում հետ։ Հէնց այն մարդկանց հետ, որոնց պատճառով որ գնում ենք։ Ես սակայն մենք ոչ միայն չենք ճանաչում նրանց, այլ և չենք ուզում ճանաչել։ Իսկ նրանք նոյն իսկ ատում են մեզ, համարելով մեզ իրանց թշնամի։ Ահա այդ է սարսափելին։

—Ոչինչ սարսափելի բան չը կայ այդտեղ,—ասաց Նօվոդվլօրօվը, որ ականջ էր դնում Նրանց խօսակցութեանը։—Ժողովրդական մասսան միշտ կապիտ է ու անզարգացած,—ասաց նա իր ճշդութեան ձայնով։

Այդ ժամանակ պատի յետևից լսուեց բարձրաձայն հայհոյանք, պատին դիպչողների իրարանցում, չղթաների չաչիւն, ճիչ ու աղաղակներ։ Ոմ որ ծեծում էին, ով որ օգնութեան էր կանչում։

—Տեսնում էք, ինչ գազաններ են։ Ի՞նչ յարաբերութիւն կարող է լինել նրանց ու մեր մէջ,—հանգիստ կերպով ասաց Նէխլիւդօվը։

—Գազաններ ես անուանում նրանց։ Բայց ահա այս րոպէիս Նեխլիւդօվը այնպիսի մի վարմունք պատմեց նրանցից մէկի կողմից, որ կը մնաք զարմացած,—դիմեցաւ կերպով ասաց Կրիլցօվը ու պատմեց, թէ ինչպէս Մակարը կեանքը վտանգի է ենթարկում իր համակիւզացուն փրկելու համար։—Այդ արդէն գազանութիւն չէ, այլ մարդկութիւն։

—Սանտիմենտալութիւն,—հեգնարար ասաց Նէխլիւդօվը։

—Մենք դժուար կարող ենք հասկանալ այդ մարդկանց յոգերը և վարմունքների չարժառիթները։ Դու մեծանդգութիւն ես տեսնում այդ բանում, մինչդեռ դուք այդ ոչ այլ ինչ է, եթէ ոչ նախանձ դէպի այն տաժանապարտը։

—Ինչ լինի էն, որ դու չես ուզում ոչ մի լաւ բան տեսնել ուրիշների մէջ,—յանկարծ տաքացած ասաց Մարիա Պաւլօվնան (նա «դու»-ով էր խօսում ամենքի հետ)։

—Ի՞նչպէս տեսնեմ այն, ինչ որ չը կայ։

—Ի՞նչպէս թէ չը կայ, երբ մարդը գիտի, որ իրան կարող են սպանել սարսափելի մահով։

—Ես կարծում եմ,—ասաց Նէխլիւդօվը,—որ եթէ մենք ուզում ենք ի կատար ածել մեր գործը, մենք պէտք է ամենից առաջ (Կօնդրատիեվը, որ գիրք էր կարդում լամպի մօտ, թողել գիրքը ու սկսել ուշադրութեամբ լսել իր ուսուցչին) չը յափշտակուենք երևակայական բաներով, այլ նայենք իրերի վրայ այնպէս, ինչպէս որ նրանք կան։ Մենք պէտք է ամեն ինչ անենք ժողովրդական մասսայի համար, բայց ոչինչ չը պէտք է սպասենք այդ մասսայից։ Ժողովուրդը մեր գործունէութեան ենթարկան է, բայց չի կարող մեր աշխատակիցը լինել, քանի որ անտարբեր է, ինչպէս այժմ,—սկսեց նա, կարծես թէ դասախօսութիւն կարդալով։—Ուստի և կատարեալ մտապատրանք է՝ օգնութիւն սպասել նրանից, քանի որ դեռ չի կատարուել պարզապէս պրօցէսը,—այն պրօցէսը, որի համար մենք պատրաստում ենք նրան։

—Ի՞նչ պարզապէս պրօցէս,—ասաց Կրիլցօվը կարմրատակած։—Մենք ասում ենք, թէ կամայականութեան դէմ ենք, իսկ այդ ինչ է, մի՞թէ ամենասարսափելի կամայականութիւն չէ։

—Այդտեղ ոչ մի բռնութիւն չը կայ,—հանգիստ կերպով պատասխանեց Նէխլիւդօվը։—Ես միայն ասում եմ, թէ գիտեմ այն ճանապարհը, որով պէտք է գնայ ժողովուրդը, և կարող եմ ցոյց տալ այդ ճանապարհը։

—Բայց լինչինը գիտես, թէ քո ցոյց տուած ճանապարհը իսկական ճանապարհն է։ Մինչէ այդ նոյն բռնակալութիւնը չէ, որից յառաջացան ինքնուիզիցիան և մեծ յեղափոխութեան մահուան պատիժները։ Նրանք էլ գիտակցօրէն գիտէին մի միակ ճշմարիտ ճանապարհը։

—Նրանց մոլորութիւնը չի ապացուցանում, թէ ես էլ մոլորուում եմ։ Եւ բացի դրանից՝ ահագին տարբերութիւն կայ գաղափարաբանների (իդէօլոգ) զառանցանքների և ամուսնական դրական գիտութեան փաստերի մէջ։

Նէվօդվօրօվի ձայնը լսնում էր ամբողջ սենեակը։ Միայն նա էր խօսում, իսկ միւս բոլորը լուռ էին։

—Միշտ վիճում են,—ասաց Մարիա Պաւլօվնան, երբ Նէվօդվօրօվը մի րոպէ լռեց։

—Իսկ դուք ինչ կարծիք ունէք այդ հարցի մասին,—հարցրեց Նեխլիւդօվը Մարիա Պաւլօվնայից։

—Կարծում եմ, որ Անատօլին ճիշտ է ասում, թէ չի կարելի ժողովրդին բանի ընդունել տալ մեր հայեացքները։

—Տարօրինակ հակացողութիւն մեր գործունէութեան նպատակի մասին,—բարկացած ասաց Նէվօդվօրօվը ու սկսեց լուռ ծխել։

—Ջեմ կարողանում այդ մարդու հետ խօսել,—չդիմացաւ ասաց Կրիլցօվը ու լռեց։

—Եւ լաւ կ'անէք, որ ամենևին չը խօսէք,—ասաց Նեխլիւդօվը։

XV

Չը նայելով, որ Նէվօդվօրօվը շատ յարդուած էր բոլոր քաղաքական աշխարհականներից, չը նայելով, որ նա շատ ուսումնական մարդ էր և համարւում էր շատ խելօք, Նեխլիւդօվը, այնուամենայնիւ, նրան դասում էր այն գործիչների թիւը, որոնք, իրանց բարոյական յատկութիւններով ցած լինելով միջին մակերևոյթից, շատ ցած են նրանից։ Այդ մարդու մտաւոր ոյժերը—նրա համարիչը—մեծ էին. բայց նրա կարծիքը իր մասին—նրա յայտարարը—անհամեմատ աւելի մեծ էր և վաղուց ի վեր գերազանցում էր նրա մտաւոր ոյժերից։

Նա բոլորովին ուրիշ տիպի հոգեկան կեանքի տէր մարդ էր, քան Սիմօնսօնը։ Սիմօնսօնը այն (գլխաւորապէս առնական տիպի) մարդկանցից էր, որոնց արարքները բղխում են իրանց մտքի գործունէութիւնից և որոշւում են այդ գործունէութեամբ, իսկ Նէվօդվօրօվը պատկանում էր այն (գլխաւորապէս կանացի

տիպի) մարդկանց թուին, որոնց միտքը գործում է մասամբ նրա համար, որ իրագործի զգացմունքի որոշած նպատակները, մասամբ էլ նրա համար, որ արդարացնի զգացմունքից բղխած արարքները։

Նէվօդվօրօվի ամբողջ գործունէութիւնը, թէև նա կարողանում էր այդ գործունէութիւնը շատ պերճախօս կերպով բացատրել ամենահամոզիչ պատճառաբանութիւններով, թուում էր Նեխլիւդօվին հիմնուած միմիայն անափառութեան վրայ, մարդկանց մէջ գերիշխող դեր խաղալու ցանկութեան վրայ։ Սկզբում, ուսման չրջանում, նա, չնորհիւ իր ընդունակութեանը՝ իւրացնել ուրիշի մտքերը և ճշտութեամբ արտայայտել այդ մտքերը, ուսուցանողների և ուսանողների մէջ (դիմնազիա, համալսարան, մագիստրատուրա), ուր այդ ընդունակութիւնը շատ նպաստաւոր է գնահատւում, առաջատար դեր էր խաղում և գոհ էր այդ բանից։ Բայց երբ դիպլոմը ստացաւ և ուսումը վերջացրեց ու այդ առաջատարութիւնը ընդհատուեց, նա յանկարծ,—ինչպէս Նեխլիւդօվին ասել էր Կրիլցօվը, որ չէր սիրում Նէվօդվօրօվին,—մի նոր չրջանում առաջատար դեր խաղալու համար, բոլորովին փոխել էր իր հայեացքները և աստիճանականից *) դարձել էր կարմիրական **)։ Չնորհիւ այն հանգամանքի, որ նրա բնաւորութեան մէջ չը կային բարոյական և գեղասիրական յատկութիւններ, որոնք կասկածներ և տատանումներ են զարթեցնում մարդուս մէջ, նա շատ չուտով գրաւեց կուսակցապետի դիրք, որ բաւարարութիւն էր տալիս նրա ինքնասիրութեանը։ Մի անգամ որոշ ուղղութիւն ընտրելուց յետոյ՝ նա այլ ևս երբէք չէր կասկածում ու տատանւում, ուստի և հաւատացած էր, թէ երբէք չի սխալւում։ Ամեն ինչ վերին աստիճանի պարզ, որոշ ու անկասկած էր թուում նրան։ Եւ նրա նեղ ու միակողմանի հայեացքների տեսակէտից յիրաւի ամեն ինչ չափազանց պարզ էր ու որոշ և պէտք էր միայն, ինչպէս նա ասում էր, տրամաբանական լինել։ Նրա անձնապաստանութիւնը այնքան մեծ էր, որ կարող էր միայն խորչեցնել մարդկանց կամ ստորադրել նրանց իրան։ Եւ որովհետև նրա գործունէութիւնը, որ նրա անսահման անձնապաստանութեան խորամուխութեան և իմաստութեան տեղ էին ընդունում, ուստի մեծամասնու-

*) Աստիճանական (постепеновецъ)=աստիճանական, զանդաղ զարգացման կողմից, հակայեղափոխական։ Ե. Բ.

**) Կարմիրական=յեղափոխական (յեղափոխականների գրօշակը կարմիր է լինում, արիւնագոյն)։ Ե. Բ.

թիւնը հպատակւում էր նրան և նա մեծ յաջողութիւն ունէր։

Ընկերները յարգում էին նրան նրա համարձակութեան ու վճռականութեան համար, բայց չէին սիրում նրան։ Իսկ նա ոչ ոքի չէր սիրում և բոլոր աչքի ընկնող մարդկանց վերաբերւում էր, իբրև մրցորդների, և եթէ կարողանար, ուրախութեամբ կը վարուէր նրանց հետ այնպէս, ինչպէս կապիկների ծեր առաջնորդը վարւում են չահէլների հետ։ Նա կը պոկէր ուրիշ մարդկանց ամրողջ ուղեղը իր բոլոր ընդունակութիւններով, որպէս զի այդ մարդիկ չը խանգարէին նրան ցոյց տալ իր ընդունակութիւնները։ Նա լաւ էր վերաբերւում միայն դէպի այն մարդիկ, որոնք երկրպագում էին նրան։ Այդպէս էր նա վերաբերւում այժմ, ճանապարհին, դէպի Կօնդրատիեվը և դէպի Վերա Եֆրեմօվնան ու սիրունիկ Գրաբեցը, որոնք նրկուսն էլ սիրահարուած էին նրա վրայ։ Թէպէտ և նա ակղբունքով կանանց հարցի կուսակից էր, բայց հոգու խորքում բոլոր կանանց յիմար ու չնչին արարածներ էր համարում, բացի նրանցից, որոնց վրայ նա յաճախակի սանտիմէնտալ կերպով սիրահարուած էր լինում, ինչպէս այժմ սիրահարուած էր Գրաբեցի վրայ, և այն ժամանակ նրանց համարում էր արտասովոր կին, որոնց արժանաւորութիւնները միմիայն ինքն էր կարողացել նկատել։

Սեռերի յարաբերութեան հարցը, միւս բոլոր հարցերի նման, թւում էր նրան չատ պարզ ու որոշ խնդիր, որ հեշտ էր լուծել ընդունելով ազատ սիրոյ գաղափարը։

Նա մի ֆիկտիվ *) կին ունէր, բացի դրանից ունէր մի ուրիշ, իսկական կին, որից բաժանուել էր, համոզուելով, որ իրանց մէջ չը կայ իսկական սէր, և այժմ մտադիր էր ազատ կերպով ամուսնանալ Գրաբեցի հետ։

Նեխլիւդօվին նա արհամարհում էր նրա համար, որ Նեխլիւդօվը, ինչպէս նա ասում էր, «կոտրատւում է» Մասլօվայի հետ, և մանաւանդ նրա համար, որ Նեխլիւդօվը ոչ միայն թոյլ էր տալիս իրան՝ գոյութիւն ունեցող կազմակերպութեան պակասութիւնների և այդ կազմակերպութիւնը բարւոքելու մասին մտածել ոչ բառ առ բառ այնպէս, ինչպէս մտածում էր Նօվոդվօրօվը, այլ և մինչեւ անգամ համարձակւում էր իր տեսակ, իշխանաւարի, այսինքն չիմարաւարի մտածել։ Նեխլիւդօվը գիտէր, որ Նօվոդվօրօվը այդպէս է վերաբերւում իրան, և ցաւ է սիրտ զգում էր, որ, չը նայելով այն բարեհոգի տրամադրութեան, որի մէջ նա գտնւում էր ճանապարհորդութեան ժամանակ, այնուամենայնիւ նա էլ իր կողմից արհամարհում էր Նօվոդվօրօվին և ոչ մի կերպ չէր կարողանում զսպել իր սաստիկ հակակրութիւնը դէպի այդ մարդը։

XVI

Կողքի սենեակից լսուեցին իշխանաւորների ձայներ։ Սմէն ինչ խաղաղուեց, և մի րոպէ չանցած ներս մտաւ պահապանապետը երկու ուղեկցող զինուորների հետ։ Ստուգումն էին կատարում։ Պահապանապետը բոլորին հաշուեց, ամէն մէկի վրայ մատով ցոյց տալով։ Երբ հերթը հասաւ Նեխլիւդօվին, նա ընտանեբար ասաց նրան.

—Այժմ, ստուգումից յետոյ, այլ ևս չի կարելի մնալ, իշխան։ Պէտք է հեռանալ։

Նեխլիւդօվը, իմանալով, թէ ինչ է նշանակում այդ, մօտեցաւ նրան ու բուռը կոխեց մի երկբուբլիանոց, որ առաջուց պատրաստ պահել էր ձեռքում։

—Էհ, ինչ արած ձեզ հետ։ Որ ուզում էք, մի քիչ էլ մնայէք։

Պահապանապետը ուզում էր գնալ, երբ ներս մտաւ մի ուրիշ ունտեր-օֆիցեր և նրա յետևից մի բարձրահասակ ու նիհար կալանաւոր՝ ցանցառ միրուքով և աչքի տակը կապտած։

—Աղչկանս էի ուզում տեսնել,—ասաց կալանաւորը։

—Օհօ, հայրիկն էլ եկաւ,—յանկարծ լսուեց մի հնչուն մանկական բարակ ձայն, և մի փոքրիկ չեկ գլուխ բարձրացաւ Բանցևայի յետևից, որ Մարիա Պաւլօվնայի ու Կատիւշայի հետ նոր չոր էր կարում փոքրիկ աղչկայ համար՝ իր զոհած ներքնազգեստից։

—Ես եմ, բալիկս, ես եմ,—փաղաքշաբար ասաց Բուգօվկինը։

—Այստեղ իրան չատ լաւ է զգում,—ասաց Մարիա Պաւլօվնան, տանջալից հայեացքով դիտելով Բուգօվկինի ջարդուած դէմքը։—Թողէք մեզ մօտ մնայ։

*) Ֆիկտիվ ամուսնութիւն—ամուսնութիւն՝ ձևի համար։ Ռուսաստանում երբեմն տեղի են ունենում, մանաւանդ առաջ տեղի էին ունենում, ամուսնութիւններ ձևի համար՝ զանազան գաղափարական նպատակներով, օրինակ, մի օրիորդի ծնողներ թոյլ չեն տալիս նրան բարձր ուսում առնել, մի երիտասարդ պահւում է նրա հետ և իբրև ամուսին ազատութիւն է տալիս նրան ուսում առնելու և առհասարակ անկախ ապրելու։ Նախապէս օրիորդն ու երիտասարդը պայմանաւորւում են, որ նրանք միմեանց վերաբերմամբ մարդ ու կին չեն լինելու, իրար հետ չեն կենակցելու։

Ե. Թ.

—Աղջիկպալոնները չոլ են կալում ինձ համալ,—ասաց եւ բեխան, ցույց տալով հօրը Բանցեվայի ձեռքի չորը։—Զիզի չոլ է,—թոթովում էր նա։

—Գիշերը կը մնաս մեզ մօտ,—հարցրեց Բանցեվան, փաղաքշելով երեխային։

—Կը մնամ։ Հայլիկն էլ թող մնայ։

Բանցեվայի դէմքը պայծառակերպուեց իր յատուկ ժպիտով։

—Հայրիկին չի կարելի,—ասաց նա։—Ուրեմն թողէք երեխային այստեղ,—դիմեց նա հօրը։

—Կ'ուղէք, թողէք,—ասաց պահապանապետը, կանգ առնելով դռան մէջ, ու դուրս եկաւ միւս ոստեր-օֆիցէրի հետ։

Հէնց որ ուղեկցող զինուորները դուրս եկան, Նաբատօվը մօտեցաւ Բուզօվկինին և, ուսին թեթև խփելով, ասաց.

—Հը՞, եղբայր, ճիշտ է, որ ձեր խմբում կարմանօվը ուզում է փոխուել ուրիչի հետ։

Բուզօվկինի բարեհոգի ու քաղցր դէմքը յանկարծ սխրեց, և աչքերի վրայ կարծես վառ կապեց։

—Լսած չը կամ։ Դժուար թէ,—ասաց նա ու, դարձեալ աչքերը փառակալած, աւելացրեց.—դէ, Ակսիւտկա, ինչպէս երեւում է, քո բախտն է, պէտք է այստեղ մնաս ու առօք-փառօք քնես աղջիկպալոնների հետ,—ու չտապեց դուրս գալ։

—Երեւում է, որ ամէն ինչ գիտի, և ճիշտ է, որ փոխուել են,—ասաց Նաբատօվը։—Հիմա ինչ պէտք է անէք։

—Քաղաքում կ'ասեմ իշխանաւորներին։ Ես այդ երկու կալանաւորների դէմքն էլ ճանաչում եմ,—պատասխանեց Նեխլիւդօվը։

Բոլորն էլ լուռ էին, ակնյայտօրէն, վախենալով, թէ մի գուցէ ընդհատուած վէճը նորից սկսուի։

Սիմօնսօնը, որ ամբողջ ժամանակը լուռ պառկած էր անկիւնի տախտի վրայ՝ ձեռները գլխի տակը դրած, վճռական կերպով վեր կացաւ ու նստածների կողքով զգուշաբար պտոյտ տալով մօտեցաւ Նեխլիւդօվին։

—Կարող էք այժմ լսել ինձ։

—Ի հարկէ,—ասաց Նեխլիւդօվը ու վեր կացաւ, որ գնայ յետիոյը։

Նայելով վեր կացած Նեխլիւդօվին և հանդիպելով հայեացքով նրա հայեացքին, կատիւշան կարմրեց և կարծես երկմտօրէն թափ տուեց գլուխը։

—Ահա թէ ինչ գործ ունէի ձեզ հետ,—սկսեց Սիմօնսօնը, երբ նա ու Նեխլիւդօվը դուրս եկան միջանցքում

աւելի ևս սաստիկ էին լսում քրէականների սենեակից եկող ժխորը և ձայների աղմուկը։ Նեխլիւդօվը կնճռոտեց, բայց Սիմօնսօնը ակնհայտօրէն ամենևին ուշք չէր դարձնում այդ բանի վրայ։

—Իմանալով ձեր վերաբերմունքը դէպի կատերինա Միխայլօվնան,—սկսեց Սիմօնսօնը, իր բարի աչքերով ուղիղ և ուշադիր կերպով նայելով Նեխլիւդօվի դէմքին,—պարտաւոր եմ համարում ինձ,—չարունակեց նա, բայց սոխլուած էր կանգ առնել, որովհետև հէնց դռան կողքին երկու ձայն միաժամանակ գոռում էին, ինչ որ մի բանի մասին վիճելով։

—Ջեզ ասում եմ, կռապաշտի որդի, որ իմս չեն,—գոռում էր ձայներից մէկը։

—Բգուտդ դէմ առնի, կոյր գրող,—գոռում էր միւս, խըռպոտ ձայնը։

Այդ ժամանակ Մարիա Պաւլօվնան դուրս եկաւ միջանցքը։

—Միթէ կարելի է այստեղ խօսել,—ասաց նա,—մտէք այստեղ, բացի Վերօչկայից ոչ ոք չը կայ ներսը։—Եւ նա առաջ անցնելով կողքի դռնով մտաւ մի փոքրիկ սենեակ, որ ակնհայտօրէն միայնակ կալանաւորների համար էր, իսկ այժմ զրուած էր քաղաքական յանցաւորուհիների տրամադրութեան տակ։ Տախտի վրայ, գլուխը վերմակի տակ կոխած, պառկած էր Վերա Եֆրեմօվնան։

—Գլխացաւը բռնել է, քնել է, ոչինչ չի լսի, իսկ ես կ'երթամ,—ասաց Մարիա Պաւլօվնան։

—Ընդհակառակը, դու մնա,—ասաց Սիմօնսօնը,—ես ոչ ոքից գաղտնիք չունեմ, ես առաւել քեզնից։

—Շատ լաւ,—ասաց Մարիա Պաւլօվնան և երեխայի նըման ամբողջ մարմնով մի կողմից միւսը շարժուելով և այդ շարժումով աւելի խոր նստելով տախտի վրայ, պատրաստուեց լըսելու, ուր որ հեռու նայելով իր գեղեցիկ գառնակերպ աչքերով։

—Այդպէս ուրեմն իմ գործը նրանումն է,—կրկնեց Սիմօնսօնը,—որ իմանալով ձեր վերաբերմունքը դէպի կատերինա Միխայլօվնան, ես ինձ պարտաւոր եմ համարում յայտնել ձեզ իմ վերաբերմունքը դէպի նա։

—Այսինքն թէ ինչ,—հարցրեց Նեխլիւդօվը ակամայ հիանալով այն պարզութիւնից և չիտակութիւնից, որով Սիմօնսօնը խօսում էր նրա հետ։

—Այսինքն այն, որ ես կ'ուզէի ամուսնանալ կատերինա Միխայլօվնայի հետ։

—Զարմանալի բան,—ասաց Մարիա Պաւլօվնան, աչքերը յառելով Սիմօնսօնի վրայ։

—Ես վճռել եմ խնդրել, որ նա իմ կինը դառնայ,—չարունակեց Սիմօնսօնը։

—Ես ինչ կարող եմ անել այդտեղ։ Այդ կախուած է իրանից,—ասաց Նեխլիւդօվը։

—Բայց նա այդ հարցը չի վճռի առանց ձեզ։

—Ինչո՞ւ։

—Որովհետև մինչև որ ձեր ու նրա յարաբերութիւնների հարցը վերջնապէս չը վճռուի, նա չի կարող ոչ մի ընտրութիւն անել։

—Իմ կողմից հարցը վերջնապէս վճռուած է։ Ես ուզում էի անել այն, ինչ որ իմ պարտականութիւնս եմ համարում, և բացի դրանից ուզում էի թեթևացնել նրա դրութիւնը, բայց ամենևին չեմ ցանկանում ճնշել նրա ազատութիւնը։

—Այո, բայց նա չի ուզում ընդունել ձեր զոհաբերութիւնը։

—Ոչ մի զոհաբերութիւն չը կայ այդ բանում։

—Ես ես գիտեմ, որ նրա այդ վճիռը անփոփոխելի է։

—Որ այդպէս է, էլ ինչո՞ւ էք խօսում ինձ հետ,—ասաց Նեխլիւդօվը։

—Նրա համար անհրաժեշտ է, որ դուք էլ ընդունէք նոյն բանը։

—Ի՞նչպէս կարող եմ ընդունել, որ ես պէտք է անեմ այն, ինչ որ պարտական եմ։ Մի բան միայն կարող եմ ասել, այն է, որ ես ազատ չեմ, բայց նա ազատ է։

Սիմօնսօնը լռեց ու մտքի հետ ընկաւ։

—Լաւ, այդպէս էլ կ'ասեմ իրան։ Չը կարծէք, թէ ես սիրահարուած եմ նրա վրայ,—չարունակեց նա։—Ես սիրում եմ նրան իբրև հիանալի, հազուագիւտ և շատ տանջանքներ քաշած մարդու։ Ես ոչինչ չեմ ուզում նրանից, բայց սաստիկ ուզում եմ օգնել նրան, թեթևացնել նրա դրու...

Նեխլիւդօվը զարմացաւ, նկատելով, որ Սիմօնսօնի ձայնը դողաց։

—...թեթևացնել նրա դրութիւնը,—չարունակեց Սիմօնսօնը։—Եթէ նա չի ուզում ընդունել ձեր օգնութիւնը, թող ընդունի իմս։ Եթէ նա համաձայնի, ես կը խնդրեմ, որ ինձ պատուէն նրա բանտարգելութեան տեղը։ Շորս տարին՝ յափտեանական չէ։ Ես կ'ապրէի նրանից մօտիկ և գուցէ կը կարողանայի թեթևացնել նրա վիճակը...—Նա նորից կանգ առաւ յուզմունքից։

—Ես ի՞նչ կարող եմ ասել,—ասաց Նեխլիւդօվը։—Ես չատ ուրախ եմ, որ նա գտել է ձեր նման մի հովանաւոր...

—Ահա հէնց այդ էր ինձ պէտք իմանալ,—չարունակեց Սիմօնսօնը։—Ես ուզում էի իմանալ, թէ նրան սիրելով, նրան բարիք ցանկանալով, արդեօք դուք բարիք կը համարէիք նրա ամուսնութիւնը ինձ հետ։

—Օ, ի հարկէ,—վճռական կերպով ասաց Նեխլիւդօվը։

—Ինձ հետաքրքրողը միայն նա է. իմ ցանկութիւնս է միայն, որ մի քիչ հանգստանայ այդ բազմատանջ հոգին,—ասաց Սիմօնսօնը, այնպիսի մանկական քնքշութեամբ նայելով Նեխլիւդօվին, որ անկարելի էր սպասել այդ մռայլադէմ մարդուց։

Սիմօնսօնը վեր կացաւ, բռնեց Նեխլիւդօվի ձեռքը, երեսը մօտեցրեց նրա երեսին, համչկոտ կերպով ժպտաց ու համբուրեց նրան։

—Ուրեմն այդպէս էլ կ'ասեմ նրան,—ասաց նա Նեխլիւդօվին ու դուրս եկաւ։

XVII

—Տեսաք,—ասաց Մարիա Պաւլօվնան։—Սիրահարուած է, բոլորովին սիրահարուած։ Ա՛յ թէ չէի կարող սպասել, որ վլադիմիր Սիմօնսօնը սիրահարուի ամենայիմար, ամենաուղղայական սիրահարութեամբ։ Զարմանալի բան է և, անկեղծ ասած, ցաւալի բան,—վերջացրեց նա, յոգոց քաշելով։

—Իսկ ինչպէս էք կարծում, ինչպէս է վերաբերում այդ բանին Կատեան,—հարցրեց Նեխլիւդօվը։

—Կատեան։—Մարիա Պաւլօվնան կանգ առաւ, ակնհայտօրէն աշխատելով որքան կարելի է ճիշտ պատասխանել հարցին։—Կատեան։ Պէտք է ասել, որ, չը նայելով իր անցեալին, նա իր բնէ ամենաբարոյական բնաւորութիւններից մէկն է... և սաստիկ նուրբ զգայմունքների տէր... Նա սիրում է ձեզ,—սիրում է լաւ սիրով և բախտաւոր է զգում իրան, որ կարող է ձեզ գոնէ բարոյական բարիք անել, չը կապելով ձեր կեանքը իր կեանքի հետ։ Նրա համար ձեզ հետ ամուսնանալը սարսափելի անկումն կը լինէր, աւելի վատ անկում, քան բոլոր նախկին անկումները, ուստի և նա երբէք չի համաձայնի այդ բանին։ Իսկ միևնոյն ժամանակը ձեր ներկայութիւնը անհանգստացնում է նրան։

—Ուրեմն ուզում էք ասել, թէ ես պէտք է անհետանամ,—ասաց Նեխլիւդօվը։

Մարիա Պաւլօվնան ժպտաց իր քաղցրիկ մանկական ժպիտով։

—Այո, մասամբ։

—Ի՞նչպէս կարող եմ մասամբ անհետանալ։

—Ես սխալ ասացի, բայց Կատիւշայի մասին ես ուզում էի ձեզ ասել, որ հաւանականօրէն նա նկատում է Սիմօնսօնի այդ չափազանցած սիրոյ անհեթեթութիւնը (Սիմօնսօնը ոչինչ չի ասել նրան), և այդ չոյում է նրա ինքնասիրութիւնը և միևնոյն ժամանակ երկիւղ է ազդում նրան։ Դուք գիտէք, որ ես ձեռնհաս չեմ այդ հարցերում, բայց ինձ թւում է, որ Սիմօնսօնի կողմից ամենասովորական ազամարդային զգացմունք է այդ, միայն թէ դիմակաւորուած։ Նա ասում է, թէ այդ սէրը սաստկացնում է նրա եռանդը և թէ պլատօնական սէր է այդ։ Բայց ես լաւ գիտեմ, որ եթէ բացառիկ սէր է այդ, կը նշանակի նրա հիմքը այնուամենայնիւ կազմում է որ և է անպիտան բան... Ինչպէս որ Նօվօդվօրօվի ու Լիւբօչկայի մէջ։

Մարիա Պաւլօվնան չեղուեց հարցից, սկսելով խօսել իր սիրած խնդրի մասին։

—Բայց ես ինչ պէտք է անեմ,—հարցրեց Նեխլիւդօվը։

—Ինձ թւում է, որ դուք պէտք է ասէք նրան։ Միշտ ամենից լաւն այն է, որ ամեն բան պարզ լինի։ Խօսեցէք հետը, ես կը կանչեմ նրան։ Ուզո՞ւմ էք,—ասաց Մարիա Պաւլօվնան։

—Խնդրեմ,—ասաց Նեխլիւդօվը, և Մարիա Պաւլօվնան դուրս գնաց։

Տարօրինակ զգացմունք պաշարեց Նեխլիւդօվին, երբ նա մենակ մնաց փոքրիկ սենեակում, լսելով Վերա Եֆրեմօվնայի՝ երբեմն-երբեմն հառաչներով ընդհատուող մեղմ չնչառութիւնը և քրէականների ժխորը, որ անընդհատ թնդում էր երկուստակ դռների յետևից։

Այն, ինչ որ Սիմօնսօնը նրան ասաց, ազատութիւն էր տալիս նրան իր վրայ վերցրած պարտականութիւնից, որ թուլութեան րոպէներում ծանր ու սարսափելի էր թւում նրան, և սակայն այդ ոչ միայն անախորժ էր թւում նրան, այլ և ցաւ էր պատճառում։ Այդ զգացմունքը մասամբ յառաջանում էր նրանից, որ Սիմօնսօնի առաջարկութիւնը խախտում էր նրա վարմունքի բացառիկութիւնը, թէ իր և թէ ուրիշների աչքում նուազեցնում էր նրա բերած զոհաբերութեան արժէքը,—որովհետև եթէ Սիմօնսօնի նման մի լաւ մարդ, որ ոչինչով կապուած չէր Մասլօվայի հետ, ուզում էր միացնել իր բախտը նրա բախտի հետ, ուրեմն Նեխլիւդօվի զոհաբերութիւնը այնքան էլ մեծ բան չէր։ Գուցէ այդտեղ ուղղակի խանդոտութեան զգացմունք էլ կար։ Նեխլիւդօվը այնքան սովորել էր Մասլօվայի դէպի ինքը տածած սէրին, որ չէր կարողանում թոյլ տալ, թէ նա կարող է սիրել մի ուրիշին։ Կար այդտեղ և այն, որ դրանով քանդւում էր Նեխլիւդօվի կազմած ծրագիրը—ապրել Մասլօվայից մօտիկ, մինչև որ վերջանար նրա պատժի ժամանակամիջոցը։ Եթէ Մասլօվան ամուսնանար Սիմօնսօնի հետ, Նեխլիւդօվի ներկայութիւնը այլ ևս հարկաւոր չէր լինի, և նա պէտք է կեանքի մի նոր ծրագիր կազմէր։ Նա դեռ չէր կարողացել գլուխ հանել իր զգացմունքներից, երբ դուռը բացուեց, ներս խուժեց քրէականների ձայների սաստկացած ժխորը (նրանցում ինչ որ առանձին բան էր տեղի ունենում այդ օրը) և սենեակը մտաւ Կատիւշան։

Նա արագ քայլերով մօտեցաւ Նեխլիւդօվին։

—Մարիա Պաւլօվնան ուղարկեց ինձ,—ասաց նա, կանգ առնելով չատ մօտիկ Նեխլիւդօվից։

—Այո, ես խօսելիք ունեմ ձեզ հետ։ Նստէք, խնդրեմ։ Վլադիմիր Իվանօվիչը խօսակցութիւն ունեցաւ ինձ հետ։

Մասլօվան նստեց, ձեռները ծնկների վրայ կլկլով իրար, և հանգիստ էր թւում, բայց հէնց որ Նեխլիւդօվը արտասանեց Սիմօնսօնի անունը, նա կարմրատակեց։

—Ի՞նչ ասաց ձեզ,—հարցրեց Մասլօվան։

—Ասաց, որ ուզում է ձեզ հետ ամուսնանալ։

Մասլօվայի դէմքը յանկարծ կնճռուեց, տանջանք արտայայտելով, բայց նա ոչինչ չասաց ու միայն՝ աչքերը քաշ գցեց։

—Նա համաձայնութիւն էր խնդրում ինձնից կամ խորհուրդ։ Ես ասացի, որ ամեն ինչ ձեզնից է կախուած, որ դուք պէտք է վճռէք։

—Ահա, այդ ինչ բան է։ Ինչու՞ համար է,—ասաց Մասլօվան ու նայեց Նեխլիւդօվի աչքերին իր չիլ աչքերի այն տարօրինակ հայեացքով, որ միշտ սաստիկ ազդեցութիւն էր գործում նրա վրայ։

Մի քանի վայրկեան նրանք լուռ նայում էին իրար աչքի մէջ։ Եւ այդ հայեացքը չատ բան ասաց թէ մէկին թէ միւսին։

—Դուք պէտք է վճռէք,—կրկնեց Նեխլիւդօվը։

—Ի՞նչ վճռելու բան կայ,—ասաց Մասլօվան։—Ամեն ինչ վաղուց վճռուած է։

—Չէ, դուք պէտք է վճռէք, թէ արդեօք ընդունում էք Վլադիմիր Իվանօվիչի առաջարկութիւնը,—ասաց Նեխլիւդօվը։

—Ես ինչ կենդանու եմ տաժանապարտ տեղում։ Ինչու՞ ինձ հետ Վլադիմիր Իվանօվիչի կեանքն էլ սևացնեմ,—ասաց նա, յօնքերը կիտելով։

—Այո, բայց եթէ ներումն չնորհուի ձեզ,—ասաց Նեխլիւդովը։

—Ա՛խ, թողէք ինձ։ Էլ ասելու բան չունեմ,—ասաց Մասլօվան ու վեր կացաւ, դուրս եկաւ սենեակից։

XVIII

Երբ Նեխլիւդովը կատիւշայի յետևից վերադարձաւ տղամարդկանց սենեակը, այնտեղ ամենքը յուզմունքի մէջ էին։ Նաբատովը, որ ամեն ծակ ու ծուկ մտնում էր, ամենքի հետ յարաբերութիւն էր ունենում և ամեն ինչ դիտում էր, մի լուր էր բերել, որ բոլորին ապշեցրել էր։ Այդ լուրը կայանում էր նրանում, որ նա մի պատի մէջ գտել էր մի տոմսակ, որ թողել էր այնտեղ տաժանակիր աշխատանքների դատապարտուած քաղաքական յանցաւոր Պեպլինը։ Ամենքը կարծում էին, թէ Պեպլինը վաղուց Կարայի ափերումն է, և յանկարծ դուրս էր գալիս, որ նա միայն նորերս էր անցել այդ նոյն ճանապարհով մենակ քրէականների հետ։

«Օգոստոսի 17-ին,—գրուած էր տոմսակում,—ինձ ուղարկեցին մենակ քրէականների հետ։ Նեվերօվը ինձ հետ էր և կախուեց կալանի գժանոցում։ Ես ողջ առողջ եմ և լի ամենալաւ յոյսերով»։ Ամենքը քննադատում էին Պեպլինի դրութիւնը և Նեվերօվի ինքնասպանութեան պատճառները։ Իսկ Կրիլցօվը լուռ էր՝ կենտրոնացած կերպարանքով և յուռած, փայլուն աչքերով։

—Մարդս ինձ ասում էր, թէ Նեվերօվը առաջ էլ ուրուականներ էր տեսնում,—ասաց Բանցեվան։

—Այո, նրա պէս բանասեղծ, ֆանտազեօր մարդիկ չեն դիմանում միայնակ կալանաւորութեան,—ասաց Նօվօդվօրօվը։—Երբ ինձ միայնակ կալանաւորում էին, թոյլ չէի տալիս երևակայութեանս աշխատել և ամենասիստեմատիկական կերպով կարգադրում էի ժամանակս։ Դրա չնորհիւ էլ միշտ հեչ էի տանում։

—Ի՞նչ չը տանելու բան կայ այդտեղ։ Ես հօ չատ անգամ ուրախանում էի, երբ նստացնում էին,—ասաց Նաբատովը զուարթ ձայնով, ակներևաբար ուզելով փարատել մռայլ տրամադրութիւնը։—Սպառ ժամանակը մարդ ամեն բանից վախենում է. հայ քեզ կը բռնեն ու համ ուրիշներին կը խառնես գործի մէջ, համ գործը կը փչացնես, իսկ երբ բռնում նստացնում են, պատասխանատուութիւնդ վերջանում է և կարող ես հանգստանալ։ Նաի բանտումը ու ծխի քո քէֆին։

—Դու մօտիկ էիր ճանաչում նրան,—հարցրեց Մարիա Պաւլօվնան, անհանգիստ կերպով նայելով Կրիլցօվի դէմքին, որ յանկարծ վոխուեց ու փոս ընկաւ։

—Նեվերօվը ֆանտազեօր էր,—յանկարծ սկսեց խօսել Կրիլցօվը, չնչասպառ լինելով, կարծես թէ երկար ժամանակ դուռացել էր կամ երդել, և ամբողջապէս կարմրատակած՝ յանկարծ սկսեց սաստիկ հազալ ու բերնից սկսեց արիւն հոսել։

Նաբատովը վազեց ձիւն բերելու։ Մարիա Պաւլօվնան հանեց վալերիանեան կաթիլներ և առաջարկեց Կրիլցօվին, բայց նա, աչքերը խփած, յետ էր հրում կաթիլները իր սպիտակ և նիհար ձեռքով, ծանր ու յաճախակի չնչելով։ Երբ ձիւնն ու սառքի կտորը մի քիչ հանգստացրին նրան և նրան պառկացրին, որը կտորը մի քիչ հանգստացրին նրան և նրան պառկացրին, որ քան, Նեխլիւդովը մնաս բարև արեց ամենքի հետ ու գնաց դէպի ելքի դուռը ունտեր-օֆիցէրի հետ, որ եկել էր նրա յետևից և վազուց սպասում էր նրան։

Բրէականները արդէն խաղաղուել էին, և մեծ մասը քնել էին։ Զը նայելով, որ սենեակներում նրանք պառկած էին թէ տախտերի վրայ, թէ տախտերի տակ և թէ անցքերում, այնուամենայնիւ ամենքը չէին կարողացել տեղաւորուել սենեակներում, և մի մասը պառկած էր միջանցքում յատակի վրայ, գլուխները դրած տոպրակների վրայ և փաթաթուած նամ խալաթների մէջ։

Սենեակների դռներից և միջանցքում լսում էին խռխռոց, անքոյ և քնկոտ խօսակցութիւն։ Ամեն տեղ երևում էին խալաթներով ծածկուած մարդկային կերպարանքների միածոյլ կոյտեր։ Չէին քնած միմիայն ամուրի քրէականների սենեակում մի քանի մարդիկ, որոնք անկիւնում նստած էին մի մոմի մօտ, որ հանգցրին, տեսնելով զինուորին, և մէկ էլ մի ծերուկ՝ միջանցքում, լամպի տակ։ Ծերունին տկլոր նստած էր և նեակի վարակուած օդը մաքուր էր թուում այստեղ կանգնած խեղդող գարշահոտութեան հետ։ Ծխացող լամպը կարծես մըչուշի միջից էր երևում, և մարդու չունչ կտրում էր։ Միջանցքով անցնելու համար, որ մարդ քնածներից մէկին ու մէկին ոտնակոխ չանէր կամ չոտնահարէր, պէտք էր աչքերը սրած առաջուց մի դատարկ տեղ գտնել և ոտքը այնտեղ դնելով՝ տեղ փնտռել հետևեալ քայլի համար։ Երեք հոգի, որոնք ակներևաբար տեղ չէին գտել նաև միջանցքում, պառկել էին հաչտում ուղղակի գարշահոտ կոյտանի տակ, որ տակից տասնում էր։ Դրանցից մէկը մի խենթուկ ծերունի էր, որին Նեխլիւդովը յաճախ էր տեսնում ճանապարհորդութեան ժամանակ։

Միւսը մի լինը, տասը տարեկան տղայ էր, որ պառկած էր երկու կալանաւորների արանքին և ձեռքը թշի տակ դրած քընել էր նրանցից մէկի ոտի վրայ։

Դարպասից դուրս գալով Նեխլիւդովը կանգ առաւ ու երկար ժամանակ և ուժգին լիաթոք ընչում էր առնտամանի օդը, ուռցնելով կուրծքը։

XIX

Դրսնում աղմնակը պարզել էր և երևում էր աստղազարդ երկինքը։ Պնդացած և միայն տեղ-տեղ կակուղ մնացած ցեխով վերագառնալով իջևանը, Նեխլիւդովը ծեծեց մութ պատուհանը և յանախիկունք մշակը ոտաբոբիկ եկաւ դուռը բաց արեց ու ներս թողեց նրան հաչոցը։ Հաչոից դէպի ալ՝ գռեհկասենեակում լսւում էր կառապանների բարձրաձայն խոխոջը. դէպի առջևի կողմը դռան յետևին, բակում, լսւում էր բազմաթիւ ձիերի որոճ։ Դէպի ձախ՝ մաքուր սենեակի դուռն էր։ Մաքուր սենեակում օչինդրի և քրտինքի հոտ էր կանգնած, միջնորմի յետևից ում որ հուժկու թոքերի համաչափ ու ախորժակալի խռռոց էր լսւում և օրթերի պատկերների առաջ վառւում էր կարմիր ապակուց չինած մի կանթեղ։ Նեխլիւդովը չորերը հանեց, պլեդը փռեց մոմչորով պատած բազմոցի վրայ, իր կաշուէ բարձը դրեց գլխատակը և պառկեց ու սկսեց մտաբերել այն բոլորը, ինչ որ տեսել ու լսել էր այդ օրը։ Այդ օրը տեսածներից ամենաապրեցուցիչն թուաց նրան այն ազան, որ գլուխը կալանաւորներից մէկի ոտին դրած, քնել էր կոյամանից դուրս ծորած կեղտաջրի վրայ։

Չը նայելով, որ այդ երեկոյ Սիմոնսոնի ու Կատիւշայի հետ ունեցած խօսակցութիւնը անազատելի էր նրա համար և շատ կարևոր, այնուամենայնիւ նա կանգ չառաւ այդ դէպքի վրայ. նրա վերաբերմունքը դէպի այդ բանը չափազանց բարդ էր և միևնոյն ժամանակ չափազանց անորոշ, ուստի և նա վանում էր իրանից այդ դէպքին վերաբերեալ մտքերը։ Բայց ևս աւելի կենդանի կերպով էր նա յիշում այդ խեղդուկ օդի մէջ չնչասպառ եղող ու գարշահոտ կոյամանից ծորած հեղուկի վրայ պառկած թշուառների տեսարանը և մանաւանդ այն կալանաւորի ոտի վրայ քնած անմեղ դէմքով տղային, որ ամենևին դուրս չէր գալիս նրա գլխից։

Երբ Նեխլիւդովը զարթնեց, կառապանները արդէն վազուց գնացել էին իրանց կազմերով, իջևանի տիրուհին արդէն թէյը խմել էր և, հաստլիկ չլինքի քրտինքը թաշկինակով սրբելով, եկաւ յայտնեց, որ էտապից մի գինուոր տոմսակ է բերել նրան։ Տոմսակը Մարիա Պաւլօվնայից էր։ Նա գրում էր, որ Կրիլցօվի դրութիւնը աւելի լուրջ է, քան իրանք կարծում էին։ «Սկզբում մենք ուզում էինք նրան թողնել և մնալ նրա հետ, բայց այդ թոյլ չը տուեցին, և մենք կը տանենք նրան, բայց սաստիկ վախենում ենք։ Աչխատեցէք այնպէս յայտնեցնել քաղաքում, որ եթէ նրան թողնելու լինեն, մեզնից մէկին էլ թողնեն հետը։ Եթէ դրա համար պէտք լինի, որ ես ամուսնանամ նրա հետ, ի հարկէ, պատրաստ եմ ամուսնանալ»։

Նեխլիւդովը մշակին ուղարկեց կայարան կառք լծել տալու ու սկսեց վազ-վազ դարսոտել բանները։ Նա դեռ չէր վերջացրել թէյի երկրորդ բաժակը, երբ զնգզնգալով ու սառած ցեխի վրայ, ինչպէս սալայատակի վրայ, դղրդալով պատչամբին մօտեցաւ եռաձի կառքը։ Վճարելով հաստավիզ իջևանատիրուհուն՝ ինչ որ նրան հասնելու էր, Նեխլիւդովը չտապեց դուրս գալ և նստելով կառքը հրամայեց որքան կարելի է չուտ քշել, ուզելով հասնել կալանաւորների յետևից։ Ճանկապատի դարպասից ոչ հեռու նա յիրաւի հասաւ տոպրակներով ու հիւանդներով ծանրաբեռնուած սայլակներին, որոնք դղրդում էին յղկանալ սկսող սառած ցեխի վրայ (օֆիցէրը չը կար,—առաջ էր գնացել)։ Զինուորները, ակնհայտաբար հարբած, ուրախ-ուրախ զրուցում էին, գնալով սայլակների յետևից ու ճանապարհի երկու կողքից։ Սայլակներ շատ կային։ Առջևի սայլակներում խիտ առ խիտ նստած էին վեց-վեց տակառ քրէականներ, իսկ յետևի երեք սայլակներում՝ երեք-երեք քաղաքականներ։ Ամենայետևի սայլակում նստած էին Նօվոդվօրովը, Գրաբեցը և Կօնդրատիեվը, երկրորդում Բանցևան, Նաբատօվը և այն ոսկրացաւով հիւանդ կինը, որին իր տեղը զիջել էր Մարիա Պաւլօվնան։ Երրորդում՝ խոտի ու բարձերի վրայ պառկած էր Կրիլցօվը։ Սայլակի առաջակողմում նրա կողքին նստած էր Մարիա Պաւլօվնան։ Նեխլիւդովը իր կառապանին կանգնեցրեց Կրիլցօվի մօտ և գնաց դէպի նա։ Հարբած զինուորը ձեռը թաւի տուեց Նեխլիւդովի վրայ, բայց Նեխլիւդովը, ուշադրութիւն չը դարձնելով նրա վրայ, մօտեցաւ սայլակին ու բռնելով ափիցը՝ սկսեց սայլակի կողքով գնալ։ Կրիլցօվը, գիւղական մուշտակը հագին, գտնուում էր գլխարկը գլխին ու բերանը թաշկինակով կապած, աւելի նիհար ու գունատ էր թուում։ Նրա գեղեցիկ աչքերը առանձնապէս մեծ ու փայլուն էին թուում։ Սայլակի չարժումներից թուլիկ-թուլիկ օրօրուելով, նա, առանց աչքերը հեռացնելու, նայում էր Նեխլիւդովին և միայն երբ նա հարց տուեց իր առողջութեան մասին, աչքերը փակեց ու գլուխը բարկացած

թափ տուեց։ Նրա ամբողջ եռանդը ակներեւաբար հաղիւ բաւականանում էր սայլակի չարժումները տանելու համար։ Մարիա Պաւլօվնան նստած էր սայլակի միւս կողմում։ Նա նայեց Նեխլիւդօվի աչքերին նշանակալից հայեացքով, որ արտայայտում էր նրա անչափ անհանգստութիւնը Կրիլցօվի վիճակի նկատմամբ, ու յետոյ իսկոյն եւ եթ սկսեց խօսել ուրախ ձայնով։

—Ինչպէս երեւում է, օֆիցէրը սկսել է ամաչել իր արածից,—գոռաց նա, որպէս զի Նեխլիւդօվը կարողանար լսել նրա ձայնը անիւների դղրդոցի մէջ։—Բուզօվկինի ձեռնակապերը հանեցին։ Ինքն է տանում իր աղջկան եւ նրա հետ գնում են կատեան, Սիմօնսօնը ու, իմ փոխարէն, Վերօչկան։

Կրիլցօվը մի բան ասաց, որ անկարելի էր լսել, ցոյց տալով Մարիա Պաւլօվնայի վրայ, և կիսաձայնով, ակներեւաբար հաղը պահելով, թափ տուեց գլուխը։ Նեխլիւդօվը գլուխը մօտեցրեց նրան, որպէս զի լսի ասածը։ Այն ժամանակ Կրիլցօվը, բերանը ազատելով թաչկինակից, չընջաց.

—Այժմ չատ աւելի լաւ եմ։ Միայն թէ չը մրսէի։

Նեխլիւդօվը հասատաւօրէն թափ տուեց գլուխը և նա ու Մարիա Պաւլօվնան նայեցին իրար։

—Չ՞ը, ինչպէս է երեք մարմինների խնդիրը,—աւելացրեց Կրիլցօվը չչունչով և ծանր ու դժուար կերպով ժպտաց։—Շատ դժուար է վճռել, չէ՞։

Նեխլիւդօվը չը հասկացաւ նրա ասածը, բայց Մարիա Պաւլօվնան բացատրեց, որ Կրիլցօվը խօսում է երեք երկնաւոր մարմինների՝ արեգակի, լուսնի ու երկրագնդի յարաբերութիւնների որոշման յայտնի մաթեմատիկական խնդրի մասին, և որ Կրիլցօվը կատակով այդ յարաբերութիւններին է նմանեցնում Նեխլիւդօվի, Կատիւշայի ու Սիմօնսօնի յարաբերութիւնները։ Կրիլցօվը գլխով նշան արեց, թէ Մարիա Պաւլօվնան ճիշտ է բացատրում իր կատակը։

—Վճռողը ես չեմ լինելու,—ասաց Նեխլիւդօվը։

—Ստացաք իմ տոմսակը, կ՚անէք,—հարցրեց Մարիա Պաւլօվնան։

—Անպատճառ,—ասաց Նեխլիւդօվը և, դժգոհութիւն նկատելով Կրիլցօվի դէմքի վրայ, գնաց նստեց իր կառքը և բռնելով կառքի կողքերից, որ ցնցում էր նրան չը յղկուած ճանապարհի կոշտերին դիմանալով, սկսեց հետզհետէ առաջ անցնել ձեռնակապով զուգակցուածների և չղթայակապների մօխրագոյն խաչաթների ու կիսամուշտակների չարքից, որ ձգւում էր մի վերստ տարածութեամբ։ Ճանապարհի հակառակ կողմում Նեխլիւդօվը նկատեց Կատիւշայի կապոյտ գլխաշորը, վերա Եֆրեմօվնայի սև վերարկուն և Սիմօնսօնի բաճկոնը, գործած գլխարկը և սանդալիանների նման կապտաւած սպիտակ բրդէ գուլպանները։ Սիմօնսօնը գնում էր այդ կանանց հետ և ինչ որ տաք-տաք խօսում էր նրանց հետ։

XX

Նեխլիւդօվին անհնելով կանգաք գլուխ տուեցին նրան, իսկ Սիմօնսօնը հանդիսաւոր կերպով բարձրացրեց գլխարկը։ Նեխլիւդօվը նրանց ասելու բան չունէր, ուստի և առանց կառքը կանգնեցնելու առաջ անցաւ։ Նորից դուրս գալով յղկուած ճանապարհը, կառապանը սկսեց աւելի ևս արագ քշել, բայց անդադար սոիպուած էր լինում դուրս գալ ուղիղ ճանապարհից, հանդիպելով դէպի նոյն կողմը գնացող կամ հակառակ կողմից եկող սայլախմբերի չարքերին։

Ճանապարհը, որ ամբողջապէս փորփորտուած էր խոր անուահետքերով, անցնում էր ստուերախիտ անտառի միջով։ Անտառը բաղկացած էր փշատերև ծառերից, բայց ճանապարհի երկու կողմից էլ տեղ-տեղ վառ գոյնով և աւազային ցոլքով դեղնին էին տալիս ցարասխների և կաւենիների գեռ չը թափուած տերևներ։ Կիսաճանապարհին անտառը վերջացաւ, և երեւային դաշտեր ու վանքի ոսկեխաչատոր գմբէթներ։ Եղանակը բոլորովին լաւացել էր, ամպերը ցրուել էին, արեգակը բարձրացել էր անտառից վերև և ծառերի թաց տերևները, լճացած ջրերը և եկեղեցու գմբէթներն ու խաչերը վառ վայլում էին արեւում։ Աղջնում, աջակողմում, կապտաժեռ հեռաւորութեան մէջ սպիտակին էին տալիս հեռաւոր տարերը։ Նեխլիւդօվի եռանձի կառքը մտաւ մի քաղաքամերձ մեծ աւան։ Աւանի փողոցը վքեն էր բազմութեամբ, որ բաղկացած էր տարօրինակ գլխարկներ դրած ու խալաթներ հագած ռուսներից ու այլազգիներից։ Հարթած ու լուրջ տղամարդիկ ու կանայք խանութների, պանդոկների, գինետների ու սայլերի չուրջը խռնուած գոգոռում էին։ Զգացւում էր քաղաքի մօտակայութիւնը։

Մտրակելով աջակողմեան ձիուն ու ձգելով սանձափոկը և կողքահան նստելով իր տեղում, այնպէս որ սանձափոկերը ամբողջ ակողմից լինէին, կառապանը, ակներեւաբար իր չնորհքը ցոյց տալու համար, սլացրեց կառքը լայն փողոցով և, առանց ձիերի գլուխը պահելու, մօտեցաւ գետին, որի վրայով պէտք է անցնէին լաստով։ Լաստը արագընթաց գետի մէջտեղումն էր և գալիս էր հակառակ ափից։ Այս ափում մօտ քսան սայլ սպասում էր հակառակ ափից։ Այս ափում մօտ քսան սայլ սպա-

սում էին լաստին։ Նեխլիւդովը երկար չը սպասեց։ Հոսանքի հակառակ՝ դէպի չատ վեր ուղղուած լաստը, արագընթաց ջրից տարուելով, չուտով քշուեց լաստամատոյցի տախտակների մօտ։

Բարձրահասակ, թիկնեղ, մկանուտ և լուակեաց լաստավարները, կիսամուշտակներով ու կաշուէ անդրավարտիքներով, ճարպիկ ու վարժ կերպով դցեցին պարանները, ամրացրին սիւներից և, պատուարները բռնալով, լաստի վրայ կանգնած սայլերը դուրս թողնելին ափը ու սկսեցին բարձել լաստը նոր սայլերով անընդմէջ չարելով իրար կողքի սայլերը ու ձիերը, որոնք հուչտ էին լինում ջրից։ Արագընթաց, լայն գետի ալիքները խփում էին լաստի նաւակների կողերին ու ձգում պարանները։ Երբ լաստը լցուեց և Նեխլիւդովի կառքը, որի ձիերը արձակել էին, կանգնեցրին կողերից մէկի մօտ իրար հուպ տուած սայլերի արանքին, լաստավարները պատուարները փակեցին, ուշադրութիւն չը դարձնելով չը տեղաւորուածների խնդիրքներին, պարանները բաց արին ու լաստը քշեցին առաջ։ Լաստի վրայ խաղաղ էր և լսւում էր միայն լաստավարների ոռնաձայնը և տախտակների վրայ ոռները փոխող ձիերի սմբակների դոփիւնը։

Նեխլիւդովը, լաստի եզրի մօտ կանգնած, նայում էր լայն ու արագընթաց գետին։ Նրա երևակայութեան մէջ փոխէփոխ զարթնում էին երկու պատկեր,—զայրացած տրամադրութեան մէջ մնռնող Կրիլցովի՝ սայլի չարժումներից ցնցուող գլուխը և ճանապարհի կողքով Սիմոնովոյի հետ ժիր-ժիր քայլող Կատիւշայի կերպարանքը։ Տպաւորութիւններից մէկը, մնռնելու չը պատրաստուած մնռնող Կրիլցովի տպաւորութիւնը՝ ծանր էր ու տխուր։ Միւս տպաւորութիւնը,—ժիր Կատիւշայի տպաւորութիւնը, որ սէր էր ազդել այնպիսի մարդու, ինչպէս Սիմոնովոնը, և այժմ հաստատ կերպով ոտք էր դրել բարիի անչեղ ճանապարհի վրայ, պէտք է ուրախ լինէր, բայց Նեխլիւդովի համար այդ տպաւորութիւնն էլ ծանր էր և նա չէր կարողանում յաղթել այդ ծանրութեանը։

Քաղաքից ջրի վրայով տարածուեց ժխոր և ահագին պղնձէ զանգակի դողդոջուն ղօղանջ։ Նեխլիւդովի կողքին կանգնած կառապանը և բոլոր սայլապանները միմեանց յաւելից հանեցին գլխարկները ու երեսները խաչակնքեցին։ Իսկ ճաղերից ամենամօտիկ կանգնած մի կարճահասակ ու փրչոտ ծերուկ, որին Նեխլիւդովը սկզբում չէր նկատել, չը խաչակնքեց, այլ գլուխը բարձրացնելով՝ աչքերը յառեց Նեխլիւդովի վրայ։ Այդ ծերուկը հագած ունէր կարկատած կապայ, մահուդէ անդրավարտիք և մաշուած, կարկատած կաշուէ սնապաններ։ Շալակին ունէր

մի փոքրիկ տոպրակ, իսկ գլխին բարձր ու թերմաչ մորթէ գդակ։

—Դուք ձեր էք գնում,—հարցրեց Նեխլիւդովը։

—Ուր որ Աստուած յաջողի։ Բանում եմ, իսկ երբ աշխատանք չը կայ, մուրում եմ,—պատասխանեց նա, նկատելով, որ լաստը մօտենում է միւս ափին։

Լաստը մօտեցաւ ափին։ Նեխլիւդովը քսակը հանեց ու փող առաջարկեց ծերուկին։ Ծերուկը հրաժարուեց։

—Ես այդ բանից չեմ վերցնում։ Հաց եմ վերցնում,—ասաց նա։

—Որ այդպէս է ներիր։

—Ներելու բան չը կայ։ Դու ինձ չանպատուեցիր։ Ինձ իակի անպատուել էլ չի կարելի,—ասաց ծերուկը և սկսեց չալակը դնել վայր առած տոպրակը։ Մինչ այդ՝ Նեխլիւդովի կառքը դուրս հանեցին ափը ու լծեցին պատրաստի ձիերը։

XXI

Բլուրը բարձրանալով՝ կառապանը չուռ եկաւ.

—Ո՞ր հիւրանոցը տանեմ։

—Ո՞րն է ամենալաւը։

—«Սիբիրեան» հիւրանոցից լաւը չը կայ։ Դիւկովինն էլ վատ չէ։

—Ուր կ'ուզես տար։

Կառապանը նորից կողքահան նստեց ու սկսեց աւելի արագ քշել ձիերին։ Քաղաքը նոյն տեսքն ունէր, ինչ որ առհասարակ բոլոր քաղաքները։ Նոյնպիսի տներ վերնատներով ու կանաչ կատուներով, նոյնպիսի տաճար, խանութներ և գլխաւոր փողոցում մագազիններ և նոյնիսկ նոյնպիսի փողոցային ոստիկաններ։ Միայն թէ գրեթէ բոլոր տները փայտաշէն էին և փողոցները անասելայատակ։ Ամենաբանուկ փողոցներից մէկում կառապանը կանգնեցրեց կառքը մի հիւրանոցի դռան առաջ։ Բայց հիւրանոցում ազատ համարներ չը կային, այնպէս որ պէտք էր գնալ ուրիշ հիւրանոց։ Այդ միւս հիւրանոցում ազատ համար կար, և Նեխլիւդովը երկու ամսից ի վեր առաջին անգամը կրկին ընկաւ համեմատական մաքրութեան և յարմարութեան սովորական պայմանների մէջ։ Թէև ամենևին չքեղ չէր Նեխլիւդովի վարձած համարը, այնուամենայնիւ նա մեծ թերեւացումն զգաց այդտեղ ճանապարհի կառքերից, իջևաններից և էտապներից յետոյ։ Ամենից առաջ, պէտք էր մաքրուել ոջիլներից, որոնցից նա երբէք չէր կարողանում բոլորովին ազատուել

էտապները այցելելուց յետոյ։ Բաները բաց անելով, նա իսկոյն գնաց բաղնիս և այնուհետև, քաղաքային ձևով կարգի բերելով իրան,—օսլայած չապիկ և երկար ժամանակ ծալած մնալուց ճմռուած անդրավարտիքը, սիւրտուկը ու վերարկուն հագնելով,—գնաց երկրի գլխաւոր իշխանաւորի մօտ։ Հիւրանոցի դռնապանի կանչած կառապանը՝ կուշտուկուռ և խոշոր կիրգիզեան ձի լծած դոգռան կառքով տարաւ Նեխլիւդովին երկրի իշխանաւորի տունը, որ մի մեծ ու գեղեցիկ չէնք էր և որի մօտ կանգնած էին պահապան զինուորներ ու փողոցային ոստիկաններ։ Շէնքը շրջապատուած էր պարէզով, ուր մերկ ճիւղերը ցցած տեւ բիաթափ բարդիների ու ցարասիների արանքներին խիտ առ խիտ և մուգ գոյնով կանաչին էին տալիս եղևիններ ու սոճիներ։

Գեներալը տակաւ էր և ոչ ոքի չէր ընդունում։ Նեխլիւդովը այնուամենայնիւ խնդրեց լաքէյին յանձնել իր այցետոմսը, և լաքէյը վերադարձաւ բաւականաչափ պատասխան բերելով.

—Հրամայեցին ներս խնդրել։

Նախասենեակը, լաքէյը, սպասաւոր զինուորականը, սանդուխը, կոկած ու պսպղան պարկէտը,—այդ բոլորը նման էր Պետերբուրգին, միայն թէ մի քիչ աւելի կեղտոտ էր ու աւելի վհեհակերպ։ Նեխլիւդովին ներս հրաւիրեցին առանձնասենեակը։

Գեներալը, որ մի ուռած սանգվինիկ մարդ էր, պաճոյ քթով, ճակատի ու ճաղատ գանգի վրայ դուրս պրծած մանկուտերով և տոպրակաձև կախ ընկած տակի կոպերով, թուրքական մեծաքեսֆ խալաթը հագին ու պապիրոսը ձեռքին նստած թէյ էր խմում արծաթէ բաժակակալի մէջ դրած բաժակով։

—Բարև։ Ներեցէք, որ խալաթով եմ ընդունում. այսպէս աւելի լաւ է, քան ամենևին չընդունել,—ասաց նա, խալաթով ծածկելով յետևի կողմից ծալծլուած հագած վիզը։—Լաւ չեմ զգում ինձ և տանից դուրս չեմ գալիս։ Այդ ինչպէս է պատահել, որ եկել էք այս հեռաւոր երկիրը։

—Ես ուղեկցում էի կալանաւորների մի խմբի, որի մէջ կայ ինձ մերձաւոր մի անձնաւորութիւն,—ասաց Նեխլիւդովը,—և ահա եկել եմ խնդրելու ձերդ գերազանցութիւնից մասամբ այդ անձնաւորութեան մասին և բայի դրանից մի ուրիշ բանի մասին։

Գեներալը պապիրոսի ծուխը ծծեց, թէյից մի ումպ խմեց, հանգցրեց պապիրոսը դահանակէ մոխրամանի մէջ և, առանց հեռացնելու նեղլիկ, ուռած ու փայլուն աչքերը Նեխլիւդովի երեսից, լուրջ կերպով լսում էր նրան։ Նա ընդհատեց նրա խօսքը միայն նրա համար, որ հարցնէր, թէ արդեօք չի ուզում ծխել։

Գեներալը պատկանում էր ուսումնական զինուորականների տիպին, որոնք կարծում են, թէ կարելի է աղատամտութիւնն ու մարդասիրութիւնը հաշտեցնել իրանց արհեստի հետ։ Բայց, իբրև ի բնէ խելօք ու բարի մարդ, նա չատ չուտով հասկացաւ այդ բանի անկարելիութիւնը և, չը տեսնելու համար այն ներքին հակասութիւնը, որի մէջ գտնուում էր չարունակ, սկսեց հետզհետէ աւելի ու աւելի անձնատուր լինել մեծ քանակութեամբ օղի խմելու սովորութեան, որ այնքան տարածուած է զինուորականների մէջ։ Նա ամբողջապէս տոգորուած էր օղիով։ Բաւական էր, որ նա մի որև է հեղուկ խմէր, որպէս զի իսկոյն հարբէր։ Իսկ օղի խմելը այնպիսի պահանջ էր նրա համար, առանց որի նա ապրել չէր կարող։ Միայն առաւօտները, այսինքն այն ժամանակ, երբ Նեխլիւդովը գնաց նրա մօտ, նա նման էր բանական մարդու և կարող էր հասկանալ այն, ինչ որ նրան ասում էին, ու աւել կամ պակաս յաջողութեամբ արդարացնել այն առածը, որ նա սիրում էր կրկնել,—հարբած ու խելքը գլխին, երկու բան միասին։ Բարձր իշխանութիւնը գիտէր նրա այդ պակասութիւնը, բայց նա այնուամենայնիւ աւելի կրթուած էր, քան միւսները,—թէպէտև կանգ էր առել իր կրթութեան մէջ այնտեղ, ուր սկսել էր հարբեցողութեան անձնատուր լինել,—համարձակ էր, ճարպիկ, տեսքը և նոյն իսկ հարբած ժամանակը կարողանում էր տակտով պահել իրան, ուստի և նրան նշանակել էին այդ պաշտօնին և պահում էին այդ պաշտօնում։

XXII

Նեխլիւդովը պատմեց գեներալին, որ իրան հետաքրքրող անձնաւորութիւնը մի կին է, որ նա անմեղ տեղը դատապարտուած է և որ նրա մասին խնդիրք է տուած Բարձրագոյն անունով։

—Այդպէս։ Ցետոյ,—ասաց գեներալը։

—Ինձ Պետերբուրգում խոստացան, որ այդ կնոջ վիճակի մասին տեղեկութիւն կ'ուղարկեն ինձ այստեղ և ոչ ուշ, քան այս ամիսը։

Առանց աչքերը Նեխլիւդովից հեռացնելու, գեներալը մեկնեց կարճամատ ձեռքը դէպի սեղանը, զանգահարեց և չարունակեց լուռ լսել, փսփսացնելով պապիրոսը և սաստիկ բարձր հազալով։

—Ուշադիր և կը խնդրէի, եթէ կարելի է, պահել այդ կնոջը այստեղ, մինչև որ Նրա տուած խնդիրքի պատասխանը ստացուի։

Ներս մտաւ գինուոր սպասաւորը, գինուորական համազգեստ հագած։

—Հարցրու, արդեօք վեր է կացել Աննա Վասիլիեվնան, —ասաց գեներալը սպասաւորին,—և մի բաժակ էլ թէյ բեր։ Ի՞նչ ինչ,—դիմեց գեներալը Նեխլիւդովին։

—Իմ միւս խնդիրքը,—չարունակեց Նեխլիւդովը,—վերաբերում է մի քաղաքական կալանաւորի, որ գտնւում է նոյն խմբում։

—Հըը՛ը,—բացականչեց գեներալը, խորհրդաւոր թափ տալով գլուխը։

—Նա ծանր հիւանդ է. մեռնում է թոքախտից։ Եւ նրան երեկ կը թողնեն այստեղի հիւանդանոցում։ Քաղաքական կալանաւորուհիներից մէկը ուզում է մնալ նրա հետ։

—Օտար է նրան այդ կալանաւորուհին։

—Այո, բայց նա պատրաստ է ամուսնանալ նրա հետ, եթէ դրանով հնարաւորութիւն կը տանայ մնալ նրա հետ։

Գեներալը լուռ յառել էր նրա վրայ իր փայլուն աչքերը, աներևաքար ցանկանալով այլայլեցնել խօսակցին իր հայեացքով, և չարունակ ծխում էր։

Երբ Նեխլիւդովը վերջացրեց խօսքը, նա սեղանի վրայից վերցրեց մի գիրք և, արագ-արագ թքոտելով մատները, որոնցով թերթում էր գիրքը, գտաւ ամուսնութեան վերաբերեալ յօդուածը ու կարդաց։

—Ի՞նչ պատժի է դատապարտուած այդ կալանաւորուհին, —հարցրեց նա, բարձրացնելով աչքը գրքից։

—Կալանաւորուհին։ Տաժանակիր աշխատանքների։

—Կալանաւորի դրութիւնը չի կարող բարւոքուել այն հանգամանքի շնորհիւ, որ նա ամուսնանում է։

—Բայց չէ որ...

—Ներեցէք։ Եթէ այդ կալանաւորուհին ամուսնանար մի ազատ մարդու հետ, էլի պէտք է կրէր իր պատիժը։ Այստեղ հարցը նրանում է, թէ ով է աւելի ծանր պատժի ենթարկուած կալանաւորը թէ կալանաւորուհին։

—Նրանք երկուսն էլ դատապարտուած են տաժանակիր աշխատանքների։

—Ուրեմն սէր (քվիտ) կը լինեն իրար հետ,—ծիծաղելով ասաց գեներալը։—Երկուսն էլ միակերպ պէտք է պատժուեն։ Կալանաւորին կարելի է հիւանդութեան պատճառով թողնել

այստեղ,—չարունակեց նա,—և, ի հարկէ, ինչ որ հնար է կ'անուի նրա վիճակը թեթևացնելու համար, բայց կալանաւորուհին, թէկուզ պսակուի էլ նրա հետ, չի կարող մնալ այստեղ...

—Գիներալուհին սուրճ է խմում,—զեկուցեց սպասաւորը։

Գիներալը գլխով արեց ու չարունակեց.

—Սակայն, ես դեռ կը մտածեմ։ Ի՞նչպէս է նրանց ազգանունը։ Գրեցէք այստեղ։

Նեխլիւդովը գրեց։

—Այդ էլ չեմ կարող,—ասաց գեներալը Նեխլիւդովին, երբ նա խնդրեց թոյլ տալ իրան տեսնուել հիւանդի հետ։—Ես, ի հարկէ, կասկածով չեմ վերաբերուում ձեզ,—ասաց նա,—բայց դուք հետաքրքրուում էք այդ և ուրիշ կալանաւորներով և դուք փող ունէք։ Իսկ այստեղ մնջնում ամեն ինչ կարելի է ծախու առնել։ Ես այստեղ նստած, ոչ չեմ կարող 5000 վերստ տարածութեան վրայ հսկել։ Իմ ստորադրեալներից ամեն մէկը իր տեղում մի փոքրիկ թագաւոր է։ Այնպէս, ինչպէս ես ինքս այստեղ,—և նա ծիծաղեց։—Դուք անչուշտ ճանապարհին տեսնում էք քաղաքական յանցաւորների հետ, փող էլք տալիս և ձեզ ներս էին թողնում, այնպէս չէ,—հարցրեց նա ժպտալով։

—Այո, պատահում էր։

—Ես հասկանում եմ, որ դուք չէք կարող ուրիշ կերպ վարուել։ Դուք ուզում էք տեսնել մի քաղաքական յանցաւորի։ Դուք խղճում էք նրան։ Իսկ մի որ և է բանտապետ կամ ուղեկցող գինուոր կաշառք կը վերցնի, որովհետև ընտանիքի տէր է, իսկ ռոճիկը երկու աբասի է,—ինչպէս չը վերցնի։ Եթէ ես էլ ձեր տեղը լինէի կամ նրանց տեղը, նոյնպէս կը վարուէի, ինչպէս դուք կամ նրանք։ Բայց իմ տեղում լինելով, ես թոյլ չեմ տալիս ինձ չեղուել օրէնքի ամենաչնչին տառացի իմաստից, հէնց այն պատճառով, որ ես էլ մարդ եմ և կարող եմ գրաւուել կարեկցութեան զգացմունքով։ Ես կատարող եմ, ինձ վստահացել են որոշ գործ յայտնի պայմաններով և ես պէտք է արդարացնեմ այդ վստահութիւնը։ Այդպէս ուրեմն՝ այդ հարցը վերջացնենք այդ մասին։ Դէ այժմ պատմեցէք տեսնենք, թէ ինչ է կատարւում ձեր մայրաքաղաքում,—և գեներալը սկսեց հարց ու փորձ անել և միևնոյն ժամանակ պատմել, աներևաքար ցանկանալով միաժամանակ և նոր լուրեր իմանալ և իր ամբողջ նշանակութիւնն ու մարդասիրութիւնը ցոյց տալ։

—

XXIII

—Հա, որտեղ էք իջել, Դիւկի հիւրանոցում։ Այնտեղ էլ մի բան չի։ Եկէք մեզ մօտ ճաշելու,—ասաց գեներալը, արձակուրդ տալով Նեխլիւդովին,—ժամի հնգին։ Անգլիերէն խօսել գիտէք։

—Այո, գիտեմ։

—Շատ լաւ է, որ գիտէք։ Մի անգլիացի ճանապարհորդ է եկել մեր քաղաքը։ Նա ուսումնասիրում է Սիբիրի բանտերն ու աքսորավայրերը։ Այսօր նա ճաշելու է մեզ մօտ, դուք էլ եկէք։ Ժամի հնգին նկք ճաշում, և կլինս ճշտապահութիւն պահանջող է։ Ես ձեզ ճաշի ժամանակ պատասխան կը տամ, թէ ինչպէս պէտք է անել այն կնոջ վերաբերմամբ, նոյնպէս և հիւանդի մասին։ Թերևս կարելի լինի որ և է միջոց գտնել նրա հետ։

Մնաս բարև ասելով գեներալին, Նեխլիւդովը գնաց նամակատունը, առաձնապէս զբաղուած ու գործունեայ տրամադրութեան մէջ գտնուելով իրան։

Նամակատունը մի փոքրիկ կամարաւոր սենեակ էր։ գրասեղանի յետևում նստած էին աստիճանաւորներ և նամակներ էին տալիս խռնուած բազմութեան։ Աստիճանաւորներից մէկը, գլուխը կողքահան ծռած, անընդհատ թխթխկացնում էր կնիքը ծրարների վրայ, որ ճարտար ու արագ անց էր կացնում կնիքի տակով։ Նեխլիւդովը յայտնեց իր ազգանունը և նրան երկար սպասեցնել չը տուին. իսկոյն և եթէ տուեցին նրան նրա բաւական մնծաքանակ նամակներին, որ բաղկացած էր մի քանի նամակներից, փողի ծրարից, գրքերից և «Отечественныя Записки» ամսագրի վերջին համարից։ Նամակները ստանալով, Նեխլիւդովը գնաց փայտէ նստարանի կողմը, ուր մի զինուոր, ինչ որ բանի սպասելով, նստած էր գիրքը ձեռքին, ու նայելով նրա կողքին՝ սկսեց աչքի անցնել ստացած նամակները։ Նրանց մէջ կար մի պատուիրած նամակ—մի գեղեցիկ ծրար՝ վառ կարմիր զմուռսի պարզորոշ կնիքը վրան։ Նա բաց արեց այդ ծրարը և տեսնելով մէջը Սելենինի նամակը ինչ որ պաշտօնական թղթի հետ, զգաց, որ արիւնը խփեց երեսը և սիրտը ճմլուեց։ Կատիւշայի գործի վճիռն էր այդ։ Ինչ վճիռ էր արդեօք։ Մի՞թէ կարող էր մերժումն լինել։ Նեխլիւդովը չտապով աչքի անցրեց մանր, դժուար որոշելի, հաստատ ու բնկերական ձեռագրով գրուածը և ուրախ-ուրախ չունչ քաշեց։ Վճիռը բարենպաստ էր։

«Սիրելի բարեկամ»—գրում էր Սելենինը։—«Մեր վերջին խօսակցութիւնը սաստիկ տպաւորութիւն թողեց ինձ վրայ։ Ձեր ասածը իրաւացի էր Մասլովայի վերաբերմամբ։ Ես ուշադրութեամբ աչքի անցրի գործը և տեսայ, որ նրա վերաբերմամբ վրդովեցուցիչ անարդարութիւն է կատարուել։ Գործը ուղղել կարելի էր միմիայն խնդրագիրների յանձնաժողովում, ուր և դիմել էիք դուք։ Ինձ յաջողեց այնտեղ աջակցել հարցի վճռելուն և ահա ուղարկում եմ ձեզ ներման պատճէնը այն հաստէտով, որ տուել էինձ կոմսուհի Եկատերինա Իվանօվնան։ Իսկական թուղթը ուղարկուած է այնտեղ, ուր Մասլովան բանտարկուած էր դատի ժամանակ, և հաւանականօրէն իսկոյն և եթէ այնտեղից կ'ուղարկուի Սիբիրի Գլխաւոր Վարչութեանը։ Շտապում եմ հաղորդել քեզ այս ուրախ լուրը։ Բարեկամաբար սղմում եմ ձեռքդ։ Ձո Սելենին»։

Թղթի բովանդակութիւնը հետևեալն էր. «Նորին Կայսերական Մեծութեան՝ Բարձրագոյն Անունով տրուած իշխանութեան ընդունելութեան դիւանատուն։ Այս ինչ գործավարութիւն։ Այս ինչ սեղան, այս ինչ թիւ այս ինչ ամսի ու տարուայ։ Նորին Կայսերական Մեծութեան՝ Բարձրագոյն Անունով տրուած իշխանութիւնների ընդունելութեան դիւանատան կառավարչապետի հրամանով, որանով յայտնւում է մեչչանների դասին պատկանող Եկատերինա Մասլովային, որ Նորին Կայսերական Մեծութիւնը, լսելով Ամենահպատակօրէն արուած զեկուցումը, զիջելով Մասլովայի խնդիրքին, Բարձրագոյն հրամայել բարեհաճեց փոխարինել նրա պատիժը, տասնամեայ աշխատանքների տեղ ենթարկելով նրան աքսորի Սիբիրի ոչ այնքան հեռաւոր տեղերը»։

Լուրը ուրախալի էր և չատ կարևոր. այն բոլորը, ինչ որ Նեխլիւդովը կարող էր ցանկանալ Կատիւշայի և նաև իր համար՝ կատարուել էր։ Ասենք, Կատիւշայի դրութեան մէջ տեղի ունեցած այդ փոփոխութիւնը նոր բարդութիւններ էր մտցնում Նեխլիւդովի և նրա յարաբերութիւնների մէջ։ Քանի որ Կատիւշան տասնամեայ էր, Նեխլիւդովի առաջարկած ամուսնութիւնը ֆիկտիվ էր լինելու և միայն այն նշանակութիւնն էր ունենալու, որ թեթևացնելու էր նրա դրութիւնը։ Իսկ այժմ ոչինչ չէր կարող արդելք լինել նրանց միատեղ ապրելուն։ Իսկ այդ բանին Նեխլիւդովը չէր պատրաստուած։ Իսկ Կատիւշայի յարաբերութիւնները Սիմոնսոնի հետ։ Ինչ էին նրանք։ Նա հասկանում նրա երէկուայ խօսքերը։ Եւ եթէ նա համաձայնէր ամուսնանալ Սիմոնսոնի հետ, լաւ կը լինէր այդ թէ վատ։ Նեխլիւդովը չէր կարողանում ամենևին գլուխ հանել այդ հարցերից և վճռեց այլ ևս այժմ չը մտածել այդ բաների մասին։ «Այդ բոլորը

կ'որոշուի ապագայում,—մտածեց նա,—իսկ այժմ պէտք է որքան կարելի է չուտ տեսնել Կատիւշային, հաղորդել նրան այս ուրախալի լուրը և ազատել տալ նրան»: Նա կարծում էր, թէ իր ստացած պատճէնը բաւական է Կատիւշային ազատելու համար: Եւ դուրս գալով նամակատնից, հրամայեց կառապանին քշել բանտը:

Չը նայելով, որ գեներալը թոյլ չը տուեց նրան այցելել բանտը առաւօտեան, Նեխլիւդովը, փորձով իմանալով, որ յաճախ այն, ինչ որ ոչ մի կերպ չի կարելի յաջողեցնել բարձր իշխանաւորների մօտ, շատ հեշտ է յաջողեցնել նրանց ստորադրեալների մօտ, վճռեց այնուամենայնիւ փորձել մտնելու բանտը հէնց այժմ, ուղեղով հաղորդել Կատիւշային ուրախալի լուրը ու թերևս ազատել նրան և միևնոյն ժամանակ իմանալ, ինչպէս է Կրիլցօվի առողջութիւնը ու յայտնել նրան ու Մարիա Պաւլօվնային՝ գեներալի ասածը:

Բանտապետը մի շատ բարձրահասակ ու հասո-հասո և վեհատեսիլ մարդ էր՝ դէպի բերնի անկիւնները ծռուած ծնօտամիրուքներով ու բեխերով: Նա շատ խիստ կերպով ընդունեց Նեխլիւդովին և ուղղակի յայտնեց, որ ինքը չի կարող տեսակցութիւն թոյլ տալ կոչնակի մարդկանց առանց իշխանաւորների թոյլտուութեան: Երբ Նեխլիւդովը ասաց, որ նոյն իսկ մայրաքաղաքներում իրան թոյլ էին տալիս տեսակցել, բանտապետը պատասխանեց.

—Շատ կարելի է, բայց ես թոյլ չեմ տալիս—Եւ այդ ասելիս նրա ձայնի եղանակը արտայայտում էր. «դուք, մայրաքաղաքցի պարոններդ, կարծում էք, թէ մեզ կը զարմացնէք ու կ'ապշեցնէք. բայց մենք, նոյն իսկ Արևելեան Սիբիրում ապրելով, լաւ գիտենք և նոյն իսկ կարող ենք ձեզ սովորեցնել օրինական կարգերը»:

Նորին Մեծութեան Սեփական դիւանատան թղթի պատճէնն էլ ազդեցութիւն չը գործեց բանտապետի վրայ: Նա վճռական կերպով ասաց, որ Նեխլիւդովին ներս չի թողնիլ բանտը: Իսկ երբ Նեխլիւդովը միամտաբար ասաց, թէ այդ պատճէնը ներկայացնելով կարելի է ազատել տալ Մասլովային, բանտապետը միայն արհամարհական կերպով ժպտաց, ասելով, որ որևէ մէկին ազատելու համար ինքը պէտք է հրաման ստանայ իր անմիջական իշխանութիւնից: Միակ բանը, որ նա խոստացաւ, այն էր, որ կը յայտնի Մասլովային Ներման մասին և ոչ մի ժամ չի պահել նրան բանտում, երբ հրաման ստանայ իր իշխանաւորից:

Կրիլցօվի առողջութեան մասին որևէ տեղեկութիւն տա-

լուց էլ նա հրաժարուեց, ասելով որ ինքը չի կարող նոյն իսկ ասել, թէ կայ արդեօք բանտում այդպիսի կալանաւոր, թէ ոչ: Եւ այդպէս, չը կարողանալով ոչինչ յաջողեցնել, Նեխլիւդովը նստեց կառքը ու գնաց հիւանդանոց:

Բանտապետի խստութիւնը նրանից էր յառաջանում գլխաւորապէս, որ այդ ժամանակ տիֆ կար բանտում, ուր տեղաւորուած էին կանոնաւոր թուի համեմատութեամբ կրկնապատիկ քանակութեամբ կալանաւորներ: Նեխլիւդովի վարձած կառապանը ճանապարհին պատմեց նրան, որ «բանտում բռնածները ճանճի պէս կոտորւում են: Ինչ որ ցաւ է ընկել մէջները: Օրը քանի մարդ են թաղում»:

XXIV

Չը նայելով բանտում հանդիպած անյաջողութեան, Նեխլիւդովը, նոյն աշխոյժ, զրգռուած ու գործունեայ տրամադրութեան մէջ, գնաց նահանգապետի դիւանատունը, իմանալու համար, արդեօք այնտեղ չէն ստացել Մասլովայի ներման թուղթը: Թուղթը չէր ստացուել, ուստի և Նեխլիւդովը, վերադառնալով հիւրանոց, շտապեց իսկոյն և նէթ գրել այդ մասին Սեկլետին ու փաստաբանին: Նամակները վերջացնելով, նա նայեց ժամացոյցին. գեներալի մօտ գնալու ժամանակն էր: Ճանապարհին զարձեալ նրա մտքովը անցաւ այն հարցը, թէ ինչպէս կ'ընդունի Կատիւշան իր ներումը: Ո՞ւր կը բնակեցնեն նրան: Ի՞նչպէս կ'ապրի ինքը նրա հետ: Ի՞նչ կ'անի Սիմոնսոնը: Ի՞նչպէս է վերաբերուում Կատիւշան նրան: Ցիշեց Սիմոնսոնը: Ի՞նչպէս է վերաբերուում Կատիւշան նրան: Ցիշեց նաև նրա կատիւշայի մէջ կատարուած փոփոխութիւնը: Ցիշեց նաև նրա անցեալը:

«Պէտք է մոռանալ, ջնջել յիշողութիւնից»,—մտածեց նա և զարձեալ չտապեց վանել դէմքը այդ մտքերը:—Ապագայում կը պարզուի,—ասաց նա ինքն իրան ու սկսեց մտածել այն մասին, թէ ինչ պէտք է ասի գեներալին:

Գեներալի ճաշը, որ սպասաւորուած էր՝ Նեխլիւդովի համար սովորական փարթամութեամբ, ինչպէս առհասարակ հարուստ մարդկանց և բարձրաստիճան պաշտօնեաների ճաշերը, մեծ հաճոյք պատճառեց նրան երկարատև ճանապարհորդութիւնից յետոյ, որի ընթացքում նա զրկուած էր ոչ միայն փարթամութիւնից, այլ և ամենատարրական յարմարութիւններից:

Տանտիկինը, որ Նիկոլայ կեսօր ժամանակ Քրեյլինա էր

եղել, պետերբուրգեան հին տիպի grande dame *) էր և խօսում էր ֆրանսերէն՝ բնական, իսկ ռուսերէն՝ անբնական կերպով։ Նա չափազանց ձիգ էր պահում իրան և ձեռքերը չարժելիս՝ արմունկները երբէք չէր հեռացնում իրանից։ Նա անդորր ու փոքր ինչ սխուր պահառանքով էր վերաբերւում իր ամուսնուն և չափազանց քաղցր, թէպէտև, նայելով անձնաւորութեանը, տարբեր տեսակ, իր հիւրերին։ Նեխլիւդովին նա ընդունեց իբրև մտերմի, այն առանձնատեակ, աննկատելի չողոքորթութեամբ, որի չնորհիւ Նեխլիւդովը նորից իմացաւ իր ունեցած բոլոր արժանաւորութիւնները և հաճելի գոհացումն ղգաց։ Տանտիկինը ղգացնել տուեց նրան, որ իրան յայտնի է նրա թէև օտարոտի, բայց ազնիւ վարմունքը, որ պատճառ է եղել նրա Սիբիր գալուն, և որ ինքը նրան համարում է բացառիկ անձնաւորութիւն։ Այդ նուրբ չողոքորթութիւնը և գեներալի տան ամբողջ գողտրիկ ու ճոխ մթնոլորտը՝ այն ազդեցութիւնն ունեցան, որ Նեխլիւդովը ամբողջապէս անձնատուր եղաւ այն զուարճութեան, որ ստանում էր գեղեցիկ չրջապատից, համեղ կերակուրներից և իր սովորական չրջանին պատկանող բարեկիրթ մարդկանց հետ ունեցած յարաբերութիւնների հեչտութիւնից ու դուրեկանութիւնից, այնպէս որ կարծես այն բոլորը, ինչ որ չրջապատում էր նրան վերջին ժամանակը, լոկ երազ էր, որից նա այժմ զարթնել էր իսկական իրականութեան մէջ ապրելու համար։

Ձաչին, բացի տանու մարդկանցից,—գեներալի աղջկանից ու փեսայից և ադիւտանտից,—կային անգլիայի ճանապարհորդը, մի ոսկեհանքատէր վաճառական և մի նահանգապետ, որ եկել էր Սիբիրի մի հեռաւոր քաղաքից։ Այդ բոլոր մարդիկ հաճելի էին Նեխլիւդովին։

Անգլիացին, որ մի կաբմիր ու առողջ մարդ էր և չատ վատ էր խօսում ֆրանսերէն, բայց զարմանալի լաւ և պերճախօսօրէն աղդում՝ անգլիերէն, չատ բան էր տեսել իր կեանքում և հետաքրքրական բաներ էր պատմում Ամերիկայի, Հնդկաստանի, Եապօնիայի ու Սիբիրի մասին։

Երիտասարդ ոսկեհանքատէրը, որ Լօնդօնում կարած ֆրակ ունէր հագին և գոհարազարդ կոճակներ՝ չապկաթևքերին, գիւղացու տղայ էր, ընդարձակ գրադարան ունէր, մեծ գումարներ էր նուիրում բարեգործական նպատակով և եւրոպական-ազատամիտ համոզմունքների տէր էր։ Նա էլ հաճելի և հետաքրքրական էր Նեխլիւդովի համար իբրև մի կատարեալ նոր ու լաւ տիպ, որ ներկայացնում էր եւրոպական կուլտուրականութեան քաղաքակիրթ պատուաստ ռուսական գեղջկային ինքնաբոյս տունկի վրայ։

Հեռաւոր քաղաքի նահանգապետը,—նախկին՝ դեպարտամէնտի դիրէկտոր,—մի թխլիկ ու ներքնիկը չատ հաստ մարդ էր գանգուր դրած ցանցառ մազերով, քնքոյշ կապուտակ աչքերով, փափկիկ ու ապիտակ մատանեզարդ ձեռներով և դուրեկան ժպիտով։ Այդ նահանգապետին տանտէրը լաւ էր վերաբերւում այն բանի համար, որ նա կաչառակեր չէր։ Իսկ տանտիկինը, որ երաժչտութեան ջերմ սիրահար էր և ինքն էլ չատ լաւ դաշնակահարուհի, լաւ էր վերաբերւում նրան, որովհետև նա լաւ երաժիչտ էր և իր հետ քառաձեռ նուագում էր։ Նեխլիւդովը այն աստիճան քաղցրահոգի տրամադրութեան մէջ էր գտնւում, որ այդ մարդն էլ այդ օրը անդուրեկան չէր նրան։

Ուրախ, եռանդուն, կապտաժեռ կղակով ադիւտանտ—օֆիցերը, որ ամեն բանում առաջարկում էր իր ծառայութիւնը, հաճելի էր իր բարեհոգութեամբ։

Իսկ ամենից աւելի հաճելի էին Նեխլիւդովին գեներալի համակրելի ու ջահել աղջիկը, որ մի ազնիւ ու սաստիկ բարեհոգի կին էր, ամբողջապէս գրաւուած էր իր առաջին երկու երեխաներով. իսկ նրա ամուսինը, որ Մոսկուայի համալսարանի կանդիդատ էր և որի հետ նա պակուել էր սիրելով ու երկար ժամանակ ձնողների դէմ մաքառելուց յետոյ, ազատամիտ, համեստ ու խելօք մարդ էր, ծառայում էր և պարապում վիճակագրութեամբ, մանաւանդ բնիկ այլազգիներին վերաբերեալ վիճակագրութեամբ, որոնց նա ուսումնասիրում էր, սիրում էր և աչխատում փրկել ջնջումից։

Ամենքը ոչ միայն քաղցր ու սիրալիր կերպով էին վերաբերում Նեխլիւդովին, այլ և ամենաբարի ուրախ էին, որ ծաղկեցնել էին մի նոր ու հետաքրքրական անձնաւորութեան հետ։ Գեներալը, որ ճաչի ժամանակ հագել էր գինուորական սիրտուկ ու վզիցը կախել սպիտակ խաչ, բարևեց Նեխլիւդովի հետ, իբրև հին ծանօթի հետ, ու իսկոյն ևեթ հիւրերին հրաւիրեց ակուսկա (закуска) անելու ու օղի խմելու։ Երբ գեներալը հարցրեց Նեխլիւդովից, թէ ինչ էր արել նա իր մտից գնալուց յետոյ, Նեխլիւդովը պատասխանեց, որ գնացել էր նահակատուն եւ իմացել, որ ներումն է չնորհուել այն անձնաւորու-

*) Grande dame ֆրանսիական դարձուածքը համապատասխանում է մեր ժողովրդական խոշոն-կնիկ, փաշա-կնիկ դարձուածքին։ Ե. Թ.

թեան, որի մասին խօսում էր առաւօտեան, և այժմ նորից թոյլտուութիւն է խնդրում այցելելու բանտը։

Գեներալը, ակներևաբար դժգոհ այն բանից, որ ճաշի ժամանակ սկսում են գործերի մասին խօսել, լռեցուց և ոչինչ չասաց։

—Օղի կ'ուզէք,—դիմեց նա ֆրանսերէն անգլիացուն, որ այդ ժամանակ մօտեցաւ նրանց։ Անգլիացին խմեց օղին ու ասաց, որ այդ օրը այցելել էր տաճարն ու գործարանը, բայց կ'ուզէր տեսնել նաև բանտը։

—Շատ լաւ կը լինի,—ասաց գեներալը, դիմելով Նեխլիւդովին,—կարող էք միասին այցելել։ Թոյլտուութեան թուղթ կը տաք սրանց,—ասաց նա ադիւտանտին։

—Դուք երբ էք ուզում գնալ,—հարցրեց Նեխլիւդովը անգլիացուն։

—Ես գերադասում եմ այցելել բանտերը երեկոյեան,—ասաց անգլիացին,—ամէնքը իրանց տեղումն են լինում, պատրաստութիւններ տեսած չեն լինում և մարդ տեսնում է ամէն ինչ այնպէս, ինչպէս որ կայ։

—Հը՛ը, ուզում է ուրեմն տեսնել բանտը իր իսկական հրապոյրներով։ Թող տեսնի։ Ես քանի անգամ դրել եմ, ուշք չեն դարձնում։ Թող հիմա կարդան արտասահմանեան թերթերում,—ասաց գեներալը և մօտեցաւ ճաշի սեղանին, որի մօտ տանտիկինը ցոյց տուեց տեղերը հիւրերին։

Նեխլիւդովը նստած էր տանտիկնոջ և անգլիացու մէջ տեղը։ Նրա դիմացը նստած էր գեներալի աղջիկը և նախկին դէպարտամէնտի դիրէկտորը։

Ճաշի ժամանակ կցկտուր կերպով խօսում էին մերթ Հընդկաստանի մասին, որի մասին պատմում էր անգլիացին, մերթ Տօնկինեան արշաւանքի մասին, որ գեներալը խիստ կերպով դատապարտում էր, մերթ Սիբիրում համատարած խարդախութեան և կաշառակերութեան մասին։ Այդ բոլոր խօսակցութիւններն էլ քիչ էին հետաքրքրում Նեխլիւդովին։

Բայց ճաշից յետոյ, հիւրասենեակում, սուրճի ժամանակ շատ հետաքրքրական խօսակցութիւն բացուեց Նեխլիւդովի, տանտիկնոջ և անգլիացու մէջ Գլադստոնի մասին, և Նեխլիւդովին այնպէս էր թւում, թէ ինքը այդ ժամանակ շատ խելացի բաներ ասաց և որ խօսակիցները նկատեցին այդ։ Լաւ ճաշից ու գինուց յետոյ փափուկ բազկաթոռի վրայ տարօրինակ խմելով, շրջապատուած քաղցր ու բարեկիրթ անձերով, Նեխլիւդովը քանի գնում աւելի ախորժելի դրութեան մէջ էր զգում իրան։

Իսկ երբ տանտիկինը, անգլիացու խնդրելով, սկսեց նախկին դէպարտամէնտի դիրէկտօրի հետ նուագել Բեթհովէնի 5-րդ սիմֆոնիան, որ նրանք շատ լաւ ուսումնասիրել էին միասին, Նեխլիւդովը քնկաւ այնպիսի տրամադրութեան մէջ, որ վաղուց ի վեր չէր ունեցել, այն է՝ զգաց լիակատար ինքնագոհութիւն, կարծես թէ միմիայն այդ ժամանակ իմացաւ, թէ ինչ լաւ մարդ էր ինքը։

Դաշնամուրը հիանալի դաշնամուր էր և նրանք լաւ կատարեցին սիմֆոնիան։ Գոնէ այդպէս թուաց Նեխլիւդովին, որ գիտէր և սիրում էր այդ սիմֆոնիան։ Լսելով գեղեցիկ անդանտէն, նա քոր զգաց քթումը, խանդաղատուելով իր անձի և իր բոլոր առաքինութիւնների վրայ։

Շնորհակալութիւն յայտնելով տանտիկնոջը այն զուարճութեան համար, որ ինքը ստացաւ այդ երեկոյ և որ վաղուց չէր զգացել, Նեխլիւդովը արդէն ուզում էր մնաս բարև անել ու գնալ, բայց այդ ժամանակ տանտիկնոջ աղջիկը վճռական կերպարանքով մօտեցաւ ու, կարմրելով, ասաց.

—Դուք հարցնում էիք իմ երեխաների մասին, կ'ուզէք տեսնել նրանց։

—Դրան թուում է, թէ ամէնքի համար հետաքրքրական է տեսնել իր երեխաներին,—ասաց մայրը, ժպտալով իր աղջկայ քաղցրիկ անտակտութեան վրայ։—Իչխանի համար ամէնևին հետաքրքրական չէ այդ։

—Ընդհակառակը, շատ հետաքրքրական է,—ասաց Նեխլիւդովը, խանդաղատուած այդ մայրական երջանիկ ակերից, որ ինքն իրան զգուում էր սրտից։—Խնդրեմ, ցոյց տուէք։

—Իչխանին տանում է իր փոքրիկներին ցոյց տալու,—ծիծաղելով գոռաց գեներալը թղթախաղի սեղանի մօտից, ուր նստած թուղթ էր խաղում իր փեսայի, ոսկեհանքատէրի և ադիւտանտի հետ։—Գնացէք, գնացէք, այդ էլ մի պարապ է, որ պէտք է անպատճառ վճարել։

Իսկ գեներալի աղջիկը մինչ այդ, ակներևաբար յուզուած այն բանից, որ մի րոպէ անցած քննադատելու են իր երեխաներին, արագ քայլերով գնում էր Նեխլիւդովի առջևից դէպի ներքին սենեակները։ Երրորդ, բարձրահարկ, ասիատակապատառ սենեակում, որ լուսաւորուած էր մոմի լուսամփոփաւոր փոքրիկ լամպով, իրար կողքի դրուած էին երկու փոքրիկ մահճակալներ և նրանց արանքին նստած էր դայեակը ասիատակ ուլաններ

Նրա երկու տարեկան աղջիկը իր երկար ու խուճուճ մազերով, որոնք չաղ էին անցել բարձի վրայ։

—Ահա կատեան,—ասաց մայրը, ուղղելով կապտաչերտ դործած վերմակը, որի տակից դուրս էր պրծել երեխայի փոքրիկ ոտի ապիտակ թաթիկը։—Լաւը չի։ Գիտէք, երկու տարեկան է միայն։

—Աքանչելի է։

—Այս էլ Վասիւկն է։ Պապն է նրա անունը այդպէս դրել։ Սա էլ բոլորովին ուրիշ տիպ է։ Իսկական սիբիրեայի է։ Ջէյ։

—Հիանալի տղայ է,—ասաց Նեխլիւդովը, դիտելով փորի վրայ պառկած զմրթիկ երեխային։

—Ճիշտ,—ասաց մայրը, նշանակալից կերպով ժպտալով։

Նեխլիւդովը յիշեց չղթաները, ածիլած գլուխները, ծեծերը, անառակութիւնը, մեռնող Կրիլցովին, Կատիւշային իր ամբողջ անցեալով։ Եւ նրա մէջ նախանձ զարթնեց և սիրտն ուղեց արժանանալ այդպիսի գեղեցիկ, այդպիսի մաքուր, ինչպէս նրան այժմ թուում էր, երջանկութեան։

Մի քանի անդամ գովելով երեխային և դրանով, գոնէ մասամբ, բաւականութիւն պատճառելով մօրը, որ ագահօրէն ծծում էր այդ գովասանքները, Նեխլիւդովը նրա յետևից գնաց հիւրասենեակը, ուր անգլիացին արդէն սպասում էր նրան, որպէս զի նրա հետ միասին, ինչպէս պայմանաւորուել էին, գնան բանտը։ Մնաս բարև անելով ծեր և երիտասարդ տանտէրերի հետ, Նեխլիւդովը անգլիացու հետ միասին դուրս եկաւ գեներալի տանից։

Եղանակը փոխուել էր։ Փաթիլ-փաթիլ ձիւն էր գալիս, որ արդէն ծածկել էր ճանապարհը, կառերը, պարտէզի ծառերը, փողոցադուռը, կառքի ծածկոցը և ձիու մէջքը։ Անգլիացին իր կառքն ունէր, և Նեխլիւդովը, պատուիրելով անգլիացու կառապանին քշել բանտը, անախորժ պարտականութիւնն կատարելու ծանր զգացմունքով գնաց նոյնպէս դէպի բանտը իր փափուկ կառքով, որ դժուարութեամբ էր ընթանում ձիւնի վրայով։

XXV

Բանտի մօտ չէնքը, որի դարպասի մօտ լապտեր էր վառուում և կանգնած էր մի պահապան զինուոր,—չը նայելով ձեան մաքուր, սպիտակ սաւանին, որ այժմ ծածկում էր ամեն ինչ, և՛ փողոցադուռը, և՛ կառերը, և՛ պատերը,—աւելի նա մռայլ տպաւորութիւն էր գործում իր ճակատակողմի լուսաւորուած պատուհաններով, քան առաւօտեան։

Վկայաբերել բանտապետը դուրս եկաւ դարպասից և լապտերի լոյսով կարդալով Նեխլիւդովին ու անգլիացուն տրուած թոյլտուութեան թուղթը, զարմանալով թօթուեց իր հսկայ ուսերը, բայց, կատարելով հրամանը, հրաւիրեց այցելուներին հետևել իրան։ Նա առաջնորդեց նրանց նախ բակը և ապա դէպի աջակողմեան սանդուխի դուռն ու գրասենեակը։ Առաջարկելով նրանց նստել, նա հարցրեց, ինչ ծառայութիւն կարող է ինքը մատուցանել նրանց, և, իմանալով Նեխլիւդովի ցանկութիւնը այժմ և եթ տեսնել Մասլովային, վերակացուին ուղարկեց Մասլովայի յետևից ու ինքը պատրաստուեց պատասխան տալու այն հարցերին, որ անգլիացին իսկոյն և եթ սկսեց առաջարկել նրան Նեխլիւդովի միջոցով։

—Ո՞րքան հոգու համար է չինուած բանտը,—հարցնում էր անգլիացին։—Ո՞րքան բանտարկեալներ կան։ Ո՞րքան տղամարդ, որքան կին, երեխայ։ Ո՞րքան տաժանապարտ, աքսորական, յաժարակամ աքսոր գնացողներ։ Ո՞րքան հիւանդ։

Նեխլիւդովը թարգմանում էր անգլիացու ու բանտապետի խօսքերը, առանց ուշք դարձնելու նրանց իմաստին, իր համար բոլորովին անսպասելի կերպով չփոթուած զգալով իրան առաջիկայ տեսակցութեան պատճառով։ Երբ, բանտապետի խօսքերը թարգմանելիս, նախադասութեան կէստեղը լսեց մօտեցող քայլերի ձայնը և գրասենեակի դուռը բացուեց ու, ինչպէս տեղի էր ունեցել յաճախ, ներս մտաւ վերակացուն, իսկ նրա յետևից՝ Կատիւշան, գլխաշոր կապած ու կալանաւորական բաճկոն հագած, Նեխլիւդովը, տեսնելով նրան, ծանր զգացմունք զգաց։

«Ապրել եմ ուզում, ընտանիք, երեխաներ եմ ուզում»,—անցաւ նրա մտքովը, երբ Մասլովան արագ քայլերով մտնում էր սենեակը։

Նա վեր կացաւ ու մի քանի քայլ գնաց ընդ առաջ, և Մասլովայի դէմքը դաժան ու անախորժ թուաց նրան։ Նրա դէմքը դարձեալ այնպէս էր, ինչպէս այն ժամանակ, երբ նա յանդիմանում էր Նեխլիւդովին։ Մասլովան մէկ կարմրում, մէկ գունատւում էր, մատներով չղաճպարար ոլորում էր բաճկոնի եզրները և մերթ նայում էր նրան, մերթ քաշ գցում աչքերը։

—Գիտէք, որ ներումն է չնորհուել ձեզ,—հարցրեց Նեխլիւդովը։

—Այո, վերակացուն ասաց։

—Այնպէս որ, թուղթը ստացուելուն պէս, դուք կարող էք դուրս գալ և բնակութիւն հաստատել, ուր որ կամենաք։ Մենք յետոյ կը մտածենք...

Մասլովան չտապով ընդհատեց նրա խոսքը.—Ի՞նչ մտածելու բան կայ։ Ուր որ վլադիմիր Իվանովիչին տանեն, ես էլ այնտեղ կ'երթամ։

Զը նայելով յուղուած դրութեանը, Մասլովան, բարձրացնելով աչքերը ու նայելով Նեխլիւդովին, ասաց այդ խոսքերը արագ ու որոշակի, կարծես թէ առաջուց պատրաստած լինելով ամբողջ ասելիքը։

—Այդպէս,—ասաց Նեխլիւդովը։

—Ի՞նչ արած, Դմիտրիյ Իվանովիչ, քանի որ նա ուզում է, որ ես իր հետ ապրեմ,—նա վախուորած կանգ առաւ և ուղղեց խոսքը,—որ ես իր մօտ լինեմ։ Դրանից լաւ ինչ կարող եմ ցանկանալ։ Ես բախտաւորութիւն պէտք է համարեմ այդ ինձ համար։ Ես ինչ պէտք է...

«Երկուսից մէկը, գա կամ սիրահարուել է Սիմոնսօնի վրայ և ամենևին չէր ուզում այն զոհաբերութիւնը, որ ես ես բևակայում էի, թէ անում եմ իր օգտին, և կամ չարունակում է սիրել ինձ և հէնց իմ բարիքը մտածելով հրաժարւում է ինձնից և ընդ միշտ այրում նաւերը, միացնելով իր բախտը Սիմոնսօնի հետ»,—մտածեց Նեխլիւդովը ու ամաչեց։ Նա զգաց, որ կարմրում է։

—Եթէ նրան սիրում էք... ասաց նա։

—Ի՞նչ սիրել-միրել։ Ես այդ բաներից արդէն ձեռ եմ քաշել, և վլադիմիր Իվանովիչն էլ բոլորովին ուրիշ տեսակ մարդ է։

—Ի հարկէ,—սկսեց Նեխլիւդովը։—Նա հիանալի մարդ է, և ես կարծում եմ...

Մասլովան դարձեալ ընդհատեց նրա խոսքը, կարծես վախենալով, որ նա աւելորդ բան կ'ասի կամ ինքը չի կարողանայ բոլորը ասել։

—Զէ, դուք ինձ ներէք, Դմիտրիյ Իվանովիչ, եթէ ես այն չեմ անում, ինչ որ դուք ուզում էք,—ասաց նա, նայելով Նեխլիւդովի աչքերին իր խորհրդաւոր չիլ հայեացքով։—Ի՞նչ արած։ Բանը այսպէս է դուրս գալիս։ Զէ որ դուք էլ պէտք է ապրէք։

Մասլովան ասաց նրան այն, ինչ որ նա ինքը մի քիչ առաջ մտածում էր, բայց այժմ նա արդէն այդ չէր մտածում, այլ մտածում և զգում էր բոլորովին ուրիշ բան։ Նա ոչ միայն ամօթ, այլ և ցաւ էր զգում, մտածելով թէ ծրջան բան է կորցնում Մասլովայի հետ։

—Ես չէի ապաւում այդ,—ասաց նա։

—Ինչո՞ւ պէտք է դուք այստեղ ապրէք ու տանջուէք։ Ա-

ռանց այն էլ բաւական տանջուեցիք,—ասաց Մասլովան ու ժպտաց։

—Ես չէի տանջուում, այլ, ընդհակառակը, լաւ էի զգում ինձ, և կը ցանկայի էլի ձեզ ծառայութիւններ մատուցանել, եթէ կարող եմ։

—Մեզ,—«մեզ» ասաց Մասլովան ու նայեց Նեխլիւդովին,—ոչինչ պէտք չէ։ Դուք առանց այն էլ չատ բան արեցիք ինձ համար։ Եթէ դուք չը լինէիք... Նա ուզում էր ինչ որ ասել, բայց ձայնը դողաց։

—Ինձնից որ դուք չէք կարող չնորհակալ լինել,—ասաց Նեխլիւդովը։

—Հին հաշիւները պէտք է մոռանալ։ Աստուած կը տեսնի այդ հաշիւը,—ասաց Մասլովան, ու սև աչքերը փայլեցին արցունքից։

—Ինչ հիանալի կին էք դուք,—ասաց Նեխլիւդովը։

—Ե՞ս եմ հիանալի կին,—ասաց Մասլովան արտասուակալած աչքերով, և մի աղիողորմ ժպիտ լուսաւորեց նրա դէմքը։

—Are you ready *)?—հարցրեց այդ միջոցին անգլիացին։

—Directly **),—պատասխանեց Նեխլիւդովը ու հարցրեց Մասլովայից Կրիլցովի մասին։

Մասլովան սթափուեց յուզմունքից և հանգիստ կերպով պատմեց իր խնայածը. Կրիլցովը չատ էր թուլացել ճանապարհին և նրա խնամն ու սէր զետղել էին հիւանդանոցը։ Մարիա Պաւլովնան չատ էր անհանգստանում, խնդրում էր թոյլ տալ իրան հիւանդապահութիւն անել, բայց թոյլ չէին տուել։

—Ես գնամ ուրեմն,—ասաց նա, նկատելով, որ անգլիացին ապաւում է։

—Ես մնաք բարի չեմ ասում. ես դեռ կը տեսնուեմ ձեզ հետ,—ասաց Նեխլիւդովը։

—Ներկայէք,—ասաց Մասլովան հազիւ լսելի ձայնով։ Նրանց աչքերը հանդիպեցին իրար, և այն տարօրինակ չիլ հայեացքից ու այն աղիողորմ ժպիտից, որով նա արտասանեց այդ «ներկայէք» բառը, Նեխլիւդովը հասկացաւ, որ նրա վճռի չարժաւիթի մասին իր արած ենթադրութիւններից երկրորդն է իրաւացի. կատիւշան անչուշտ սիրում էր նրան և կարծում էր, թէ կապելով նրան իր հետ, կը փչացնի նրա կեանքը, իսկ հետագայում Սիմոնսօնի հետ, ազատութիւն կը տայ նրան, և այժմ

*) Պատրաստ էք։
**) Այո րտոլէիս։

ուրախանում էր, որ կատարել էր ցանկացածը և միևնոյն ժամանակ տանջւում էր, անջատուելով նրանից։

Նա սղմեց Նեխլիւդովի ձեռքը, արագ չուռ եկաւ ու գնաց։

Նեխլիւդովը յետ նայեց անգլիացուն, պատրաստ լինելով գնալ նրա հետ, բայց անգլիացին ինչ որ գրում էր իր յիշատակարանում։ Նեխլիւդովը, չուզելով խանգարել նրան, նստեց պատի մօտ դրուած փայտէ բազմոցի վրայ ու յանկարծ սարսափելի յոգնածութիւն զգայ։ Նա յոգնել էր ոչ թէ անքուն գիշերից, ճանապարհորդութիւնից կամ յուզմունքից,—նա զգում էր, որ սարսափելի յոգնել է ամբողջ կեանքից։ Նա կռթնեց բազմոցի թիկունքին, փակեց աչքերը և իսկոյն և նմանց ծանր, մեռելի քնով։

—Կամենում էք նայել կալանաւորների սենեակները,—հարցրեց բանտապետը։

Նեխլիւդովը սթափուեց և զարմացաւ, տեսնելով, թէ որտեղ է գտնւում։ Անգլիացին վերջացրել էր գրելիքը և ուզում էր նայել կալանաւոր սենեակները։ Նեխլիւդովը, յոգնած ու անտարբեր, գնաց նրա յետևից։

XXVI

Անցնելով սրահն ու սրտախառնութիւն պատճառելու չափ գարշահոտ միջանցքը, որտեղ զարմացմամբ հանդիպեցին երկու կալանաւորի, բանտապետը, անգլիացին, Նեխլիւդովը և վերակացուն մտան տաժանապարտների առաջին սենեակը։ Տախտերը սենեակի մէջտեղումն էին և բոլոր կալանաւորները, որոնք մօտ 70 հոգի կը լինէին, արդէն պառկած էին։ Նրանք պառկած էին գլուխ գլխի և ոտք ոտքի տուած. երբ այցելուները ներս մտան, բոլորն էլ, չդիմանալով, վեր թռան ու չարուխին տախտերի ոտքին, փայլելով իրանց նոր ածելած կիսագլուխներով։ Պառկած մնացին միայն երկու հոգի։ Մէկը՝ մի երիտասարդ, կարմրած երեսով, ակներևաբար տաքութեան մէջ, միւսը՝ մի ծերունի, որ անքուն էր անդադար։

Անգլիացին հարցրեց, արդեօք վազուց է հիւանդացել երիտասարդ կալանաւորը։ Բանտապետը ասաց, որ առաւօտեան է միայն հիւանդացել, իսկ ծերունին վազուց է նեղւում փորից, բայց տեղ չը կայ նրան փոխադրելու, որովհետև հիւանդանոցը վազուց ծայրէ ի ծայր լցուած է։ Անգլիացին չմհանաւանօրէն թափ տուեց գլուխը և յայտնեց, որ ինքը ցանկանում

է մի քանի խօսք ասել այդ մարդկանց, և խնդրեց Նեխլիւդովին թարգմանել իր ասելիքը։ Բանից դուրս եկաւ, որ անգլիացին, իր ճանապարհորդութեան նպատակն էր դրել ոչ միայն նկարագրել Սիբիրի բանտերն ու աքսորավայրերը, այլ և քարոզել հաւատով ու ապաշխարութեամբ փրկուելու վարդապետութիւնը։

—Ասացէք դրանց, որ Քրիստոս խղճում և սիրում էր իրանց,—ասաց նա,—և մեռաւ իրանց համար։ Եթէ իրանք հաւատան այդ բանին, կը փրկուեն։—Մինչ նա խօսում էր, բոլոր կալանաւորները լուռ կանգնած էին տախտերի առջևը, ձեռները ուղղահայեաց կախ գցած։—Այս գրքում, ասացէք իրանց,—վերջացրեց նա,—այդ բոլորը գրուած է։ Կարդացողներ կան մէջները։—Դուրս եկաւ, որ 20 հոգուց աւելի գրագէտ են։

Անգլիացին ձեռքի տոպրակից հանեց մի քանի հատ կազմած Նոր Կտակարաններ, և կալանաւորների սև-սև ու ամուր եղունգներով մկանուտ ձեռքերը, իրար հերթելով, մեկնուեցին դէպի նա խալաթների թևքերի միջից։ Նա բաժանեց այդ սենեակում երկու աւետարան ու գնաց հետևեալ սենեակը։

Հետևեալ սենեակում միևնոյն բանն էր։ Նոյն խեղդուկ օդն էր կանգնած, նոյն գարշահոտութիւնը. նոյնպէս առջևում, պատուհանների տրանքում, սրբի պատկեր էր կախուած, իսկ դռնից դէպի ձախ՝ կոյտանած դրուած, և նոյնպէս ամենքը խիտ ու խիտ պառկած էին կողք կողքի տուած, և նոյնպէս բոլորը վեր թռան ու ձգուեցին, և նոյնպէս ոմանք (երեք հոգի) ոտքի չը կանգնեցին։ Երկուսը վեր կացան ու նստեցին, իսկ մէկը մնաց պառկած և նոյն իսկ չը նայեց ներս մտնողների կողմը։ Երեքն էլ հիւանդ էին։ Անգլիացին նմանապէս ասաց նոյն ձևով և նոյնպէս երկու աւետարան տուեց կալանաւորներին։

Երրորդ սենեակում ազատակ ու իրարանցում էր լսւում։ Բանտապետը դուրս ձեռնց ու գոռաց՝ «հանդարտ»։ Երբ դուրս բացւ արին, դարձեալ ամենքը ձիգ կանգնեցին տախտերի կողքին, բացի մի քանի հիւանդներից ու երկու կուրծ անտէներից, որոնք, զայրոյթից այլանդակուած դէմքերով, կպել էին իրար ու քաշում էին մէկը՝ հակառակորդի մազերից, միւսը՝ մէրուքից։ Նրանք միայն այն ժամանակ պոկ եկան իրարից, երբ վերակացուն վազեց նրանց մօտ։ Մէկը թևքովը սրբում էր արիւնլուայ քթից թափուող լորձունն ու արիւնը և բերնից վազող փսլինքը, իսկ միւսը հանում էր մէրուքի պոկուած մազերը։

—Ո՞ւր է աւագը,—խիստ կերպով գոռաց բանտապետը։

Առաջ եկաւ մի գեղեցիկ ու հուժկու տղամարդ։

—Ինչ անում ևս, չեն հանգստանում, ձերդ բարձր բարե-

ծննդավթիւն,—ասաց աւագը, ուրախ-ուրախ ժպտալով աչքերովը։

—Ես դրանց կը հանդուրժեմ,—ասաց բանտապետը հիճուելով։

—What did they fight for *) ?—հարցրեց անգլիացին։

Նեխլիւդովը հարցրեց աւագից, թէ ինչից էր դուրս եկել կռիւը։

—Ոտի փոքրիկի համար. կռիւ էր, թէ իրանն է,—ասաց աւագը, չարունակելով ժպտալ։—Սա հրեց, նա էլ փոխը յետ տուեց։

Նեխլիւդովը բացատրեց անգլիացուն։

—Ես կ'ուզէի մի քանի խօսք ասել դրանց,—ասաց անգլիացին, դիմելով բանտապետին։ Նեխլիւդովը թարգմանեց։ Բանտապետը ասաց՝ «կարող էք»։

Անգլիացին հանեց իր՝ կաշուէ կազմով աւետարանը։

—Խնդրեմ, թարգմանեցէք այս,—ասաց նա Նեխլիւդովին։

—Դուք կուռւմ էիք ու ծեծուռւմ, իսկ Քրիստոս, որ մնաւ մեզ համար, մեզ ուրիշ միջոց է տուել վէճերը վճռելու համար։ Հարցրէք դրանցից, դիտեն արդեօք, թէ, Քրիստոսի օրէնքով, ինչպէս պէտք է վարուել այն մարդու հետ, որ վատութիւն է անում մեզ։

Նեխլիւդովը թարգմանեց անգլիացու խօսքերն ու հարցմունքը։

—Իշխանաւորներին գանգատուել, նրանք կը վճռեն,—հարցական եղանակով ասաց մէկը, աչքի պոչով նայելով վհատեսիլ բանտապետին։

—Մի լաւ քոթակել, որ էլ վատութիւն չանի,—ասաց մի ուրիշը։

Մի քանի հոգի ծիծաղկին, հաւանելով այդ պատասխանին։ Նեխլիւդովը թարգմանեց պատասխանները։

—Ասացէք իրանց, որ Քրիստոսի օրէնքով պէտք է ուղղակի իրանց ասածի հակառակն անել. եթէ ամ երեսիդ խփի մէկը, պէտք է միւս երեսդ դէմ՝ անես,—ասաց անգլիացին, այնպիսի չարժուամ անելով, կարծես դէմ էր անում երեսը։

Նեխլիւդովը թարգմանեց։

—Եթէ լաւ բան է, թող ինքը փորձի, տեսնի,—ասաց մի ձայն։

—Իսկ եթէ միւս երեսներիս էլ թխեց, էլ որ երեսներս դէմ անենք,—ասաց պատիժ հիւանդներից մէկը։

*) Ինչո՞ւ էին կռուում։

—Այդպէս որ Քրիստոս, քուֆթա կը հարի քեզանից։

—Դէ, փորձի, տես,—ասաց մէկը յետևից և ուրախ ծիծաղեց։ Ամբողջ սենեակում անդադար բրթիչ բարձրացաւ։ Նոյն իսկ ծեծուածը սկսեց քրքջալ, չը նայելով քթից թափուող արիւն ու փալինքին։ Ծիծաղում էին նաև հիւանդները։

Անգլիացին չը չփոթուեց և խնդրեց ասել նրանց, որ այն, ինչ որ անհնար է թուում, հնարաւոր է դառնում և հեշտանում է հաւատացեալների համար։

—Հարցրէք, խնդրեմ, խմում են արդեօք։

—Լսե,—լսուեց մի ձայն, և նորից փոթիկոց ու քրքիչ բարձրացաւ։

Այդ սենեակում չորս հոգի կային հիւանդ։ Անգլիացու հարցին, թէ ինչու հիւանդներին մի սենեակում չեն տեղաւորում, բանտապետը պատասխանեց, որ հիւանդները իրանք չեն ուզում այդ։ Դրանք վարակիչ հիւանդ չեն, և ֆելդշէրը խնամում ու դարմանում է դրանց։

—Երկրորդ չաթաին է, որ ոազը ներս չի դրել,—ասաց մի ձայն։

Բանտապետը ոչինչ չը պատասխանեց և այցելուներին տարաւ հետևեալ սենեակը։ Դարձեալ դուռը բաց արին, դարձեալ ամբողջը վեր կացան ու սքսկցին, գարձեալ անգլիացին աւետարաններ բաժանեց։ Նոյնը եղաւ և հիւդերորդ, և վեցերորդ սենեակներում, և աջակողմեան, և ձախակողմեան, և ամէն տեղ։

Տաժանապարտներից անցան աքսորի դատապարտուածներին, աքսորի դատապարտուածներից՝ հասարակական վճռով քշուածներին և յօժարակամ աքսոր գնացողներին։ Ամէն տեղ էլ միևնոյն բանն էր. ամէն տեղ էլ նոյն սուված, գրտից գոզացող, պարապ, զանազան ախտերով վարակուած, խայտառակուած ու կալանաւորուած մարդիկ վայրի գազանների ապաւորութիւն էին թողնում։

Անգլիացին, որոշած թուով աւետարաններ բաժանելուց յետոյ, այլ ևս ոչինչ չէր տալիս և նոյն իսկ քարոզ չէր ասում։ Ծանր տնաարանը և մանաւանդ խեղդուկ օդը, անկասկած, նրա եռանդն էլ էին ճնշել, և նա պատում էր սենեակները, միայն ասելով՝ «all right» ամէն անգամ, երբ բանտապետը յայտնում էր նրան, թէ ինչ կալանաւորներ են իրանց մտած սենեակում։ Նեխլիւդովը գնում էր քնածի նման, այժ չուռնալով հրաժարուել ու վերադառնալ հիւրանոց, չարունակ սարսափելի յոգնածութիւն զգալով։

XXVII

Աքսորականների սենեակներից մեկում Նեխլիւդովը զարմացմամբ սևուռ այն ծերուկին, որին առաւօտեան տեսել էր լաստի վրայ։ Այդ ծերուկը, քրջոտ ու ամբողջապէս ծածկուած խորշոմներով, հագած միմիայն կեղտոտ, մոխրագոյն, ուսը ծակուած վերնաշապիկ ու նոյնպիսի անդրավարտիք, ոտաբոբիկ նստած էր տախտի մօտ յատակի վրայ և խիստ ու հարցական կերպով նայում էր ներս մտնողներին։ Նրա մաշուած մարմինը, որ երեում էր կեղտոտ վերնաշապկի ծակերի միջով, գծուծ էր ու թոյլ, բայց դէմքը աւելի նա կենտրոնացած լրջութիւն ու աչխոյժ էր արտայայտում, քան լաստի վրայ։ Բոլոր կալանաւորները, ինչպէս միւս սենեակներում, վեր թռան ու ձգուած կանգնեցին, երբ իշխանաւորները ներս մտան, իսկ ծերուկը մնաց նստած։

—Վեր կաց,—գոռաց նրա վրայ բանտապետը։

Ծերուկը ամենևին իրար չեկաւ։

—Ինչո՞ւ վեր կենամ։ Արի նստի այստեղ, բան ունեմ քեզ ասելու,—ասաց ծերուկը, ցոյց տալով բանտապետին տախտը։

—Իմինչ,—սպառնալից ասաց բանտապետը, դնալով դէպի նա։

—Ես ճանաչում եմ այդ մարդուն,—չտապեց ասել Նեխլիւդովը բանտապետին։—Ինչո՞ւ են կալանաւորել դրան։

—Ոստիկանութիւնն է ուղարկել անցագրովը չունենալու պատճառով։ Մենք խնդրում ենք, որ այդպիսիներին չուղարկեն, իսկ նրանք հա ուղարկում են,—ասաց բանտապետը, խեթ-խեթ նայելով ծերուկին։

—Գնա, գնա,—ասաց ծերուկը, կնճռաւելով և աչքերը փայլատակեցնելով Նեխլիւդովի վրայ, որ յատակում էր սենեակումը։—Տես ու հիացիր, թէ ինչպէս են ոչիլներին կերակրում մարդկանցով։ Գնա, գնա։

Նեխլիւդովը դուրս եկաւ միջանցքը ու մօտեցաւ անգլիացուն, որ բանտապետի հետ կանգ էր առել մի բոլոր դռան մօտ։ Անգլիացին հարցնում էր, թէ ինչի համար էր այդ սենեակը։ Մեռելանոցն էր այդ։

—Օ՛,—ասաց անգլիացին ու ցանկութիւն յայտնեց ներս մտնել։

Մեռելանոցը մի սովորական, փոքրիկ սենեակ էր։ Պատից կպցրած փոքրիկ լամպը վառում էր և ազօտ կերպով լուսաւորում անկիւններից մեկում իրար դլխի թափթփած տոպրակներն ու ցախը, իսկ աջակողմում, տախտերի վրայ, չորս մեռելի դիակ։ Առաջին մեռելը, քաթանէ վերնաշապկով ու վարտիքով, մի երկար հասակով մարդ էր, փոքրիկ, սրածայր մի բուքով և գլխի կէսը ածիլած։ Մարմինը արդէն փայտացել էր. կապտած ձեռքերը ակներևաբար խաչուած էին եղել կրծքին, բայց յետ էին դնացել բոլոր ոտները նոյնպէս չուռել էին և ոտնաթաթերը ցցուել էին իրարից հեռու։ Նրա կողքին, սպիտակ ներքնազգեստով ու բաճկոնով, պառկած էր մի ոտաբոբիկ, գլխաբաց, կարճ ու ցանցառ ծամով, փոքրիկ, դեղնած ու խորշոմած դէմքով և սուր քթով պառաւ։ Պառաւից դէնը մի ուրիշ տղամարդու դիակ էր, ինչ որ բաց մանիչակագոյն բանի մէջ փաթաթուած։ Այդ գոյնը ինչ որ մի բան էր յիշեցնում Նեխլիւդովին։

Նա մօտ գնաց ու սկսեց նայել դիակին։

Փոքրիկ, սուր, վեր ցցուած մէրուք, ամուր, գեղեցիկ քիթ, սպիտակ, բարձր ճակատ, ցանցառ, գանգուր մազեր։ Նա ճանաչում էր այդ գծերը, բայց չէր ուզում հաւատալ աչքերին։ Երէկ նա տեսել էր այդ դէմքը դրգռուած, զայրացած ու ցասմանից։

Այժմ նա անդորր ու անշարժ էր և սարսափելի գեղեցիկ։

Այո, կրիլցովն էր այդ կամ, յամենայն դէպս, այն հետքը, որ թողել էր նրա նիւթական գոյութիւնը։

«Ինչո՞ւ էր նա տանջուում։ Ինչո՞ւ էր ապրում։ Հասկացու արդեօք այդ այժմ,—մտածում էր Նեխլիւդովը, և նրան թուում էր, թէ պատասխան չը կայ այդ հարցին, թէ ոչինչ չը կայ, բացի մահից, և նրա գլուխը սկսեց պտոյտ գալ։

Առանց մնաս բարև անելու անգլիացու հետ, Նեխլիւդովը խնդրից վերակացուին ճանապարհ դնել իրան մինչեւ բակը և, պահանջ դդալով մենակ մնալ՝ այդ երեկոյ զգացածը բոլորը կշռադատելու համար, գնաց հիւրանոց։

XXVIII

Զը պառկելով քնելու, Նեխլիւդովը երկար ժամանակ յետ ու առաջ էր գնում իր վարձած համարում։ Նրա գործը կատուշայի հետ վերջացած էր։ Նա հարկաւոր չէր Կատուշային, և այդ՝ ամօթ ու տխրութիւն էր պատճառում նրան։ Բայց նրան տանջողը այժմ այդ չէր։ Նրա միւս գործը ոչ միայն չէր վերջացել, այլ աւելի քան երբէք տանջում էր նրան և գործունէութիւն պահանջում նրանից։

Նրա երևակայութեան մէջ պատկերանում էին այդ վա-

բակուած օդի մէջ փակուած հաբիւրաւոր ու հազարաւոր մարդիկ, յիշում էր ամբողջ կալանաւորեալների քրքիջը աւետարանի խօսքերի վրայ, ծնրադնուն, որին գժի տեղ էին դնում, և դիահների մէջ, զայրացած արամադրութեան մէջ մնաց կրկին օվի գեղեցիկ, մեռելատիպ, մոմանման դէմքը։ Եւ առաջուան հարցը,—թէ արդեօք ինքն է խնդագար, թէ այն մարդիկ, որոնք իրանց խելացի են համարում ու այդ բոլոր բաներն անում,—մի նոր ոյժով զբաղեցնում նրա մէջ, պատասխան էր պահանջում։

Մանգալուց յոգնելով նա նստեց լամպի առաջը բազմոցի վրայ և մեքենայօրէն բաց արեց աւետարանը, որ անգլիացին տուել էր նրան ի յիշատակ և որ նա, դրպանի բաները հանելիս, դրել էր սեղանի վրայ։ «Ասում են, այստեղ է ամեն բանի լուծումն», մտածեց նա և, բաց անելով աւետարանը, սկսեց կարդալ բացուած տեղը—Մատթ. ԺԲ գլ.։

Ցետոյ նա սեեռեց աչքերը վառուող լամպի լոյսի վրայ ու մնաց տառած։ Ցիշելով մեր կեանքի ամբողջ այլանդակութիւնը, նա պարզ կերպով երեակայեց, թէ ինչ կարող է լինել այդ կեանքը, եթէ մարդիկ կրճուէին Աւետարանի վրայ, և նրա հոգուն սիրելց այնպիսի հրճուանք, որ նա վաղուց չէր զգացել։ Կարծես թէ երկարատև անձկութիւնից ու տանջանքից յետոյ նա յանկարծ հանգիստ ու ազատութիւն գտաւ։

Նա չը քննեց ամբողջ գիշերը և, ինչպէս պատահում է աւետարանը կարդացող չատ չատերի հետ, առաջին անգամը, կարդալիս, հասկանում էր իրանց ամբողջ նշանակութեամբ այն խօսքերը, որ չատ անգամ կարդացել էր առանց նկատելու։ Ինչպէս սպունգը ծծում է ջուրը, այնպէս էլ նա ծծում էր իր մէջ այն բոլոր հարկաւոր, կարեոր և բերկրալից մտքերը, որոնք բացայայտուում էին դրքի մէջ։ Եւ բոլոր կարդացածը թուում էր նրան ծանօթ, կարծես հաստատուում էր, գիտակցական էր դարձնում այն, ինչ որ նա վաղուց, չատ առաջ գիտէր, բայց որ լիովին չէր գիտակցում և որին չէր հաւատում։ Իսկ այժմ նա գիտակցում էր և հաւատում։ Կարդալով լեռան վրայի քարոզը, որ միշտ յուզում էր նրան, նա այժմ առաջին անգամը տեսաւ այդ քարոզի մէջ ոչ թէ վերացական, գեղեցիկ, բայց մեծ մասամբ չափազանցրած ու անիրագործելի պահանջներ յայտնող մտքեր, այլ հասարակ, պարզ ու գործնականապէս իրագործելի օրէնքներ, որոնք եթէ իրագործուելու լինեն (որ լիովին հնարաւոր բան է), կը հաստատեն մարդկային հասարակութեան բոլորովին նոր կազմակերպութիւն, որի չնորհիւ ոչ միայն ինքն ըստ ինքեան կ'ոչնչանար այն ամենը, ինչ որ

այնքան վրդովեցնում էր Նեխլիւդովին, այլ և կ'իրագործուէր մարդկութեան համար մատչելի ամենաբարձր բարիքը—երկնից Արքայութիւնը երկրիս վրայ։

Բայց բաւական չէ, որ նա գիտակցում և հաւատում էր, որ մարդիկ, կատարելով աւետարանի վարդապետութիւնը, կը հասնեն իրանց համար մատչելի ամենաբարձ բարիքին, նա գիտակցում և հաւատում էր այժմ, որ իւրաքանչիւր մարդ ուրիշ ոչինչ չունի անելու, բացի այդ վարդապետութիւնը կատարելուց, որ դրա մէջն է մարդկային կեանքի միակ, բանական իմաստը, որ ամեն մի չեղումն այդ բանից սխալմունք է, որ իսկոյնևեթ հետևանք է ունենում իր պատիժը։ Այդ բղխում էր ամբողջ վարդապետութիւնից և առանձին պայծառութեամբ և այժմ արտայայտուած էր այդու մշակների առակի մէջ։ Այդու մշակները երեակայել էին, թէ այն այդին, ուր իրանք ուղարկուած էին աշխատելու տիրոջ համար, իրանց սեփականութիւնն է, թէ այդտեղ եղած ամեն ինչ իրանց համար է և թէ իրանց գործը միայն այն է լինելու, որ վայելեն այդ այդտեղ իրանց կեանքը, մոռանալով տիրոջ մասին և սպանելով այն բոլորին, որոնք յիշեցնում էին նրանց տիրոջ մասին և նրանց պարտականութիւնների մասին դէպի այդ տէրը։

«Նոյն բանն ենք անում և մենք,—մտածում էր Նեխլիւդովը,—ապրելով այն անհեթեթ համոզմունքով, թէ մենք ինքներս ենք մեր կեանքի տէրը, թէ նա մեզ տրուած է ի վայելումն։ Չէ որ այդ ամենևին անհեթեթ է։ Չէ որ եթէ մենք ուղարկուած ենք այս աշխարհը, կը նշանակի որ և է մէկի կամքովն ենք ուղարկուած և որ և է բանի համար։ Իսկ մենք վճռել ենք, թէ ապրում ենք միմիայն մեր ուրախութեան համար, և պարզ է, որ մենք վատ ենք զգում մեզ, ինչպէս վատ կը զգայ իրան այն մշակը, որ չի կատարում տիրոջ կամքը։ Իսկ տիրոջ կամքը արտայայտուած է Քրիստոսի վարդապետութեան մէջ։ Բաւական է, որ մարդիկ կատարեն այդ վարդապետութիւնը, և աշխարհումս կը հաստատուի Աստուծու Արքայութիւնը և մարդիկ կը հասնեն իրանց համար մատչելի ամենամեծ բարիքին»։

«Խնդրեցէք նախ Աստուծու արքայութիւնը եւ նրա արդարութիւնը, իսկ մնացածը կը տրուի ձեզ»։ Եւ մենք վնասում ենք մնացածը ու, ի հարկէ, չենք գտնում։

«Ահա իմ կեանքի գործը։ Մէկը վերջացաւ թէ չէ, միւսը սկսուեց»։

Այդ գիշերից Նեխլիւդովի համար սկսուեց բոլորովին նոր

կեանք, ոչ այնքան այն պատճառով, որ նա մտաւ կեանքի նոր պայմանների մէջ, որքան այն պատճառով, որ այն բոլորը, ինչ որ պատահեց նրան այնուհետեւ, նրա համար բոլորովին ուրիշ նշանակութիւն ստացաւ, քան առաջ։ Ինչով կը վերջանայ նրա կեանքի այդ նոր շրջանը,—դոյց կը տայ ապագան։

ՎԵՐՋ

ՀՍՍՌ Ակադեմիայի գրադարան
ZUUA Arm.SSR

229

ВФ

ՀՀ Ազգային գրադարան
NL0320189

14.140